



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Lip

شیخ

-6 NOV 2011

7L

Օ Ի Պ Վ Ա Ն Զ Ա Ր Ե

Ժ Ն Ն Ն Ո Ւ Ջ Ո Ւ Ն

Ե Ր Կ Ե Ր Կ

891.99
Հ-66

Հ Ա Տ Ա Ր Ե Ր Ե Ր Ե

ՀՐԱՄԱ. ՏԻ. ՄԱՐԴԱՄ ՑԱՐՈՒԹՅՈՒՆԻ ՊՈԽՎԱՐԱՆԻ

91.99

5-66

у

Օ Հ Ր Վ Ա Ն Զ Ա Յ Ի

19

Y

Գ Ո Ւ Խ Ա Ծ Ո Ւ



Ե Ր Կ Ե Ր Ի

ՀԱՑՈՐ ԵՐՐՈՐ



ԲՎԱ 1019

Թ-Ֆ-Տ-Ի-Խ

Տիտ. «Վերեւչև և Կամենահերъ». || Տպ. գլուխիլի և Կամենմայկր
Мих. пр., № 81

15.07.2013

97994

ՆԵՐԿԱՅ ՀԱՏՈՒԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ

ՆՈՒԽՎՈՒՄ է

Բազուեցի հանգուցեալ

Дозволено цензурою. Тифлисъ, 4-го Ноября 1903 года.

ԵՐՈՒԱՆԴ ԹԱԴԵՈՍԵԱՆ



1528
39

ԲՈՒԴԱԳԵԱՆԻ

Օ Բ Շ Ո Տ Ա Կ Ե Ր Ե

ԱՐՍԵՆ ԴԻՄԱՔՍԵԱՆ

I

Քուռ գետի ձախակողմեան մասի մի ծուռ փողոցով անցնում էր մի երիտասարդ։ Օգոստոսի շոգօրերից մէկն էր։ Արեգակը երկաթի պէս տաքացրել էր փողոցի սալայատակը և տների պատերը։ Օդը այնքան ճնշող էր, որ անցորդը հազիւ կարողանում էր շունչ առնել։ Երբեմն թեքվելով ձեռափայտի վրայ, նա կանգ էր առնում ծառերի շուաքում և իւր յոդնած հայեացքը ձգում տների լուսամուտներին կամ դռներին։ Չընայելով ամարային կիզիչ եղանակին, հագած էր ձմերային սև սիւրտուկ, այն էլ կոճակած մինչև կոկորդը։ Խակ աջ թեկին ձգած էր մի մոխրագոյն վերարկու, որի փեշերը հասնում էին գետնին։ Նա փոքրահասակ էր, նիհար, բայց կուրծքը կազմուածքի համեմատ լայն էր և առողջ։ Դէմքի գծերը խոշոր էին, ազդու և անմիջապէս ուշադրութիւն գրաւող։ Սև ու խիտ յօնքերի տակից փայլող խոշոր աչքերը վերին աստիճան արտայայտիչ էին, խելացի և թափանցող։ Մի առանձին խրոխտութիւն էր տալիս նրա թխագոյն գէմքին կարճլիկ նօսր միրուքը, մանաւանդ արծիւային քիթը, որի անչերը յիշեցնում էին արաբական նըշոյդի ռունգեր։

Համնելով ծուռ փաղսցի ծայրին, նա դարձեալ կանգ առաւ և նայեց աջ ու ձախ: Այստեղ նրա հայեացըն ընկաւ մի տան պատին կացրած թղթի վրայ: Նա մօտեցաւ և կարդաց. «Եյս տան վերին յարկում վարձով տրվում է մի մեծ, լուսաւոր և մաքուր սենեակ»:

Նա բաց դռներով ներս մտաւ: Մի նեղ, կարմրադոյն փայտեայ սանդուխտ տանում էր դէպի տան վերին յարկը: Արագ քայլերով նա բարձրացաւ վերև և հանդիպեց մի շիկահեր, պառաւ կնոջ:

—Ի՞նչ էք կամենում, —հարցրեց կինը:
—Ցոյց տուէք սենեակը:

Կինը երիտասարդին առաջնորդեց երկայն և ազգեղնաձե պատշգամքի ծայրը: Սենեակը, արդարե, մեծ էր, լուսաւոր, բայց ոչ մաքուր և ոչ էլ կահաւորված: Տանտիրուհին շտապեց յայտնել, թէ այն իսկոյն կըմաքրվի, կըկահաւորվի և արժանավայել տեսք կըստանայ, եթէ վարձվի:

—Ի հարկէ, եթէ ոչ ով կապրի այս տեսակ խոզաբնում:

Երիտասարդի ձայնն ամուր էր, խրոխտ և թանձրահնչիւն: —Մի բան, որ կատարելապէս հակասում էր նրա փոքրիկ հասակին և լիովին համապատասխանում նրա տղեղ և տպաւորիչ դէմքին: Այդ ձայնը, այդ խոշոր գլուխը, այդ խելացի աշքերի սուր արտայալ տութիւնն աղդեցին տանտիրհու վրայ:

—Թուք կովկասցի էք, —հարցրեց կինը:
—Այն:
—Ի՞նչ ազգի էք պատկանում:
—Հայ եմ:

—Ի՞նչ դործի էք:
—Առ այժմ ոչինչ:
—Ոչինչ:
—Այն:
—Այդ ինչպէս կըլինի:
—Պատահում է:
—Իսկ սենեակի վարձը:

Երիտասարդին բարկացրին այդ հարցերը: Նա խնդրեց տանտիրուհուն իւր պայմաններն տաել և առանց սակարգութեան վարձեց սենեակը, մի ամսուայ վարձն անմիջապէս տալով:

—Ամուրի էք, —հարցրեց պառաւը մեղմացած:
—Ամուրի եմ:

Տանտիրուհին գնաց դուրս և քիչ անցած վերադաւ մի թերթ թուղթ և մի մատիտ ձեռքին:

—Խնդրեմ ձեր անունը նշանակէք:

Երիտասարդը գրեց. «Արսէն Դիմաքսեան»:

Երեկոյեան նա իրեղինները տեղափոխեց: Սենեակը բաւական խնամքով մաքրված էր և համեստ բայց ճաշակով կահաւորված: Նա բաց արաւ իւր ծըրաբները, կանթեզը վառեց, ամեն ինչ կարդի բերեց և, նստելով սեղանի քով, սկսեց խորհել անելիքի մասին:

Նա շատ բաներ ունէր անելու, շատ ծրագիրներ ունէր ապագայի մասին, շատ դործերի մէջ պիտի խառնվէր: Իսկ առ այժմ մի բան առաջինն էր —հարկաւոր էր մի պաշտօն ունենալ:

Միայն երկու շաբաթ էր, որ նա վերագարձել էր արտասահմանից: Գալուց մի քանի օր անցած նա դրաւոր խնդիր էր տուել ներսիսեան գոլոց, որ իրան

յանձնեն ընդհանուր պատմութեան և աշխարհագրութեան դասերը։ Մի քանի հոգաբարձուներից խռովում էր ստացել, սպասում էր հոգաբարձական նիստին։

Առ այժմ նա գրպանում ունէր հօրից ստացած վերջին դումարը, որով պէտք է ապրէր մինչեւ պաշտօն ստանալը։ Նրա հայրը դաւառում յայտնի կալուածատէր էր։ Նա առանց որ և է պաշտօնի էլ կարող էր կառավարվել, բայց հօր և որդու մէջ մտել էր մի սառնութիւն, որ հետզհետէ աւելի ու աւելի անջատում էր նրանց։

Բանն այն է, որ Մարդար աղա Դիմաքսեանը որդուց պահանջել էր—դիմապիճնը աւարտելուց յետոյ այլ ևս ուսումը չըշարունակիւ նա միայնակ էր, ուրիշ որդի չունէր և ուզում էր, որ Արսէնն իւր օգնականը լինի՝ բազմաթիւ այդիները, վարելահողերը, խառնութները և այլ կալուածները կառավարելում։ Որդին չէր համաձայնվել։ Կոշտ, ինքնակամ, յամառ հօրը չափազանց զայրացրել էր այդ ընդդիմութիւնը, և նա վերին աստիճանի սպառնողական մի նամակ էր ուղղել որդուն։ Արսէնը դրական եղանակով պատասխանել էր, թէ ինքը պէտք է լինի այն, ինչ-որ կամենում է և ընաւ մտադիր չէ «Հնացած սերնդի կամքին ստրկանալ»։ «Գալով ձեր օգնութեանը, որից ինձ չէք ուզում առ այժմ զրկել, ես կընդունեմ նրան մինչեւ ուսմանս վերջը, ինչպէս պարտք։ Դուք կարող էք զրկել ինձ օժանդակութիւնից, իսկ աղատ կամքից—երբէք»։

Այս վճռական պատասխանը կատաղեցրել էր հօրը։ Հաշտութիւնը նրանց մէջ դարձել էր անկարելի։

Եատ հոգսերի շարքում Արսէնն ունէր և՛ հօր պարտը հատուցանելու հոգսը։ Թւում էր նրան, որ եթէ իւր ասածը չըկարողանայ կատարել —թոյլ, ստախօս և, որ գլխաւորն էր նրա համար, ինքն իրան հակասող մարդ կըլինի։ Ընկերները յանդիմանում էին նրան այդ մասին, համարելով նրա վարմունքը անտակտ, անհաշիւ։ Բայց նա ամենքին տալիս էր միեւնոյն դրական պատասխանը։

—Եթէ մենք ուզում ենք անկախ լինել, առաջին պատերազմը մեր ծնողների դէմ պէտք է սկսենք։

Ահա ինչու նա աւելի լաւ էր համարում հասարակուսուցչի պաշտօն ընդունել, քան հպատակվել հօր կամայականութեանը։ Սյժմ ակամայ զգում էր անհանդատութիւն։ Ինչ կըլինի, եթէ իսկոյն պաշտօն չըստանայ։ Նրան վախեցնում էր ոչ թէ նիւթական պակասութիւնը, ոչ թէ այն, որ կարող էր մի օր անօթի մնալ, այլ այն, որ մի գուցէ ստիպէր մէկից պարտք վերցնել, թէկուզ այդ մէկը լինէր նրա մտերիմ ընկերը։

Ներս մտաւ տանտիրուհու ծառան և ընդհատեց նրա մտորումները։ Տարօրինակ էր այդ ծառայի կերպարանքը։ Անորոշ տարիքի մի մարդ էր անկանոն կազմուածքով։ Նրա կուչկուչված յօնքերի տակ բուն դրած աչքերից մէկը կլորիկ էր, միւսը նշաճեւ։ Երես ասած բանը նա գրեթէ չունէր։ Շէկ միրուքը սկսվում էր ուղիղ աչքերի տակից և, հասնելով ծնօտի ծայրը, այստեղ կազմում էր գդդզված բրդի կտորի պէս մի բան։ Դիտողը կընկատէր, որ նրա բերանի մի անկիւնը միւսից բարձր է։

—Այ տղայ, գու ինչ աղդից ես։

—Հայ եմ, —պատասխանեց մի բարակ, համարեա կանացի ձայն:

—Ո՞րտեղացի ես:

—Քեավառցի:

—Քեավառը որտեղ է:

—Նոր-Բայազիթէում:

—Անոնդ:

—Սիրական:

Եթէ երբ և է Դիմաքսեանը տեսել էր մի սարսափելի կօնտրաստ, այդ կարող էր լինել ծառայի կերպարանքը նրա անուան հետ:

Յաջորդ հարցերը պարզեցին, որ Սիրականն առնտուն, անտէր, մի խեղճ մարդ է», ոչ ձնողներ ունէ, ոչ քոյլ, ոչ ազգական:

—Լսիր, —ընդհատեց նրա խօսքը Դիմաքսեանը, —դու ինձ հաւատարիմ ծառայիր, ես քեզ կըվարձատրեմ: Դիտես, դու ինձ դուր ես դալիս. կարդալ դիւտես:

—Մի քիչ:

—Ես քեզ էլի կըսովորցնեմ: Եթէ կամենաս, ոռւսերէն էլ դաս կըտամ:

Խորախութիւնից Սիրականի շիլ աչքը փայլեց: Նա մէջքից խօնարհ թերվեց և դլուխ տուեց:

Թէյ խմելուց յետոյ, Դիմաքսեանը նստեց պարապելու: Դեռ գիմնադիօնի նստարանից նա աշխատակցում էր մի լրագրի: Ընկերներից շատերը դուշակում էին, թէ ժամանակով լաւ քննադատ կամ քարոզիչ կարող է լինել: Գնալով արտասահման, շարունակեց աշխատել նոյն լրագրում, հետզհետէ ընդարձակելով դրութեան շրջանը և գաղափարները: Վերջին

ժամանակ քաղաքական յօդուածներ էր դրում —առաջ Լեյպցիգից, յետոյ Յուրիխից:

Հետեւեալ օրը նրա մօտ եկաւ բժիշկ Սալամբէկեանը, որի հետ նա աւարտել էր դիմնադիօնի դասընթացքը: Դա սե միրուքով, նիհար դէմքով, տկարմարմով մի երիտասարդ էր: Դէմքի վրայ դրոշմված էր հոգեկան մի անքացարելի դժգոհութիւն: Դիմաքսեանի հետ մօտիկ ընկեր էր, միմեանց համակրում էին: Վեց և կէս տարի իրարուց հեռու ապրելով, նրանք անընդհատ թղթակցել էին, միմեանց, ուստի հեռաւորութիւնը չէր թուլացրել նրանց ընկերական կապը:

—Ենորհաւորում եմ, —ասաց բժիշկը, թոյլ և յոդնած կերպով ձեռը մեկնելով ընկերոջը, —սենեակդիմաց չէ: Բայց դա վայրենիների ճր ցեղին է պատկանում:

Խօսքը Սիրականի մասին էր, որ այդ միջոցին սամօվարը ձեռին դուրս էր գալիս սենեակից:

—Մի ծաղրիր, —պատասխանեց Դիմաքսեանը մի տեսակ դժկամակութեամբ, —Փիզիօնօմիատների դարը անցաւ:

Բժիշկը լոեց, փոքր ինչ շփոթվելով: Վայելչութեան օրէնքը թոյլ շլառուց նրան հակառակել — Դիմաքսեանը տգեղ էր:

—Սյոօր պէտք է ժողովունք, — հարցրեց նա, խօսքը փոխելով:

—Ո՛չ, վազը երեկոյեան: Անպատճառ եկ:

—Իմ գալուց ինչ օդուտ, թող նրանք դան, որ խօսելու և գործելու ախորժակ ունին:

—Անկարելի է, անպատճառ պէտք է դաս: Ես

կազմել եմ մի ծրագիր մեր գործունէութեան մասին։
Ես այն կարծիքի եմ, որ մեր կոփուը պէտք է սաստիկ
լինի։ Հարկաւոր է մեծ վստահութիւն ու քաջութիւն
չնջելու և հիմնայատակ անելու հինը, անօդուտը, վրա-
նասակարը։

Եւնա շարունակեց նոյն ողեորութեամբ։ Երիտա-
սարդութեան բարոյական պարտքերը շատ են, իսկ
նա բոլորովին այդ չի զգում։ Կոռուելով հների դէմ,
պէտք է հետամուտ լինել և նորերին, հարուածել և
նոր սերնդին, եթէ սա չի կատարիլ իւր դերը։

—Բայց ամենից առաջ հարկաւոր է կազմակեր-
պել մի փոքրիկ խոռոմք։ Մենք երդուել ենք նուիրել
մեղ հասարակական գործունէութեանը, պէտք է կա-
տարենք մեր երդումը։

—Վաղը ճվքեր կը լինեն քեզ մօտ։

—Ես հրաւիրել եմ Բարաթեանին։

—Մէկել օրը ստացաւ կրակից ապահովող ընկե-
րութեան գործակալի պաշտօն։ Յետոյ։

—Վէքիլեանին։

—Առանց իրաւունքների իրաւաբանին։ Գեղեցիկ
զոյգ եռ ընտրել, արժէ նրանց մի լծի տակ տեսնել։
Յետոյ։

—Մսերեանին։

—Ահա մարդ, որ միշտ խոստումներով է կերա-
կը քում, կարծեմ, նա վերջը տէրտէր կը ձեռնադրվի։

—Լսիր, բժիշկ, կատակը սաղ չի դալիս քեզ, երբ
մեր ընկերներին ես ծաղրում, մանաւանդ։ Մսերեանին։

—Ինքդ ասա, ուրիշ ինչ կարելի է սպասել մի
մարդուց, որ համալսարանների բոլոր ֆակուլտետնե-
րը անցել է և ոչ մի տեղ չի աւարտել։

—Մի ասա—չի աւարտել, այլ ասա—չեն թո-
ղել, որ աւարտի։

—Այն, չեն թողել իւր անհանգիստ լեզուի շնորհով։

—Անհանգիստ, բայց ճշմարտախօս լեզուի, —գո-
չեց Դիմաքսեանը, և նրա աչքերի թափանցող բիրերը
պտտեցին իրանց պարզ լրջանակների մէջ։ —Այդ լե-
զուն շատ է մսասել իւր տիրոջը։ Բայց ինչպէս անա-
րատ սիրտ, Մսերեանը անդնահատելի է։ Թողնենք
խօսակցութիւնը, ես մի քանի կարեոր նամակներ ու-
նիմ դրելու։

—Ուրեմն, ցըտեսութիւն։

—Ցըտեսութիւն, վաղը երեկոյեան ես քեզ ան-
պատճառ կը սպասեմ։

II

Կէսօրուսյ դէմ Դիմաքսեանը հագաւ տաք սիր-
ուսուկը, կոճակեց մինչև կոկորդը և, վերարկուն թեխն
ձգելով, դուրս եկաւ։ Նա այցելեց ներսիսեան գըտ-
րոցի հոգաբարձուներից մէկին և իմացաւ, որ դասե-
րը գրեթէ ստացած պէտք է համարել։

—Մեզ համար, —ասաց հոգաբարձուն, —շատ ու-
րախալի է ձեզ պէս կը թուած ուսուցիչ ունենալ մեր
դպրոցում, ձեր անունը ձեզանից առաջ է մեղ հասել։

Դիմաքսեանը զգաց մի թեթևութիւն։ Այժմ նա
ապահովուած է ուրեմն և կարող է յուսալ, որ իւր
պարտքը մաս մաս կը վճարի հօրը։ Բայց աւելի հա-
ճելի էր նրա ինքնասիրութեան համար հոգաբարձուի
ասածը. «ձեր անունը ձեզանից առաջ է մեղ հասել»։
Այս դարձուածը նրան մի առանձին աշխոյժ տուեց։

Նա ողեսրպեց:

Միւս օրը երեկոյեան ժողովութեցին նրաընկերները: Առաջինն եկաւ կրակից ապահովող ընկերութեան գործակալ Բարաթեանը—մօտ քսան ու հինգ տարեկան, գեղեցիկ գէմքով, առողջ կազմուածքով և դըւարիթ ու սիրուն աչքերով մի երիտասարդ: Նա հաղոնուած էր ամենավերջին մօդայով և խկոյն աչքի էր ընկնում իւր ձեւերով ու շարժումներով: Երեք տարի Պետերբուրգում և հինգ տարի արտասահմանում ապրելով, գիտեւթեան մի փոքրիկ պաշարի հետ, նա խւրացրել էր և արտաքին վայելչութեան խոշոր սլաշար: Նրա գէմքի վրայ խաղացող ուրախ ժայռաը արտայայտում էր բուռն կենսականութիւն: Մի ժպիտ, որ հանդիպողին անմիջապէս արամադրում էր գէպի այդ երիտասարդը:

—Հիանալի՞ է,—գոչեց նա, դիտելով Դիմաքսեանի սենեակը,—եթե շրջապատող կլիման էլ համապատասխան է, այն ժամանակ շնորհաւորում եմ յաջող ընտրութիւնդ:

—Գարձեալ կլիմա:

—Այն, սիրելիս, մոռացել ես, թէ ուսանող ժամանակ քո խոնարհ ծառան ինչպէս էր սենեակ ընտրում: Առաջ դիտում էի շրջակայքը, յետոյ կացարանը, առաջ շնչաւորներին, յետոյ անշունչը:

—Եւ միշտ ինձ էլ խորհուրդ էիր տալիս քեզ հետեւել:

—Իսկ դու չէիր հետեւում: Իզմուր, երիտասարդը պէտք է կեանք վայելի, խոկ ամուրին—անմանաւանդ:

—Կեանք մարդավարի կերպով և ոչ թէ ամեն մի անկիւնում կանանց կօշիկների հետք որոնի:

—Բայց ես այնքան չեմ որոնել, որքան իրանք են ինձ գտել: Լաւ, ես քեզ հետ չեմ վիճիլ, յայտնի է, որ կանանց մասին մեր գաղափարները տարբեր վում են: Ոչա գալիս է Փեմիդայի արժանաւոր մանկաւիկը:

Դոները բացվեցին, ներս մտաւ միջին հասակից քիչ ցածր, կլորիկ գէմքով, երկայնաձեւ քիթով, մաքուր սափրած այտերով մի երիտասարդ: Կանգնելով դռների առջև, նորեկը գլխարկը փորի վրայ երկու ձեռներով բռնած, մէջքից թեքվեց և կէս հեղնական ու կէս սիրալիր մի ժպիտ երեսին գլուխ տուեց: Վէքիեանի բարեկելու մշտական եղանակն էր այդ, որ գործադրվում էր ամեն տեղ, ամեն ժամանակ և ամենքի առջև:

Նրա ետևից երեսին բժիշկ Սալամբէկեանը և մի քանի ֆակուլտետներ անցած Մուերեանը: Տարիքով ամենից մեծ, կազմուածքով խոշոր Մուերեանի գէմքը խորշումած էր, քոնքերի մազերի մէջ արդէն փայլում էին սպիտակներ: Ներս մտաւ թէ չէ՝ սահաստ ձեռափայտը ու լայնեղը գլխարկը դրեց սեղանի վրայ և գոչեց.

—Արսէն, եթէ մարդ ես—ինձ մի բաժակ թէյ: Սիրականը ներս բերեց սամօվարը, հիւրերը տեղաւորվեցին նրա շուրջը:

Սկսվեց ընկերական մտերիմ խօսակցութիւն: Անեակը աղմկեց հետպահէ բարձրացող ձայներով: Նրանք միմեանց հաղորդում էին շրջապատող հասարակութեան տհասութեան, անկրթութեան, նախապաշարմունքների, բռնութեան, հարստահարութեան և այլ ու այլ վատ երկոյթների նորանոր փաստեր:

Ամեն ինչ նրանց աջքում մթին էր երեսում։ Հասարակական կեանք չըկայ։ Մարդիկ մտածում են միմիւայն իրանց նիւթականի մասին։ Ժողովուրդը խարիսխում է տգիտութեան մէջ։ Հին սերունդը բռնակալ է, նորը թոյլ, հալածված, ճնշված։ Վաճառական դարը ապականված է, հարստահարող, փողամոլ։ Երիտասարդութիւնը բարոյապէս փշացած է։ Հայրենիքի խնդիր չըկայ, իդէալ չըկայ։ Ուսումնարանները պատրաստում են տիրացուներ։ Գրականութիւն չըկայ։ Լրագրութեան մէջ տիրում է շարականի հոգին։ Ամեն ինչ կարօտ է արմատական վերանորոգութեան։

—Պարոններ,—բացականչեց Մսերեանը, որ փոքրիկ ժողովում մի տեսակ նախադահի դեր էր կատարում, —սկսենք գործել ձեռք ձեռքի տուած։ Մեր փոքրաթիւ կրծքերը դէմ տանք չինական պատին։ Խորտակենք նրան, որ անջատում է մեզ եւրոպական քաղաքակրթութիւնից։

Նա խօսում էր ոգեսորված, ինչպէս կրակոտ պատանի։ Այն ինչ՝ տարիքը երեսնից անց էին։ Երբեմն նա իւր խօսքը զարդարում էր յայտնի հեղինակների դարձուածներով։ Ստէպ ստէպ յիշում էր նալլանդեան, Աբովեան, Նազարեան անունները, համարելով նրանց «առաջին զինւորներ ժողովրդի առաջադիմութեան համար»։ Նա պնդում էր, թէ պէսք է գնալ այդ մարդկանց հարթած շաւզով։ Նրա ձայնը երերվում էր, ականջները և այտերը կարմրել էին, ձեռները դողում էին և լիզուն շփոթվում։ Ընկերների շրջանում նա վայելում էր «անուղղելի իդէալիսա» մականունը։ Նրա խօսքերից բուրում էր բուռն ոգեսորութիւն և խորին հաւատ դէպի մարդկութեան երջա-

նիկ ապագան։ Սովորական ախտերը—բռնասիրութիւն, հարստահարութիւն, ընկերական ոգու բացակայութիւն և այլն և այլն նա համարում էր ներկայի ծնունդ։ Կանցնի ժամանակ, կըմաքրվի մարդկութիւնն այդ ախտերից, և կըտիրէ այն իդէալական կեանքը, որին ձգտել են և ձգտում են աշխարհի ամենաբարձր սրտերը, ամենազօրեղ հանճարները։

—Այն, պարոններ, —աւարտեց նա իւր ատենաբանութիւնը, —մենք էլ լինենք այդ զօրապետների գունէ յետին զինւորների շարքում։ Կոուենք և գործենք։ Մեր ազգը փոքրիկ է. թոյլ, անպաշտպան, չըթողնենք, որ նա խաւարի մէջ մնայ։

Նրան յաջորդեց Դիմաքսեանն իւր ծրագրով, որի ընդհանուր կէտերը նա պարզեց։

Նա խօսում էր համառօտ և կտրուկ ոճով։ Յոյց էր տալիս այն գլխաւոր հասարակական վատ երևոյթները, որոնց դէմ պէտք է մաքառէր նոր երիտասարդութիւնը։

—Բայց ես կրկնում եմ, ամենադլխաւորը ընկերական միութիւնն է։ Եթէ մենք չըդաւաճանենք մեր ընտրած սկզբունքներին, շատ բան կարող ենք անել։

Ամենից քիչ խօսում էր Վէքիլեանը։ Նա, շարունակ ժպտալով, ամենքի հետ համաձայնվում էր։

Բարաթեանը մասնակցում էր խօսակցութեանը զուարիթ եղանակով։ Նա նոյնպէս ոգեսորվում էր, բայց չէր գրդովում։ Նա չէր հարուածում հասարակական կեանքի վատ երևոյթները, ինչպէս Դիմաքսեանը, Մըսերեանը կամ նոյն իսկ ծուլախօս Սալամբէկեանը, այլ հեգնում էր և ծաղրում։ Երբեմն ամենալուրջ ինդրի մէջ խառնում էր մի սուր կատակ։ Նա ասաց,

թէ ոչ մի դործ չի կարող կենդանի կերպով առաջա-
դիմել, եթէ նրա մէջ խառն չէ կինը։ Զըսլիտի միա-
կողմանի լինել, կարծելով, որ հասարակական քաղա-
քակրթութիւնը միայն մարդկութեան մի կիսի ձեռ-
քով է կատարվում։ Նա առաջարկեց մի քանի տիկին-
ներ և օրիորդներ գրաւել ընկերական ժողովները։
Մոերեանը ընդդիմացաւ այս մաքին։ Նա կանանց ա-
ռաւմ էր իբրև անհամերի, իսկ իբրև դասակարգի
պաշտպանում էր նրանց իրաւունքները։ Բժիշկ Սա-
լամբէկեանը հաւանեց Բարաթեանի միտքը։ Վէքի-
լեանն անորոշ կերպով ուսերը շարժեց։

—Կանայք, —կրկնեց Դիմաքսեանը, —այն, ես էլ
եմ պաշտպանում նրանց իրաւունքները, բայց որտե-
ղից դժոնենք այնպիսիներին, որ համաձայնվէին կամ
կարողանային մեզ օգնել։

—Ես ճանաչում եմ մի քանիսին, —պատասխա-
նեց Բարաթեանը, —որոնք կարող են մեզ համար օգ-
տաւէտ լինել։ Ափառ միայն գեղեցիկ չեն, իսկ ես,
ինչ թագցնեմ մեզքս, միայն գեղեցիկներին եմ սիրում։

Դիմաքսեանը գրգռվեց ընկերոջ վերջին դար-
ձուածի դէմ։

—Բաւական է, —գոչեց նա, —ժամանակ է թող-
նել այդ նոր ձեր կուապաշտութիւնը։ Մենք պէտք է
խոնարհվենք խելքի զօրութեան և ոչ թէ գեղեցիկ
աչքերի ու սիրուն այտերի հրատոյրի առջե։

Բարաթեանը ժպտաց։

—Գեղեցկութիւնն երեմն մարդկանց անբարոյա-
կանացնում է, —աւելացրեց Դիմաքսեանը մի տեսակ
անզստելի կրքով, ուղղակի նայելով Բարաթեանի աշ-
քերին։

Կարծես, խօսքը նրան էր վերաբերվում։ Բարա-
թեանն անտարբերութեամբ երեսը դարձրեց Վէքի-
լեանի կողմը, որ նոյնպէս խորհրդաւոր կերպով ժըպ-
տում էր։ Նրանք հայեացըներով հաղորդեցին մի-
մեանց իրանց միտքը, որ միենայն բանին էր վերա-
բերվում — Դիմաքսեանի դէմքի տղեղութեանը։

Այդ օրից երկու շաբաթ անցած Դիմաքսեանը
սկսեց այցելել Ներսիսեան դպրոցը ինչպէս ուսուցիչ։
Նրա դասերը տեսում էին մինչև կէսօրուայ մէկ ժա-
մը։ Այնուհետև նա դալիս էր տուն և զբաղվում այլ
գործերով։

Ուսուցչական շրջանը նրան ընդունեց արտաքին
յարդանքով, ներքին նախանձով, որսվհետեւ ամենա-
առաջին ուսուցիչն էլ նրա մէջ տեսնում էր զօրեղ
մրցակից։

39
— Նա հետաքրքրվեց իւր պաշտօնակիցների աշ-
խարհահայեացքով։ Նա գտաւ նրանց շրջանում մի
խարհահայեացքով, միւսներին շըհաւանեց և
քանի համակրելի մարդիկ, միւսներին շըհաւանեց և
սկսեց բացարձակ վիճել, հակառակել նրանց մտքե-
րին և քարոզել իւր գաղափարները։ Մի ամիս չան-
ցած, ունեցաւ մի քանի բարեկամներ և շատ հակա-
ռակորդներ։ Ոմանք շրջապատեցին նրան, իսկ ոմանք
հեռանալով կազմեցին հակառակ բանակ։ Խաղաղ և
ճահճացած շրջանի մէջ ընկաւ մի տեսակ շարժում։
Ուսուցչական սենեակի պատերը վկայ եղան ջերմ վի-
ճաբանութիւնների և կատաղի հակաճառութիւնների։
Տեսուշը, թէև բարձր կրթութիւն ստացած, բայց հին
հայեացքների տէր մի մարդ էր, Փորձված, հմուտ և
խորամանկ մէկը, որ կարողացել էր գրաւել ուսուցիչ-
ների մեծամասնութեան յարգանքը։ Դիմաքսեանը



տեցաւ նրան, այցելեց մի քանի անդամ նրա տունը և մի օր իւր ընկերների մօտ հետեւալ կարծիքը յայտնեց նրա մասին.

—Մեր Համբարեանը այն խրտուիլիներից է, ուրոնք հեռուից են միայն մարդու նմանվում:

Սյս խօսքերը շուտով հասան տեսչի ականջին, և առ վճռեց զգոյշ լինել իւր նոր ստորագրեալի հետ:

Մի օր Դիմաքսեանը ուսումնարան մտնելիս հանդիպեց երկու աշակերտների, որ միմեանց հայհոյում էին փողոցային անվայել և կեզտոտ խօսքերով:

—Պարոններ,—առաց նա ուսուցչական սենեակում խմբած պաշտօնակիցներին, — մեր գպրոցում բարոյական գիսցիսլինա չըկայ, պէտք է այս մասին հոդալ:

Բոլորը զարմացած նայեցին նրա երեսին: Առաջին անդամն էին լսում այսպիսի պարզ բայց և անպայման խիստ կարծիք գպրոցի մասին:

Նա պատմեց հայհոյող աշակերտների մասին: Նա առաջարկեց ընտրել յանձնաժողով, պարոք դնել նրա վրայ, որ ուսումնարանական կարգերի մասին կազմի մի նոր ծրագիր:

—Եյս գպրոցում տիրում է հին հոգի, պէտք է ամեն ինչ փոխել, վերանորոգել. պէտք է այստեղի օդը մաքրել:

—Արդեօք, ինչպէս,—հարցրեց տեսուչը նուրբ հեգնական եղանակով:

—Սյնպէս, ինչպէս անում են լուսաւորված երկրներսւմ—քանդելով հինը, շինելով նորը, դուրս վանելով նեխվածը, ընդունելով թարմը և կենդանին: Մի քանի հակառակորդներ գլուխները կէս ծազ-

րով և կէս ատելութեամբ շարժեցին: Տեսուչը պատասխանեց.

—Միրում եմ ձեր ֆրաղները:

—Ես պնդում եմ ընտրել մի յանձնաժողով:

Հետեւալ օրը, երրորդ օրը, մի ամբողջ շաբաթնա նոյնը կրկնեց: Վերջապէս, մեծամասնութիւնը համաձայնվեց: Ընտրվեց հինգ հոգուց բազկացած մի խումբ, որոնց թւում, հարկաւ, և Դիմաքսեանը: Նըրան յանձնեցին կազմել մի ծրագիր և ներկայացնել: Սյս առաջարկութիւնն եղաւ Գերմանիայում նոր աւարտած մի մանկավարժի կողմից: Սա մտքում ծաղրում էր Դիմաքսեանին և ուղում էր «տեսնել», թէ ինչ ծրագիր կարող է կազմել մի մարդ, որ ինքը մանկավարժ չէ:

III

Երկու շաբաթ պարապելուց յետոյ Դիմաքսեանը ծրագիրը պատրաստեց և մի երեկոյ կարգաց բոլոր ուսուցիչների ու վերակացուների ժողովում:

Նա հիմն իվեր պախարակում էր գասատութեան եղանակը, ուսուցիչների յարաբերութեան ձեւը աշակերտների հետ: Նա աւելորդ էր համարում շատ աւանդվող առարկաներ և փոխարէնը առաջարկում էր նորերը: Դլասաւոր կէտը աշակերտների բարոյական մնունդն էր: Սյս մասին նա խօսում էր ոգեսորված ոչ իբրև ծրագիր կազմող, այլ ինչպէս անմեղների մի տաղանդաւոր պաշտպան:

Ոչ ոք նկատողութիւն չարեց նրան կարդալու միջոցին: Մի քանիսը միայն երկրիմի հայեացքներ ձգեւ-

ցին միմեանց երեսին։ Նա վերջացրեց, թաշկինակով սրբեց ճակատը և, փոքրիկ ոսկորոտ ձեռները դնելով ձեռագրի վրայ, նայեց աջ ու ձախ, պատրաստ նկատողութիւններին պատասխանելու։ Ընդհանուր լուսութիւնը ընդհատեց տեսուչը շատ մեղմ ձայնով և զգոյշ ձեռվ։

—Պարսն Դիմաքսեան, դուք վատաքանում էք մեր գպրոցը և, խօսք չունեմ, վատաքանում էք շատ տաղանդաւոր կերպով։ Բայց մի բան, ձեր բուն ծրադիրը, եթէ թոյլ կըտաք այսպէս ասել, շատ, ըստ, շատ տարօրինակ է ինձ համար։

—Ոչ թէ տարօրինակ է, այլ ծրադիր բոլորովին չըկայ, —աւելացրեց գերմանական մանկավարժը։

Մէկի սառն նկատողութիւնը, միւսի խորամանկ և կծու ծիծաղը կատաղեցրին Դիմաքսեանին։ Նա, որ համոզված էր իւր մտքերի անպայման ճշմարտութեանը, ինչպէս մի մոլեռանդ կղերական, ծաղրվում է բացարձակ։ Ո՛չ, այդ անկարելի է։

Նրա գէմքը դունատվեց, աչքերի մէջ փայլեց կատաղութեան հուրը։ Փոքրիկ մարմինը վեր թռաւ աթռովց, ինչպէս յանկարծակի հրազարկ եղած և կաշկանդեց ամենքի ուշքը։

Բոռնցքը դարկելով սեղանին, նա դոչեց.

—Ո՛չ, պարօններ, անկեղծութիւնը, միայն անկեղծութիւնը կարող է դործ առաջացնել։ Խոստովանվեցէք, որ իմ դրածը ձեզանից շատերի քմքին միայն դուր չի գալիս, բայց ծրագիր է և նոր դաղափարներով տողորված ծրագիր։

—Այս, —պատասխանեց գերմանական մանկավարժը, —նոր դաղափարներով, որոնք հակասում են.

նոյն իսկ ձեր նպատակին։ Դուք դանգատվում էք, թէ մեր գպրոցում բարոյական դիսցիպլինա չըկայ, իսկ ինքներդ կատարեալ անիշխանութիւն էք քարոզում։

Անիշխանութիւն։ ոչ երբէք։ Նա քարոզում է աշակերտական մաքուր զգացումների ազատութիւն։ Ուստիցիչը կամ վերակացուն չըպիտի լինի աշակերտի կամքի լիազօր տէրը, այլ նրա առաջնորդը և խօրհրդատուն։ Ոչ ոք իրաւունք չունէ կաշկանդել անհատի միտքը, բռնի ուժով հանել նրա գլխից մէկը—դնել միւսը, որքան ես փոքր լինի անհատը։ Պէտք է ազատութիւն տալ աշակերտի մտաւոր և բարոյական յատկանիշների զարդացմանը։ Եթէ նա ընկերոջը ծեծում է և հայհոյում, մեղաւորը ուսուցիչներն են։

—Դուք էք, պարօններ, —շարունակեց նա, աւելի ոգեսրվելով, —դո՞ք, որ մանուկ հասակից նրան սովորեցնում էք անպայման հնաղանդութեան, ձեր կամքի, ձեր խելքի, ձեր հասկացողութեան, ձեր դատողութեան օրէնքներին։ Դուք կատարում էք մտքի բռնականների դեր և այն էլ մատաղ մտքերի։ Այսէր ազատ բնութեան, հեռու պահեցէք նոր սերունդը ձեր եսի աղդեցութիւնից, եղէք ժամանակակից կըրթութեան միջնորդներ և ոչ ճնշող մեքենաներ։ Թոյլ տուէք աշակերտի անհատական ոյժերն անկախ զարգանան, միայն հետևեցէք, որ նրանք չըփչանան վատ ուղղութեամբ։ Անպայման բացակայութիւն խստութեան—ահա իմ առաջարկած դիսցիպլինան։

Նրա ճառն աղդեց մի քանի երիտասարդ ուսուցիչների վրայ։ Ոյսնք բացարձակ յայտնեցին իրանց հաւանութիւնը, Սակայն մեծամասնութիւնը հակա-

ճառեց։ Բարձրացաւ անասելի աղմուկ քսան ու հինդ հոգուց բաղկացած ժողովում։ Մի կողմից Դիմաքսեանի կողմնակիցները, միւս կողմից գերմանական մանկավարժը, տեսուչը և մի ստուար խումբ սկսեցին բարձրաձայն վիճել մինչեւ կէս դիշեր։ Հետեւալ առաւօտ վերակացուներից մէկը թեթեամտարար պատմեց բարձր դասատան աշակերտների առաջ նախընթաց երեկոյին տեղի ունեցած եղելութիւնը։ Անմիջապէս կազմվեց համակրողներից մի խումբ, և Դիմաքսեանը աշակերտների շրջանումն էլ կողմնակիցներ ունեցաւ։ Դասերից յետոյ, երբ նա դուրս էր գալիս դարոցից, փողոցի դրան մօտ մութ անկիւնում հաւաքված մի քանի հասակաւոր աշակերտներ դադոնի ծափահարեցին նրան։ Նա ոգեսորվեց, մոռացաւ իւր կրած անախորժութիւնը, սրտում զգաց մի տեսակ ուրախութիւն։ Մի վայրկեան նրան թւաց, թէ ինքը հալածվածների ու թոյլերի պաշտպան է։ Եւնրա սրբատում զարկեց հերոսական վառասիրութեան երակը։ Նոյն օրը երեկոյեան նա պաշտօնակիցների հետ ունեցած ընդհարումը պատմեց իւր մօտ ժողովուած ընկերներին։ Բոլորը միաձայն արտայայտեցին իրանց համակրութիւնը։ Միայն իրաւաբան Վէրիլեանը նկատեց, թէ չըպիտի շատ էլ ոգեսորվել, «հարկաւոր է ամեն մի միաք զգոյշ քարոզել»։

—Զգոյշ, զգոյշ, —գոչեց Մսերեանը սրտմտութեամբ, —դու էլ միշտ քո երգն ես երգում։

Ոչ ոք Դիմաքսեանին այնքան չէր համակրում, որքան այդ «անուղղելի իդէալիստը» Գուցէ այդ էր պատճառը, որ Դիմաքսեանն ամենից աւելի նրա հետ էր մտերիմ և նրան էր սկսում ու յարդում։ Նա խրա-

խուսեց Դիմաքսեանին, առաջ բերելով նոր դադափարների համար հերոսացած մարդկանց կեանքից օրինակներ։

Բարաթեանը ծիծաղեց նրա վրայ։ Միթէ կարելի է հսկաների օրինակները ամեն մի չնչին բանի համար յիշել։ Կարծես, մի երեւելի բան է մի խումբ կիսակիրթ ուսուցիչների գէմ մաքառելլու եւ, խօսակշութեան նիւթը փոխելով, առաջարկեց ընկերներին մի քիչ զուարձանալ։

—Պարոններ, եղէք դործիչներ կամ կործանիչներ, ինչ կամենաք, բայց մի մոռանաք, որ մեր կեանքը անցողիկ է։ Պէտք է դառնութիւնների հետ զըւարձութիւն էլ վայելել։

Այդ օրը Դիմաքսեանը ոսճիկ էր ստացել։ Նա պատուիրեց Սիրականին ընթրիք պատրաստել։ Շուտով ընկերական շրջանը նստեց սեղանի շուրջը բաց ախորժակով, աղատ, համարձակ, ինչպէս պարզ ուսանողներ։ Նրանք սկսեցին այնպէս զուարձանալ, խօսմել ու վիճել, որ դրսից լսողը կըկարծէր, թէ սենեակը լիքն է հանդիսականներով։ Դինին կրկնապատկել էր մի քանիսի ոգեսորութիւնը։ Մսերեանը սկսեց մի հին ուսանողական երգ։ Բժիշկ Սալամբէկեանը ընդհատեց նրան ժողովրդական մի մելամաղձիկ երգով։ Իրաւաբան Վէրիլեանը շարունակ ժպտում էր և աշխատում ցոյց տալ, թէ անկեղծ զուարձանում է։ Բարաթեանը առանձին ուրախ տրամադրութեամբ մէջ էր։ Նա սրախօսում էր սովորականից շատ և աւելի յաջող։ Առհասարակ ընկերական խընծայքներում նա յայանի էր ինչպէս ամենազուարթ սեղանակից։ Ուտում էր նա անփոյթ կերպով և անընդ-

հաստ խօսելով, և ուտում էր ամենից շատ և իւր հաստ շրթունքները այնպէս շարժելով, որ ուրիշների ախորժակին էլ նպաստում էր:

—Վէքիլեան, ես քո դիրքը չեմ հաւանում, —նը կատեց Մսերեանը, — միշտ լուռ, միշտ զդոյշ, հէր օրհնած, մի անգամ շտեսայ, որ դու ոգեսրվես ընկերներիդ շրջանում:

—Է՞ս, անցան ուսանողական օրերը, կեանքը արդու վրայ աղդում է, միշտ չի կարելի ուրախաւառ:

Այս խօսքերը նա արտասանեց մի այնպիսի փիլտրովայական եղանակով, որ, կարծես, վաղուց անցել էր կեանքի մշակող քուրան: Այդ էր, որ վրդու վեցրեց Մսերեանին, որ առանց այն էլ մտքում շատ էր համակրում իրաւաբանին:

—Աստուած սիրես, — գոչեց նա, — ինձ մօտ կեանքի մասին մի խօսիր: Տեսնում ես դլխիս մաղեծերունի ձեւանում:

Արդարե, Մսերեանը շատ օրեր էր տեսել, դառն օրեր: Ցասը տարեկան հասակում նա զրկվել էր ծնողներից, մնացել էր թշուառ, անօդնական: Մի բարետական մարդ նրան վերցրել էր իւր հովանաւորութեան տակ: Մեռել էր այդ բարեսիրտ մարդն էլ, և նա դարձեալ մնացել էր անպաշտպան: Ուսանող լինելով, շարաթներով տաք կերակրի երես չէր տեսել, ապրել էր խոնաւ նկուզներում, ընկերացել էր ամեն տեսակ մուրացկանների հետ: Երեք ձմեռ հիսոփի կիմայում անց էր կացրել առանց վերարկուի: Երկու տարի միայն նա կանոնաւոր կացարան և կերակրու էր ու-

նեցել: Թափառել էր քաղաքից քաղաք ապերախտ ընկերների շար լեզուների պատճառով:

Այդ բոլորը յայտնի էր Վէքիլեանին, որ այժմ նրա առջեւ կենսական փիլիսոփայի քղամիդ էր հաղնում: Այն Վէքիլեանին, որ ապրել և սնվել էր ապահով ծնողների դդուանքով և գուցէ չէր կարող հասկանալ, թէ ինչ ասել է «շար ասողի տակ» ծնված լինել:

—Լսեցէք, ընկերներ, լսիր, Վէքիլեան, —արտասանեց Մսերեանը յուզգած ձայնով, —կեանքը միայն նրան է ճնշում, ով իւր ուսերը տխմարի պէս դէմ է տալիս նրա հարուածներին: Մաքառեցէք անդադար, և դուք միշտ կըծիծազէք նրա վրայ: Կեցցէ վիշտ, որ մաքրում է մարդուն, ինչպէս կրակը ոսկուն...

Եւ նա, բաժակը բարձրացնելով, զարկեց Դիմաքսեանի բաժակին: Նրանց հայեացքների մէջ նշարելի էր փոխադարձ անկեղծ ընկերական խորին համակրութիւն: Իւր կրած հալածանքների և թշուառութիւնների շնորհով Մսերեանը դրաւել էր անխտիր բոլոր ընկերների համակրութիւնը: Միայն Վէքիլեանն էր, որ մտքում հեղնութեամբ էր վերաբերվում դէպի իդէալիստը: Մրա կարծիքով Մսերեանի կրած գառնութիւններն առաջացել էին իւր թուլութիւնից: Նա ոչինչ նշանակութիւն չէր տալիս նրա անցեալին, քանի որ այդ անցեալը ներկայի համար մի գործնական հետեւանք չի ունեցել: Զէ որ Մսերեանը նոյնն է, ինչոր էր տասը տարի առաջ՝ միշտ ոգեսրվող, միշտ պատանի: Նրա մտքերի մէջ չըկայ մի որոշ կապ, նա չունի ամուր աշխարհահայեացք, զտված պարզված գաղափար, որի առջեւ նսեմանային միւս

հաստ խօսելով, և ուստում էր ամենից շատ և իւր հասաւ շրթունքները այնպէս շարժելով, որ ուրիշների ախորժակին էլ նպաստում էր:

—Վէքիլեան, ես քո դիրքը չեմ հաւանում, —նըկատեց Մսերեանը, — միշտ լուռ, միշտ զգոյշ, հէր օրհնած, մի անգամ շրտեասյ, որ դու ոգեսրվես ընկերներիդ շրջանում:

—Ե՞ս, անցան ուսանողական օրերը, կեանքը արդու վրայ աղդում է, միշտ չի կարելի ուրախանալ:

Այս խօսքերը նա արտասանեց մի այնպիսի փիլսոփայական եղանակով, որ, կարծես, վազուց անցել էր կեանքի մշակող քուրան: Այդ էր, որ վրդու վերցրեց Մսերեանին, որ առանց այն էլ մտքում շատ էլ համակրում իրաւաբանին:

—Աստուած սիրես, — գոչեց նա, — ինձ մօտ կեանքի մասին մի խօսիր: Տեսնում ես դլիս մազերը, նրանք շատ օրեր են տեսել, ինչ ես լրջամիտ ծերունի ձևանում:

Սրդարե, Մսերեանը շատ օրեր էր տեսել, դառն օրեր: Ճասը տարեկան հասակում նա զրկվել էր ծնողներից, մնացել էր թշուառ, անօդնական: Մի բարեսիրտ մարդ նրան վերցրել էր իւր հովանաւորութեան տակ: Մեռել էր այդ բարեսիրտ մարդն էլ, և նա դարձեալ մնացել էր անպաշտպան: Ուսանող լինելով, շաբաթներով տաք կերակրի երես չէր տեսել, ապրել էր խոնաւ նկուղներում, ընկերացել էր ամեն տեսակ մուրացկանների հետ: Երեք ձմեռ հիւսիսի կլիմայում անց էր կացրել առանց վերաբկուի: Երկու տարի միայն նա կանոնաւոր կացարան և կերակրու էր ու-

նեցել: Թափառել էր քաղաքից քաղաք ապերախտ ընկերների շար լեզուների պատճառով:

Այդ բոլորը յայտնի էր Վէքիլեանին, որ այժմ նրա առջև կենսական փիլիսոփայի քղամիդ էր հաղնում: Այն Վէքիլեանին, որ ապրել և մնվել էր ապահով ծնողների դգուանքով և գուցէ չէր կարող հասկանալ, թէ ինչ ասել է «չար աստղի տակ» ծնված լինել:

—Լսեցէք, ընկերներ, լսիր, Վէքիլեան, — արտասանեց Մսերեանը յուզգված ձայնով, — կեանքը միայն նրան է ճնշում, ով իւր ուսերը տիսմարի պէս դէմ է տալիս նրա հարուածներին: Մաքառեցէք անդադար, և դուք միշտ կըծիծաղէք նրա վրայ: Կեցցէ վիշտ, որ մաքրում է մարդուն, ինչպէս կրակը ոսկուն...

Եւ նա, բաժակը բարձրացնելով, զարկեց Դիմաքսեանի բաժակին: Նրանց հայեացըների մէջ նշմարելի էր փոխադարձ անկեղծ ընկերական խորին համակրութիւն: Իւր կրած հալածանքների և թշուառութիւնների շնորհով Մսերեանը գրաւել էր անխտիր բոլոր ընկերների համակրութիւնը: Միայն Վէքիլեանն էր, որ մտքում հեղնութեամբ էր վերաբերվում դէպի իդէալիստը: Սրա կարծիքով Մսերեանի կրած դառնութիւններն առաջացել էին իւր թուլութիւնից: Նա ոչինչ նշանակութիւն չէր տալիս նրա անցեալին, քանի որ այդ անցեալը ներկայի համար մի գործնական հետեւանք չի ունեցել: Չէ որ Մսերեանը նոյնն է, ինչոր էր տասը տարի առաջ — միշտ ոգեսրվող, միշտ պատանի: Նրա մտքերի մէջ չըկայ մի որոշ կապ, նա չունի ամուր աշխարհահայեացք, զտված պարզված գաղափար, որի առջև նսեմանային միւս

բոլոր գաղափարները և նա կարողանար անձնատուր լինել մի որ և է նպատակի իրադորժման։ Նա գիտէ միայն խօսել, յափշտակվել և ուրիշներին ողեռուել։ Նրա դերը անորոշ է կեանքի մէջ։ Ոչ, Վէքիլեանը—Մոերեան չէ և չի էլ ուզում նրան նմանվել, երբէք։

Ընկերները ցրվելուց յետոյ Դիմաքսեանը երկար ժամանակ չըկարողացաւ այդ դիշեր քնել։ Նրա նեարդերը դրդոված էին ազմկալի խօսակցութիւնից։ Մէջքի վրայ անկողնում պառկած, անորոշ հայեացը ուղղել էր առաստաղին։ Նրա միտքը զբաղված էր ասպագայով։ Ահա այն կեանքը, որին նա վաղուց փափագում էր, այն երկիրը, այն շրջանը, դէպի ուր ձըդտում էր ուսանողական շրջանից։ Վերջապէս, նա դըտընվում է այն հողի վրայ, ուր պէտք է ցանէ տարիների ընթացքում ժողոված սերմերը։ Օ՛օ, որքան յետ է մնացել նրա մայրենի ժողովուրդը այն աղդերից, որոնց հետ նա շփվել է վեց տարի շաբունակ և որոնց քաղաքակրթութեան արդասիքները տեսել է աշքով։ Ո՛ւրան տարբերութիւն այնտեղի և այստեղի, այն կեանքի և այս կեանքի մէջ... 

Այն բազմաթիւ գաղափարները, որ բարդվել էին նրա գլխում, գործադրութեան ելք էին որոնում։ Մի ներքին հոգեկան ոյժ վառում էր նրա սիրտը անզուսպ եռանդով։ Թւում էր նրան, թէ կեանքը շատ կարճ է այդ բոլոր գաղափարների մի նշին մասն անդամ իրադորժելու համար։ Տակաւին քսան ու վեց տարեկան նա զգում էր, թէ արդէն շատ ժամանակ է կորցրել ապարդիւն։ Միւս կողմից նախանձը գըրդովում էր նրա սրտում, երբ յիշում էր անմահ մարդկանց, որ պատանեկական հասակում արդէն անուն

էին վաստակել։ Ահա հէնց այդ անմահների ստուերաներն էին, որ մզում էին նրան գէպի առաջ, որ գիշեր-ցերերէկ հալածում էին նրա միտքը և խոստանում նախանձելի ապագայ։ Այս, նախանձելի, որովհետեւ նա չի մնալ անյայտութեան մէջ, նա իւր կեանքը չի թաղիլ խաւարում։ Նա բաց կանի ոյժերով մի նոր ասպարէզ, ուր նրա անունը կըփայլի ինչպէս մի մենաւոր, պայծառ աստղը։ Մարդիկ կըճանաչեն նրան, կըլսեն նրա պատգամախօս ձայնը։ Նա կառաջնորդի իւր հայրենակիցներին դէպի լոյս, արդարութիւն, ճշմարտութիւն։ Ամբոխը, ողորմելի, եղկելի ասիական ամբօխը կըզգայ նրա ոյժը, կըսկսէ հետեւել նրան, փառաբանել, երկըպագութիւն տալ նրա հանճարին, ծափահարել նրա ամեն մի քայլը։ Եւ կըփաստակի նա մարդկային մտքի և խեցքի զեկավարի զօրաւոր անունը, և՛ կանմահացնի նա այդ անունը, և՛ ապագայ սերունդները կըդրոշմեն նրան պատմութեան էջերում։ Ի՞նչ փոյթ։ որ նա մի փոքրիկ, ցիր ու ցան եղած ազգի զաւակ է, Սուտ է, թէ միայն մեծ ազգերն են մեծ մարդիկ ծնում։ Իսկ չորս հազար ամեայ գոյութիւնը, իսկ փառաւոր պատմական անցեալլը, միթէ մի ազգի համար այդ ոչինչ նշանակութիւն չունէ։ Ինչու ուրեմն չըյուսայ, որ հասել է այն օրը, երբ այդ փոքրիկ, աննշան ազգը փարթամ մարդկութեանը պէտք է տայ մի հանճար, որ տառապեալ, խաւարամիտ և դարաւոր մթութեան մէջ դեգերվող ժողովութիւնը մէջ ըեփօրմատօրի անունը վաստակած լինի։ Եւ այդ հանճարը պէտք է լինի ինքը—Արսէն Դիմաքսեանը։ Գրավուած այս մտքերով, Դիմաքսեանը անդիւտակցաբար բարձրացել էր անկողնից և դիշերային շապկով քայլում էր սենեակում։ Նրա փոքրիկ մարմնի

ստուերը սահում էր պատերի վրայ, մերթ համնելով առաստաղին, մերթ ընկելով յատակի վրայ: Յանկարծ նրա հայեացքը հանդիպեց իւր ստուերին, և նա կանդ առաւ ու նայեց: Նա զգաց մի ցնցում և ոտը ամուր խփեց յատակին: Նա ինքն իրան թւաց այնքան փոքր, այնքան աննշան, այնքան ողորմելի, որ վրդովուեց: Առաջին անդամը չէր, որ այդ միաքը դրդում էր նրան գիշերային լոիկ մենութեան մէջ:

—Միթէ, միթէ այս փոքրիկ մարմնի մէջ այնքան զօրեղ հողի կայ, որ մի ամբողջ ժողովրդի գլուխ լինի, —գոչեց նա լսելի ձայնով:

Սակայն նոյն վայրկեանին նա շփեց ճակատը, հեռացրեց իրանից յանկարծակի պաշարած կասկածը և նորից անձնատուր եղաւ իւր երեակայութիւններին:

IV

Դիմաքսեանի ընկերներից Բարաթեանը և Վերիւեանը բուն թիֆլիզեցիներ էին, իսկ Սալամբէկեանը և Մոերեանը — գաւառացիներ:

Ամենից շատ ծանօթներ և կապեր ունէր Թիֆլիզում Վերիլեանը, յետոյ Բարաթեանը: Միւսների համար տեղական հասարակութիւնը դեռ անծանօթ աշխարհ էր, մանաւանդ Մոերեանի, որ առ հասարակ խոյս էր տալիս բազմաթիւ ծանօթներից:

Այլ էր Բարաթեանը: Այդ զուարձասէր երիտասարդի համար հասարակութիւնը ունէր շատ հրապուրիչ պայմաններ, ինչպէս և՛ ինքը շատերի համար ունէր նոյն պայմանները: Նրա ճարպիկ լեզուն, շնորհալի ձեւերը, սիրալիր ժպիտները, գեղեցիկ պարելը,

վերջապէս, արտասահմանեան կրթութեան հոչակը, եւրոպական լեզուներ իմանալը — բաց արեցին նրա համար շատ դռներ: Իսկ Վերիլեանը ծանօթացրեց նրան ըոլոր իւր ազգական ընտանիքների հետ, որոնց թիւը շատ էր: Օր չէր լինում, որ նրանք միասին հիւր չլինէին այս կամ այն ընտանիքում: Ամեն տեղ Բարաթեանին ընդունում էին հաճութեամբ, մանսուանդ որ նրա գերզաստանը քաղաքում բաւական յայտնի էր: Պատահում էր, որ այս կամ այն տիկինը մի անդամ մի հանդիսում էր, որ այս կամ այն տիկինը մի անդամ մի հանդիսում էրարաթեանին տեսնելով, դառնում էր Վերիլեանին:

—Ծանօթացրէք ինձ ձեր ընկերոջ հետ, նա ինձ գիւր է գտլիս:

Իսկ երբ Բարաթեանը ծանօթանում էր, իսկոյն հիւր էր հրաւիրվում: Եւ ոչ մի հրաւէր չէր ձանձրացնում նրան: Ահա ինչու չորս ամիս չըկար, որ նա վերադարձել էր արտասահմանից, և արդէն նրա ազգանը պտտում էր զանազան շրջաններում:

Այդ շրջաններից տակաւին հեռու էր Դիմաքսեանը: Նա թէև Մոերեանի պէս չէր արհամարհում հասարակութեանը, սակայն, զբաղված լինելով իւր ներքին աշխարհով, իւր գաղափարներով, վէճերով ու ծըրագիրներով, առանձնապէս չէր էլ մտածում ծանօթութիւնների մասին: Բայց կային մարդիկ, որ իրանք էին ձգտում նրան մօտենալ: Նոյն իսկ մի քանի ընտանիքներ փափագ էին յայտնում՝ նրան իրանց յարկի տակ տեսնել:

—Բերէք ձեր օրիմինալին մեղ մօտ, — առաց մի օր մէկը Բարաթեանին:

Դա տիկին Բախտամեան էր, Վերիլեանի ազգա-

կանուհիներից մէկը։ Տիկինը սիրում էր ծանօթութիւններ, առանձին հակումն ունէր դէպի այն երիտասարդները, որոնք իրանց ուսումով, հասարակական գործերով և անունով քիչ թէ շատ աչքի էին ընկնում։ Նա նրանց հետ վիճաբանում էր, դատում էր և առհասարակ աշխատում էր ժամանակակից ինտելիգենտ կնոջ դեր կատարել։

Մի օր Բարաթեանը Դիմաքսեանին ներկայացրեց տիկնոջը, որ իւր սովորութեան համեմատ նրան հրաւիրեց իւր տունը։ Խսկապէս Դիմաքսեանն առաջին անգամից լաւ տպաւորութիւն չէր գործել տիկնոջ վրայ իւր աննշան տեսքով։ Բայց որովհետեւ նրա անունը երիտասարդութեան մէջ բաւական հռչակ էր ստացել, ուստի ինտելիգենտ կինը կամեցաւ այդ մէկին էլ անպատճառ իւր տանը տեսնել։

Առաջին պաշտօնական այցելութիւնից յետոյ, Դիմաքսեանը նորից հրաւիրվեց Բախտամեանների մօտեւ մի երեկոյ նա, զիջանելով Բարաթեանի թախանձանքին, գնաց այնտեղ իրքեւ արդէն ընտանեկան ծանօթ։

Տիկնոջ ամուսինը—Պետր Սոլոմոնիչ Բախտամեանը նոր էր տնից դուրս եկել գործով և յետոյ պէտք է գնար քաղաքային խորհրդի նիստը։ Ինքնավարութեան առաջին կարգի իրաւասու էր և երբէք մի նիստ բաց չէր թողել։

Սենեակի խորքում խաղում էին երկու մանկահասակ աղջիկներ չորս և վեց տարեկան։ — Տիկնոջ զաւակներն էին։ Թէյի սեղանի շուրջը նրա հետ նստած էին մի դերահաս աղջիկ գիմնազիոնի համազգեստով և մի չափահաս օրիորդ։ — Պետր Սոլոմոնիչի հանգու

ցեալ քրոջ զաւակներն էին, որ ապրում էին նրա տանը։

Տնային բաց գունի հագուստով, մազերը խնամքով սանրած, սպիտակ թևերը կիսով չափ բաց տիկինը իւր տարիքից աւելի երիտասարդ էր երկում, թէեւ առանց այդ էլ նրա տարիքը քսան ու եօթից չէին անցնում, նա քաղաքում շատերի համար գեղեցկուհի էր իւր սև աչքոնքով, դէմքի թարմ գոյնով, կարմրախայտ լիք-լիք այտերով և բաւական ուռած կրծքով։ Նա հիւրերին ընդունեց նաղելի շորժուածքով ու շղկոյ բարձրանալով և քաղցր ժպտալով առանձնապէս Բարաթեանի երեսին։

Դիմաքսեանը, որ սովորաբար ամօթխած էր, շիկնեց ու շփոթվեց տիկնոջ ձեռքը սեղմելիս։ Դիմատղիօնի աշակերտուհին, յայտնի չէր ինչու, ծիծաղեց և վազեց միւս սենեակ։

Գայիհանէն—այսպէս էր մեծ օրիորդի անունը—համեմատ, հանգարտ կերպով մեկնեց Դիմաքսեանին իւր ձեռը։ Դա մօտ քսաներկու տարեկան, բաց գունի մազերով փոքր ինչ թուխ դէմքով, սև յօնքերով և կապոյտ աչքերով մի էակ էր, որի դէմքի համեմատութիւնը տիկնոջ աչք ծակող գեղեցկութեան հակատիպարն էր ներկայացնում։ Հասակով նա տիկնոջ չափ էր, բայց աւելի բարակ և նուրբ կաղմուածքով։ Նրա սրածայր և երկայնաձև քիթը ընաւ չէր խանգարում դէմքի գծերի կանոնարութեանը, թէեւ նրա երեսը ցոյց էր տալիս մի փոքր երկայնաձև։ Նա հագած էր պարզ տնային հասարակ մեխակագոյն հագուստ, — երեակայեցէք, — սկսեց խօսել տիկին Բախտամեանը, սովորական ողջոյններից յետոյ թէյի բաժակը

դնելով Դիմաքսեանի առջև,—խսկոյն ես ու Գայանէն մի շատ ժամանակակից հարցի մասին էինք զիծում, որ դուք եկաք: Ասացէք, ինդրեմ, միթէ կինը մեղանում կարող է այն դերը կատարել, ինչոր լուսաւորուած ազգերի մէջ: Ես այս մասին պարոն Բարաթեանի հետ էլ խօսել եմ: Նա ասում է, թէ դուք, պարոն Դիմաքսեան, մեր բրաւունքները տաք-տաք պաշտպանում եք. շատ ուրախ եմ, շատ ուրախ եմ: Բայց ինչ օգուտ, կինը միթէ մեղանում կարող է բերան բաց անել իւր իրաւունքների համար, Լիզոչկա, ու շալի, ոչ, ոչ, չէ կարող, մենք Ասիայումն ենք ապրում, հասկանում եք, Ասիայում: Այնպէս չէ, պարոն Բարաթեան.

Ի հարկէ այդպէս է: Միթէ ջենալմէն Բարաթեանը կարող է հակառակել ժամանակակից տիկնոջ ասածներին:

— Միայն պէտք է քաջ լինել, ուշադրութիւն չըդարձնել ուրիշների վրայ և ապրել ինչպէս եւրոպացի, տիկին, ինչպէս եւրոպացի:

— Ի հարկէ, ի հարկէ, պարոն Բարաթեան, ես էլ այդ եմ ասում: Ասում են, տիկին Բախտամեանը աղատամիտ կնիկ է, միթէ ես չըդիտեմ, որ շատերը նախանձից են խօսում: Եթէ ես ուրիշների պէս միշտ դուդվելով, զարդարվելով, հանդէսներ գնալով անցկացնէի ամքողջ կեանքս, չէին խօսիլ: Հաւատացէք, չէին խօսիլ: Ափսուս, որ մեր տղամարդկանց մէջ էլ ըիշ բարեկամներ ունենք: Ինչ ուղում էք ասէք, տասմից իննը վատ աչքով են մտիկ անում լուսաւորված կնոջ վրայ: Պարոն Դիմաքսեան, մի բաժակ էլ, էել լահե, խմեցէք, ես ցերեմօնիա չեմ սիրում, Լիզոչկա

тише, Елечка, что ты орешь? Տեսնում եք, որ լուրջ բաների մասին ենք խօսում, խելօք նստեցէք ու ականջ դրէք:

Մանկահասակ աղջիկները, որ մի օրինաւոր կօնցերտ էին սկսել, աւելի բարձր դուռացին և միմեանց մի երկու բուռնցք տալով, բաժանվեցին:

— Բաւական չար են, պարոն Դիմաքսեան, բայց մեղաւորը ես եմ, շատ եմ աղատութիւն տալիս: Ես նրանց կրթում եմ նոր եղանակով:

Խօսակցութիւնը տեղի ունէր ռուսերէն: Տիկինը, որ աղատ տիրում էր այդ լեղուին, ոչ ոքի ժամանակ չէր տալիս բերան բաց անելու: Նա շարունակեց նոյն եղանակով, անցնելով մի առարկայից միւսը, կանանց իրաւունքներից—թատրոն, թատրոնից—ճանապարհութութիւն: Մի քանի անգամ ակնարկեց, թէ եղել է արտասահմանում ամուսնու հետ, աչքով տեսել է, թէ որքան այնտեղ կանայք աղատ են:

— Ես հանդիպեցի մի վենդրուհու, որի ամսւինը Խտալիայումն էր ճանապարհորդում, խսկ ինքը գնում էր նվելցարիա: Ախ, պարոն Բարաթեան, — զուցեց տիկինը, յանկարծ խօսքը փոխելով, — դուք պարոն Դիմաքսեանին յայտնել էք մեր ժողովի մասին: Չէք յայտնել, այ այ այ, ինչպէս կարելի է:

Նա պասմեց, թէ մի խումբ կանայք վճռել են կանանց բարեգործական ընկերութիւն կազմել և թէ վաղուց է ինքն այս միտքը քարոզում էր և, վերջապէս, յաջողեցրեց:

— Գայիխանէն էլ էր աշխատում, աւելացրեց նա վեհանձնաբար, — կարելի է ասել, որ ինիցիատօրները հէնց մենք ենք, այնպէս չէ, Գայիխանէ:

Օրիորդը համեստութեամբ պատասխանեց, թէ իրան ինիցիատօր չէ համարում: Տիկինը հակառակեց, և վերջը պարզուեց, որ ընկերութիւն հիմնելու միտքը առաջին անգամ յայտնել է Բարաթեանը: Այս նորութիւնը Դիմաքսեանի սրտում զարթեցրեց մի տեսակ անախորժ զգացում: Ի՞նչպէս, նա, որ այնքան պատպանել է և պաշտպանում է կանանց խնդիրը, յանկարծ հեռու է մի գործից, որ կանանց ինքնուրոյնութեան առաջին քայլը է որոշում: Ահա ինչ ասել է հասարակութիւնից հեռու ապրել:

Նրա յուղմունքը աւելի սաստկացաւ, երբ տիկինը ասաց, թէ ապագայ ընկերութեան կանոնադրութիւնը կազմող մասնաժողովի անգամ է ընտրված և՛ Բարաթեանը: Նա յայտնեց իւր ուրախութիւնը, որ հայ կնոջ մէջ, վերջապէս, ինքնաճանաշութեան հոգի է զարթնում: Բայց, չկարողանալով զսպել իրան, աւելացրեց, թէ չէ հաւանում, որ կանայք իրանց հէնց առաջին հասարակական գործի մէջ տղամարդկանց էլ խառնում են: Աւելի լաւ է բոլորովին անկախ գործել: Պէտք է հէնց սկզբից սովորել ինքնուրոյն գործունէութեան: Տղամարդի մասնակցութիւնը կարող է նրանց վրայ ճնշում գործել:

Այս բոլորը նա ասաց հանդարտ եղանակով: Բայց նրա ձայնի մէջ այնու ամենայնիւ զգացվում էր ներքին խռովութիւն: Տիկինը հակառակեց նրան: Ոչ, ոչ, կանայք մենակ գործել չեն կարող, տղամարդը միշտ պէտք է օդնի նրանց:

Դիմաքսեանը ակամայ շփոթվեց և մոլում բարկացաւ ինքն իւր վրայ: Պարզ էր, որ Բարաթեանը այսպէս թէ այնպէս վայելում է կանանց համակրու-

թիւնը: Ուրեմն անվայել է խախտել այդ համակրութիւնը և անկարելի:

Խօսակցութեան նիւթը փոխվեց: Օրիորդ Գայիանէն սեղանի վրայ դրեց մի քանի տեսակ քաղցրաւենիներ, չոր պառուզներ, գինի և մի շիշ քաղցր ըմպելիք:

Այժմ Դիմաքսեանը աշխատում էր լինել զուարթ, անփոյթ, համարձակ, ինչպէս Բարաթեանը, որ, կարծես, իւր տանը լիներ նստած—ազատ, անշփոյթ: Բայց չէր յաջողգում: Նա զգում էր, ինքն էլ չը գիտէր ինչու, որ կաշկանդված դրութեան մէջ է: Ստէպ ստէպ նայում էր օրիորդին, խօսքը միայն նրան էր ուղղում, աշխատում էր լուրջ խօսակցութիւնից չը հեռանալ:

Գայիանէն լսում էր նրան յարգանքով, լսում էր նրա ոգեորդված խօսքերը նոր սերնդի կրթութեան, հասարակական կեանքի այս կամ այն փոփոխութեան, հայրենիքի վիճակի մասին և այն: Վյու միջոցին Դիմաքսեանը մոռանում էր հասարակ հիւրի գերը և երեան էր գալիս ինչպէս մի երգուեալ քարոզիչ: Բայց բաւական էր Բարաթեանի մի աշխարհիկ դարձուածը, մի սուր նկատողութիւնը, մի թեթև, անփոյթ հեգնութիւնը, և սենեակի մէջ տարածվում էր օրիորդի և տիկինոջ անկեղծ ու զուարթ ծիծաղը: Ծիծաղում էր և՛ նվաննան, որ միւս սենեակից վերադարձել էր:

Դիմաքսեանը ուղում էր մասնակցել այդ ընդհանուր զուարթութեանը: Սակայն նրա ծիծաղը հընչում էր կեղծ, կատակը արտայայտվում էր բռնազրոսիկ: Թւում էր նրան, որ օրիորդը մտքում ծաղրում է նրան, համարում է տաղտկալի փիլիսոփայ, տգեղ, այլանդակ, զգուելի: Այն ինչ Գայիանէն ոչ մի կերպ, ոչ մի ձեռք, բացի յարգանքից և ջերմ համակրութիւ-

նեց, ոչինչ ցոյց չէր տալիս նրան։

— Ո՞ւր էք շտապում, — ասաց տիկինը, տեսնելով,
որ Դիմաքսեանը ոտքի կանգնեց, — սպասեցէք, խըն-
դրեմ, ամուսինս կը գայ, միասին կ'ընթրենք։

Դիմաքսեանը չը համաձայնվեց։ Նա հրաժեշտ
տուեց։ Նրա ետևից դուրս եկաւ Բարաթեանը, նրանք
լուս էին և ամեն մէկը զբաղված իւր մտքերով։

— Ինչո՞ւ կանգնեցիր, — գոշեց Բարաթեանը, տես-
նելով, որ ընկերը փողոցի մայթի վրայ յետ մնաց։
Ցըտեսութիւն, ես կառքով եմ գնում։

Նա թոյլ կերպով սեղմեց ընկերոջ ձեռը և բարձ-
րացաւ առաջին պատահած կառքի վրայ։ Բարաթեա-
նը նայեց նրա ետևից զարմացած և ինքն իրան ասաց,
— Ի՞նչ պատահեց այդ մարդուն։

V

Դիմաքսեանը սաստիկ շարացած էր։ Նրա փոքրիկ
մարմինը անընդհատ շարժվում էր կառքի մէջ։ Մերժ
նա շփում էր կարծիկ ու նօսր միրուքը, մերժ ձեռը
ցնցողաբար զարկում ծնկին։

Տուն հասնելով, նա զզաց իւր այցելութեան մա-
սին։ Տիկին Բախտամեանը նրան դուր չէր եկել իւր
շատախօսութիւնով և արուեստական ձևերով։ Այդ
կողմից նա արդար էր համարում իւր այն տեսու-
թիւնը, թէ որքան կինը գեղեցիկ է, այնքան թե-
թեամիտ է։

Բայց միւս կողմից — չէ որ օրիորդ Գայիանէն էլ
տգեղ չէր։ Ինչո՞ւ ուրեմն նա դուրեկան է, այնչափ
դուրեկան, որ ազդու տպաւորութիւն է դործել Դի-

մաքսեանի վրայ։ Ահա նրա ազատ ծիծաղը, գրաւիչ
ժպիտները, կապտագոյն աչքերի մեզմ և սիրտ թա-
փանցող վայլը, ինչո՞ւ իւր սիրունութիւնով հանդերձ
նա «անտանելի» չէ։ Ո՛չ, անկարելի է շրյարդել մի
այդպիսի արարածիւ եւ միթէ սիրուն աչքերը, նուրբ
բերանը, գեղեցիկ ատամները կարող են արդեկը լի-
նել իսկը բարձրութեանը, կամքի հաստատութեանը.
սրտի վսեմութեանը։

Այստեղ Դիմաքսեանի հայեացը դարձեալ ըն-
կաւ իւր ստուերի վրայ։ Նոյն վայրկեանին նա յիշեց
Բարաթեանին, նա մտքով ինքն իրան համեմատեց
իւր ընկերոջ հետ։ Քառորդ ժամ առաջ լուսաւոր խա-
նութների առջևով նրանք անցնում էին կից առ կից։
Այբողջ ուսերով Բարաթեանը բարձր էր նրանից։ Այդ-
սարսափելի տարբերութիւնն էր, որ մի վայրկեանում
տակն ու վրայ արեց նրա սիրուն, և նա շտապեց հե-
ռանալ ընկերից, կառք նստել։

Նա մտարերեց Գայիանէի յարաբերութիւնը Բա-
րաթեանի հետ, նրանց բոլոր ձևերը, խօսելու եղա-
նակը, ամեն ինչ մանրամասնորէն։ Եւ զգաց, որ նրանց
մէջ կայ մի ինչոր լուռ փոխադարձ համակրութիւն։
Նրա մէջ զարթնեց անբացատրելի ատելութիւն դէ-
պի երկուսն էլ, մանաւանդ գէպի Բարաթեանը։ Ին-
չո՞ւ նա զուարձանում էր, սրախօսում էր, ազատ ու
համարձակ շարժվում ինչպէս սեպհական տանը։ Իսկ
ինքը... կարծես, մի աներեսոյթ չար ձեռք կաշկանդել
էր նրան ոտից մինչև գլուխ ինչո՞ւ, միթէ այն պատ-
ճառով, որ նա փոքրիկ է, աննշան, տգեղ։

Նա սկսեց անց ու դարձ անել։ Ներս մտաւ Ակ-
րականը, որ նրա կօշիկները տանի սրբելու,

Դիմաքսեանը մի զննող հայեացք ձգեց նրա վլրայ: Նրա կատաղութիւնը մեղմացաւ, և նա աւելի խորը նայեց ծառայի ծուռ ու մուռ հասակին: Կարծես, հաճելի էր նրա համար դիտել այդ տղեղ մարդուն, որ լուռ կանդնած էր նրա առաջ իւր աղաւաղված բերանը կիսով չափ բաց, շիլ աչքերով և տափակ ըժով:

— Ճշմարիտ է:

— Ի՞նչը աղա:

Դիմաքսեանը երեսը յետ դարձրեց: Նա խօսում էր մտքում: Մառան զարմացած կանդնած էր: Նա հրամանի էր սպասում: Իսկ հրաման շըկար:

Դիմաքսեանը նստեց և դարձեալ նայեց ծառային: Մի քանի վայրիեան անցած, նա կամացուկ վերկացաւ տեղից և սկսեց անց ու դարձ անել, աշխատելով, որքան հնար է, խոշոր քայլեր անել: Կարծես, նա մի խորին դրամատիքական դեր է փորձում, որ պէտք է կատարէր: Ստէպ ստէպ աչքի տակով սուր դիտում էր ծառային: Իսկ ծառան կանդնած էր, կոշտ ու սկացած ձեռները փորի վրայ դրած: Դիմաքսեանը անցնում էր նրա մօտով: Եւ նկատելի էր, որ ամեն անդամ անցնելիս աւելի ու աւելի մօտենում է ծառային, ինչպէս մի խորամանկ կատու իւր որսին:

Գիշերուայ լոռութեան մէջ, կանթեղի աղօտ լուսով, այդ երկու տարօրինակ կերպարանքների հարեանութիւնը մի խորհրդաւոր տեսարան էր ներկայացնում: Մէկը անշարժ կանդնած էր սենեակի մէջ տեղում, միւսը պտտում էր նրա շուրջը:

Երբեմն Դիմաքսեանը այնքան մօտենում էր Միրականին, որ քիչ էր մնում նրանց ուսերը միմեանց

զարկվէին: Այժմ ծառան մարմնացած ապշութիւն էր ներկայացնում: Նրա հայեացքը հետեւում էր Դիմաքսեանին: Կարծես, մի մագնիսական ոյժ բևեռել էր նրա ոտները յատակին: Նա ոչ խօսում էր, ոչ շարժվում և ոչ էլ, կարծես, ուզում էր շունչ քաշել: Միայն նրա թաւամաղ երեսը պտտում էր աջ ու ձախ, ինչպէս ծինելուզի թիթեղեայ հողմավար:

Յանկարծ Դիմաքսեանը մի վայրկենաչափ կանդառայի կադրին: Նա ուսը մօտեցրեց սիրականի ուսին, նայեց նրա աչքերին, ճակատին, կրծքին: Յետոյ մի ճարպիկ շարժուածքով հեռացաւ նրանից մի քանի քայլ և թոյլ ձայնով արտասանեց.

— Ի՞նչ կարծ ես, սիրական:

Եւ բարձրաձայն ծիծաղեց: Դա մի անսովոր ծիծաղ էր, մի ծիծաղ, որի մէջ չէր զգացվում ոչ ծաղր, ոչ գառնութիւն և ոչ զուարծութիւն, այլ աւելի բարկութիւն: Դարձեալ խորին տրտութեան քողը ծածկեց նրա երեսը: Նա թուլացած նստեց անկողնակամի վրայ, դլուխը թեքեց կրծքին և նշան արեց ծառային, որ դուրս գնայ: Յետոյ նա նստեց պարապելու: Սեղանի վրայ ցրված էին զանազան գլքեր, լրագիրներ, ամսագիրներ, ձեռագիրներ, թղթի բաղմաթիւ մանր կտորներ, որոնց վրայ գրված էին թւանշաններ:

Այս բոլորը նա պատրաստել էր մի ընդարձակ հասարակական գասախօսութեան համար, որ պէտք է կարդար մի ամսից յետոյ: Ընկերներին յայտնի չէր նրա այս մտադրութիւնը, ինքն էլ առ այժմ գաղտնի էր պահում: Քառորդ ժամ անցած պարապմունքը նորից նրան մոռացնել տուեց ամեն ինչ, և նա եռան-

գով և ոգևորված դրում էր։
 Նոյն պահին Բարաթեանը իւր սենեակում զբաղված էր այլ մտքերով։ Բաժանվելով Դիմաքսեանից, նա ոչ մի տեղ չուզեց գնալ, վերադարձաւ տուն։ Նա մտքում անիծում էր Ընկերոջը, որ այնպէս շուտ դուրս եկաւ Բախտամեանների անից։ Նա վաղուց համակրում էր օրիորդ Գայիանէին։ Թատրոնում և հասարակական այլ և այլ տեղերում ամենից առելի այդօրիորդն էր, որ գրաւում էր նրան և որին միշտ հետամուտ էր լինում։ Ուստի շատերը կարծում էին, թէ նրանք արդեն հարսնացու և փեսացու են։ Այն ինչ Բարաթեանը դեռ շատ զգոյշ էր վարփում, որպէս զի այս կարծիքը հաստատ հիմք ունենար։ Սկզբունքով նա վճռել էր ամուսնանալ, բայց ոչ շատ էլ շուտ նուտ, ոչ այն պատճառով, որ քսան ու վեց տարեկան հասակը ամուսնական կեանքի համար բաւարար չէր համարում, այլ որովհետեւ նրա հասարակական դիրքը դեռ որոշ չէր։ Կրակից ապահովող Ընկերութեան գործակալի պաշտօնը նրա աչքում մի չնշին բան էր։ Նա փափագում էր աւելի առաջ գնալ։ Բայց թէ ինչպէս— այս էր դլսաւոր հարցը։ Արքունական ծառայութեան մէջ մտնել նա չէր ուզում։ Նա բժիշկ չէր, ինժեներ չէր, իրաւարան չէր, որ իւր որոշ շաւիղը ունենար։ Եւրոպական համալսարանի գիտումը շատ շատ կարող էր նրա համար մի որ և է հայ գպրոցում տեսչի կամ ուսուցչի տեղ պատրաստել։ Բայց նրա քիմքը շատ և շատ բարձր էր այս տեսակ համեստ պաշտօններից։ Այլ բան էր եթէ նա կարողանար մի հասարակական պաշտօն ստանալ մի որ և է հիմնարկութեան մէջ, թէ կուզ քաղաքային վարչութենում, թէ կուզ մի բան-

կում կամ մի ուրիշ տեղ։
 Բայց հասարակական ընտրելին լինելու համար պէտք էին մեծ կապեր։ Եւ ահա այդ կապերից մէկը և ամենազլսաւորը, ամենազօրաւորը կարող էր լինել Պետր Սոլոմոնիչ Բախտամեանը։ Ո՞վ չէր ճանաշում քաղաքի այդ առաջնակարգ կալուածատիրոջ։ Ո՞ր վաճառականը, որ բանկիրը, որ պաշտօնեան չէր կատարիլ այդ պատկառելի քաղաքացու խնդիրը։ Ուրեմն պէտք էր գրաւել այդ զօրաւոր մարդու համակրութիւնը։ Իսկ Բարաթեանը ոչ միայն դեռ չէր գրաւել, այլ և զդում էր, որ իւր յաճախ այցելութիւնները նրան դուր չեն գալիս։ Պատճառը նա շատ լաւ գիտէր։ Պետր Սոլոմոնիչը վերին աստիճանի նախաձուտ ամուսին էր։ Եւ Բարաթեանը այդ կողմից նրան մեղադրելու իրաւոնք չունէր։ Քսան ու եօթ տարեկան մարդը չէր կարող իւր տանը սառնասիրութեանը երիտասարդ հիւրեր։ Մանաւանդ, որ տիկին Բախտամեանը, Պետր Սոլոմոնիչի կարծիքով, չափից աւելի էր ազատ վարփում երիտասարդների հետ։ Իսկ Բարաթեանը ամենից կրթուածն էր, ամենից խելօքը, ամենից որախօսը և, որ դլսաւորն է, ամենից գեղեցիկը, որի հրապոյրին դիւրին չէր գիմանալ։
 Մի բան կարող էր նրա համար տեղ բաց անել Պետր Սոլոմոնիչի սրտում—Գայիանէի հետ ամուսնաւալը։ Նա դիտէր, որ պատկառելի քաղաքացին այդ ամուսնութեան դէմ չէր լինի. միթէ Գայիանէի համար նրանից աւելի յաջող կենակից կարող էր գտնել։
 Ահա ինչու Բարաթեանը դիշերուայ կիսին առանձնացած իւր սենեակում՝ մտածում էր. ինչ անել, առաջ դիրք հաստատել, յետոյ ամուսնանալ, թէ

ամուսնանալ դիրք հաստատելու համար:

Կար և մի ուրիշ կետ, որ զբաղեցնում էր նրա միտքը կես դիշերին: Եւ որքան նա աշխատում էր չըխորհել, գարձեալ այդ միտքը յամառութեամբ հալածում էր երիտասարդին: Ժամանակ առ ժամանակ նրա աշքերի մէջ պսպղում էր մի կրքոտ փայլ: Նա իւր հաստիկ շրթունքները սեղմում էր սպիտակ խոշոր ատամներով, նրա առոյդ այտերը դողում էին, իսկ դէմքի վրայ տարածվում էր մի ժպիտ, որ յառարդ չըստացած հեշտասիրութիւն էր արտայտում:

—Ո՛չ, այդ չըպիտի անել, չըպիտի անել, գոնէ... Վէքիլեանի համար,—արտասանեցին նրա շրթունքները:

Նա նայեց աջ ու ձախ, կարծես, վախենում էր, որ մի գուցէ մէկը լսէ այդ գաղտնիմաստ խօսքերը:

Հետեւեալ օրը նա բաց թողեց, երրորդ օրը ցերեկով գարձեալ գնաց Բախտամեանների մօտ: Բարեբաղդաբար, այս անդամ Պետր Սոլոմոնիչը տանը չէր: Տիկինը նրան ընդունեց սովորական ուրախութեամբ և անմիջապէս խօսք բաց արեց Դիմաքսեանի մասին: Նա բոլորովին չէր հաւանել Բարաթեանի ընկերովը:

—Դէմքի համար չեմ ասում, Տէրը նրա հետ, վարմունքը շատ վատ է:

Այն, Դիմաքսեանը տաղտկալի է. նա ընկերական շրջանի մարդ չէ: Եարունակ վիճում է և հակառակում: Տղամարդը պէտք է յարդանքով վերաբերվի կանանց բոլոր ասածներին:

—Ինչու բոլոր ասածներին, —ընդհատեց օրիորդ Գայիանէն, —միթէ այդ պարտաւորական է:

—Պարտաւորական չէ, սիրելիս, բայց քաղաքա-

փարութիւնը պահանջում է:

—Քաղաքավարութիւնը պահանջում է միշտ կանանց շողոքորթել: Ընդհակառակը, իմ կարծիքով, տղամարդը միշտ պարտաւոր է ուղղել մեր սխալը, այսինքն մեզ հետ անկեղծ լինել:

Երկու կանանց մտքերը հաշտեցնելու համար Բարաթեանը մեզմ և համոզիչ ձայնով նկատեց.

—Այն, օրիորդ, ձեր առածը բոլորովին ճշմարիտ է, Բայց տիկինը դրա գէմ չէ: Տիկինը բարեհաճում է ասել, թէ տղամարդը կարող է կնոջ սխալը ուղղել մինչև անդամ սովորցնել նրան, բայց հասարակ կերպով և ոչ թէ վարժապետական ձեռվ խրատել: Խրատելը առհասարակ, ըըը, առհասարակ վայելուչ բան չէ:

—Ախ, պարոն Բարաթեան, —գոչեց տիկինը հիացած, —ինչ լաւ գուշակում եք իմ միտքը, երանի ամեն մարդ ձեզպէս շուտ հասկանար ինձ: Բայց, գիտէք, ձեր Դիմաքսեանը շատ պակասութիւններ ունի, ես կարծում եմ, որ այդ փոքրիկ մարդու մէջ մի շատ գոռող սիրտ է նստած: Նա պէտք է շատ նախանձու լինի: Գայիանէ, խնդրեմ, չըհակառակես, ես մարդկանց քեզանից շատ և շատ լաւ եմ ճանաչում, իզուր չեմ երկու երեք տարով քեզանից մեծ: Այն, պարոն Բարաթեան, կարող եմ ասել ձեր ընկերը դժբաղդմարդ է:

—Ինչով է դժբաղդ:

—Երբեք թէ չըդիտէք, չէք տեսնում նրա կերպարանքը, ֆի...

Բարաթեանը վեհանձնաբար նկատեց, թէ տղամարդի համար արտաքինը ոչինչ նշանակութիւն չունէ: Նրա գեղեցկութիւնը խելքն է ու սիրութ: Օրիորդ Գայ-

յիանէին շատ դուր եկաւ այս նկատողութիւնը: Նա
դազտուկ դիտեց Բարաթեանին և մաքումը ասաց.

«Դու համ գեղեցիկ ես, համ էլ խելօք»:

Նոյն օրը երեկոյեան Դիմաքսեանի մօտ դարձեալ ընկերական ժողով էր: Բարաթեանը, որ ամենից առաջ էր եկել, խօսք բաց արեց նրա հետ Բախտամեանների մասին և հաղորդեց, թէ Դիմաքսեանը օրիորդի և տիկնոջ վրայ շատ լաւ տաղաւորութիւն է դործել: Դիտաւորութեամբ ասած այս սուտը դրաւեց Դիմաքսեանին, և նոյն վայրկեանին նրա սրտում չքացաւ այն թեթև ատելութիւնը, որ գեռ մնում էր այնտեղ Բարաթեանի վերաբերմամբ:

IV

Դիմաքսեանը զբաղված էր իւր գասախօսութիւնով: Նա մոռացել էր ուսումնարանական հոգսերը, ուսուցչական նիստերը: Նոյն իսկ ընկերական ժողովները: Երբ փաստերը կազմակերպեց, բանախօսութեան դաշղափարը ծրագրեց, մի օր յայտնեց ընկերներին իւր մտադրութիւնը:

—Ի՞նչ է գասախօսութեանդ բովանդակութիւնը, —հարցրեց Բարաթեանը:

—Մեր երկրի տնտեսական դրութիւնը:

—Հիանալի միաք, —գոչեց ամենից շուտ ոգեսրվող Մսերեանը:

Նոյն հաւանութիւնը տուեց և՛ բժիշկ Սալամբէկ-կեանը: Իսկ Վերիկեանը զգուշացրեց Դիմաքսեանին, որ Ճայրայեղ մաքերից խոյս տայ, առհասարակ խոնչեմութիւնով խօսի:

—Այդ բաննումն էլ խոհեմութեանդ քիթը ներս խրեցիր, —ձայն տուեց բարկացած Մսերեանը, —Վէ-քիլեան, պառաւ հաւի մոի պէս օրից օր անմարսելի ես գառնում:

Բարաթեանը հարցրեց, թէ ինչ նպատակի է յատկացնելու գասախօսութիւնից գոյացած դումարը:

—Ազգային հիւանդանոց պէտք է բանայ, ինձ էլ կառավարիչ նշանակի, —հեգնեց Սալամբէկեանը:

Երբ Դիմաքսեանը ասաց, թէ արդիւնքը վճռել է նուրբել կանանց նոր կազմվող ընկերութեանը, Բարաթեանը յօնքերը վեր քաշելով արտասանեց.

—Միթէ: Ուրեմն, ես կուրախացնեմ տիկին Բախտամեանին և օրիորդ Գայլիանէին:

Բայց Դիմաքսեանը ասաց, թէ ինքն էլ է մտադիր այցելել Բախտամեաններին և անձամբ յայտնել իւր վճիռը: Նրա յարաբերութեան մէջ զգացվում էր մի տեսակ բարկութիւն դէպի Բարաթեանը: Նրա ձայնը նշմարելի կերպով դողում էր:

Երեկոյեան նա սպորականից աւելի խնամքով հաղնվեց և գնաց Բախտամեանների տունը: Այս անգամ Պետր Սոլոմոնիչը տանն էր: Զընայելով իւր պատկառելի տարիքին, նա տակաւին առոյդ և առողջ մարդ էր, աւելի գէր, քան նիհար, աւելի ցածր, քան բարձր հասակով: Նրա կլորիկ և ուռած երեսը, որ երկու օրը մի անգամ սափրվում էր, արտայատում էր ապահով ու անհոգ բուրժուայի տրամադրութիւն: Իսկ ալեխառն յօնքերի տակ տեղաւորված ացքերի մէջ ապրելու և երկար ապրելու ցանկութիւն էր փայլում:

Դիմաքսեանը նրա հետ ծանօթացել էր արդէն առաջին պաշտօնական այցելութեան միջոցին: Պետր

Առումնիչը հաւանել էր նրան և խնդրել էր շուտ շուտ այցել: Դա մի չնորհ էր, որին նա քիչ երիտասարդ՝ ների էր արժանացնում:

Տիկին Բախտամեանը անզգուշութիւն ունեցաւ հարցնել Բարաթեանի մասին: Դիմաքսեանը պատասխանեց, թէ նա երեկ զբաղված է, որ չեկաւ, որովհետեւ մտադիր էր գալու:

— Զբաղված,— գոչեց Պեօտր Սոլոմոնիչը կիսահերձարար,— Բարաթեանը զբաղված, այդ առաջին անդամն եւմ լսում:

Նրա հեգենութեան մէջ երեւում էր մի տեսակառելութիւն գէպի երիտասարդ: Մի ատելութիւն, որ նա չէր էլ աշխատում թագցնէլ: Օրիորդ Գայիխանէն միւս սենեակից ներս եկաւ: Նրա աչքունքը կիտվեցին, երբ տեսաւ, որ Դիմաքսեանը մենակ է եկել. երեւում էր, որ նա էլ սպասում էր Բարաթեանին, ինչպէս տիկինը:

Պեօտր Սոլոմոնիչը շարունակեց խօսել Բարաթեանի մասին.

— Հայր ու որդի մի խնձոր են երկու կտոր արած: Ես նրա հօր հետ միասին եմ ուսում առել դիմադիմովի Վարանցովի ժամանակ: Առհասարակ Բարաթովները յայտնի պառողներ են...

Դիմաքսեանը խօսակցութեան նիւթը փոխեց: Նա հետաքրքրվեց քաղաքային գործերով: Եռանդուն իրաւասուն, կարծես, հէնց մի այդպիսի բան էր սպասում, որ ցոյց տայ, թէ ինքը որքան ազատամիտ քարքացի է: Նա պաշտպանեց ջրանցքի խնդիրը: Նա խօսեց ձիաքարշ երկաթուղու օգուտների մասին, ձաղբեց մի քանի իրաւասու հռետորների, դովարանեց

քաղաքագլխին: Առհասարակ յայտնվեց, որ նրա ուղեւ զը անշափ զբաղված է: Քաղաքային գործերով: Մի հանգամանք, որ սասափիկ բարկացնում էր նրա կնոջը, որովհետև Պեօտր Սոլոմոնիչը միշտ ձանձրացնում էր նրան այն բանով, որ Աննային բնաւ չէր հետաքրքրում—դումայի պէսովէս վճիռներով:

Վերջապէս, Դիմաքսեանը յաջողեց խօսք բաց անել կանանց ընկերութեան մասին: Բայց այստեղ էլ Պեօտր Սոլոմոնիչը չըթողեց ոչ ոքի խօսել: Նա սոսով դիմով ընդգեմ էր այդ ընկերութեանը:

— Սուտ բան է, ինչ ընկերութիւն, ինչ մընկերութիւն: Մի քանի անգործ աղջիկ պարոններ հաւաքվել են, ուղում են իրանց համար գործ սարքել: Կնիկը ինչ է, որ հասարակական գործիչ զառնայ:

Տիկինը այլ ևս չըկարողացաւ իրան զսպել:

— Կնիկը իսկի էլ պակաս չէ տղամարդից: Այդպէս են, այ, պարոն Դիմաքսեան, ես ձեզ չէի տառած, հէնց որ մի քիչ աչք ենք բաց անում, ուղում ենք ուրիշների էլ աչքը բաց անել, սկսում են ծաղրել, հաւածել: Արի ու այստեղ գործ տես:

— Գործ տես, խը խը, խը, գործ տես: Ի՞նչ պիտի անի ձեր ընկերութիւնը, հարցնում եմ, շատ շատ մի ուսումնարան պէտք է բաց անի, օհօհ, երեելի բան: Տօղեք է:

Դիմաքսեանը փորձեց պաշտպանել կանանց իրաւունքները: Բայց իզուր, Պեօտր Սոլոմոնիչը կատաղի թշնամի էր կանանց գործունէութեան, առանձնապէս իւր ամուսնու մասնակցութեանը: Հարկաւ, նա թագցնում էր իսկական պատճառը: Նա կատկածում էր, որ ընկերութիւնը երիտասարդ կանանց համար մի նոր ա-

ուիթէ է տղամարդկանց հետ աւելի աղատ շփվելու համար։ Զէ որ առանց այդ էլ Բարաթեանը արդէն թը-թուացրել էր նրա սիրաբ։

—Գայիանէի համար խօսք չունեմ, եթէ նա ու-զում է, կարող է ընկերութեան մէջ մտնել, բայց դու, Աննա, հեռու պահիր քեզ, ինչ գործ ունես ջուհել—ջուլների հետ։

«.ահել—ջուլներ», ինչ, միթէ Աննան պառաւէ։ Տիկինը կատաղեց և ներքին ալէկոծութիւնից եւ-փած խեցգետնի պէս կարմրեց։ Գայիանէն պաշտպա-նեց նրան։ Նա ասաց, թէ անկարելի է, որ Աննան չըմասնակցի ընկերութեանը, քանի որ գործը արդէն սկսվել է։ Բացի դրանից, եթէ Աննան հեռանայ, ինքն էլ պէտք է հեռանայ։

—Առանց նրան ինձ համար անյարմար է գործե-լը, ես չեմ ուզում շատ էլ ինքնագլուխ լինել։

Սյո դարձուածը դուր չեկաւ Դիմաքսեանին։ Նա բացատրեց, թէ ով կամենում է ուրիշներին օգտա-էտ լինել, առաջ ինքը պէտք է սովորի անկախու-թեան։ Խսկապէս նա մի բան էր ցանկանում—տես-նել օրիորդին աղատ որ և է հովանաւորութիւնից, մա-նաւանդ տիկին Բախտամեանի, որի համակրութիւնը գէսի Բարաթեանը անչափ տհաճութիւն էր պատճա-ռում նրան։

Նրա միջամտութիւնը մի նոր գրգիռ տուեց տիկ-նոյ բարկութեանը։ Արդէն նա առանց այն էլ ոիրելի չէր տիկնոյը, իսկ այժմ յանդգնում է Գայիանէին ա-զատել նրա ազգեցութիւնից։

—Լաւ, —հազիւ զսպելով իւր կատաղութիւնը, ա-սաց տիկինը, —թողնենք այս խօսակցութիւնը։

Եւ մի վատ հայեացք ձգեց Դիմաքսեանի վրայ։ Դա մի լուռ նշան էր, որով նա մի անգամ ընդմիշտ յայտնեց իւր հակակրութիւնը երիտասարդին։ Պետր Սոլոմոնիչը նկատեց այդ և, կարծես, կնոջը աւելի գրգռելու համար, սկսեց աւելի սիրալիր վարվել իւր հիւրի հետ։

—Ես կըկամենայի, —ասաց նա, —որ այդ ընկե-րութեան մէջ դուք էլ խառն լինէք։ Դուք շատ օ-դուտ կըտայիր։

—Անմիջապէս չեմ խառնվիլ, բայց կողմնակի կերպով կաշխատեմ օգտաւէտ լինել, —պատասխանեց Դիմաքսեանը, օգտվելով հանգամանքից, —Ես մտա-դիր եմ շուտով ընկերութեան օգտին մի դասախօ-սութիւն կարդալ։

Լուրը շատ լաւ տպաւորութիւն գործեց օրիորդ Գայիանէի վրայ։ Նա մինչեւ անգամ ուրախացաւ։ Սյո ինչ տիկին Բախտամեանը նկատեց, թէ դասախօսու-թիւնից հազիւ փոքր ի շատէ մի խոշոր գումար գո-յանայ։ Օրիորդը ասաց, թէ բանը գումարը չէ, այլ համակրութիւնը։ Տիկինը, Դիմաքսեանին գրդռելու նպատակով, յայտնեց, թէ Բարաթեանն էլ մտադիր է թատրոնասէրների մի ներկայացում կազմել։

—Սյ, ներկայացումը ուրիշ բան է, ես կարծում եմ հազար ըուբնի կըմտնի մեր գանձարանը։

Տիկինը հասաւ իւր նպատակին։ Դիմաքսեանը լուռ, աչքերը լայն բաց անելով, նայեց նրա երեսին, այնքան վատ հնչեց նրա ականջին այդ անսպասելի նորութիւնը։ Դարձեալ Բարաթեանը, այդ ինչ բան է, միթէ երկու ընկերները սկսում են մրցել կանանց դուր գալու համար։

Արդէն բաւական ուշ էր, ժամանակ էր հրաժեշտ տալու, իսկ նա չէր ուզում կամ, ճիշդն ասած, չէր կարողանում տեսից վերլենուլ: Կարծես մի բան նըրան կապկրպել էր և կպցրել բազկաթոռին, որի վըրայ նա շարունակ նստած էր ներս մտնելու բովէից:

Նրա գէմ ու գէմ սրտոխն քաշ արած էր մի մեծ հայելի: Մինչեւ այժմ նա այդ չէր նկատել: Յանկարծ նրա հայեազքը լնկաւ իւր փոքրիկ կերպարանքի վըրայ, և նա մի ոլոշ ցնցողական շարժում գործեց: Այս, նըրան նա պղտիկ և աննշան էր այդ բովէին իւր աշքում: Փափուկ բազկաթոռը տղահութեամբ ամբողջովին կլանել էր նրան, և միայն երեսում էր նրա խոչ գլուխը:

Դարձեալ նա շփոթվեց, դարձեալ ինքնասիրութեան զգացումը գրգովն ուրա մէջ: Նա կամեցաւ հակառակել մէկին, ում և իցէ. վիճել, կռվել: Նա պատրաստ էր նոյն իսկ Գայիօ էն հէնց իսկոյն, առանց այլ և այլի, սաստիկ յանուի իմանել: Անսիրութիւնը. ինչո՞ւ չես ճանաշում քո գէմ նստածին: Միթէ կարծում ես այդ փոքրիկ մարմնի մէջ նստած հոգին նոյնպէս փոքրիկ է: Ա՛շ, դու պէտք է ճանաշես Գիմաքսեանին, պէտք է զգաս նրա մաքի և հոգու զօրութիւնը: Նա ուրի կանգնեց յանկարծ, անսպասելի կերպով: Նա գունատ էր, և ոչ ոք շրդիտէր նըրա գունատութեան պատճառը: Ոչ ոք չըխնդրեց նըրան ըշտապել, բացի Պեստր Սոլոմոնիչից, այն էլ կիսարերան: Նա գուրս եկաւ շտապ քայլերով, Փողոցի սառն օդը խփեց նրա տաքացած ճակատին: Նա ուշի եկաւ. զգաց, որ չափաղանց շփոթված էր, ըդգաց նոյնպէս, որ անշուշտ վատ աղդեցութիւն է թո-

ղել օրիորդի վրայ: Մի վայրկեան կանգ առաւ փոշոցի մէջ տեղում, ամուր սեղմեց ճակատը և հառաչերով արտասանեց:

— Եյս, տեսնում եմ, որ այդ օրիորդը ինձ խելքից պէտք է հանի:

Եւ քաշը վելով խոնաւ սալայատակի վրայ, անհետացաւ գիշերային միթութեան մէջ:

Տիկին Յախսամեանը, հիւրը գնալուց յետոյ, առզատութիւն տուեց իւր կատաղութեանը: Արդէն նա բաւական տանջվել էր, զսպելով իւր սրտի ալէկոծութիւնը:

— Վերջը դու քեզ էլ, ինձ էլ ծաղրի առարկայ կըդարձես ուրիշների մօտ: Տէր Աստուած, ինչ խայտառակութիւն, այն էլ ում մօտ, մի մի մի...

— Մի երեսի և պատուական երիտասարդի մօտ: Բաս, Գիմաքսեանը հիանալի մարդ է, նա իմ շատ լաւ բարեկամն է:

— Լաւ բարեկամ ես գտել, անս ուրիշները ձեռքիցդ չըխլեն, հա հա հա:

— Ասում եմ, հիանալի երիտասարդ է, դու էլ առա «հա»: Այնպէս չէ, Գայիանէ, բարի, խելօք, իւմաստուն երիտասարդ է:

Գայիանէն ոչինչ չըպատասխանեց և ոչ մի նշանով շարտայայտեց իւր համակրութիւնը կամ հակակրութիւնը: Պեստր Սոլոմոնիչը շարունակեց:

— Իմ աչքում նա ամենաքիչը մի գիւմին Յարաթօնիներ արժէ, ուղիղ մի գիւմին: Նրա մի ծուռ քիւթը չեմ վոխիլ առար սիրուն փանոների հետ, բաս, չեմ փոխիլ քո այդ... լպատած Յարաթօնիների հետ:

Եւ բարկացած անշաւ իւր սենեակը:

— Խելադարվել է այսօր ինչ է, — գոչեց տիկինք Բախտամեանը, — ինչու է այդպէս կատաղել հօակ Գասպարիչի դէմ: Կարծեմ, ամենքն էլ գիտեն, թէ ինչու համար եմ այդ երիտասարդին ընդունում: Գայիանէ, խօմ, դու գիտես, ինչու չես պաշտպանում, ես քո պատճառով եմ այս նախատինքը ստանում ամեն օր:

Օրիորդը մի վայրկեան գլուխը թեքեց կրծքին և ոչինչ չըպատասխանեց: Մի ինչոր մութ, անորոշ կասկած շփոթեցրեց նրան: Նա չէր ուղում տիկնոջ երեսին նոյել: Այն ինչ՝ տիկինը միայն կանաց յատուկ նուրբ բնազդումով զգաց նրա շփոթութեան հիմնական պատճառը: Դա միայն օրիորդի համակրութիւնը չէր Բարաթեանին, այլ կար մի ուրիշ, աւելի լուրջ հիմունք: Ինչու Պետար Սոլոմոնիչը այնքան պարզ նախանձում է Բարաթեանին, մտածում էր օրիորդը: Միթէ իդուր, հէնց այնպէս: Ոչ, ոչ, այդ անկարելի է: Պետար Սոլոմոնիչը թեթեամիտ, անտակտ մարդ չէ: Անկասկած նրա ամուսնական սուր աչքերը հեռուում, գուցէ շատ հեռուում մի կասկածելի մութ գիծ են նշմարում: Վերջապէս, ինչու Գայիանէի սիրտը երբեմն ակտմայ, հակառակ խելքին, հակառակ Բարաթեանի մասին կազմած նպաստաւոր կարծիքին, ենթարկվում է մի վատ, մի գարշելի, մի գիւային կասկածի:

Նա գլուխը բարձրացրեց: Տիկինը, բութ մատը աստամներով կծած, նայում էր յատակին:

— Այս, գոչեց նա յանկարծ, խոյս տալով Գայիանէի հայեացքից, — երեխաները քնեցին առանց ինձ համբուրելու:

Նա արագ քայլերով անցաւ կից սենեակը, ուր ննջում էին նրա մի զոյդ զաւակները: Գայիանէն նայեց նրա ետեից, և մի դառն ժը պիտ երեաց նրա սիրուն ըրթունքների վրայ: Այդ գիշեր մի ծանր, մի դաժան միտք երկար ժամանակ նրան հանգստութիւն չէր տալիս:

VII

Վերջին ժամանակ Գիմաքսեանը տանը շատ քիչ էր զբաղվում: Հակառակ սովորականին, ամեն երեկոյ նա դուրս էր գալիս Մսերեանի հետ զրօննելու և այնքան երկար ժամանակ մինչև որ յագնում էր: Նա անհանդիսաւ էր, տխուր, քիչ էր խօսում և առհասարակ շատ զարմացնում էր Մսերեանին:

Մի օր Երկու ընկերները զնացին Վերիեանի մօտ, ուր նրանք գեռ չէին եղել: Թէև իրաւաբանը իւր ծնողների հետ էր ապրում, բայց նրա բնակարանը բոլորովին առանձին էր, բաղկացած երկու մտքուր և սիրուն կահաւորված սենեակներից:

Այսաեղ ամեն բան իւր տեղն էր, և փափուկ ծքեղ անկողինը, և թաւշեայ բազկաթոռները, և օրորվելու աթօռը, և կարմիր մահուրդով ծածկած զըրասեղանը իւր բոլոր պարագաներով, և տուալէտի սեղանը հոտաւէտ իւղերով, բազմաթիւ խողանակներով և այլն և այլն: Ամեն տեղ երեսում էր մաքրաւէր, ճշտասէր, զգոյշ և ֆրանտ Վերիեանի ստուերը: Նոյն իսկ սենեակների ձեր յիշեցնում էր կենողին:

Իրաւաբանը իւր ընկերներին ընդունեց անսահման բաղաքավարութիւնով, հիւրասիրեց քաղցրահամ

լսմիջքներով և անուշահոտ սիդարով։ Նրան առաջարկել էին գաւառում քննիչի պաշտօն, չեր ընդունել։ Նա կամենում էր անպատճառ թիֆլիդում մնալ, Երեք ամիս էր նա սկսել էր պարապվել փաստաբանութիւնով «երդուեալ հաւատաբմատարի օգնականի» կոչումը ընդունած։

Նա պատմեց մի քանի գատաստանական էպիզօդներ, միշտ աշխատելով իւր արհեստի վսեմութիւնը պաշտպանել։ Փաստաբանութիւնը, իրաւ է, շատերի համար հարստահարութեան աղբիւր է, ասում էր նա, բայց ոչ «բարոյական սկզբունքի տէր և բարեխից» մարդու համար։ Ասպարեզը ընդարձակ է, մարդկութեանը ծառայել կարելի է, Ոլքան անմեղներ կան պաշտպանութեան կարօտ, քանի քանի կեանք կարելի է կորստից փրկել։ Միհնոյն ժամանակ, այստեղ աւելի հնարաւոր է «ազգի համար օգտակար» լինել, քան մի ուրիշ աեղ։

Արդէն ամեն օր գաւառներից հայեր են գալիս նրա մօտ։ Նա վճռել է առաջ նրանց պաշտպանել, յետոյ ուրիշներին։ Բացի դրանից, սկզբունք է դրեւ հայերից երեսուն տոկոս պակաս վերցնել գոնորարը և մինչեւ կեանքի վերջը պէտք է այդպէս անի։ Մի հարուստ վաճառական հինգտասը հաղար տալիս է ազգին և իւր անունը անմահացնում։ Իսկ նա քիչքիչ քսան տարի փաստաբանութիւն կանի, և նրա երեսուն տոկոս զիջողութիւնը մի քանի տասնեակ հազարներ կը կազմի։

—«Կարծեմ, հայ ազգը դժգոհ չըպիտի լինի մեղանից։

Նա խօսում էր լուրջ եղանակով, հանդարատ, ու-

մեն բառը առանձին չեցածելով, ինչպէս տարիքը լըրացրած մի փորձված դիտումատ։ Ժայռը չէր հեռանում նրա երեսից, ոչքեւի ըիբերը անբնդհատ խաղում էին, ինչպէս մի զոյտ լուսաւոր ջահեր, որ առաջնորդում էին նրան դէպի անդորր, ապահով և անվրդով կեանք։

Դուրս գալով նրա մօտից, Մսերեանը յայտնեց Դիմաքսեանին իւր վրդովմունքը, նա ասաց, թէ, կարծես, մի բան օրից օր անջատում է նրան իրաւաբանից և թէ դիմանալ չի կարող այդ մարդու յդկած մարմարիօնի պաղութեանը։

—Ես կարծում եմ, Եթէ աշխարհում ջրհեղեղ լինի, Վէքիլեանը ապահով նստած մի երկար ձողի դլսին, այստեղից էլ կը ժողովայ։

Իրիկնադէմ էր, եղանակը ցուրտ։ Փողոցների սառած ցեխը սեացել էր և կպել գետնին ամուր քարի սէէս։ Գանդաղ ձիւնի աստղաձև հատիկները քիշքիշ ծածկում էին երկիրը բարակ սպիտակ շղարշով։ Օդը անշարժ էր, քամու նշոյլ անդամ չըկար։ Քաղաքացիների զբօսանքի սովորական ժամանակն էր։ Գալավինսկիյ պրոտպեկախի վրայ անց ու դարձ էր անում բաւական մեծ բազմութիւն։ զուարճանալով ձմեռային այն սառն և դիւրեկան եղանակով, որ հազիւ է պատահում Թիֆլիդում գետրուարի սկզբին։

Երկու ընկերները մտան ամբոխի շարքը։

Մսերեանը տաքացած պարսաւում էր մի ինչոր հիմնարկութիւն, ուր նա կանցել էր պաշտօն ստանալ, կառավարիչը նրանից վիայական էր պահանջել։ Դիմաքսեանը հանդստացրեց նրան, ասելով, թէ չարծէ վրդովիկել, Եթէ փողի կարւաւթիւն ունէ, կարաղ

է նրանից ստանալ:

—Որ սպանեա չեմ վերցնիլ,—հրաժարվեց Մոեւրեանը,—փողի պարաքը բարոյական ծանրութիւն է է ինձ համար: Փառք Աստուծոյ, դեռ շատ էլ քաղցած չեմ, երկու դաս ունեմ:

Նրանք քայլում էին արագ-արագ: Դիմաքսեանը հազիւ կարողանում էր հետեւ Մոեւրեանի լայն քայլերին: Յանկարծ նա սայթաքեց և անշուշտ կընկնէր, եթէ ուղեկիցը իւր ուժեղ ձեռով շրբունէր նրա թեւից: Նա բարձրաձայն ծիծաղեց ինքն իւր վրայ, ոչ այնպէս, ինչպէս ակամայ ծիծաղում են սառուցի վրայ սայթաքողները: Դա մի արուեստական ծիծաղ էր, որով նա քօղարկում էր իւր՝ փոքրիկ մարմնի թերութիւնից առաջացած՝ բնական վրդովմունքը:

Հազիւ նա գլուխը բարձրացրեց, և մի ուրիշ գեպք աւելի վրդովեցրեց նրան: Դէմ ու գէմ գալիս էր Բարաթեանը, ուրախ, զուարթ, գեղեցիկ, առողջ Բարաթեանը—Գայիանէի հետ: Յուրաը օրիորդի գէմքին առուել է մի անընական կարմրութիւն: Նրա կապոյտ աչքերի մէջ վառվում էր կենսականութեան հուրը իւր բոլոր ոյժերով: Գեղեցիկ փետուրով դարդարված գլխարկի տակից երեսում էին գանդուր մազերի ծայրերը: Ի՞նչ սազում էր նրա երեսին և հասակին այդ կախուղ մեխակագոյն «բօան», որ անփոյթ կերպով գրկել էր նրա պարանոցը:

Դիմաքսեանը կամեցաւ երեսը յետ դարձնել, որ անցնողներին շտեանի: Բայց Բարաթեանը դեռ հեռուից գլխարկը բարձրացրեց, իսկ Գայիանէն մի քանի անգամ գլուխը շարժեց: Նրանք անցան, թողնելով Դիմաքսեանի ականջում իրանց անհոգ քրքիջի

հնչիւնները, նրա ծնկները դողացին: Բայց ինքնասիւրութիւնը թելադրում էր զսպել շփոթութիւնը, և նա դարձեալ ծիծաղեց, այս անդամ աւելի անընական և աւելի բռնի կերպով:

—Ինչպէս երեսում է, մեր պարոնի աչքը կպել է այդ տղջկան: Ամեն օր նրանց միասին եմ տեսնում:

Երանի քեզ Մոեւրեան, որ կարողանում ես այդ խօսքերը սառն կերպով արտասանել: Ուշադրութիւն դարձրու քովդ դնացողի վրայ, նա միանդամայն ընկնիւլ է, փոքրացել: Նա հազիւ կարողանում է քայլել, նրա շրթունքները և երեսի կաշին ցնցփում են:

—Դու մրանում ես:

—Այս, —պատասխանեց Դիմաքսեանը, թէե նրա ամբողջ մարմինը վառվում էր ներքին կրակից:

—Մանենք այն կամինատոննը, ես կամենում եմ մի բաժակ թէյ խմել:

Նրանք անցան հակառակ մայթի վրայ և մտան մի տան ստորին յարկը: Երկու փոքրիկ սենեակները լիքն էին հիւրերով: Նրանք նստեցին առանձին սեղանի մօտ, ոչ հեռու երեք պարոններից, որոնք այդ միջոցին տաք տաք վիճաբանում էին: Մէկը այդ պարոններից, որ աւելի տարիքաւոր էր, պնդում էր, թէ էջմիածնի նոր բացված ճեմարանի հիմնական նպատակն է ընտիր հոգեօրականներ պատրաստել: Միւսները հակառակում էին, թէ միայն հոգեօրականներ պատրաստելը բաւական չէ, ճեմարանը պէտք է աղդային գիտութեան նախադուռը լինի, նա շըպիտի սահմանափակվի կղերական հոգով և այլն և այլն:

—Ներողութիւն, մեր գոյտթիւնը միայն եկեղեցուց է կախված, մենք կրօնական ազգ ենք,

— Ուրեմն դուք հերքում եք ազգային գոյութեան առաջին հիմքը — հողը և լեզուն:

Դիմաքսեանը և Մոերեանը ակամայ հետաքրքրվեցին այս վիճաբանութիւնով և լուս լսում էին:

Տարիքաւոր պարոնը բարկացած ընդհատեց իւր սեղանակիցների խօսքը և վերկացաւ:

— Այդպէս եք, այ, — դոչեց երիտասարդներից մէկը, — միշտ փախչում եք վիճաբանութիւնից: Իղուր չի ասում Դիմաքսեանը, թէ յետադէմները գիտեն միայն պատի ետևից կովել:

— Ի՞նչ Դիմաքսեան:

— Նա, որ հնապաշտների անմիտ կուռքերը ջարդու փշուր է անում:

Տարիքաւոր պարոնը ուսերը թօթվեց և գուրս եկաւ: Միւսները նոյն վայրկեանին նկատեցին Դիմաքսեանին և միաժամանակ շփոթվելով կամացուկ գուրս դնացին:

Դիմաքսեանի սիրութ լցվեց անսահման ինքնագուհութեամբ: Այդպէս, ուրեմն, արդէն նրա մասին խօսում են, նրա խօսքերը ապացոյց են բերում, նրա առաջ խոնարհում են: Աչա խելքի ոյժը: Եւ ով կարող է այսուհետեւ ասել, թէ նա կոչված չէ հասարակական մտքի առաջնորդ դառնալու: Դարձեալ նա բարձրացաւ իւր աչքում, մոռացաւ մի քանի բողէ առաջ կրած անախորժ զգացումները: Նա զգաց իւր մէջ մի այնպիսի բարոյական ոյժ և ոգեսրութիւն, որ մինչեւ այդ ժամանակ չէր զգացել:

— Լոեցիր, — ընդհատեց նրա մտքերը Մոերեանը, — կընշանակէ խօսք արդէն սկսել է աղղել, շատուրախալի է այդ:

Դիմաքսեանը պատրաստ էր դրկել և համբուրել ընկերովը, այդ բարեսիրտ, աննախանձ և սիրելի Մըսերեանին:

Նա շտապեց դուրս գալ կաթնատնից: Այժմ նա զդում էր աշխատելու անդսպելի պահանջ: Ո՛չ, չըպիտի մտածել ուրիշ ոչ մի բանի մասին, պէտք է գործել, օգուտ բերել և անուն վաստակել: Խելքի ուժով ստնատակ անել մարդկանց ծաղրը, արհամարհանքը: Թող անուշաղիր թողնեն նրան գեղեցկադէմ կտնայք, կրգայ ժամանակ ամենքը կըխօնարհվեն և երկրպագութիւն կըտան նրա հանճարին: Երբէք նոցի ընկնիլ աշխարհի հաճոյքների ետևից: Երբէք իւր թանգագին օրերը չի վատնիլ անմիտ կենցաղավարութեամբ: Սիրել մէկին, ինչու, բանի որ կարելի է սիրել ամբողջ մարդկութիւնը: Սիրել արդեօք, ոչ, ատել և ատելով հանդերձ գործել ամենքի համար:

Այսպէս էր մտածում նա դրսում, իսկ երբ տուն հստակ, կրկին պատկերացաւ նրա առջև զուարթ, ուշրախ, գեղեցկադէմ Բարաթեանը: Այն, նա կեանը մէջ յաջողութիւն կունենայ, նրան կըշրջապատեն սիրուն կանայք, նա կը փայլի հարուստ սալոններում, նրա ետևից զգուանքով կընկնեն մայրերը: Իսկ ինքը կըմնայ աննկատելի, ընկճգած, ձնշված հասարակական շրջաններում, կանանց ընկերութեան մէջ: Նրան կըհամարեն տաղակալի, ձանձրալի, տղեղ, որովհետեւ նա շունէ Բարաթեանը: շուքը և հրապարյը, նրա ուշրախ և սիրուն գէմքը, նրա համարձակ և էլեգանտ ձևերը: Կրկին նրա մտքերը տակն ու վրայ եղան, նորից զառնութիւնը համակեց նրա սիրուն նա կատաղեց իւր թուլութեան գէմ, նա անիծում էր իւր փո-

քրոգութիւնը և, միւնոյն ժամանակ, չէր կարողանում
խեղդել իւր մէջ այն վտանգաւոր ցեցը, որ սկսել էր
ուտել նրա սիրաը և որի անունն էր նախանձ:

VIII

Օրիորդ Գայիանէն աշխատում էր տարածել Դի-
մաքսեանի դասախոսութեան տոմսակները: Առանձին
սիրով օգնում էր նրան Բարաթեանը, ոչ այնքան իւր
ընկերոջ ունկնդիրների թիւը շատացնելու, որքան օ-
րիորդին և տիկնոջը դիւր դարու համար: Խոկապէս
նա Դիմաքսեանի դասախոսութեանը մի առանձին
նշանակութիւն չէր տալիս և յաճախ թեթեակի հետ-
նում էր նրան օրիորդի ու տիկնոջ մօտ: Իւր հոգոյ
խորքում այն կարծիքի էր, որ Դիմաքսեանը անկարող
է որ և է միաք լոգիկաբար, դրական ձեռով, անշեղ
արծարծել: Նա զգում էր ընկերոջ եռանդը, բուռն
ձգտումների ոյժը, բայց համարում էր նրան անկա-
նոն խելքի տէր: Նա հաւատացած էր, որ այդ երան-
դը ու ձգտումները նրա մէջ առաջ են գալիս անյադ-
փառասիրութիւնից, որ նա ճգնում էր հասարակու-
թեան մէջ հռչակ ձեռք բերել:

Բացի դրանից, նա Դիմաքսեանին համարում էր
վերին աստիճանի նախանձոտ Գիտէր, որ ընկերը ան-
տարբեր չէ դէպի օրիորդ Գայիանէն: Եւ այս առի-
թով մտքում ծաղրում էր Դիմաքսեանին, աչքի առջե-
ունենալով նրա փոքրիկ և տգեղ կերպարանքը: Միև-
նոյն ժամանակ, նա սրաի խորքում զգում էր մի ան-
բացարելի երկիւղ այդ մարդուց և շատ էլ դիւրին
բան չէր համարում նրա հետ մրցելը:

Խոկ օրիորդ Գայիանէն օրից օր աւելի ու աւելի
ընտելանում էր Բարաթեանին: Նրանք տեսակցում
էին այժմ շատ յաճախ: Իւր բարեբարոյ բնաւորու-
թեան շնորհով նա փոքր ինչ դրաւել էր Պետր Սո-
լյանիչին, դոնէ այնչափ, որ կարողանում էր շաբա-
թը մի կամ երկու անգամ այցելել օրիորդին: Ուրիշ
ժամանակ նա Գայիանէի հետ տեսնվում էր մերթ-
ծանօթ ընտանիքներում, մերթ թատրոնում, իսկ ա-
մենից աւելի փողոցում:

Միւրոյ բացարձակ արտայայտութիւն տակաւին
տեղի չէր ունեցել նրանց մէջ: Սակայն երկուսն էլ
դիտէին, որ միմեանց համակրում են:

Մի անգամ Բարաթեանը խօսք բաց արեց Դի-
մաքսեանի մասին և թոյլ տուեց, որ օրիորդը ասէ
իւր կարծիքը: Գայիանէն գովեց Դիմաքսեանին, հա-
մարելով նրան շատ խելօք, մինչեւ անգամ տաղանդա-
ւոր: Բարաթեանը քթի տակ թեթեակի ծիծաղեց,
օրիորդը շփոթվեց:

— Խոկ ձեր կարծիքով նա ինչպէս մարդ է:

Բարաթեանը մի քանի վայրկեան մտածեց, ա-
պա խորհրդաւոր եղանակով արտասանեց.

— Նա, ըըը, նա անօրմալ մարդ է:

Ուրիշ նա ոչինչ շաւելացրեց, այս երկու խօսքով
արտայայտած համարելով իւր ամբողջ դադափարը
Դիմաքսեանի մասին:

Դասախոսութեան երեկոյ նրանք միասին գնա-
ցին կուբ: Հակառակ սպասածին դահլիճը կիսով չափ
էր միայն լիք: Ետքերը տոմսակների գները վճարել
էին, իրանք չէին եկել: Հանդիսականների մեծ մա-
սը բաղկացած էր ուսուցիչներից և վարժուհիներից:

Դային և մի քանի գոռող զոյգեր, որոնք իրանց արխուտովատ էին համարում այն հիման վշայ, որ միջոց ունէին ժամանակակից մօգայով հաղելու, եսկ վաճառական դասից շատ քչերն էին ներկայ:

Դահլիճի ծայրում երեւում էր գրքակալի նւան մի նեղ սեղան, որի վրայ գրած էին մի բաժակ և մի շիշ լի:

— Շիշ փիլիսոփայութեան պաօֆեսօրի անրիսն, — հեգնեց Բարձեան:

Յետոյ նա, ներողութիւնը խնդրելով Գայիանէից, թողեց նրան մի ծանօթ տիկնու հետ, շտապեց Գիմաքսւանի մօտ:

Գասախօսուր շրջապատված էր իւր ընկերներով, Մաքրւր, նորածե հագնված Վերիւեանր, տեսնելով Բարաթեանին, զլխով մի ծաղրական շասմաւմ գործեց դասախոսի վերաբերմամբ: Նա նոո սափրած կոլորիկ թուխ երեսի կաշին փայլում էր ինչու, ո լայշեած ձեռնոց: Այդ երիտասարդը՝ առ հասառուկ ամեն մի հասարակական գործի և գործիքի վերաբերվում էր թերահաւատօրէն, բայց երբէք պարզ չէր արտայայտում իւր կարծիքը: Միայն նրա փաքրիկ, խորամանկ աչքերի մէջ կարելի էր կարգալ այդ կարծիքը, որ միշտ աննպաստ էր, մանաւանդ Գիմաքսւանի վերաբերմամբ:

Նա փոքր ինչ ակնածում էր միայն Բարաթեանից, որի սուր լեզուն, անփայթ վարմունքը և, միևնոյն ժամանակ, զգոյշ դատողութիւնները թէ նրան դուր էին դալիս և թէ վախեցնում էին:

— Ինչու չի սկսում, — հարցրեց Բարաթեանը:
— Սանիսն խորհուրդ չի տալիս շուտ սկսել:

Վերիւեանը «Սանիս» անուանում էր Մաքրեանին, Հարկաւ, Դօնքիշոտի տեղ ընդունելով Դիմաքսւանին:

Այդ միջոցին գասախօսը մօտեցաւ հայելուն փողկապը ուղղելու: Նա հագած էր ֆրակ, որ նրա փոքրիկ ու ոսկորոտ մարմնի անկանոն մասերը աւելի ու աւելի որոշ էր կացուցանում: Հայելու մէջ նա տեսաւ իւր ետեւում կանգնած Բարաթեանին: Մօտալուս համեմատութիւնը գարձեալ գրգռեց նրա բնական նախանձը: Նա գունատ երեսը գարձրեց, բարեեց ընկերոջը և, ճակատը շվելով, գուրս եկաւ բեմ: Հանգիսականները նրան ընդունեցին կարճատե և դանդաղ ծափահարութիւնով:

Գասախօսութիւնը բաղկացած էր երկու մասից, առաջինը ընդհանրապէս քաղաքատնտեսութեան էր վերաբերվում, երկրորդը երկրի տնտեսական վիճակին:

Ամուր, անյողգողդ և ազգու ձայնով նա բացատրում էր գիտութիւնը: Նա խօսում էր ոչ իրրե մի մասնագէտ չոր ու ցամաք թեօրիայի սառն արամաբանութիւնով, այլ պարզ, համառօտ և մատչելի ոճով, ինչպէս մի խոկական պրօպագանդիստ:

Ունկնդիրները հետաքրքրվեցին:

Հետզհետէ նա ոգեսորվում էր: Մերթ նրա ձայնը բարձրանում էր, մերթ մեղմանում: Երբեմն նա կանդէր առնում և մի քանի կաթիլ ջրով կոկորդը թրջում: Նա չէր շփոթվում, չէր գողում, ինչպէս անփորձ դաստիառները: Նա ազատ տիրում էր խօսքին, որպէս հմուտ բարողիչ կամ չնորհալի գերասան: Շարքերով ցցված զլուխները նրա աչքում խառնվել էին և կաղմել մի տգէա, խաւար ամբողջութիւն, դէպի ուր նա սփռում էր լուսոյ շողբերը: Որքան նա բարձր էր ըզ-

Դային և մի քանի գոռող զոյգեր, որոնք իրանց արխուտոկատ էին համարում այն հիման վրայ, որ միջոց ունին ժամանակակից մօդայով հագնվել, իսկ վաճառական դասից շատ քչերն էին ներկայ:

Դահլիճի ծայրում երեսում էր գրքակալի նժան մի նեղ սեղան, որի վրայ գրած էին մի բաժակ և մի շիշ ջրով լի:

— Ձիշտ փելիսովայութեան պոօֆեսորի անքիսն, — հեղնեց Բարաթեան:

Յետոյ նո, ներոպութիւն խնդրելով Դայիանէից, թողեց նրան մի ծանօթ տիկնոց հետ, շտապեց Գիւմաքսեանի մօտ:

Դասախոսը շրջապատված էր իւր ընկերներով, Մաքրուր, նորաձեւ հագնված Վերիեանը, տեսնելով Բարաթեանին, զլիսով մի ծաղրական շասմում գործեց դասախոսի վերաբերմամբ: Նոտ նոտ սափրած կոլորիկ թուլս երեսի կոշին փայլում էր ինչու, ու այլ կամ ձեռնոց: Այդ երիտասարդը տոհասակ ամեն մի հասարակական գործի և գործիչի վերաբերվում էր թերահաւատորւն, բայց երբէք պարզ չէր արտայաց- տում իւր կարծիքը: Միայն նրա փափրիկ, խորածանկ աչքերի մէջ կարելի էր կարդալ այդ կարծիքը, որ միշտ աննպաստ էր, մանաւանդ Դիմաքսեանի վերաբերմամբ:

Նա փոքր ինչ ակնածում էր միայն Բարաթեանից, որի սուր լեզուն, անփոյթ վարմունքը և, միենոյն ժամանակ, զգոյշ գատողութիւնները թէ նրան գուր էին դալիս և թէ վախեցնում էին:

— Ինչո՞ւ չի սկսում, — հարցրեց Բարաթեանը:

— Անխօն խորհօւրդ չի տալիս շուտ սկսել:

Վերիեանը «Սանխօ» անուանում էր Մաերեանին, հարկաւ, Գօնքիշոտի տեղ ընդունելով Դիմաքսեանին:

Այդ միջոցին դասախոսը մօտեցաւ հայելուն փող- կապը ուղղելու: Նա հագած էր ֆրակ, որ նրա փոք- րիկ ու ուկորոտ մարմնի անկանոն մասերը աւելի ու- աւելի որոշ էր կացուցանում: Հայելու մէջ նա տեսաւ իւր ետեսում կանգնած Բարաթեանին: Մօտալուս հա- մեմատութիւնը գարձեալ գրգռեց նրա բնական նա- խանձը: Նա գունատ երեսը գարձեց, բարեեց ըն- կերոջը և, ճակատը շփելով, գուրս եկաւ բեմ: Հան- դիսականները նրան ընդունեցին կարճատե և դան- դաղ ծափահարութիւնով:

Դասախոսութիւնը բաղկացած էր երկու մասից, առաջինը ընդհանրապէս քաղաքատնտեսութեան էր վերաբերվում, երկորդը երկրի տնտեսական վիճակին:

Ամուր, անյողդողդ և աղդու ձայնով նա բացա- տրում էր գիտութիւնը: Նա խօսում էր ոչ իրրե մի մասնագէտ չոր ու ցամաք թեօրիսի սառն տրամա- բանութիւնով, այլ պարզ, համառօտ և մատչելի ո- ճով, ինչպէս մի խոկական պրօպլադանդիստ:

Ունկնդիրները հետաքրքրվեցին:

Հետզհետէ, նա ոգեսորվում էր: Մերթ նրա ձայնը բարձրանում էր, մերթ մեղմանում: Երբեմն նա կանդ էր առնում և մի քանի կաթիլ ջրով կոկորդը թրչում: Նա չէր շփոթվում, չէր գողում, ինչպէս անփորձ գա- սախօսները: Նա ազատ տիրում էր խօսքին, որպէս հմուտ քարոզիչ կամ շնորհալի գերասան: Շարքերով ցցված գլուխները նրա աչքում խառնվել էին և կազ- մել մի տղէտ, խաւար ամբողջութիւն, դէպի ուր նա սփսում էր լուսոյ շողբերը: Որքան նա բարձր էր ըգ-

գում իրան այդ ամբոխից թւում էր նրան, թէ կանգանած է ուսուցչական ամբիոնում իւր առաջ նստած են անշափահաս աշակերտներ: Նա աւարտեց առաջին մասը այնպէս, որ, կարծես, մի հետաքրքրական վէպ ընդհատեց: Նրան երկար ժամանակ ծափահարեցին, չըդուրս եկաւ չնորհակալութիւն յայտնելու:

Յողնած, քրտնած, դունաթափ նա նստած էր աթոռի վրայ, երբ ամենից առաջ ներս վաղեց Մուշրեանը և, իւր գրկի մէջ առնելով նրան, գոչեց.

— Ենորհաւորում եմ, բարեկամս, երբեք չէի կարծում, թէ գիտութիւնը կարելի է հայերէն լեզուով այդքան հետաքրքրական և հասկանալի դարձնել:

Եկան բժիշկ Սալամբէկեանը, Վէքիեանը և ուշիշները: Իրաւաբանը մի կօմպլիմենտ ասաց Դիմաքսեանին, բայց նրա աչքերը դարձեալ հակառակն էին արտայայտում: Բժիշկ Սալամբէկեանը դժողոհ էր հասարակութիւնից և դասախոսի ջանքը իդուր էր հաշմարում:

Բարաթեանը ներս առաջնորդեց տիկինն Բախտամեանին, օրիորդ Գայիանէին և ուրիշ երկու տիկինների:

Բախտամեանը այնպէս էր հաղնվել, որ, կարծես, պարահանդէս էր եկել: Նա Դիմաքսեանին ծանօթացրեց իւր հետ բերած տիկինների հետ, որոնք նոր ընկերութեան զեկավարներից էին: Բայց դասախոսի ուշը ուրիշ կողմ էր: Առաջին անգամ էր նա Գայիանէին հանդիպում հասարակութեան մէջ: Նա սովորել էր տեսնել նրան կամ տնային անշուր հագուստով, կամ փողոցում վերարկուով: Այժմ օրիորդը հագած էր թաւշեայ լայն ժապաւէններով զարդարած և վերջին

մօդայով նոր կարած բաց մանիշակագոյն զգեստ: Նրա դէմքի վրայ խաղում էր գոհունակութեան ժպիտը, կապոյտ աչքերի մէջ կենսականութեան հուրը վառվում էր տակաւին շրտեսնված փայլով: Նրա ամբողջ կերպարանքից բուրում էր թարմութիւն և կեանքի հրապոյրները վայելելու անհուն ցանկութիւն: Նա հաւանութիւն յայտնեց Դիմաքսեանին և իսկոյն հեռացաւ Բարաթեանի հետ, իւր հետ տանելով դասախոսի ուշը միտքը:

Դահլիճից լսվեցին ծափահարութիւններ: Դիմաքսեանը դուրս եկաւ բեմ գունատ, յուղված, սրտի խորքում մի անտանելի զգացում: Նա յանկարծակի դրգովել էր և՛ Բարաթեանի դէմ և՛ օրիորդի դէմ, և՛ ամենքի դէմ: Այժմ նրան թւում էր, որ բոլորը կեղծում են, բոլորը ներքուստ ծազրում են նրան, համարում են մի տեսակ խենթ, դուրս է եկել և հասարակութեանը ձանձրացնում է իւր ատենաբանութիւնով:

Նա մի կերպ զսպեց իրան: Անցաւ առաջին յուղմունքը, նա հետզհետէ յափշտակվեց իւր ճառով, մոռացաւ ամեն ինչ և խօսում էր աւելի ազատ, քան առաջ, Բայց այդ երկար շրտեեց: Յանկարծ նրա հայեացքը ընկաւ երկրորդ շարքի ծայրին: Պատին քաշարած կանթեղի լոյսը սփռվել էր ուղիղ նրանց վըրայ... Բարաթեանը, թեքված Գայիանէի կողմը, շընչալով խօսում էր: Օրիորդը երեսը հովհարով ծածկել էր, որ ծիծաղը հասարակութիւնից թագցնի: Այն, մէկը սրախօսում էր, միւսը ծիծաղում: Ինչու, ում վրայ, միթէ նրան են ծազրում: Օօօ, այդ արդէն յանդդնութիւն է: Ի՞նչպէս, նրան չեն յարդում նոյն

իսկ այդ միջոցին, երբ նա կատարում է իւր բարոյական պարտքերից մինը: նա կորցրեց իւր խօսքի կազմը, այլայլվեց, կմկմաց, սկսեց քրքրել ձեռքի տակ դրած թերթիկները: Հասարակութեան մէջ բարձրացաւ մի խուլ շնչիւն: Յաջող սկսված դասախոսութիւնը միթէ խայտառակ պիտի աւարտիվէր:

Վերջապէս, նա ուշը ժողովեց, գտաւ խօսքի թեւլը: Շարունակեց, բայց բոլորովին տարբեր և տարօրինակ եղանակով: Այժմ նա չէր դասախոսում, այլ վիճում էր: Գիտութեան չեզոք քարոզիչը փոխվել էր կրթուածողի: Երկիրը չէ հարստահարվում, մեքենայական արդիւնաբերութիւն չըկայ, ժողովուրդը աղքատ է, քաղաքային հասարակութիւնը թմրած: Դրամատէրները ընկերական հոգի չունեն, ամեն ինչ նիրհում է նահապետական շարժողութեան մէջ: Ո՞վ պէտք է զարկ տայ խաւարի մէջ դեգերող ամբոխի հոգուն, ո՞վ պէտք է լուսաւորէ նրա միտքը, ցոյց տայ նրան բարօրութեան ճանապարհը: Կրթված դասը, ժամանակակից գիտութեան պաշար ունեցող երիտասարդութիւնը:

—Ահա հէնց այդ դասակարգի դէմ ես շատ բան ունեմ ասելու, —գոշեց նա, ձայնը բարձրացնելով:

Օօ, տգեղ և այլանդակ է ինտելիգենցիայի բարոյական պատկերը: Նա անտարբեր է դէպի երկրի վիճակը, եսամոլ է, շահախնդիր է: Զըկայ նրա համար ընդհանուրի շահ, ամեն ինչ պատում է սեպհական ասպահովութեան առանցքի շուրջը: Նա աւելի զազրելի, աւելի գտապարտելի է, քան տգէտ ամբոխը:

Նոյն պահին նրա թափառող հայեացքը դարձեալ

ընկաւ Բարաթեանի և Գայիանէի վրայ: Օրիորդը լը-տում էր խորին ուշադրութեամբ, գլուխը առաջ ցըցած: Բարաթեանը նայում էր առաստաղին: Պարզ էր, որ նրան դուր չէր գալիս ընկերոջ բանախօսութիւնը և անհամբեր սպասում էր վերջանալուն: Աս, այդ շատ լաւ է, տանջվիր, կատաղիր: Բայց այդ ինչ է, նոյն անհամբերութիւնը նշմարվում է և՛ ուրիշ դէմքերի վրայ: Ոմանք զարմացած են, միմեանց հարցական նշաններ են անում: Միայն ընդհանուր լուսութիւնը ոչ ոք չէ խանգարում: Մէկը աթոռը գղրդեցնելով վերկացաւ տեղից և գուրս գնաց: Դա Վէքիլեանն էր: Ոգեսրութիւնը տեղի տուեց ամօթի զգացմանը: Դասախոսը զգաց, որ անչափ շեղվել է նիւթից: Բայց նրա սիրտը տակաւին լիքն էր թոյնով: Բարաթեանի դէմքը նրան կատաղեցնում էր: Բոլոր հարուածները նա մտքում ուղղում էր ընկերոջ դէմ, այն ընկերոջ, որ այժմ նրա աշքում թշնամու հաւասար էր, որովհետեւ նա այնքան մօտիկ էր Գայիանէին:

Նա սթափվեց, մի կերպ ամփոփեց իւր ծայրայեղ խօսքերը մի վերջարանով: Երբ նա աւարտեց, մի քանի երիտասարդներ միայն ծափահարեցին, բայց ծափահարեցին եռանդով ոգեսրով և բարձրածայն դուալով «կեցցէ Դիմաքսեանը, կեցցէ Դիմաքսեանը»: Միւս ունինդիրները շտապով վերկացան, դիմեցին դէպի դռները:

Սիրտը դառն զգացումներով լի, ինքնասիրութիւնը խոցոտված, նա հեռացաւ բեմից: Այլ ևս ոչ չնկաւ նրա մօտ: Նա միայնակ էր, անհամբեր սպասում էր Մսերեանին, նա, միայն նա է անկեղծ, անհախանձ, բարի և վեհանձն: Բայց աւաղ, «իդէալի-

ստիւ գէմքը տխուր էր։ Նա տխուր էր Արսէնի անաշողութեան պատճառով։ Նա բռնեց ընկերոջ թեփց և նրա հետ միասին դուրս եկաւ լուռ և աչքունքը կիտած։

—Ախ, Մսերեան,—գոչեց յուղմունքից դողացող Դիմաքսեանը, երբ նրանք կառք նստեցին, —ես դըքաղդ մարդ եմ։

Բարեսիրտ ընկերը գիշերային մժութեան մէջ նայեց նրա արտասուալից աչքերին և արտասանեց։

—Դու ամենաբաղդաւոր մարդը կըլինես։

IX

—Ես այդ տեսակ խօսող կեանքումս չեմ տեսել։ Ժամանակով կարող է Ամբակում Աֆանասիեվիչի տեղը բռնել։ Լեզու խօմ չէ, կրակ է, Ափսոս որ ուշ հասայ. նեղօիմկաներ բաշխող կօմիսսիան երէկ բանը շատ երկարացրեց։ Տասն ու վեց հաղար երեք հարիւր տասն ու չորս մանէթ ու կիդկա արեցինք։ Ապրես Դիմաքսեան. Բարաթովդ գլուխը քաշ արած այնպէս գուրս եկաւ, ինչպէս պոշը կտրած գող կատու։ Հապակ, ոնց էր, քեզ նման ուսումնականներին այնպէս էլ հարկաւոր էր ներկել։ Ապրես, Դիմաքսեան, ապրես։

—Իսկ ես չըհաւանեցի։ Ի՞նչպէս կարելի է կոպիտ խօսել, կարծես, մարդիկ տուսակի փող էին արւել եկել, որ հայհոյանք լսեն։ Նա կովում էր, չէր խօսում։ Ճշմարիտ են ասում, որ անօրմալ մարդ է, այսինքն խելքը գլխին դրուստ չէ։

—Խելքը գլխին դրուստ չէ, դրուստ չէ, հա հա։ Քո կարծիքով ում խելքն է դրուստ, ով որ դը-

րուստ դէմք ունէ, չէ. հասկանում ենք, հասկանում ենք։ Հիմայ դու տես ինչպէս առաջիկայ տարի այդ անորմալին գլասնիյ ընտրել կըտամ, իսկ քո Բարաթովդ իւր օրումը այդ պատիւը չի տեսնիլ, թէ կուզ տրաքվի էլ, այ քեզ անօրմալ…

Խօսակցութիւնը տեղի ունէր ամբողջ ընտանիքի ներկայութեամբ, ճաշին։ Գայիտնէն լուռ էր, իսկ Ովսաննան զբաղված էր երկու մանկահասակ աղջիկներով—Լիզօչկայով և Ելեչկայով, որոնք ուտելով հանդերձ ծիծաղում էին բարձրածայն և խանդարում իւրանց ծնողների խօսակցութիւնը։ Պետք Սոլոմոնիչը գոռաց նրանց վրայ և, գառնալով կնոջը, յանդիմանեց, որ վատ է կրթում զաւակներին։

Տիկինը աչքերը լայն բաց արեց և մի քանի վայրկեան նայեց երեխաների երեսին այնպէս, որ, կարծես, կոկորդում ոսկոր մնաց։ Փոքրիկները գլուխները միաժամանակ թեքեցին, խուսափելով իրանց մօր ըսպառնալից հայեացքից։

—Դեռ աչքերիս մի լաւ մտիկ արէք—յետոյ, Լիզօչկա, քեզ եմ ասում, Ելեչկա, քեզ եմ ասում, ուղիղ, ուղիղ։

Կարծես, նրա աչքերի մէջ մանկական լեզուով գրված էին մանկավարժութեան բոլոր կանոնները, որ պէտք է առանց խօսքի իսկոյն աղդէին։

—Իսկ ես, —յարեց Պետք Սոլոմոնիչը, —չեմ ասիկ աչքերիս մտիկ արէք, կասեմ մատներիս մտիկ արէք։ Եթէ մէկէլ հըռ-հըռ ծիծաղէք, ականջներդ այնպէս կըքաշեմ… որ Բարաթովիդ էլ հերն եմ անիծել։

—Պետիա, Պետիա, —դարձրեց տիկինը իւր կոթիչ աչքերը մարդուն, —դու քեզ մոռանում ես։ Ա-

ուաջինը Բարաթեանը այստեղ գործ չունէ, երկրորդը
տամն ու խններորդ դարի վերջն է:

—Ասելու ինչ է:

—Ասելու այն է, որ մեր ժամանակում ականջ
քաշելով երեխայ չեն կրթում:

—Հերիք է, քո հօրն ողորմի, ես դարի մարի
հետ բան չունեմ, դու շատ ես երես տալիս երեխա-
ներին:

Ժամանակակից տիկինը սառն և հանդիսաւոր ե-
ղանակով պատասխանեց.

—Ես նրանց կրթում եմ նոր սիստեմով:

Գայիհանէի միտքը հեռու էր այս ընտանեկան
տեսարանից, որ գրեթէ ամեն օր կրկնվում էր նոյն
վարիացիաներով: Գտուանքով նա յիշում էր այն սո-
վորական սղանը, երբ առհասարակ տեսակցում էր Բա-
րաթեանի հետ: Նա մտքում ըստէները, նոյն իսկ վայր-
կեանները հաշում էր, թէ երբ կըհասնի ցանկալի
հինգ ժամը, երբ նա սովորաբար Ովսաննայի հետ
դուրս էր գնում «մաքուր օդ շնչելու»: Ճիշդ այդ ժա-
մին նա Դվարցովայեա փողոցում հանդիպում էր Բա-
րաթեանին զբոսնելիս կամ որ և է մագաղիայի առաջ
կանգնած վիտրինում դարսած իրերը զննելիս: Տես-
նելով միմեանց, երկուսն էլ զարմացական նշան էին
անում, իբրև թէ չէին սպասում հանդիպել իրար: Ով-
սաննան առ այժմ նրանց խանդարել չէր կարող, քա-
նի որ խօսակցութիւնը սովորական բարեկամութեան
սահմանից չէր անցնում: Բայց ինչ փայթ, նրանը ար-
դէն միմեանց միտքը հասկանում էին:

Տիկին Բախտամեանին շատ լաւ յայտնի էր, թէ
ում և ինչու համար է Գայիհանէն ամեն երեկոյ դուրս

դալիս: Նա չէր խանդարում օրիորդին, որովհետեւ կա-
մայ ակամայ ստիպված է ազատամիտ մօր գեր կա-
տարել: Նա դիտէր, որ բաղդը հազիւ Գայիհանէին յա-
ջողի աւելի լաւ ամուսնացու գտնելու Սակայն երբեմն
վրդովվում էր հոգոյ խորքում: Նա, այդ երիտասարդ,
գեղեցիկ կինը, որ համոզված էր, թէ ընդունակ է մի
քանի Գայիհանէներ նսեմացնել, յանկարծ խնամող մօր
պաշտօն է կատարում, իրանից միայն հինգ տարի ե-
րիտասարդ օրիորդի համար:

Երբ այդ մասին մտածում էր, երբ նայում էր
իւր ամուսնու խորշումած երեսին, սպիտակ մազերին,
երբ համեմատում էր նրան այն առոյգ, ծիծաղկոտ,
ուրախ երիտասարդի հետ, այն ժամանակ տիկնոջ
սիրուց լցվում էր դառնութեամբ: Նա նախանձում էր
Գայիհանէին: Նա իւր սրտում զգում էր մինչև անգամ
ատելութիւն գէսլի օրիորդը: Եւ օրից օր նա Գայիհա-
նէի վերաբերիամբ դառնում էր անհամբեր, գիւրա-
գրդիու: Միւնոյն ժամանակ, մի ծանր միտք, կարծես,
հալածում էր նրան:

Մի առաւօտ տիկինը մտաւ Գայիհանէի սենեակը:
Օրիորդը լուսամուտի առաջ նստած թղթատում էր
մի նոր գիրք, որ Բարաթեանն էր խորհուրդ տուել
նրան կարդալու:

—Գայիհանէ:

Նա գլուխը բարձրացրեց:

Տիկինը սովորականից աւելի էր յուղված:

—Ես ուզում եմ այսօր հինգ ժամին քեզ հետ
գնալ տիկին Միւրզախանեանի մօտ:

—Ինչու համար:

—Ընկերութեան գործերի մասին խօսելու:

—Կանոնագրութիւնը ստացվել է:
—Ոչ, դեռ չե ստացվել, բայց հաստատվել է:
—Եյդ ես գիտեմ: Բայց քանի որ չե ստացվել,
ինչ խօսելու բան ունենք:

—Ուրեմն չեմ ուզում ինձ հետ երեկոյեան հինգ
ժամին դնալ Միրզախանեանի մօտ:

—Եթէ անպատճառ ցանկանում ես, դնանք,—
պատասխանեց Գայիխանէն նշմարելի գժկամակութիւնով:

—Ինչպէս տեսնում եմ, չես ուզում դնալ, լաւ,
ես չեմ ստիպում: Ես առանց քեզ էլ կարող եմ դնալ:
Նա մի սուր հայեացք ձգեց օրիորդի աջքերի
մէջ: Գայիխանէն գլուխը խոնարհեցրեց:
—Գայիխանէ:

Օրիորդը դարձեալ գլուխը բարձրացրեց:

—Երեկոյեան տանն ես ուզում մնալ:

Օրիորդը մի քիչ տատանվեց, ապա համարձակ
պատասխանեց.

—Ոչ, դուրս կըդամ մի քիչ զբօսնելու:
Տիկինը ժպտաց:

—Դուրս կըդաս մի քիչ զբօսնելու, այսինքն եր-
կու, երեք, չորս ժամ:

Եւ նա աւելի սուր նայեց օրիորդի կապոյտ աչ-
քերին: Մի քանի վայրկեան նրանք լուռ էին: Օրիոր-
դը երեսը դարձրեց դէպի լուսամուտը, որտեղից ե-
րեսում էին փոքրիկ պարտիզի տերեաթափ ծառերը:
Իսկ տիկինը աչքերը սկսուել էր նրա կիսադէմքին:

—Դու ինձանից իզուր ես թագցնում, ես ամեն
բան գիտեմ:

Տիկինը աշխատում էր խօսել մեղմ, բարեկամա-

կան, եղանակով: Բայց ձայնը մատնում էր նշան, նա
յուղված էր:

—Դու լռնում ես, ուրեմն ես չեմ սխալվում: Է՞հ,
ինչ կայ, նա լաւ տղայ է, դու գիտես, որ ես էլ շատ
եմ հաւանում նրան:

Մինչեւ այդ վայրկեանը Գայիխանէն չէր նայում նը-
րա կողմը: Ամօթից ու կասկածից ցնցողաբար գողա-
ցող մատներով նա անընդհատ փաթաթում էր և բաց
անում իւր կրծքի ժապաւէնը: Կամացուկ գլուխը ծը-
ռեց և նայեց տիկնոջ երեսին, ինչպէս մի մեղանչած
երեխայ, որ ամաչում է իւր արարքից:

—Դու կարծում ես կըհակառակեմ, ոչ, Գայիխանէ,
մի վախենալ: Ապա մէկ էլ մտիկ արա աչքերիս և ու-
ղիղն ասա:

Փարատվեց օրիորդի սրտում ծանրացած կասկա-
ծը: Ո՞չ, անկարելի է, որ ուրիշ բան լինի: Տիկինը
ազնիւ է, տիկինը սիրում է նրան անկեղծ սրտով և
երբէք երբէք խոչնդոտ չի լինիլ նրա երջանկութեա-
նը: Զքացաւ անվատահութիւնը, մի ինչոր ներքին ոյժ
մղեց նրան դէպի տիկնոջ գիրկը, և գլուխը հանդարտ
թեքվեց նրա ուսի վրայ:

—Եատ ուրախ եմ, շատ ուրախ եմ: Ես գիտէի,
գիտէի, որ այդպէս պէտք է լինի:

Տիկինը իւր գլուխը բարձր պահած, փափուկ սը-
րածայր մատներով շոյշոյում էր օրիորդի մազերը:
Նկատելի էր նրա դէմքի վրայ մի թեթև գունատու-
թիւն, նկատելի էին նոյնպէս ցնցումներ նրա շըր-
թունքների վրայ, որ այնպէս անխնայ կրծոտում էր
նա ատամներով:

—Ուրեմն սիրտներդ բաց էք արել միմեանց, ա-

սահ, բոլորը ասա, ոչ մի բան մի թաղցնիլ։ Դու լադ
ես լինում, ինչու, միթէ քեզ նման, հա հա հա, բաղ-
դաւորը լաց կըլինի... Միթէ ճշմարիտ է, որ մարդիկ
երջանկութիւնից արտասփում են, ես այդ բանին չեմ
հաւատում։ Ասա, դու նրան սիրում ես։

—Այն...

—Նա էլ քեզ է սիրում։

—Այն, կարծեմ, չըգիտեմ...

—Այն, կարծեմ, չըգիտեմ։ Չեմ հասկանում ա-
սածք։ Ուրմն բացատրութիւն չէ եղել։

—Դեռ ոչ։

Տիկինը բաց թողեց օրիորդի դլուխը։ Նրա շըր-
թունքները դադարեցին ցնցվելուց։ Նա հաղիւ զըս-
պեց հառաջանքը։

—Դեռ ոչ, ինչու։

—Չըգիտեմ։

Օրիորդը աչքերը սրբում էր թաշկինակով։

—Բայց ինչիցն ես իմանում, որ նա քեզ սիրում
է։ Գոնէ մի խօսք ասել է այդ մասին, մի նշանով
ցոյց է տուել իւր սէրը։

—Սիրոս է վկայում, որ նա ինձ սիրում է։

—Այդ շատ քիչ է, սիրելիս, սրտի վկայութիւնը
մի մեծ բան չէ. իմ սիրոս էլ ուրիշ բան է վկայում,
բայց ես իրաւունք չունեմ...

—Ի՞նչ ասացի՞ր։

—Ոչինչ, ֆայիանէ, ոչինչ։ Ինչու այդպէս յան-
կարծ վախեցար, ես մի բան չասացի։

Օրիորդը կարմրեց։ Բայց նոյն վայրկեանին կըր-
կին նայեց տիկնոջ աչքերին և այնտեղ նկատեց այն,
ինչի մասին վաղուց կասկածում էր—նախանձ։ Դար-

ձեալ չար, անտանելի, քստմնելի միտքը պղտորեց քա-
նի մի բոպէ դուրեկան կերպով բորբոքված սիրաը։
Այլ ևս նա չըկարողացաւ և չէր կամենում շարունա-
կել այդ երկդիմի, նուրբ ու կասկածուտ խօսակցու-
թիւնը։ Նա վեր թռաւ տեղից։ Տիկինը անշարժ նըս-
տած էր և, արմունկը լուսամտի յատակին յենած,
նայում էր գէպի դուրս։ Երկումն էլ միմեանց գէմ
մի վատ զգացում ունէին իրանց սրտի խորքում, այն-
տեղ, այն անմատչելի անկիւնում։ Երկուսի համար էլ
ծանը էր, անախորժ, ամօթալի այդ զգացումը։ Տի-
կինը աւելի ամաջում էր, օրիորդը աւելի վրդովկած
էր։ Անկարելի էր աւելի հեռու գնալ, հակառակ գէպ-
քում կամ պէտք է շարունակ կեղծէին կամ, վերջա-
պէս, պէտք է միմեանց հաղորդէին այն, ինչոր նը-
րանց գաղտնիքն էր, խորհրդաւոր, երկիւզալի գաղտ-
նիք, որ պէտք է երկու կանանց մէջ բաց անէր մի
մէծ վիճ։

Իսկ լուսթիւնը աւելի անտանելի էր։

Տիկինը կամացուկ վերկացաւ տեղից, ծանր քայ-
լերով, դլուխը կրծքին խոնարհեցրած, դուրս գնաց
սենեակից։

Օրիորդը երեսը թաղեց բարձի մէջ և սկսեց հե-
կեկալ։ Իսկ երբ Ովսաննան ներս մտաւ և նրան ճա-
շի հրաւիրեց, նա մերժեց։

Նոյն օրը երեկոյեան նա սովորականից վաղ դուրս
եկաւ անից և սովորականից շատ ուշ վերադարձաւ,
այն էլ ոչ Ովսաննայի հետ։ Նա մի արտասովոր տեն-
դային դրութեան մէջ էր։ Հարկաւ, այդ բանը տիկ-
նոջ աչքից չէր կարող խոյս տալ։ Բայց տիկինը ո-
չինչ չէր խօսում։ Նա առհասարակ լուռ էր, արտում

Հ բարկացած։ Նա դիտում էր օրիորդին դաղտուկ, իսկ նրա հայեացքից խոյս էլ տալիս։ Նրանք միմեանցից վախենում էին։

Հետևեալ օրը տիկինը չըկարողացաւ իրան զրապել։ Արդէն օրիորդի անսահման ուրախ տրամադրութիւնը նրան բաւական տանշանք էր պատճառել։ Նա փորձեց Գայիանէին խոստովանութեան կանչել, և հանգիպեց անաջողութեան։ Օրիորդը բարձրածայն ծիծաղեց և ասաց, թէ յետոյ կըպատմի։ Այդ ծիծաղը սուր ասեղի պէս ցցվեց տիկնոջ սրտին։ Նա թշնամաբար նայեց օրիորդին, ատամները կրծտեց և դուրս գնաց սենեակից, դռները ուժգին զարկելով։

Այն ինչ՝ մօտենում էր Բարաթեանի կազմած թատրոնական ներկայացման օրը։ Պէտք է խաղացվէր մի նոր պիես, որ իպատի կանանց ընկերութեան յատկապէս ֆրանսերէնից թարգմանել էր Բարաթեանը։ Բոլոր մասնակցողները յայտնի ընտանիքներից էին։ Տիկին Բախտամեանը զբաղված էր տոմսակների հաշւով, իսկ Գայիանէն յանձն էր առել նրա օգնականը լինել։ Բարաթեանի խորհրդով նա հրաժարվել էր բեմ դուրս դալուց։ Ամբողջ օրը տիկինը և օրիորդը զբաղված էին, շտապում էին այս ու այն կողմ, մի ամենաչին մոռացված բան նրանց վրդովեցնում էր։ Բայց միմեանց հետ շատ քիչ էին խօսում, այն էլ այնքան զդոյշ, որ, կարծես, վախենում էին մի առելորդ խօսք թուցնել իրանց բերանից։

Իսկ թէ ինչ իրարանցման մէջ էին նրանք, որ պէտք է բեմ դուրս դային, այդ արդէն աննկարագրելի է։ Ամեն մէկը նոր հագուստներ էր պատրաստել տալիս, օրը մինչև երեկոյ փորձում էր պէս պէս

գլխարկներ, ձեռնոցներ, կօշիկներ։ Կառքերը սլանում էին աջ ու ձախ։ Փողոցներում միմեանց հանգիւպելիս «գործիչ» տիկինները զբաղված դէմքերով զանազան փոխադարձ նշաններ էին անում։ Տիկին Միքայիսաննեանը ասում էր, թէ իւր կեանքում երբէք այնքան «չէ զբացել», որքան այժմ։ Մի խօսքով, շփոթութիւնը անասելի էր։

Լկօնօմիստ-ֆինանսիստ Բարաթեանը հաշւում էր և տեսնում, որ «գործիչ» տիկինները և օրիորդները իրանց գրպանից աւելի մեծ գումար են ծախսում կառքերի, հագուստների և կօշիկների վրայ, բան թէ կարող էր լինել նոյն իսկ ամենայաջող ներկայացման արդիւնքը։

X

Երեկոյ էր։ Տիկին Բախտամեանն առանձնացած իւր սենեակում, զուգվում էր։ Նա չարացած էր. օրիորդ Գայիանէն, առանց նրան սպասելու, արդէն գնացել էր իւր մի ընկերուհու մօտ։ Այդտեղից նա Բարաթեանի հետ պէտք է ուղերձը թատրոն։

Դա մի թեթև պատճառ էր տիկնոջ համար, իսկ բուն շարժառիթը ուրիշ էր։ Գառնութեամբ և սրտի կսկիծով նա խորհում էր առհասարակ իւր վիճակի մասնին։ Մի վիճակ, որ ստիպում էր այնքան թարմ, այնքան գեղեցիկ կնոջը թե թեկի տուած թատրոն մըսունել մի հնամաշ, ուժաթափ, մի ալեղարդ մարդու հետ։ Որքան, երեկի, ծիծաղում են նրա վրայ բաղդառոր ընկերուհիները։ Եւ իրաւոնք ունեն, միթէ ինքը տիկինը չէր ծիծաղիլ մի ուրիշի վրայ։

Նա կանգնած էր բարձր հայելու առջև թեթև հագուստով, կիսաբաց կրծքով և հոլանի թևերով։ Նա հիանում էր ինքն իրանով։ Դանդուր և թանձր մազերը, ինչպէս մայիսեան դալար խոտ, փռվել էին նըրա գիրտակ, սպիտակ և կիսամերկ թիկունքի և ուսերի վրայ։ Ներքին յուզմունքից նրա կուրծքը ուժգին երերվում էր և կոկորդի բարակ կապտագոյն երակները փքվում։ Նրա կամարաձե, պարսկական ճաշակով գծաւորված, ու յօնքերի տակ տեղաւորված թուխ աչքերը պապղում էին կրքոտ կատուի աչքերի պէս։ Նրա լիք-լիք կիսաբաց շրթունքները կապտել էին և թեթեակի դողում էին։

Երբեմն նա գեղեցիկ արծաթեայ սանրը ազատում էր հարուստ մազերի ալիքների միջից և աւելի ուշադիր դիտում իրան՝ ոկած տափակ, նեղ և սպիտակ ճակատից մինչև ոտների ծայրերը։ Նա անիծում էր իւր անսիրտ ծնողներին։ Խնչու հարստութեամբ հրապուրվելով իրանց տամութ տարեկան աղջկան տուեցին քառասուն ու իննը տարեկան թառամածին։ Անգնեթ հայր, դու ծախեցիր քո աղջկան, դու քո պարտատէրներից աղատվելու համար հարուստ փեսայ գտար, որ նա իւր փողով քեզ օդնի։ Դու հասար քո նպատակին քո աղջկայ բազդի գնով։ Օօ, եթէ նա այն ժամանակ ունենար այժմեան խելքը, համարձակութիւնը և կամքի կորովութիւնը, երբէք երբէք չեր մտնիլ այդ գմոխը։

«Գոնէ մեռնէր, այրի գառնայի», — կրկնում էր նա մոքում։

Բայց Պետր Սոլոմոնիչը չէր էլ մտածում մեռնելու մասին, այնքան նա առողջ էր, ամրակազմ և

այնքան նա խնամում էր իւր առողջութիւնը։

Առաջին ծանօթը, որին տիկինը պատահեց թատրոնում, Դիմաքսեանն էր։ Հակառակ սովորականին՝ նա սիրալիր կերպով բարեկեց երիտասարդին, որպէս զի կամացուկ իւր թեր ազատէ ամուսնու թեփ տակից, որ այնպէս ամուր սեղմել էր նրան։

Պետր Սոլոմոնիչը գովեց Դիմաքսեանի դասախոսութիւնը, հայրաբար ձեռը խիեց նրա ուսին և բարեկամաբար յանդիմանեց, որ ուշ ուշ է այցելում իրան։ Արդարեւ, այն օրից երբ նա զգաց, որ անտարքեր չէ դէպի օրիորդ Գայիանէն, այն օրից նա ամաչում էր Բախտամեանների տուն գնալ, թէև կըցանկանար ամեն օր այնտեղ լինել։ Միայն ամեն առիթից օգտվում էր գոնէ գրառում տեսնելու օրիորդին և հետը խօսելու։ Երկու շաբաթ էր նա տենդային յուզմունքի մէջ էր։ Պաշտօնակիցները նրա հետ իրանց կուիւը նորոգել էին։ Այժմ նրան հալածում էին ամենքը։ Նոյն խոկ կողմնակիցները շատ թոյլ պաշտպանութիւն էին ցոյց տալիս։ Ամբողջ հոգով նա բողոք էր բարձրացրել գպրոցի հակառակողջական պայմանների — սենեակների փոքրութեան և մթութեան, օգի սակաւութեան դէմ։ Նա պահանջում էր արմատական վերանորոգութիւն։ Այս պատճառով հօգաբարձուների մեծ մասն էլ վրդովվել էր նրա դէմ, որ անընդհատ դատապարտում էր նրանց թուլութիւնը և անուշադիր լինելը դէպի աշակերտների վիճակը։

Միւս կողմից, մի հայ լրագրում ծաղրի էին ենթարկել նրա գասախօսութիւնը։ Եւ նա իւր սրտի թոյնը այժմ ուղղել էր դէպի լրագրական թշնամիները։ Բայց աւելի նա վշտացած էր մի ոուս թերթում

տպված յօդուածից։ Այստեղ անյայտ հեղինակը բաւական չէր որ պարսաւել էր նրա դասախոսութիւնը, այլ և զրագարաւել էր նրան, առանց փաստերի, ասելով, թէ նա իւր բոլոր մտքերը քաղել է օտար դրբերից։ Այդ էլ բաւական չէր, յօդուածագիրը կծուծաղով աւելացրել էր.

«Պարոն դասախոսի չարութիւնը հայ ինտելիգենցիայի դէմ կարելի է բացատրել հոգեբանօրէնսիայց ինչ մեղաւոր են հայերը, որ անդուժ բնութիւնը երբեմն մարդկանց փոքրիկ մարմնի մէջ նրանց ուժից աւելի չար նախանձ է դնում»։

Նա մենակ նստած էր բուֆետի կիսախաւար սենեակում և իւր սրտի վիշտը ճգնում էր խեղդել ծխախոտի թանձր ծխով։ Նրան մօտեցաւ բժիշկ Սաւլամբէկեանը սովորական դժգոհ և մաղձոտ ժպիտը երեսին։

—Դատարկ բան է, —եղաւ բժշկի առաջին խօսքը։
—Ի՞նչը։

—Եշխարհը։ Ինչու համար են այդ կօմեդիաները, այդ ծիծաղելի իրարանցումը։ մեր ազգից ոչինչ չի դուրս գալ, ոչինչ. ուր մնաց կանանց դործունէութիւնից։

—Դու էլ օրից օր պեսսիմիստ ես դառնում, չը գիտեմ քեզ ինչ է պատահել։

—Բժշկակական օրէնքով խրոնիկական կատարր ունեցողները պեսսիմիստ են լինում, երևի, իմն էլ դրանից է։ Քո ստամոքսը առողջ է, կարող ես օպահիմիստ լինել, ինձ ինչ։ Միայն այս կասեմ, որ ես մարդկանց չեմ հաւատում, մանաւանդ այդ սիւրտուկ հաղած նապաստակին։

Նա գլխով ցոյց տուեց իրաւաբան Վէքիլեանին, որ կանգնած էր մի խումբ մարդկանց մէջ։
—Ուհ, անարդ, անամօթ։

Դիմաքսեանը ապշած նայեց բժշկի երեսին, առաջին անգամն էր նրանից լսում այդպիսի կոպիտ ածականներ իւր ընկերոջ մասին։

—Ինչու, ինչ է պատահել, —հարցրեց նա։

—Այն է պատահել, որ այն դարշելի յօդուածի հեղինակը դա է, այդ մեր խոհեմ և զգոյշ ընկերը։
—Վէքիլեանը։

—Նա ինքը։

Դիմաքսեանը ոտքի կանգնեց այնքան արագ, այնպէս յանկարծակի, որ, կարծես, մէկը նրա մարմնին էլեկարական թելի ծայր կպյուրեց։ Նրա գոյնը թըռուաւ, շրմունքները կապտեցին, նօսր միրուքի իւրաքանչիւր մազը էլեկարական մի թել դարձաւ, ցնցելով երևսի բոլոր մկանունքները։

—Այդ անկարելի է, անհաւատալի է, —գոչեց նա չնչասպառ։

—Գիտես, որ առանց հիմնաւոր փաստի ես ոչ ոքի չեմ մեղադրում։

—Ո՞վ ասաց քեզ։

—Լրագրի աշխատակիցներից մէկը, մի բարեկամ մարդ, որ ինքն էլ վրդովված է այդ պատկվիլի դէմ։ Բայց միթէ Վէքիլեանին դու նո՞ր ես ճանաչում։

—Ես նրան միշտ ազնիւ մարդ եմ համարել։

—Պէտք է ասած, որ դու էլ Մաերեանից պակաս յափշտակվողը չես։

Մի ծանր և դառն հոգոց դուրս թռաւ Դիմաքսեանի ալեկոծվող կրծքից։ Այն, բժիշկը չի սիսալվում,

յօդուածի ոճը, հեղնելու ձեր միայն Վէքիլեանին է յատուկ:

—Բայց դու շատ վրդովեցիր, Արսէն, եթէ իւմանայի, չեի ասիլ, միթէ արժէ...

—Զարժէ, երբ տեսնում ես, մարդիկ խախուռմ են հաւատող գէպի ընկերական զգացումները. չարժէ, երբ երեսիդ մէկ են ասում, ետևիցդ—ուրիշ: Զարժէ վրդովել այդ սասոր, խարդախ երեսիթի գէմ: Չըդիտեմ ինչպէս քեզ, ուրիշներին, բայց ինձ ամեն բանից աւելի մարդկանց կեղծութիւնը և երկդիմի վարժունքն է կատաղեցնում:

Նա սկսեց ուժգնաբար ներշնչել ծխախոտի ծուխը, կարծես, կամենալով յետ մղել իւր սրտի մէջ բռնկված կակիծը:

Զանդակը հնչեց, և նա անդիտակցաբար, յուղված, գեղնած դիմեց բժշկի հետ գէպի գահին:

Թատրոնը բոլորովին լիքն էր: Նա նայեց վայր և վեր, նայեց շուրջը և գծուարութեամբ անցնելով բազմած հանդիտականների միջով, գնաց նստեց իւր տեղը: Նա չեր նկատում, որ ներկայացումը արդէն սկսվել է և բեմի վրայ մի ինչոր կին և մի ինչոր տղամարդ անխնայ աղաւաղում են հայ լեզուն: Նրա աշը բերը թափառում էին այս ու այն կողմ: Նա որոնում էր Վէքիլեանին. արդեօք գաղտագող իրաւաբանը եւրես կունենայ ուզիդ նրա երեսին նայելու: Նրա հայեցքը կանգ տռաւ օթեակներից մէկի վրայ և տեսաւ մի ուրիշ կերպարանք, որին մի քանի բոպէ մռացել էր:

Դա Գայիանէն էր, տիկին Բախտամեանի հետ նստած: Հովհարը մեղմիկ շարժելով, նա մերթ նաս-

յում էր գէպի բեմ, մերթ հանդիսականներին: Դիմաքսեանը աչքերով հետեւց նրա հայեցքը ուղղութեանը և այնտեղ, պատշգամբի առաջին շարքում, տեսաւ Բարաթեանին, որ երբեմն նայում էր ցած, գէպի պարտերը, երբեմն Գայիանէին և ժպտում:

Դիմաքսեանի նրբացած զգայուն սիրտը միայն հասկանում էր այդ ժպիտների բուն իմաստը: Գուշակում էր նա, որ ամեն ինչ վերջացած է, որ յաղթանակը արդէն Բարաթեանը տարել է: Յաղթանակ, միթէ նա մրցէլ էր: Ո՞չ, նրա կուիւը ներքին էր, հոգեւկան, նրան գրգռում էր ոչ այնքան այն, որ Բարաթեանը գրաւել էր այդ օրիորդին, որքան այն, որ ինչքը անկարող է գրաւել նոյն օրիորդին, եթէ ոչ մի հակառակորդ էլ չունենար: Սեպհական ապիկարութեան սոսկալի դիտակցութիւնն էր նրան վշտացնում: Ահա նա նստած է ուրիշ կանանց բազմութեան մէջ: Ո՞վ է նրա վրայ ուշք դարձնում: —Գրեթէ ոչ ոք, իսկ եթէ կան նայողներ և հետաքրքրվողներ, լոկ նրա անուան համար են: «Ո՞րն է Դիմաքսեանը. նա, ֆի, ինչ ոզորմելի է», արգեօք կարմզ է սրանից աւելի վիրաւորական խօսք լինել մարդու մասին:

Գործողութիւնը բեմի վրայ վերջացաւ մի պառաւ կնոջ ճշգիւղ թատրոնը աղմկեց: Դիմաքսեանը աշատեց իւր փոքրիկ մարմինը բազկաթուների նեղ միշանցքներից և գուրս եկաւ: Բժիշկ Սալամբէկեանը բռնեց նրա թեսից, և նրանք միասին բարձրացան թատրոնի վերին յարկը: Օթեակների նեղ և աղեղնաձև նախագաւիթը լիքն էր կանանցով: Մի ինչոր նուրեկ հայ հուսար, որ նմանում էր թեւերը կտրած մուրեիսի, ընդհանուրի ուշագրութեան առարկան էր:

Կուրծքը ուղցրած, բեղերը ոլորելով, նա Մարսի շանաթահար հայեացքներ էր ձգում անցուդարձ անողկառնանց վրայ:

—Բարեւ, Արսէն,—գոչեց հուսարը յանկարծ:

Դիմաքսեանը հազիւ կարողացաւ ճանաչել իւր մանկական ընկերներից մէկին, որ յայտնի էր իւր դեղեցիկ դէմքով և չար ընաւորութիւնով: Քանի քանի անգամ երեխայ ժամանակ հուսարը ծաղրել էր նրան: Պէտք էր մի վորք խօսել, ուստինա ստիպվեց կանդ առնել:

—Ասա, խնդրեմ, —ընդհատեց հուսարը ինքն իւր խօսքով, —ով է այդ բրիւնետ կան:

Պատի տակ կանգնած էր ափկին Բախտամեանը մի ուրիշ տիկնոջ հետ և ստէպ ստէպ հովհարի ետեւից նայում էր հուսարին: Տեսնելով Դիմաքսեանին դեղեցիկ սպայի հետ, նա ժպտաց և գլուխը շարժեց:

—Աս, զնաչիտ գու ծանօթ ես, —գոչեց հուսարը, —բրաւօ, զնաչիտ յազմութիւններ ես անում: Զի կարելի, որ ինձ էլ ծանօթացնես, նե դուրն ենակայեա, Պիտերում բլօնդին կաները զանցէս տարեցին: Նուսս, ծանօթացրու: Նէ լծվկօ, ատ, զնաչու ստարօվօ բեկնի վցա, վախենում ես, որ խլեմ ձեռքիցդ: Դու միշտ նախանձու էիր, ալ օ մնիշ:

Դիմաքսեանը, շազմկրատ հուսարին թողնելով, տռաւ ըժշկի թեր և հեռացաւ: Այժմ նա հոգով զբուժում էր թատրոն գալու մասին: Նա երջանիկ էր համարում Մաերեանին, որ մենակ տանը նստած միտքը զբաղեցնում է ով գիտէ ինչ վիլիսովայական գրուածքով, հանդիսա, խաղաղ, հեռու մարդկային աղմկից: Հեռու կեանքի խեղգող ալիքներից: Բայց միթէ նա կարող է Մաերեան լինել, կարող է թարմ հասակում

վեանքը թաղել չորս պատերի, գրքերի փոշու մէջ: Մինչդեռ նրա սիրու լիքն է ապրելու և զգալու բուռն ցանկութեամբ: Մի ցանկութիւն, որին նա երբէք, երբ բէք չի կարող դիմադրել խելքի ուժով:

Նա ուշքի եկաւ այն ժամանակ, երբ բժիշկը ուժովին թօթվեց նրա թեր, ասելով, թէ վարագոյրը արդէն բացվել է բեմի վրա: Յաջորդ խաղամիջոցներից մէկում մօտեցաւ Գայիսնէին և սկսեց նրա հետ շըրջել: Այս անդամ օրիորդը աւելի բարեհամբոյր էր և ուրախ: Նա ուրախ էր, որ ներկայացումը յաջողվել էր և անդադար յիշում էր Բարաթեանի անունը: Ի՞նչ, միթէ նա արդէն բոլորովին յափշտակվել է, միթէ Պիմաքսեանը այնքան նշանակութիւն չունէ նրա աչքում, որ գէթ մի քանի վայրկեան նրա առաջ մօռանայ միւսին:

Նա զգում էր իւր տկարսութիւնը այդ սիրուն, կենդանի և վարփուռն օրիորդի մօտ: Նա աշխատում էր խօսքը դարձնել այնպիսի նիւթերի վրայ, որ նրա ուշքը խիէ Բարաթեանից: Բայց այդ չէր յաջողվում: Ամեն անգամ երբ նայում էր օրիորդի կապուտակ աչքերին, նրա կամքը սառուցի պէս հալվում էր այդ աչքերի հրատապ ներգործութիւնից: Մի վայրկեան նա այնպէս յափշտակվեց, նրա միտքը այնքան պըղտորվեց, խելքը այնքան մթագնեց, որ ողատրաստ էր հէնց այդտեղ խիկ, առանց տատանման, յայտնել իւր սէրը: Այս, նա նրան սիրում է, նա նրա համար տանջվում է, մօրմօքփում: Այդ պէտք է հասկանայ օրիորդը, պէտք է գնահատի, եթէ խելք ունէ, պէտք է զգայ, եթէ սիրտ ունէ:

Նրանք խօսեցին խաղացվող պիեսի մասին: Հե-

բոսը զո՞հ էր գառնում կրակոտ սիրոյ համար մի ընտանեկան անյաղթելի խոչնդոսի: Դիմաքսեանը չէր հաւանում պիեսի գաղափարը: Նա ոգեսրված բացադրում էր սիրոյ անյաղթելի ոյժը: Օրիորդը չէր հակառակում: Այս, որքան նա այդ բոպէին հրապուրիչ էր, որքան ըարի և ներողամիտ էր նրա հայեացքը: Դիմաքսեանի ձայնը դողում էր: Անշուշտ նա անկարող կը լինէր իրան զսղելու, եթէ նրանք առանձին լինէին, մի խուլ անկիւնում, հեռու մարդկանց այդ առելի աչքերից:

Յանկարծ օրիորդը լուրջ աչքերով նայեց նրա երեսին և, արագօրէն դլուխ տալով, հեռացաւ: Նա զգաց իւր խօսակցի հոգեկան դրութիւնը, նա փախաւ աւելորդ խօսքերից:

Դիմաքսեանը միայնակ, շփոթված, չըդիտէր ուր դիմէր, ինչպէս խոյս տար հասարակութիւնից: Նրան թւում էր, թէ չորս կողմից իւր վրայ են նայում: Առ հանց այդ վայրկեանին նա տեսաւ Վէքիլեանին: Արիւնը մի նոր ուժով խփեց նրա դլսին, ականջները և ճակատը սկսեցին այրվել տաքութիւնից, երբ իրաւաբանը, անփոփոխ ժպիտը երեսին, ցիլինդրը սեղմեց կը ծքին և գլուխ տուեց: Սովորոյթը ստիպեց նրան դլսի: մի թեթև շարժումով պատաժանել այդ կեզծ բարեկամական ողջոյնին:

Իրաւաբանը մօտեցաւ նրան:

—Տեսնում ես, ինչ լաւ են խաղում:

—Կեանքում աւելի լաւ դերասաններ կան, —պատասխանեց Դիմաքսեանը:

—Այս, այդ էլ ճիշդ է:

—Վէքիլեան, —աւելացրեց Դիմաքսեանը խխսա-

ձայնով, —ես քեզանից չէի սպասում:

—Ի՞նչ:

—Որ կարող ես մթին անկիւնից ինձ վրայ քարեր արձակել:

—Չեմ հասկանում ասածդ:

—Այն անստորագիր պատկիլի հեղինակը գտն ես: Վէքիլեանը այնպիսի մի զարմացական նշան արեց, որ, կարծես, աւելի անհեթեթ բան չէր լսել կեանքում:

—Ո՞վ է ասում:

—Մի մարդ, որին ամբողջ հոգով հաւատում եմ:

—Այդ մարդը ապացոյց ունէ:

—Ապացոյցներ պահանջում են գատարանում փաստաբաններից: Հասարակական կեանքում մարդու խիզճն է ապացոյցը:

—Արսէն, խելօք մարդը զրովարտիչներին չէ հաւատում:

—Բայց ճշմարիտը խօսողին պէտք է հաւատալ:

—Յօդուածը անստորագիր է, պատասխանատու է խմբագրատունը, ապացոյցների համար դիմիր այնտեղ:

—Աս, ուրեմն չես հերքում, որ գու ես հեղինակը:

—Մի բան կասեմ, Արսէն. այն յօդուածը ով որ էլ դրած լինի, իմ կարծիքով, իւր մէջքեղ համար վիրաւորական բան չէ պարունակում: Ով որ ուզում է ճշմարտութիւն քարողել, պարտաւոր է և՝ ճշմարտութիւններ լսել, որքան էլ նրանք դառն լինեն: Բացօն, հօրաքոյրս ինձ կանչում է:

Նա գլուխ տուեց և շտապով մօտեցաւ օթեակի դրան մօտ կանգնած մի կնոջ:

Դիմաքսեանի համար այլ ևս կասկած չըմնաց, որ

Վէքիլեանը իւր դիմակաւորված թշնամին է։ Ուրեմն, ճիշդ է ասում Սալամբէկեանը, թէ այդ մարդու արտաքին վայելուշ ձեերի և բարեկամական ժպիտների տակ թագնւած է օձային սիրու։ Նա մինչև անդամ վիրաւորական չէ համարում իւր տմարդի վարմունքը։

«Եղնանակէ իմ դէմ սկսել են զինվել նոյն իսկ իմ ընկերները։ Բայց նրանք ինձ հետ ուխտել էին միենոյն համոզմունքով, միևնոյն ուղղութեամբ գործել։ Այդպէս են ուրեմն կատարում իրանց ուխտը։ Այլ ես ում վրայ յոյս դնել, ումին հաւատալ»։

Միթե նա միայնակ պէտք է մնայ, միայնակ իւր սրտի բոլոր գառնութիւններով, հոգու բոլոր ձգտումներով։ Ռժիշկ Սալամբէկեանը տակաւին մաքուր է։ Բայց կայ և մի ուրիշը—Մաերեանը։ Այս, այդ մարդուն կարելի է հաւատալ, նրա պարզաբարտութեան վրայ յոյս դնել։ Նա կայ և կըմնայ միշտ անկեղծ, բարեհոգի, վեհանձն։

Ներկայացումը վերջացել էր։ Հանդիսականները միահամուռ դիմում էին դէպի դուրս։ Դիմաքսեանի աչքերը թափառում էին այս ու այն կողմ։ Եւ գար ձեալ նա տեսաւ Պայիանէին։ Ահա և՛ «նա», միշտ ուշախ, միշտ զուարթ, միշտ ժպտուն։ Նա հետեւմ է օրիորդին և շշնչում տիկին Բախտամեանի հետ։ Իսկ ինքը, Դիմաքսեանը... երբէք նա այնքան փոքրիկ, ճնշված և սեղմված չէր իւր աչքում, որքան այժմ։

Նա կարծում էր, որ ամենքը խղճում են իրան, ծաղրում են և ծիծաղում։ Մարդկանց խառն-խուռն շարքերի մէջ նա երեւում էր ինչպէս ծուռ բուսած մի ծառ անտառում։ Նրա փոքրիկ մարմինը հրվում և մղվում էր ամեն կողմից, ինչպէս մի տաշեղ ալիքնե-

րի մէջ։ Եւ այդ աւելի սաստկացնում էր նրա սրտի կրակը։

Ճնշեցէք, ճնշեցէք այդ տձե մարմինը։ Նա ծըծում է իւր ներսը դինամիտային մի թունաւոր և պայթուցիկ ոյժ։ Կըգայ ժամանակ, որ այդ սղմված, կարծրացած ոյժը այլ ես չի դիմանալ արտաքին ճրնշումներին։ Սոսկալի գվրդիւնով նա դուրս կըմայթքի ոչ միայն անհատների, Վէքիլեանների, Բարաթեանների գլխին, այլ և ամբողջ հասարակութեան, ժողովրդի, աղգի վրայ, որ ծնում է և սնուցանում այդանհատներին։ Իսկ գու, գեղագէմ օրիորդ, դու, որ այնպէս երես ես գարձնում նրանից, զգնյշ, որ քո ընտրածը արգարացնի քո յոյսերը, զգնյշ, որ այդպէս ուրախ, այդպէս ծիծաղուտ, այդպէս երջանիկ կառք ես նստում նրա հետ...»

XI

Բարաթեանի համար անտանելի էր իւր հասարակական դիրքը։ Այն զգացումը, թէ ինքը մի ինչոր ընկերութեան հասարակ դործակալ է, վիրաւորում էր նրա տնձնասիրութիւնը։ Եւ գիշերացերէկ նա խորհում էր—արդեօք ինչպէս ընկերական կեանքում ստեղծի մի դրութիւն, որ գէթ մասմբ գոհացնէր նրա փառասիրական զգացմանը։

Նա վայելում էր հօր կատարեալ հաւատարմութիւնը։ Կարող էր, գրաւելով ծերսւուն, նրա կարուղութիւնը գործադրել, ինչպէս կամենար։ Բայց այդ կարողութիւնը այնքան մեծ չէր, որ կարելի լինէր դունէ ֆինանսական մի խոշոր գործ սկսել։ Բացի գրա-

նից, նրա ձգտումը միայն վող վաստակելը չէր։ Միթէ դրա համար էր կեանք մաշել, «բարձրադոյն» ուսում ստացել։

Մի առաւօտ նա նոր էր զարթնել, երբ ծառան ներս մտաւ և ասաց, թէ հայրը կանչում է։ Ինչպէս յարդող որդի, շտապեց հաղնվել և դնաց Գերասիմ Գերասիմիշի առանձնասեննեակը։ Դա մօտ վաթսուն տարեկան մի մարդ էր վախտ գէմքով, կարճիկ, ծայրերը կտրած բեղերով։ Երեք տարի առաջ պարապէ էր ստացել, ոտները կորցրել էին քայլելու ոյժը, և նա ամբողջ օրը պառկած էր յատկապէս իւր համար պատրաստած մի երկայնաձեւ, շարժուն բազկաթօռի մէջ։ Մի ծառայ կարդված էր նրան սպասաւորելու դիշերցերէկ։ Գերասիմ Գերասիմիշը նախկին չինովնիկ էր, եղել էր զանազան պաշտօններում և վերջը հասել էր նահանգական վարչութեան խորհրդականի (СОВЕТНИКЪ ГУБЕРНСКОГО ПРАВЛЕНИЯ) պաշտօնին։ Իւր ճարպիկ բնաւորութեան և եռանդուն աշխատասիրութեան միջոցով յոյս ունէր աւելի առաջ դնալ, բայց ճակատագիրը դաւաճանեց նրան, և նա այժմ անդամալոյժ դարձած, անպէտքայած, քաշըում էր իւր կեանքի վերջին օրերը։

Նա ծառային հրամայեց դուրս դնալ, իսկ որդուն հրաւիրեց նստել։

—Է՛է, ինչ ես մտածում ապագայիդ մասին, — հարցրեց նա իւր խոպոտ և քայլայված ձայնով։

—Ոչինչ։

—Ոչինչ։ Վրեա բառ, քո հասակում վառասիրութիւնը որդնի պէս ինձ ուտում էր։ Իսկ դու ե ես, բրատ, մի և նոյն պտուղն ենք։ Ամուսնանա-

նալու միտք—բան չունես։

—Ունեմ, պապա, —պատասխանեց որդին համարձակ։

—Այ երկելի բան, խի խի խի, հըմ, քեզ և ինձ նման մարդկանց համար չուտ ամուսնանալը վատ բան չէ։ Ինձ ամուսնութիւնը չըփրկեց, քեզ էլ չի փրկիլ, բայց կարող է գոնէ մի քիչ, զն ա ե շ. է դ ա կ ո ւ յ ո ւ լ ե օ զ կ ո ւ յ ո ւ ո ւ զ դ ո ւ ն ա լ օ ժ ի տ ն ա ս տ ր ա ս տ ի... խի խի խի։ Ի՞նչու ես գլուխդ քաշ գցում, տ մաշնում ես, էհէ, զիտեմ ինչ ծառի պտուղ ես։ Քեզ ճանաչելը շատ հեշտ է, ներսս մտիկ կանեմ, քո հոգին կըտեսնեմ պըպղած։ Յո երակների մէջ վազում է քո հօր արիւնը, ինչպէս իմ երակների մէջ վազում է իմ հօր արիւնը։ Մեր ցեղը յայտնի է իւր թուլութիւններով։ Մօլչայտ խօմ երեխայ չես, զիտես որ իզուր չեմ այս օրին հասել, գրե խի մօլօ զուտի, բրատեց նաւ, ասա տեսնեմ, ում ես ուղում ճանկել։

Որդին, առանց մի բան թազցնելու, յայտնեց սրտի գաղտնիքը հօրը, ինչպէս մի հաւատարիմ ընկերոջ, որ կարող էր յարցել նրա զգացումները։

—Պետք Սոլոմոնիչի քրոջ աղջիկը—զոշեց անդամալոյժը, —ճանաչում եմ, ճանաչում եմ, տեսել եմ։ Նիշել վո, բրատեց, գուշ բան ե դ ու ր ա ։ Փող էլ ունի, ի հարկէ։

—Այդ չըդիտեմ։

—Սուտ ես ասում, շել մա, դու իմ որդին չես լինիլ, եթէ առանց փողի աղջիկ ուզես։ Այդ աղջիկը փող պէտք է ունենայ Պետրոսի մօտ, նրա հօրն էլ ճանաչում էի։ Պետրոսը վատ մարդ չէ, չի խարիլ քեզ,

բայց զգոյշ կաց է՛տ, ուրեմն ամեն բան վերջացրել ես, երբ ես ուզում պսակվել:

—Դեռ յայտնի չէ, պապա, դրութիւնս անորոշ է, այս պատճառով տատանվում եմ:

—Պուստօյ եր, ինչու դրութիւնդ որոշ չէ: Քոյրեր չունես ամուսնացնելու, եղբայրդ էլ շուտով ուսումը կաւարտի, դօխտօրօմ մեդիցինի վրեյդետ, բրատեց: Իմ մասին մի մտածիլ, իմ պենսի ան ինձ բաւական է, մնացեալլ ինչ որ ունեմ քոնն է ու եղբօրդ:

—Բայց ես հասարակական դիրք չունեմ, —նկատեց որդին համեստաբար:

—Պուստօակ, ինչ ասել է հասարակական դիրք: Պատիւ, չի՞ն, յարդանիք, դու միշտ կարող ես ձեռք բերել քո ուսումով: Ժենիս, բրատեց, ժենիս, յետոյ ամեն բան հեշտ է: Ամուսնացած մարդուն աւելի են յարդում, քան խալաստօյ շալասլային: Մենք մեծ կապեր չունենք, քեզ յայտնի է, որ մեր ազգականները, թիրու, որ բօդ պարեագոչնի յ... Պետք Սոլոմոնիչը, օծո, նա ուրիշ է, նա քեզ կօդնի: Ափսոս մայրդ կենդանի չէ, շատ կուրախանար խեղճը, քեզ տեսնելով: Շելմա, ինչ գեղեցկացել ես, հեհէ, ժամանակին քեղանից վատ չեին ու, զգոյշ կաց մամզելն երից, ես—քեզ խրատ: Տեսնում ես, երիտասարդական սխաների հետեանքը երեմն այս է, օծո, ինչպէս ցաւում են անպիտան ոսկորներս: Բայց կնոջդ հետ պէտք է լաւ վարվես: Խեղճ մայրդ, կարող եմ ասել, իմ գոհը դարձաւ: Լաւ, համեստ մի ձեւանար, եթէ ինձպէս շրինես, ինձանից շատ էլ լաւ չես լինիլ: Ուրեմն պսակվում

ես, շատ լաւ, շատ լաւ, ես համաձայն եմ,

—Պապա, վկարծէք որ ես առանց ձեղ մի այդպիսի քայլ կանէի: Ես ինքս մտադիր էի այս օրերս ձեղ յայտնել և ձեր համաձայնութիւնը խնդրել:

—Լադնօ, լադնօ, ես յամառ ու կոպիտ հայրերից չեմ, որ հակառակեմ: Ես ժամանակակից մարդ եմ, մօտերն, բան հասկացող եմ: Շատ ուրախ եմ, շատ ուրախ եմ, էհ, դնա, որդի, աչքերիցդ եւ բեռում է նարաթովների ցեղիցն ես: Յաջողութիւն, ոտներս ծածկիր այն պլետով, այ, այդպէս ալս, ինչպէս ախուր է մենակ կեանքը, դնա...

Եւ ծերունին, իւր յոդնած գլուխը թերելով բաղկալուսի մէջքին, աչքերը խփեց, կարծես, նիրհելու համար:

Մարտ ամսի վերջն էր, երբ նարաթեանի և Գայլիանէի մէջ, վերջապէս, տեղի ունեցաւ բացարձակ խօսակցութիւն: Տարօրինակ էր արդ օրը Գայլիանէի դրութիւնը: Վերադառնալով տուն, նա փակվեց սենեակում, ոչ ոքի չեր թողնում այնտեղ մտնել: Վերջապէս, նրա իղձը կատարվեց: Նա վաղուց դիտեր, որ սիրվում է, բայց այլ էին լուռ նշանները, այլ էր բերանացի խոստովանութիւնը: Եւ նարաթեանը բաց արեց նրա առջև իւր սիրտը, այն մարդը, որ բոլոր երիտասարդների շարքում միակն էր, որ գրաւել էր Գայլիանէին: Այդ երիտասարդի մէջ, օրիորդի կարծիքով, կային բարոյական ոյժ, խելք և արտասավոր ձիրքեր: Առանձնապէս սիրելի էր Գայլիանէի համար նրա կիսաանփոյթ և կիսահեգնական վերաբերութիւնը կեանքին: Նա հաւատացած էր, որ եթէ նարաթեանը չի ողեաս, լում, —որովհետեւ ողեսրպիւլու բան

բայց զգոյշ կաց է՛ւ, ուրեմն ամեն բան վերջացրել ես, երբ ես ուզում պսակվել:

—Դեռ յայտնի չէ, ողապա, դրութիւնս անորոշ է, այս պատճառով տատանվում եմ:

—Պուստօյ ե, ինչո՞ւ դրութիւնդ որոշ չէ: Քոյրեր չունես ամուսնացնելու, եղբայրդ էլ չուտով ուսումը կաւարտի, դօխտօմ մեդի ցինի վըի յդետ, բրատեց: Իմ մասին մի մտածիլ, իմ ոլենսիան ինձ բաւական է, մնացեալը ինչ որ ունեմ քոնն է ու եղբօրդ:

—Բայց ես հասարակական դիրք չունեմ, —նկատեց որդին համեստաբար:

—Պուստօտ կ, ինչ ասել է հասարակական դիրք: Պատիւ, չին, յարդանք, դու միշտ կարող ես ձեռք բերել քուսումով: Ժենիս, բրատեց: Ամուսնացած մարդուն աւելի են յարդում, քան խալաստօյ շալասլային: Մենք մեծ կապեր չունենք, քեզ յարտնի է, որ մեր ազգականները, թիու, որ բօդ պարեագոչնի յ... Պետք Սոլոմոնիչը, օօօ, նա ուրիշ է, նա քեզ կօդնի: Ափսոս մայրդ կենդանի չէ, շատ կուրախանար խեղճը, քեզ տեսնելով: Ե ել մա, ինչ գեղեցկացել ես, հէհէ, ժամանակին քեզանից վատ չէին աւ, զգոյշ կաց մամզելներից, ես—քեզ խրատ: Տեսնաւմ ես, երիտասարդական սխալների հետևանքը երբեմն այս է, օօօ, ինչպէս ցաւում են անպիտան սակորներս: Բայց կնոջդ հետ ոկտոք է լաւ վարվես: Խեղճ մայրդ, կարող եմ ասել, իմ զոհը դարձաւ: Լաւ, համեստ մի ձեանար, եթէ ինձպէս շրինես, ինձանից շատ էլ լաւ չես լինիլ: Ուրեմն պսակվում

ես, շատ լաւ, շատ լաւ, ես համաձայն եմ,

—Պապա, չըկարծէք որ ես առանց ձեզ մի այդապիսի քայլ կանէի: Ես ինքս մտադիր էի այս օրերտ ձեզ յայտնել և ձեր համաձայնութիւնը խնդրել:

—Լադնօ, լադնօ, ես յամառ ու կոպիտ հայրերից չեմ, որ հակառակեմ: Ես ժամանակակից մարդ եմ, մօտերն, բան հասկացող եմ: Շատ ուրախ եմ, էհ, զնա, որդի, աչքերիցդ եւ բիում է Բարաթովների ցեղիցն ես: Յաջողութիւնն, ուներս ծածկիր այն ոլեգով, այ, այդպէս, ախ, ինչպէս տիսուր է մենակ կեանքը, զնա...

Եւ ծերունին, իւր յոգնած գլուխը թերելով բաղկաթուի մէջքին, աչքերը խփեց, կարծես, նիրհելու համար:

Մարտ ամսի վերջն էր, երբ Բարաթեանի և Գայյիանէի մէջ, վերջապէս, տեղի ունեցաւ բացարձակ խօսակցութիւն: Տարօրինակ էր արդ օրը Գայյիանէի դրութիւնը: Վերադառնալով տուն, նա վիակվեց սկզնեակում, ոչ ոքի չէր թողնում այնտեղ մտնել: Վերջապէս, նրա իղձը կատարվեց: Նա վաղուց դիտեր, որ սիրվում է, բայց այլ էին լուռ նշանները, այլ էր բերանացի խօսուովանութիւնը: Եւ Բարաթեանը բացարեց նրա առջև իւր սիրար, այն մարդը, որ բոլոր երիտասարդների շարքում միակն էր, որ դրաւել էր Գայյիանէին: Այդ երիտասարդի մէջ, օրիորդի կարծիքով, կային բարոյական ոյժ, խելք և արտասովոր ձիքեր: Առանձնապէս սիրելի էր Գայյիանէի համար նրա կիսաանփոյթ և կիսահեգնական վերաբերութիւնը կեանքին: Նա հաւատացած էր, որ եթէ Բարաթեանը չի ուշեց, որովհետեւ ոգեսրվելու բան

չի տեսնում, եթէ լրջօրէն չի զիճում, չի տաքանում, ինչպէս Դիմաքսեանը կամ ուրիշները, —որովհետև խելքով իրան հաւասար մարդկանց չի հանդիպում: Նա համոզված էր, որ հաճոյախօս, կատակասէր երիտասարդի ներքին աշխարհը պարունակում է հարուստ գանձ, և այդ գանձը վերջ ի վերջոյ պէտք է երեան գայ ու ամենքին հիացնի: Յաճախ նա ուզում էր իւմանալ, թէ ի՞նչ է այդ բանը, կամենում էր արժանանալ երիտասարդի հաւատարմութեանը: Բայց Բարաթեանը երբեք չէր դաւաճանում իւր մշտական սովորոյթին: Նա օրիորդի հետ ևս վարդում էր այնպէս, ինչպէս ուրիշների հետ, հեգնելով և կատակելով: Եւ Գայիանէն չէր վիրաւորվում այդ բանից, ընդհակառակը նա գեռ իրան անարժան էր համարում Բարաթեանի հաւատարմութեանը:

Իսկ այժմ... այժմ նա սիրված է նրանից, Ուրիմն Բարաթեանը նրա հաւատարն է, այլ ևս նրանց մէջ դաշտնիք չի կարող և չըպիտի լինի:

«Ես երջանիկ եմ», կրկնում էր նա անդադար մտքում, յետ ու առաջ անց ու դարձ անելով իւր սենեկում: Եւ այդ երջանիկ առանձնութեան մէջ նա չէր ուզում, որ մէկը խանգարի նրան: Նա մինչև անդամ ճաշի էլ շնուտեց անեցիների հետ, պատճառելով, թէ տկար է: Սակայն տիկին Բախտամեանը մըտաւ նրա սենեկլը, խանգարեց նրան և մի հայեցքով ամեն ինչ հասկացաւ:

— Զւլինի թէ ուզում էք առանց մեղ հարսանիք անել, — արտասանեց տիկինը գառն հեգնութեամբ:

— Վաղը նա կըգայ քեռիի և քեզ հետ խօսելու:

— Բարի դալուստ, — մրմնից տիկինը, շրթունք-

ները կրծելով:

Դայիանէն այնքան ոգեսորված և յափշտակված էր իւր բաղդով, որ նրա յուղմունքը այս անդամ չընկատեց: Նա միայն մի բան էր ցանկանում, տիկինը իրան մենակ թողնի, չըխանդարի նրա երջանիկ բռպէները:

Հետեւեալ օրը Պեօտր Սոլոմոնիչը սուրճ խմելով լրադիրներ էր կարդում, երբ ծառան յայտնեց, թէ Բարաթեանը ուզում է նրան տեսնել: Պատկառելի բուրդուան իսկոյն հասկացաւ, որ այս անդամ երիտասարդը կարեւոր գործի համար է եկել, քանի որ մինչև այժմ նա երբէք իւր գալստեան մասին այդպէս չէր աղդարարել ծառայի միջոցով:

Բարաթեանը հագնված էր սովորականից լաւ և խնամքով: Նրա գէմքը արտայայտում էր անսովոր լըրջութիւն, իսկ աչքերի մէջ նկատվում էր խորին ակնածութիւն Պեօտր Սոլոմոնիչից: Այս բանը մեղմացրեց ծերունու սիրտը: Նա ընդունեց երիտասարդին համեմատաբար աւելի յարդանքով, քան երբ և է ընդունել էր:

Բարաթեանին հարկաւոր էր մի փոքր կողմնակի բաներից խօսել, որպէսզի մի կերպ խօսք բաց անէ իւր նպատակի մասին: Ուստի նա դիպօմատիական հմտութիւնով սկսեց բաւական հեռուից և ապա հետզհետէ մօտեցաւ բուն գործին: Պեօտր Սոլոմոնիչը լըսում էր նրան լուռ, մերթ ակնոցը դնելով քննիթին, մերթ հանելով: Կարծես, նա փորձում էր — ապակիներով լաւ կըհասկանայ լսածը, թէ առանց ապակիների: Երբ Բարաթեանը ասելիքը վերջացրեց և գլուխը ուզիլ պահած խորին պատկառակով պատասխա-

Նի էր սպասում, Պետք Սոլոմոնիչը նորից հանեց ականցը և սկսեց նայել իւր բաճկոնակի կօճակներին: Թուում էր, որ նա դրսից է խորհրդակցում իւր ոքատի հետ հանդիսաւոր առաջարկութեան մասին: Չայն եկաւ ներսից, թէ իսկի էլ վատ չէ Բարաթեանի նըստակակը: Նախ, վերջապէս, պէտք է Գայիանէին մէշի հետ ամուսնացնել, երկրորդ, այդ Բարաթեանը, Աստուած վկայ, վատ երիտասարդի չի նմանվում: Գայիանէի համար է եղել նրա այցելութիւնը. կընշանակէ Պետք Սոլոմոնիչը իզուր էր նրան ատում, կարծելով, թէ... էհ, վերջապէս...

—Պարոն Բարաթեան, դուք Գայիանէին անկեղծ էք սիրում:

Սիրում է անկեղծ և շատ է սիրում:

—Պարոն Բարաթեան, ձեր հօրը Գերասիմ Գերասիմիչին ասել էք, թէ ուզում էք Պետք Սոլոմոնիչ Բախտամովի քրոջ աղջկայ հետ պատկվել:

Ի հարկէ, ինչ ասել կրողի: Նա այն երիտասարդ ներից չէ, որ առանց իրանց ծնողների հաճութեան են ամուսնանում:

Երիտասարդի պատասխանները գիւր եկան Պետք Սոլոմոնիչին: Ծերտունին դլուխը հաւանական ձեռվշարժեց և այս անդամ աշքերը յառեց դիմացինի կունակներին:

—Մի բան էլ կայ:

—Հրամայեցէք, Պետք Սոլոմոնիչ, ձեր խոնարհ ծառան եմ:

—Մեր ժամանակում ընտանիք պահելը մի քիչ դժուար է:

—Այսինքն ինչպէս:

—Շատ փող է հարկաւոր:

Բարաթեանը ստանում է տարեկան 2,000 բուբը և սոճիկ, ապրում է իւր հօր տանը և ամուսնանաւուց յետոյ էլ պէտք է այնտեղ ապրի: Բացի դրանից, հայրը խոստանում է նրան ամսական 200 բուբ.

—Հայրդ ինչքան կարողութիւն ունէ, ամօթ զըլինի հարցնելը:

—Մեր տունը տեսել էք, Պետք Սոլոմոնիչ:

—Լաւաւ: Գրաւ դրած չէ:

—Ո՞չ:

—Արժէ ուժսուն հաղար:

—Օրթաճալումն էլ մի այդի ունենք:

—Գրօշ չարժէ: Փող, բան:

—Հաստատը չըգիտեմ, բայց, կարծեմ, իմ մասը յօտ քսան-քսանուհինդ հաղար զուտ փող կըլինի:

Պետք Սոլոմոնիչը լոեց և դարձեալ նայեց իւր կոճակներին: Բարաթեանի պատասխանները բոլորովին զոհացուցիչ էին, խելօք մարդը այդ կարողութիւնով կարսդ է շատ լաւ ապրել: Բայց ինչ օրինաւոր երիտասարդ է, օժիտի մասին իսկի՞ մի խօսք: «Արի սրան փորձեմ», մտածեց նա:

—Պարոն Բարաթեան, ես Գայիանէին աչքիս լուսի պէս եմ սիրում:

—Ի հարկէ, ի հարկէ, ես շատ լաւ գիտեմ:

—Համբերեցէք: Հանդուցեալ քոյրս մեռնելիս ինձ ասաց. «Պետրոս, աղջկանցս փողոցներում չըթողնեա»: Գայիանէին տասնուերեք տարեկան էք, Ովսաննան հինգ տարեկան, երբ նրանց բերեցի իմ տուն: Խննը տարի վեց ամիս է նրանց պահում եմ ու մեծացնում: Էհ, բան է, ժամանակիս երիտասարդ էք, կարելի է մը-

տածում էք օժիտի մասին, պարզն եմ ասում, Գայիշ-
անէն ոչինչ չունէ:

«Խորամանկութիւն ես անում, բարեկամ, ինձ
խաբել չես կարող», մտածեց Բարաթեանը:

Նա բարւոք համարեց առ այժմ հրաժարվել օ-
ժիսի գաղափարից: Ի՞նչ օժիտ, ի՞նչ բան, նա շատ
ստոր մարդ կըլինէր, եթէ Գայլիանէի հետ կամենար
փողի համար ամուսնանալ: Ոչ, ոչ, նա սիրում է օրի-
որդին և միայն նրան է ուզում, թէկուզ առանց կո-
պէկի, թէկուզ մերկ էլ տաք, նա չի հրաժարվել:

—Մալագչինա, —դոչեց Պետր Սոլոմոնիշը
միանգամայն հիացած, —լաւ տղան այդպէս պէտք է
անի:

Հաղիւ նա արտայայտել էր իւր հիացումը, երբ
դռները կամացուկ բացվեցին և հանդարս քայլերով
ներս մտաւ տիկին Բախտամեանը։ Պեօտր Սոլոմոնի-
շը ուզեց պատմել նրան, բայց տիկինը ձեռի շարժու-
մով հասկացրեց, թէ տեղեակ է բանին։

—Երեխ, եթէ ինքս եկած չըլինէի, դու ինձ չէ-
իր կանչի, —ասաց նա վիրաւորված եղանակով:

— Փաստ, ոնց չե, դու Գայիիանէի համար մայրս եռ
— Նա ինքը ինձանից տասնապատիկ լաւ մայր է
իրան համար:

—իւ, հիմայ ասա տեսնենք, համտձայն ես:

—ի՞նչ ասել է «Համաձայն ես»։ Ես կամ դու ինչ
իրաւունք ունինք, խօս մեր պապերի ժամանակը չէ,
այժմ աղջիկը ում հաւանում է—նրան է գնում։ Մի-
այն ես մի բան եմ ուզում ասել, պարոն Բարաթեան,
լաւ մտածեցէք, շատ չէք վռազում պսակվելու, դուք
այնքան երիտասարդ եք, որ...

— ԶԵ որ Գայլիանէն էլ երիտասարդ է, —ընդհաւանքը Պետք Սոլոմոնից:

Տիկինը ուսերը վեր քաշեց և ժպտալով պատահանձնեց.

— Ինչու, շատ էլ երիտասարդ չէ, ես ու նա համարեա միասին ենք մեծացել, մարդ չպիտի թագցնի պակասութիւնը, բաւական հասակով է:

—Հասակի մասին խօսելը աւելորդ եմ համարում, —ասաց Բարսթեանը, չըզգալով, թէ որքան վիրաւորում է տիկնոջը, —միայն ես ձեր համաձայնութիւնն եմ խնդրում:

—Ես համաձայն եմ, —դուքց Պետք Սոլոմոնիշը
բանին վերջ տալու համար:

—Ե՞ս, տայ Աստուած, որ բաղդաւոր լինեք, —աւելագրեց տիկինը հառաջելով:

Բարաթեանը թոյլ տուեց, որ Պետք Սոլոմոնից
համբուրի խւր ճակատը, իսկ ինքը համբուրեց տիկ-

Նոյ ձեռը։ Նա տիկնոյ հետ վարվում էր խորին որպես գիտական յարդանքով և անսահման համեստութեամբ։ —Մի բան, որ թէ Պեօար Սոլոմոնիչին շատ դուր եղաւ և թէ նրա սրտից ջնջեց կասկածի վերջին նըշացոյն անգամ...

xii

Զարադուշակ երեկոյից յետոյ Դիմաքսեանը առաջասարակ տնից չէր դուրս դալիս, բացի դպրոց գնալուց: Այժմ նա կատաղած էր ոչ միայն հակառակորդ-ների, այլև ամբողջ հասարակութեան, նոյն իսկ մարդկութեան դէմ: Ի՞նչպէս նա սառնարիւն կրէր այն բո-

լոր ատելութիւնները, ծաղրը, արհամարհանքը, որոնց
հանդիպում էր ամեն քայլափոխում:

Դպրոցը նա այժմ հանդիսատ էր թողել, նրա մէջ
տեղի ունեցած զեղծումները շատ էլ չէին զբաղեց-
նում նրա միտքը։ Այս պատճառով պաշտօնակիցները
և հոգաբարձուները բաւական հաշտ էին նրա հետ-
վերջապէս, նա ինքը առ այժմ մասամբ գոհ էր։ Նրա
յարձակումները անհետևանք չէին մնացել. հոգաբար-
ձուների մէջ դպրոցի համար նոր շէնք կառուցանելու
խնդիր էր յզացել։ Նրա ցանկացածն էլ առ այժմ այդ-
էր, մնացեալը ապագայի խնդիր էր։ Ուստի առ ժա-
մանակ նա լռեց։

Բայց նա նիւթում էր մի աւելի կատաղի կռիւտ
Դա մի առանձին գրութիւն էր «Հասարակութիւն և
անհատ» անունով։ Պէտք է ապացուցանէր, թէ ընդ-
հանուրի քաղաքակրթութեան հիմքը անհատն է. քա-
նի որ չըկան բարոյական անհատներ—չի կարող լինել
և բարոյական հասարակութիւն։ Սակայն լոկ դրելը
նրան չէր գոհացնում։ Նա ձգտում էր գործով ու
խօսքով էլ մաքառել ամբոխի տգիտութեան դէմ։ Եւ
այստեղ նրա առջև կանդնում էր մի խոշնդոտ։ Այդ-
տեսակ կռիւ մզելու համար նախ հասարակ ուսուցչի
պաշտօնը շատ աննշան էր, երկրորդ, անհրաժեշտ էր
նիւթական անպայման անկախութիւն։ Նա գիտէր, որ
եթէ հօր հետ հաշտուի, կարող է օգտվել նրա կարո-
ղութիւնից։ Բայց, միևնոյն ժամանակ, չէր զզում իւր
արածի մասին և երբէք չէր համաձայնվիլ խոնարհ-
վել ծերունու առջև, ներումն խնդրել նրանից։

Բարաթեանի նշանգրութեան լուրը հաղորդեց
նրան Մոերեանը, որ լսել էր Սալամբէկեանից։ Իդէ-

ալլաստին յայտնի էր, որ Դիմաքսեանը հակված է գէ-
պի օրիորդ Գայիանէն։ Ուստի նրա բարի սիրտը թոյլ
չըտուեց այդ փափուկ խնդրի մասին խօսքը երկարաց-
նել և միայն ասաց.

—Ով ուզում է հասարակութեանը ծառայել, Հը-
պիտի ամուսնանայ։

Դիմաքսեանը այս խօսքերի մէջ զգաց ճշմարտու-
թեան մի մաս։ Նա չըփիճեց, բայց և չըկարողացաւ
այլ ևս թագցնել իւր սրտի գրգիռը։ Երկու ընկերնե-
րի մէջ բացվեց մաերիմ խօսակցութիւն։ Վաղուց Գի-
մաքսեանը զգում էր այս տեսակ խօսակցութեան պա-
հանջ, վաղուց ցանկանում էր բանալ իւր սրտի գաղտ-
նի ծալքերը մէկի առաջ։ Գուցէ այդպիսով թեթեաց-
նէր իւր հոգոյ ծանր բեռը։ Եւ ում առջև կարող էր
պարզախօս լինել, եթէ ոչ Մոերեանի, որին հաւա-
տում էր լիովին և որի անկեղծութիւնը անկասկածե-
լի էր նրա համար։

Ճիշդ է, նա սիրում է Գայիանէին, ճիշդ է, չը-
կարողացաւ հանդուրժել կանացի հրապոյըներին։ Բայց
նա իւր սէրը օրիորդին չարտայայտեց, որովհետեւ ինչ
հետեանքի կարող էր հասնել։ Միթէ մի օրիորդ, որ
լինքը գեղեցիկ է, կարող էր նրան հաւանել։

«Ի՞նձ, այլանդակի՞ս...»։

Կարող էր գերադասել մի ուրիշից, այն մէկից,
այն, այն ուրախ և ճարպիկ, գեղեցիկ և սալոնական
Բարաթեանից։ Բայց կայ և մի ուրիշ, աւելի զօրա-
ւոր, պատճառ, որ ստիպում էր նրան լռել, նոյն իսկ
այն տաք րոպէներին, երբ նա կարծում էր, թէ ան-
կարող է լռել։ Եթէ Գայիանէն նրան մերժէր և յե-
տոյ դառնար Բարաթեանի կինը, նա կըխելագարվէր։

Խնքնասիրութիւնը նրան կըսպանէր: Այն, նա շատ ինքնասէր է, չափազանց, այդ ինքն էլ դիտէ: Բայց միթէ չի հասկանում, թէ դա բարոյական հիւանդութիւն է, միթէ խելքը չի բողոքում դրա դէմ: Քանիքանի անդամ նա ինքն իրան դատապարտել է, նառ խատել, յանդիմանել այդ մասին, բայց խղուր: Նրա եռը նրա մէջ մի չար օձ է: Գիշեր ու ցերեկ այդ օձը արթուն օղակված է ներսումը: Բաւական է մի թոյլ շշուկ, մի նուրբ շօշափում, և նա ամեն վայրկեան պատրաստ է գալարիել, բանալ բերանը, ցցել սուր ատամները նրա սրտի մէջ և թափել այնտեղ իւր սոսկալի թոյնը: Ահա հէնց այդ օձն է նրան ստիւպում լինել միշտ գիւրագրդիո, միշտ բարկացոտ, միշտ պատրաստ չափ վհուկի պէս ճիրանները խրել առաջին պատահած հակառակորդի կոկորդին:

—Այբատ, մի մեղադրիլ ինձ, մի հայհոյիլ, ես քեզ խոստովանում եմ այն, ինչ որ երբեմն ինքու ինձ ամաչում և վախենում եմ խոստովանել: Բացատրիր միայն ինձ, ինչո՞ւ ես այդովէս եմ, ինչո՞ւ բնութիւնը դրել է իմ սրտի մէջ այդ վիշապին...

Նրանք նստած էին հիւրանոցի մի առանձին սենեակում, ուր ոչ ոք չըկար: Մօտ կէս գիշեր էր: Ընթրեքը նոր վերջացրել էին: Սեղանի վրայ դրած էին մի շիշ գինի և երկու բաժակ:

Մսերեանը լսում էր ընկերոջը լուռ, մտերիմ բարեկամի խրախուսող յարդանքով, հաւանութիւն տալով նրա իւրաքանչիւր գարձուածին: Կար այդ մարդու մէջ մի բան, որ խորին հաւատ էր ներշնչում և դիմացինին տրամադրում էր պարզել նրա մօտ սրտի ամենանուիրական զգացումները այն անդրդվելի հա-

մողմունքով, որ գազմնիքը կըմնայ նրա մօտ գաղտնիք մինչև գերեզման:

Աւարտելով իւր խոստովանքը, Դիմաքսեանը դլուխը յենեց ձեռի ափին և հայեացքը յառեց անորոշ տարածութեան մէջ:

Վերջապէս, Մսերեանը խօսեց: Նա իւր ընկերոջ հոգին հասկանում է, հասկանում է, ինչ է այն բանը, որին թունաւոր օձ է համարում: Այն, նա թունաւոր է, բայց միայն Դիմաքսեանի մէջ չէ գտնվում նա: Մի մի այդպիսի օձ նստած է ամեն մի մարդու կրծքի տակ և գիշերցերեկ կրծում է նրա սիրող, թուլացնում է նրա հոգին, ծծում է նրա կեանքի հիւմքը: Մի տարբերութիւն կայ Դիմաքսեանի և ուրիշների մէջ, նրա սրտի օձը աւելի մեծ է, աւելի թունաւոր և աւելի արթուն ու զգայուն: Եւ ինչո՞ւ, որովհետեւ նրա միտքը ևս աւելի բարձր, սիրտն ևս աւելի ընդարձակ:

—Ոչ, —գոչեց իդէալիստը զգացված, բռնելով ընկերոջ բազուկը, —վկայ է Աստուած, կեանքիս երեսուն ու հինգ տարուայ ընթացքում ոչ մի անգամ ոչ մէկին չեմ շողորոթել, թէև կարիք ունեցել եմ շոշղորոթելու... Բայց կրտայ ժամանակ, և ես համոզված եմ նրա գալուն, որ դու խելքիդ ուժով կըջախալիս այդ օձի գլուխը: Այնուհետեւ քո մէջ կըմնայ միմիայն մարդը, կատարելագործված, կեանքի քուրայում ձուլված և զտված մարդ: Յիշում ես այն երեկոն, երբ դու քեզ գժբաղդ անուանեցիր: Ես ասացի, դու ամենաբաղդասորը կըլինես մարդկանց մէջ: Եւ կըլինես: Սպանիր այդ օձին, և դու կըտեսնես, որ ես չեմ սխալվում, ինչպէս չեմ սխալվում, թէ կը-

գայ ժամանակ, որ անհատի բոլոր մանր ինստինկտները կենթարկվեն ընդհանուրի երջանկութեան պահանջներին...

Դառն և վշտալի ժպիտը մթազնեց Դիմաքսեանի երեսը: Նատ է աշխատել նա ջախջախել հրէշին, շատ է ճգնել ազատվել նրա տանջանքներից, բայց իզուր: Մովային պոլիպի պէս հարիւրաւոր ճանկերով նա բըռանել է նրա ամբողջ էութիւնը և սեզմում է անխնայ:

—Ահա, հէնց այժմ, այս վայրկեանիս, դու խօսում ես, իսկ նա արթնանում է: Ես վշտանում եմ, ինչո՞ւ դո՞ւ պէտք է ինձ խրատես, ինչո՞ւ ես միմիայն իմ և իմ խելքին շրպիտի հաւատամ:

—Տարիների փորձը կըտայ քեզ այն զէնքը, որի մի հարուածով կըկտրես նրա հարիւրաւոր ճանկերը: Ապրիր, դործիր և կըտեսնես:

Նրանք լուցին: Արդէն ուշ դիշեր էր: Սպասաւորը հաւաքում էր հիւրանոցի աթոռները: Նրանք վերկացան և դուրս եկան:

Երբեմն Դիմաքսեանը փողոցում տեսնում էր Բարաթեանին Գայլիանէի հետ թե թե տուած զբօսնելիս: Նա միշտ ճանապարհը փոխում էր, որ երես առ երես ըշհանդիպի նրանց: Դա արդէն աւելի էր, քան թէ հասարակ նախանձը: Դա զուտ տանջանք էր: Ճառապում էին նրա սրտի բոլոր թելերը, և տառապանքի պատճառը դարձեալ նա էր, այն օձը: Երջանիկ Մուերեան, ինչպէս կարողանայ սպանել վիշապին, երբ քաջութիւն չունէ հանդիպել անդամ մի ուրիշ երջանկութեանը, որ իւր ապերջանիկլինելն է ցոյց տալիս:

Այդ օրերը նա իւր յիշատակարանի մէջ մտցրեց հետեւալ տողերը.

«Եթէ բնութիւնը իմ այս փոքրիկ մարմնի մէջ դրած լինէր մի փոքրիկ և սառն սիրտ, միթէ աւելի բաղդաւոր չէի լինիլ: Ինչո՞ւ այսքան զգայուն եմ, ինչո՞ւ սիրտս լիքն է անզուսպ կրքերով, ոչ խողական կրքերով, այլ սիրելու և ատելու բուռն աւելնով»...

Նա փորձում էր իւր վիշտը մոռանալ դործերի մէջ խորասուղվելով: Դպրոցում սկսվել էին հարցաքննութիւնները: Առ այժմ դո՞նէ առ երես պաշտօնակիցները հաշտ էին նրա հետ: Մի անգամ միայն նա չըկարողացաւ իրան զսպել, երբ տեսուցը մի աշակերտի անուանեց «արջի զաւակ»: Բայց վէճը սուր կերպարանք չըստացաւ: Գործերի դրութիւնը շատ խառն էր, արձակուրդները չըկամեցան բաժանվել:

Քննութիւնները նոր էին վերջացել, երբ Դիմաքսեանը մի օր հեռագիր ստացաւ, թէ հայրը հիւանդէ և անյատաղ պահանջում է նրան: Որքան էլ անհաշտ լինէր, սակայն դժգոհութիւնը նրա մէջ տեղի տուեց որդիական զգացմանը: Նա շտապեց ուղեորվել հայրենիք, որ երկու օրվայ հեռաւորութիւն ունէր Թիֆլիզից: Ճանապարհին նա կարծում էր ծերունին արդէն մեռել է: Խղճի խայթոցը տանջում էր նրան, ինչո՞ւ որդիական սէրը մոռացաւ ծերունու կամակորութեան պատճառով: Սակայն քանի մօտենում էր հայրենի քաղաքին, այնքան խայթոցը մեղմանում էր: Միթէ նա չէր սիրել հօրը: Ո՛չ, նա միայն իւր աշխարհահայեացը չըկամեցաւ ենթարկել նրա յամառ կամքին: Գաղափարի մարդ է, պարտաւոր էր այդպէս անել:

«Ես կատարել եմ իմ բարոյական պարտքը, ինչ-

Հու եմ յանդիմանում ինձ»:

Այս խորհրդածութիւններով նա ուսք դրեց այն տան շէմքը, ուր ծնվել էր, սնվել և մինչեւ տասն ու հինգ տարեկան հասակը ապրել: Չըկար այլ ևս այն ահագին գամբռը, որ գիշերցերէկ հսկում էր այդ տան դռները և որի հետ նա շատ էր խաղ արել: Պարտիզի ծառերը միայն ողջունեցին նրա գալուստը: Դարաւոր կաղամախները խշխացնում էին իրանց յղկած փայլուն տերենները սպիտակ ճիւղերի մէջ: Եւ նրանց վեհ ու վիթխարի տեսքը պատկառանք էր ազդում: Հաստաբուն թթենիները արձակում էին նրա ոտների տակ իրանց հասուն պտուղները: Խոկ արեգակի ուրախ շողբերը, ծառերի խիտ տերենների միջով անցնելով, խնամքով մաքրված դետնի վրայ հաղարաւոր նախշեր էին գոյացնում: Այդ բոլորը խօսում էին նրա հետ անցեալի լեզուով և նրա սրտի մէջ զարթեցնում քաղցր յիշատակներ: Ծնդարձակ տան մէջ տիրում էր մենաստանային լոռութիւն: Նա շտապով անցաւ լայն պատշգամբը, ուր այնքան նա վազվել էր իւր քոյրերի հետ: Նա մտաւ մի նեղ, մուժ նախասենեակ և այնտեղից ուղղակի հօր նընջարանը:

Մերունին կենդանի էր: Անկողնի մէջ նստած, վերմակը ուսերին քաշած, հիւանդը նայում էր ցած, երբ ներս մտաւ նրա միակ արու զաւակը՝ երկար կօշիկները հագին, ոտից մինչեւ գլուխ փոշի մէջ փաթաթված: Անկողնի առաջ կանդնած էր մի շիկահեր տղամարդ, ձեռները վորի վրայ դարսած, հլութեան դրոշմը ճակատին: Նա սպասում էր հիւանդի հրամաններին, և թւում էր, որ պատրաստ է ծերունու

մի խօսքով կրակի մէջ նետվելու: Այն ինչ՝ հիւանդը լուռ էր, անշարժ: կարծես, նա իւր սրտի հետ խոսրին խորհրդածութեան մէջ էր: Նրա տափակ ծոծրակով և քառանկիւնի ճակատով գլուխը հէնց առաջին հայեացը ազդու տպաւորութիւն էր գործում իւր կարճիկ մոխրագոյն մազերով, որ նմանում էին լարված նետերի, պատրաստ ամեն վայրկեան դուրս պլծնալ և ցցվել առաստաղին: Նրա թանձը ընչացքը հովանաւորում էր մի խիստ բերան, որի անկիւններում փորված էին երկու խոշոր ակօսներ: Հիւանդութեան պատճառով չըսափրած երեսի կարճ միրուքը յիշեցնում էր ծայրերը կոտրված ասեղների փունջ:

Չընայելով եղանակի տաքութեանը, ընդարձակ սենեակի անպաստառ, խօնաւ պատերից փչում էր մի թափանցող զով: Կահ-կարասին բազկացած էր մի քանի հնաձեւ աթոռներից և մի երկայն ու լայն թախտից, որի ծայրում պառկում էր հիւանդը: Մի անկիւնում սենեակի յատակին բեկոված էր մի երկաթեայ ժանդուված մնդուկ: Նա փակ էր, նրա պարունակութիւնը ոչ ոք չըգիտէր, ինչպէս և անյայտ էր, թէ ինչ են պարունակում նրա տիրոջ հոգին ու սիրաբ:

Լսելով որդու բարեելու ձայնը, Մարդար ազան գլուխը շրբարձրացրեց, չընայեց նրա երեսին, ոչ էլ մի բառ արտասանեց: Նա միայն իւր ջղոտ ձեռը մեկնեց նրան: Արսէնը սեղմեց այդ կոշտ ձեռը: Ծերունին շտապով յետ քաշեց, նա կարծում էր, թէ որդին գոնէ կըհամբուրէ հայրական աջը: Շիկահեր մարդը մի աթոռ մօտեցրեց, և Արսէնը նստեց նրա վրայւի՞նչպէս էր այժմ:

Ծերունին թաւ, ալեխառն յօնքերը վեր քաշեց
և մի ակնթարթ միայն նայեց որդու երեսին։ Այնու-
հետեւ գարձեալ նրա ծանր կուշկուչված կոպերը խո-
նարհվեցին լուսամուտների վարագոյրների պէս, որ
չըթոյլ տան արեգակի ճառագայթներին ներս թա-
փանցել։ Նորից սովորական խստութիւնը և մռայլու-
թիւնը սքօղեցին նրա դէմքը։

Մի քանի բոպէից յետոյ, վերջապէս, լովեց նրա
ձայնը։ Այդ ձայնը հնչում էր պղնձի պէս։ Նա ազդու-
էր և գալիս էր մի լայն ու հուժկու կրծքից։ Նա սո-
վոր էր հրամայել և դուռալ։

—Ինչո՞ւ ես եկել։

—Հեռագիր էի ստացել։

Ծերունին նայեց խոշոր հայեացքով անկողնի դէմ
կանգնած շիկահերին և բարկացած զոշեց։

—Զասացի ձեզ, թողեք մեռնեմ, դայ գերեզմա-
նըս էլ շրդտնի։

Յայտնվեց, որ, իրաւ, ծերունին դէմ է եղել որ-
դու գալստեանը։ Արսէնին, հօրից գաղտնի, հեռա-
գրած է եղել նրա մեծ ըսյրը։ Հիւանդը չէր կամե-
ցել տեսնվել իւր միակ որդու հետ։ Նա շրկատարեց
իւր հօր կամքը, արհամարհեց նրան, ուսումը տւար-
տելուց յետոյ անգամ չեկաւ ներում ինդքելու։ Նա
վիրաւորում է իւր ծնողին, ամեն ամիս երեսին շր-
պրաելով նրանից ստացած նպաստը։ Թող ուրեմն ին-
քըն էլ արհամարհված և մռացված մնայ։

—Կարելի է մտածում էիր, շատ եմ կարօտել
կերպարանքիդ։ Զէ, ես որդի չունիմ, ինչո՞ւ պիտի կա-
րօտէի։ Քոյլերդ էլ կարծում են աչքս ճանապարհին
է, հա հա հա, շարաթը երկու անգամ գալիս են իւ-

րանց լակոտների հետ... էէէ, ես շատ լաւ եմ ճանա-
չում ձեզ, յիմար չեմ, խելքս դլիսիս դրուստ է։ Դուք-
անհամբնը սպասում էք իմ մեռնելուն։ ասում էք,
կըսատկի սպառաւը, կըդնանք ունեցած-չունեցածը կը-
ճանկենք, տակով կանենք։ Նատ էք վռազում, բայց
սխալվում էք, Աստուծոյ կարող զօրութիւնով Մար-
դար աղան ձեր խաթրու չի մեռնիլ։

Արսէնի ինքնասիրութիւնը ստիպված էր դիմա-
նալ այդ զրպարտութեանը, որովհետեւ որդին չէր կա-
մենում հիւանդ հօրը աւելի գրգռել։ Նա լուռ լսում
էր, նայելով մերթ սենեակի աններկ ու մաշված յա-
տակին, մերթ սարդի սատայնով ծածկված առաս-
տաղին։

Ծերունին բարձի տակից հանեց կոտլետի չափ-
մի արծաթեայ հնագարեան ժամացոյց, նայեց և դար-
ձաւ շիկահերին։

—Այն զահրումարը տուր տեսնենք։

Շիկահերը վերցրեց լուսամտի յատակի վրայից
կարմիր հեղուկով լի սրուակը, մի դդալ լեցրեց, տը-
ւեց նրան։

—Իմ տունը քանդվեց այն օրը, —շարունակեց
ծերունին, գոյնզգոյն թաշկինակով սրբելով թանձը
ընչացքը, —երբ մայրդ մեռաւ։ Տասն ու հինգ տարի
է ես մենակ եմ այս չորս պատերի մէջ։ Ի՞նչ են զա-
ւակները, տանջանք։ Մարդուս բարեկամը նրա կնիկն
է։ «Ի թողեալ զհայր և զմայր իւր՝ երթիցէ զհետ
կոսչ իւրոյ»։ Որդի ունեմ, եկել է հօր սիրու միսի-
թարելու, հա հա հա, փողի պէտք ունէ, եկել է ինձ
կողոպտելու...»

—Հայր, —արտասանեց որդին խեղդված ձայ-

Դովի — մի վիրաւորելք ինձ:

— Խօսում ես, խօսում, — դոչեց ծերունին, աւելի գրգռվելով, — բայ ում գլխին թափեմ սրախ լեզվին: Փահ, կարծում ես, չեմ լսել ևս, ինչպէս չէ, անունս աշխարհի երեսին փառաւորում ես, առում են, դրում ես որա ու նրա վրայ: Մարդիկ հօրեւ են անիծում, շատ լաւ է, ինչ ասեմ, մեռնելուց յետոյ էլ գերեղանս կըքրքրեն: Շնորհակալ եմ քեզանից Աստուած, լաւ որդի տուեցիր ինձ...

Նրա հազը բռնեց: Նա թաշկինակը փնտուեց և, շուտ չքանելով, բարձրաձայն դոռաց, հայհոյեց շիկահեր մարդուն: Մի քիչ անցած, նա հանդարտվեց:

— Այ, այստեղ էր, — շարունակեց նա, — հէնց այս քանդված սենեակում: Հանգուցեալը դրել էր քեզ թևերի վրայ, մտիկ էր անում, ուրախանում: Գու ծըլմըլում էիր խողի ճափ պէս: Մօտեցայ, մտիկ արեցի աջերիդ, սիրտս թրխկաց, հասկացայ: Ասացի. «Հերիքնազ, դու ինձ համար որդի չես ծնել, պատիժ, պատիժ»: Կատարվեց խօսքս: Խեղճ կնիկ, լաւ է, որ կենդանի չես, հըմ, ինչ կուրախանայիր դրան տեսնելով, այս այս այս... գնա, չեմ ուզում, ես որդի շունեմ, կորիր եկած ճանապարհով...

Նա շտապով պառկեց, վերմակը քաշեց գլխին և երեսը դարձրեց պատին: Շիկահերը անդադար հառաջում էր:

XIII

Զընայելով հօր անհիւրընկալ ընդունելութեանը, Քիմաքսեանը մտադրվեց մի առ ժամանակ մնալ հայ-

րենի քաղաքում: Նրա քոյրերը վաղուց կարօտել էին իրանց միակ եղբօրը, պէտք էր զօնէ նրանց թախանձանքը յարգել:

Մարդար աղան, իւր աղջկերանց հետ էլ ստոն էր: Մենակեցութիւնը օրից օր այդ մարդու մէջ աժայրել էր մի անգամ յղացած կասկածը: Հնար չըկար նրան համոզելու, թէ իւր զաւակների սէրը շահախնդրութիւնից չի առաջանում: Նա ինքն երբէք չէր այցելում աղջկերանց և չէր ուզում, որ նրանք էլ իրան այցելեն: Ապրում էր վեց ընդարձակ սենեակներից բաղկացած հայրական տնում, ինչպէս երդուեալ ճգնաւոր: Հնաշէն տան լուսամուտները դէպի փողոց միշտ փակ էին, և ոչ ոք չէր կարող կարծել, թէ այնտեղ ապրում է կենդանի էակ: Նա պահում էր մի ծառայ, որ թէ այգեպան էր, թէ խոհարար և թէ սպասաւոր: Բացի այդ բազմապաշտօն ծառայից, նրա մօտ մուտք ունէր այն շիկահերը, որին Արսէնը տեսաւ: Դա ծերունու հեռաւոր աղդականներից էր — վերին աստիճանի հլու, կամակատար և շողոքորթ մի էակ:

Մարիբէկը — այսպէս էր նրա անունը — կատարում էր Մարդար աղայի կառավարիչ-հաւատարմատարի պաշտօնը: Նրա ձեռքով էին ստացվում գիւղացիներից կալուածների հարկը և քաղաքացիներից խանութների ու տների վարձը: Նա էր վաճառում այդիների բերքերը, հաւաքում ջրաղացների եկամուտը և այլն:

Արսէնը կողմնակի ծանօթացաւ գործերի դրութեանը և տեսաւ, որ հօր ձեռքը հազիւ անցնում է այն եկամտի կէսը, որ պէտք է նրա հաշւով ստացվէր: Մնացեալը ճանապարհին աղի պէս հալվում էր

Սարիբէկի խոնաւ ձեռներում:

Գիւղացիները ազի արցունք էին թափում այդ-մարդու անունը յիշելիս: Երբեմն խմբերով դալիս էին գաղտնի կերպով Արսէնի մօտ և դանդատվում: Երիտասարդը լսում էր նրանց աղերսանքը և վրդովփում: Երբէք նա չէր երեակայել, թէ իւր հայրը անդիտակցարար հարստահարիչի դեր է կատարում:

Նա կամենում էր ամեն բան յայտնել ծերունուն, համոզել նրան որ խիստ հաշիւ պահանջի կառավարչից: Բայց դրա համար հարկաւոր էր, որ առաջ ինքը դրաւէր նրա հաւատարմութիւնը: Ահա ինչու նա տատանվում էր, վախենալով մի դուցէ իւր միջամտութիւնը աւելի վատ հետեւանք ունենայ գիւղացիների համար:

Իսկ ծերունին շարունակում էր նրա հետ վարպել առաջուայ պէս ցուրտ և անհաշտ: Թուում էր, որ ոչինչ չի կարող հօր և որդու մէջ բացված վիճը լեցնել:

Սրդէն նա առողջացել էր, ոտքի էր կանգնել և հետեւում էր անձամբ իւր գործերին: Առաւտից մինչև երեկոյ նա պտտում էր իւր տան առջև ձդված ընդարձակ պարտիզում: Ասկրաբար նա հագնում էր կաշուէ բածկոն մորթեայ աստառով, ձեռին կրում էր երկաթի սուր ծայնով մի ձեռափայտ, ճիշդ այնպիսին, որ գործ են ածում ժամհարները գաւառներում: Այդեպանը հետեւում էր նրան քայլ առ քայլ և համբերութեամբ լսում նրա կոպիտ յանդիմանութիւնները, բարձրածայն գոռոցները և բազմատեսակ օրինգինալ յիշոցները: Երբեմն նա ուսերի վրայ ընդունում էր ծերունու ուժեղ ձեռով տուած փայտեայ հարուածները: Եւ լուում էր, չէր բողոքում, և ում բողոքէր:

Արսէնը հեռուից գիտում էր հօրը և ականջները փակում նրա ծայրայեղ հայհոյանքները չըլսելու համար:

Առաւոտ երեկոյ ներկայանում էր Սարիբէկը: Մարդար աղան, թէյի բաժակը առջել դրած, պատշգամբի վրայ թիկն տուած մեծ աթոռի մէջքին, լսում էր նրա զեկուցումները: Նա Սարիբէկի վրայ ևս գոռում էր ճիշդ այնպէս, ինչպէս այդեպան-սպասաւոր խոհարարի վրայ, նոյն անզուսալ յիշոցներով զարդարելով նրան ոտից մինչև գլուխ, նախահայրերից սկսած մինչև ասլադայ սերունդները: Հլու կառավարիչը մի խօսք անդամ չէր արտասանում, դժկամակութեան մի թոյլ նշան անդամ չէր ցոյց տալիս: Ընդհակառակը նրա երեսին նայողը կըկարծէր, թէ ծերունու հայհոյանքները և գոռոցները նա հաճոյքով է ընդունում, ինչպէս իւր զանցառութիւնների արժանի վարձ:

Ճերջանում էր զեկուցումը, և ծերունին խիստ եղանակով, անընդդիմադրելի ձեռով տալիս էր Սարիբէկին իւր հրամանները: Այս ինչ խանութպանի ժամանակը լրանում է, պէտք է վարձը աւելացնել. այն միւսը վարձը ուշ է բերում, պէտք է գատաստանքաշել. ցորենը չըպիտի ծախել, անձրե չըկայ, ձմեռը հացի գինը կըբարձրանայ, և այլն և այլն:

Եւ երբ Սարիբէկը, «ծառայ եմ հրամանքիդ» առնելով, խոնարհ գլուխ էր տալիս և յետ ու յետ գընում, ծերունին նրա ետեկից մրժմրթում էր: «Եան ծնունդ ես, հացի տէր կըլինիս, իմ որդու պէս փիսոսփայ չեսա»:

Որդին լսում էր և ոչինչ չէր ասում: Նա միայն

մտածում էր, ինչպէս անէ, որ Սարիբեկի զեղծութները պարզի:

Մի անգամ այլ ես չըկարողացաւ զսպել իրան:
—Հայր (երբէք նա «հայրիկ» չէր ասում), Սարիբեկին ի՞նչքան ռոճիկ էք վճարում, —հարցրեց նա:

—Ե՞ս ես ուզում իմանալ, —արտասանեց հայրը, խոշոր յօնքերի տակից բարկացոտ աչքերը բարձրացնելով նրա վրայ:

—Այն, շատ հետաքրքրական է:
—Տարեկան 130 ռուբլի և մի սոմար ցորեն,
—Տարեկան հարիւր երեսուն րուբլի...
—Եւ մի սոմար ցորեն, ասացի քեզ, —շեշտեց ծերունին:

—Նա կարողանում է այդ չնչին ռոճիկով ապրել:
Ծերունին զարմացած նայեց որդու երեսին: Պարզ էր, որ նրա համար աւելի յիմար հարց չէր կարող լինել:

—Ինչու չի կարող, խօմ շահզադէ չէ, ապրում էլ է ու հինգ երեսայ ու կնիկ էլ է պահում:

—Հինգ երեսայ. այդ անկարելի է:
—Երբ որ Մարգար աղա Դիմաքսունովը ասում է կարելի է—հրամանքդ թող չըզարմանայ:

Որդին մի քանի փայրկեան լոեց, յետոյ դարձեալ փստահացաւ շարունակել իւր հարցերը.

—Այդ Սարիբեկը մեր ի՞նչն է:
—Մօրդ եղբօր կնկայ եղբօր տղան:
—Նա ձեզ ուզիղ հաշիւ տալիս է:
—Ասելու ի՞նչ է:
—Ասելս այն է, հայր, որ այդ մարդը աչքիս մաքուր չէ երեսում:

Ծերունին մի ձեռը կռթնեց կողքին, նայեց հեղական որդու փաքրիկ հասակին կօշիկների ծայրից ակած մինչև ճակատը և, քնթի տակ ծիծաղելով, երեսը յետ գարձրեց:

—Այն, այդ մարդը ինձ կասկածելի է թւում, —շարունակեց որդին, —դիւզացիներն էլ շատ են գանդատվում:

—Դիւզացիները շամատ են գանդատվում, դիւզացինեռը...

Հեղնելով որդու բառերը, ծերունին աթոռը ուզեց և, երկու ձեռները յենլով ձեռափայտի կոթին, աւելացրեց.

—Չեր հրամանքը ճանաչնում է այդ աւանակներին:

—Չըդիտեմ, միայն այսքանն եմ իմանում, որ Սարիբեկը ձեր անունը արատաւորում է:

—Լեզուդ փորդ քաշիր, հայվարա, —գոռաց յամառ ծերունին, ձեռափայտը այնպէս ուժգին զարկելով, որ նրա սուր ծայրը մի մատնաշափ անցաւ յատակի մէջ,—իմ անունը աշխարհիս երեսին մէկ մարդէ խայտառակ անում, դու, դու, իմ հարազատ որդի: Սարիբեկը ազնիւ մարդ է, նա իմ հրամանով քնում է, իմ հրամանով զարթնում, իմ հրամանով ուսում, իմ հրամանով խօսում...

Նա մի փոքր լոեց, եղանակը փոխեց և, ձայնին ծաղրական տօն տալով, աւելացրեց.

—Ամօթ չըլինի հարցնելը, հրամանքդ ի՞նչու է խառնվում պառաւ Մարգարի գործերին: Նա հին մարդ է, դիւզացի է, անուս, դու խօմ փիլիսոփայ ես, քինթ ու պառունգիցդ իմաստութիւն է թափվում:

—Ես ինձ համար չեմ հոգում, այլ ձեր անուան և ձեր շահերի համար:

Գնա բանիդ, չեմ ուզում... հարայ—բիդադ, ջանըմ, չեմ ուզում էլի, խօմ դլխիս քեզ սուդիա չըսարքեցին, փիէ...

Նա վերկացաւ տեղից և բարկացած մտաւ իւր սենեակը, դռները ուժին դարկելով:

Այնուհետեւ Արսէնը այլ ևս չէր խօսում նրա հետ գործերի մասին և առհասարակ հօր ու որդու մէջ մի առանձին խօսակցութիւն տեղի չէր ունենում: Սակայն մի օր նա վերջին անգամ փորձեց իմանալ, արդեօք հայրը խօսապէս ո՞րքան եկամուտ է ստանում իւր կալուածներից: Ծերունին նոյն անփոփոխ կոպտութեամբ և հակիրճ պատասխանեց.

«Ես դեռ չեմ մեռնելու, տանջվիր»:

Հարկաւ, այլ ևս ամեն մի նոր փորձ պէտք է անաշող անցնէր: Մնում էր բոլորովին լուել, և Արսէնը բոլորովին լուեց: Այժմ նրա համար ձանձրալի էր ապրել սառնասիրա հօր ցուրտ, անհիւրընկալ տանը: Նա ձգտում էր հեռանալ հայրական յարկի տակից, ուր մի ժամանակ այնքան փայտիվել ու շոյշոյվել էր սիրող մօր ձեռքում: Բարի կին, երբէք դու քո որդուն չըփիրաւորեցիր մի դառն խօսքով: Քո մայրական զգայուն սիրող մորմոքվում էր, երբ տեսնում էիր, թէ ինչպէս ծաղրվում է քո միակ արու զաւակը նոյն իսկ իւր հարազատ հօրից: Դժբաղդ էիր դու այդ մարդու հետ և քո հրեշտակային լուռ ու համբերատար քնաւորութիւնը միայն դիմանում էր այդ ինքնակամի կենակցութեանը: Քու անմռունչ հանդուրժում էիր նրա յամառ կամքին և միայն քո երկնաւ-

յին անդուդական հեղութիւնով կարողանում էիր յաղթել մարմարեայ սիրտը: Ահա ինչու հարազատ զաւակների համար սառած մարդու ժանդ հոգին ջերմութիւն է զգում քեզ յիշելիս, քո ուրուականը մըտաբերելիս: Բայց արդեօք այդ անյազթելի կամքի ցրտութիւնը չէր, որ այնքան վաղ քեզ իջեցրեց գերեզման...

Արսէնը տիսրում էր անգործութեան մէջ Քոյրերի սէրը միայն փարատում էր նրա թախիծը: Եւ օրւայ մեծ մասը նա նրանց մօտ էր անցկացնում, շատ անգամ էլ այնտեղ էր ճաշում և ընթրում: Քաղաքում մեծ հետաքրքրութիւն էր շարժել նրա գալը: Հասարակութիւնը խօսում էր ժառանգութեան մասին ամենքը նախանձում էին նրան: Մարգար աղայի հարստութեան մասին գրեթէ առասպելական լուրեր էին պատում: Պատմում էին, թէ նա իւր տան ներքնայարկում դիզած ունէ պապերի հաւաքած ոսկիները խաների ժամանակից: Ոմանք պնդում էին մինչեւ անգամ, թէ ծերունին գիշերները այդ ոսկիների տոպարակների վրայ է քնում, չըխնայելով իւր ոսկորները: Իսկ տեղական երիտասարդները, մանաւանդ ուսուցիչները, աւելի հետաքրքրված էին Արսէնի անձնաւորութիւնով: Շատերը գալիս էին նրա հետ ծանօթանալու: Նա ընդունում էր նրանց իւր քոյրերի տանը, չըկամենալով զայրացնել հօրը, որ թշնամի էր ամեն մի այցելութեան, ևս առաւել երիտասարդների: Նրա քարոզած գաղափարները կազմել էին մի որոշ բանակ: Ունէր նաև հակառակորդներ, որոնք սակայն չին մօտենում նրան: Կային և այնպիսիները, որ պարձենում էին իրանց հայրենակցի անունով:

Դա մի ախորժելի և անսպասելի նորութիւնն էր Դիմաքսեանի համար։ Նրա կեանքի մէջ մտաւ մի տեսակ թարմ հոսանք։ Նրա տաղակութիւնը անցաւ, սիրոը զուարթացաւ և լցվեց նոր եռանդով։ Աւրեմն նրա խօսքը իզուր չէ անցնում, նրա ցանած սերմերը աւագոտ հողի վրայ չեն ընկնում։ Այստեղ, ընկերների, գաղափարակիցների շրջանում նրան հալածում են, ծաղրում, վիրաւորում։ Այստեղ յարգում են, պատռում և ուշագիր են նրա ամեն մի խօսքին։

Ինչու ուրեմն յուսահատվել։ Թող հալածեն, որքան կամենում են, թող թշնամանան, որքան կարող են։ Մաղի չափ նա չի շեղվիլ իւր բռնած ընթացքից։ Նա հաւատարիմ կըմնայ իւր արմատական գաղափարին—քարողել ճշմարտութիւնը ինչ բանի մասին էլ լինի, ուր և լինի, աներկմիտ, անշեղ, աներկիւդ, և մնալ անդրդվելի, ինչպէս սեպացած ժայռծովի յարատե ալիքների առաջ։ Ժողովուրդը կարօտէ անկեղծ քարողի, բաւական է, որքան նա խարխափեց տղիտութեան խաւարի մէջ։

Իսկ այդ կամակոր ծերունին թող մնայ նոյնպէս անյողգողդ իւր քարացած աշխարհում։ Կենդանին մեռնելների հետ գործ չունէ։ Թող յամառը, եթէ կամենում է, բոլորովին մինչեւ անդամ զրկէ նրան ժառանգութիւնից։ Նա կարող է առանց փողի, առանց հասարակական դիրքի, քաղցած փորով, դատարկ դըրսպանով էլ դորձել և օդաւաէտ լինել։

«Զէ որ վեց տարի ուսանող եմ եղել, դարձեալ կապրեմ ինչպէս ուսանող»։

Մի քանի անդամ նրան հրաւիրեցին այս ու այնտեղ երիտասարդների ժողովներին։ Նա հանդիպեց մի

քանի առողջամիտ անձանց, խորհուրդ տուեց նրանց կազմել մի շրջան, որի նպատակը լինէր հասարակ ժողովրդի մէջ տարածել գրադիտութիւն, կարդալու սէր և ժամանակակից գաղափարներ։

Առաջարկութիւնը ընդունվեց հրճուանքով, կազմվեց մի խումբ գործը գլուխ բերելու համար։ Եղան և՛ հակառակորդներ, մահաւանդ վապեան անունով մէկը։ Դա չոր կազմուածքով, սե, երկար մազերով, բարակ ձայնով, կապոյտ ակնոցներով մի հակակըլի մարդ էր, որ Դիմաքսեանի զզուանքն էր յարուցանում։ Յետոյ նա իմացաւ, որ այդ վապեանը առաջ ուսուցիչ է եղել, իսկ այժմ խանութպան է և դիւզացիներին հարստահարում է։ Նա բացարձակ յայտնեց, թէ պէտք է այդպիսիներին հալածել, և ինըը զզուանքով երես դարձրեց նրանից։

Շուտով նա գարձեալ սկսեց ձանձրանալ և մըտադրվեց վերադառնալ թիֆլիդ։ Գաւառական կեանքը թւում էր նրան միակերպ, աշղտկալի։ Այստեղ նրա խօսքը ընդունում էին անպայման, առանց քըննելու և հակածառելու։ Իսկ նա արդէն կարուել էր հակառակորդների հետ մրցելուն։ Նրա հոգին զդում էր խոշնդուների հետ անինդհատ մաքառելու պահանջ։ Հարսւածել, հարուած ստանալ և այնպէս յաղթանակ վաստակել—ահա նրա ցանկացածը, նրա սըրտի և մտքի կերակուրը։ Առանց կոռւփ նա զդում էր երան առանց թեկերի։ Նրա սիրաը կրում էր էլեկտրական զօրութեան միայն մի տարրը իւր մէջ։ Հարկաւոր էր երկլուրդը, արտաքրուստ եկած հակառակորդտարրը, որ, շփվելով միմեանց, նրա հոգու մէջ առաջացնէին լոյս և ջերմութիւն։

Նա ուղերդվեց Թիֆլիզ։ Հայրը շրտուեց նրան իւր օրհնանքը, որովհետև նա շրխոնարհվեց նրա առջև, չըթեքեց իւր գլուխը կամակոր ծնողի դիմաց։ Իսկ ծերունին այդ սպասում էր նրանից։ Նա պատրաստ էր ներել որդուն, եթէ միայն վերջինը խոստովանվէր, որ սխալված է, և միանդամ ընդ միշտ ընդունէր նրա հեղինակութիւնը։ Նա յուսով էր, որ վերը այդպէս էլ կըլինի։ Բայց չարդարացաւ այդ յոյսը։ Հայրը բաժանվեց որդուց այնքան սառնասիրտ, որքան սառնասիրտ և անբարեհամբոյր ընդունել էր նրան վեց ու կէս տարի շրտեանելուց յետոյ։

XIV

Ամառուայ ամենաշոք օրերն էին, երբ Դիմաքսեանը հասաւ Թիֆլիզ։ Նախ և առաջ նա ուղեց տեսնել Մսերեանին, որին կարօտել էր աւելի, քան մի ուրիշ ընկերոջ։

Իդէալիստը իւր փոքրիկ սենեակի բաց լուսամուտի առջև գիշերային շապիկով նստած թէյ էր խըմում, երբ Դիմաքսեանը ներս մտաւ։ Նա ուրիշ թռաւ և ուրախ բացադանչութիւնով իւր խոշոր թեսերի մէջ առաւ ընկերոջը։

—Իսկ ես առանց քեզ տխուր էի։ Նստիր ու պատմիր։ Ծերունին կենդանի է, առողջացաւ։ Փառք Աստուծոյ։ Բայց ինչու այդպէս նիհարել ես, երեի, հայրական հացը քեզ չէ դալիս։ Ասա, եղբայր, ասա, ինչ է անում մեր սիրելի դաւառը, չէ որ մեր յոյժունը նրա վրայ են։ Ոչ, ոչ, նախ և առաջ օձի մասին։ Ի՞նչ է անում, հանդիսատ էր։

—Հանդիսատ էր։

—Եւ ուրախ էիր։

—Ո՞չ։

—Ո՞չ։

—Ինձ թւում է այդ օձը որքան էլ տանչէ, դարձեալ ինձ կենդանութիւն տուողը նա է։ Մի ամսից աւելի է նա չի կծում իմ սիրաը, և ես, կարծես, թմրած եմ։

—Կըգայ ժամանակ, դու հակառակը կասես։ Բայց պատմիր, պատմիր։

Դիմաքսեանը հաղորդեց իւր տպաւորութիւնները։ Մսերեանը լսում էր և մերթ ոգեսրվում, մերթ ախրում, մերթ ուրախանում, նայելով, թէ ընկերը ինչ է պատմում։

—Ուրեմն այնտեղ մարդիկ շատ էլ մեռած չեն, ինչպէս կարծում էինք, —դոշեց նա յափշտակվելով, —ուրեմն դարերով թմրած մարմինը կենդանութեան նշաններ է ցոյց տալիս։ Տեսնում ես, ասում էի, որ մի աշխատանք իզուր չէ անցնում։ Գործիր, եղբայր, դործիր որքան եռանդ և ոյժ ունես։ Ինձ մի նայիլ, ես ուրիշ եմ, իմ աշխարհը ահա սրանց մէջ է։

Նա ցոյց տուեց սենեակի անկիւնում դրած պահարանը, որի տախտակեայ յակերը ոքնում էին մեծահատոր գրքերի ծանրութեան տակ։

Նա պատմեց, որ Դիմաքսեանը գնալուց յետոյ ինքը տնից շատ չէ դուրս եկել։ Տեսնում է, որ մարդիկ նրան չեն հասկանում, շատերը մինչեւ անդամ ծաղրում են նրան, համարելով դատարկ ֆրազեօր։ Է՛հ երբ և է նա ասել է, թէ օգտակար մարդ է։ Միայն չի կարող, չի կարող հաշովել նիւթապաշտու-

թեան հետ։ Իսկ ով չէ նիւթապաշտ։ Ո՞վ կարող է խելօք համարել մի մարդու, որ իրան բաղդաւոր է զգում, երբ ունէ գրքեր, ծխախոտ և մի բաժակ թէյ։ Բայց միթէ գրքերը վատ ընկերներ են։ Ոչ, ոչ, աւելի հաւատարիմ, աւելի ուրախալի հասարակութիւն գժուար է դանել։ Լինել միշտ բարձր խելքերի, հանճարների, հոգեբան-փիլիսոփաների, սրամիտ սրտագէտների ընկերութեան մէջ, միթէ այդ երջան-կութիւն չէ։ Իսկ Արսէնը չի կարող բաւականանալ այդ հասարակութիւնով։ Նա Մսերեան չէ և չըպիտի լինի։ Նա գործի մարդ է, ծնված է մի տգէտ ժողովրդի խաւար միտքը լուսաւորելու, ծնված է կռվելու, յաղթելու և յաղթվելու համար։ Ի՞ող գնայ իւր ընտրած ճանապարհով, տեսնում է որքան արձագանք է գտնում իւր խօսքը մարդկանց սրտում։

Օ՞ն առաջ, քաջ եղիր, —աւարտեց Մսերեանը ուրախ տօնով, —դու մտքի զինուոր ես, ես գրքերի կենդանի պահարան։

Թէյ խմելուց յետոյ նրանք գուրս եկան զրօննելու։ Մսերեանը տեղեկութիւններ հազորդեց ընկերների մասին։ Բժիշկ Սալամբէկեանը մելամաղձոտ դէմքով ման է գալիս, միշտ կրկնելով, թէ աշխարհը դատարկ ըան է, վէքիլեանը և Բարաթեանը մտադիր են քաղաքային Գումայի առաջին ընարութիւններին իրանց քուէտուվիլ դնել և այժմեանից ձայներ են գրաւում։ Պեօար Սոլոմոնիչ Բախտամովը նրանց համար աշխատում է։

—Եւ կընտրվեն, կըտեսնես, այդ մարդկանց աւմեն ըան յաջողվում է։

Յանկարծ Մսերեանը, ճակատին խփելով, դոչեց։

—Այ յիմար յիշողութիւն,
—ի՞նչ կայ։
—Ամենագլխաւորը մոռացայ ասել։ Քեզ ուղում
են ներսիսեան գողոցի տեսուչ նշանակել։

—Ի՞նձ։

—Այս, քեզ։

—Այդ անհաւատալի է։

—Իսկ ես մեր լրադիրների լեզուով կասեմ «ըստոյդ աղբիւրներից տեղեկացանք», որ...

—Որ հոգաբարձութիւնը Արսէն Դիմաքսեանին ատելով ատում է։

—Մխարվում ես, քո գնալուց յետոյ քամին ուշը կողմից է փչում։

Նա պատմեց, թէ դպրոցի շինութեան խնդիրը կռուածազիկ է գարձել։ Աւելի առաջադէմները պահանջում են, որ դպրոցը փոխվի մի ուրիշ տօն, իսկ հնամոնները վախճնում են աւելորդ ծախսից։ Կոփւը այստեղից է սկսվել, բայց նա ուրիշ պատճառներ ուշնի։ Մի առեւտրական-հոգաբարձուի մուրհակը չեն զեղել բանկում, նա թշնամացել է բանկիր-հոգաբարձուի հետ։ Մի փաստաբան-հոգաբարձու դատարանում պաշտպանում է մի կալուածատէր-հոգաբարձուի հակառակորդին, նրանք թշնամացել են։

Դպրոցը դարձել է հասարակական բազնիք, մարդիկ իրանց կեղաստ շորերը այնտեղ են լուանում։ Բանից գուրս է գալիս, որ այդ տեսուչ համքարեանը եղուիտ է։ Դպրոցի շինութեան խնդիրը ինքը չի զարթեցրել, աշխատում է գործը քանդել։ Նրա դէմկաղմիւ է մի կառակցութիւն, որ ուղում է հեռացնել նրան դպրոցից։

— Եատ ուրախ եմ, նա ինչ մանկավարժ է, որ վաշխառութիւնով է պարապվում:

— Համբարեանը, միթէ, — հարցրեց Դիմաքսեանը դարձացած:

— Այս, դու չըդիտէիր, երեակայիր, քսանուհինդ հազար րուրլի գրամագլուխ ունի, տասնուհինդ տուկոսով տալիս է սրան ու նրան, նոյն խակ ուսուցիչներին: Այս էլ «ստոյդ աղբիւրներից տեղեկացանք»:

Երկու օր անցած Դիմաքսեանը հրաւիրվեց այն հոգաբարձուի մօտ, որ սկզբում աշխատել էր նրա համար դպրոցում տեղ բանալ: Նա յայտնեց հոգաբարձութեան նախընթաց երեկոյ կայացրած վճիռը և աւելացրեց, թէ խոկապէս ինքն է Համբարեանին «վըռնդելու» սկզբնապատճառը:

— Եղբայր, քանի տարի էր չէինք կարողանում այդ մարդուց ազատվել: Սիւլիւկի պէս կպել էր դպրոցին ու ծծում էր, էլ ինչ ախտ ասես մտցրել է այնտեղ, ինչ ինարիգներ ասես, հնարում էր: Ճշմարիտն ասեմ, եթէ մենք մի քիչ ձեղ հետ վատ էինք, պատճառը նա էր, հազար ու մի տեսակ բաներ էր պատճում: Ի՞նչ և է, յուսով եմ, որ մենք համերաշխ կըդործենք. այնպէս չէ:

— Կաշխատեմ միշտ դպրոցի շահերին ծառայել: Նա մի պայման միայն դրեց. որ հոգաբարձութիւնը երբէք չըխառնվի դպրոցի բարոյական և ուսումնական գործերի մէջ:

— Արէք ինչոր կամենում էր, բայց զգոյշ, որ շատ էլ չըդրդուէք մեր հակառակորդներին:

Ամբողջ օգոստոս ամիսը Դիմաքսեանը տենդային գործունէութեան մէջ էր: Ամեն օր գնում էր դպրոց,

չընայելով, որ այնտեղ դեռ գործ չունէր: Նա դիտում էր բակը, սենեակները, խոհանոցը, հարց ու փորձ էր անում գիշերօթիկների գրութեան մասին, քննում էր նրանց կերակուրները և այլն:

Նա լսեց գանդատներ վերակացուների դէմ: Նա տեսաւ, որ կերակուրները վատ են պատրաստվում, մննդաբար չեն: Գիշերօթիկները թոյլ են, հիւանդոտ, դեղնած, ամենքի մէջ նկատվում է արեան սակաւութիւն:

Այս բոլորը տեսնելով, նա կազմեց արտաքին փոփոխութիւնների մի ցուցակ, որ պէտք է շուտով ներկայացնէր հոգաբարձութեանը:

Հասաւ սեպտեմբերը: Դասերը սկսվեցին: Ուսուցչական խումբը նրան չնորհաւորեց: Ումանց կողմից նա տեսաւ անկեղծ ուրախութիւն, իսկ շատերի սիրալիր խօսքերի և բարեկամական ցոյցերի տակ նկատեց չըկամութիւն: Նա դիտէր, որ այլ կերպ չէր կարող լինել, ամենքին սիրելի լինել, կընշանակէ ամենքի քըմքին հաճոյանալ: Նրա անշեղ բնաւորութիւնը չէր սիրում երկդիմի վարմունքը: Նա չըդիտէր արտաքուստ ժպտալ, ներգուստ հայհոյել: Ահա ինչու չէր կարողանում մոռանալ Վէքիլեանի, այդ կարծեցեալ բարեկամի, թշնամական վարմունքը: Ահա ինչու քանի դընում այնքան նրա սրառում ատելութիւն էր աւելանում դէպի Բարաթեանը: Այդ մարդը նրան դեռ բացարձակ թշնամութիւն չէր անում, բայց թէ բարեկամ չէր — այդ էլ պարզ էր նրա համար:

Մի քանի անգամ Դիմաքսեանը պատահեց փոփոցում թէ մէկին և թէ միւսին: Վէքիլեանի հետ նա չէր խօսում, դադարել էր մինչև անգամ նրան բա-

րեելուց: Իսկ Բարաթեանը մօտեցաւ նրան, ձեռը սեղմեց և շնորհաւորեց, դոչելով:

—Եատ ուրախ եմ, շատ ուրախ եմ:

—Ենորհակալ եմ: Իսկ դու, ասում են, մտադիր ես քաղաքային իրաւասու ընտրվել:

—Ե՞ս: Ոչ, բարեկամ, ժամանակ չունեմ: Ես զբաղված եմ ամուսնութեանս հոգսերով. չէ որ սեպտեմբերին պսակվում եմ Գայիանէի հետ:

Եւ միթէ Դիմաքսեանը մոռացել էր չարաբաստիկ հանգամանքը և միթէ նո չէր զգում, որ իւր առջե կանգնած է այն մարդը, որ անհուն վիշտ էր պատճառել նրան թէ կամայ թէ ակամայ: Ինչու ուրբեմն Բարաթեանը կրկին մատ է խփում նրա սրտի խոցին: Այս, անշուշտ նրա համար, որ զգալ տայ նրան իւր գերազանցութիւնը, իւր տարած յաղթութիւնը:

—Յուսով եմ, որ հարսանիքիս հրաւէրը ստանալով, կըբարեհաճես ներկայանալ ինչպէս ընկերութեկամ:

Այդ արդէն չափազանցութիւն էր: Դիմաքսեանը ապշած նայեց նրա երեսին: Նա ոչինչ չասաց, և ինչ կարող էր ասել: Օձը արդէն զարթնել էր և պաշարած թոյնը տարածում էր նրա ամբողջ մարմնի մէջ:

Առանց մի բառ արտասանելու, առանց մինչեւ անդամ ձեռ տալու, նա դունատված երեսը շուռ տուեց և հեռացաւ:

Բարաթեանը չարախնդութեամբ նայեց նրա եւ ակից և մաքում ասաց. «Դու ինձ պատերազմ ես յայտնում, լաւ, տեսնենք ով կըտանի յաղթութիւնը...»

Եւ թոյլ շուացնելով, հանգարտ ու հպարտ շարունակեց իւր ճանապարհը:

Պսակադրութեան պայմանաւորված ժամանակը մօտենում էր, Բարաթեանի անհանդստութիւնը աւելանում: Օժիտի խնդիրը գեռ չէր պարզվել: Իսկ Պետր Սոլոմոնիչը հանգստանում էր սեպհական ամարանցում: Օրուայ մեծ մասը նա, մի երկար ճիւղաւոր փայտ ձեռին, զբօննում էր իւր բնակարանի առջե ձգված հասարակական պարտիզում: Նա իրանից ձևացնում էր քաղաքական գործերից յոգնած մի եւրոպական բուրժուա, որ նոր ոյժեր է ժողովում հայրենիքին նոր ծառայութիւններ անելու:

Հարսանիքի հոգսերը նա լիովին ձգել էր իւր կնոջ և քրոջ աղջկայ վրայ: Եարաթը մի անգամ տիկինը և օրիորդը գալիս էին քաղաք հագուստներ պատուիրելու:

Բարաթեանը գիտէր նրանց դալու ժամանակը: Որոշեալ ժամին նա միշտ երկաթուղու կայարանումն էր լինում նրանց դիմաւորելու համար: Գայիանէն ուղում էր ամեն բան նրա ճաշակով գնել և կարել տալ. ուստի ուր գնում էր, նրան էլ հետը տանում էր: Հարսանիքի պատրաստութիւնները օրիորդին կլանել էին լիովին: Ամբողջ օրը նա չափում էր, կտրում, փորձում և անհամբեր սպասում երջանիկ օրին: Եւ նա ժամանակ չունէր քննելու, թէ ինչու տիկին Բախտամեանը այնքան հաշտ է իւր հետ, որ, կարծես, նախկին նախանձի նշոյլն անդամ չէր մնացել:

Մի օր Բարաթեանը, վերջապէս, վճռեց կողմնակի կերպով խօսք բաց անել Գայիանէի հետ օժիտի

Ժասին։ Օրիորդը այնքան համոզված էր նրա սիրոյն, որ ինքը առ այժմ աւելորդ էր համարում փողի մասին խօսելը։ Արժէր միթէ սիրոյ բանաստեղծական հրապոյրը համեմել նիւթականով և փոխադարձ դգացման երկնային հմայքը պրօզա դարձնել։ Փոխադարձ, այն, որովհետեւ Բարաթեանն էլ սիրում էր նրան և սիրում էր անկեղծ։ Միայն նրա դգացումը այնքան կուրացուցիչ չէր, որ միանդամայն մօռացնել տար ապագայի խնդիրը։ Չէ որ կանցնի բանաստեղծականը, և կեանքի իրականութիւնը մի օր կըմերկանայ ապագայ ամուսինների առջե իւր բոլոր անողոք պահանջներով։

— Ուրեմն դու և Ովաաննան ունեք տարեկան հինգ հազար րուրլի եկամուտ, — կրկնել տուեց Բարաթեանը Գայիանեին, — կընշանակէ քո մասը տարեկան երկու հինգ հարբիւր է։

— Այն, ինչ կայ, ինչո՞ւ լոեցիր։

— Պետք Սոլոմոնիչը ասում էր, թէ քո ծնողները ոչինչ շնութողել։

— Ի՞նչպէս, դու ուրեմն նրա հետ խօսել ես այդ մասին։

— Ես չէի հետաքրքրվում, նա ինքը ասաց հէնց այն օրը, երբ ես գնացել էի ձեռդ խնդրելու։

— Նա չէր կարող այդպէս ասել, այդ անկարելի է։

— Հաւատացնում եմ, որ ասաց։

Գայիանէն լոեց։ Այդ լուրը նրա համար դգամի և տխուր լուր էր, բայց աւելի անտանելի էր, որ Բարաթեանը խօսում էր օժիտի մասին։

— Լաւ, — ասաց նա, — ես նրանից բացատրութիւն կըխնդրեմ։

— Այն, սիրելիս, խնդրիր։ Դու ուրիշ բան չկարծես, ես փողասէր չեմ, բայց եթէ կայ, ինչո՞ւ ուրիշների մօտ մնայ, այնպէս չէ։

— Ի հարկէ...

— Վերջապէս, տարեկան երկու ու կէս հազարը մեղ համար մեծ բան է, դու կարող ես շիկով ապրել։

— Ինձ շիկ հարկաւոր չէ, բաւական է, որ դու ինձ միշտ սիրես։

— Այս, սիրելիս, ի հարկէ, պէտք է միշտ սիրեմ, բայց Պետք Սոլոմոնիչի հետ խօսիր։ Իմ սէրը գէպի քեզ անհուն է, միթէ դու չըդիտես։ Այն, շուտով խօսիր, հէնց այսօր կամ վաղը։ Միւս անգամ դալիս ինձ համար դրական պատասխան բեր։ Միայն իմ անունը չըյիշես, այսինքն չասես, թէ ես եմ քեզ սովորեցրել կամ ինձ հետ այդ մասին խօսել ես։ Այս սիրելիս, երբ պէտք է հասնի երջանիկ օրը...

Երկու շաբաթ էր մնում հարսանիքին, երբ Գայիանէն, վերջապէս, յարմար ժամանակ գտաւ իւր քեռիի հետ խօսելու։ Պետք Սոլոմոնիչը սկզբում անորոշ պատասխաններ էր տալիս։ Բայց երբ տեսաւ օրիորդի թախանձանքը, հարցրեց։

— Փեսացնուդ է սովորեցրել այդպէս համարձակ խօսել։

— Նա օժիտի մասին մի խօսք անդամ չէ ասել, նա ինձ այնքան սիրում է։

— Միրնում է։

— Ինչ էք ուղում ասել, քեռի։

— Ուղում եմ հաստատ իմանալ, նա քեզ սիրնում է։

— Այն, շատ։

— Այնքան, որ եթէ դու աղքատ լինես, էլի քե-

գանից չի հրաժարվիլ:

Պեօտր Սոլոմոնիչը մի զննողական հայեացք ձը-
գեց նրա վրայ, թետոյ բացատրեց, թէ Գայիանէն աղ-
քատ չէ, նրա հօրից մնացել են մի շարք խանութներ:
Բայց նա փորձում էր թէ Բարաթեանին և թէ Գա-
յիանէին: Իսկ այժմ թող Գայիանէին յայտնի լինի,
որ նա ունէ տարեկան 3150 րուբլի զուտ եկամուտ:
Երբ որ ուղենայ, կարող է կալուածները իւր անու-
նով հաստատել տալ: Եւ Պեօտր Սոլոմոնիչը Գայիա-
նէին խորհուրդ էր տալիս իւր անունով հաստատել և
ոչ ամուսնու:

—Այդ միենոյնն է, քեռի, —ասաց օրիորդը սիր-
ալ չնորհակալութեան զգացումներով լի դէպի աղ-
նիւ աղգականը:

—Ի հարկէ, միենոյնն է, բայց դու լսիր փորձ-
ված քեռուրդ խորհուրդը: Բացի դրանից, բանկում ու-
նես եօթ հաղար բուբլի զուտ փող, այդ էլ կարող եռ
հէնց այսօր ստանալ: Հայրդ մի քանի պարտքեր էր
թողել, բոլորը վճարած են քո եկամտից, այդ եօթ
հաղարը մնացորդն է:

—Մը թէ, ես այդ չըդիտէի, —դոչեց Գայիանէն
ոգեսրված:

— Ունիս, ունիս, որդի, ես զրկող աղգականնե-
րից չեմ. փառք Աստուծոյ, ինքս այնքան ունեմ, որ
որդոց որդի հերիք է իմ երեխաններին:

Հէնց միւս օրը Գայիանէն շտապեց քաղաք և ու-
րախալի լուրը հաղորդեց Բարաթեանին:

—Երեակայիր, քեռին քեզ և ինձ փորձելու հա-
մար էր թագյուել իմ ունեցածի մասին, —դոչեց նա
զուարթ ձայնով և պատմեց: Պեօտր Սոլոմոնիչի ասածը:

Բարաթեանը մի փոքր շփոթվեց, ամաչելով իւր
վարմունքից: Նա զգաց իւր փոքրոգութիւնը և շտա-
պեց մի կերպ սխալը ուղղել:

—Իսկ դու էլ երեակայիր, որ ես էլ քեզ էի
փորձում: Օժիտի մասին խօսելով, կամենում էի իմա-
նալ, արդեօք կարծիքդ կըփոխես իմ մասին: Այժմ
տեսնում եմ, որ դու հաւատում ես իմ անկեղծ սիր-
ոյն, ուրեմն երջանիկ ենք...

Տաս օր անցած կատարվեց հարսանիքը, մի փա-
ռաւոր հարսանիք Պեօտր Սոլոմոնիչի չնորհով: Հրա-
ւիրված էին թեմական առաջնորդը, նահանդապետը,
գեներալներ, հիւպատոսներ, քաղաքագլուխը բոլոր
առաջնակարդ իրաւասուների հետ: Վերջապէս, երե-
ւան եկաւ այդ Ամբակում Աֆանասիեվիչ կոչված իւ-
րաւասուն, որի ասածներից Պեօտր Սոլոմոնիչը միշտ
ցիտատներ էր բերում: Դա տեղական յայտնի տու-
զերից մէկն էր, յայտնի, բացի իւր գերբից, երեք ար-
շին շրջապատ ունեցող փորով և ձմերուկի չափ երե-
սով: Բարաթեանը իւր կողմից հրաւիրել էր ընկերու-
ներ իցմիայն մի քանիսին: Անգործ Մսերեանը մոռաց-
վել էր, խաչեղբայրը Վերիկեանն էր:

Դիմաքսեանը հրաւիրատոմուր պատռեց և ձգեց
մի կողմ: Այդ հրաւէրը նա համարում էր մի նոր ծաղր
և վիրաւորանը Բարաթեանի կողմից: Նոր պաշտօնը
նրան գրաւել էր բոլորովին: Օգոստոսի ընթացքում
ցուցակագրած թերութիւնները նա ասպարէզ էր հա-
նել: Կողմակայից հոգաբարձուները, հակառակ դիմա-
քրող կուսակցութեան, վճռեցին կատարել նրա պա-
հանջները: Իսկ ինտրիգները շարունակվում էին, մա-
նաւանդ ուսուցիչների մէջ: Գերմանական մանկավարժ

ինիաթեանը, այդ դեղնագոյն աչքերով և սառն դէմ-քով երիտասարդը, վիրաւորվել էր, որ տեսչական պաշտօնը իրան չէին յանձնել։ Օգնութեան կանչելով իւր մանկավարժական պաշարը, նա կատաղի կերպով բողոքում էր Դիմաքսեանի դէմ։ Նրա կարծիքով, նոր տեսուչը ոչինչ և ոչինչ չէր հասկանում, որովհետեւ մանկավարժութեան մէջ մասնագէտ չէր։ Յանուն չեր-բերտ-Ցիլեր-Պեստալոցիի ուրուականների նա պար-զել էր իւր դրօշակը մի լրագրում և անստորագիր յօդուածներով հարուածում էր Դիմաքսեանի սիստե-մը։ Իսկ Դիմաքսեանը ընդունում էր այդ յարձակում-ները։ Ծծում էր նրանց թոյնը իւր սրտի մէջ և յա-ճախ իւր մենութեան մէջ վրդովվում, որովհետեւ նրա ուղղութիւնը բացատրվում էր սխալ, վայր ի վերոյ, անբարեխիղ կերպով։ Հարկաւ, նա բոլորին պատաս-խանում էր։ Բայց երբեմն հակառակորդները այնպի-սի վտանգաւոր ակնարկութիւններ էին անում, որոնց դէմ նա գժուարանում էր պատասխանել։ Դա վերա-բերվում էր նրա քաղաքական հայեացքներին…

Մի առաւօտ նա, սովորութեան համեմատ, կա-նուխ զարթնելով, կամեցաւ պարապվել մինչև դպրոց գնալը։ Բայց զգաց մի թեթև տկարութիւն և թոյլ գլխացաւ։ Նա շլկարողացաւ պարապել։ Առհասարակ վերջին օրերը առողջ չէր զդում իրան, բայց ուշա-գրութիւն չէր գարձնում։ Նա հագուստով պառկեց անկողին հանգստանալու, թէև նոր էր վերկացել։

Սիրականը սամօվարի և կօշիկների հետ ներս բերեց այն օրուայ լրագիրները։ Այժմ հակառակորդ-ները Դիմաքսեանի դէմ գրում էին գրեթէ ամեն օր։ Այս անդամ նրա աչքին ընկաւ մի ֆելիետօն։ Նա

սկսեց կարդալ։ Դեռ մինչև այժմ նա իւր մասին չէր հանդիպել մի այդպիսի կծու, ծաղրական գրուածի։ Ֆելիետօնի վերնագիրն էր «Ողնին լիւտերի քղամի-դով»։ Երդիծական ոճով պատկերացրած էր մի «հե-րոս», մնափառութեան զգացումներով լի։ Կերպարան-քը նկարագրված էր ճիշդ այնպէս, ինչպէս Դիմաք-սեանն էր, Փօտօգրաֆիական բոլոր մանրամասներով։ Որքան ծաղը և հեգնութիւն կար այդ նկարագրի մէջ, որքան օձային սողոսկումներ դէպի «հերոսի» հոգեկան աշխարհ։ «Ողնին» մտնում է դպրոց, «ողնին» մըտ-նում է ընտանիքների, հասարակական բոլոր հիմնար-կութիւնների, բոլոր խաւերի մէջ։ Ամեն տեղ նա ո-գերպած նոր մտքեր է քարոզում։ «Մկները դուրս են գալիս բներից ականջ դնելու և իրանց պոչերը շարժում են նրա առջև։» Մի օր «ողնին» Փրակ է հազնում, սպիտակ վողկապ կապում, գնում է մի գե-ղեցիկ և հարուստ օրիորդի ձեռը խնդրելու։ Նա ար-տասուքը աչքերին թաւալվում է բազկաթոռից օրի-որդի ոտների տակ, անշնորհ կերպով իւր փշերով ծա-կոտում է ձեռները, նրա հօրեղբարյը գալիս է և կօշ-կի ծայրով «ողնիին» դուրս շպրտում։

«Կանայք և օրիորդներ, ծերեր և երիտասարդ-ներ, զգոյշ կացեք ողնիից, նա ձեր մէջ է պտտում»։

Նա շպրտեց լրագիրը մի կողմ և սուբի կանգնեց։

Նա կամեցաւ ծիծաղել, արհամարհել, բայց օձը կատաղել էր։ Ո՛չ, թող Մաերեանը անտարբեր մնայ իւր փիլիսոփայական հայեացքների մէջ, իսկ նա չի կարող սառնարիւն կրել այդ ստոր հարուածները։ Ի՞նչ պատասխանել, հարուածը որ կողմից ուղղել, որ խո-ցոտի, վիրաւորի, թաւալագլոր անէ հակառակորդին։

«Հալածել մարդուն նրա համար, որ նա յանդղանում է իւր գլուխը ձեր ստոր մակերևոյթից բարձրացնել, հալածել նրան տմարդի զէնքնի։ Այդպէս, ուրեմն, դուք ինքներդ ձեր ձեռքով հանում էք այն խցանը, որ հազիւ զսպում էր իմ մէջ կուտփած թոյնը։ Այս, սպասեցէք և կըտեսնէք որքան խորը կըցցվեն ողնիի ասեղները հասարակութեան խոցերի մէջ, որ նրանց միջից դուրս հանեն վարակիչ թարախը»։

Նա արագ-արագ անց ու դարձ էր անում սենեակում։ Նրա երեսին դոյն չըկար, նա դողում էր ամբողջ մարմնով։ Նա փորձեց հարուածին պատախանել իսկոյն, սակայն ձեռը չըհնազանդվեց կամքին։ Նա շտապով դուրս եկաւ տնից։ Նա ցանկանում էր հանդիպել մէկին, բերանացի արտայայտել սրտի մաղձը։ Նա քայլերը ուղղեց դէպի Մոերեանի բնակարանը։ Առաւօտեան դեռ ուժ ժամն էր։ Փողոցներով անցնում էին միայն խոհարարներ, ըանորներ և սայլեր։ Երկինքը ամպամած էր, դիշերը մինչև լոյս անձրևել էր։ Թեթև աշնանային քամին թօթափում էր ծառերի դեղնած տերեները և զարդարում ցեխոտ մայթերը։

Նա այնքան յուղված դուրս եկաւ տնից, որ մոռացաւ վերարկուն և կալօշները հագնել։ Նա զդաց ոտների վրայ խոնաւութեան աղդեցութիւնը։ Բայց չըկամեցաւ տուն վերադառնար։ Նա կառը փնտուց, չըդառաւ։ Այն ինչ Մոերեանը ապրում էր թուռ գետի միւս ափում, մի խուլ փողոցի անկիւնում։

Դիմաքսեանը անցնում էր կամրջով։ Յանկարծ հեռուից նա տեսաւ մի կառք, ապա երկրորդը, եր-

բորդը և մի շարք միմեանց ետևից, որ դուրս էին գալիս փողոցի ծայրից։ Նա կանդ առաւ։ Երկի, կառքերից մէկը դատարկ կըլինի, պէտք է սպասել։ Մի բոպէում առաջին կառքը հաւասարվեց նրան։ Դա մի ծածկած կարեթ էր։ Երկու սպիտակ նժոյգներ ամպի արագութեամբ թուցնում էին նրան առաջ։ Մի վայրկեան Դիմաքսեանի աչքերը փակ լուսամտով թափանցեցին կառքի ներսը։ Մի թարմ, առոյգ և ուրախ երիտասարդ ժպտաց, գլուխը շարժելով։ Ժպտաց և մի կանացի վարվուն և երջանիկ դէմք։ Նրա կապտագոյն աչքերը պապղացին սև ու երկար թերթերունքների միջից։

Կասկած չըկար, որ նրանք էին։

Զոյգի ետևից երկեցան Վէրիլեանը տիկին Բախտամեանի հետ, Պետր Սոլոմոնիչը Ովսաննայի հետ և մի շարք ծանօթ ու անծանօթ մարդիկ ու կանայք, զոյգ-զոյգ նստած առանձին-առանձին կառքերում։

Նա կանգնած էր և նայում էր լուռ, սակայն շատ բան արտայայտող, երջանիկ հանդիսի ետևից։ Կամրջի ծայրում կարէթը ծռվեց դէպի ձախ։ Նա ուրանում էր դէպի երկաթուղու կայարանը։ Երջանիկ զոյգը զնում էր ճանապարհորդելու։

Նա ամբողջ մարմնի մէջ զգաց մի տարօրինակ սառնութիւն։ Կարծես, արիւնը նրա երակների մէջ դադարեց վաղերուց։ Անցաւ, ուրեմն, նրա աչքի առջե այն երանութիւնը, որին նա յանդգնել էր մի ժամանակ իւր համար երազել։ Գնաց հակառակորդը իւր յաղթութեան պառողը վայելելու։ Իսկ նա ընկճված, ոչնչացած, հրապարակական ծաղքի ենթարկված, կանդնել է և նայում չքացող բաղդի ետևից։

Նա ձեռք յենեց կամրջի լապտերի թուջեայ սիւնին և անզգայաբար ցած նայեց։ Այնտեղ, հսկայական կամ կամարների տակ մոնչալով անցնում էր պղտոր, յորդացած, դեղնագոյն գետը։ Մի վայրկեան նրա աչքերը մթագնեցին, գլուխը պտտեց, ծանրացաւ։ Թւայ նրան, որ մի աներեւոյթ ձեռք մղում է նրան դէպի ցած։ Դա ընթացող ջրի ձգողական ոյժն էր։ Նրա մարմնով անցաւ մի սուր սառառու։ Նա երեսը յետ դարձրեց և վերադարձաւ տուն։

Սիրականը, պատշգամբի վրայ նստած, լսելի ձայնով կարդում էր «Ողնին Լիւտերի քղամիդով»։ Նրա շիլ աջքերի մէջ նշմարվում էր զուարճութեան փայլը։ Երեսի, նա գրուածը շատ էր հաւանել։

—Ներս եկ,—հրամայեց Դիմաքսեանը խեղդված ձայնով։

Նա գրեց Երկու նամակ և տուեց ծառային, առաջընդունված է առաջինը:

—Տար այս մէկը դպրոց, իսկ միւսը Մսերեանին:

xvi

Բժիշկ Սալամբէկեանը հիւանդանոցից նոր էր վերադարձել և մէջքի վրայ պառկած նայում էր առաստաղին:

Ալրդեօք աւելի լաւ չէր լինիլ, մտածում էր նա,
մի որ և է վանքում նստած Սաղմոս կարդայի մարդ-
կանց մեղերի թողութեան համար, քան թէ նրանց
բժշկէի մարմնաւոր ցաւերից»:

Ասում էին և ինքն էլ տեսնում էր, որ բժիշկ-
ները առհասարակ ճարպիկ մարդիկ են, դեռ ու գեն-

Են վաղում, միմեանցից հիւանդներ խլում կամ առողջներին հիւանդացնում։ Խոկ ինքը ի՞նչ է անում։ Ամսական ստանում է յիսուն—վաթսուն րուբլի և, կարծես, արդէն հասել է բաղդի զենիտին։

«Կամ պէտք է ես էլ շառլատանութիւն սկսեմ,
կամ թէ չէ՝ դա ինչ ցաւիս բժիշկն եմ։ Դնում եմ ա-
մեն օր հիւանդանոց և տեսնում եմ մի շարք գլուխա-
ներ։ Փըզկ, ինչ գլուխներ ու դէմքեր։ «Չեոդ տուր»,
«լեզուդ հանիր», պրծաւ գնաց, յետոյ գալիս եմ,
մէջքիս վրայ ահա այսպէս պառկում (նա ոտները
բարձրացրեց և դրեց անկողնակալի կողի վրայ) ու
ինքս ինձ ասում. «աշխարհս դատարկ բան է»։ Ասենք,
զահրումարը դատարկ բան է, բայց մարդս մի քիչ էլ
եռանդ պէտք է ունենալ, չէ՞...»։

«Այ տղայ, արի պսակվենք, —դոչեցնա յանկարծ
և գլուխը մի քիչ բարձրացրեց, —բայց ոչ, ամուսնու-
թիւնն էլ խաթարալա շատ ունի: Մէկ էլ տեսար
ծնեց: Սատանան գիտէ ծնունդն էլ ինչպէս կըլինի,
պլացենտա պրեզէ, է պիզի օտօմիա, լի-
պօրօկելի ֆօտօմիա, խակ երեխաները, հօհօօ,
դի ֆոտերիտ, սկարլատինա, ֆուլիկու-
լեարնալեաժամա, թիմու, թիմու, թիմու»:

«Զեմ ուզում, չեմ ուզում», կրկնեց նա, ձեռները այսպէս շարժելով, որ, կարծես, նոյն բոպէին դըռները բացվեցին և կէս դիւժին երեխաներ ճըգճըգալով ներս թափվեցին:

—Ի՞նչ է պատահել, բժիշկ, —գոյեց Մսերեանը,
շտապով ներս մտնելով իւր հաստ ձեռափայտը և
լայնեցր դիմարկը ձեռին:

Բժիշկը մէջքի վրայ շուռ եկաւ ընկերոջ ձայնին:

—Այդ դու ես: Հըմ, ինչ է ասում իդէալիստի վարդագոյն երևակայութիւնը ինֆուզօրիաների մասին:

—Ժամանակ չէ, եղբայր, պատերի հետ մասլահաթ անելու: Այն ինչ հօրս ցաւն էին տալիս, չէիր ռողում: Վերկաց ռոտքի:

—Այսպէս աւելի բանաստեղծական է, պառկիր, զբոյց անենք:

—Վերկաց, ասում եմ, Արաէնը հիւանդ է:

—Հոգեպէս, թէ մարմնապէս:

—Երեսնութ ու վեց տասներորդական աստիճանի տաքութիւն ունի, իսկոյն չափեցի:

—Ասենք դա նրա նօրմալ դրութիւնն է, տեմպերատուրան շատ բարձր է:

Մսերեանը, բոնելով նրա թերց, ուժով ռոտքի կանգնեցրեց և ստիպեց հագնվել:

Երբ նրանք ներս մտան, Դիմաքսեանը անկողնի մէջ նստած ծնկների վրայ ինչոր դրում էր: Մսերեանը խլեց նրա ձեռից թուղթը ու գրիչը, դոչելով՝ Երևակայում եմ, այդ դրութեան մէջ ինչ խելօք բան կըդրես:

Սալամբէկեանը տնքտնքալով, ծուլաբար քննեց ընկերոջը, քննի տակ մրթմրթալով.

—Հիմայ մեռնենք, թէ երեսուն տարի յետոյ միւնոյն է: Դատարկ բան է, մրսել ես...

Նա գրեց մի քանի գեղեր, Մսերեանը անձամբ շտապեց վազել գեղատուն: Առհասարակ նա շատ էր վախենում ընկերոջ մասին և հոգում էր, ինչպէս աւագ եղբայր:

Ամբողջ օրը ընկերները մնացին հիւանդի մօտ: Մսերեանը չէր թողնում Սիրականին ներս մտնել: Մի-

ժամանակ նա հիւանդանոցներում շատ է հիւանդաս պահի պաշտօն կատարել իւր ընկերների համար, այժմ էլ կըկատարի: Եւ նա պատմում էր իւր կեանքի այդ շրջանից զանազան էպիզօդներ:

Իրիկնադէմին Դիմաքսեանը ասաց, թէ թեթեւութիւն է զգում և գրեթէ ուժով Մսերեանին ստիպեց թողնել նրան մենակ:

Դիշեր էր: Սեղանի վրայ վառվում էր կանթեղը: Մերթ ընդ մերթ Սիրականը ներս էր մտնում իմանալու արդեօք հիւանդը մի բան չէ պահանջում: Պարոնի հիւանդութիւնը ծառային շատ էր անհանգստացնում, որովհետև Սիրականը նրան սիրում էր անկեղծ սիրով:

Այդ սիրոյ շարժառիթը՝ Դիմաքսեանի ստէպսաէպ նուիրած փողերը, հագուստը չէին կամ ձրիդաստութիւնը, այլ աւելի խոր պատճառ կար: Մինչ ամենքը ծաղրում և հալածում էին Սիրականին նրա տղեղ և ծիծաղելի կերպարանքի համար, մինչ ամենքը մի-մի կրալիս ածական էին տալիս նրան, մինչ երեխաներն անգամ փողոցներում վազում էին նրա ետեկից և «մայմուն, մայմուն» կամչելով, քարեր էին արձակում նրա վրայ—Դիմաքսեանը, այդ «ուսումնական աղան», այդ «մեծ օջաղի որդին», այդ «ինսպեկտորը», նրա հետ վարվում էր մնջմ, մարդասիրաբար, ինչպէս իւր հաւասարի, իւր ընկերոջ և լաւ ընկերոջ հետ: Դա մի հաղուագիւտ, մի անգնահատելի բան էր Սիրականի համար: Եւ նա չըդիտէր, ինչպէս արտայայտէր իւր սրտի երախտագիտութիւնը:

Վերջին անգամ ներս մտնելով, նա կանգնեց հիւանդի դլսի կողմում և, շունչը զսպելով, կամեցաւ

իմանալ, քնած է նա, թէ արթուն:

Լսվում էր հիւանդի ծանր և ընդհատվող շնչառութիւնը: Մի վայրկեան նա աշքերը բաց արաւ, տեսաւ ծառային և հառաջեց:

—Թու այստեղ ես:

—Հրամերէք, աղա:

—Քանի՞ ժամն է:

—Տասից կէս է անցել:

—Ի՞նչ ուշ է անցկենում դիշերը: Լաւ, գնա գործիդ, Սիրական, յոգնած ես, պառկիր քնիր:

—Ես յոգնած չեմ, աղա, գործ էլ չունեմ, խանումին կերակուր տուեցի, պրծայ:

—Այն շիշերը և ժամացոյցը դիր այս սեղանի վրայ:

Սիրականը իսկոյն կատարեց նրա հրամանը և, ձեռները փորի վրայ դարսած, մնաց կանգնած:

—Ուզում ես ինձ մօտ մնալ, որ ծառայեմ:

—Հրամերէք, աղա:

—Հարկաւոր չես, ես ուզում եմ մենակ մնալ: Գնա, բայց գոները ամուր կողպիր, որ քամին չըբաց անի:

Սիրականը ակամայ դուրս գնաց: Հիւանդը մնաց մենակ:

Արդարե, այժմ նա աւելի հանդիսատ էր: Իսկապէս իւր տկարութեանը ոչինչ նշանակութիւն չէր տալիս: Զարմանում էր անդամ Մսերեանի անհանդատանալու վրայ: Մարմնին տիրած տաքութիւնը մի առանձին ախորժութիւն էր պատճառում նրան: Թւում էր նրան, թէ կաշուի տակ մի թմրեցուցիչ և հաճոյական հեղուկ են սրակել: Նրա քունը չէր տանում,

միայն աչքերը փակած անձնատուր էր եղել ֆիղիքական դուրեկան անդորրութեանը, որ նմանում էր հաշիշի կամ ափիսնի ազգեցութեան: Նրա մոքով անցնում էին օրուայ դէպքերը: Առաւտեան նա զարթնեց ճշմարիտ է մի թեթև գլխացաւով, բայց հանգիստ և խաղաղ հոգով: Այդ ժամանակ նա մոռացել էր իւր թշնամիներին, ուզում էր պարապվել, թէ ետկար էր: Եւ յանկարծ դարձեալ զարթեցրին նրա սրտում թունաւոր օձը, դարձեալ տակն ու վրայ արեցին նրա արիւնը: Բայց արժէր այդքան վրդովվել մարդկանց տմարդի վարմունքից, միթէ չէր կարելի սառնասիրտ արհամարհանքով վերաբերվել ստոր լուսանքներին: Ինչո՞ւ նա այնպէս պոնկվեց, ինչպէս մի դիւրաբորբօք հեղանիւթ:

«Արդեօք երբ, վերջապէս, կըշափաւորվի իմ զգայնութիւնը»:

«Երբէք, երբէք», պատասխանեց նրան մի ուրիշ ներքին ձայն:

«Ինչո՞ւ»:

«Որովհետեւ դու անօրմալ մարդ ես, Բարաթեանը ճիշդ է ասել և ճիշդ են ասում միւսները»:

Ան, այդ Բարաթեանը, այսօրուայ այն չարաշուշակ հանդէսը, նրա յաղթական ժպիտը, դէմքի երջանիկ արտայայտութիւնը:

Ո՞ւր է նա այժմ: Երկաթուղու դնացքը ամբողջօրը բաղդաւոր զոյգին սլացրել է կայարանից կայարան: Ահա նրանք, ահա նա մի ձեռով Գայիհանէին դրկած, միւսով շոյշոյում է նրա գանդուր բաց զոյնի մազերը: Իսկ Գայիհանէն դլուխը մեղմիկ թեքած է նրա ուսին և իւր կապրւամկ կըակոտ աշքերով ցա-

ծից վեր նայում է նրա երեսին:

«Յածից վեր, այն, եթէ ես լինէի, պէտք է վեր և ից ցած նայէր ինձ»:

Նրանք կանգնած են վագոնի փոքրիկ պատուհանի առջև, ի հարկէ, առանձին կուպէում, և դիտում են աշնանային բնութեան հրաշալիքները: Տեսարանները փոխվում են գեղեցիկ կալէյդօսկոպի արագութեամբ: Նրանց աչքի առաջով անցնում են զիւղական աղքատիկ խրճիթները, այս ու այն տեղ ցրված, գեղնած դաշտերը, սիրուն ձորերը և շքեղ հովիտները:

Պղտոր Քուրը այնտեղ պարզ է, փայլուն և դրաւիչ: Նա ժպտում է բաղդաւորների երեսին և սիրով ողջունում նրանց միութիւնը: Այն ինչ՝ նոյն գետը այնքան մուայլ, այնքան թշնամաբար էր նայում նրան այսօր առաւօտեան: Նա, կարծես, աշխատում էր դրաւել գժբաղդին գէպի իւր ցուրտ ծոցը, ուր թագնված է ժանդ մահը: Ի՞նչ կը լինէր, եթէ նա գցէր իրան այնտեղ: Ոչ, ոչ, ինչու համար, ում համար, արժէր...

Այստեղ հիւանդը զգաց մի նոր սառնութիւն իւր սոկորների մէջ: Երջանիկ զոյդը համբուրվում է: Ա՛խ, այդ սիրային համբոյըները, արդեօք ի՞նչ զգացմունք են պատճառում համբուրվողներին: Արդեօք կարժանանայ նա երբ և է, գէթ մի անգամ իւր ամբողջ կեանքի ընթացքում այդպիսի ջերմ համրոյի մի այնպիսի արարածի հետ... Ի՞նչ ասել է փոխադարձ սէր: Նա ուզում է զգալ, նա կարօտ է, նրա սիրաը պահանջնելու:

Նրա ատամները դողդողում էին և ուժգին ու

արագ-արագ զարկվում միմեանց: Ա՛հ, ցուրտ է, սաստիկ ցուրտ: Ինչու նրա ողնաշարը այնպէս ցաւում է, կարծես նա, ուզում է բաժան բաժան լինել, կարծես, ոսկորները ուտում են միմեանց: Նրա ամբողջ մարմին տիրեց կապարային ծանրութիւն: Այդ ի՞նչ է նշանակում. ցուրտ է, պէտք է ծածկվել: Եւ նա վերմակը քաշեց գլխին, ոտները հաւաքեց, կծկվեց, կուշ եկաւ ամբողջ մարմնով և դարձաւ մի փոքրիկ կծիկ: Լովում էին նրա ծանր տնքտնքոցը ու հառաչանքները: Տասը բոպէից յետոյ ցուրտն անցաւ: Մկրսվեց մինորտաքութիւն, և այս անգամ աւելի սաստիկ:

Նա դէն շպրտեց վերմակը, կուրծքը բաց արաւ և ձեռները տարածեց աջ ու ձախ: Նրա պղտոր և կարմրած աչքերը թափառում էին առաստաղի վրայ, պատից պատ, անկիւնից անկիւն: Իսկ մթնած միտքը կայծակի արագութեամբ վերաստեղծում էր անցեալի տպաւորութիւնները անբնական կերպով, չափազանց ացրած, անկապ, անորոշ, հատ ու կտոր...

XVII

Յանկարծ նրան թւաց, թէ ինքը դպրոցումն է: Ահա և՝ աշակերտները, շարէ շար նստած, պատասխանում են նրա հարցերին: Մի շար պատանի, ընկերներին աջ ու ձախ բոթելով, ստէպ ստէպ մատը քարձրացնում է և ոտքի կանգնում:

«Արարեան, հանգիստ նստիր», գոչեց նա բարձրաձայն:

Բայց ոչ, դա ուսումնարան չէ: Նա կանգնած է մի ընդարձակ դահլիճում: Նրա առջև հաւաքված է

անթիւ բազմութիւն, գիւղացիների և քաղաքացիների մի խառնիճաղանձ ամբոխ: Նա քարոզում է ամբոխին լոյս և գիտութիւն: Նրա ձայնը գիւթական զօրութիւնով ամենքին դրաւել է, լսում են լուռ, ուշադիր, անշարժ: Օք, որքան լաւ է ընդհանուրի մըտքին տիրելը: Յանկարծ մի շշուկ է բարձրանում: Նա զգում է, որ մէկը ետևից բռնեց նրա հագուստի փեշերը: Նրան ուզում են ցած զլորել: Նա յետ է նայում, աա, դա նրա հակառակորդներն են—մէկը գերմանական Ինիաթեանը, միւսը փաստաբան Վեքիւլեանը: Զարամիտներ, դուք նախանձում էք, որ խաւար բազմութիւնը միտ է դնում նրա լուսաւոր դաշտիարներին:

«Ի՞նչ էք ուզում ինձանից», գոռաց նա բարձրածայն, ձեռը խփելով բարձին:

Ոչինչ չըկայ, ոչ ամբոխ, ոչ թշնամիներ, ոչինչ նա մենակ է և գտնվում է դատարկ տարածութեան մէջ, օդի վրայ քաշ ընկած: Նա ոչ մի յենարան չունէ, վախենում է անհուն բարձրութիւնից ընկնի և անհետանայ այն խաւար անդունդի մէջ, որ բացված է ներքեւում, ուղիղ նրա ոտների տակ...

Մի ինչոր սպիտակահեր ծերունի տալիս է նրան մի բազկաթոռ: Նա նստում է, Այժմ նա ծանօթ ընտանիքի հիւրասենեակումն է: Ինչքան հիւրեր կան: Մեծ մասը կանայք են և ինչ սիրուն, ինչ գեղեցիկ, ինչ երիտասարդ կանայք: Խստած են խույր-խումբ ուրախ դէմքերով: Ա՛հ, հարսանիք է, ումը: Սենեակը աղմկում է հիւրերի զուարթ և բարձրածայն խօսակցութիւններով ու քրքիջներով: Մի երիտասարդ ջութակ է ածում, մի օրիորդ երգում է, միւսը դաշնա-

մուր է նուազում: Խսկ այնտեղ սպիտակ հագուստով, գլուխը գեղեցիկ պսակով զարդարած, դէմքը մի նօսր և նուրբ շղարշով ծածկած, կանգնած է նա, Գայիանէն... «Բարե ձեղ», ասաց հիւանդը խոպոտ ձայնով:

Ոչ ոք ուշագրութիւն չի դարձնում Դիմաքսեանի վրայ: Նա նստած է սենեակի մի անկիւնում, աննշմարելի այդ ուրախ հանդիսում, այդ զուարթ հասարակութեան մէջ: Ի՞նչ լաւ նուազում է այն օրիորդը, ինչ գեղեցիկ է Գայիանէն, ինչ ուրախ է Բարտթեանը:

«Բրաւօ, բրաւօ», գոչեց դարձեալ հիւանդը:

Մթութիւն, խաւար, ոչինչ չըկայ, ձայներ են լսվում, տարօրինակ, սարսափելի ձայներ: Բայց ահա դարձեալ հիւրասենեակը լուսաւորվեց, և ոչ ոք չի տեսնում Դիմաքսեանին: Ոյդպէս չի կարելի, կամ պէտք է այստեղից դուրս գալ կամ պէտք է ուշադրութիւն գրաւել: Նա կահ-կարասի չէ, նա մի կոտրված աթոռ չէ, կամ մի անպէտք լաթի կտոր,—նա Արսէն Դիմաքսեանն է...

«Տիկիններ, օրիորդներ», նորից գոռաց հիւանդը, աւելի խոպոտ ձայնով:

Հիւրասենեակում ափում է միանուագ լուութիւն: Բոլոր հանդիսականները երեսները դարձնում են դէպի նրա կողմ: Վերջապէս, նշմարեցիք Դիմաքսեանին:

«Ո՞վ է խրվել այն բազկաթոռի մէջ», ասում է մի գոռող տիկին, մօնոկլը պահելով աշքին:

Դիմաքսեանը ուզի է կանգնում:

Հիւանդը նստեց անկողնի մէջ:

Սմենքը զարմացած են: Սպասեցէք, սպասեցէք, եակոյն նա ցոյց կըտայ, թէ ով է ինքը: Բոլորը ան-

շաբժ են, ըերանները կիսաբաց, գլուխները վեր բարձրացրած։ Դիւթական ձայնը նրանց մի ակնթարթում արձանացրել է նոյն դիրքում, ինչ դիրքում որ էին։ Կառքերի ձայնը խլացնում է նրան, օօօ, ամբողջ քաղաքը, կարծես, զուարճանում է նրանց երջանկութիւնով։ Իսկ ինքը մենակ, արհամարհված, ընկճված։ Այս ինչ ձայներ է լսում նա, ինչու են յարձակվում նրա վրայ։

Հիւանդը ձեռը զարկեց անկողնակալի կողքին։
Լսվում է մի բարձր ծիծաղ։ Նա թատրոնումն է,
վերիլեանի առաջ կանգնած։ Գայիանէն մօտենում է
նրան և նայում։ Նա յանկարծ բոհում է օրիորդին
ամուր ձեռներով, խելադարի պէս։ Վայրկենաբար օ-
րիորդի կրծքից դուրս է թռչում մի բարձր ճիչ։ «Դա
հրէշ է», գոշում է նա և սարսափած փախչում։ «Հրէշ
է», կրկնում են բոլոր կանայք և վազում այս ու այն
կողմ։ Տղամարդիկ ծիծաղելով հետեւում են նրանց։ Ա-
մենից յետոյ դուրս է դալիս Բարաթեանը և դուրս
դալուց առաջ զգուանքով նայում է Դիմաքսեանի վրա։
Նա համբուրում է Գայիանէին, օօօ, համբուրում է իւր
հարսնացուին, իւր ամուսնուն։ Հիւանդը, ատամները
կրծտելով, ձեռներով ամուր բռնեց գլխի մազերը։
Նա միայնակ է և դարձեալ նոյն հիւրասենեակում։

Նա միայնակ է ու գուշակ է հայեցքը ընկնում է դիմացի հայելու մէջ։
Նրա հայեցքը ընկնում է դիմացի հայելու մէջ։
Այնտեղ նա տեսնում է իւր ամբողջ կերպարանքը նը-
կարված ստից մինչև դլուխ, Տէր Աստուած, ի՞նչ բա-
նի է նմանում նա։ Այտերի ոսկորները դուրս ընկած,
ահուելի բերանը լայն բացված, շրթունքները լնդեր-
քին կպած։ Աչքերի փոխարիէն մթին խորշեր, ականչ-
ները սեացած, պարանոցը ոսկորացած։ Իսկ մարմինը

Ի՞նչ պատիկ, ինչ զազրելի կերպարանք: Այն, իրաւունք
ունէ Գայի հանէն նրան ատելու, նա մարդկային պատ-
կեր չունէ, նա հրեշ է, ճիւաղ է...

«Ես հրեշ եմ, հրեշ եմ, բոլորը ասում են», լսվեց
դարձեալ հիւանդի ձայնը:

Եւ նա անկողնից վեր թռաւ անընական արագութեամբ, կանգնեց յատակի վրայ:

Աեղանի վրայ շարունակ վառվում էր կանթեղը:
Դրսում քամի էր, աշնանային սարսափելի քամի, որ
ամենի և սոված գաղանի պէս լիզում էր դաշտերը:
Դռների և լուսամուտների արանքից նաներս էր ժա-
փանցում, սուլելով լինչպէս օձ, բառանչելով որպէս
մորթվող չորքոտանի:

Հիւանդը կանգնած էր սենեակի մէջ տեղում բարակ գիշերային շապկով, կուրծքը կիսով չափ բաց: Նրա ազգերի շրջանակները արիւնով լի պնակների էին նմանում, լայնացած բիբերը, կարծես, ձգտում էին գուրս գալ իրանց բնից: Նա ատամները կրճատում էր կատաղի կերպով, դլիս մազերը խճճվել էին և հակառակ գաղաթում: Նա մի բոռնցքի մէջ սեղմած ւաքվել գաղաթում: Նա մի բոռնցքի մէջ սեղմած էր վերմակի ծայրը, միւսի մէջ շապկի եզերքը: Կարծես, նա պատրաստվում էր յարձակել մի աներեսյթ թշնամու վրայ:

Հայ ոտները ուժին զարկեց յատակին և գոռաց.

«Վայրենի ժողովուրդ»

Դա մի սարսափելի, մի խուլ գոռոց էր, արձակ-
ված սաստիկ տենդի մէջ գտնվող հիւանդի տանջվող
և տառապող կը քըից:

Այդ գիշերային մենաւոր լուսվենան մէջ, այդ
դատարկ սենեակում նա յիշեցնում էր իւր որջի մէջ

բռնված մի վայրի գաղանի, որին դրսից պաշարել էին և կամենում էին կենդանի-կենդանի այրել։ Դէմ-քը կորցրել էր ամեն ինչ, որ մարդկային էր, որ արտայայտում է գիտակցութիւն և բանականութիւն, և երեան էր հանել, ինչ-որ գաղանային է։

Դրան արանքից ներս սլացող քամին կպչում էր նրա այրվող մարմնին։ Դա էր, որ մի ակնթարթ մեղմ մացրեց նրա տենդային ցնորդները, թոյլ, շատ թոյլ կերպով լուսաւորեց նրա մթնած գիտակցութիւնը։

Նա նայեց իւր շուրջը, բռունքները բաց արաւ, հառաշեց ծանր և երկարատե։ Նա մօտեցաւ գրասեղանին, ձեռները յենեց նրա ծայրին և նորից հառաշեց։

Կանթեղի մօտ դրած էին մի մեծ թանաքաման, մի քանի գլքեր և լրագիրներ։ Նա անմիտ հայեացքով նայեց նրանց, յետոյ պատերին, յետոյ առաստաղին, յետոյ յատակին, յետոյ ինքն իրան ոտից մինչև գլուխ։ Եւ երբ դլուխը կրկին բարձրացրեց, նրա հայեացքը ընկառ կանթեղի միւս կողմում դրած փոքրիկ քառանկիւնի հայելիին։ Նրան թւաց, որ այդ մի մեծ դաւաթ է ջրով լի։ Նա վերցրեց երկու ձեռներով և մօտեցրեց շրթունքներին։ Յետոյ ցած բերեց, նայեց նրան, նայեց երկար ժամանակ։ Դրան արանքից սուլող քամին մի նոր ցրտութիւն տարածեց նրա մարմնի վրայ։ Ահա նա, այն կերպարանքը, որին ամենքը ծաղրում են, Ահա այն խորը թաղված աչքերը, երեսի թուխ և կոշտ կաշին, նօսր միրուքը, ագեղ բերանը, լայն սեացած ատամները։ Իսկ հասնիլ։ Նա հայելին պահեց զլսի վայր, կիսահորիզոնական ձեռվ և նայեց իրան ոտից մինչև գլուխ։ Արքան նա

փոքրիկ է, որքան չնշին։ Ինչու նա այդպէս է ծնվել, ինչու նրա ահագին դլուխը տեղաւորված է այդ մի քանի թղաչափ մարմնի վրայ։ Ինչու նա և ոչ ուրիշը Անէծք ընութեանը, անէծք նրա օրէնքներին, անէծք ամբողջ տիեզերքին, անէծք նրա աներեսոյթ զօրութեանը։ Կամ դուցէ այդ նրա ծնողների, նրա պապերի և նախահայրերի մեղքն է։ Բայց ինչու ընութիւնը նրան և միմիայն նրան է ընտրել այդ մեղքերի պատիժը կրելու, ինչու, ինչու...

Նա անթարթ աչքերով շարունակ նայում էր հայելու մէջ։ Եւ նրա կուրծքը ուժգին բարախում էր, երեսի բոլոր մկանունքները ցնցվում էին։ Սակայն նա դարձեալ նայում էր ինքն իրան։ Կարծես, առաջին անդամն էր տեսնում կամ դուցէ ուզում էր վերջին անդամ սիրտը տանջել կամաւոր փորձով։ Նա հայելին դրել էր սեղանի վրայ։ Նա կատաղութիւնից եղանգներով ճանկուառում էր սեղանի ծածկոցը, բայց էլի նայում էր։ Նա գտնվում էր կիսատենդային և կիսարթուն դրութեան մէջ։ Յանկարծ նա դողդոջուն ձեռներով խլեց հայելին սեղանի վրայից, աւելի ու աւելի մօտեցրեց աչքերին։ Նրա շրթունքները բացվեցին և ատամները դուրս ցցւեցին։ Նա հայելին բարձրացրեց գլսից վեր և բոլոր ուժերով զարկեց սենեակի յատակին։

Ապակին շրջանակից բաժանվեց, փշրտվեց։ Նրա տասնեակ բեկորները ցիր ու ցան եղան այս ու այն կողմ։ Նոյն միջոցին հիւանդի կուրծքը արձակեց մի դառն, երկարատե և կատաղի ծիծաղ։

Բորբոքված աչքերով նա նայում էր հայելու կըստորներին, որոնց հնչիւնների մէջ զգաց ջախջախված

թշնամու վերջին յուսակտուր հառաջանքները: Կարծես, նա իւր վրէծը լուծեց, տալով ընութեանը արժանի վարձ նրա անարդարութեան համար:

Իրաւ, այժմ նա աւելի հանգիստ էր երկում, թէև տենդը տակաւին չէր անցել: Յոզնած, շնչառպառ, ծանր հառաջելով նա յետ ու յետ քայլեց և թուլացած նստեց անկօղնակալի վրայ: Նրա գլուխը ծանրացել էր, թեքվել կրծքին: Միտքը գեռ պղտորված էր, նա չէր գործում, այլ վերաստեղծում էր անշցեալի տպաւորութիւնները: Փոքր առ փոքր նա սկսեց սթափվել, բայց գեռ շրդիտեր արթուն է, թէ երաւ զում: Գիտէր միայն, որ ինչոր բան է պատահում իւրան, մի տարօրինակ, մի շրտեանված բան:

Մի անգամ նա աչքերը վեր բարձրացրեց, և նրա պղտոր հայեացքը ընկաւ դիմացի գոների ապակու վրայ, բայց շնչմարեց մի զարմանալի երկոյթ: Դա երկու ձեռնաշափ դեղնադոյն մի բան էր ամուր կապած ապակուն, ինչպէս չօրացած, դեղնած մեծ տերեւ:

Երբեմն այդ բանը շարժվում էր, քսվելով ապա կուն: Նոյն միջոցին գոների ետեկից լսվում էր ինչ որ շշուկ, կարծես, այդ շշուկը հաստ նրա ականջին: Նա ձեռով շիեց տաքութիւնից այրվող ճակատը, տրուրեց ցամաքած աչքերը...

Դեղնադոյն բանը չքացաւ, ապակին մլնեց: Մէկը դրսից գոները շարժում էր:

«Կորէք, կորէք», գոչեց հիւանդը խուլ ձայնով:

Գոները հանգարտ և կամացուկ բացվեցին: Ներս մտաւ կապոյտ շապկով, կուրծքը բաց, ոտաբորիկ մի արարած, ինչպէս զիշերային ողի, որ դալիս է վհուկի ձայնին: Բայց ողին կամ ուրուականը սաստիկ վա-

խեցած էր: Նա դողում էր ոտքի վրայ, նա չըդիտէր առաջ գար, թէ դոների մօտ մնար:

Այնքան պղտորված էր հիւանդի միտքը, այնքան մթագնած էին նրա աչքերը, որ նա չըճանաչեց ուրուականին:

«Կորիր», կրկնեց նա, ոտքի կանգնելով:

Սիրականը, ձեռները փորի վրայ դարսած, միքանի քայլ առաջ եկաւ:

«Զուր չներ», սիրտո այրվում է:

Ծառան բարձրացրեց կանթեղի լոյսը, տւեց հիւանդին մի բաժակ չուր:

Ցետոյ նա ասաց.

—Ազա, կրմրսես, պառկիր:

Հիւանդի թուլացած գլուխը թեքվեց բարձին: Սիրականը ուղղեց նրա մարմինը և վերմակով ծածկեց:

Անցաւ մօտ քառորդ ժամ, և հիւանդը, կարծես, քնեց: Սիրականը կանգնած էր նրա գլխի մօտ, ինչ պէս մի խնամող մայր: Խեղճ մարդ, նա կարծում էր, որ երիտասարդ պարոնը խելազարվել է: Նա դիմամբ իւր անկողինը բերել էր սենեակի գոների մօտ և այնտեղ պառկիր, որ հիւանդին մօտիկ լինէ, հարկաւոր եղած ժամանակ նրան օգնութիւն հասցնելու:

Հազիւ նա նիրհել էր, Դիմաքսեանի տարօրինակ դոռոցիները զարթեցրին նրան: Նա ամբողջ ժամանակ դոների ետեկից հետեւել էր նրա արածներին, չըհաւմարձակիւլով ներս մտնել: Այժմ նա ապշած նայում էր հայելու կառներին, գլուխը շարժում և հիւանդին ձեռով խաչակնքում:

Արդէն լուսաբացին մօտ էր, երբ Սիրականը ասթոսի վրայ նստած նիրհեց: Նա սթափվեց այն ժամանակակիցին:

մանակ, երբ ուսի վրայ զգաց մի ծանրութիւն։
Դա Մսերեանի ձեռն էր։

—Գիշերը հանդիստ է քնել։
—Չարչարվել է խեղճը մինչև լոյս։

Սիրականը նրան կանչեց մի կողմ և շշնչիւնով
պատմեց գիշերուայ եղելութիւնը։ Մսերեանը վախե-
ցած մօտեցաւ հիւանդին և զգուշութեամբ ձեռը
շփեց նրա ճակատին։ Հիւանդը քրտնած էր։ Մսերեա-
նը ծառային պատուիրեց հայելու բեկոնները հաւա-
քել և դուրս դնալ։ Խոկ ինքը նստեց իւր ընկերոջ ան-
կողնակալի մօտ։

Մի ժամ անցած եկաւ բժիշկ Սալամբէկեանը։
Հիւանդը դեռ քնած էր։ Մսերեանը հաղորդեց նրան
ծառայի պատմածը։

—Երնշանակէ սաստիկ տաքութեան մէջ է եղել։
Ոչինչ, ոչինչ, մի վախենալ, սովորական ցնորք է...»

Վերջապէս, Դիմաքսեանը շարժվեց վերմակի տակ։
Ծանր հառաչելով, նա երեսը դարձրեց ընկերներին և
արտասանեց։

«Ես հիւանդ եմ, բժշկեցէք ինձ...»

ԵՐԿՐՈՒԹՅՈՒՆ

I

Երկու ամիս ճանապարհորդելուց յետոյ Բարա-
թեանները վերադարձան Թիֆլիզ։ Նորապասակների
համար Գերասիմ Գերասիմիչը իւր տանը պատրաստել
և գեղեցիկ կահաւորել էր տուել առանձին սենեակ-
ներ։ Անդամալոյժը ուրախ էր որդու ամուսնութեա-
նը, միայն երբեմն ինքնուրոյնաբար գլուխը շարժում
էր և քնթի տակ ասում։ «Եթէ Խսահակը իմ որդին
է—հայր Աբրահամի ծնունդը չէ. այս չորացած սոտ-
ներս կըկտրեմ, եթէ նա հինդ ամսից աւելի դիմանայ...»։

Սովորական այցելութիւններից յետոյ, նորապը-
սակների համար սկսվեց բուն ընտանեկան նստակեաց
կեանքը։

Բարաթեանը վճռել էր սահմանափակել իւր նախ-
կին ծանօթնների թիւը, յարաբերութիւն պահելով մի-
այն այնպիսինների հետ, որ քիչ թէ շատ հասարակա-
կան դիրք ունէին։ Մսերեանին նա դուրս գցեց ցու-
ցակից։ Բժիշկ Սալամբէկեանը պէտք է ընդունվէր։
Վէքիլեանի համար, հարկաւ, դռները բաց էին կրոնդ-
ների վրայ։ Դիմաքսեանի մասին նա ասում էր, թէ
արժանի չի համարում նրան իւր տունը թողնել, թէն-
միւնոյն ժամանակ, զգում էր, որ վիրաւորված ըն-

կերը յաւիտեան ընդհատել է նրա հետ իւր յարաւերութիւնները:

«Իսկ քո բոլոր ազգականները և բարեկամները աչքիս վրայ տեղ ունեն», ասում էր նա Գայիանէին, թւելով իւր ապագայ շրջանի մարդկանց:

Տիկինը նստած էր ամուսնու գէմուդէմ և լուռսում էր նրա որոշումները, առանց ընդդիմանալու, միանդաման հպատակնելով նրա կամքին, նա նկատելի կերպով նիհարել էր, աչքերի տակը բաւական խորացել էր: Առհասարակ արտասահմանից նա վերտարձաւ շատ փոխված: Բայց այդ միայն արտաքուստ էր: Իսկ հոգեպէս նա այժմ աւելի բազգաւոր էր, երշանիկ ժպիտը չէր հեռանում նրա շրմունքներից: Այժմ նա պաշտում էր ամուսնուն և կատարելապէս համազգած էր, որ ինքն էլ պաշտպում է նրանից: Զըկար նրանց փոխադարձ սիրոյ և երջանկութեան վրայ ոչ մի արատ, ոչ մի թեթև ստուեր: Այսպէս էր կարծում Գայիանէն, և նրա ուրախութիւնը այնքան մեծ էր, որ նոյն իսկ արժանի չէր համարում իրան այդ վիճակին: Երբեմն նա մինչեւ անդամ արտասախում էր, յուղելով բազդի բուռն զգացումներից: Այդ երջանիկ յուղմունքն էր ազգել նրա առողջութեան վրայ և այնպէս նիհարեցրել նրան: Նա պատրաստ էր ամբողջ օրը, առաւտից մինչև երեկոյ, առանց ուստելիսնելու, նստել ամուսնու գէմուդէմ, ձեռները նրա ափի մէջ դրած և աչքերը նրա աչքերին յառած: Պատահում էր, որ նա վախենում էր—մի գուցէ մի չար զօրութիւն յանկարծ ընդհատի նրանց երջանկութիւնը: Զէ որ նրանք մահկանացուներ են և կարող է մէկը կամ միւսը հիւանդանալ, կամ մի յան-

կարծակի փորձանքի հանդիպել, կամ մեռնել: Նա սարսափում էր այդ մտքից: Պատահում էր և ուրիշ, աւելի յուղիչ, բան—Գայիանէն կասկածում էր: Թւում էր նրան, որ յանկարծ իւր իսակը կարող է դադարել սիրելուց, պաղել և աչքը ուրիշների վրայ դարձնել: Ուստի նա անդադար ստիպում էր նրան կրկնել:

«Սիրում եմ և պիտի յաւիտեան սիրեմ»:

Գայիանէին չէր հետաքրքրում դրսի կեանքը: Նա մոռացել էր ամեն բան, և՝ ազգականուհիներին, և՝ ընկերուհիներին, և՝ նոյն իսկ կամանց ընկերութիւնը, որի համար առաջ այնքան աշխատում էր: Ընկերուհիները զանազան կատակներ էին անում նրա հետ, անդամ ծիծաղում էին նրա վրայ: Բայց նա պատրաստ էր ամեն տեսակ ծաղը ընդունել, միայն նրան հանդիսա թողնէին իւր իսակի հետ:

Այդ միջոցներին բազաքային ընտրութիւնների պայքարը սկսվել էր: Պեօտր Սոլոմոնիչը արտասովոր շարժման մէջ էր: Կազմվել էր ընդդիմադիր կուսակցութիւն: Կամենում էին հին իրաւասուներից շատերին հեռացնել, նոր քաղաքագլուխ և վարչութեան անդամներ ընտրել:

Իրաւասուների ցուցակից գուրս էին ձգել Պեօտր Սոլոմոնիչին և Ամբակում Աֆանասիևիչին: Վերջինը համարվում էր քաղաքի շահերի համար վնասակար, իսկ առաջինը—մի աւելորդ, անօգուտ բան: Այսպէս էլ գրված էր մի աեղական լրագրում: «աւելորդ Բախտամովը»:

Եռանդուն քաղաքացին կատակել էր: Ամբողջ օրը նա կլուբում ու փողոցներում բողոքում էր թշնամիների գէմ քարոզելով:

—Քաղքցիներ, խելքի եկէք, կռօմոսները եկել
են ուրիշ քաղաքներից, մեր հացը խլել, ուզում են
մեր քաղաքն էլ իրանց ձեռքը առնեն:

Ամբակում Աֆանասիեվիչը ժողովներ էր կազմում:
Առաջին կարգի ընտրովները նրա մարդիկն էին: Երկ-
րորդ կարգի մեծ մասը միջին վաճառականներն էին:
Պետք Սոլոմոնիչը պատում էր իւր կալուածները, վա-
զորօք բոլոր խանութպանների ականջին շշնչելով ա-
պագայ իրաւսսուների անունները նոյեմբերի կիսին
Ամբակում Աֆանասիեվիչի կուսակցութիւնը տարաւ ա-
ռաջին յաղթութիւնը: Պետք Սոլոմոնիչը ընտրվեց
միայն մէկ ձայնի առաւելութիւնով: Դա նրան վշտաց-
րեց, բայց և այնպէս ուրախ էր, որ ընտրվեց, որով-
հետեւ յոյս շունէր ընտրվելու:

—Քանի որ կենդանի ենք, սա մեր ձեռքին կը-
մնայ, —պարծենում էր նա, ձեռափայտը խփելով
պրօսպեկտի մայթին, որի մասին նա առաջին և վեր-
ջին անդամ Դումայում մի ճառ էր առել ուղիղ եր-
կու բառից բաղկացած՝ «պէտք է նորողել»:

Օրը կիրակի էր: Ծնորութեան դահլիճը և միւս
սենեակները լցվել էին ընտրովների բազմութեամբ:
Շատ հետաքրքիր կանանց շարքում երեւում էր և
Գայլանէն տիկին Բախտամեանի հետ: Ներքեւում տի-
րում էր անասելի աղմուկ: Նախագահը անընդհատ
զանդակահարում էր: Թանձր մթնոլորտի մէջ երեւում
էր ճաղատ, սեահեր, շիկահեր, կարմիր և սպիտակ
գլուխների մի խայտարդէտ խառնուրդ, որ ճիշդ նը-
կարչի պօլիտրային էր նմանում:

Ամբակում Աֆանասիեվիչի կարմրակաշի գլուխը
փայլում էր, ինչպէս մի վիթխարի գնդառեղ ահագին

տիկի մէջ խրած: Նա կանգնած էր դահլիճի մի յայտ-
նի տեղում, ոտները միմեանցից մի արշին հեռու
դրած, ձեռները գրպանում, փորը դուրս գցած: Հան-
գիստ ժպտալով, նա նայում էր սկսվող պատերազմին,
ինչպէս մի զօրապետ, որ կանխապէս համոզված է
իւր զօրքի յաղթութեանը: Նրա աջ ու ձախ կողմե-
րում կանգնած էին Վէքիլեանը և Բարաթեանը: Վեր-
ջինը մերթ ընդ մերթ նայում էր դէպի վեր և ժըգ-
տում Գայլանէին: Նորատի տիկինը սաստիկ հետա-
քրքրված էր քուէարկութեան հետևանքով: Եթէ իւր
հսակին սեացնէին, օօ, նա անչափ պէտք է վշտանար:

Վերջացաւ թերթիկների ընթերցումը: Առաջին
ընտրելին Ամբակում Աֆանասիեվիչն էր: Վէքիլեանը
եօթներորդն էր, իսկ Բարաթեանը քսանիններորդը:
Ուրեմն յոյս կար ընտրվելու:

Ամբակումին ծափահարեցին. նա ընտրված էր:
Անցաւ և Վէքիլեանը:

«Իսակ Գերասիմիչ Բարաթով», լավեց յանկարծ
նախագահի ձայնը:

Գայլանէի ականիները կարմրեցին, նա դարձաւ
մարմնացած լողութիւն: Նա հետևում էր նախագա-
հի ձեռին, որ մէկ մէկ բաց էր թողնում քուէները
փայտեայ գաւաթի մէջ: Նա ականջ էր դնում քուէ-
ներ պարունակող արկղիկի ձայնին, արդեօք շնոր է
մնում այնուեղ, արդեօք կընտրվի իւր սլաշտելին, իւր
անդուգական իսակը, որ ահա այնտեղ կանգնած խօ-
սում է, ծիծաղում, զուարձանում իւր ներքին ան-
հանգստութիւնը քօղարկելու համար:

Եւ նա հռչակվեց ընտրված:

Ծափահարութիւնների աղմկից շփոթված, նա

բարձրացաւ վեր, մօտեցաւ Գայիանէին։ Նրանք երկուսն էլ երջանիկ էին, երկուսի էլ սիրոը բարախում էր։ Գայիանէն տակաւին գողում էր, բայց այժմ ուրախութիւնից։ Նրա ընտրածը հասարակութեան ընտրածը դարձաւ։ Վազը միւս օրը նա կըփայլի իւրի խելքով, իւր ուսումով, իւր հռետորական տաղանտով։ Ահա այժմ կերևայ, թէ ինչ ոյժ է Բարաթեանը և որքան հաշակ ու խելք ունէր Գայիանէն, որ նրան ընտրեց։

Խուռն բազմութիւնը ճեղքելով, նրանք դուրս եւկան փողոց։

—Ուրանս ես,—հարցրեց իսակը։

Գայիանէն աւելի ամուր կատւ նրա թեին։ Նա խօսք չէր գտնում իւր երջանկութիւնը արտայայտելու։

—Ուրեմն,—շարունակեց իսակը,—այսօրուանից ես սկսում եմ հասարակութեանը ծառայել։ Այս, ծանր պարտականութիւն յանձն առի, է՞ն, ոչինչ, կաշխատեմ ու. երես չըմնալ իմ ընտրողների առաջ։ Նուրերը հանդէս են դալիս և քշում են ասպարիզից հներին։ Կեանքի անիւը պատում է, ով խելք ունէ, նրա ետևից պէտք է ճանկի, որ բարձրանայ վերև, որպէս զի նորից դլորվի ցած։ Շաղդաւորը նա է, որ ժամանակին կաշխատի ինքը իջնել, որ չըմնայ անիւի տակ և ջախջախվի։ Եթէ ճակատագիրը վիճակել է ինձ յաջութիւն, կըդրկեմ նրան ուրախ սրտով։ Սիրելի, անդին Գայիանէ, եղիր իմ օգնականը, թեեր ինձ և ես կը սաւառնեմ բարձր մինչև այն աստիճան, որ ամբոխը ո՞ր կողմ նայի՝ ինձ և միմիտյն ինձ տեսնի։ Սիրոս լցված է փառասիրութեան զդացումով, և ես կամենում եմ միշտ յազթել, միշտ առաջ գնացաւցած մարդու։

միշտ փայլել քո և իմ երջանկութեան համար։

—Իսկ ես այնքան աւելի կըհպարտանամ, կըպարձենամ քո անունով, որքան նա բարձր կըհնչի։ Գիտես, ես ուզում եմ, որ դու լինես կամ մի հռետոր կամ մի յայտնի հասարակական գործիչ, մի խօսքով, ես ուզում եմ, որ դու բարձր լինես ամբոխից, որ քեզ յարդեն, պատուեն, սիրեն, ինչպէս մի հաղուադիւտ մարդու։

—Հասկանում եմ, հասկանում եմ, քո քննքոյշ որտի մէջ էլ հպարտութիւն և փառասիրութիւն կայ։ Օ՞ս, ես կաշխատեմ արդարացնել քո յոյսերը, Այսօր ես իրաւասու ընտրվեցի, իսկ եկող տարի այսօրուայ օրը դու ինձ կըտեսնես գպլոցի հոգաբարձու։ Եւ գիտես ո՞ր գպլոցի. այստեղ, ուր այժմ տեսուչ է մէկը, որ ինձ կոիւ է հրատարակել։

Գայիանէն իսկոյն ընազդմամբ հասկացաւ, թէ նրա խօսքը ում մասին է։ Մի անորոշ, անբացատրելի երկիւլ յանկարծ համակեց նրա սիրոը, և նա յուզված ձայնով ասաց։

—Ո՞չ, իսակ, աշխատիր ոչ ոքի հետ չըթշնամանալ։ Ես չեմ ուզում, հասկանում ես, չեմ ուզում, որ դու թշնամիներ ունենաս, մարդիկ կարող են քեզ վնասել։

—Ոչ ոք չէ կարող ինձ վնասել և ոչ մի թշնամուց ես չեմ վախենում։ Մանաւանդ ահա այդպիսին ներից և սրա ընկերներից։

Դէմ ու դէմ յապաղ քայլերով դալիս էր Մաերեանը, ձեռները մէջըին դրած և ցրված հայեացքով նայելով այս ու այն կողմ։ Բարաթեանը, գդակը մի արշին վեր բարձրացնելով, գոչեց հայերէն։

—Պատիւ ունեմ...

Մոերեանը հազիւ կարողացաւ հանել գլխից իւր լայնեղը դլսարկը, որ թեսերը կոտրված աղուաւի պէս փռվել էր նրա ուսերի վրայ։ Մի քանի քայլ հեռանալով, նա կանգ առաւ, մի փիլիսոփայական հանդիսա հայեացք ձգեց զոյտի ետևից, դլուխը շարժեց և արտասանեց։

«Չեմ կարծում, որ քեզ համար այժմ մեծ պատիւ լինի Մոերեաններին բարենելը»։

Եւ նոյն փիլիսոփայական հանդարտութեամբ շարունակեց իւր ճանապարհը։

II

Դիմաքսեանի հիւանդութիւնը սուր բնաւորութիւն ստացաւ։ Բժիշկ Սալամբէկեանը, տեսնելով, որ նա թռոքերի բորբոքում ունէ, հրաւիրեց իւր արհեստակիցներից մի քանիսին կօնսիլիումի։ Վճռեցին, որ հիւանդի դրութիւնը շատ վտանգաւոր է։ Նրան ժամանակաւորապէս փոխադրեցին հէնց նոյն տանտիրուհու մօտ մի ուրիշ, աւելի յարմար սենեակ։ Մոերեանը դիշեր ու ցերեկ չեր հեռանում նրա անկողնից։

Մի քանի օր շարունակ Դիմաքսեանը այնպիսի ծանր վիճակի մէջ էր, որ Սալամբէկեանը սաստիկ վախեցաւ։ Մի օր նա իւր երկիւղը յայտնեց Մոերեանին, և երկումն էլ արտասվեցին իրանց ընկերոջ մասին։ Սակայն դա հիւանդութեան տաղնապալի օրերն էին, անցան, և հիւանդը նորից առողջանալու յօյսեր տուեց։

Այդ միջոցին դպրոցի գործերը խառնակ դրութեան հասան։ Հակառակորդները ուրախ էին այդ ան-

կարգութեանը։ Ինիաթեանը մինչև անգամ ցանկանում էր, որ Դիմաքսեանը այլ նս անկողնից չըվերկենայ, թէև արտաքուստ ցաւակցութիւն էր յայտնում։ Բայց նրա յօյսերը չիրադործվեցին։ Դիմաքսեանը ամիս ու կէս պառկելուց յետոյ, վերկացաւ։ և փոքրը առ փոքր սկսեց պարապվել գործերով։ Առաջին շաբաթ հակառակորդները խնայեցին նրան, չէին վըրդովեցնում։ Բայց անցաւ այդ շաբաթը, և կըկին պատերազմը սկսվեց։ Ամեն օր նա անախորժ ընդհարումներ էր ունենում, վրդովիում և յուղփում էր, նորից երես առ երես մարդկանց անարդարութեանը հանդիպելով։

Այդ բոլորը, հարկաւ, աղդում էին նրա առողջութեան վրայ, որ բաւական քայլայվել էր։ Նա նիւհարել էր, գունատվել, այտերը դուրս էին ցցվել, աշքերի շրջանակները և ականջները կիտրոնի պէս դեղնել էին։ Զընայելով իւր յուղվելուն, որ այժմ մարմնաւոր տկարութիւնից էր առաջանում, հոգեպէս չէին կրկնվում այն բարոյական սարսափելի տաղնապահները և ջղաձումները, որ այնքան տանջում էին նրան։

Սակայն նա շլկարողացաւ շատ էլ սառնարիւն լոել Բարաթեանի և Վէրիլեանի իրաւասու ընտրվելու լուրը։ Նա, որ ծարաւ էր ամեն տեղ հասարակական կուիւների յանուն իւր համոզմունքների, նա, որ երբէք չէր բաւականանում խաղաղ գործունէութիւնով, այժմ սկսեց նախանձել Բարաթեանի և Վէրիլեանի դիրքին։ Եթէ այդ մարդիկ ստացած լինէին փողով վարձատրվող աւելի բարձր պաշտօններ, գուցէ նրանց ծաղրէր, ենթարկէր իւր կծու հեգնութեանը։ Բայց տեսնել նրանց հասարակական այնպիսի պաշտօննե-

բում, ուր պէտք է գործէին գործելու համար, անվարձ, պէտք է ծառայէին հասարակութեանը իրանց խելքի և գիտութեան պաշարով—այդ նրա համար անախորժ էր: Այս հանգամանքը նա մի տխուր ապացոյց էր համարում այն բանի, թէ հասարակութիւնը հող է պատրաստել այնպիսի գործիչների համար, որոնք այժմ նրա գաղափարական հակառակորդներն էին:

Մանր աշխատութեան, յամառ ջանքերի և ընդհարութեարի շնորհով նա յաջողել էր դպրոցի մէջ մտցնել կարելի փոփոխութիւններ: Այժմ գիշերօթիկները հազնվում էին աւելի լաւ, աւելի մաքուր, ուսում էին աւելի թարմ և անդարար կերակուրներ: Դպրոցի խարխուլ շինութիւնը պահում էր օրինակելի մաքրութեամբ: Հեռացրած էին մի քանի կոպիտ, ծոյլ և պղերդ վերակացուներ: Աշակերտները վայելում էին աւելի աղատութիւն: Նրանց մշտական թախծալի և մոայլ գէմքերի վրայ երկում էին զուարթութիւն, ժպիտ և ծիծաղ: Զըկար այլ ևս առաջուայ վախը ուսուցիչներից և վերակացուներից: Կար միայն ոէր և յարդանք: Խստութեանը փոխարինել էր խելացի գիտակցական մարդավարի յարաբերութիւնը: Աշակերտները պարապում էին աւելի եռանդով, աւելի սիրով և աւելի յաջող: Նրանք գոհ էին իրանց վիճակից և հասկանում էին, թէ ումն են պարտական այդ փոփոխութիւնով: Դիմաքսեանին նրանք յարդում էին և սիրում ինչպէս իրանց հազուագիւտ հովանաւորին և պաշտպանին: Եւ ոչ ոք չէր կարող այդ պաշտպանի մասին մի վատ խօսք ասել. ոչ ոք իրաւունք չունէր նրա անունը արտասանել առանց յարդանքի,

եթէ չէր կամենում ենթարկվել ծաղրի, առելութեան, այն, մինչև անդամ հալածանքի:

Մինչ այս մինչ այն՝ ձմեռը անցաւ: Դիմաքսեանը բոլորովին կազդուրվեց, և դարձեալ զգում էր գործելու, պատերազմելու, հարուածելու և հարուածներ ստանալու անսահման եռանդ: Բայց հասաւ գարունը, և նրա մէջ անսպասելի կերպով տեղի ունեցաւ մի տարօրինակ յեղափոխութիւն: Նրա եռանդը սկսեց թուլանալ, բարոյական ոյժերը տկարացան. Նրան տիրեց մի ինչոր ծանր, ճնշող թախիծ: Կեանքը նրա համար առաջին անդամ թւաց տաղտկալի իւր բոլոր աղմուկներով և իրարանցումներով: Այժմ նա թէ գոլոցում և թէ տանը պարապվում էր ակամայ: Ոչ մի միտք, ոչ մի նուրիբական դաղափար առաջուայ չափ նրան չէր գրաւում: Նրա հոգին ձգտում էր դէպի մենութիւն: Նա ուղում էր առանձնանալ մարդկանցից և անձնատուր լինել իւր մելամազձիկ, անորոշ մտախոհութիւններին: Աւարտելով դասերը դպրոցում, նա կամենում էր հանգստանալ—չէր կարողանում, փորձում էր կարդալ ու գրել—անաջող: Նա դուրս էր դալիս տնից և թափառում դէս ու դէն, ինչպէս թանգագին, անփոխարինելի կորուստ կրած մի մարդ, որ ոչ մի տեղ հանգստութիւն չէ գտնում: Երբեմն նա գնում էր որ և է այդի, մտնում էր նեղ ճեմելիքները: Կար մի դառն, բայց, միենոյն ժամանակ, ախորժելի բան այդ առանձնութեան մէջ:

Ժամերով նա գիտում էր արեգակի ճառագայթների ուրախ խաղը ծառերի նորաբողբոջ տերեւների հետ, ականջ էր դնում օդի հանգարտ շշուկին, թըռչունների ուրախ ծլվոցներին: Նա պատկում էր նո-

բարոյս դալար խոտի մէջ, խոնաւ գետնի վրայ, երեւ
ու դէպի վեր և աչքերով հետեւում դարնանային կա-
պոյտ երկնակամարում նազելի և հպարտ կերպով սա-
հող ամպերին: Թեթև, հեշտաշունչ, նօսր օդը, լեռ-
նային մաքուր զեփիւոի պէս թափանցում էր մինչեւ
նրա սակորների խորքը: Թետարած ուրուրները սլա-
նում էին անհուն բարձրութեան վրայ սեղակ ամպէ
վոքրիկ բեկորների պէս: Եւ նրանց երկայր ստուեր-
ները մեղմիկ և արագ սահում էին գետերի մակե-
րեոյթով, լեռների կրծքով, անտառների գագաթնե-
րով, դաշտերի և մարգերի վրայ:

Սովորաբար նա նստում էր գետի ափից ոչ հե-
ռու մի վիթխարի կաղամախի տակ: Եւ այսաեղ դա-
ռն ու ախորժելի զգացումը աւելի սաստիկ էր հա-
մակում նրա սիրալը: Մոռացվում էր իրականը, միու-
քը ակամայ, ինքն ըստ ինքեան, սլանում էր դէպի
երկների խորութիւնը: Թեաւոր թագուհիների եթե-
րային բարձրութիւնը, հեռաւոր ամպերի վսեմ ըն-
թացքը, տիեզերքի անհուն, անհասանելի ծաւալը ընդ-
լայնում էին նրա երեակայութեան հորիզոնը: Նրա ի-
մացականութիւնը թռչում էր բարձր, քան ուրուրնե-
րը, հեռու քան ամպերը, արագ, քան արեի լոյսը, և
այնտեղից դիտում դէպի վեր երկինքը, դէպի վայր
երկիրը:

Մերթ ընդ մերթ մի աններդաշնակ ազմուկ, մի
կոպիտ ձայն ընդհատում էր նրա մտածմունքների
թելը և նրա ուշը դրաւում դէպի շուրջը: Դա զբա-
նող մարդկանց ձայներն էին, մի երեխայի ուրախ
ճիշ—անախորժ, մի պառաւ դայեակի բարկացոտ
ձայն—աւելի վատ, կամ մի երիտասարդ մօր զուարթ

քրքինջ—նոյնքան տաղտկալի:

Նա երեսը խոկոյն դարձնում էր և դարձեալ նա-
յում դէպի վեր: Այստեղ շարունակ ոլանում էին ու-
րուրները, սուր աչքերով ցածում որսեր որոնելով:
Ծառերի խիտ ծիւղերի մէջ թագնված ճնճղուկները
անընդհատ ծլվում էին, ինչպէս լարված մեքենայիկ-
ներ: Գետի հանգարատ հոսանքը թմրեցուցիչ օդի մէջ
տարածում էր մեղմ շշուկ, քաղցր մեղեղիով օրօրե-
լով մարդկային լաելիքը: Արևի հեշտալի պայծառ շող-
քերը դետափի պարզ ճահիճների կանաչագոյն մակե-
րեոյթի վրայ գոյացնում էին բիւրաւոր աղամանդներ:

Նա ուզում էր նիրհել: Նիրհել բնութեան ծո-
ցում, հեռու մարդկանց իրարանցումից, հեռու աշ-
խարհի ապակիանված ալիքներից: Հեռու նոյն խոկիւր
հոգու այն տարրերից, որ քսանութամեայ գոյութեան
ընթացքում անխախտելի կապ էին հաստատել նրա և
մարդկութեան մէջ: Սակայն նրա սիրոր չէ: Այստեղ բարձրացել է մի նոր ալէկոծութիւն, հոգին
խոռված է, միտքը շփոթված: Եւ նա հառաչելով
դառն մելամազձութեամբ արտասանում է.

«Այս, որքան տխուր է առանց սիրոյ ապրելլ...»:

III

Պետքը Սոլոմոնիչը հիացած էր իւր պլոտեժէնե-
րով: Չէր անցել չորս ամիս, երիտասարդ իրաւասու-
ները արգեն ցոյց էին տալիս, թէ որքան հասկանում
են իրանց պաշտօնի բարձրութիւնը: Ամեն մի նիստին
նրանք նոր հարցեր էին զարթեցնում, գրգռելով հին
իրաւասուներին և ուրախացնելով նորերին, որոնց ա-

մենաճարտար օրդանը Բարաթեանն էր:

Գայլիանէն ամեն երկուշաբթի երեկոյ այցելում՝ էր Դումայի նիստերը և հրճուանքով լսում իւր ամուսնու ճառերը: Բարաթեանը խօսում էր հանգիստ հոգով, անվրդով, առանց շեղվելու և շփոթվելու, ինչպէս մի փորձառու հռետոր: Երբեմն նա իւր ճառը համեմում էր սրամիտ դարձուածներով, որով պակաս հաճութիւն չէր պատճառում լսողներին: Կարճ ժամանակում նա դարձաւ շատերի սիրելին, յարդելի դիրք բռնելով իրաւասուների շարքում: Նրան ընարեցին մի քանի մասնաժողովների անդամ:

Նա թողել էր կրակից ապահովող ընկերութեան դորձակալի պաշտօնը: Դա նրա համար մի մեծ նիւթական կրուստ չէր այժմ: Հայրը տալիս էր նրա տնային ծախսերը: Կնոջ կալուածներից ստացվող եկամուտը ծածկում էր նրա միւս ծախսերը, և նա ապրում էր այնքան ապահով, որ փողի համար ծառայելու կարիք չունէր: Բայց որպէս զի ձրիակեր որդու և պարագիտ ամուսնու հոչակ չըվայելի, նա գնեց մի նշանաւոր արդիւնաբերական տան մի քանի բաժնետոմսեր: Միւնոյն ժամանակ, սուր աչքերով դիտում էր, թէ որտեղ կարելի է մի արդիւնաւոր և քիչ աշխատութիւն պահանջող պաշտօն դանել, ոչ այնքան փողի, որքան իւր դիրքը աւելի ամրացնելու համար:

Այսպէս թէ այնպէս, այժմ նա վարում էր հանգիստ, բազզաւոր և դորձունեայ քաղաքացու կեանք: Առաւոտը զարթնում էր տասը ժամին, աչքի էր անցկացնում տեղական լրագիրները: Գայլիանէի հետ զուարճախօսելով թէյ էր խմում, յետոյ առանձնանում իւր

սենեակը՝ պարապլիվու: Նա դրում էր ֆինանսական—տնտեսական մի շարադրութիւն քաղաքային դործերի մասին: Տասներկու ժամին նա նախաձաշում էր և տնից դուրս դալիս ձաշում էր նա երեկոյեան հինգ ժամին կամ աւելի ուշ—ֆրանսիական ձեռվի: Այնուհետեւ մի փոքր հանգստանում էր: Յետոյ եթէ նիստ ունէր—դնում էր, եթէ ոչ—Գայլիանէի հետ այցելում էր թատրոն կամ մի ուրիշ տեղ:

Երբեմն նա երեկոյեան տնից դուրս էր դալիս մենակ և վերադառնում էր ուշ դիշերին: Այդ ժամանակ Գայլիանէն անհանգիստ սպասում էր նրա վերադարձին, նստած լուսամտի մօտ, ականջները լարած սպասելով կառքի ձայնին:

Ներս էր մտնում Բարաթեանը մերթ ուրախ ուղուարթ և մերթ մտազբազ դէմքով: Գայլիանէն նայում էր նրա աչքերին, միշտ աշխատելով այնտեղ կարդալ նրա հոգեկան տրամադրութիւնը: Այս սովորոյթը յաճախ բարկացնում էր Բարաթեանին, և նա մեղմիկ, բարեկամաբար յանդիմանում էր կնոջը: Գայլիանէն գլուխը թեքում էր կրծքին զարթնել էր վաղուց մոռացված, վաղուց խեղդված չար կասկածը: Նա զզում էր ակամայ անհանգստութիւն: Միւնեանց ետեից նրա գլուխը յզանում էին զանազան մտքեր, մէկը միւսից վատ, ատելի և գարշելի: Նա ինքը զզվում էր այդ մտքերից և աշխատում էր խոյս տալ նրանից, ինչպէս մի չարագուշակ երեսոյթից, որ սպասնում էր խլել նրա հոգեկան անդորր երջանկութիւնը, բայց չէր յաջողվում: Միշտ այդ մտքերը հետեւում էին նրան ուր և լինէր ինչ և անէր:

Բարաթեանի սուր աչքերից, հարկաւ, չէր կարող խուսափել այս վտվիսութիւնը: Երբեմն նա հասարակ, անփոյթ կերպով հարցնում էր.

—Դու անհանգիստ ես, Գայիանէ:

—Ո՞չ:

—Ինչո՞ւ ես արդպէս մտիկ անում ինձ և հառաջում: Գայիանէն կամ մի կերպ խոյս էր տալիս պատասխանից կամ բանի կերպով ծիծաղում էր և փաթաթվում ամուսնու պարանոցին: Կեզծիքը և արուեստականութիւնը այնքան պարզ էին, որ աննկատելի չէին կարող մնալ Բարաթեանի համար:

Մի դիշեր Բարաթեանը տուն վերադառնալով, տեսաւ, որ Գայիանէն լալիս է: Այդ առաջին ախուր արցունքն էր, որ նա տեսնում էր կնոջ աչքերի մէջ:

—Ի՞նչ է պատահել:

—Ոչինչ:

—Դու ելի յուղված էիր:

—Այս:

Բարաթեանը մէջքից թեքվեց, համբուրեց նրան, արտասահնելով.

—Գուցէ նրանիցն է:

—Այս... ըզդիսեմ... կարող է լինել...

Եւ երկուսն էլ խորհրդաւոր կերպով նայեցին միմեանց երեսին, երկուսն էլ լոեցին:

Այնուհետեւ Բարաթեանը յաճախ տեսնում էր նրան արտասկելիս: Նա միշտ պատճառը վերադրում էր կնոջ «ընտական դրութեանը», աշխատելով մոռանալ ուրիշ, աւելի կարեռ, աւելի հիմնական պատճառներ: Նա ճգնում էր Գայիանէին զուարճացնել սրախօսութիւններով: Նա պատճում էր ծիծաղաշարժ

դէպքեր Գումայի նիստերից, ներկայացնում էր այս կամ այն իրաւասուխն, ինչպէս մի տաղանտաւոր գերասան: Նրա կոմիքական ձևերը Գայիանէին չէին դուր գալիս, որքան ևս ծիծաղելի և զուարճալի լինէին: Կինը ցանկանում էր, որ ամուսինը աւելի ծանրաբարոյ լինի, աւելի լուրջ, ինչպէս վայել էր նրա գիրքին և հասակին: Բայց և այնպէս այդ միջոցներին նա երջանիկ էր, որովհետեւ ամուսնու հետ էր: Իսկ յետոյ... երբ իսակը դուրս էր գալիս տնից, երբ մնում էր մենակ, սկսվում էին տիսուր, անտանելի ժամերը: Նրա սրտում նորից բարձրանում էր սաստիկ պէկոծութիւն:

Ինչեր չէր երեակայում, ինչ սարսափելի տեսարաններ չէին ներկայանում նրան: Թւում էր նրան, որ իսակը այժմ նրան չի սիրում, ձանձրացել է բոլորովին... Այժմ, աւելի քան երբեք, նա խոյս էր տալիս ազգականներից: Այցելողներին ընդունում էր ուրախութեամբ, իսկ ինքը ոչ մի տեղ չէր ցանկանում գնալ:

Երբեմն գալիս էր նրա մօտ տիկին Յախտամետանը և ամեն ասդամ յանդիմանում էր, թէ սառել է դէպի իւր ամենամօտիկ ազգականները, որ «աչքի լուսի պէս են սիրում նրան»:

—Այդպէս շուտ գոռողացար,—ասաց մի անդամ տիկինը:

—Ես չեմ գոռողացել:

—Ուրեմն, ինչո՞ւ չես գալիս:—Հասկանում եմ, հասկանում եմ, մարդդ չի թողնում: Նա չի ուզում քեզանից բաժանվել, այնքան սիրում է քեզ: Գիտես, Գայիանէ, ես շատ ուրախ եմ, որ այդպիսի ամուսին

ճարեցիր։ Իսակը օրինակելի մարդ է, նա քեզ պաշտում է, նա հոգին չի խնայիլ քեզ համար։ Աւրախացիր, ուրախացիր, որ այնպիսի ամուսին ունես, դա երկնային երջանկութիւն է։

Գայիանէն ոչինչ շրպատախանեց։ Տիկնոյ խօսքերի մէջ նա զգում էր նուրբ, հաղիւ ըմբռնելի հեղնութիւն, որ կծու կերպով շօշափում էր նրա զգայուն սիրուց։ Յանկարծ նրանց աչքերը հանդիպեցին միմեանց, և, ինչպէս երկու միմեանց հերքող հակատարեր, իսկոյն արագութեամբ խոյս առեցին իրարուց։

Տիկին Բախտամեանը նկատելի կերպով շփոթվեց, բայց նոյն վայրկեանին զսպեց իրան։ Գայիանէն սըրտում զգաց անտանելի տաելութիւն և երկիւղ դէպի այդ կինը։ Կարծես, նրա առջե նստած էր մի ոխերիմ թշնամի, մի վտանգաւոր, սարսափելի թշնամի, որ իւր քնքոյշ բարեկամական ձեւը տակ թաղցրած էր կորստաբեր ձգում։ Նա պատրաստ էր հէնց իսկոյն, նոյն վայրկեանին ցոյց տալ դռները կամ մի թունաւոր խօսքով վիրաւորել նրան։ Բայց ինչու, ինչ փաստի հիման վրայ, ինչ մի շօշափելի արարքից դրդված…

Երկիւղը, կասկածը և ամօթխածութիւնը կաշկանդեց նրան։ Նա աշխատեց խեղդել իւր սրտի մէջ բռնկված թշնամական զգացումը։

Իսկ տիկին Բախտամեանն արդէն իշխել էր ինքն իրան։ Այժմ նա հանդիսատ խօսում էր առօրեայ բաների մասին, և այնպէս, որ, կարծես, ոչինչ չէր տեսնում կամ զգում, նա մինչև անդամ ուշադրութիւն չէր դարձնում Գայիանէի լոռութեան վրայ, որ ուրիշ

անդամ կարող էր վիրաւորել նրան մինչև հոգոյ խորքը։ Նա հանդարտ վերկացաւ և, ամուր սեղմելով Գայիանէի ձեռող, դիմեց դէպի դռները։ Գայիանէի մարմնով անցաւ տարօրինակ սարսուռ, երբ իւր ձեռու զգաց նրա ձեռի մէջ։ Մի սարսուռ, որ մարդկարող է զգալ, երբ նրա մարմնին յանկարծակի դիպչում է խօսնաւ, պաղ և թունաւոր սողուն, ձանապարհ դնելով Բախտամեանին, նա անցաւ իւր ննջարանը, դլուխը դրեց բարձին և ձեռներով ամուր բռնեց գլուխը։

«Միթէ ես չեմ սխալվում, միթէ ես չեմ սխալվում», կրկնում էր նա, աւելի ու աւելի սեղմելով դլուխը։

Հետզետէ նա գառնում էր զգայուն, դիւրագրգիռ, երբեմն ցոյց էր տալիս կապրիզներ՝ նոյն իսկ ուտել խմելու վերաբերմամբ։ Մերթ նա պահանջում էր մի որ և է տարաժամ պտուղ, որ անհնարին էր գտնել, մերթ ուտում էր այնպիսի բաներ, որ ուղղակի վնասակար էին։

Ամուսինն այդ կապրիզները տանելով, երբէք չէր վրդովիում, երբէք չէր բողոքում, որովհետեւ գիտէր «բնական» պատճառը։ Բայց, կատարելով կնոջ պահանջները, երբեմն այնպիսի խօնարհ և հեզ դէմք էր ցոյց տալիս, որ տեսնողը կարող էր կարծել, թէ նա մի տեսակ կամաւոր նահատակ էքմահաճոյ կնոջ ձեռքում։ Դա մի ինքնուրոյն խելացի միջոց էր Գայիանէի սրտից որոշ կասկածները հեռացնելու համար…

Ամբողջ օրը նորատի տիկինը իւր ձեռքում կըտրում էր, ձեռու ու կարտում փոքրիկ, մանկական գըլիոցներ, շապիկներ և սաւաններ։ Պահարանը արդ

լցվել էր, բայց նա չէր դադարում նորերը կարելուց, և ամեն բան ուղում էր ինքը անել: Այդ զբաղմունքը նրան պատճառում էր անսովոր հաճութիւն: Երբ ծալում էր և իւր գեղեցիկ մատներով հարթում մի թիվաչափ շապիկները, նրա երեսի վրայ խաղում էր մի հանդարտ, անդորր ժայխտ: Նրա միտքը սլանում էր հեռու, երեակայութիւնը կենդանի պատկերացնում էր այն փոքրիկ արարածին, որի քնքոյշ, փխրուն մարմիկը պէտք է ծածկվէր այդ ճերմակեղէնով: Արդեօք ուժ կընմանի - հօրը, թէ մօրը, բաց կինամունագոյն աչքերով կըլինի, թէ կապոյտ աչքերով:

Այդ միջոցներին պատահում էր, որ նա յանկարծ գլուխը բարձրացնում էր և ձեռը դնում կրծքի վրայ: Նա գունատվում էր, շրմունքները մեզմիկ ցնցվում էին և աչքերի մէջ ցոլանում էր երջանկութեան հետ և սարսափը թետոյ, ծանր շունչ քաշելով, մելամաղձիկ ու երկիւղած դէմքով նստում էր անկողնի վրայ: Աչքերը լցվում էին արցունքով, և նա հանդարտ ու կամացուկ լալիս էր, ինչպէս առաւտները ցողում է դարնանային ամպամած և խաղաղ երկինքը: Եւ որքան մօտենում էր տաղնապալի օրը, այնքան աւելի Գայիանէն գառնում էր զգայուն, փափկասիրտ, այնքան նրա քմահաճութիւնները աւելանում էին: Մի անգամ ամուսնուց պահանջեց, որ նա տնից չըդուրս գայ, միշտ, առաւօտերեկոյ, նստի իւր մօտ:

—Դու կատակ ես անում, Գայիանէ, —հարցրեց Բարաթեանը զարմացած:

—Ես կատակ չեմ անում, լուրջ եմ ասում, դու միշտ պէտք է իմ մօտ լինես, միշտ...

—Ինչո՞ւ:

—Ես այսպէս եմ ուղում:

—Նատ լսու, ես բազգաւոր կըլինէի մի վայրկեան անգամ շըհեռանալ քեղանից, բայց դործերս ովկըկատարի:

—Ես չըդիտեմ, ինչ ուղում ես, արաւ Դու դործ չունիս, ինձ խարում ես, դու ազատ ես, չեմ ուղում, որ դու ինձանից հեռանաս: Վախենում եմ, ինքս ինձանից սարսափում եմ: Ինձ անպատճառ մի վատ բան պէտք է պատահի:

—Պատահելու է այն, ինչոր բնականաբար պէտք է պատահի: Դու առաջինը չես և ոչ էլ վերջինը, մի վախենար, սիրելիս, ամեն բան յաջող կանցնի:

Եւ մի քնքոյշ, սիրալիր, ջերմ համբոյր քաղեց Գայիանէի դունատ այտից:

—Ո՛չ, ինձ խօսքերով մի միիթարիր, դործնկ ցոյց տուր, որ սիրում ես: Միրաս գողում է, երբ մենակ եմ մնում: «Նրանից» չէ, հասկացիր, ուրիշ բան է, ուրիշ բան...

—Ուրիշ բան...

—Այն, դու... դու... ինձ չես սիրում, դու ինձանից փախչում ես, ի հարկէ, ես տղեղացել եմ, օօ, ես զիտեմ, դու լսու մարդ չես:

Եւ նա սկսեց հեկեկալ:

—Գայիանէ, դու ջղային ես, տկար ես, ի հարկէ, այդ հասկանալի է: Բայց իզուր ես ինքոդ քեզ յուղում, այդ վտանգաւոր է, քեզ հանգստութիւն է հարկաւոր:

—Հարկաւոր է, ուրեմն թող ինձ, որ հանգիստ լինեմ: Ասա, որ դու ինձ սիրում ես...

—Ի հարկէ, սիրում եմ, միթէ դա նորութիւն է, որ ասեմ:

—Ուրեմն քո աչքը ուրիշի վրայ չէ, իմ տղեղութիւնը... այ, տեսնում ես, ինչպէս փոխվել եմ... քեզ չեմ զզվեցնում: Այնպէս չէ, ասա, ես եմ միայն քունը, դու ինձ ես պատկանում հոգով ու սրտով:

—Քեզ և միմիայն քեզ եմ պատկանում:

—Եւ յաւիտեան իմը պէտք է լինեա:

—Յաւիտեան քոնը և այն փոքրիկինը:

—Փոքրիկը... Ա'լս, ես ինչ յիմար եմ, ճշմարիտ է, դու նրան չես թողնիլ, դու նրա մօրը չես զոհիլ մի ուրիշին: Համբուրիր ինձ, համբուրիր...

Այս տեսարանը կրկնվում էր դրեթէ երկու-երեք օրը մի անդամ պէս պէս փոփոխութիւններով:

Վերջապէս, Բարաթեանը սկսեց ձանձրանալ կնոջ կասկածներից, նախանձից և կապրիզներից: Մի օր, երեսը արտասվող Գայիանէից դարձնելով, արտասանեց.

«Օհ, ինչ տաղտկալի է կնոջ չափաղանց սէրը...»:

VI

Նոյն միջոցներին Պետր Սոլոմոնիչը զարմացած էր մի բանի վրայ. արդէն Գայիանէն բաւական ժամանակ էր չէր այցելում իւր քեռիին, այն ինչ նրա ամուսինը ճիշդ շաբաթը երկու անգամ ներկայանում էր պատկառելի քաղաքացիին: Նա պատճառը հարցնում էր կնոջից և մի դրական պատասխան չէր ստանում:

—Աստուած դիտէ ինչու չէ դալիս, երեկ մադամ է դարձել, փքվել է, —ասում էր տիկին Բախտամեանը:

Պետր Սոլոմոնիչը հարցնում էր Բարաթեանից: Այս նոյն անորոշ պատասխաններն էր տալիս. «Ժամանակ չունէ, տկար է, «անյարմար» է համարում տնից դուրս դալու: Հարկաւ, այդ բոլորը Պետր Սոլոմոնիչին չէին գոհացնում: Նա գուշակում էր, թէ կայ, անշուշտ, մի ուրիշ, աւելի հիմնաւոր, պատճառ: Նա տեսնում էր, որ իւր կինն էլ մի առանձին ցանկութիւն չէ յայտնում Գայիանէին տեսնելու, թէեւ արտաքրուստ արտնջում է նրա չրդալու դէմ:

—Ինձ այնպէս է թւում, որ ձեր միջով սև կատու է անցել, —ասաց, վերջապէս, մի անգամ ծերունին:

Տիկինը քմբածիծաղ տուեց: Ինչու պիտի սև կատու անցնէր. ինչ հաշիւ ունէ նա Գայիանէի հետ այսուհետեւ:

—Ես պարտքս կատարեցի, վերջացրի, խօմ չեմ կարող էլի նրա համար մայրութիւն անել:

«Մայրութիւն» բառը տիկինը այնպէս գրգռված, այնպիսի զզուանքով արտասանեց, որ, կարծես, խօսքը աղախին լինելու մասին լինէր:

Հարցը մնում էր հարց, և Պետր Սոլոմոնիչը, ուսերը վեր քաշելով, չէր կարողանում հասկանալ կնոջ ստոնութեան պատճառը: Մի օր նա իրիկնագէմին կլուրից վերադարձաւ սովորականից շատ վազ: Նա չափաղանց վրգովված էր և ինքն իրան խօսում էր, նրա երեսին գոյն չըկար, իսկ աչքերի մէջ փայլում էր անսովոր բարկութիւն: Նախասենեակում նա, առանց որ և պատճառի, գուաց սպասաւորի վրայ, որ մօտենում էր նրա վերաբկուն հանելու: Նա մտաւ ուղիղ հիւրասենեակ: Ովսաննան Լիզօչկայի և Ելեզկայի հետ պարապում էր:

— Ի՞նչ էք անում այստեղ, չէք կարող ձեր սե-
նեակում խաղալ:

Ովսաննան վիրաւորված ուսքի կանգնեց: Ման-
կահասակ քոյրերը ապշած նայեցին իրանց հօրը, որին
հաղիւ թէ երբ և է այդպէս չարացած տեսած լինէին:

— Ո՞ւր է ձեր մայրը, — գոչեց ձերունին:

Ելեջկան, ցուցամատը բերանին դրած, միւս ձե-
ռը մեկնեց դէպի աջ:

Պեօտր Սոլոմոնիչը անյապաղ անցաւ կից սե-
նեակը: Տիկինը առփառական զբօսանքից նոր վերապար-
ձել էր և հագուստը փոխում էր, կաելով ամուսնու
քայլերի ձայնը, նա ուզեց յանդիմանել, որ առանց
նախազգուշացնելու համարձակվում էր ներս մտնել:
Նա հետեւում էր արիստոկրատ տիկինների օրինակին,
մարդուն թոյլ չէր տալիս շատ էլ համարձակի վար-
վել, այսինքն ուզած ժամանակը մտնել նա սենեակը:
Բայց երբ նայեց նրա այլայլված դէմքին, ապշեց:
Նրա ձեռները մնացին կրծքի կոճակների վրայ:

Պեօտր Սոլոմոնիչը կանգնեց նրա դէմ ու դէմ,
նայեց նրան ոտից մինչեւ դլուխ և դառն ծիծաղով ար-
տասանեց.

— Գեղեցկուհին, ինչպէս երեւում է, նոր է վե-
րապարձել:

— Ի՞նչ է պատահել, Պետեա:

«Պետեա» կամ «Պետկա» նա կոչում էր ծերունի
Պետրոսին այն ժամանակ, երբ փաղաքշանքով խօսե-
լու կարիք էր լինում:

— Ի՞նչ է պատահել... Աստուած ինձ բաղդաւու-
րեցրել է:

— Ես չեմ հասկանում:

— Օօօ, դու շատ լաւ ես հասկանում, — մոնչեց
Պեօտր Սոլոմոնիչը, ատամները չարաչար կրծտելով:

— Խելադարվել ես, ի՞նչ է:

— Ի հարկէ, խելադարվել եմ, ծերացել եմ, այս-
տեղու գրուստ չէ, մազերս-բամբակ, ինքս-ոյժից լն-
կած, թուլացած, տղեղացած, իսկ դու, դու, դու...

Նա շնչանգառ մի քայլ առաջ դրեց: Նա գողում
էր ոտից մինչեւ դլուխ: Նա խօսք չէր գտնում սրտի
կատաղութիւնը միանգամից արտայայտելու: Տիկինը,
ուսեւը թօթվելով, կըկնեց, թէ ոչինչ և ոչինչ չէ հաս-
կանում և շարունակեց կրծքի կոճակները կապել: Բայց
նա մասամբ կեղծում էր: Եթէ ամեն բան չէր հաս-
կացել, գոնէ գուշակում էր գործի էութիւնը: Նա
զգաց, որ կատակի ժամանակ չէ, որ, վերջապէս, ըս-
կագում է վազուց սպասված վոթորիկը: Միայն կա-
մենում էր ժամանակ որսալ, ուշ ու միտքը ժողովել,
պաշտպանվելու փաստեր և միջոցներ գտնել: Այն
ինչ՝ Պեօտր Սոլոմոնիչը, բռունցքները սեղմած, մի
քայլ ևս առաջ դրեց և խեղդված ձայնով գոռաց.

— Անամօթ, խաբերայ:

Տիկինը յետ ու յետ քաշվեց, նայեց նրան ոտից
մինչեւ դլուխ, ցոյց տալով միաժամանակ և՛ զարմանք,
և՛ բարկութիւն, և՛ վիրաւորանք, և՛ արհամարհանք:
Թւում էր, որ նա խօսք չէ գտնում պատասխանելու
ամուսնու շրտեսնված, շրլսված, կոշտ, կոպիտ և վայ-
րենի խօսքերին:

Փոթորիկի առաջին պտոյտը անցել էր: Ամենա-
ծանիր խօսքը արտասանվել էր: Պեօտր Սոլոմոնիչը
բռունցքները բաց արաւ և շարունակեց մի քիչ հան-
գարտ եղանակով: Նա ասաց, թէ դիմէ իւր կնոջ

Նմանների սովորութիւնը՝ Այս, տիկինը կըզարմանայ կեղծ կերպով, կըդոռայ, լաց էլ կըլինի, կերգվի էլ, բայց նրա համար միենոյնն է, ճշմարիտ է թէ սուտ, անում է տիկինը թէ չէ, բաւական է, որ մարդիկ խօսում են, բաւական է, որ Պեօտր Սոլոմոնիչը լըսում է:

—Ախար ինչ ես լսում, ինչ,
—Չըդիտես համ, խեղճ, ողորմելի, անմեղ կնիկ:
—Ո՞վ է խօսում, ինչ են խօսում, ասա էլի, ասա, որ ես էլ իմանամ:

—Ինձ համար միենոյնն է, ով որ էլ խօսի... Տէր Աստուած, Տէր Աստուած, այն էլ... համ, հիմայ եմ հասկանում, թէ ինչու սիրտս չէր կալչում, ինչու առում էի...

Այստեղ տիկինը հասկացաւ մնացեալը, որ գեռ նրա համար կասկածելի էր: Բայց նա արդէն ուշքի էր եկել և իշխում էր իրան լիովին: Այժմ եթէ Պեօտր Սոլոմոնիչը մարմնացած վրէժ դառնար, դարձեալ չէր կարող սոսկալի լինել նրա համար:

Անշարժ, անվրդով նա կանգնած էր մարդու առջեւ և խրոխտ կերպով նայում էր մերթ նրա նորից սեղմված բռունցքներին, մերթ կատաղի աչքերին:

—Ճարմանում եմ,—արտասանեց նա հանդարտ եղանակով, մինչև անդամ քմքածիծաղ տալով,—զարմանում եմ, որ չէք խփում: Խփեցէք էլի, ինչու նք սպասում, ես պատրաստ եմ ամեն տեսակ վիրաւուրանք ստանալ: Վերջացրէք, քանի որ սկսել էք, ես սպասում եմ:

—Ուրեմն ճշմարիտ է, ասա, անպատկառ, ճշմարիտ է:

Տիկինը խորին յանդիմանութեամբ և զզուանքով գլուխը երերեց: Ապա յանկարծ նրա դէմքը ընդունեց հպարտ արտայայտութիւն: Նա յօնքերը վեր քաշեց, գլուխը բարձրացրեց և, ուսի վրայով ծուռ նաշելով մարդու երեսին, ասաց, եթէ նա կըշարունակի այնպէս մոռանալ ինքն իրան, եթէ մարդավարի չի խօսիլ, այս րոպէին դուրս կըդնայ և այլ ևս չի վերադառնալ:

—Գնամ, գնա էլի, կորիր այնպէս, որ փոշիդ էլ չըմնայ իմ տանը:

Տիկինը բարձրաձայն ծիծաղեց: Ի՞նչ զուարճալի բան, նրան արտաքոռում է մարդը. շատ լաւ, շատ գեղեցիկ, նա կըդնայ, իսկոյն, հէնց այս րոպէիս: Բայց հասարակութեան առաջ նրա ողատուի մասին պատասխանատու կըլինի Պեօտր Սոլոմոնիչը Ուրեմն Տէրը նրա հետ:

Եւ տիկինը մի քանի քայլ արեց դէպի դռները, խրոխտ, հաստատ և անշեղ քայլեր:

Պեօտր Սոլոմոնիչը կարծեց, թէ նա կարող է գնալ, կըդնայ և, իրաւ, երբէք չի դալ: Նա իւր ճակատը շփեց և, ծանր հառաջելով, նայեց նրա ետեից:

—Կաց, —ասաց յանկարծ, —կաց, ասելիքս ասեմ, յետոյ գնա ուր որ ուզում ես: Կանգնիր, ասում եմ, կարող է պատահել, որ ես... այս, ինչ զիտեմ, խելքս կորցրել եմ...

Տիկինը, ձեռը դրան բանալիի վրայ դնելով, կանդ առաւ և հպարտութեամբ նայեց նրան:

—Ես պահանջում եմ, որ դու բացատրութիւն տաս հէնց այս րոպէիս, —շարունակեց Պեօտր Սոլոմոնիչը:

—Ես պահանջներ չեմ կատարում։
Նա առաջ եկաւ և սկսեց ինչոր որոնել իւր
տուալէտի սեղանի վրայ, շարունակելով։

«Պահանջում եմ, կարծես, ես ստրուկ եմ կամ
աղախին։ Դուք միտյն կարող եք խնդրել, այն էլ խա-
ղաղ կերպով, մարդավարի։ Խըղատասխանեմ, ինչու
չե, ես պատասխանելուց չեմ վախենում։»

Նա դտաւ մի արկղիկ և սկսեց արագ արագ
մատներով խառնել նրա մէջ, միենոյն ժամանակ,
շունչը կարգած արտասանելով։

—Ներս է մտնում և գժի պէս դուռում։ Եթէ
ես մի վախկոտ կնիկ լինէի, պէտք է տեղն ու տեղը
սարսափից մեռնէի։

—Իսկ եթէ իմ տեղը մի ուրիշը լինէր, նա, ա-
ռանց գոռալու, քեզ տեղն ու տեղը կըսպանէր, ո-
րովհետե...

Պեօտր Սոլոմոնիչը մի վայրկեան կանդ առաւ-
ծիկնը նրա փոխարէն շարունակեց։

—Որովհետե ես խաբերայ եմ, չէ, անամօթ եմ,
անպատկառ, այնպէս չէ։ Դուք ասում եք, թէ խօսում
են, ինչ են խօսում... Ինձ բամբասում են, այնպէս
չէ, այսինքն,—պարզ խօսիր էլի, ինչու ես թագ-
ցնում,—ասում են, որ ես լաւ կնիկ չեմ, հաւատա-
րիմ չեմ։ Դա ինձ համար նորութիւն չէ։ Մի զարմա-
նաք, մի վեր թռչէք, հանդիսան նստեցէք ու լսեցէք։

Եւ տիկինը շարունակեց հանդարտ հոգով, սառն
կերպով, տրամաբանօրէն «բացատրել»։ Այն, մարդ-
կանց բամբասանքը նոր բան չէ նրա համար։ Բայց
ինչ է կարծում Պեօտր Սոլոմոնիչը, չըպիտի խօսեն,
չըպիտի բամբասեն։ Ո՛չ, ընդհակառակը, զարմանալի

կրլինէր, եթէ չըբամբասէին։ Թող լաւ մտածի Պեօտր
Սոլոմոնիչը և կըտեսնի, որ աշխարհի երեսին ոչ մի
կնոջ այնքան լաւ չէ սազում զրաբարտութիւնը, որքան
նրա կնոջը։ Ուրիշ բանի մասին չէ ասում տիկինը,
կարելի է Պեօտր Սոլոմոնիչը շատ խելօք է, շատ
կրթված է։ Բայց տարիքը, Տէր Աստուած, տարիքը։
Ինչու է Պեօտր Սոլոմոնիչը վրդովվում, խօմ նրա ծե-
րութիւնը թագցնելու բան չէ, ինչպէս և թագցնելու
բան չէ նրա կնոջ երիտասարդութիւնը և գեղեցկու-
թիւնը։ Ի՞նչ կըմտածի Պեօտր Սոլոմոնիչը, եթէ ինքը
մի այդպիսի զոյգ տեսնի մի տեղ։ Նա իսկոյն կասի.
«Երեկի, հայր ու աղջիկ են։ Խակ եթէ իմանայ, որ
մարդ ու կնիկ են, կասի։ «Ճնողները խեղճ աղջկան
փողի համար ծախել են այդ պառաւելն»։ Հիմայ, բան
է, մի օր մի հանդիսում, թատրոնում կամ հէնց փո-
ղոցում Պեօտր Սոլոմոնիչը այդ պառաւ մարդու ջա-
հիլ կնկան տեսնի մի երիտասարդի հետ, չի մտածիլ,
թէ կնիկը անխիղճ է, նա ողորմելի ծերունուն դա-
ւաճանում է։

—Զէիք ասել, օօօ, այնպէս կասէիք, որ... Դա
հերիք չէ, դուք այն ժամանակ էլ կըբամբասէիք, եթէ
այդ պառաւ մարդու ջահիլ կնոջը տեսնէիք իւր ամե-
նամօտիկ, ջահիլ, գեղեցիկ, կրթված, խելօք, սրախօս
աղդականի հետ.,.

Պեօտր Սոլոմոնիչը մի զօրեղ շարժում գործեց և
հառաջեց։ Բայց կնոջ խօսքը չընդհատեց։ Տիկինը շա-
րունակեց։

—Կրկեսում եմ, եթէ այդ ամենամօտիկ աղդակա-
նի հետ էլ տեսնէիք, կասէիք։ «միմեանց սիրում են»
կամ, էհ, մի ուրիշ, աւելի վատ բան։ Զեր խիղճը ձեղ

չէր տանջիլ, որովհետեւ գուք ինչ գիտէք այդ պառաւ մարդու ջահիլ կնոջ սիրտը: Ինչ գիտէք, որ նա ոչ միայն չէ խարում իւր պառաւ, ոյժից ընկած, սպիտակած, մէջքից կռացած, ատամները թափված մարդուն, այլ մինչև անդամ մտքում ծաղրում էլ է բոլոր երիտասարդներին: Ինչ գիտէք, որ այդ ջահիլ, գեղեցիկ կինը միայն մէկին է պատկանում աշխարհի երեսին, այսինքն իւր զաւակների հօրը, իւր օրինաւոր առուստուն: Վայ մեզ, վայ մեզ, վայ խեղճ կանանցու, մեր դրութիւնը ահա այսպէս է: Մարդիկ մեզ պը ըինց իպն երից զուրկ են համարում: Կարծում են, որ մենք երեխաներ ենք, եթէ մեր առաջ կարմրացրած երկաթ պահեն, կասենք ոսկի է, կըվերցնենք: Չեն մտածում, որ մենք հասկանում ենք, թէ երկաթը մեր ձեռքը կայրի, մեր գեղեցիկ մարմնի վրայ կըդնի մի վէրք, մի արատ, որ ոչինչով, ոչինչով չէ կարելի մաքրել: Յոյս ունեմ, որ գուք իմ ասածը հասկացաք, ուրիշ ասելիք չունեմ, մնացեալը գուք գիտէք...

Որքան այդ վայրկեանին նա Պետր Սոլոմոնիչի աչքում գեղեցիկ էր, որքան խելոք և հրապուրիչ: Բայց և արքան Պետր Սոլոմոնիչը ինքն իւր աչքում ծեր էր, զառամեալ և անարժան այդ գրաւիչ արարածին:

—Կաց, —ասաց նա, տեսնելով, որ կինը, խօսքը աւարտելուց յետոյ, ուզում է գուրս գնալ:

Ի՞նչ, կանդնի, որ նա հայհոյի, գոռայ, «կինոյիր պէս» ձեռք բարձրացնի նրա վրայ: Ոչ, ոչ, տիկինը վճռել է և պէտք է գնայ:

Պետր Սոլոմոնիչը մօտեցաւ նրան մի քանի քայլ, կանգնեց նրա առաջ, նայեց աչքերին: Եթէ Ան-

նայի ասածների կէսը, կէսի կէսը ճշմարիտ է, այն ժամանակ անիծվեն չար լեզուները, որ բամբասում են: Միթէ Պետր Սոլոմոնիչը կարող էր հաւատալ, եթէ ուրիշներից լուծ չըլինէր: Սովորական ժամին նա մտաւ կլուր: Նա կամենում էր մի քիչ թղթախաղ խաղալ: Նա պարտ ուներ էր իր վնասում, յանեկարծ նրա ականջին հասաւ իւր անունը: Նա կանգ առաւ գոների մօտ: Կանանչ սեղաններից մէկի շուրջը նստած էին չորս չարամիտներ և խօսում էին: Խօսում էին նրա մասին այն ամենը, ինչոր կարելի է խօսել մի պատուաւոր մարդու անունը աղքի մէջ թաղելու համար: Նա ականջները վակեց և հեռացաւ: Զար կասկածը նրա արխոնը տակն ու վրայ արեց: Նա ամօթից չը կարողացաւ կլուրում երկար մնալ և շտապեց տուն, խելքը կորցրած, աչքերը արիւն կոխած:

—Ես ձեզ չեմ մեղադրում, —արտասանեց տիկինը, նրա բացատրութիւնը լսելուց յետոյ, —գուք միամիտ մարդ էք, ձեզ ամեն մի երեխայ կարող էր խարել: Ախ, Տէր Աստուած, Տէր Աստուած, ես խարեցայ, ես անամօթ, ես անպատկառ, ես դաւաճան...

Նա սկսեց բարձրածայն հեկեկալ: Պետր Սոլոմոնիչը շտապեց ներողութիւն ինդրել: Նա ձեր է, միամիտ է, նրան խելքից հանեցին, բայց նա այժմ չէ հաւատում, և չի հաւատալ եթէ ամբողջ աշխարհն էլ խօսի:

—Հեռու ինձանից, —գուշեց տիկինը, ձեռով հըրելով նրան, —Ես ձեր վիրաւորանքի պատճառով չեմ լաց լինում, արդար մարդը ոչ մի պատճառութիւնից չէ վիրաւորվում, ես իմ բազգն եմ ողբում...

Դռների միջից ներս ցցվեցին երկու գանդրահեր

փոքրիկ գլուխներ։ Լիզօչկան և Ելեչկան վախեցած դէմքերով նայում էին իրանց բարձրածայն արտասա-
վող մօրը։

Տիկինը արագութեամբ աչքերը սրբեց և մօտե-
ցաւ նրանց, դոչերով։

«Անբազու երեխաններ, ինչ կրթութիւն կարող էք
ստանալ այս տանը...»։

V

Ամառը սկսվել էր։ Դիմաքսեանը գպլոցում գործ
չունէր։ Տնային պարապմունքը թէւ առաջուայ պէս
չէր եռում նրա ձեռքի տակ, բայց այժմ աշխատելու
ցանկութիւն ունէր։ Նրա գլխում յղանում էին նորա-
նոր դաղափարներ, նրա եռանդուն միտքը հանգիստ
չունէր։ Դիտելով հասարակական կեանքի բազմատե-
սակ վատ երեսյթները, նա օր օրի վրայ համոզվում
էր, որ բոլոր այդ երեսյթների հիմնական պատճառը
մի բան է—անհատի բարոյական աշխարհի աղութիւ-
նը։ Նա առում էր, թէ ոչ մի հասարակութիւն չէ
կարող առաջադիմութիւն անել, եթէ նրա մէջ չըկան
բարոյապէս զօրեղ անձինք։

«Բարձրացրեք անհատին, կրկնում էր նա, կը-
բարձրանայ և շրջանը։ Ոչ մի բարեփոխութիւն չէ կա-
րող հիմք գտնել, եթէ նա չունէ ապահով պատնէշ-
ներ։ Այդ պատնէշներն են առանձին անձնաւորու-
թիւնները, զինված մտաւոր և բարոյական ոյժերով։
Հասարակութիւնը կարող է մի որ և է վերանորոգու-
թեան համար պատրաստի հող չունենալ։ Անհատնե-
րը կարող են այդ վերանորոգութիւնը իրանց ուսերի

վրայ պահել, մինչև որ նրանք ամուր պատուանդան
կըպատրաստեն»։

Նրա խորին համոզմունքով լոկ գիտութիւնը գեռ
բաւական չէր՝ մարդկանց հասարակական ուղեցոյց
ջահեր գարձնելու համար։ Անկեղծ հաւատ դէպի
քաղաքակիրթ ապագան, խորին րյա որ և է ձեռնար-
կած գործի յաջողութեան վրայ և անդրդուելի կամք
—ահա այն պայմանները, որ նա պահանջում էր ա-
մեն մէկից, որ ձգտում էր ուրիշներին օգտաւէտ լի-
նել։

«Եթէ դու ուզում ես ծառայել մի գործի—ա-
ռաջ ինքդ պարտաւոր ես կորօրէն հաւատալ այդ-
գործի ճշմարտութեանը։ Եթէ դու յորս չունես քո
ոյժերի վրայ—մի դուրս գալ ասպարէդ։ Եթէ դու
կամք չունես—մի կարծիլ, թէ մազի չափ կարող ես
ուրիշի կամքի վրայ պղպել։»

Այս էր նրա նշանաբանը, և այս էր նա քարո-
զում թէ գրով և թէ բերանացի։ Եւ նրա խօսքերը
ապարդիւն չէին անցնում։ Նրա յորդորանքով կազմ-
վում էր մի ընկերութիւն, որի նպատակը պէտք է
լինէր տարածել եւրոպական գիտութեան տարրերը
ժողովրդի բոլոր խաւերի մէջ։ Նա այժմ շրջապատ-
ված էր բաւականաշափ բարեկամներով, որոնց նա
միշտ, ինչպէս յարատե խթան, գրդում էր գործել։
Աւելի մեծ խրախոյս էր այդ բարեկամների համար
նրա անձնական օրինակը։ Նա այդ տեսնում էր և
զգում։ Ահա ինչու, չընայելով յոդնածութեանը, նա
գործում էր անդադար։ Նա արդէն վերջացրել էր
անցեալ տարի սկսած իւր գրաւոր այն մեծ աշխա-
տութիւնը, որ պէտք է պարզէր նրա գաղափարների ամ-

բողջ աշխարհը: Նա բաց չէր թողնում ոչ մի ընկեռական ժողով, ոչ մի գործ, ուր հարկաւոր էր նրա օդնութիւնը կամ խորհուրդը:

Դպրոցի շրջանաւարտներին նա տուեց մի համառօտ ծրագիր, որով և նրանք պէտք է գործէնին իշրանց շրջաններում, ուր որ լինեն նրանք—դիւզում թէ քաղաքում և ինչ պաշտօն ևս ունենան—ուսուցչական թէ քահանայական: Նրա միտքը միշտ զբաղված էր լուրջ խնդիրներով: Նրա զլուխը դործում էր անընդհատ, ինչպէս մի լարված մեքենայ: Եւ այդ մեքենան երբէք չէր յոդնում, երբէք չէր ձանձրանում: Յոդնում էին միայն այդ մարդու ջղերը, յոդնում էր նա ֆիղիքապէս և ոչ բարոյապէս:

Մի առաւօտ նա իւր սովորական առանձնակի դրսանքից տուն էր վերագառնում: Միքայէլեան ծառագարդ փողոցի վրայ նա հանդիպեց Մաերեանին և բըժիշկ Սալամբէկեանին: Նրանք գալիս էին դէմ ու դէմ մի անձանօթ օրիորդի հետ:

—Լաւ պատահեցինք,—դոչեց Մաերեանը բըռնելով Դիմաքսեանի թեկից, —կաց: Խնդրեմ, ծանօթանաք. օրիորդ Կարինեան, Դիմաքսեան—իմ ամենաթանգարին ընկերը:

Իդէալիստը ստիպեց նրան յետ գառնալ:

—Այս ըսպէիս հենց քո մասին էինք խօսում: Օրիորդին հարկաւոր են մի քանի տեղեկութիւններ, որ քեզանից լաւ ոչ ոք չըդիմէ: Խօսեցէք...

Նա, բժիշկ Սալամբէկեանի հետ յետ կանգնելով, օրիորդին թողեց առաջ Դիմաքսեանի հետ: Յայտնից, որ Կարինեանը մի մասնաւոր վարժուհի է, պատրաստվում է գնալ արտասահման՝ գործնական մանկավար-

ժութիւն սովորելու, որպէս զի յետոյ թիվլիզում մանկական պարտէզ բաց անի: Նա միայն կամենում էր իմանալ՝ ուր աւելի նպատակայարմար է գնալ:

Դիմաքսեանը հաղորդեց օրիորդին անհրաժեշտ տեղեկութիւններ, իւր կողմից աւելացնելով մի քանի խորհուրդներ: Օրիորդը լսում էր նրան ուշադիր և մինչև անգամ ակնյայտ ակնածութեամբ:

Դա մի գունաա արարած էր, նիհար, սակաւ ինչ թուլի գէմքով, խելացի և արտայայտիչ գծերով: Ընդհանրապէս նա ոչ միայն սիրուն չէր, այլ և կարող էր տղեղ համարվել, եթէ չունենար իւր ձայնի և աչքերի մէջ անչափ եռանդի և տոկունութեան հետ մի տեսակ հեղ անուշութիւն: Նա խօսում էր դրական եղանակով, համոզված մարդու պէս, նրա շարժուածները աղատ էին, բայց, միենոյն ժամանակ, ամօթխածութեամբ լի:

Նա Դիմաքսեանի վրայ լաւ տպաւորութիւն գործեց:

—Վերջացրիք,—ասաց Մաերեանը, որ ամբողջ ժամանակ աչքը չէր հեռացնում օրիորդից, —ուրեմն մենք այժմ կարող ենք միասին խօսակցել:

Նա մօտեցաւ օրիորդին և սկսեց նրա հետ քայլել, բժշկին թողնելով յետ: Այս հանդամանքը բաւական զարմացրեց Դիմաքսեանին: Առաջին անգամն էր նա տեսնում Մաերեանին այդքան ուշադիր դէպի մի կին:

Բժիշկ Սալամբէկեանը Դիմաքսեանին հաղորդեց, որ իրան մի նոր պաշտօն են առաջարկում և առաջարկողն է Բարաթեանը: Քաղաքը նոր հիւանդանոց է բաց անում, հարկաւոր է մի բժիշկ դիրեկտօր: Բա-

բաթեանը խօստանում է իւր բարեկամների հետ միասին ամեն ճիգ դործ դնել, որ Սալամբէկեանը ընարվի:

—Տեսնում ես, մարդը այնքան առաջ է դնացել, որ իւր ընկերներին էլ հովանաւորութիւն է ցոյց տալիս: Բայց ես չեմ ուզում այդ հովանաւորութիւնը:

—Ինչու:

—Նրա համար, որ չեմ ուզում ոչ մի բանով պարտական լինել այդ մարդուն:

—Պատճառը:

—Նրա երդը վերջացած է, նա ուխտագրուժ է, գաղափարի դաւաճան:

Դիմաքսեանը զգուշացրեց, թէ անյարմար է մի օտար օրիորդի մօտ այդ բանի մասին խօսելը: Բժիշկը, իւր քայլերը ծանրացնելով, պատասխանեց, թէ օրիորդը շատ լաւ է ճանաչում Բարաթեանին և թէ նրանը այժմ մինչև անդամ աղքականներ են:

—Օ՛, ինչպէս փոխվում են մարդիկ, —շարունակեց նա վրդովված, —երկու տարի չըկայ և արդէն... յիւֆ, ոչինչ չէ մնացել անցեալից, շոգիացել է...

Այն մարդիկ, որոնց գէմ Բարաթեանը պէտք է մաքառէր, այժմ նրա բարեկամներն են դառել: Նա մտերմաքար սեղմում է երէկուայ կանտրաբանտիստի կամ վաշխառուի ձեռը: Նա թե թեք տըւած ման է դալիս խաբերայ կապալառուի հետ, որովհեաւ մտադիր էր ընկերանալ նրան: Այժմ նա ուզում էր կապալներ վերցնել նոր կառուցվող երկաթուղու վրայ:

Բժիշկը՝ ստիպված եղաւ խօսքը ընդհատել, երբ օրիորդը և Մսերեանը, փողոցի ծայրին համելով, յետ դարձան: Մսերեանը ոգեսորված մի ինչոր պատ-

մռվթիւն էր անում օրիորդի համար, և առհասարակ շատ էր զբաղված նրանով:

Փողոցի կիսում օրիորդը ցտեսութիւն ասաց, խնդրելով ամենքին մի օր չնորհ բերել իւր տունը:

—Ես ապրում եմ մեծ մօրս և հօրաքրոջս հետ: Դեռ մի ամիս այստեղ եմ, շատ ուրախ կըլինեմ եթէ դաք,

Բժիշկը դնաց նրան ուզեկցելու:

—Ո՞վ է այդ օրիորդը, —հարցրեց Դիմաքսեանը Մսերեանից:

—Սալամբէկեանի մի մեռած ընկերով քոյրն է: Հաւանեցիր: Գիտես, որ ես կանանց առհասարակ շեմ սիրում, բայց այս մէկը ինձ դուր է գալիս: Արի մի օր միասին այցելենք նրան:

Դիմաքսեանը խօսք տուեց և մի շաբաթ անցած դնաց նրա հետ օրիորդի մօտ:

Կարինեանը ընակվում էր գետի ափում գտնվող միյարկանի մի տան մէջ, որ բաւական բանաստեղծական գիրք ունէր: Տան առջև տարածված էր մի ընդարձակ այգի, որ վերջանում էր գետափին: Բակի վիթխարի ընկուզենիի տակ նստած էր մի զառամեալ սլառաւ, շրջապատված անթիւ հաւերով: Նա, գարիի հատիկները ցրվելով, խօսում էր հաւերի հետ, յահն դիմանելով նրանց ագահութեան համար: Դա կարինեանի տատն էր:

Օրիորդը հիւրերին ընդունեց քաղաքավարի և պարզ կերպով: Նրա հօրաքոյրը տանը չէր, իսկ ինքը, կարի մեքենան առջեւ գրած, պատշգամբի վրայ իւր համար հագուստ էր կարում:

Երեք սերունդների ներկայացուցիչները միասին

ապրելով, յաճախ հայեացքների տարբերութիւնից իշրաբու հետ ընդհարումներ էին ունենում: Այս պատճառով օրիորդի կեանքը մխիթարական չէր այդ շրջանում: Տատը հաշտվել անդամ չէր ուզում այն մըտքի հետ, թէ պէտք է իւր թոռնը, մենակ աղջիկ, ինքնագլուխ զնայ ով դժաէ ինչ երկիրներ: Նոյն մըտքի էր և նրա հօրաքոյրը, որ իւր կողմից աւելի էր դրդուում պառաւին օրիորդի դէմ:

Այս բոլորը պատմեց ինքը օրիորդը, անկեղծարար, առանց իւր դրութիւնից քաշվելու:

—Բայց ինչ էլ լինի, նրանք արդէն համաձայնվել են իմ զնալուս, թէ ամեն օր արտնջում են:

Դիմաքսեանին դուր եկաւ օրիորդի հաստատատակամութիւնը: Ահա, վերջապէս, մի հայ կին, որ ինքնուրոյն է և չէ խսնարհվում կամակոր հնութեան առջև: Նա դովեց օրիորդի նպատակը:

—Թողէք հներին, աշխատեցէք նորերի համար: Շատ անդամ մեռնող սերունդը իւր եսին ուզում է զոհել յաջորդի երջանկութիւնը: Եթէ մենք նրա ամեն քմահաճութիւններին սահտիմնատալ կերպով հըպատակվենք, ոչինչ առաջադիմութիւն չենք կարող անել: Յիշեցէք, թէ ձեր ձեռնարկութիւնը որքան օգուտ պէտք է տայ ապագայ սերնդին, և դուք կըտեսնէք, որ անարդար կըլինէր այդ գեղեցիկ նպատակը զոհել պառաւներին:

Բայց պառաւը ընկառղենիի տակ հաւերի հետ նխառ կազմած տասն էր: Իսկ միւսը, օրիորդի հօրաքոյրը, եթէ պառաւ ածականը լսէր, առանց այլի պէտք է արտաքսէր Դիմաքսեանին: Ահա նա, այրի Մելանիա Բոլումբաշեանը, սանդխով վեր է

բարձրանում: Իսկապէս նրա քառասնեակը վաղուց արդէն անցել է, բայց ովկ կարող է նրան երեսներկու տարեկանից աւելի համարել:

Այրին համարձակ քայլերով մօտեցաւ և թօժվեց Մսերեանի ձեռը: Նրանք արդէն ծանօթ էին:

Նա հագնված էր ժամանակի մօդայով: Ամեն բան նրա վրայ եւրոպական էր, բացի թասակրաւից: Նա գլխարկ չէր հագնում, քաջ համոզված լինելով, որ վիրական գլխակապը աւելի է սաղ դալիս իւր կորրիկ կարմրախայտ երեսին: Նա խօսում էր ուսերէն, արագ-արագ, արհամարհելով քերականական բոլոր կանոնները: Եւ խօսում էր մեծ մասամբ Մըսերեանի հետ, որի երեսին շուտ շուտ ժպտում էր, ծիծաղում: Զգալի էր, որ ողբացեալ այրին չէր հրաժարվել ամուսնութեան գառն լուծը երկրորդ անդամ քաղցրութեամբ յանձն առնելուց, եթէ Մսերեանը բարեհաճէր ուշագիր լինել դէպի նա: Սակայն իդէալիստը այրիի մասին այնքան էր մտածում, որքան և իւր հագուստի մասին: Իսկ նրա հագուստը այսօր մի առանձին բանաստեղծական անկարգութեան մէջ էր: Մաշված և տրորված սև սիւրտուկի կուրծքը փայլում էր սափրավիրի սրոցի պէս, իսկ ձմեռային գունատվարտիկը վաղուց արդէն գրաւել էր փողոցային հընավաճառների ուշագրութիւնը: Աւելի ողբալի էր նրա հին ձեռի շապիկը, որի օձիքը ճմլվել էր և կպել նրա կոկորդին եախուի պէս: Այն ինչ սև փողկապը թըսել էր վղին և այնտեղ նստել երկչոտ ծիծեռնակի նման:

Նա այրիի բարբաջանքին պատասխանում էր «այն», «ինչպէս չէ», «ցը ցը ցը» և այլն հնչիւններով, իսկ

ուշը օրիորդի կողմն էր: Վերջապէս, շաղակը տիկինից ձանձրացած, նա ցըտեսութիւն ասաց և ընկերոջ հետ դուրս եկաւ:

—Հըմ, հաւանում ես,—դարձեալ հարցրեց նա Դիմաքսեանից:

—Որին:

—Ի հարկէ, օրիորդին, միւսը ինչ հօրս ցաւն է:
—Ի՞նչ առեմ...

—Եղբայր պատուական, ես հիացած եմ, իսկ և իսկ եռանդում և տոկուն հայուհու տիպարն է, միայն տաշված, յդկված, հասկանում ես:

—Էլի ոգեորվեցիր:

—Ի՞նչպէս չոգեորվեմ, նորոգիչներից է, հասկանում ես...

Այդ օրից յետոյ Դիմաքսեանը Մոերեանի հետ մի քանի անդամ էլ այցելեց Կարինեանին: Ժամեւրով նախ խօսում էր ու վիճում օրիորդի հետ և հաճոյք էր զգում, տեմնելով, որ նա հասկանում է իրան, ունէ զարդացում և հազիւ է նեղն ընկնում լուրջ խօսուակցութեան ժամանակ: Նա չէր քաշվում օրիորդի մօտ, չէր կաշկանդվում այնպէս ինչպէս Պայիանէի առջև: Նրա մէջ չէր շարժվում օձը, սիրտը հանդիսու էր: Սակայն ինչ և լինէր, որքան ևս Կարինեանը համակըելի լինէր, երբէք և վայրկեան անդամ չէր մոռացնել տալիս նրան այն միւսին, որի պատկերը այնքան ամուռ և այնքան որոշ գլուշմվել էր նրա սրտի մէջ: Կանգնած էր գիշեր ցերէկ այդ պատկերը նրա աշքի առջև, ինչպէս նրա անաջող բազդի ուրուականը և մենութեան մէջ միշտ նրան պատճառում էր այն ծանր թախիծը, որ կարծես, յաւիտեան տիրել էր նրա հոգուն...

Յուլիսի վերջին Դիմաքսեանը ուղեորվեց Անդըր-կովկասի մի մասում ճանապարհորդելու: Նա կամեանում էր մօտիկից ծանօթանալ ժողովրդի բարոյական կացութեան հետ: Բայց ժամանակը շատ էլ չէր ներում: մի ամիս մի քանի տեղեր այցելելուց յետոյ, նա թարմացած վերադարձաւ և եռանդով անձնաւառուր եղաւ իւր զրազմունքներին:

Դպրոցի մէջ բարձրացրել էին նոր աղմուկներ: Շուտով պէտք է ընտրվէին նոր հոգաբարձուներ: Դիմաքսեանի հակառակորդները սկսել էին ծածուկ դորձել: Նրանք մտադիր էին նրա կողմնակից հոգաբարձուներին սկացնել և փոխարէնը ուրիշներին ընտրել:

Նախագահը, որ նրանց աջակիցն էր, գաղանի հրահանդ էր տուել ծխական քահանաներին: Պատուիրված էր եկեղեցական ընտրութիւնների ժամանակ առաջ զցել այնպիսիներին, որ պէտք է նախագահի ուղած մարդկանց քուէ տային:

Հակառակ կուսակցութիւնը հասկացել էր բանի էռութիւնը և բացարձակ յարձակվում էր նախագահի վրայ:

Երկու բանակների մէջ սկսել էր մի ծայրայեղ բանակուր, որի արտայայտիչներն էին երկու միմեանց թշնամի լրագիրներ: Ոչ մէկը չէր ինայում միւսին, երշկու կողմից էլ լավում էին ծանր մեղադրանքներ, ծաղր, հայհոյանք, նոյն իսկ զրազարտութիւններ:

Դիմաքսեանը սկզբում կամեցաւ հեռու պահել իրան այդ կռուից: Սակայն չըկարողացաւ: Նորից նրա

արինը բորբոքվեց, աչքերը վառվեցին, և յարձակվեց ասպարէզ, ինչպէս պատերազմի ծարաւ մի քաջ զինուոր։ Նա մոռացաւ դպրոցը, նա չէր հոգում մի վայրկեան անդամ իւր մասին, նրա մտքօվն անդամ չէր անցնում, թէ կարող է դրկվել պաշտօնից, եթէ յաղթութիւնը թշնամիները տանեն։

Նրա դէմ ասպարէզ էր դուրս եկել և՝ Վէքիւեանը, այս անդամ իւր իսկական անունով և ազգանունով։

«Փաստեր, փաստեր», կրկնում էր փաստաբանը, մոռանալով, որ ինքը ոչինչ փաստեր չէ տալիս հակառակորդին, բացի վիրաւորիչ ակնարկներից։

Մի օր Դիմաքսեանը դարձեալ իւր մասին կարդաց մի ֆէլիետօն, միայն ուրիշ կեղծանունով։ Այս անդամ նրա անձնականին չէին կոչում, խօսում էին նրա դործունէութեան մասին։ Ֆէլիետօնը դրված էր սուր դրչով, զարդարված ճարովիկ կալամբուրներով, և շնորհալի սրախօսութիւններով։

Առաջին անդամ Դիմաքսեանը զգաց, որ հանդիպում է ոչ թէ մի ստոր սովորակողի, այլ մի զօրեղ հակառակորդի, որի հետ կոռուելը շատ էլ դիւրին բան չէ։

Արինը խփեց գլխին։ Մի չարագուշակ ժպիտ աղաւաղեց նրա բերանը։ Առանց երկար մտածելու, նա ազեղը լարեց գէպի այն կողմ, ուսկից դիտէր, որ դալիս են վարադուրված հարւածները։

Ան, բաւական չէ Բարաթեանի դործով արածը, դրչով էլ է ուղում նրա հետ մրցել։ Դա առանց նպատակի չէ։ Անշուշտ նա հոգաբարձու ընտրվելու միտուններ ունէ։

Այսպէս էր մտածում Դիմաքսեանը, և նա չը սխալ-

վեց։ Բարաթեանը ընտրվեց Եկեղեցական պատգամաւոր։ Մի քայլ արված էր, մնում էր միւսը, և նա արդէն Դիմաքսեանի իշխանաւորն էր—հոգաբարձու։

—Կարծեմ, մենք կը յաղթվենք, —ասաց մի օր Դիմաքսեանին նրա կողմնակից հոգաբարձուներից մէկը, —Ամբակում Աֆանասիեվիչը շատ է աշխատում։ Երեկ լայնաթեր նրա մօտ ճաշի է եղել. նրանք գործում են ձեռք ձեռքի տուած։

Այն ժամանակ երկու հակառակորդ բանակները պաշարեցին ընտրողներին։ Շատերի գոյնը արդէն որոշ էր, քաշել նրանց մի բանակից միւսը—դժուար էր։ Հարկաւոր էր գրաւել չէղոքներին, և ահա սրանց վրայ յարձակվեցին երկու կողմից գիշակեր ագուաների պէս։ Գործ էին գրվում քաղցր ժպիտներ, սիրալիր բարեներ, սպառնալիքներ, խոստումներ։

—Նու կու ջան Փարսադանօվիչին իմ խորին յարդանքն եմ վկայում։ Հըմ, ամսիս քսանուվեցին ընտրմամ ենք։

—Ընտրում ենք, ոնց չէ, ընտրում ենք։

—Նու կու ջան Փարսադանօվիչ, չըմոռանաք, որ մենք հին քաղցրցիներ ենք, դուք մերն էք։

—Վահ, հեստի չօրնիյ զակատիտ անիմ վուր է *)...

Կոփել քանի գնում սաստկանում էր և խեղճ նուկուջաններին այնքան քշեցին այս բանակից այն բանակ, որ ընտրութեան օրը նրանք ներկայացան միանդամայն չարդուփշուր եղած խելքով։ Պատարագի ժամանակ մի քարող ընտրողներին բացատրեց նրանց

*) Այսինքն՝ այնպէս սկացնեմ որ...

պարտքը եկեղեցու և ազգի առաջ՝ «Քանդի պէտք է խղճի մտօք և անաշառութեամբ» տային իրանց քուէները:

Նոյնիւ կրկնվեց և՛ բնտրութիւնների դահլիճում:

Ամբակում Աֆանասիեվիչի բանակը յաղթեց: Դիմաքսեանի կողմնակից հոգաբարձուներից չորսը սեացան: Փոխարէնը ընտրվեցին Ամբակումը, Բարսաթեանը, Վէրիեանը և մի ուրիշը սրանց բարեկամներից:

Բարախթեանից անմիջապէս շտապեց տուն և ուրախ ուրախ համբուրեց իւր միամսական ժառանդին:

Գայլիանէն նոր էր վերկացել անկողնից, ևա գունատ էր, սիհար, անզօր: Այլ ևս անցել էին կապրիզները: Այժմ նա խաղաղ էր, հանգիստ, գոնէ արտաքուստ այդպէս էր երեսւմ:

Ամբողջ օրը նա չէր հեռանում նորածնի օրորա-
նից: Համբուլում էր նրան քնքուշաբար, խօսում էր
նրա հետ, հարցեր էր տալիս և ինքը նրա փոխարէն
պատասխանում: Նրա աշխարհը այժմ ամփոփված էր
այդ փոքրիկ արարածի մէջ, և ուրիշ ոչ մի բան նրան
չէր հետաքրքրում: Նա մոռացել էր նոյն խակ իւր մըշ-
տական կասկածները, արխին ու մարմին՝ գարձած կաս-
կածները ամուսնու վերաբերմամբ:

Տիկին Բախտամեանը երբեմն այցելում էր սրաս:
Երեխայի մկրտութեան օրը նա հետք բերել էր ան-
թիւ ընծանելու: Առհասարակ նորածինը երկու տիկին-
ների մէջ ձգել էր մի նոր բարեկամութիւն: Միայն
տիկին Բախտամեանի և Բարաթեանի մէջ երեւմ էր
մի անհասկանալի փոխադարձ սառնութիւն: Գոնէ այդ-
պէս էին նկատում մի կողմից Գայիանէն, միւս կող-
մից—Պեօար Սոլոմոնիչը:

Ծերունին իւր կնոջ հետ այլ ևս նախանձի տեսարաններ չեր սարքում: Արդէն բաւական պատժվել էր այնօրուայ իւր շտապ մեղադրանքի փոխարքն: Նա զգում էր, որ շատ կոշտ վարպեց կնոջ հետ և մըսքում հայհոյում էր շար բամբասանէրներին: Սակայն, միևնոյն ժամանակ, կասկածը արմատախիլ չեր եղել նրա մէջ: Այժմ նա տանջվում էր լուռ, առանց արտայայտելու իւր սրափ մէջ ըուն դրածը:

Յաճախ նա մենակ, առանձնացած իւր սենեակում, մտածում էր ամուսնական կեանքի դառնութիւնների մասին։ Նա մեղադրում էր ինքն իրան։ Տասը տարի էր նա միշտ նախանձում էր, միշտ կասկածում, միշտ լարված գրութեան մէջ էր։ «Միթէ այդ կեանք է։ Ոչ, ոչ, տանջանք ու Աստծու պատիժ է», կրկնում էր նա։

Միւս կողմից նա սիրում էր Աննային, ինչպէս մի կենդանի, վարդուտն պատանի, և ցաւում ու մորմոք-վում էր, որ վաղուց վաղուց կորցրել էր իւր Երիտա-սարդութիւնը։ Իրաւ, միթէ նա ինքը չըգիտէր, որ Աննայի ընկերը չէ, որ ամօթէ մինչև անգամ միթա-ռամած ծերաւնու մի այդպիսի թարմ կին ունենալ։ Բայց, էհ, ինչ արած, թող նախանձը միշտ տանջէ նրան, միշտ չարչարէ, միայն թէ Աննային նրա ձեռ-քից չըխլեն և միայն թէ Աննան իննայի նրա ընտա-նեկան պատիւր։

Իսկ Աննան նրա հետ վարդում էր սառն, խօսում էր միշտ «լուք»-ով, այն էլ խօսում էր այն ժամանակ, երբ անհրաժեշտութիւնը ստիպում էր: Նա զիտէր, որ իւր պազութիւնով տանջում է ծերունուն և հէնց գիտմամբ շարունակում էր, անուշադիր թող-

նելով նրա փաղաքշանքները, աղերսանքները և պէս
պէս խոստումները:

«Թողէք ինձ, թողէք իմ յիմարութեան պատիմը
քաշեմ», կրկնում էր նա միշտ:

Իսկ յիմարութիւն նա համարում է ծերունու հետ
ամուսնանալը, մի ծերունու, որ թունառում էր նրա
կեանքը «անտեղի կասկածներով, անտեղի զրաբարառու-
թիւններով»:

Մի օր Պեօտր Սոլոմոնիչը վճռեց իւր կնոջը մի
սիւրպիզ անել, որպէս զի, վերջապէս, ձեռք բերի
նրա հաշտութիւնը:

—Ո՞նիչկա, երբ է ձեր ընկերութեան տարեդար-
ձը, —հարցրեց նա:

—Ես ինչ գիտեմ երբ է, ես ձեռք եմ քաշել ըն-
կերութիւններից էլ, մարդկանցից էլ, ես դժբաղդ-
կին եմ:

—Դէ լաւ, բաւական է, ես քեզ մի լաւ բան
պէտք է ասեմ:

Տիկինը կամեցաւ սառն լինել, բայց միենոյն ժա-
մանակ, չըկարողացաւ զսպել կանացի հետաքրքրու-
թիւնը: Նա աչքի տակով ծուռ ծուռ նայեց ամուսնուն:

—Ռւզում եմ քո անունով, —արտասանեց Պեօտր
Սոլոմոնիչը, —քո անունով ընկերութեանը հաղար բուք-
լի բաշխել, որ գու պատուաւոր անդամուհի լինես:

Սնափառ տիկինոյ համար, արդարեւ, դա մի վե-
րին աստիճանի ախորժելի սիւրպիզ էր: Մինչև այդ
ժամանակ կանանց ընկերութիւնը ոչ մի պատուաւոր
անդամուհի չունէր, ուրեմն նա առաջինը կարող էր
լինել: Բայց նա թաղցրեց իւր ուրախութիւնը, ոչինչ
չասաց և միայն հառաջեց:

Տարեդարձի օրը Պեօտր Սոլոմոնիչը փողերը համ-
բեց կնոջ առջև: Վերջապէս, Աննան թոյլ տուեց նրան,
որ համբուրի իրան և այսպիսով հաշտվեց ամուսնու հետ:

VII

Բարաթեանի և Վերիեանի հոգաբարձու ընտր-
վելը, հարկաւ, աղդեցութիւն գործեց Դիմաքսեանի
վրայ նա զգաց, որ այժմ նրանց հետ պէտք է ընդ-
հարումներ ունենայ երես առ երես:

Կռուից նա չէր վախենում, չէր մտածում և՛ իւր
պաշտօնի մասին: Նրան անհանդստացնում էր աշա-
կերտների դրութիւնը և առհասարակ դպրոցի վիճա-
կը, այն դպրոցի, որ արդէն կրում էր իւր վրայ նրա
գաղափարների դրոշմը: Այսուհետեւ, ուրեմն, նրա յա-
րուցած ամեն մի խնդիր պէտք է հանդիպի Բարա-
թեանի ու Վերիեանի կամքին և յետոյ իրագործվի
կամ ոչ: Արդէն նա անհարթելի էր համարում իւր և
նրանց մէջ բացված վիճը: Պէտք է այսպէս թէ այն-
պէս կռուել: Պէտք է մէկը միւսին զլորի—այդ ան-
կատկած է: Միենայն շրջանում, միենայն ժամանակ եր-
կու հակադիր ձգտումներ չեն կարող հաւասար հա-
մակրութիւն վայելել և իրանց գոյութիւնը շարունակել:

Առաջ այդ մարդիկ հաշտ էին, գաղափարակից
էին, ընկեր էին նրա հետ: Նրանք ուխտել էին միա-
սին գործել, այժմ բաժանված են: Կեանքը տուեց
մէկին մի ուղղութիւն, միւսներին այլ ուղղութիւն:
Գուցէ մաքերի այս հակադրութիւնը առաջ էլ կար,
միայն չէր արտայայտվում: Այժմ ասպարէզ կայ, նա
երեան է գալիս: Բարաթեանը և Վերիեանը աշխա-

տում են խոչնդոտ լինել նրա գործունէութեանը, ծաղրում են, հալածում, կընշանակէ նրանք թշնամիներ են:

Սակայն նոր հոգաբարձուները դեռ լուռ էին, չընայելով, որ երկու ամիս էր արդէն հաստատվել էին իրանց պաշտօնում: Բարաթեանը ուսումնասիրում էր հանդամանքները, նարաթը մի կամ երկու անդամ այցելում էր գոլրոյը: Դիմաքսեանը նրան ընդունում էր զաշտօնական ձեռվ, խօսում էր «դու»-ով, բայց սառն և առանց ընկերական մտերմութեան: Դոլրոցի տնաենսականի և վարչականի վերաբերմամբ նոր հոգաբարձուին տալիս էր մանրամասն տեղեկութիւններ, բայց երբ հարց էր լինում ուսումնականի և բարոյականի մասին, խոյս էր տալիս պատասխաններից և առհասարակ չէր ուզում խօսքը երկարացնել: Նա կամենում էր հէնց առաջինքայլից նոր հոգաբարձուին զգալ տալ նրա իրաւոնքների սահմանը: Բարաթեանը, հարկաւ, հասկանում էր նրա միտքը: Նա ոչինչ չէր ասում, բայց մտքում կրկնում էր.

«Եթէ դու ուզում ես քեզ ցոյց տալ, ես էլ չուտով ինձ ցոյց կըտած»:

Մեծ պասի առաջին օրերն էին: Տրամադրութիւնը կրօնական էր, դոլրոցը—հոգեոր, Հոգաբարձուներից երկուսը եկեղեցական էին, մէկը եպիսկոպոսի եղբայր, երկուսն էլ երէցփոխներ: Բարաթեանը մի նիստում թեթև կերպով հարց բարձրացրեց արդեօք աշակերտների կրօնական կրթութեան վրայ բաւարար ուշադրութիւն դարձնում են դպրոցում:

Նախադահի կարմիր և առոյդ դէմքի վրայ խաղաց գոհունակութեան ժպիտը: Նա իւր երկայն, թիա-

ձեւ, չալ միրուքը շփելով, յայտնեց, թէ այդ հարցով ինքն էլ զբաղված է: Աւելացրեց, թէ խնդիրը վերին աստիճանի կարեոր է, բայց ինքը չէր կամենումնախակին հոգաբարձութեանը առաջարկել, սպասում էր նորերի ընտրութեանը: Այժմ նա կարող է խօսել: Եւ սկսեց խօսել.

—Հրամանոցդ յայտ է, որ մեր դպրոցները գտանին ի ներքոյ հովանաւորութեան հայաստանեայցս առաքելական եկեղեցւոյ և նորին Վեհափառութեան Տեառն Տեառն սրբազնագոյն կաթողիկոսին ամենայն հայոց: Այսպէս: Գերազնիւ պարոնայք, մենք ժամու և ի տարաժամու պարտ ենք երախտապարտ և ջերմեռանդագոյն հոգով զգացված լինել առ մերս առաքելական եկեղեցի հարսնացեալն ի Տէրն Մեր Յիսուս Քրիստոս և նորին աստաւածընարեալ Պետն, յազագս կենաց որին աղօթեմ ի տուլնջեան և ի գիշերի: Այսպէս: Սակայն իմ հոգեոր տկար աչօքս այս վերջին տարիներ այլ և այլ խուսափումներ նկատում եմ ի մեծու և փոքրունս, իսկ առաւելագոյն չափով ի մերում դպրանոցի: Յուսամ առ Ամենաբարձրեալն, որ այսուհետեւ այդ զանցաւութիւնները վերացվին, քանզի մեր հոգաբարձութիւն այսօր, յօւրախութիւն սրտի իմոյ, կազմեն ձեղի պէս գերաշնորհ, պայծառամիտ, խոհունակ, հանճարազարդ և պարկեշտասուն անձինք: Այսպէս: Պարոն քարտուղարէն կրխնդրէի արձանագրել այս իմ համեստագոյն խօսք—ատենաբանութիւն:

—Չեր ասածը միանդամայն արդարացի է: Մեր աշակերտների մէջ պէտք է զարգացնել բարոյականութիւն, մանաւանդ կրօնասիրութիւն: Աղեմտեան եւրոպայում կրօնի գասաւանդութիւնը շատ յարդելի

տեղ է բռնում դպրոցներում։ Ուրեմն այն, ինչոր ընդունված է լուսաւորված ազգերի մէջ, կարծում եմ, չըպիտի արհամարհվի մեղ նման մի փոքրիկ ազգի կողմից։

—Պարոն քարտուղարէն կըխնդրէի շնորհազարդ պարոն Բարաթեանի խօսքերը արձանադրել։

—Այդ ճշմարիտ է, մանաւանդ որ մեր դպրոցը հոգեոր

—Պարոն քարտուղար, բարեծնունդ Ամբակում աղա Սարդարիեանի խօսքեր մէկիկ-մէկիկ թարդմանեցէք ու շարադրեցէք։

—Բացի դրանից, մենք նախ և առաջ կրօնական աղդ ենք և եկեղեցուց աւելի ոչինչ չունենք։

—Պարոն քարտուղար, ուշի ուշով գիտեցէք ողջախոհ պարոն Վէքիլեանի տսածներ։ Իս, հեր օրհնած, ինչ ես Բեթանիացի բորոտի պէս քինթդ քուրում։ Այսպէս, գերազնիւ պարոնայք, խնդիրը եզրափակենք։ Ըստ իս՝ վաղը մեր մեծապատիւ պարոն տեսչին յայտնելու է այս մեր որոշում։ Շնորհազարդ պարոն Բարաթեան, կարծեօք, այս պարագը ձեր վրայ դնելու է, քանիզի, եթէ չեմ սխալվում, դուք էք հերթակալը։ Պարոն քարտուղար, արձանադրեցէք մեր որոշում այսպէս։ «Առաջարկեալ եղիցի վերատեսչին պարոն Արսէն Մարգարեան Դիմաքսեանի՝ յարդել զկրօն ըստ շափու պահանջման հոգաբարձութեանս և զսանս դպրանոցի հանապազօրեայ առաջնորդել յեկեղեցի անձամբ»։

Հին հոգաբարձուներից մէկը, որ նորից ընտրվել էր, նկատեց, թէ տեսչի համար վիրաւորական է այս տեսակ որոշում «յարդել զկրօն», քանի որ նա առանց

այդ էլ յարդում է կրօնը։

Նախադահը խնդիրը քուէարկեց, և ձայների ճընշող մեծամանութեամբ նրա որոշումը ընդունվեց։

Հետեւեալ օրը Բարաթեանը Դիմաքսեանի մօտ կարդաց արձանադրութիւնը։ Մի արհամարհական ժպիտ փոփոխեց տեսչի գէմքը, յետոյ նրա կրծքից թռաւ մի կծու ծիծաղ։

—Ինչո՞ւ ես ծիծաղում։

—Նրա համար, որ քիչ է մնում ինձ հերետիկոսութեան մէջ մեղադրէք։ Լոված բան է այդ տեսակ որոշում մտցնել մի պաշտօնական արձանադրութեան մէջ, որի տակ ստորագրել են տասնումէկ հասարակական ներկայացուցիչներ։ «Յարդել զկրօն»։ Ասա խնդրեմ, երբ եմ ես արհամարհել կրօնը։

—Ոչ ոք չի ասում, թէ արհամարհել ես, միայն այսպէս դրված է։ Դու գիտես, որ դպրոցը հոգեոր է։ Յետա՞յ։

—Ուրեմն զարմանալի բան չըկայ այս որոշման մէջ։

—Զարմանալին այն է, որ այդ կրօնապաշտական դատավճռի տակ ստորագրել եք դու և Վէքիլեանը։ Դա բաւական չէ, հարցը մինչեւ անգամ դռւ ես զարթեցրել։

—Ես զարթեցրել եմ մի շատ ժամանակակից հարց։

—Այս Բարաթեան, ինքդ էլ շատ լաւ գիտես, որ կեղծում ես, որ այդ սուտ է, չես հաւատում, ծիծաղում ես մաքում։

—Միթէ դու համաձայն չես, որ պէտք է աշակերտների մէջ կրօնական զգացմունք զարթեցնել։

—Զգացմունք և ոչ փարիսեցութիւն։

—Ասում են, աշակերտներին թոյլ չես տալիս եկեղեցի գնալու:

—Սուտ են ասում: Ես երբէք նրանց միտքը և զգացմունքը չեմ բռնաբարում:

—Բայց չի կարելի պատանիների զգացմունքները թողնել առանց որ և է ուղղութեան:

Դիմաքսեանը զայրացած նայեց ընկերոջ երեսին: Նրան թուաց, թէ իւր առջև կանգնած է մի սուտ ճգնաւոր և ոչ մի դիպլոմաւոր երիտասարդ: Նա ասաց, թէ ոչ մի զգացում—լինի նա կրօնական թէ ուրիշ—չի կարելի բռնի ուժով արմատացնել ուրիշի սրտում: Պատիմը, երկիւղը, նոյն խոկ խրառը չեն կարող փոխել սաների բարոյական կազմը: Մարդու ուրատում պատուաստվում և արմատ է ձգում այն դաշտարը, որ ազատ սիրելուց է առաջանում: Վերջապէս, բռնութեամբ և արուեստական կերպով պատւաստված զգացումը շատ անդամ հակառակ հետեւանք է ունենում:

—Ուրեմն, դու հերքում ես կրթութեան նշանակութիւնը, —հարցրեց Բարաթեանը, ժպտալով, —դու չես ընդունում զեկավարի կամ առաջնորդող մարդու ազգեցութիւնը:

—Ազգեցութիւն և ոչ բռնութիւն: Ի՞նչ ես կարծում, պատանիների համար ո՞րն է ազգու՝ սպառնալիքը, թէ կենդանի օրինակը: Եթէ դուք կրօնի անունով աշակերտին ստիպում եք եկեղեցի գնալ, ի՞նչ կը մտածի նա, տեսնելով, որ դուք ինքներդ եկեղեցի չեք յաճախում, փախչում էք նրանից, ինչպէս մի աւելորդ բռնից: Վերջապէս, ի՞նչ կարիք կայ երկար վիճելու, իմ պատասխանը մէկ է, ես համաձայն չեմ,

որ հոգաբարձութիւնը խառնվի դպրոցի ուսումնական-բարոյական մասի մէջ: Նա իրաւունք էլ չունէ:

Դիմաքսեանը քանի գնում, այնքան աւելի գըրգովում էր և ձայնը բարձրացնում: Բարաթեանը խօսում էր սառն, անվրդովէ Հէնց այդ էր, որ աւելի բորբոքում էր նրա հակառակորդին:

Մի բան շատ պարզ էր Դիմաքսեանի համար—ընկերոջ բռն նպատակը: Ուստի նա որոշ և դրական եղանակով ասաց:

—Ես չեմ ընդունում ձեր որոշումը:

—Այժմ:

—Այս:

Եւ գուրս եկաւ սենեակից վրդովված: «Ահա ինչ ծայրից են սկսում,—ասում էր նա մտքում,—քիչ է մնում ինձ անսաստուած հրատարակեն»:

Նա համոզված էր, որ իւր բոլոր պաշտօնակիցները նոյնպէս կըվրդովվեն հոգաբարձութեան դեմ: Բայց որքան մեծ եղաւ նրա զարմանքը, երբ նրա զայրացումը հանդիպեց ընդհանուր լուսվթեան:

Բոլոր ուսուցիչները նայեցին միմեանց երեսին: Կարծես, ամեն մէկը սպասում էր, որ միւսը խօսի: Այդ լուսվթեան մէջ Դիմաքսեանի համար կար վիրաւորական, միենոյն ժամանակ, ատելի մի բան: Դա այն ընդհանուր երկիւղն ու տատանումն էր, որ երեւում էր ամենքի, նոյն խոկ իւր կողմնակիցների, դէմքերի վրայ: Նա ասաց, թէ հերթակալ հոգաբարձուին յայտնել է, որ հոգաբարձութիւնը իրաւունք չունէ խառնվել դպրոցի ուսումնական-բարոյական դորձերի մէջ: Նա յոյս յայտնեց, որ ամենքը համաձայն են այս մտքի հետ և հարկաւոր եղած ժամանակ նրան

ձայնակից կըլինեն:

Համբ լոռւթիւնը Դիմաքսեանի միակ պատասխանը եղաւ:

—Ինչո՞ւ էք լոռւմ,—գոչեց նա:

—Սկզբունքով համաձայն ենք,—խօսեց, վերջապէս, նրա կողմանկիցներից մէկը,—բայց եթէ...

—Եթէ:

—Եթէ, հոգաբարձութիւնը կամենայ խառնվել, մենք ինչ կարող ենք անել: Նա իշխանութիւն է, մենք ստորագրեալներ...

Գերմանական մանկավարժ Ինիաթեանը քննի տակ ծիծաղեց, ծաղրաբար և անհոդ քայլերով դուրս եկաւ: Միւսները ոչինչ չառացին:

Խնդիրը շատ պարզ էր Դիմաքսեանի համար: Մի վայրկեան նա կարողացաւ իրան զապել և հեղնաբար ասաց.

—Զեր ասածը ճիշդ է. նրանք իշխանաւորներ են, մենք ստորագրեալներ, այսինքն անբան ստրուկներ: Ուրիշ ոչինչ, պարոններ, դնացէք զանդակը դասի է հրաւիրում:

VIII

Նա մնաց միայնակ ուսուցչական սենեակում, միայնակ իւր բոլոր սկզբունքների և համոզմունքների հետ: Կրկին զգաց, որքան դժուար է մարդկանց հաւատ ընծայելը: Ուրեմն ոչ ոք ձայն չըբարձրացրեց անարդար ստնձութեան դէմ, ոչ ոք չըպաշտպանեց և շըպիտի պաշտպանի նրան: Կընչանակէ՝ նրա կողմանկիցները հասկացել են հակառակ կուսակցութեան ոյժը:

«Նախ, վախ, միշտ մի կտոր հացի համար վախ, ահա այն հրէշը, որ ջատում է մարդկանց բարոյական ոյժը»:

Նա ձեռը ուժգին զարկեց սեղանին, ոտքի կանդնեց: Երբ յետ նայեց, տեսաւ մենակ չէ: Աենեակի ծայրում կանգնած էր ինիաթեանը և, ձեռները մէջքին դրած, անհոգ կերպով նայում էր պատին:

—Մեծ մարդ է եղել հանգուցեալը,—ասաց նա, ցոյց տալով ներսէս Աշտարակցու պատկերը:

—Այս, մեծ մարդ է եղել, պարոն Ինիաթեան:

—Ասում են, երբէք չէր յուսահատվում խոչընդուների հանդիպելիս: Հէնց այդ բանն է մարդկանց մեծացնում: Յուսահատութիւնը թուլասիրաներին է միայն յատուկ: Հա, ինչ էի ուղում ասել, այս երեկոյ, երեխ, ուսուցչական ժողովը չի կայանալ:

—Ինչո՞ւ:

—Որովհետեւ բոլոր աւագ ուսուցիչները հրաւիրված են հոգաբարձու պարոն Վէքիլեանի մօտ:

—Հրաւիրված...

—Միթէ դուք չըդիտէիք, ձեղ չի հրաւիրել: Զարմանալի է: Խնճոյքի նման մի բան է սարքել: Ասում են նպատակ ունէ պարոն Վէքիլեանը, այսինքն ուղում է ուսուցիչների հետ բարոյական կապ հաստատել: Ուրեմն ժողովը կըյետածդէք, չէ:

—Եթէ Վէքիլեանի խնճոյքը աւելի հետաքրքրական է ձեղ համար, պէտք է ժողովը յետածդել:

Ինիաթեանը, քննի տակ երգելով, դուրս դնաց:

Այդ օրը Դիմաքսեանը ախորժակ անդամ չտնեցաւ ճաշելու, —այնքան վրդովված էր: Սիրականն այնպէս սովորել էր նրա բնաւորութեանը, որ իսկոյն

հասկացաւ, թէ նա վատ է տրամադրված։ Նա հոգում էր Դիմաքսեանի մասին ինչպէս սիրող, զգայուն եղբայր։ Նա պատրաստ էր ամեն ըոպէ մահու և կեանքի կռուի մէջ մտնել նրա համար, եթէ միայն այդ հարկաւոր լինէր։ Եւ Դիմաքսեանը լիովին հաւատում էր նրա անկեղծ հաւատարմութեանը։ Ուրախալի էր նրա համար անկիրթ ժողովրդի այդ հարադատ դաւակի մէջ տեսնել այդքան սէր։

Իրիկնագէմին նա գնաց Մսերեանի մօտ, ուր միշտ գնում էր, երբ յուզված էր լինում։

Իդէալիստը այս անգամ՝ անսովոր աշխայժ ստացած՝ անց ու դարձ էր անում սենեակում, ինքն իւր հետ ձեռներով խօսելով։ Բանն այն է, որ նա այդօրը պաշտօն էր ստացել մի արքունական հիմնարկութեան մէջ և վազուանից պէտք է սկսէր ծառայել։ Նոյն ըոպէին նա մտքում հաշում էր—արդեօք պաշտօնը նրա ամբողջ ժամանակը պէտք է խլէ, թէ կարդալու համար ազատ ժամեր կըթողնի։

Դիմաքսեանը չնորհաւորեց նրան։

—Բայց դու ինչո՞ւ տխուր ես,—գոչեց Մսերեանը, —էլի ով է եշիդ կաղ ասել։

Դիմաքսեանը պատմեց օրուայ եղելութիւնը։ Մըսերեանը, ինչ ասել կուզէ, վրդովիեց։ Ի՞նչպէս, Բարաթեանը կրօնի և եկեղեցու պաշտպան է դարձել։ Ուրեմն նա ուզում է ծախել այն, ինչոր չտնէ։ —Դա բարոյական գողութիւն է։

—Եւ նա խօսում էր համոզված, ինչպէս ճշմարիտ քրիստոնեայ։

Դիմաքսեանը հեղնաբար ժպտաց։ Միթէ կարող է համոզմունք լինել մի բան, որ մարդու հոգուց չէ

բղխում։ Դա մի վտանգաւոր զէնք է նրա դէմ, ուրիշ ոչինչ։ Օ՞ս, Բարաթեանը խելօք է, շատ լաւ է ճանաշում հասարակութեան թոյլ երակը։ Նա ուզում է Դիմաքսեանի վարկը կոտրել, նրա հեղինակութիւնը ուսնատակ անել, ահա նրա նպատակը։

—Ներողութիւն,—ընդհատեց Մսերեանը ընկերոջ խօսքը, —նա ինչպէս կարող է քո հեղինակութիւնը ուսնատակ անել։

—Հրատարակելով ինձ անկրօն։ Դա, ի հարկէ, նրան կըյաջողվի, մարդկանց փոփոխմտութեան չնորհով։ Երեակայիր, ամբողջ մեր ուսուցչական խմբի մէջ այսօր մէկը չըգտնվեց, որ ինձ հետ բողոքէր։ Ես մնացի մենակ, հասկանում ես, մենակ։

Եւ նա աւելացրեց, որ այսուհետեւ ամենքը իրանից պիտի երես դարձնեն։ Նա հազորգեց Վէքիլեանի հացկերոյթի մասին։ Նա հասկանում է, ինչ ասել է բարոյական կապ, Վէքիլեանը կամենում է նրա դէմ զինել ուսուցիչներին։

Մսերեանը գլուխը շարժեց։

—Ինչո՞ւ ես ժպտում, միթէ դու իմ տեղը լինէր, չէիր յուսահատվիլ։

—Ե՞ս, ոչ։

—Ո՞չ։

—Չէի յուսահատվիլ։ Նախ և առաջ ես քո տեղը երբեք չեմ կարող լինել։ Ով ինձ նման քամի կուլ տուողին սեմինարիայի ինսպեկտօրի պաշտօն կըտար, Երկրորդ, եթէ ես քո տեղը լինէի, խոկոյն գդակս կըվերցնէի, կասէի՝ մնաք բարով, հօրս ցաւը ձեզ էլ ու ձեր գպրոցին էլ։

—Այդ կընշանակէ չըյուսահատվէլ։ Բայց ես գու-

նէ այդպէս չեմ անում, ես միայն վրտովվում եմ:
—Դու այդ էլ չըպիտի անես:

Դիմաքսեանը զարմացած նայեց ընկերոջ երեսին:
Նա բոլորսին ոչինչ չէր հասկանում նրա հակասական
խօսքերից: Մի բոպէաչափ նրանք լուռ էին:

Մսերեանը, նայելով իւր ծխախոտի ծայրին, ինչ-
քըն իւր հետ խորհրդածութեան մէջ էր: Պարզ էր,
որ նա մի բան ուզում էր ասել, բայց շրդիակը որ
կողմից սկսէլ:

Վերջապէս, նա, ձեռը խփելով Դիմաքսեանի ծըն-
կին, ասաց.

—Գիտե՞ս ինչ, Արսէն, ես քանի անդամ ասել եմ,
որ դու ինձ երբէք օրինակ չըվերցնես քեզ համար:
Դու ուրիշ մարդ ես, իսկ ես ուրիշ: Մենք հակատի-
պարներ ենք:

Ճիշդ է, նա դդակ կը վերցնէր ու դպրոցից
դուրս կըդար, բայց երբէք չէր կամենալ, որ իւր ըն-
կերն էլ այդպէս անի: Չէր կամենալ մինչեւ անդամ,
որ նա յուսահատվի մազաչափ: Վազուց, շատ վազուց
նրա գլխում կաղմիկէլ էր հասարակական դործիչի լի-
ակատար իդէալը: Ո՞վ գիտէ, որքան նա բազդաւոր
մարդ կըհամարէր իրան, եթէ կարողանար տասնեւ-
րորդի չափ լինել այն, ինչոր նրա կարծիքով պէտք
է լինի հասարակական դործիչը: Բայց նա զդում էր,
որ չի կարող և հէնց աւելի ցաւալին էր այդ, որ
զդում էր:

—Իսկ դաւ կարող ես լինել,—շարունակեց նա
ոգեսրված, —եթէ միայն աշխատես: Բայց դու, Ար-
սէն, դեռ, ներիր որ պարզն եմ ասում, դեռ շատ
անեփ ես, անեփ թէ ինչպէս ընկերական մարդ և թէ

ինչպէս գործի մարդ: Քանիշըանի անդամ ես տեսել
եմ, որ ամեն մի չնչին բան քեզ յուսահատեցնում է
կամ խրախուսում, ոգեսրում: Երբէք ես չեմ մոռա-
նալ այն օրը, երբ մի ինչոր լրագրի յօդուածից, մի
վայր իվերոյ գրուածքից քիչ էր մնում խելագարվէ-
իր: Կարծես, չըգիտէիր, որ այդ թուղթ մրոտողների
հարիւրից իննըսուն իննը չարժեն ընկուզի կճեպին:
Չեմ մոռանալ և՝ այն օրը, երբ գու ոգեսրված և
հիացած պատմում էիր, թէ ինչպէս քեզ ընդունել են
քո հայրենի քաղաքում:

Եւ մի քանի վայրկեան լուելուց յետոյ, իդէա-
լիստը շարունակեց, ձայնի տօնը փոխելով և աւելի
սառն կերպով: Նա ասաց, թէ բուն հասարակական
գործիչը այդպէս չի լինում. նա հեռու է մնափառու-
թեան վտանգաւոր ախտից: Նրա համար նշանակու-
թիւն չունեն ոչ ծափահարութիւնները և ոչ հալա-
ծանքները: Նա ոչ ոքից չի սպասում ոչ վարձատրու-
թիւն, ոչ երկրպագութիւն: Նա իւր վարձը և խրա-
խոյսը պարում է իւր անձնաւորութեան մէջ և այն-
տեղ է գտնում: Նրա բարոյական սնունդը, նրա հո-
գեկան քաջութեան միակ ազբիւրը իւր սիրտն է, իւր
ներքին աշխարհը: Այնտեղ է նա որոնում գովասանքն
էլ, պարաւանեքն էլ: Այնտեղ է նա զդում և՝ ծափա-
հարութեան ձայնը, և՝ անաչառ, խիստ քննութեան
հարութեան ձայնը, և՝ անաչառ, խիստ գէպքում նրա հա-
մար գոյութիւն չունէ:

Նա գարձեալ լուեց, նայեց ընկերոջ երեսին և
ապա աւելացրեց.

—Ասա, այսպէս է, թէ չէ, հերքիր, եթէ սխալ-
վում եմ:

Բայց Դիմաքսեանը լուս էր և ուշագիր լսում էր ընկերոջը։ Նա համաձայն էր նրա ասածների հետ, նա ինքը վաղուց այդ բանը գիտէր։ Բայց լսել մի ուրիշ այդպէս բացարձակ, անկեղծ և խիստ կերպով—ծանր էր նրա համար, այդ ուրիշը լինէր նրա ամենամտերիմ ընկերը։

Նա վախենում էր նայել Մսերեանի երեսին, որ այդ բռպէին այնքան խիստ, երկիւղալի, բայց և յարշգելի էր նրա համար։ Նա զգում էր իւր դէմ նստածմի անողոք բուժիչ Սուր գանակը ձեռին, սառնութեամբ այդ բժիշկը օտերացիայի էր ենթարկում նրա հոգու ամենաթոյլ, ամենահիւանդում մասերը։ Բայց նա գիտէր, որ այդ խստութիւնը առաջանում է միմիայն հիւանդին բուժելու անկեղծ և ջերմ ցանկութիւնից։ Նա գողում էր, յուղփում, բարկանում, բայց և չէր ընդդիմանում այդ անողոք վերլուծութեանը։

Գունատ դէմքով, աչքերը խոնարհեցրած, շնչառպառ և գժուարութեամբ արտասանեց։

—Շարունակիր։

Մսերեանը ասաց, թէ իւր ասելիքը վերջացրել է։ Նա աւելացրեց միայն, թէ իւր շրջանին, հասարակութեանը, վերջապէս, մարդկութեանը ծառայող ամեն մի փոքր թէ մեծ մարդ ունէ մի որոշ իդէալ։ Նա մաղթեց, որ Արսէնի բարձրագոյն իդէալը լինի։ Նա, Որին ոչ մի իդէալ չէ կարող հասնել։ Նրան շրջափահարեցին, այլ հալածեցին, որովհետեւ օտարութիւն գաղափարներ էր քարոզում։ Բայց նա չէր յուսահատվում, այլ դործում էր մարդկային տգիտութեան դէմ։ Նա ցաւ չէր զգում մինչեւ անդամ այն ժամանակ, երբ բեկոված էր։

—Որովհետեւ նա իւր սրտի խորքում, գիտեմ, այստեղ, ունէր անսահման սփոփանքի և ըերկրութեան աղբիւր։ Դա աստուածային լոյսն էր։ Այն, նա է բուն մարդը, ով այդ լուսոյ գոնէ մի նշոյն ունէ իւր մէջ։ Առանց նրան չըկայ ճշմարիտ մարդ, չըկայ մանաւանդուրիշներին օգտաւէտ լինել կամեցող մի անհատ։

Նա վերջացրեց խօսքը և սկսեց անցուղարձ անել սենեւակում։ Արդէն օրը բաւական մժնել էր։ Նա պարզ չէր տեսնում Դիմաքսեանի դէմքը, և եթէ տեսնէր, պէտք է այնտեղ կարդար իւր խօսքերի խոր ազգեցութիւնը։

—Ի հարկէ, դու ինձ կարող ես ֆրազեօր համարել։ Բայց այդ ինձ համար միևնոյնն է, միայն թողիմ կարծիքը քեզ չըվիրաւորի։ Դու շատ լաւ գիտես, որ մի ուրիշի հետ այսպէս պարզ չէի խօսիլ։ Բայց քեզ սիրում եմ և յարգում։

—Ենորհակալ եմ, —մրմնջաց Դիմաքսեանը խուլ ձայնով, —չնորհակալ եմ։

Եւ մի քանի վայրկեան լոելուց յետոյ, հառաչելով աւելացրեց։

—Այս, ես անեփ եմ, ես շատ թերութիւներ ունեմ։

IX

Գայիանէի թախիծըքանի գնում, այնքան սաստկանում էր։ Դեռ առաջին մի քանի ամիսները նորածինը գրաւել էր նրա միտքը։ Զար կասկածը տեղի էր տուել մայրական անդրանիկ սիրոյ զգացմանը։ Բայց անցան այդ ամիսները, և նա գարձեալ ենթարկվեց մի անդամ արդէն իւր սրտի մէջ արմատ ձգած տանջանքին։

Նատ անդամ ամուսինների մէջ տեղի էին ունեանում ընտանեկան անախորժ տեսարաններ։ Մարդը, հարկաւ, աշխատում էր փարատել կնոջ կասկածը, բայց իզուր։ Եթէ ամենքը հաւատացնէին, դարձեալ Գայիանէն չէր համոզուել, թէ միմիայն ինքն է սիրելի իւր ամուսնու համար և թէ իսակը ուրիշ ոչ ոքի վրայ աչք չունէ։ Գալով փաղաքշանքներին, այսուեղ էլ Գայիանէն զգում էր մի կեղծիք, մի նուրբ փարիսեցութիւն։ — Մի բան, որ տեսնում էր իւր ամուսնու հասարակական կեանքի մէջ էլ։ Ո՞ւր է այն հոգեկան զօրութիւնը, որ սպասում էր նա, թէ մի օր պէտք է երեան դայ։ Ո՞ւր են այն բարոյական անխախտ սկզբունքները, որ աղամարդին աստւածացնում են կինարմատի աչքում, իսկ կնոջ սիրով լրցնում հաղարտ պարծանքով իւր մարդու վերաբերմամբ։ Խչուն նրա և Դիմաքսեանի մէջ ծագեցին այդ երկապառակութիւնները։ Զէ որ նրանք դաղափարակից ընկերներ էին, կընշանակէ երկուսից մէկը փոխեց իւր հայեացքները։

«Ո՞րր փոխեց», — հարցնում էր ինքն իրան Գայիանէն, և մի ներքին ձայն նրան պատասխանում էր, թէ ոչ-Դիմաքսեանը։

Եւ որքան Բարաթեանը արհամարհանք ցոյց տարդէպի այդ մարդը, սակայն նուրբ բնաղդումով Գայիանէն զգում էր, թէ Դիմաքսեանն է դաղափարի մարդ, նա է որոշ և անխախտ համոզունքների տէր։ Նրան թւում էր, որ յաճախ իւր ամուսինը այդ մարդու դէմ խօսում է նախանձից դրդված։

Մի անդամ Գայիանէն, չըկարողանալով իրան դսպել, մի այդպիսի ակնարկութիւն արեց։

Բարաթեանը բարձրաձայն ծիծաղեց և երեսը յետ դարձրեց։ Բայց արդէն նկատելի էր, որ նրա ծիծաղը և արհամարհանքը դէպի Դիմաքսեանը արւեստական են դառնում և կնոջ պաշտպանութիւնը վրդովեցնում է նրան։ Իսկ Գայիանէն նայեց ետեից նրա առողջ պարանոցին և մի տեսակ տեսելութիւն, զգաց։ — Մի տարօրինակ, անբացատրելի ատելութիւն, որ առաջին անդամն էր զգում։

Մի ուրիշ անդամ Գայիանէն բացարձակ յայտնեց իւր ամուսնուն բոլոր այն յոյսերը, որ դրել էր նրա վրայ։ Նա ուրիշ բան էր սպասում Բարաթեանից։ Նա կարծում էր, թէ ահա գտել է, վերջապէս, այն մարդուն, որ կարող է իրագործել նրա իրէալը տղամարդի մասին։

— Ես շատ բան էի պահանջում տղամարդից, ով դիտէ, գուցէ անիրագործելի բաններ։ Բայց չէ որ դու էլ այն ժամանակ գոնէ բերանացի համաձայնվում էիր իմ պահանջների հետ։ Կարելի է ես երեխայ էի, անփորձ, միամիտ, աշխարհի վրայ վարդագոյն աչքերով էի նայում։ Բայց այժմ ես չափաւորել եմ իմ պահանջները և տեսնում եմ, որ էլի խարված եմ, որ ամենաշնչին յոյս անդամ չի իրագործվում։ Իսակ, այժմ ես քեզանից ոչինչ չեմ ուզում, ոչինչ, բացի մի բանից, այն է, որ դու այս չար կասկածը հանես իմ սրտից...»

Նրա աչքերի մէջ փայլեց ներքին հոգեկան դառնութիւնը։ Նա մի եռանդուն ճիգ արեց և զոտեց իւր արտասուքը։

Բարաթեանը մի վայրկեան նայեց նրա երեսին և մի ինչ-որ միտք անմիջապէս թելադրեց նրան փոխվել։ Նրա դէմքից չքացաւ կծու հեգնութեան ժպիւ

տը, տեղի տալով մեզմ և փաղաքշական արտայայ-
տութեանը։ Նա հանդարտ մօտեցաւ Գայիանէին, բըռ-
նեց նրա ձեռը և, նայելով նրա աչքերին, հարցրեց.
— Ո՞ւմ դէմ է քո կասկածը։

— 0°օ, մի հարցնիլ ինձանից, մի հարցնիլ, չեմ
կարող ասել...

— Գայիանէ, դու իրաւունք չունիս, գիտես, ի-
րաւունք չունիս ինձ սրբապիղծ մարդ համարելու։

Այս խօսքերը նա մի այնպիսի եղանակով արտա-
սանեց, որ մի վայրկեան Գայիանէի սիրտը, կարծես,
թեթեութիւն զգաց։ Նա թոյլ տուեց ամուսնուն ի-
րան համբուրել։ Բայց անցաւ այդ վայրկեանը, երբ
նա նայեց մարդու աչքերին։ Այսուղ, այն քնքոյլ և
մեզմ արտայայտութեան տակ, Գայիանէն տեսաւ մի
աւելի կեղծ բան, որ միայն նրա համար էր նշմարելի։

Նա կամացուկ իւր ձեռը աղատեց մարդու ձեռ-
ներից և մի բայլ յետ կանգնեց։

Բարաթեանը հասկացաւ այդ շարժման իմաստը
և երեսը յետ դարձրեց։ Նա դիտէր, որ դժուար,
մինչև անդամ անհնարին է փարատել երիտասարդ-
կնոջ զգայուն սրտի մէջ բուն դրած կասկածը։ Ուս-
տի բարեսը համարեց խօսակցութիւնը չերկարացնել։

— Բայց արդէն ժամանակ է ճաշելու, սիրելիս, —
ասաց նա զուարթ եղանակով, — որքան էլ բանաստեղ-
ծական լինենք, ստամոքսը իւր ուղածն է պահանջում։
Եւ շուացնելով անցաւ սեղանատուն։

Նոյն օրերը կանանց ընկերութեան օգտին ժո-
ղովարանի դահլիճում երեկոյթ էր նշանակված։ Գա-
յիանէն վճռել էր չքդնալ, բայց ամուսինը սաստիկ
թախանձեց նրան, որ յամառութիւն չանի։ Անկարելի

է, վերջապէս, բոլորովին երես գարձնել հասարակու-
թիւնից։ Ի՞նչ կըմտածեն մարդիկ, միշտ նրան առանց
կնոջ տեսնելով հանդէսներում։ Ընտանեկան խռովու-
թիւններ կարելի է ունենալ, բայց միշտ պէտք է ու-
րիշների աչքից քօղարկած պահել։ Թող ամենքը հա-
մողած լինեն, որ նրանց մէջ տիրում է փոխադարձ սէր։

Երեկոյթը բաղկացած էր նուագահանդիսից և
պարերից։ Մի հնամաշ գերասանուհի երգում էր մի
ինչոր գրամատիքական երգ։ Գայիանէն նստած էր
իւր ամուսնու մօտ տիսուր, լուռ և սնտարբեր։ Նրա
դէմքի վրայ չըկար նախկին գրաւիչ ժպիտների նը-
շոյն անդամ։ Այդ դէմքը բարկացնում էր ամուսնուն,
և սա ստէպ-ստէպ շշնչում էր նրա ականջին, խնդրե-
լով, որ գոնէ ուրիշների առաջ ուրախ ձևանայ։

«Ես ոչ կարող եմ կեղծել և ոչ կամենում եմ,
պատասխանում էր Գայիանէն։

Նուագահանդէսը վերջացաւ։ Բարաթեանները
դուրս եկան դահլիճից մի փոքր անցուդարձ անելու։
Հասարակութեան խուռն բազմութեան մէջ Գայիա-
նէն նկատեց Դիմաքսեանին։ Մի անկիւնում կանգնած՝
նա խօսակցում էր մի ինչոր պարոնի հետ։ Տեսնե-
լով Գայիանէին, սառն քաղաքավարութիւնով զլուխ
տուեց և կամենում էր երեսը կրկին դարձնել իւր
խօսակցին, երբ տիկինը ձեռը մեկնեց նրան։

Դիմաքսեանը շփոթված սեղմեց այդ ձեռը, հարց-
նելով տիկնոջ առողջութիւնը։

— Ենորհակալ եմ, — պատասխանեց Գայիանէն, —
բայց ինչու դուք մեղանից բոլորովին երես դարձրիք.
այդ լաւ բան չէ...»

Այս անկեղծ յանդիմանութիւնը կատաղի հակա-

ռակորդի կնոջ կողմից անսպասելի էր Գիմաքսեանի համար: Մինչ նա մտածում էր ինչ պատասխանել, շրկամենալով ակնարկել փոխադարձ սառնութեան բուն պատճառը, Գայիանէն պարզութեամբ ասաց, թէ ինքը ամեն ինչ դիտէ:

—Զեր կոիւը իմ ամուսնու հետ է, իսկ ես չեզոք մարդ եմ:

Նրա ձայնը այնքան մեղմ և անկեղծ էր, նրա հայեացքը այնքան պարզ և բարեհամբոյր էր, որ Գիմաքսեանը ակամայ մոռացաւ իւր ատելութիւնը: Այդ կապուտակ աչքերը զարթեցրին նրա մէջ անցեալի յիշատակները, և դարձեալ նրա սիրտը սկսեց բարախել:

Բայց ինչու յուզվել: Զէ որ Գայիանէն այժմ ուշրիշին է պատկանում և այն էլ նրա հակառակորդին: Պէտք է հաստատամիտ լինել, սառնութիւն ցոյց տալ այդ կնոջ, որ այնպէս արհամարհեց նրան:

Այսպէս դատում էր Գիմաքսեանի խելքը: Այն ինչ՝ նա չէր զգում, թէ ինչպէս անցաւ կէս ժամ, մի ժամ, և գեռ խօսում էր նրա հետ:

Գայիանէն էր խօսակցութիւնը երկարացնողը: Եւ խօսում էր նա այնպիսի նիւթերի մասին, որ ակամայ շարժում էին Գիմաքսեանի հետաքրքրութիւնը: Միայն մի բանից էր խոյս տալիս Գիմաքսեանը—տիկնոջ ամուսնու հետ ունեցած ընդհարումներից: Անցեալի վերաբերմամբ նա նոյնն էր, ինչոր առաջ—շուտ ոգեսորվող, պարզ, անշեղ և երբեմն խստադատ:

Նա մազու չափ չէ փոխվել, նրա հայեացքները նոյնն են, կեանքը նրան չէ աղաւաղել, այդ պարզ է Գայիանէի համար:

Նրանք կանդնած էին դահլիճի դռներից ոչ հեռու, պատի տակ՝ Գայիանէն երբեմն նայում էր պարզների կողմը: Նրա աչքերը ակամայ որոնում էին ամուսնուն և չէին դտնում: Նա մի քայլ առաջ գընաց և մօտեցաւ պարողներին: Գիմաքսեանը հետևեց նրան: Վերջապէս, ահա նա... Տիկին Բախտամեանի հետ թե թեկի տուած՝ դուրս է գալիս դահլիճից: Երեկի, շատ պարելուց յոդնել են, և տիկինը կամենում է սեղանատանը մի սառը բանով զովացնել իւր ծառաւը:

—Այսուեղ սաստիկ տօթ է, անցնենք միւս դահլիճը,—ասաց Գայիանէն, ներքին խոռովութիւնից շրմունքները ատամների տակ սեղմելով:

Գիմաքսեանը հետևեց նրան ծանր քայլերով: Նա շրտեսաւ Բարաթեանին: Նա այլ ևս ոչինչ չէր տեսնում, չէր նկատում, չէր լսում, բացի Գայիանէից և նրա մեղմ, յոդնած ձայնից: Ո՞րքան փոխվել էր երիտասարդ տիկինը նրա աչքում, որքան դունատ էր, նիհար, այն, մինչև անգամ տգեղացած: Միթէ ընտանեկան հոգմերն են այդպէս աղդել նրա վրայ...

Կար ժամանակ, երբ Գայիանէն այդ մարդուց քաշվում էր, մինչև անդամ վախենում էր դէմ առ դէմ խօսել, և ինքն էլ չըգիտէր ինչու: Այժմ չքացել էր այդ երկիւղը: Այժմ նա խօսում էր ազատ, համարձակ: Հաճելի էր նրա համար մտածել, թէ մի ժամանակ այդ մարդը սիրել է նրան և գուցէ տանջվել: Այդ միտքը նրան չէր շփոթեցնում: Զէ որ ամեն ինչ անցել է, այլ ևս շրկայ այդ սէրը, ուրեմն նրանք կարող են լինել բարեկամներ: Իրաւ, Գայիանէի համար ցանկալի է բարեկամ ունենալ Գիմաքսեանին, այդ խե-

լացի, ազնիւ, զարգացած, զաղափարական մարդուն:
Նայում էր գէպի սենեակի հեռաւոր անկիւնը՝
Յանկարծ նա գունատվեց: Նա արագութեամբ վեր
թռաւ տեղից, ասելով.

—Կարծեմ, ժամանակ է տուն գնալու:

Նրանք մտան պարերի դահլիճը: Դիմաքսեանի ուս-
ները դողում էին ներքին յուղմունքից: Նա ուրախ
էր, երջանիկ էր: Նա ամբողջ ժամ ու կէս խօսել էր
այն էակի հետ, որից նա իրան ատված և ծաղրված
էր համարում:

Գայիանէի ետեից նոյն սենեակից դուրս եկաւ
նրա ամօւսինը տիկին Բախտամեանի հետ: Նա տիկ-
նոջ թեր բաց թողեց ճիշդ այն վայրկեանին միայն,
երբ Գայիանէն Դիմաքսեանին «ցը տեսութիւն» ասաց:

Առանց միմեանց մի խօսք ասելու, մի ակնաշ-
կով մարդ ու կին հասկացան իրաբու սրտինը: Նրանք
դուրս եկան ժողովարանից թե թեր տւած —այսպէս
կամեցաւ Բարաթեանը:

Կառքը նրանց պացնում էր Թիֆլիպի փողոցնե-
րով: Երկուսն էլ լուռ էին: Գայիանէն անընդհատ հա-
ռաչում էր, իսկ իսակը անբդհատ շուացնում և ցածր
երգում:

Երբ տուն հասան, Գայիանէն խելագարի պէս վա-
զեց երեխայի սենեակը, յարձակվեց նրա վրայ և
սկսեց արագ արագ ու ամուր համբուրել: Երեխան
զարթնեց և լաց եղաւ: Գայեակը առաւ նրան իւր գիրկը:

Սեղանատանը ընթրիքը պատրաստ էր: Գայիա-
նէն հրաժարվեց ուտելուց, մնաց երեխայի սենեակում
և այնտեղ էլ գիշերեց: Իսկ ամուսինը ընթրեց հան-
գիստ ու զուարթ, ինչպէս միշտ, ծառայի հետ կա-

տակներ անելով:

Միւս առաւօտ թէյ խմելիս նա ժպտալով դար-
ձաւ Գայիանէին.

—Հըմ, ինչպէս ես երէկուանից դէս:

—Շատ լաւ:

—Արտիդ փափագը առի՞ր «նրանից»:

—Իսկ դուք նոյնպէս ձեր պատի փափագը առի՞ր
«նրանից»:

—«Մենք» «ձեր» աղդականուհու հետ էինք:

—Ես էլ ձեր ընկերոջ հետ էի:

—Նախկինընկերոջ, այս մէկը երբէք մի մոռանար:

—Բաւական է, —դոչեց Գայիանէն վրդովված, —
երեկ, վերջապէս, պարզվեց ձեր բարոյական պատկերը:

—Ի՞նչ ես ուզում ասել:

—Այն որ... այն որ... ես դժբաղդ եմ:

Եւ բուռն արցունքը, անզսպելի ուժով դուրս
բղսելով, ողողեց նրա այտերը:

—Ինչու ես լալիս, —ասաց մարդը սառն կեր-
պով, —դու ինձ էիր փորձում, ես էլ քեզ փորձեցի:

—Ես, փորձում էի ձեզ, —արտասանեց Գայիա-
նէն խեղդված ձայնով, —ոչ, ես այդ տեսակ խաղեր
չըդիտեմ, դա ստորութիւն է:

Նա վերջացաւ տեղից և դուրս գնաց:

Մարդը հետեւեց կնոջը և տեսաւ, որ նա, երե-
սը բարձի մէջ թաղած, ուժգին հեկեկում է...

X

Սկզբում Գայիանէի անսպասելի բարեկամական
վարմունքը Դիմաքսեանին պատճառեց անսովոր բերկ-

բութիւն։ Տուն վերադառնալով, նա անընդհատ շըւ-
ւացնում էր և քնթի տակ երդում, մի բան, որ եր-
բէք չէր արել և որ հետեւալ օրը կրկնելով շատ ու-
րախացրեց և շատ զարմացրեց Սիրականին։ Գայիս-
նէն նրան չի տառւմ, չի արհամարհում։ Նա մինչեւ
անդամ յանդիմանում է նրան, թէ ինչու այսպէս ե-
րես է դարձրել նրանից։

Բայց անցաւ առաջին տպաւրութիւնը, և Դիմաքսեանի լուրջ միտքը շուտով մոռացաւ տարօրի-
նակ բերկրութիւնը։ Դարձեալ մտատանջութիւնը տի-
րեց նրան, և այս անդամ աւելի ծանր մի մտատան-
ջութիւն։

Ի՞նչ օդուտ, ի՞նչ օդուտ, գոչեց նա յանկարծ,
բեռովածի պէս կանդ առնելով սենեակի մէջ տե-
զում, չէ որ այսուհետեւ ուշ է և շատ ուշ։

Միթէ բաղդը կարող է այլ ևս ժալտալ նրան, և
ի՞նչպէս Ո՛չ, նա չըպիտի մօտենար Փայիսանէին, չը-
պիտի խօսէր նրա հետ։ Ի՞նչ ապացոյց կայ, որ այդ-
սիրուն տիկնիր չի ուղում նրան ծալրել իւր մտքում։

Նա մի բարկացոտ շարժում գործեց, շտապով
հագնվեց և գնաց գպրոց։ Այսուղ երկպառակու-
թիւնները օրից օր սաստկանում էին։ Արդէն բացար-
ձակ խօսվում էր, թէ առաջիկայ տարի ենիսաթեանը
տեսուչ պէտք է նշանակվի։

Դիմաքսեանի գրութիւնը քանի գնում վատա-
նում էր։ Այժմ ամենքն էին նրա դէմ։ Ամբողջ մեծ
պասի ընթացքում Խիսիաթեանը աշակերտներին, ա-
ռանց տեսչի հրամանի, տանում էր եկեղեցի։ Զար-
չարման շաբաթը նա ինքն էլ նրանց հետ հալորդ-
վեց, իւր դէմքի վրայ պահելով խորին չերմեռանդու-

թեան արտայայտութիւն։

Նկատելի էր, որ հետզհետէ աշխատում էին դըպ-
րոցից վանել այն բոլոր վերանորոգութիւնները, որ
Դիմաքսեանը մացրել էր այնտեղ։ Եւ այդ բոլորը կա-
տարփում էր հոգաբարձուների գիտութեամբ։ Դիմաք-
սեանը բարկանում էր, կատաղում, բողոքում։ Նրա
առջև դնում էին դպրոցի կանոնադրութիւնը և հո-
գաբարձութեան իրաւունքները։

Ցաւալի և վշտալի էր նրա համայ տեսնել, թէ
ինչպէս նորից աշակերտները սկսում են թառամել,
նորից անհետանում է նրանց դէմքերից զուարթու-
թիւնը և տեղի տալիս ճնշող մելամազձութեան։ Եւ
նա դիտէր, որ այդ բոլորի խօսկան հեղինակները
երկու մարդ են—Բարաթեանը և Վէքիլեանը։

Զէր կարելի ասել, թէ այդ մարդիկ բոլորը բա-
ցառապէս Դիմաքսեանի ջդուռ էին անում։ Ո՛չ, մեծ
մասամբ այդ բզիսում էր նրանց համոզմունքից։ Աշա-
կերտների մէջ յղացած հրութիւնը նրանք համարում
էին համեստութիւն, երկիւղը—հեղութիւն։ Դա էր
նրանց աշքում բարոյական գիսցիպլինան։

—Այժմ գպրոցը գպրոցի է նման և ոչ թէ նի-
հիլիստների ժողովարանի, —կրկնում էր Վէքիլեանը,
ձեռները հաճոյքով շփելով միմեանց։

—Այն, ի հարկէ, —պատասխանում էր Բարա-
թեանը, —եթէ ոչ, առաջ ամեն մի զլուխ առանձին
գաղափար ունէր։ Ամեն մի աշակերտ այդէն խօսքը
այսպէս էր մկանում, «իմ կարծիքով...» Աշակերտ և
կարծիք...»

Հոգաբարձութեան ծայրայեղ կամայականութեան
դէմ Դիմաքսեանը գրաւոր բողոք ուղարկեց Սինոդին։

Բայց անցել էր հինգ շաբաթ և դեռ պատասխան չէր
ստանում:

—Եւ երբէք չես ստանալ, —ասաց մի օր բժիշկ
Սալամբէկեանը:
—Ի՞նչո՞ւ:

Բժիշկը ասաց, թէ բողոքը այժմ առաջնորդի
գրասեղանի մէջ է: Դիմաքսեանը սիստվել էր, անմի-
ջապէս դիմելով Սինոդին, նա պէտք է առաջնորդի
միջոցով բողոքէր: Այժմ թող նա սպասի որբազանի
«վերաբննութեան»:

—Քեզ ով ասաց այդ, —հարցրեց Դիմաքսեանը:
—Վէքիլեանը:

Բժիշկը պատմեց, թէ նախընթաց օրը սասաիկ
ընդհարում է ունեցել իրաւարանի հետ Դիմաքսեա-
նի պատճառով: Վէքիլեանը աշխատելիս է եղել ա-
պացուցանել, որ տեսուշը իւր գաղափարներով դըպ-
րոցը տակն ու վրայ է արել: Սալամբէկեանը հաստա-
տել է, թէ Վէքիլեանը և Բալաթեանը իրանց գա-
ղափարներով դպրոցը ուղղում են բարոյական անկե-
րանոց դարձնել: Վէճը հասել է ծայրայեղութեան,
երկու ընկերները միմեանց վիրաւորական խօսքեր են
ասել:

—Ես սառնարիւն մարդ եմ, բայց այդ անխիզը
մի այնպիսի սատանայական ակնարկութիւն արեց, մի
այնպիսի ածական տուեց քեզ, որ արիւնս դվիս-
խիեց, ես ուզում էի մինչև անգամ ապտակել նրան:

Խօսակցութիւնը տեղի ունէր Մաերեանի սենեա-
կում: Իդէալիստը վրդովված ականչ էր դնում, սա-
կայն խօսակցութեանը չէր մասնակցում:

—Այժմ ինչ կը համարայես անել, —դարձաւ Դի-

մաքսեանը նրան:

—Կըհամայեմ, որ մրցումդ շարունակես:
—Առանց զէնքի, միայնակ:
—Քո զէնքը թող լինի ճշմարտութիւնը, եթէ հա-
մոզված ես, որ այն քո կողմն է:
—Այդ կընչանակէ երկաթէ պատը եղունգներով
փորել:
—Փորիս, բայց մի հրաժարվիլ գործից:
—Ես չեմ հրաժարվիլ, բայց իրանք կըհամա-
րեցնեն:

—Խելօք մարդիկ նրանց վարմունքը կըհամարեն
բռնտթիւն:

—Իսկ ես կասեմ, —մէջ մտաւ բժիշկ Սալամբէ-
կեանը, —որ խելօք մարդիկ կըծիծաղեն Արսէնի վրայ:
Ասա խնդրեմ, քո կարծիքով, ովքեր են այդ խելօք
ասածներդ: Զըլինի թէ քեզ ե ինձ ես համարում:
Երեսիդ խաչակնքիր ու մեղայ եկ: Այս, մեծապատիւ
պարոն օպտիմիստ-իդէալիստ, խելօքը նա է, ով որ
իւր բարեկամի ոտների տակ ձմերուկի կճեպ է դը-
նում, որ նա մի լաւ սարտօմօրտալ անի: Այսպէս է
անում ընկերը ընկերոջ, իսկ թշնամիները, ինիաթեան-
ները և նրանց նմանները, զիտես ինչ են անում, նը-
րանք հասարակութեան մէջ տարածում են, թէ Դի-
մաքսեանը կաշառված դաւաճան է, հասկանում ես
ինչի մասին է խօսքս...

—Ինիաթեանը, իմ մասին, —գոշեց Դիմաքսեանը
խեղղված ձայնով:

Բուռն կատաղութիւնը գուրս խլեց նրա կրծքից
մի երկարաժեկ դառն ծիծաղ: Զեռը խփելով ճակա-
տին, նա ուժասպառ նստեց աթոռի վրայ, կրկնելով.

—Ե՞ս դաւաճան, աղդավաճան...

Անցել էին մի քանի օրեր այդ խօսակցութիւնից: Դիմաքսեանը տանը նստած խորհում էր իւր առնելիքի մասին: Տօն օր էր: Յանկարծ նա լուսամտի առջև, պատշգամբի վրայ, տեսաւ մի խումբ աշակերտներ, որ, միմեանց ուսերի վրայով գլուխները բարձրացրած, նայում էին գէպի ներս:

Նա գուրս եկաւ և հարցրեց, ինչ են կամենում:

—Իողոք ունենք, պարոն տեսուչ:

—Մտէք:

Միմեանց ետեից, ամաչելով ու քաշվելով, ներս մտան վեց պատանիներ տասնուեօթից մինչև քսանուերկու տարեկան: Բոլորին էլ Դիմաքսեանը առանձին առանձին ճանաչում էր, բոլորն էլ գիւղացիներ էին՝ հինգերորդ ու վեցերորդ դասատան աշակերտներ:

Գդակները փորների վրայ պահած, նրանք շարվեցին պատի առկ, «Աւետիս» ասող տիրացուների պէս:

—Ի՞նչ էք կամենում:

Աշակերտները իրանց միջից մէկին բոթելով առաջ դցեցին: Դա ամուր կազմուածքով, դէմքի խոշոր գծերով լոռեցի Մարտեանն էր, թւարանութեան մէջ ամենից ընդունակ աշակերտը:

—Պարօն տեսուչ,—խօսեց նա, առաջ նայելով իւր գդակին, յետոյ առաստաղին, յետոյ տեսչին,—մենք բողոքում ենք:

Նա շփոթված էր, հաղիւ կարողանում էր բառերը արտասանել: Դիմաքսեանը խրախուսեց նրան և բարեկամաբար հրաւիրեց ամենքին նստել: Բայց աշակերտները գդակները շուռ առւեցին ձեռներում, հաղացին, այսուայնում վրայ տատանվեցին և չընստեցին:

Մարտեանը շարունակեց.

—Մեզ հետ շատ վատ են վարվում, պարոն տեսուչ, կարծես, մենք վայրենիներ ենք:

—Առանց աւելորդ խօսքերի, պատմիր, ինչոք պատահէլ է: Ո՞վ է ձեզ հետ վատ վարվում:

—Վերակացուները: Երէկ երեխոյեան միասին հաւաքված մարդաները էինք կարդում: Յանկարծ հերթակալ վերակացու պարսն թունիբէկեանը եկաւ դիրքը ձեռքից խլեց, դլխիս խփելով ասաց, «Ռուի լոռեցին, քեզչեմ ասել ընկերներիդ մի անբարոյականացնիք»:

—Զեզ արդելել են այդ դիրքը կարդալ:

—Այս:

—Ուրեմն պարտաւոր էիք չըկարդալ: Այդ է միայն ձեր բողոքը:

—Ոչ, պատճառներ շատ կան: Չորրորդ դասատանը Մուրդուզեանին, հինգերորդ դասատանը Մարբագեանին, վեցերորդում Սալանեանին մեր դլխին լրտես են նշանակել:

—Լրտես,—դոչեց Դիմաքսեանը զարմացած:

—Այս, մեր ընկերներին մեր դլխին լրտեսներ են նշանակել: Ինչ օր խօսում ենք՝ ասում են ինիաթեանին, նա էլ յայտնում է հոգաբարձուներին: Մենք ինչ ենք անում, մենք ոչինչ չենք անում:

Յետոյ աշակերտները միմեանց ետեից պատմեցին մի քանի վրդովեցուցիչ գէպքեր: Անցեալ օրը Սարաֆեանը գիշերօթիկների համար թութ էր գնել իւր փողով: Վերակացու Դիմաքսեանը տեսել էր թէ չէ առել էր թութը նրա ձեռից և ամանով թափել Սարաֆեանի դլխին: Այսօր էլ ինիաթեանը աշակերտներին ասել է: «Լսել եմ, խօսք եք կապել վերակացու-

ներին ծեծելու, խառնակիշների աղդանունները ծուցատետրումս նշանակել եմ, պէտք է հոգաբարձութեանը յայտնեմ, որ բոլորին վռնդի դպրոցից։

—Բայց ճշմարիտ է, կամեցել էք ծեծել։

—Մտքներովս էլ չի անցել, —պատասխանեց Մարաքեանը։

—Այն, մտքներովս էլ չի անցել, —կրկնեցին միւսները։

—Մենք միայն Զալբամեանի մասին ենք խօսել մեր մէջ։ Պարօն տեսուչ, նա մաքուր մարդ չէ, անպիտան մարդ է, բայց ծեծելու մասին խօսք չի եղել։

—Այն, Զալբամեանը անպիտան մարդ է։

—Կեզտոտ է։

—Անբարոյական է։

—Լաւ, բաւական է, —ընդհատեց Դիմաքսեանը մեզմ ձայնով, —շատ ուրախ եմ, որ ծեծելու մասին չէք մտածել։ Դա վայրենութիւն կըլինէր, այդ տեսակ բաներ երբէք չանէք։

Բայց պատգամաւորները դրդոված էին։ Նրանք միաբերան պահանջեցին, որ Զալբամեանը հեռացվի դպրոցից։ Հակառակ դէպքում, ասացին, թէ ստիպված կըլինեն դիմել այդ վայրենի միջոցին։

—Այն, կըծեծենք նրան։

—Անպատճառ կըծեծենք։

—Կըջարդենք։

—Եթէ դուք թոյլ կըտաք։

—Այն, եթէ դուք թոյլ կըտաք, պարօն տեսուչ։

—Մենք ձեզանից ենք միայն վախենում։

—Մենք միայն ձեղ ենք յարդում...
Մէկը, մի շիկահեր պատանի, մինչև անդամ

բոունցքը սեղմելով, մի քանի քայլ առաջ դրեց այնպէս, որ, կարծես, նոյն վայրկեանին պատրաստ էր յարձակվել նոյն իսկ Դիմաքսեանի վրայ։

—Այն էլ ասա, այն էլ ասա, —շնչացին մի քանիսը Մարաքեանի ետեից։

Առաջնորդ՝ պատգամաւորը դարձեալ նայեց դըգակին, շապիկի փեշերը ուղղեց և արտասանեց։

—Պարօն տեսուչ, մի բան էլ կայ։

—Ի՞նչ է։

—Ճեզ վրայ էլ լրտես է նշանակված։

—Ի՞նձ վրայ, ով է նշանակել։

—Չենք իմանում, միայն դուք ինչոր աշակերտների մօտ խօսում էք, պատմում են պարօն ինիաթեանին։

Դիմաքսեանը չըկարողացաւ իւր զայրոյթը թագցնել, բայց, միենոյն ժամանակ, չըհարցրեց, թէ ով է իւր վրայ լրտես նշանակված։ Առհասարակ նա չըթողեց այդ մասին երկար խօսել։

—Այժմ ինձանից ինչ էք պահանջում, —հարցւեց նա։

—Խնդրում ենք, որ դուք մեզ պաշտպանէք։

Մենք եթէ մինչև օրս անկարդութիւն չենք արել, ձեզ յարդելուց չենք արել։ Մենք դիմենք, որ դուք մեզ սիրում էք, թոյլ տուէք, պարօն տեսուչ, մենք նրանց կըխրատենք։

—Այն, կըխրատենք։

—Զարդ ու...
—Սուս, լոեցէք։ Ի՞նչ ասացի ձեզ, երբէք թոյլ չեմ տալ ձեզ այդ տեսակ վայրենութիւն։ Եթէ ինձ մօտ խորհրդի էք եկել, շատ չնորհակալ եմ։ Այն, ես ձեզ սիրում եմ, ուրեմն դուք էլ լսեցէք իմ խորհրդաւ

դը և կատարեցէք: Ահա ինչ, գնացէք, հանդիսու շարունակեցէք ձեր դասերը, քննութիւնները վերջացրէք: Արձակուրդներից յետոյ, ես յուսով եմ, ձեր դրութիւնը կը փոխիլի:

Նա կամենում էր առ ժամանակ խաղաղացնել բորբոքված սրտերը, բայց այդ շատ էլ դիւրին բան չէր: Պատամի պատղամաւորները այնչափ գրգռված էին, որ տեսչի հանդարտ յորդորները նրանց աւելի վրդովեցնում էին: Վերջապէս, Դիմաքսեանը խոստացաւ անպատճառ և շուտով միջամտել հոգաբարձութեան առաջ նրանց մասին, և պատանիները հրաժեշտ տուեցին, կրկնելով.

«Զեր խաթրու կը համբերենիք»:

XI

Մի քանի օր անցած դպրոցում լուր տարածվեց, թէ տեսուչը աշակերտներին յորդորում է ապստամբվել: Պատմում էին, թէ այս նպատակով նա իւր մօտ է կանչել մի խումբ չարամիտ առաջաւորներ և ապստամբութեան հրահանդը տուել,

Ինիւթեանը պնդում էր, թէ առաջին յարձակումը իւր վրայ պէտք է լինի, «վասն զի» Դիմաքսեանի գլխաւոր հակառակորդը ինքն է: Նա ամեն ճիգ գործ է դրել այդ «խելացնորի անմիտ, մխասակար գաղափարների» առաջն առնելու նա կամեցել է դպրոցը «վրկել անկումից»: Շատ հասկանալի է, որ Դիմաքսեանը չըպիտի մարսէր նրան: Բայց նա երկշոտ մարդ չէ, պատրաստ է «նահատակվել իւր համոզմունքների և նորագոյն սերնդի փրկութեան» համար:

Վերակացու Զալբամեանը բակի մի անկիւնում դաել էր մի կայտ քարեր: Նա երդվում էր, թէ խառնակիչներն են վազօրօք այդ քարերը պատրաստել ապստամբութեան համար: Հինգերորդ դասաստան լըրտես Մարբազեանը երաշխառոր էր Զալբամեանի ասածի ճշմարտութեանը: Իւր կողմից նա հաւատացնում էր, թէ մի քանիսի մօտ մինչեւ անդամ ատրճանակ է նկատել: Խսկապէս նա վեցերորդ դասաստան աշակերտ Աֆրիկեանի գրպանում մի բան նկատել էր, բայց հաստատ չըգիտէր ատրճանակ է, թէ վարունդ, որ Աֆրիկեանը շատ էր սիրում և միշտ գաղտնի ուսում էր:

Հոգաբարձութիւնը անմիջապէս խառն նիստ հըրաւիրեց ուսուցիչների հետ: Երեկոյ էր, ամենքը սպասում էին նախագահի գալստեանը: Դիմաքսեանին ներկայացած վեց պատգամաւորներին փակել էին առանձինառանձին սենեակներում: Նրանց պէտք է հարց ու փորձի ենթարկեին ջոկ-ջոկ, ուստի անջատել էին միմեանցից, որպէս զի խօսք մէկ անելու միջոց չունենան:

Գիշերօթիկներին վազօրօք քշել էին ննջարանները, գուները փակել էին և պահապան գրել մի հաստարազուկ մշեցու, որ չըգիտէր, թէ այդ ինչ իրարանցում է սկսվել: Հայրենիքի տիւռը վիճակից վրշտացած հայտատանցին այնքան ծարաւ էր թշնամուարիւնին, որ երեակայում էր, թէ ամեն մի գիշերօթիկ մի եղիդ է: Եւ, կարծես, պատրաստ էր մահակը «զարնել» այն գլխին, որ կը յանդդնէր դռներից դուրս ցցվել:

Նիստին հրաւիրվածները շվամթման մէջ էին: Շատ-

պով անցնում էին մի սենեակից միւս սենեակ, խորհրդաւոր կերպով միմեանց ականջին շշնչալով ապատամբութեան մանրամասն պարագաները:

Վէքիլեանը չափից դուրս վախեցած էր: Ինիաթեանը նրան հաւատացրել էր, թէ ապստամբութեան հրահանդի մէջ նրա անունը երկրորդ տեղն է ըըռնում: Նա հերթակալ էր: Իբրև թէ «չարամիտները» պէտք է պասէին նրա գալստեանը և ինիաթեանից յետոյ նրան հարուածէին:

—Ե՞նչ յանդգնութիւն, ի՞նչ յանդգնութիւն,—կրկնում էր նա անդադար,—բայց ի՞նչպէս բաց արեցիք դաւադրութիւնը, պատմեցէք, պատմեցէք:

Սակայն ոչ ոք հաստատ շրջիտէր, թէ «դաւադրութիւն» եղել է, թէ չէ: Բանն այն էր խկապէս, որ նախընթաց օրը վերակացու Զալբամեանը Մարաքեանից հարցրել էր, արդեօք ինչու երկու օր առաջ նա իւր ընկերների հետ ներկայացել էր տեսչին: Մարաքեանին այդ հարցը շփոթեցրել էր, որովհետեւ նա երևակայել չէր կարստ, թէ իւր պատգամաւորութիւնը, բացի հինգ աշակերտներից, ուրիշ մէկին յայտնի է: Զալբամեանը ստիպել էր նրան խոստովանվել, սպառնացել էր և վերջը, տեսնելով, որ ոչինչ չէ աղդում, մի կեզտու յիշոց էր տուել Մարաքեանին: Տաքարիւն պատանին, շըկարողանալով իրան զսպել, պատակել էր կոպիտ վերակացուին, աւելացնելով.

«Զեզ բոլորիդ էլ պէտք է այսպէս պատժենը»:

Զալբամեանը աղմուկ էր բարձրացրել և ամենքին համոզել, որ ահագին դաւադրութիւն կայ աշակերտների մէջ ուսուցիչների և հոգաբարձութեան դէմ: Բարաթեանը շատ սառն էր պահում իրան: Նա

ընդդէմ էր ամեն մի ծայրայեղ միջոցի: Նա ասում էր, թէ «մաքերի խառնակութեան ժամանակ սառնաւրութիւնը ամենազօրեղ զէնքն է մարդու համար»: Նա պնդում էր, որ ամեն ինչ պէտք է դաղանի կերպով անել, գործը չըպիտի հռչակել, եթէ ոչ «դպրոցի ճակատագիրը կարող է վտանգի ենթարկվել»: Սակայն Վէքիլեանը, Ամբակում Աֆանասիեվիչը և ուրիշները համազել էին նախագահին, որ տեսչին հրաւիրէ ժողովի նիստին, ամենքի առաջ ու փորձ անէ և յետոյ յանդիմանէ:

«Ե՞նչ երեելի տեսարան, ի՞նչ էֆէկտ—մտածում էր Վէքիլեանը—աեսնել Դիմաքսւեանին մեղադրեալի նստարանի վրայ, ամօթահար և ճնշված իւր յանցանքի ծանրութեան տակ»:

Սկզբում Դիմաքսւեանը զարմացած և շփոթված էր: Նա լսել էր անհեթեթ լուրը, բայց խառն ժողովի մասին տեղեկութիւն չունէր:

Նրան վերին աստիճանի քաղաքավարի կերպով հրաւիրեցին նստել ընդհանուր սեղանի շուրջը, որ ծածկված էր կանանչ մահուգով: Բայց նա հասկացել էր բանի էռութիւնը, գիտէր, որ ամենքը իրան մեղադրեալ են համարում: Նա մի կէս արհամարհական և կէս բարկացու հայեացք ձգեց հանդիսաւոր ժողովի վրայ, և մի աթոռ վերցնելով, նստեց ժողովից հեռու, պատի տակ:

Նախագահը, իւր դէմքին տալով լուրջ բայց ներողամիտ արտայայտութիւն, մի համառօտ ճառով բացատրեց ժողովի նպատակը:

—Ոչ վասն պատժելոյ զմեղաւորս, այլ վասն ամբառնալոյ զմեղս, —աւարտեց նա իւր ատենաբանութիւնը:

Դիմաքսեանը լուռ լսում էր: Այժմ նա բոլորու վին հանգիստ էր, այնպէս, որպէս երբէք չէր եղել այդ մարդկանց ներկայութեամբ: Նրան չէր վրդու վեցնում մեղադրեալի վիճակը, որի մէջ դրել էին նրան: Նա այդ բանի վրայ մտքում ծիծազում էր: Նրան զայրացնում էր այդ հասարակական ներկայացուցիչների վարմունքը առհասարակ որպէս վարմունք:

Երբ նրան հարցրին—արդեօք ճիշտ է, որ նա դրդել է աշակերտներին ապատամբվել—դլուխը ցաւակցաբար շարժելով, արտասանեց:

—Եթէ իմ պատասխանը ձեզ գոհացնէր, անկառկած այս ժողովը տեղի չըպիտի ունենար:

—Մէկիկ մէկիկ առաջ բերէք յանցաւորներին,—հրամայեց նախագահը:

Զալբամեանը աներեւութացաւ և մի րոպէ չանցած ներս բերեց մի տասնութ տարեկան պատանի: Դա վեց պատգամաւորներից մէկն էր:

—Այդ դժւ ես, Դարբինեան, ճանաչում եմ, որդեակ, պատմիր յանցանք:

Տիրեց ընդհանուր լուռութիւն: Երեսուն ու երեք հայեացքներ միաժամանակ բեկովեցին պատանիի վրայ: Հանդիսաւոր ժողովը նրան շփոթեցրեց: Նա գունատ էր, կարմրեց, դողաց և միայն կարողացաւ արտասանել:

—Ներեցէք...

—Կըներենք, որդի, ասա մեղքդ, մի վախենար: Մենք քեզի չենք մեղադրիլ, դու տհաս ես, «զի ոչ գիտես զոր ինչ գործեա»: Անշուշտ քեզի այլ և այլ յորդուողներ եղել են, յիշատակիր անունները, տեսնենք:

—Ես չըդիտեմ, ես չեմ խօսել, Մարաքեանը և

Աբեկեանը դիտեն...

—Երեք օր առաջ, այսինքն ամսոյս վեցին, օրն հինգաթի, առաւտօտեան տասն ու մէկ ժամէն ցտասներկու ու կէս ժամը, մւմի մօտ եղել էք:

—Պարոն տեսչի մօտ:

—Այսպէս: Պարոն քարտուղար. «Եղել ենք պարոն տեսչի մօտ»:

—Ինչու համար եղել էք այնտեղ:

—Բողոքելու:

—Ումի դէմ:

—Վերակացուների:

—Այսպէս: Պարոն քարտուղար. «Բողոքելու վերակացուների դէմ»:

Վէքիլեանը ինչու իրաւաբան-փաստաբան հարկ համարեց նախագահի խօսքը ընդհատել: Նա մի քանի շեշտակի հարցեր տուեց մեղադրեալին: Պատանին այնքան շփոթվեց, որ ամեն քայլում ինքն իրան հակասում էր: Վերջապէս, նա արտասվեց: Թևից բռնելով՝ նրան դուրս տարեցին:

Երկրորդ պատգամաւորը եղելութիւնը պատմեց աւելի անխռով: Որքան նրան զանազան հարցերով նեղն էին դցում, միշտ կրկնում էր.

—Պարոն տեսուչը մեզ խրատում էր հանդիսատ մնալ:

Այդ միջոցին տեսուչը այնպէս էր նստել, որ քննվողները չեղիտէին անգամ, թէ նա ներկայ է:

Նոյնը կրկնեցին երրորդ, չորրորդ և հինգերորդ աշակերտները:

Վերջապէս, հերթը հասաւ դիմաւոր պատգամաւորին: Մարաքեանը անվեհեր ներս եկաւ, դլուխը քարձը պահած, հաղարտ, ինչու վայել էր օրուայ հե-

ըսուին: Երեսում էր, որ նա արդէն ամեն պատիժ աչքի առաջ էր առել: Ուստի իրան տուած քննական հարցերին նա պատասխանում էր համարձակ, աներակիւղ և մինչև անգամ կոպիտ եղանակով:

Երբ հարցրին տեսչի մասին, նա դրականապէս պատասխանեց.

—Եթէ պարոն տեսուչը չըլինէր, մենք անպատճառ պէտք է ապստամբվէինք:

Ժողովը շշնջեց: Վէքիլեանը փսփսաց Բարաթեանի ականջին: «Ամենքը կաշառված են»:

Այն ինչ Մարաքեանը, դառնալով իրան ներս բերող վերակացուին, ուելացրեց.

—Շնորհակալ եղէք պարոն Դիմաքսեանից, որ մի ապտակով միայն ազատվեցիք, թէ չէ ձեր ոսկորները ջարդ ու փշուր պէտք է անէինք...

—Դնուրս տարեք Բեհեղերուղի զաւակին, —դուշեց նախագահը համբերութիւնը հատած:

Վերակացուն յանդուդն աշակերտին դուրս մղեց: Ժողովականները շփոթված նայում էին միմեանց:

Վէքիլեանը մինչև դռները աչքերով ուղեկցեց աշակերտին: Նա վախենում էր՝ մի դուցէ Մարաքեանը դրապանում մի բան ունէ և խոկոյն կարձակի նրա դլխին: Յետոյ նա լուսամտին նայեց և տեղը փոխեց. չէ որ ապստամբը կարող էր դրսից էլքարեր արձակել:

—Պարոն քարտուղար, «Ճեր ոսկորները ջարդ ու փշուր կանէինք» բառերը չըմոռանաք: Այժմ, գերամեծար տեարք, կարծեմ այսօրուայ արտաքոյ կարդի նիստը պէտք է աւարտված համարել:

Դիմաքսեանը նստած էր դեռ լուռ, ոչինչ չէր ասում: Նա գլուխը հպարտ պահած՝ հեղնօրէն ժըպ-

առւմ էր և արհամարհական հայեացք ձգում իւր նախակին ընկերակիցների վրայ:

Բարաթեանը, որ ամօթահար էր եղել, մտածում էր՝ ինչպէս մի կերպ դուրս գայ անյարմար դրութիւնից:

—Մըրազան հայր, —արտասանեց նա, որքան կարող էր իւր գէմքին տխուր լրջութիւն տալով, —նախքան ժողովը արձակելը, պէտք է յարգելի տեսչին խնդրել, որ ներկայ թիւրիմացութիւնը բացատրէ: Այն, ես կարծում եմ, որ այս բոլորը թիւրիմացութիւն է, ուրիշ ոչինչ: Մեր հոգեկան տրամադրութեանը և մեր բարի նպատակին անտեղեակ մարդը կարող է կարծել, որ այստեղ մենք մի տեսակ դատաւորներ ենք, իսկ մեծապատիւ պարոն Դիմաքսեանը մեղադրեալ: Այն ինչ՝ ոչ դատաստան կայ և ոչ քննութիւն: Մեր բոլորի ցանկութիւնը մի բան է. վերացնել մեր ազգային թանգագին հիմնարկութիւնից մի անդամ ընդ միշտ բոլոր անհաճոյ երկպառակութիւնները: Ես համոզված եմ, որ մեր մեծապատիւ պարոն տեսուչը մեզանից աւելի է փափաղում, որ այս հիմնարկութիւնը ազատ լինի տխուր անցքերից: Ուրեմն խնդրենք յարգելի պարոն Դիմաքսեանին, որ նա մեզ մի ելք ցոյց տայ:

Այդ միջոցին Դիմաքսեանը ոտքի էր կանգնել: Նրա աչքերի մէջ փայլում էր կատաղութիւնը կծու հեղնութեան հետ: Նրա երեսի բոլոր մկանունքները գողում էին:

Ամենքը նայեցին նրա կողմ: Վէքիլեանը ինչոք շնչաց նախագահի ականջին: Նախագահը նայեց Բարաթեանի երեսին, և նրանք հայեացքներով խօսեցին

միմեանց հետ:

Խնդիրն այն էր, որ ամենը անախորժ դրութեան մէջ էին, ամենը զգում էին մի տեսակ ամօթ Դիմաքսեանից և չըդիտէին, ինչպէս վերջ տալ տեսաբանին:

Այս ինչ Դիմաքսեանը, խորին արհամարհանքով լսելով Բարաթեանի ասածները, քանի մի վայրկեան լուռ նայել ամբողջ ժողովին և ապա զօրեղ և խրոխտ ձայնով արտասանեց.

—Ողորմելիներ:

Այս մի հատիկ բառը, արձակված վրդովված և աներկեց կրծքից, ցնցեց ամենքին, կաշկանդեց բռուրի ուշը: Մեղադրվածը վայրկենաբար նրանց աշքում փոխվեց մի զօրաւոր տիտանի, որ ինչպէս մարմնացած վրիժառութիւն կանգնել էր նրանց դլիին, աչքերից կայծեր ցայտեցնելով:

—Ողորմելիներ,—կրկնեց նա, —ինչ էիք կամենում, պատժել ինձ, թէ պաշտպանել դպրոցը: Արդեօք, ինչ մի չար վտանգից կամ ում դէմ էիք ուշըում պաշտպանել — մի խումբ տկար պատանիների: Ի՞նչ է նրանց մեղքը. միթէ այն, որ չեն դիմանում գոլրոցում տիրող բռնութիւններին, վրդովված են ընկերական զրագարատութիւնների, քսութեան և լրտեսութեան դէմ: Եթէ դա է նրանց մեղքը, այսօրուայ նիստը մի անջնջելի արատ կը մնայ թէ հոգաբարձութեան և թէ ուսուցչական այս խմբի վրայ: Ինձանից պահանջում են, որ ես խօսեմ: Ես գիտեմ այդ առաջարկութիւնը ինչ զգացմունքներից է թելադրվում: Քօղը շատ թափանցիկ է, և նրա տակից երեսում է առաջազգագիտական պատկերը: Կա-

մենում էր, որ ես, ինչպէս մեղադրված, պաշտպանեմ ինքս ինձ: Երբէք իմ հակառակորդները այդ պատուին չեն արժանանալ: Կարծում էր, ես ինձ վիրաւորված եմ համարում: Քաւ լիցի: Իմ հակառակորդները պարզ տեսնում են, որ իրանց նետը նպատակին չըհասաւ: Մի քանի անշափահաս, անփորձ, անպաշտպան պատանիներ նրանց ստիպեցին ամաչել, կարմրել: Օճ, որքան նրանք այս բոպէիս խղճալի են նոյն իսկ իրանց աչքում...

Նախագահը զանդահարելով, ճառախօսին «կարդի» հրաւիրեց: Դիմաքսեանը թաշկինակով սրբեց ճակատի քրախնքը և, հպարտութեամբ նայելով ժողովին, շարունակեց:

—Այսպէս, ուրեմն, իմ հակառակորդները իրանք իրանց պատասխանը ստացան: Նրանք տեսան, որ ոչ մի մեքենայութիւն ինձ չի կարող արատաւորել, միայն կարող է կորսակի ենթարկել մի ամբողջ հիմնարկութիւն: Բայց ինչ փոյթ նրանց դպրոցի վիճակը. նրանց միակ նպատակն է ինձ յաղթված և ստորացած տեսնել... ես չեմ կամենում աւելի խօսել: Սակայն ներեցէք, այսօրուայ եղելութիւնը ես վարագոյրի ետևում չեմ թողնիլ: Ասպարէզ կը հանեմ այն իւր բոլոր մանրամասնութիւններով: Կարծում էր, վրէժինդիր լինելու համար: Ոչ: Ես այդ կամեմ, որպէս զի մեր միամիտ հասարակութիւնը ճանաչի այն մարդկանց, որոնց իւր գործերի զեկավար է ընտրում, որոնց ձայնին ականջ է գնում և որոնց մոքերին շատ անդամ ծափահարում է: Գալով իմ պաշտօնին, ինձ շատ լաւ յայտնի է իմ հակառակորդների նպատակը: Նըրանք փափագում են, որ ես կամաւոր կերպով հե-

ուանամ կռօւի ասպարիղից, որպէս զի յետելիցո զըւարձանան, ծիծաղեն: Բայց յայտնում եմ այդ պարօններին, ես իմ ազատ կամքով երբէք չեմ հեռանալ իմ պաշտօնից, մինչև որ հոգաբարձութիւնը ինքը ինձ չասի, «հեռացիր, որովհետեւ գու վնասակար ես մեղ համար»:

Արտասանելով այս խօսքերը, նա մի անգամ էլ արհամարհանքով և զզուանքով նայեց իւր նախկին ընկերների երեսին: Յետոյ ծանր, հպարտ և հանդարտ քայլերով, միայն սաստիկ գունատված, նա գուրս եկաւ դահլճից:

Նոյն վայրկեանին գերմանական մանկավարժ ինիաթեանի դէմքի վրայ վայլեց մի ուրախ ժպիտ:

XII

Զընայելով Դիմաքսեանի սպառնալիքին, հետեւ եալ օրը հոգաբարձութիւնը առանձին նիստում վրձռեց նրան թողնել իւր պաշտօնում մինչև պայմանաւորված ժամանակի լրանալը, այսինքն մի տարի: Այս պիտով նա կամեցաւ մեղմացնել տեսչի սիրտը, որ սա եղելութիւնը հրապարակ չըհանի:

Բայց մի շաբաթ անցած գուրս եկաւ Դիմաքսեանի մերկացնող գրութիւնը վեց աշակերտների գպլոցից արձակելու մասին:

Հոգաբարձութիւնը պատասխանեց նրան սառն պաշտօնական ձեռք: Երեսում էր, նա աշխատում էր իրողութիւնը քօղարկելու Փաստեր չէր բերում, հակառակորդի ասածը հերքում էր խօսքերով:

Բայց ասպարէզ եկաւ Վէքիլեանը և կռիւը այլ կերպարանք ստացաւ:

Դիմաքսեանը այժմ բոլորովին ընտելացել էր անձնական հարուածներին: Հակառակորդների յարձակումները նրան չէին վշտացնում, այլ գրգռում էին, նրա բորբոքված սրտի մէջ աւելացնելով կիզանուտ հեղուկը: Ամեն կերպ աշխատում էին նրան ցոյց տալ իրբեւ մի վնասակար, անաստուած, կործանիչ մարդ, որից մեծ վտանգէ սպառնում հասարակութեանը:

Խնդիրը միայն գպլոցի մասին չէր: Մասնաւորից սկսելով, Դիմաքսեանը այժմ հարուածում էր հասարակական ընդհանուր ախտերը: Առանձին ախորժակով և կատաղութեամբ նա մերկացնում էր կրթված դասի սխալ և վնասակար ուղղութիւնը, միշտ իրբեւ օրինակ աչքի առաջ ունենալով Բարաթեանին և Վէքիլեանին: Այժմ նրա կռիւը հասարակութեան դէմ էր:

Այսպէս անցան ամիսներ, անցան ամըողջ աշունը ու ձմեռը: Վերջապէս, հասաւ գարունը և հարցաքննութիւններից յետոյ Դիմաքսեանը արձակվեց պաշտօնից: Նրա տեղը նշանակվեց Ինիաթեանը:

Նոյն միջոցին Դիմաքսեանը գարձեալ հեռագիր ստացաւ, թէ հայրը մահամերձ հիւանդ է:

Նա շտապեց հայրենիք և այս անդամ ծերունուն մեռած գտաւ: Քոյրերը հանգուցեալի թաղումը մի քանի օրով յետաձգել էին, սպասելով իրանց եղբօր գալուտեանը:

Երեք օր տեսեց սդաւոր հանդէսը: Առաւոտ երեկոյ բաղաքացիները խումբ-խումբ գալիս էին՝ իրանց ցաւակցութիւնը Արաքնին յայտնելու: Վերջապէս, ընդհատվեցին ձանձրալի այցելութիւնները, և որլացած որդին ժամանակ ունեցաւ հետաքրքրվելու հօր գործերով:

Հանդուցեալը կտակ չէր թողել։
Նա մինչև յետին շունչը չէր հաւատացել մա-
հուանը և մինչև անդամ կռուել էր նրա մասին խօսող-
ների հետ։

Աղջկերանց հետ նա տեսակցութիւն էր ունեցել
մեռնելու նախընթաց օրը։ Ոչ մի խօսք չէր ասել նը-
րանց իւր կարողութեան մասին։ Մեռնելուց մի ժամ
առաջ յիշել էր Արսէնին, մեղադրելով նրան, թէ մո-
ռացել է ծերունի հօրը։ Նոյն ժամին նա վռնդել էր
բժշկին, բարկանալով, որ նրա դեղերը չեն ազդում։
Հոգևարքի ժամանակ կռուել էր մահուան դէմ, հայ-
հոյել էր նրան ամեն տեսակ խօսքերով։ Քահանան
կանչվել էր վերջին բոպէին, սուրբ հաղորդութիւնը
դդալով էին ածել հանդուցեալի կոկորդը։

Այս բոլորը արտասուքը աչքերին պատմեց նրա
աւագ քոյսը, կրկնելով.

«Յամառ մարդ էր, յամառ էլ մեռաւ։»

Երկու շաբաթուայ ընթացքում Դիմաքսեանի հա-
մար պարզեց գործերի դրութիւնը։ Երկաթեայ ոըն-
դուկի մէջ, բացի հին մուրհակներից և մի քանի կապ
սլայմանագրերից, նա ոչինչ չըդտաւ։ Պարզ էր, որ
հաւատարիմ Սարիբէկի խոնաւ ձեռը այնտեղ էլ մը-
տել էր։ Իսկ թէ հանդուցեալը զուտ փող ունեցել
էր, այդ երեաց նրա մի փաքրիկ ձեռատերից, որ
կառավարիչը մոռացել էր թագցնել։ Այնտեղ նշանակ-
ված էին ստացված եկամուտները և ծախսերը։

Անհետացել էին և այն բոլոր ոսկեղէնները ու
ակնեղէնները, որ մի ժամանակ Արսէնի մօր զարդե-
րն էին կաղմում և որոնց ծերունին խնամքով պա-
հում էր, ինչպէս մի սրբութիւն։

Կողոպուտը հաստատելու և յանցաւորին պատ-
ժելու համար պէտք էր դիմել դատաստանին։ Տեղա-
կան փաստաբաններից մէկը առաջարկեց իւր ժառա-
յութիւնը։ Դիմաքսեանը մերժեց։ Նա զզուում էր
դատաստանական գործերից և չէր ուզում ժամանա-
կը զոհել անվերջ վէճերի։ Բացի դրանից, նա խնա-
յում էր Սարիբէկի ուժ հոգուց բաղկացած ընտանի-
քին։ Նա անմիջապէս վանդեց կողոպտիչին, փորձեց
ինքը անձամբ կառավարել գործերը։ Սակայն քիչ ժա-
մանակ անցած տեսաւ իւր տնտեսական ապիկարու-
թիւնը՝ նա, որ թէօրիխայով միայն գիտէր ինչ ասել է
անտեսութիւն։

Նա վճռեց սահմանափակել գործերը։ Ժառան-
գութիւնը օրինական կերպով հաստատելուց յետոյ,
կալուածների մի մասը նուիրեց քոյրերին։ Այդպիսով
նա ազատեց նրանց մի մշտական նախատինքից, որ
խեղճ կանայք կրում էին ամուսիններից իրանց ժլատ
հօր պատճառով։

Նրա եռանդուն միտքը անդորձ չըմնաց հայրենի
քաղաքում, նա ուսումնասիրում էր գաւառական կեան-
քը, հաւաքում էր տեղեկութիւններ ժողովրդի բարու-
յական վիճակի մասին։ Ամեն օր նա շրջապատուած
էր տեղական երիտասարդներով, որոնք արդէն իրա-
գործել էին նրա տռաջին գալստեան ժամանակ առա-
ջարկած ընկերութիւնը։ Նրա նոր կրիւը մեծ հետա-
քրքրութիւն էր շարժել։ Նրա կողմնակիցները այժմ
աւելի որոշ և աւելի ընդարձակ շրջան էին կազմում,
Բայց շատացել էր և հակառակորդների թիւը։

Պատահէլ էին մի քանի խոշտը ընդհարումներ եր-
կու հակառակորդ խմբերի մէջ։ Նկատել էր, որ ինչ-

որ կատարվում է Թիֆլիզում, նոյնը անդրագառնում՝ և և փոքրիկ քաղաքների կեանքի վրայ։ Այստեղ ևս տիրում էին նոյն երկպառակութիւնները բոլոր հասարակական խնդիրների մասին։ Տարբերութիւնը միայն մէկ էր, կեանքը աւելի սահմանափակ լինելով, փոխադարձ խռովութիւններին էլ աւելի նեղ հոգի էր ներշնչում։ Մարդիկ աւելի աններողամիտ էին, աւելի կրքոտ և աւելի յիշաշար։ Շատ անդամ վէճերը հասնում էին սարսափելի ծայրայելութեան։ Հակառակորդները պատրաստ էին մտքի պատերազմը փոխել բռունցքի կռուի և միմեանց գանգը ջարդել և դուրս թափել այնտեղից այն ուղեղը, որ յանդգնում էր ուրիշ կերպ դատել քանի թէ իրանցը։

Այս հանդամանքը Դիմաքսեանի համար հետաքրքրական էր իւր բնորոշ կողմերով։ Նա տեսնում էր, որ մարդը որքան քիչ է կրթված, այնքան քիչ է համբերող, այնքան աւելի կատաղի է, սակայն, միևնոյն ժամանակ, այնքան աւելի պարզ և անկեղծ է իւր համակրութեան և հակակրութեան մէջ։ Բայց ամենահետաքրքրականը նրա համար ուրիշ բան էր։ Նանկատում էր հասարակութեան մէջ մի նոր երեսյթ, այն է՝ կոփու երկու սերնդների մէջ—հնի և նորի։ Դա հայրերի և զաւակների կոփու էր։ Մի կոփու, որ հայ կեանքի մէջ առաջին անդամն էր երեան դալիս այնպիսի որոշ։

Եւ երբեմն իւր առանձնութեան մէջ նա մտածում էր, արդեօք ի՞նչ հետեւանը կունենայ այդ բուլորը։ Նրա առջեւ պատկերանում էր կեանքի մի բարոյական քառօ, ուր առաջին հայեացքով անհնարին էր մի բան որոշել։ Որդին դիմադրում է հօրը, աշա-

կերտը ապստամբվում է ուսուցչի դէմ, ամեն տեղ թարմը, նորարոյսը և կենդանին բողոքում և դիմադրում է հնին ու թմրածին։

Արդեօք այդպիսի ծիւղերը չեն բաժանվիլ արմատից, և դարաւոր բունը յանկարծ չի չորանալ։

Այս միտքը վայրկենաբար սարսափեցնում էր նրան։ Նա սկսում էր վախենալ ծագած պատերազմից։

Բայց անցողիկ երկիւղը տեղի էր տալիս վարդագոյն յոյսերին։ Երեւակայութիւնը առաջնորդում էր նրան դէպի մի բարւոք ապագայ։ Այստեղ նրա մէջ երեան էր դալիս մի տեսակ օպտիմիստ և իդէալիստ Մսերեան, սակայն այլ գոյներով։ Նա լիովին իրագործված չէր նախագուշակում մարդկութեան լաւագոյն մասի իդէալը։ Նրա խելքը դատում էր համեմատական մեթոդով։ Նա տեսնում էր մի անընդհատ, յարատե պատերազմ դարերի ընթացքում, սերնդից սերունդ և սերունդների մէջ։ Երբէք չի դադարել հնի և նորի այդ պատերազմը, կրփոխվեն միայն մարդիկ, կրփոխվեն նրանց զէնքերը, փոխադարձ դիմադրութեան եղանակը և միջոցները։ Բայց միշտ յաջորդ սերունդը իւր կեանքի քաղաքակիրթ կողմերով կը գերազանցի նախընթաց սերնդից... և այսպէս անվերջ...

Կրկին նա ոգեսորվում էր, կրկին սիրտը լցվում էր քարոզելու, դործելու և անընդհատ մաքառելու անհուն եռանդով և ձգտումներով։

Չմեռուայ վերջին նա կամեցաւ հեռանալ հայրենի քաղաքից։ Նրան զուտ փող էր հարկաւոր ապրելու և գործելու համար։ Նա ծախեց հայրական կալուածներից մի փոքրիկը, միւսների կառավարութիւ-

Նը յանձնեց Հարիդեան ազգանունով մի երիտասարդի։ Դա նրա նախկին ընկերներից մէկն էր, որ մասնագիտաբար ուսումնասիրել էր գիւղատնտեսութիւնը։ Նա լիազօր իրաւունք տուեց Հարիդեանին կառավարել իւր կալուածները ինչպէս կամենում է, եւ կամտից մի որոշ տոկոսիք յատկացնելով նրան։

Նա վերադարձաւ Թիֆլիզ։ Այստեղ նրա բացակայութեան ժամանակ կողմնակիցները շարունակել էին ընդդիմագրել հակառակորդներին կեանքի զանազան խնդիրներում։ Բայց կռիւը առաջուայ եռանդով չէր կատարվել։

Մոերեանը բարկացած պատմեց, թէ երեան են եկել անկոչ պաշտպաններ, որոնք իրանց տգիտութեան չնորհով գործին աւելի վնասում են քան օգնում։

—Ոչինչ, —ասում էր նա, —ինձ համար այնքան ատելի և ոչինչ այնքան վատանդաւոր չէ, որքան տրխարութիւնը խմաստունի դիմակով։ Ամենաբարձր գաղափարը տգէտի շրթունքներից կարող է ծաղրելի հնչել։ Զօրեղ գործի համար զօրաւոր զէնք է հարկաւոր։ Զգուշացիր անմիտներից, միհաւատալ անկիրթների խելքին և ոչ էլ անկեղծութեանը։ Բարոյական անխախտ սկզբունքները ձեռք են բերվում միայն մտքի յարատե գործունէութեամբ։ Տգէտի օրէնքը նախալաշարմունքներն են և արտաքին ոյժը։ Լուսամիտ մարդու զեկավարը միմիայն իւր խելքն է և սիրառը։ Մի հաստատամիտ, կրթված, զարդացած, մտածող բարեկամիդ գերադասիր հարիւրաւոր թերհաս, անկիրթ պաշտպաններից։

Այդ կարճ միջոցում իգէալիստը բաւական ձեւացել էր։ Նրա մազերը աւելի ճերմակել էին, երեւ-

սի խորշերը շատացել։ Նա հաղորդեց, թէ առաջիկայ քաղաքային ընտրութիւններին կողմնակիցները մտադիր են Դիմաքսեանին առաջարկել, որ իւր քուէտուփը դնի, Յուցակ է կազմված և նրա անունն էլ մըտցրած է ընտրելի իրաւասուների շարքը։ Դիմաքսեանը պատասխանեց, թէ ցանկութիւն չունէ քաղաքային գործերի մէջ խառնվել, թէև առաջ ձդտում էր։

—Ես էլ խորհուրդ չէի տալ, —ասաց Մոերեանը, —լաւ է մի գործի ծառայել և լաւ ծառայել, քան թէ ոյժերը ցրվել մի խառնիճաղանձ հասարակութեան մէջ։

Իգէալիստը, ի միջի այլոց, յայտնեց, թէ օրիորդ կարինեանը արտասահմանից վերադարձել է։

—Այս ի՞նչպէս է, փոխվել է, —հարցրեց Դիմաքսեանը։

—Եաւ։

—Միթէ։

—Ուզում եմ ասել աւելի լաւացել է, թէ արտաքուստ և թէ հոգով ու սրտով։ Այս, նա այժմ ինձ աւելի է դուր գալիս։

Վերջին դարձուածը Մոերեանը արտասանեց ձայնը ցածացնելով, կարծես, ինքն իւր համար։ Յանկարծ նա ընդհատեց խօսքը օրիորդի մասին և դարձաւ ուրիշ բաների։

Դիմաքսեանը նայեց նրա երեսին և նրա աչքերի մէջ նկատեց մի անսովոր բան...»

XIII

Մի անգամ Մոերեանը Դիմաքսեանին խնդրեց միասին այցելել կարինեանին։

Օրիորդը բնակվում էր նոյն տանը և նոյն պառաւ տատի և այրի հօրաքրոջ հետ:

—Ան, շատ ուրախ եմ, —գոչեց նա, գուրս գալով պատշտամբ հիւրերին դիմաւորելու:

Արդարեւ, նա փոխվել էր արտաքուստ: Նրա առաջուայ նիհար այտերը լցվել էին, գէմքի գոյնը աւելի պարզվել էր: Ազգութեան մռայլութիւնը տեղի էր տուել աշխուժութեան և կենդանութեան: Նա դարձել էր աւելի արագաշարժ, աւելի համարձակ, միենոյն ժամանակ, նրա ձեւը աւելի տաշվել և կրթվել էին: Այս փոփոխութիւնը Դիմաքսեանը վերագրեց եւրոպական աղատ կեանքի ազդեցութեանը: Յիշեց, թէ ինչպէս ինքն էլ աշխոյժ և կենդանի էր այնտեղից վերագառնալիս և որքան այժմ ասիական կեանքի ճնշող պայմանները աղգել են իւր վրայ:

Պառաւը միւս սենեակում հիւանդ պառկած տնքանքում էր: Այրի Բօլումբաշեանը դարձեալ տանը չէր: Բայց օրիորդը մենակ չէր: Նրա մօտ հիւր կար, և այդ հիւրն էր տիկին Բախտամեանը, որ և շատ զարմացրեց Դիմաքսեանին: Նրանք բարեեցին ինչպէս հին ծանօթներ: Յետոյ տիկինը, թոյլ տալով, որ օրիորդը վերջացնի իւր հիւրերի հետ սովորական հարց ու փորձը, դարձաւ Դիմաքսեանին.

—Ես եկել եմ Աշխէնին մի տռաջարկութիւն անելու, յոյս ունեմ, պարսններ, գուք էլ ինձ կ'օգնէք:

Այստեղ Դիմաքսեանը առաջին անգամ իմացաւ, որ Կարինեանը տիկին Բախտամեանի մօրաքրօջ աղջիկն է: Կարմրախայտ այտերին լուրջ արտայայտութիւն տալով, տիկինը ասաց, թէ կանանց ընկերութիւնը ուզում է աղքատ աղջկանց համար պատասխանատու լինել խղճի և հասարակութեան առջև:

Րան բաց անել: Եկել է օրիորդին առաջարկելու, որ նա յանձն առնի տեսչուհու պաշտօնը: Բայց օրիորդը մերժում է:

—Իւր քրոջ խօսքը չի յարդում, ձեր խօսքը անպատճառ կըյարգի, օգնեցէք ինձ, պարսն Դիմաքսեան: Բայց ես շատ նեղացած եմ ձեզ վրայ: Առաջինը, ինչու մեր ընկերութիւնը չէք պաշտպանում մի քանի անկիրթ գրչակների գէմ: Այս, ինչ զռեհիկ են այդ լրագիր մրոսողները, օգնելու փոխարէն մեզ ծաղրում են ու հալածում: Ի՞նչ լաւ կրկինէր, պարսն Դիմաքսեան, եթէ մի փոքր տրորէիք այդ մարդկանց քինթը: Խեղճ կանայք, խեղճ կանայք, այսպէս է ձեր բաղդը... Օ՞ո, եթէ իւմանաք ինչքան ենք չարչարվում: Հիմայ էլ ուսումնարանի հոգու զցեցին ինձ վրայ: Աշխէն, հոգիս, եկ յանձն առ, Աստուած սիրես: Պարսն Դիմաքսեան, խօսեցէք, համոզեցէք...

Վերջապէս, նա մի քանի վայրկեան կանգ առաւ: Այն ժամանակ օրիորդը բացատրեց, թէ ինչու յանձն չէ առնում տեսչուհու պաշտօնը: Միթէ շրդիտեն, թէ ինչ նպատակով է նա դնացել արտասահման: Այժմ հասել է այդ նպատակը իրազործելու ժամանակը, և նա պէտք է թողնի իւր վաղուց երեակայած և փայփայած գործը: Բացի գրանից, նա ուզում է ըոլորովին անկախ գործել, ինքն իւր պարագմունքի համար պատասխանատու լինել խղճի և հասարակութեան առջև:

Դիմաքսեանը հաւանեց օրիորդի վերջին պառճառաբանութիւնը: Ինչպէս ամեն բանում, այստեղ էլ նրան գրաւեց անհատի աղատ գործունէութեան

սկզբունքը։ Նա դարձաւ տիկնոջը և ասաց, թէ համակրելով օրիորդի նպատակին, դժբաղդաբար, չէ կարող տիկնոջ առաջարկութիւնը պաշտպանել։ Ամեն մարդ պէտք է ծառայի այն գործին, որին աւելի է համակրում և այնպէս ծառայէ, ինչպէս ինքն է ուզում։

Տիկնոջ գէմքի վրայ երևաց դժգոհութեաննշան։ Նա մտքում շարացաւ Դիմաքսեանի գէմ։ Բանն այն էր, որ նա իւր ընկերուհիների մօտ պարծեցել էր, թէ մեծ աղքեցութիւն ունէ օրիորդ Կարինեանի վրայ և թէ կարող է ինչոր կամենայ նրան անել տալ, ուրովհետեւ շատ երախտիք ունէ նրա վրայ։ Իսկ ճշմարտութիւնը այն էր, որ մինչև օրիորդի արտասահման դնալը տիկինը գրեթէ ոչինչ յարաբերութիւն չէր ունեցել նրա հետ։ Այն ժամանակ նա չէր էլ ուզում ազգականուհի համարել մի օրիորդի, որ իւր աշխատանքով էր ապրում։

—Ի հարկէ, —դարձաւ տիկինը օրիորդին չըկարողանալով զսպել ներքին մաղձը, —իմ ինդիրը քեզ համար ոչինչ, քանի որ պարոն Դիմաքսեանը չի բարեհաճում քեզ խորհուրդ տալ…

Այս խօսքերի մէջ կար մի յետին իմաստ։ Դիմաքսեանը հասկացաւ և մի անզուսալ ատելութիւն զգաց գէպի այդ կինը, որի իւրաքանչիւր խօսքից բուրում էր կեղծութիւն և սնափառութիւն։ Մանաւանդ ատելի երևաց նրան տիկինը իւր հարուստ մետաքսեայ հագուստով, որ բնաւ չէր համապատասխանում նրա արուեստական լրջութեանը։

—Խնդրեմ ծառային հրամայես մի կառք կանչել, —ասաց տիկինը օրիորդին, ոտքի կանգնելով, —ես ժամանակ չունիմ երկար խօսելու, մինչև կոկորդա-

գործերի մէջ թաղված եմ, Ուրեմն մերժում ես, շատ լաւ, մնաս բարով, չեմ մոռանալ։

Եւ արհամարհանքով ու գոռոզութեամբ ողջունելով Դիմաքսեանին և Մաերեանին, շտապով դուրս գնաց։ —Նատ լաւ արեցիք յանձն չառիք, —ասաց Դիմաքսեանը օրիորդին։

—Բայց իմ մերժելը ինձ էժան չի նստիլ։

—Ի՞նչպէս։

—Ընկերութեան կառավարչուհիները կաշխատեն իմ գործին վեասել։

—Իսկ մենք կըպաշտպանենք ձեր գեղեցիկ գործը, —ասաց Մաերեանը, որ ինքն էլ չըդիտէր, թէ ինչպէս պէտք է պաշտպանի։

Նրա համար այժմ Կարինեանը մի անդնահատելի գիւտ էր հայ կանանց շրջանում։ Նա հիացած էր օրիորդի եռանդով և այն ոգեօրութեամբ, որ նա աշխատում էր իրազործել իւր փայփայած ձեռնարկութիւնը։

Նրա միտքը մանկական պարտիզի վիճակով զբաղված էր ոչ պակաս քան օրիորդինը։ Սրտի հաճոյքով նա երեակայում էր Կարինեանին շրջապատված հարիւրաւոր փոքրիկ էակներով, որոնց մատաղ հոգոյ մէջ պէտք է ցանէր կրթութեան առաջին սերմերը։ Որքան աղնիւ և նախանձելի էր այդ գործը նրա աչքում և ինչքան նա կըցանկանար մի որ և է փոքրիկ գերկատարել այդտեղ։ Նա կըկատարի նոյն իսկ հասարակ վերակացուի պաշտօն, եթէ միայն օրիորդը թոյլ կըտայ։

Արդէն Կարինեանը թոյլտուութիւն ստացել էր պարտէզը բանալու։ Մակայն սկզբնական ծախքերի

համար փող էր հարկաւոր, և նա չուներ: Նա վճռել էր իւր հայրական տան առջև դտնվող այգին դրաւ դնել, բայց այդ բաւական չէր. նա մասնաւոր պարտ-քեր ուներ: Այս պատճառով օրիորդը յուսահատութեան մէջ էր: Դիմաքսեանը պատրաստ էր անմիջապէս առաջարկել իւր օդնութիւնը, բայց չէր վստահանում: Մի դուցէ գիտչէր նրա ինքնասիրութեանը:

Մի անգամ նա իւր ցանկութիւնը յայսնեց Մսերեանին և խորհուրդ հարցրեց, արդեօք ինչ կերպ օրիորդին օգնի, որ վիրաւորական չըլինի:

—Ես շատ համակրում եմ նրա ձեռնարկութեանը և շատ կրցաւէի, եթէ միայն փողի պակասութեան պատճառով նա դլուխ չըդար:

Խեղճ իդէալիստ: Նոյն բողէին նա զգաց փողի քաղցրութիւնը և ոյժը այնպէս, որ երբէք չէր զգացել: Ինչու նրա դրապանը լիքը չէ, որ նա ինքը իւր կողմից օգնէ օրիորդին: Առաջին անգամ նա իւր սրբում զգաց նախանձ դէպի Դիմաքսեանի հարստութիւնը: Նա մինչև անգամ վրդովվեց:

—Չեմ կարծում, որ օրիորդ Կարինեանը ումից և է պարտք վերցնի: Նա հպարտ է, նա կըվիրաւորվի, վերջապէս, նա ուրիշների օգնութեանը ընաւ կարու էլ չէ:

Եւ այս խօսքերը արտասանելիս իդէալիստի ձայնը դողաց, արտայայտելով նրա յուզմունքը:

Դիմաքսեանի համար այդ տարօրինակ խռովութիւնը դեռ անհասկանալի էր: Ուստի նա միամտաբար նկատեց:

—Դու այնպէս ես պաշտպանում օրիորդին, որ, կարծես, ես վիրաւորեցի նրան:

—Ես նրան յարդում եմ, հասկանում ես, յարդում եմ...

—Միթէ ես չեմ յարդում:

—Բայց դու... դու ուրիշ կերպ...

Յանկարծ նա սթափվեց, ուշքի եկաւ, խօսքը ընդհատեց:

Խօսակցութիւնը տեղի ուներ Մսերեանի տանը: Նրանք ճաշից յետոյ նստած էին լուսամտի առջև: Իդէալիստը անորոշ հայեացքով նայում էր հեռաւոր հորիզոնի վրայ կուտակվող սև ամպերին: Նրա խորշումած ճակատի վրայ ընկերը նշմարեց մի տեսակ մռայշլութիւն: Դա այն մշտական թախծութիւնը չէր, որ դրոշմված էր նրա գէմքին շատ վաղուց և որ երբեմն միայն սքօղվում էր զուարթութեան ըսպէներին:

Երբ Դիմաքսեանը տուն վերադարձաւ, միտքը շուրունակ զբաղված էր Կարինեանի ձեւնարկութիւնով: Օրիորդի մտազբազ կերպարանքը չէր հեռանում նրա աչքի տռջեից: Իրաւ, ճիշդ էր տում Մսերեանը, նա փոխվել է, շատ է փոխվել: Նա այժմ տգեղ չէ երեւում, մինչև անգամ սիրուն է գարձել: Նա խելօք է, եռանդուն է, աշխատասէր,—ահա յատկութիւններ, որ կարող են գրաւել մտածող տղամարդին:

Է՛հ, Տէրը նրա հետ, թող ինչ ուզում է լինի, ինչ գործ ունէ նրա հետ նա կամենում էր օգնել, Մսերեանը ասաց անկարելի է, «Հպարտ է, օգնութիւն չի ընդունիլ»: Բայց ինչու էր Մսերեանը վրդովված: Անշուշտ այդ մարդուն մի բան պատահել է և Դիմաքսեանը չըգիտէ:

Փոքր ինչ անցած նա մոռացաւ օրիորդին էլ, Մսերեանին էլ և նրան տիրեց պարբերապէս կրկնվող

տիրութիւնը։ Սարսափով, այն, կատարեալ սարսափով նա յիշեց, որ գարունը մօտենում է։ Դարձեալ նա պէտք է ենթարկվի թախծալի հոգեկան մենութեան տառապանքներին, դարձեալ պէտք է զդայ սիրվելու բուռն պահանջ, դարձեալ կեանքը պէտք է ապարդիւն և ամայի թւայ նրան... Այս մտատանջութեան միջոցին նրա առջև կենդանի պատկերացաւ Գայիանէն։ Նրա կրծքից դուրս թռաւ մի ծանր հառաջանք։ Ահա նա իւր հրապուրիչ կապուտակ աչքերով։ Խնչու նա փոխվել է, ուր է նրա նախկին կենսական զուարթութիւնը, խնչու նա այնքան նիհարել է, դալկացել և այնպէս մելամաղձու է երեւում «նրա» հետ թե թեսի տուած զրօննելիս։

Միթէ նա դժբաղդ է։

XIV

Պեօտր Սոլոմոնիչը մի զարմանալի հոգեկան այլափոխութեան էր ենթարկվել։ Այդ զուարթ, բարեսիրտ, առորդ մարդու ամբողջ բնաւորութիւնը կոտրվել էր և երկու մասի բաժանվել։ Այժմ նրա մէջ բընակվում էին երկու միմեանց բոլորովին հակառակ մարդիկ—ներքին և արտաքին, ընտանեկան և հասարակական։ Տնային Պեօտր Սոլոմոնիչը վերին աստիճանի դիւրագրգիռ էր, անհամբեր, ամենաշնչին բաների համար գոռացող, կռուարար, մինչև անդամ հայնոյոց։ Հասարակական Պեօտր Սոլոմոնիչը համբերով էր, ամենքի հետ համաձայնվող, ոչ ոքի չըհակառակող, շփոթվող և այնքան հեղ, որ ամենահեռաւոր ծանօթներին անդամ զարմացնում էր։ Նա ոչ միայն

առաջուայ պէս տաք-տաք չէր վիճում քաղաքային գործերի մասին, այլ և չէր պաշտպանում ոչ քաղաքագլուխին, ոչ Ամբակում Աֆանասիեվիչին և ոչ էլ ինքըն իրան, եթէ մինչև անդամ երեսին հայնոյէին էլ Բայց, որ ամենազարմանալին էր, շատ անդամ նա քաղաքային Խորհրդի նիստերն էլ բաց էր թողնում։ Օրուայ մեծ մասը նա տանն էր լինում, ծխում էր, մտածում, մանդալիս և ինքն իւր հետ խօսում։ Շարունակում էր լրագիրներ կարգալ, բայց այժմ ուրիշ կերպով։ Ոռաջ նա պարտաւորապէս սկսում էր Խորհրդին վերաբերվող դրուածներից և առհասարակ քաղաքային լուրերից։ Այժմ նանախ և առաջ ուշագրութիւններ, զորորդ երեսի վրայ, ուր պատմվում էին զանազան տարօրինակ դէսքեր, խորհրդաւոր եղելութիւններ, բոմանական ինտրիգներ, գաղտնի սպանութիւններ, և այլն և այլն։

Երեկոները, հակառակ նախկին սովորութեան, նա կլուր չէր գնում և ոչ էլ դուրս էր գալիս փողոց մըշտական զրօսանքը կատարելու։ Մի քանի անդամ կինը փորձեց իմանալ, արդօք ինչու նա հասարակութիւնից երես է դարձրել։ Բայց ծերունին այնպէս կատաղեց, այնպիսի վայրենի զոռոցներ արձակեց, որ աղջած տիկինը պապանձվեց։

Առհասարակ տարօրինակ բաներ էր անում այդ մարդը։ Դիցուք նա նստած է իւր սենեակում մենակ, մտածում է կամ ինչոք հաշիւներ անում։ Յանկարծ նրա ականջին մի ձայն է հասնում։ Նա արագութեամբ վեր է թռչում և անցնում միւս սենեակ, ուր գտընվում են նրա կինը, զաւակները և Ովսաննան։

— Այստեղ ո՞վ էր խօսում։

—Մենք։
 —Ուրիշ մարդ չըկա՞ր։
 —Ուրիշ ոչ սք չըկա՞ր։
 —Ես կարծեցի հիւր եկաւ։
 Եւ ծերունին շփոթված, ծանր քայլերով անցանում էր գարձեալ իւր սենեակը։
 Մի անգամ դարձաւ կնոջը։
 —Անա, Ովսաննան այժմ մեծացել է, չ՞։
 —Առաջիկայ յունիսին տասնութ տարին կըլլանայ։
 —Ուսումն էլ կըլերջացնի, չ՞։
 —Ի հարկէ։
 —Էէ, չնո մտածում նրա մասին։
 —Ի՞նչ պէտք է մտածել։
 —Մարդու տալու համար։
 —Նա ինքն իւր համար մարդ կըդանի։
 —Համ, ի՞նք։
 —Այս, ի՞նչ կայ, ինչու ես այդպէս դարմացած մտիկ անում աչքերիս։
 —Ես կարծում էի, որ նրա համար էլ դու պէտք է փեսացու ճարես, հասկանում ես, երիտասարդ, դեղեցիկ, կրթված փեսացու։
 Եւ «Երիտասարդ, գեղեցիկ, կըթված» բառերը առանձին շեշտելով, մի սուր հայեացը ձգեց կնոջ վրայ սուրից մինչև գլուխ և դնաց։
 Մի ուրիշ անգամ։
 —Անհամ։
 —Ի՞նչ կայ։
 —Լիզօվկան և Ելեշկան էլ մեծանում են։
 —Տեսնում եմ։
 —Էէ, ուրեմն շուառվ դու էլ հարմացու աղջիկ։

Ների մայր կըլինես։
 —Այդ մասին դեռ ժամանակ չէ մտածելու,
 վաղ է։
 —Ժամանակ չէ, —գոռաց Պետր Սոլոմոնիչը, ու
 ուժ գին զարկելով յատակին, —ժամանակ է, տես,
 նրանց հայրը ինչպէս պառաւել է։
 Կինը սիրալիր ժպտաց, նրա ասածը կատակի տեղ
 ընդունելով։
 —Ծիծաղում ես, համ, իհարկէ, կըծիծաղես։
 Ես պառաւ եմ, ուզում եմ իմ աղջիկներիս շուտով
 մարդու տալ, թոռներ եմ ուզում տեսնել և յետոյ
 մեռնել։
 —Ի՞նչ մեռնելու ժամանակ ես դտել, Պետեա,
 դու դեռ այնքանն..
 —Ես գեռ այնքան ի՞նչ, ասա ի՞նչ...
 —Առողջ ես։
 —Բայց պառաւ եմ, չ՞, պառաւ, քաւթառ, կուչ
 ևկած, սպիտակ մազերով, կեղծ ատամներով...
 Եւ նա դարձեալ մի տարօրինակ հայեացը ձգեւ
 լով կնոջ վրայ, քնթի տակ ինչոր մըթմըթաց և հեռ
 ուցաւ։
 Կինը ապշած շարժում էր ուսերը, նայելով նրա
 ետեից։ Իսկապէս նա զիտէր ամուսնու տրամադրու-
 թեան բուն պատճառը։ Բայց չէր հասկանում, ինչու
 ծերունին առաջ այդպէս չէր, յանկարծ փոխվեց, այ-
 ժըմ, երբ տիկինը իրան համարում էր տւելի պակաս
 մեղաւոր։ Նրան սարսափեցնում էին այդ կիսավայրե-
 նի հայեացքները, այդ սոսկալի լռութիւնը, այդ հի-
 ւանդու կասկածամտութիւնը, վերջապէս, այդ ան-
 տեղի դոռոցները։

Այժմ տիկինը ապրում էր դշեթէ հեռու հասարակութիւնից: Պեօտր Սոլոմոնիչը հիւրեր չէր ընդունում, խոյս տալով նոյն իսկ ազգականներից: Նա սատիկ կատաղում էր, երբ կինը դուզվում էր մի տեղ դնալու, ուր որ լինէր, թէկուզ մի հիւանդ ազգականուհու մօտ, թէկուզ խանութից մի բան դնելու: Իսկ երբ դուրս գալը անհրաժեշտ էր, նա Ովսաննային խնդրում էր ուղեկցել տիկնոջը, որ «մենակ տխուր չըլինի»: Իսկ ինքը երբէք նրա հետ դուրս չէր գալիս:

Այդ անտանելի կացութիւնը, հարկաւ, չէր կարող չաղգել երիտասարդ տիկնոջ վրայ: Եւ նա տեսնում էր, որ օրից օր կորցնում է իւր դուրթութիւնը: Ի՞նչ սարսափ զգաց նա, երբ առաջին անգամ հայելու մէջ նկատեց իւր դլսի մազերի մէջ սպիտակներ: Միթէ նա արդէն երեսուն ու չորս տարեկան է: Բայց մարդը, մարդը, ծօ, նա վազուց վաթսունից անցել է: Դժբաղդ կեանք, անիծեալ կեանք: Նա կատաղութիւնից ըստնցքները սեղմեց, շրթունքները այնպէս կծեց, որ արիւն դուրս եկաւ:

Մօտեցաւ ամառը: Տիկինը կարծում էր, որ գոնէ ամարանցում նրա կեանքի պայմանները աւելի կըթեթեանան: Բայց որքմն յուսախափ եղաւ, երբ Պեօտր Սոլոմոնիչը դրականապէս յայտնեց, թէ վըճռել է ամառը ապրել... Մարդկրպում...

Մարդկոս, Խութերա, տիկին Բախտամեանը գնաց Խութերան: Ոչ, այդ անկարելի է, անհաւատալի է, այդ չափազանցութիւն է, խայտառակութիւն է: Ոչ մի հարուստ, ոչ մի քիչ թէ շատ յայտնի ընտանիք չի գնում այդ յետ ընկած ամարանցը:

Նա հակառակեց, նա լաց եղաւ: Բայց ոչինչ չօգ-

նեց: Պեօտր Սոլոմոնիչը վճռել էր և պէտք է իւր վճիռը կատարէր:

Այն ժամանակ տիկինը փորձեց մի անգամ էլ գործ գնել սպառնալիք: Նա սաաց, թէ այդ տեսակ կեանք կրել չի կարող, թէ կըթողնի մարդուն էլ, երեխաններին էլ և կրբաժանվի:

Մի դառն հեղնական ժպիտ մարդու կողմից եղաւ կնոջ պատասխանը: Պեօտր Սոլոմոնիչը գուները լրաց բաց արեց, կանգնեց և, ձեռը մեկնելով դէպի դուրս, սաաց.

«Համեցէք»:

Ոչ մի տեղ նա չի կարող գնալ: Նա Պեօտր Սոլոմոնիչ Բախտամովի օրինաւոր կինն է, պէտք է հնագանդվի նրա կամքին: Իսկ եթէ յանդգնի տնից ոտը գուրս գնել, ոստիկանութեան միջոցով, օրէնքի և եկեղեցու անունով յետ բերել կըտայ: Ո՞վ պէտք է նրան պաշտպանի: Պառաւ մայրը: — Նա քաղցից մեռնում է: Եղբայրը: — Զունի եղբայր: Աղդականները: — Չե՞ն համարձակվիլ:

Վերջապէս, տիկինը խնդրեց խնայել գոնէ Ովսաննային: Հարսնացու ազիկ է, ինչ մեղք ունէ, որ նրան դատապարտում են երեք ամիս ապրել մի խուլ անկիւնում, ուր, բայց կոպիտ գիւղացիներից, ոչ ոք չըկայ:

Սակայն Պեօտր Սոլոմոնիչը պատասխանեց, թէ Ովսաննան, եթէ ուղում է, կարող է քրոջ հետ ամարանց գնալ: Բարաթեանները կամ Բորժոմ կրգնան կամ Աբասթուման կամ մի ուրիշ աւելի լաւ տեղ:

— Նրանք ջահիլ են, նրանց ուրախ կեանք, ուրախ տեղ է հարկաւոր: Մենք պառաւ մարդիկ ենք, որտեղ էլ որ լինի միենոյնն է մեզ համար, միայն թէ

օդը մաքուր լինի:

Ոչինչ չէր կարելի անել: Տիկինը ակամայ հնաշ զանդեց: Բայց Ովսաննային շըթողեց Գայիանէի հետ ամարանոց գնալ: Ինչու, թող այդ աղջիկն էլ տիսրի նրա հետ մի աննշան գիւղում: «Գոնէ նա կարող է միսիժարել ինձ», ասում էր տիկինը:

Պեօտր Սոլոմոնիչը շարախնդութեամբ ժպտում էր, տեսնելով կնոջ յուսահատութիւնը: Պարզ էր, որ նրան սատանայական հաճոյը էր պատճառում այդ բոլորը:

Անվերջ, ձանձրալի և տիսուր էին տիկինոյ համար այդ երեք ամիսները: Նրան թւում էր, թէ աքսորականի կեանք է վարում: Ուրախութեամբ կըհամաձայնվէր մնալ քաղաքում, խաշվել թէկուզ աֆրիկեան անտանելի շոքերի մէջ, միայն թէ «մարդկանց» երես տեսնէր, մարդկանց և ոչ մի քանի «հաւլաբարցիների, ոչ հաւ ու ձու ծախսող շինականների»:

Հետզհետէ նա էլ Պեօտր Սոլոմոնիչի պէս դառնում էր գիւրագրդիո, կոռուարտր: Իւր սրտի թոյնը թափում էր շրջապատողների գլխին: Երբեմն մինչև անդամ ձեռք էր բարձրացնում անմեղ զաւակների վրայ՝ չնին դանցառութեան համար:

Աշնան սկզբին քաղաք վերադառնալով, նրան թւաց, թէ գժոխքից արքայութիւն տեղափոխվեց: Նա ագահութեամբ վաղեց փողոց, պատեց խանութները, այցելեց բոլոր ընկերուհիներին: Պեօտր Սոլոմոնիչը մտքում վճռել էր նրան մի շաբաթ աղատ թողնել: միայն մի շաբաթ, իսկ յետոյ դարձեալ պէտք է նրան իւր ճանկերի մէջ առնէր:

Երբ Աննային հարցնում էին, ինչ զարմանալի

միաք ստիպեց նրան Մարդկոպը գերադասել գեղեցիկ ամարանոցներից, նա պատասխանում էր.

—Զանձրացել էի հասարակութիւնից:

—Օ՛հ, էլ մի ասէք, մենք Վիսբադէնում զզուեցինք...

—Միրտս էր տրաքում Վիէննայում...

—Այս ամառ Փարիզում շատ շոք էր...

Այս բոլորը գիտմամբ արձակված վշեր էին խեղճ տիկնոջ սիրտը խոցոտելու համար:

Որքան Պեօտր Սոլոմոնիչը սառած լինէր դէպի հասարակական գործերը, շրկարողացաւ անտարբեր մնալ քաղաքային նոր ընտրութիւնների ժամանակ: Յայտնվեց, թէ այս անդամ ընտրողական պայքարը աւելի սասափի պէտք է լինի, կուսակցութիւնները աւելի թշնամաբար են տրամադրված:

Ամբակում Աֆանասիեվիչը անշափ վրդովված էր:

—Այդ կոօնները, —բացականչում էր նա, —ամեն տեղ ասում են, թէ մենք քաղքցիներս ոչ մի բանի ընդունակ չենք, բացի Կախեթի գինի խմելուց ու շարմանկա լսելուց: Զհուգներ, հաց խլողներ:

Այսուեղ Պեօտր Սոլոմոնիչի թմրած աչքերը մի վայրկեան վառվեցին: Նա սրտմտութեամբ գոչեց:

—Մերոնք կոօնջուղներից վատ են: Եթէ նըրանք մեր հացն են խլում, մերոնք էլ մեր տան պատիւն են ոտքի տակ տալիս...

Ասաց նա այս խօսքերը, որովհետեւ շրկարողացաւ զսպել սրտի մաղձը: Սակայն նոյն պահին դգաց իւր անզգուշութիւնը, լռեց իսկոյն և, երեսը շուռտալով, հեռացաւ, առանց մինչև անդամ ցըտեսութիւն ասելու:

Ամբակում Աֆանասիեվիչը չափից դուրս զարմացած նայեց նրա ետևից և աչքերը լայն բաց անելով արտասահնեց.

«Էհէ, խեղճ մարդ, բանդ բուրդ է...»:

XV

Օրիորդ Կարինեանը արտասահմանից վերադառնալուց յեռոյ ընդհանուր ուշադրութիւն էր գրաւել։ Նրա անխառն, անշեղ բնաւորութիւնը, անկեղծ և հասարակ վարմունքը հաւաքել էին շուրջը մի խումբ օսրիորդներ և երիտասարդներ։ Շաբաթը երկու անդամ նրա բնակարանը լիբն էր լինում հիւրերով։

Այցելում էին յաճախ և՝ Մսերեանը, բժիշկ Սաւամբէկեանը և Դիմաքսեանը։ Տանտիբուհու պարդ վարմունքը ամենքին արամագրում էր լինել ազատ, զուարժ։

Հիւրերը սովորաբար հաւաքվում էին հինգշաբթի և շաբաթ երեկոները, երբ օրիորդը ազատ էր իւր զբաղմունքներից։ Մսերեանի ոգեսրիչ զրոյցները և դիմաքսեանի սուր, առողջ դատողութիւնները ընկերական շրջանին տալիս էին լրջութիւն։

Սակայն երեսյթների կենարոնը բժիշկ Սալամբէկեանն էր։ Նրա սառն, գանդաղ եղանակով արտասահնած կատակները, կիսահիասթափ և հեռատես որշախօսութիւնները կամայ ակամայ շարժում էին ամենքի ծիծաղը։ Նա ինքը երբէք չէր ծիծաղում, նոյն իսկ ամենազուարճալի մի բան պատմելիս նրա մելամաղձոտ դէմքի վրայ ժպիտ չէր երեսում։ Դա աւելի համեմում էր նրա հումորը, որ անխմաստ և դատարկ

բաների մասին չէր, այլ միշտ հարուածում էր կեանքի որ և է վաս երևոյթ։

Այսու ամենայնիւ, վերջին ժամանակ նրա մէջ էլ նկատելի էր մի տեսակ փոփոխութիւն։ Նա դարձել էր համեմատաբար աւելի գործունեայ և եռանդուն։ Նա առաջուայ չափ յաճախ չէր կրկնում «աշխարհը դատարկ բան է»։ Բացի հիւանդանոցում ունեցած պաշտօնից, նա ձեռք էր բերել և ուրիշ մի թեթև բժշկական պաշտօն, ունէր նաև «պրակտիկա»։ Առհասարակ մելամազութեան հետ այժմ նրա աչքերի մէջ երեսում էր և մի տեսակ զուարժութիւն։ Կարծես, կեանքը նրա համար աւելի հրապուրիչ էր դարձել։

Ժողովների ժամանակ Մսերեանը գիտում էր բըժշկին, մանաւանդ այն բոպէներին, երբ սա Կարինեանի հետ էր խօսում։ Այդ միջոցին իդէալիստը նըկատում էր, որ բժիշկը աւելի զուարժանում է և աւելի աշխոյժ ստանում։ Եւ նա զգում էր մի ակամայ նախանձ, Թախիծը սրտում նա հետեւում էր օրիորդի իւրաքանչիւր քայլին, աշխատում էր զտնել յարմար ժամանակ նրա հետ առանձին խօսակցելու։ Բայց երբ յարմար ժամանակը գալիս էր, նա շփոթվում էր, յուղվում և չէր կարողանում ինչի մասին խօսել և ինչպէս սկսել։

Ամբողջ կեանքի ընթացքում նա այդ տեսակ շփոթութիւն առաջին անգամն էր զգում, և երեսնութ տարեկան տղամարդը այս գէպբում նմանվում էր մի անփորձ պատանու։

Բայց ինչքան ձաձրացնում էր Մսերեանին այրի թոլումբաշեանը։ Այդ հասակաւոր կինը երիտասարդների շրջանում իրան պահում էր աւելի քան երիտա-

սարդ: Նա, կարծես, երդուել էր ամուրի Մսերեանին հալածել մինչև վերջին շունչ, այնքան, մինչև որ գուցէ նա յաղթվի:

Ամառուայ սկզբին ընկերական շրջանը ցրվեց: Ամենքը գնացին այս ու այն կողմ: Օրիորդ Կարինեանը հրաւիրվեց ամարանոց իւր մի ազգական ընտանիքի հետ ամառը անցկացնելու:

Դիմաքսեանի ջղերը բոլորովին յոդնել էին, նա զդում էր հանգստանալու կարիք: Նա վշտացած էր մի անտաղողութեամբ: Նա աւարտել էր իւր գրուածքը «անհատի և հասարակութեան մասին», բայց մի անշաղթելի խոչնդոտի պատճառով ստիպված էր նրան լոյս չընծայել:

Նա առաջարկեց Մսերեանին միասին գնալ մի տեղ օդափոխութեան: Եւ նրանք ուղերժեցին այն ամարանոցը, ուր հրաւիրված էր Կարինեանը:

Այդտեղ էր նաև Գայիանէն իւր զաւակների հետ, երկու ընկերները վարձեցին մի հիւրանոցում երշկու սենեակ, վճռելով մնալ մի ամրող ամիս, որից յետոյ Դիմաքսեանը մտադիր էր գնալ իւր ծննդավայրը: Ամեն օր նրանք առաւատեան դուրս էին գալիս լեռնային մաքուր օդ շնչելու և բնութեան հրաշալի տեսարաններով զուարճանալու:

Մի անդամ Դիմաքսեանը հանդիպեց Գայիանէին: Տիկինը իւր երկու փոքրիկ զաւակների և դայեակի հետ հասարակական ծառաստանումն էր: Դիմաքսեանի հետ էին Մսերեանը և օրիորդ Կարինեանը: Նա կամեցաւ բարեել տիկինոջը և անցնել: Բայց օրիորդը մօտեցաւ Գայիանէին, համբուրեց նրա երեխաներին: Ուղեկիցները ստիպված եղան կանգ առնել:

Գայիանէն հագած էր հասարակ շմեայ ամարային զգեստ, որի մուգ կապոյտ գոյնը աւելի ակընչայտ էր կացուցանում նրա դէմքի գունատութիւնը:

Խումբը նստեց մի փայտեայ նստարանի վրայ: Գայեակը երեխաների հետ խաղում էր մի քանի քայլ հեռու, կանանչ խոտի մէջ: Մեծ երեխան արդէն վաղվղում էր, փոքրը հաղիւ կարողանում էր իւր թոյլ ոտիկների վրայ կանգ առնել:

Գայիանէն պատմեց օրիորդին, թէ նրա ամուսինը բնակվում է քաղաքում և միայն շաբաթը կամ երկու շաբաթը մի անդամ գալիս է ամարանոց մի քանի օրով: Օրիորդի և տիկինոջ յարաբերութիւնը բաւական բարեկամական էր: Բացի հեռաւոր աղդականուհիներ լինելուց, նրանք գիմնազիական ընկերուհիներ էին եղել:

Դիմաքսեանը Գայիանէի խօսքերից բնազդումով զգաց, որ տիկինը աշխատում է ցոյց տալ, թէ իւր կեանքը անցնում է շատ ուրախ, երջանիկ: Բայց նա կեղծիքը հասկանում էր և չէր կարող չըհասկանալ: Նա ծանօթ էր իւր նախկին ընկերոջ բնաւորութեանը, գիտէր, թէ այժմ նա ինչ տեսակ կեանք է վարում տնից գուրս: Ուստի երեակայում էր, թէ որքան կարող է երջանիկ լինել մի կոոջ կեանք, որ այդպիսի ամուսին ունէ, եթէ միայն այդ կինը կամ չափազանց յիմար կամ չափազանց դիւրահաւան չէ: Իսկ թէ Գայիանէն ոչ այս էր, ոչ այն, որ նա խելօք էր, զգայուն, որ նրան գոնէ այժմ խաբելը գժուար էր—այդ շատ լաւ գիտէր Դիմաքսեանը.

Նա սկսեց խղճալ տիկինոջը, բայց միևնոյն ժամանակ, վրդովվեց էլ: Թող նա կը իւր անզգուշութեան

և կուրութեան պատիմը Թող տեսնի, թէ ուժ հետ
կապեց իւր կեանքը յաւիտեան, գերադասելով ար-
տաքին փայլը և շուքը ներքին, հոգեկան արժանա-
ւորութիւններից:

Այսուհետեւ Դիմաքսեանը յաճախ պատահում էր
Գայիանէին, որ միշտ իւր փոքրիկների և նրանց դա-
յեակի հետ էր լինում և միշտ միկնոյն նստարանի
վրայ նստած: Երբ Դիմաքսեանը մենակ էր լինում,
ամաչում էր մօտենալ նրան, թէ և տիկինը ընդու-
նում էր նրա բարեները այնքան սիրալիր, այնքան բա-
րեկամական կերպով, որ կարող էր վատահ մօտենալ,
առանց կասկածելու, թէ այդ գուր չի դալ նրան:

Հետզհետէ նրա սրտում պակասում էր նախկին
ատելութիւնը, տեղի տալով ցաւակցութեանը: Նա ցա-
ւում էր Գայիանէի մասին, որովհետեւ համոզվում էր,
որ նա դժբաղդ է: Երբեմն նա Մսերեանի հետ հիւ-
րանոցի պատշգամբի վրայ նստած մինչև ուշ գիշեր
խօսակցում էր: Եւ նրանց խօսակցութեան առարկան
մեծ մասամբ Գայիանէն և օրիորդ Կարինեանն էին:
Իդէալիստի համար այժմ չըկար ուրիշ աւելի հետա-
քրքրական թեմա, քան օրիորդը: Այժմ նա անչափու-
րախ էր, որ Կարինեանը, առանց ուրիշի օգնութեան,
իւր գործը նիւթականի կողմից յաջողեցրել էր և սեպ-
տեմբերի սկզբին արդէն պէտք է բաց անէր մանկա-
կան պարտէղը:

Մի օր յանկարծ ամարանոցում երեաց բժիշկ Սա-
լամբէկեանը՝ նա ասաց, թէ եկել է մի շաբաթով իւր-
ազգական մի ընտանիքի մօտ, որ Ախալցխայից էր
տեղափոխվել ամարանոց: Նրա գալը, ինչպէս երեսում
էր, Մսերեանին գուր չեկաւ: Դիմաքսեանը նկատում

էր, որ այդ օրերը իդէալիստը շատ տխուր է, թէ և
ոչնչ չի առում և առհասարակ շատ գաղտնապահ է
դարձել: Որքան այս հանգամանքը հետաքրքրական
լինէր Դիմաքսեանի համար, բայց սեպհական մտա-
տանջութիւնը ամեն բան մոռացնել էր տալիս նրան:
Նրա մտքից և աչքից չէր հեռանում Գայիանէն: Ահա
նա, միշտ մելամազոտ, միշտ գունատ, միշտ նստած
միկնոյն նստարանի վրայ, մայրական զգոյշ աչքերով
հակում է իւր փոքրիկներին: Երբ նա տեսնում է Դի-
մաքսեանին, բռնի զուարթութեան ժպիտը երևան է
գալիս նրա դէմքի վրայ: Նրա կապուտակ աչքերը
դարձեալ փայլում են: Կեղծիր, կեղծիր, բայց քո
դժբաղդութիւնը նկարված է այդ մռայլուն աչքե-
րիդ մէջ:

Մի անդամ Դիմաքսեանը տիկնոջը հանգիպեց
ամուսնու հետ: Նրանք զբօնում էին հասարակական
պարտիզում, ուր նուազում էր երաժշտութիւնը և
անցուգարձ էին անում ամարանոցի անհոգ բնակիչները:

Վերջին ժամանակ Բարաթեանը գրեթէ անճա-
նաչելի էր գարձել արտաքուստ: Մի ժամանակուայ
նրբակազմ գեղեցիկ երիտասարդը գիրացել էր, փոր
զցել: Նրա այտերը ուռել էին, կարմրել, պարանոցը
հաստացել էր: Դէմքի նախկին նրբութիւնը և խելա-
ցի արտայայտութիւնը տեղի էր տուել բուրժուական
կուշտ, անհոգ արտայայտութեանը:

Գայիանէի համար այդ փափոխութիւնն էլ անա-
խարժ էր: Երբեմն, դիտելով ամուսնուն, նա յիշում
էր, որ մի ժամանակ այդ մարդու գրաւիչ յատկու-
թիւններից մէկը նրա համար եղել է և գեղեցկու-
թիւնը: Մէկը. գուցէ հենց այդ մէկն էր գլխաւորը:

Այժմ այդ էլ դաւաճանում է նրան, Ուրեմն ինչն է նրա մէջ յարատե, մշտական...

Այժմ նրանց մէջ այլ ևս տեղի չէին ունենում ընտանեկան բուռն տեսարաններ: Գայիհանէն տանջվում էր լուռ, անբողոք: Բայց որքան թանգ էր նըստում նրա սրտին այդ լուռթիւնը: Շատ անգամ կարելի էր տեսնել նրան իւր սենեակում առանձնացած արտասվելիս: Զէ որ այժմ նա միայնակ է, դրեթէ բոլորովին, միայնակ, որը, անպաշտպան: Ինչու տիկին Բախտաւեանը չըթողեց Ովաննային, նրա հարազատ քրոջը, գալ նրա մօտ:

Այս, այդ կինը, ամեն տեղ նա է Գայիհանէի բաղդի խոչնդոտը: Այն, նա առաջինը ստուեր ձգեց նրա ընտանեկան երջանկութեան վրայ, առաջինը կորզեց նրա բաղդը:

«Այսպէս է արդեօք, իզուր չի իմ մեղադրանքը»: Ոչ, ոչ, հազար անգամ ոչ: Փաստեր: —Միթէ իսակը անփորձ պատանի է, որ չըհասկանայ, թէ որքան ծանր է յանցանքը, այնքան պէտք է զգոյշ լինել «փաստեր» ջնջելում: «Զէ որ հարիւր անգամ բըռնել եմ նրա սուտը...»: Եւ այդ բոլորից յետոյ, մի օր, մի գժբաղդ օր... ահա և փաստը...

Երեկոյ էր: Նրանք նստած էին ամարային կացարանի ընդարձակ պատշտամբի վրայ: Գայեւակը երեխաներին քնեցրել էր և ինքը տնից հեռացել: Բացակայ էին և միւս ծառաները: Մարդ ու կին առանձին էին:

Հասարակական պարտիզից լսվում էր երաժշտութեան ձայնը: Զով եղանակ էր, թեթև անտառային զեփիւռը մեղմիկ սօսափում էր ծառերի ճիւղերը:

Գայիհանէն, արմունկը յենած պատշտամբի վանդակապատին, դիտում էր օգոստոսի պարզ երկնակամարը, պապղում էին պայծառ աստղերը: Վաղուց նրա թէյը ստուել էր, բայց նու ձեռ չէր տալիս բաժակին:

—Վերջապէս, պէտք է խօսես, թէ չէ,—արտասանեց Բարաթեանը, —դու կարող ես մարդ խելագարեցնել:

—Ուզում էք, որ խօսեմ:

—Ոչ միայն ուղում եմ, այլ դա մի բնական պահանջ է: Ամբողջ շաբաթը անտանելի շոքերում շան նման չարչարփում եմ, գալիս եմ այստեղ մի քիչ հանգստանալու և ինչ եմ տեսնում. մի տխուր, թթված կերպարանը: Մինչեւ երբ, ասա, մինչեւ երբ պէտք է այդպէս շարունակվի:

—Այն, մինչեւ երբ, —կրկնեց Գայիհանէն հանդարտ, կարծես, ինքն իւր հետ խօսելով:

—Ուրեմն դու դեռ մտադիր ես երկար շարունակել: Ո՞չ, ի սէր Աստուծոյ, բաւական է, մի տանջիկ ոչ քեզ, և ոչ էլ ինձ:

—Եթէ իմ ձեռքիս լինէր այդ տանջանքից ձեզ աղատելը, Աստծուն է յայտնի, կազատեի: Բայց... չեմ կարող, ոչ, չեմ կարող, այն անմեղները...

Զայնը դողալով, մատնեց նրան: Սակայն նա կարողացաւ զսպել իրան: Մի քանի վայրկեան լոելուց յետոյ, ուղիղ նայեց ամուսնու երեսին և, թեթև հառաջելով, ասաց:

—Ես ձեզ համար մի սիւրալրիզ ունեմ:

Բարաթեանը աչքերը լայն բաց արեց:

—Ի՞նչ բան է այդ, —հարցըրեց նա վախեցած:

Գայիհանէն հանդարտ վերկացաւ տեղից, անցաւ

իւր սենեակը, Մի րոպէ չանցած նա դուրս եկաւ՝ մի վորբիկ ծրար ձեռին:

— Ճակատագիրը ինքն է երբեմն մարդկանց մեծ զգուշութիւնով թաղցրած կեղտը պարզում, — ասաց նա, — բայց եթէ այդ կինը այնքան խելօք լինէր, որքան դուք, այս բանը այսուեղ չէր ուղարկիլ: Գիտեմ, վաս բան է արածս, հասցէն ձերն էր, իրաւունք չունէի բաց անելու, բայց ինչ արած, փաստ էիք պահանջում, ահա...

Բարաթեանը նստած էր ներսից լուսաւորված սրատուհանի առջև, ուստի նկատելի էր, թէ ինչպէս մի ակնթարթում փոխվեց նրա դէմքը:

— Խեղճ կին, նա տանջվում է: Միթէ դուք չէք կարող սչնչով օգնել նրան, աղատել մի խելագար ձեռունու ձեռքից, ինչպէս նա անուանում է այն աղնիւ մարդուն:

Երբէք Գայիխանէն այնչափ հանգիստ և, միենոյն ժամանակ, այնչափ սարսափելի չէր եղել իւր մարդու համար, որչափ այդ րոպէին: Ինչպէս բարոյականութեան անողոք դատաւոր, կանգնած էր մեղապարտ ամուսնու առջև և տալիս էր նրան իւր դատավճիւը:

Բարաթեանը միայն նայեց ծրարին, ամեն բան հասկացաւ, դրեց գրպանը: Հերքել անկարելի էր: Հարկաւոր էր միայն պաշտպանվել: Նա հազիւ կարողացաւ ուշքի դալ, հնարել արդարանալու մի միջոց, մի խօսք: Սակայն Գայիխանէն չըթողեց նրան բերան բաց անել: Դրական և անդիմադրելի եղանակով նա ասաց.

— Ոչ մի խօսք...

Յետոյ, մի ծանր հառաջանկ արձակելով տառապող սրտի խորքից, աւելացրեց.

— Մեր մէջ այսուհետեւ ամեն կազ պէտք է կտըրված համարել:

Նա դլուխը բարձր պահած, դունատ, ինչպէս գիտի, զզուանքով և ատելութեամբ լի մի հայեացք ձգեց ամուսնու վրայ և ծանր քայլերով անցաւ իւր սենեակը:

Բարաթեանը ժամանակ չունեցաւ մի բառ անգամ արտասանելու: Բայց երբ Գայիխանէն անհետացաւ, նա ձեռները յենեց ծնկներին, նայեց յատակին և, գլուխը շարժելով, արտասանեց.

« Կոմեդիան դրամա է դառնում... »:

XVI

Ամարանոցը գտնվում էր Կովկասեան երկրի մի գեղեցիկ վայրում: Դա սքանչելի Բորժոմի էր, աղջապատված բարձր, անտառազարդ լեռներով և ուղղահայեաց, անմատչելի ժայռերով:

Այստեղ մի կողմից հանդարտ հստում է Քուրը: Միւս կողմից սրնթաց վազում է մի փոքրիկ լեռնային գետակ, որ կրում է ամարանոցի անունը: Գետը կլանում է գետակին հովիտի կենտրոնում և գոյացնում երեք թերակղզիներ, որոնց վրայ սփռված են հարուստ ու շքեղ ամարային կացարանները:

Արեգակը միայն միջօրէին մի քիչ ժամանակ նայում է հովիտի խորքը, այնուհետեւ ահռելի ժայռերը ամեն ինչ քողաւորում են իրանց մութ ստուերներով: Գետակը լեռների ծոցից քշում բերում է մի անբնդհատ զով, եւ այդ զովն է, որ հալածում է ձորի մէջ տիրող բնական տօթը: Շարժվում են հսկայա-

կան եղեխների և մայր ծառերի գագաթները, խաւզում են բաղմատեսակ թփերի տերեները և օդը լեցնում ընութեան մշտական համերգով։

Գետակը յուսահատ կրվում է ժայռերից թաւարված վիթխարի բեկորների հետ, և նրա յատակից լսում են տարօրինակ մոնշիւններ, նման մարդկային յուսահատ գոռոցների։

Տեղ տեղ այդ բեկորները գոյացնում են փոքրիկ ջրվէժներ, որոնք իրանց փրփուրներով հեռուից նմանվում են գետակի վրայ սփռած սպիտակ սաւանների։ Իսկ տեղ-տեղ նրանք գոյացնում են մանր կըղզիներ, ուր առաւտից մինչև երեկոյ թռչութեամբ են տեսակ-տեսակ թռչուններ։ Թանձր մացառներով ծածկված քարքարոտ ափերից տարածվում են աջ ու ձախ բաղմաթիւ ուղիներ, որոնք տանում են դէպի տնտառապատ լեռների բարձրութիւնը։ Տեսարանը աւելի ամփոփ և աւելի գեղեցիկ է երեսում այդ լեռներից մէկի գագաթից դիտելիս։ Այսակից բացվում է անթիւ ձորերի, կիրճերի և այրերի մի շարք։ Երեւում են ուրիշ գետակներ և առուակներ, որոնց մակերեսովները մերժ ժպտում են արեի ծառագայթներից, մերժ մթնանում ծառերի և ժայռերի ստուերներից։ Նուրբ լսողութիւնը այստեղ կարող է զուարձանալ մի տարօրինակ և վերին աստիճանի դուրեկան երաժշտութիւնով, որ բազկանում է ստորատում հսոսղ ջրերի ձայներից, թռչունների կչկչոցներից և մեղմիկ հողմի շշնջիւններից։ Եւ այդ երաժշտութիւնը աւելի գերբնական է հնչում, աւելի փանտաստիքական թւում, երբ լսողի հայեացքը թափառում է հեռաւոր լեռների գագաթներով, ուր դարա-

որ ծառերը, կարծես, պարզ և կապոյտ երկնքի հոռիզոնում դիւթական սիլուետների պէս պար են ըրռանում։ Միջօրէին մօտ արևի ջերմութիւնը անտառի ծառերի, թփերի և ծաղկների միջից դուրս է մըզդում պէս-պէս բուրմունքներ և նրանց անուշ խառնուրդով տոգորում լեռնային յստակ օդը։ Այդ միջոցին օդը փոքր ինչ փոխում է իւր գոյնը։ Երեսում է նրա մէջ մի նուրբ արծաթագոյն փոշի, որ թեթև գուլորշիի պէս բարձրանում է դէպի վեր և երկնքի մուգ կապտութիւնը պօզում բարակ, թափանցիկ շղարշով։

Ինքը ամարանոցը երեսում է լեռների մէջ ամփոփված և ծառերի խտութեան մէջ թաղված։ Բանաստեղծական անկարգութեամբ տեղաւորված տների և տնակների կանանց, կարմիր մոխրագոյն և սպիտակ կտուրները հազիւ հաղ նշմարվում են, ինչպէս գալար խոտի մէջ հանգչող կրէաներ գոյնզգոյն կեղեններով։

Դիմաքսեանը երբեմն մենակ նստում էր մի մամուապատ ապառաժի վրայ ու ժամերով դիտում շրջակայքը։ Այդ միջոցին նրա թախիծը չէր նմանվում սովորականին։ Նրա սիրտը լցվում էր զօրաւոր զգացումներով ու տարօրինակ ձգտումներով։ Նա նախանձում էր ընութեանը, այն, նախանձում էր նրա գեղեցիկութեանը, նրա յարատե գոյութեանը, նրա անսահման ոյժին և օրէնքներին։ Հեռաւոր լեռների վըսեմ տեսքը, սրածայր ժայռերի սոսկալի կերպարանը, ընթացող ջրի մշտականութիւնը, այդ բոլորը նրա սիրտը ճնշում էին և, միենոյն ժամանակ, բորբոքում։ Արիւնը եռում էր երակների մէջ, և նա վրդովվում էր, թէ ինչու բնութեան ստեղծագործութեան մէջ

բանական արարածը, մարդը, շպիտի յարատե վա-
յելի այդ բոլոր սքանչելիքները, ինչու այդ գետա-
կը, այդ անտառը, վերջապէս, այդ անօգուտ ժայռի
բեկորը աւելի պէտք է շարունակի իւր դոյութիւնը,
քան թէ ինքը, ինչու մարդ այնքան փոքրիկ է, այն-
քան աննշան, որ մատաղ ծառ, մի որ և է թուփ կա-
րող է ծածկել նրան բնութեան այդ վիթխարի ոյ-
ժի սովոր:

Երեսուն և մեկ տարեկան է, դարձեալ մի տա-
սը տարի, և ահա ոոռք կըդնի ծերութեան առաջին
շրջանը: Այնուհետեւ արագ արագ կըսպառվեն նրա ոյ-
ժերը, կըսառչեն նրա զգացումները, և յետոյ, մի օր,
մի սարսափելի օր, նա այլ ևս չըկայ: Իսկ ինչ է ա-
րել նա մինչեւ այժմ, և միթէ նա պէտք է չքանայ
առանց մի խոշոր հետք թողնելու իւր ետևից...

Կէսօր էր: Նա արմունկը յենած կանանչ դետ-
նին, գլուխը ձեռի ափի մէջ պահած, դիտում էր
թփերի մէջ թռչկոտող ինչոր խայտարղէտ թռչնիկ-
ների խաղը: Յանկարծ նրա առջև նկարվեց մի մարդ-
կային մարմնի շուաք:

Նա յետ նայեց: Մոերեանը կանգնած էր նրա
դլիի մօտ դունաթափ դէմքով, վհատված աչքերով,
տրտում և միանգամայն անճանաչելի:

—Սնպատճառ մի դժբաղդութիւն է պատահել,—
գոչեց Դիմաքսեանը, գլուխը բարձրացնելով:

Մոերեանը ձեռով մի յուսահատ շարժում դոր-
ծեց և, ուժասպառ ընկզմվելով կանանչ խոտի մէջ,
թոյլ և ընկճած ձայնով պատասխանեց.

—Երկու ժամ է քեզ փնտռում եմ:

—Նստիր և հանգստացիր, երեսիդ դոյն չըկայ,

դողում եմ:

Դողում եմ, լաւ, դողում եմ, ինչ ես ուղում ին-
ձանից,—գոչեց Մոերեանը բարկանալով,—տեսնում
ես, որ չորացած, կուչ եկած տերեկի եմ նմանվում:
Բայց երբ եմ ասել, թէ ուղում եմ մրցել ուրիշների
հետ այն էլ իմ սիրած ընկերոջ հետ: Ախ, Արսէն, ե-
թէ իմանայիր որքան ինքս իմ դէմ վրդովված եմ, որ-
քան ինքս իմ աչքում խղճալի: Այս, այս, խղճալի եմ,
և ինչ կըսագէր ինձ այս հասակումս խելքից զրկվել...

Արդէն Դիմաքսեանը մասամբ գուշակում էր, թէ
ինչ է պատահել: Անցան մի քանի բոպէներ, Մոե-
րեանը փոքր ինչ հանգարտվեց և սկսեց եղելութիւ-
նը պատճել:

Միթէ Դիմաքսեանը չբիտէր նրա ամարանոց
դալու շարժառիթը:

—Ուրեմն մի ստիպիլ ինձ կարմրել, մանրամաս-
նութիւնները պատմելով: Ես կասեմ այն, ինչոր մի-
այն այսօր անցաւ իմ դիմով:

Բժիշկ Սալամբէկեանի երեալը դարթեցրեց նրա
մէջ մի անտանելի նախանձ: Նա այլ ևս չըկարողա-
ցաւ դիմանալ սրտի բուռն զգացմանը: Նա գուշա-
կում էր, որ մի բան կայ օրիորդ կարինեանի և բը-
ժշկի միջև և, եթէ լինէր դրական մարդ, կարող էր
յետ կանգնել իւր մնոտի յոյսերից: Բայց մի անյաղ-
թելի ոյժ մզեց նրան դէպի առաջ և բաց արեց նրա
ոտների տակ մի զիհ: Երանի գոնէ մի օր նա լինէր
Վէքիեան կամ ունենար նրա քարոզած զգուշութիւ-
նը և խոհեմութիւնը: Այն ժամանակ նա այսօրուայ
«յիմարութիւնը» չէր անիլ, կըտանջվէր, բայց առանց
ամօթի, առանց խղճի խայթոցի:

—Եւ գիտես ինչն է ինձ տանջողը։ Կարծում ես
նրա մերժելը։ Ո՞չ. այդ բանին ես արդէն մի քիչ նա-
խապատրաստված էի, երբ սկսեցի բացարձակ խօսել։
Ինձ վշտացնում է այն, որ նա խելօք վարվեց, իսկ
ես յիմարի եթէ տեսնէիր, ինչպէս նա աշխատում էր
ինձ ըրվշտացնել։ Ես պարզում էի նրան իմ սիրտը,
նա լուռմ էր հրեշտակի համբերութիւնով։ Բայց խօս-
քը չըվերջացրած, նրա աչքերի մէջ կարդացի իմ պա-
տասխանը։ Նա մերժեց, բայց ինչպէս, կարծես, նա
մեղաւոր էր իմ առջեւ և ուզում էր արդարանալ։ Ե՞ն,
ինչ երկարացնեմ։ Նա բժշկին սկսել է համակեր դեռ
ինձ հետ ծանօթանալուց առաջ, նրանք նամակագրու-
թիւն են ունեցել միմեանց հետ, երբ օրիորդը ար-
տասահմանումն էր։

Նա ուաքի կանգնեց։ Այդ բոպէին նա այնքան
ճնշված, այնքան վշտալի էր, որ Դիմաքսեանը պատ-
րաստ էր ամեն բան անել, միայն թէ այդպէս ըրտեսնէր
նրան։ Նա մոռացել էր սեպհական վիշտը և մտքում
սրոնում էր խօսքեր, որոնցով հնար լինէր միսիթարել
ընկերոջը։ Բայց այդ դիւրին չէր։ Ի՞նչ խօսքեր կա-
րող էին սփոփել մի սիրտ, որ երեսնութ տարի կոյտ
էր մնացել, առաջին անգամ համակվել էր սիրոյ զգա-
ցումով, և այդպէս անաջող։

Մի ժամանակ նոյն յուսահատութեամբ Դիմաք-
սեանը պարզում էր իւր սիրտը Մսերեանի մօտ, և
սա կարողանում էր նրան միսիթարել։ Իսկ այժմ ի-
դէալիստի աչքերի մէջ երեացող թացութիւնն անդամ
չըթելագրեց նրան մի միսիթարական դարձուած, մի
խօսք։ Ճիշդ որ այդ շափահաս մարդը, որի աչքերը
դուցէ կեանքի ամենադժուար բոպէներում արցունք-

չէին տեսել, այժմ, կարծես, ուզում էր արտասուել։
Բայց ոչ, նա երեսը յետ դարձրեց, զսպեց իրան և
երբ կրկին նայեց ընկերոջը, արդէն բաւական հան-
գիստ էր նրա դէմքը։

—Մըբատ, —խօսեց, վերջապէս, Դիմաքսեանը —
միթէ դու ինձանից թոյլ ես, որ այդպէս յուսահատ-
վում ես։ Ճշմարիտ է, քոնը աւելի ցաւալի է, որով-
հետեւ դու բացարձակ յայտնեցիր քո սէրը և բացար-
ձակ էլ մերժում ստացար։ Բայց մտածիր, որ կարի-
նեանը քո ընկերոջը, այն էլ լաւ ընկերոջը, ընտրեց,
իսկ Գայիանէն իմ թշնամու, այն էլ վատ թշնամու
կինը դարձաւ։ Գոնէ այսքանը թող քեզ միսիթարի։

—Ընկեր, —կրկնեց Մսերեանը հեղնօրէն, —ո՞ն է
զօրեղ, ընկերական սէրը, թէ սէրը գէպի կինը։ Հա-
մոզված ես, արդեօք, որ քո և Բարաթեանի թշնա-
մութեան գլխաւոր հիմքը Գայիանէն չէ...

Այս խօսքերի մէջ կար մի փոքր ճշմարտութիւն։
Դիմաքսեանը զգաց, որ լոկ համոզմունքների տարրե-
րութիւնը գուցէ այնքան սուր կերպարանք ըրտար
նրանց թշնամութեանը, եթէ մէջ տեղ չըլինէր Գայիանէն։

—Աւրեմն, —շարունակեց Մսերեանը, —մի զար-
մանալ, եթէ ասեմ, որ ես այլ ես այստեղ չեմ կարող
մնալ և նրա երեսը տեսնել։

Եւ նա, անմիջապէս ձեռը թոյլ կերպով մեկնե-
լով Դիմաքսեանին, աւելացրեց.

—Երեի, դու գեռ կըմնաս այստեղ։

—Իսկ դու։

—Դնում եմ։

—Ո՞ւր։

—Չըդիտեմ, միայն այստեղից պէտք է հեռա-

նամ հէնց այսօր, հէնց այս ժամին:

Նա ձեռով մի տխուր, յուսահատ շարժում գործեց և բայլերը արագացրեց: Երկու ժամ անցած նա ուղևորվեց ամարանոցից, չընայելով ընկերոջ թախանձանքին՝ դէմ մի քանի օր էլ սպասել:

Մնալով միայնակ, Դիմաքսեանը սկսեց աւելի տխրել: Նա ցաւակցում էր Մսերեանին անչափ, բայց, միենոյն ժամանակ, ընկերոջ դժբաղզութեան մէջ զգում էր մի տեսակ մխիթարութիւն: Այժմ նա տեսնում էր, որ միայն ինը չէ անաջող բաղդի տէր, մերժված և մոռացված:

Նա շարունակում էր իւր մենակի զրօսանքները: Եւ միշտ նրա քայլերը ակամայ գիմում էին այն կողմ, ուր սովորաբար լինում էր Գայիանէն: Բայց երեխաները և գայեակը միշտ միենոյն տեղն էին լինում սովորական ժամին, իսկ Գայիանէն մի քանի օր էր չէր երեսում: Նա սկսեց անհանգստանալ. ըլլինի թէ հիւանդ է տիկինը: Մի անդամ, չըկարողանալով զապել բուռն հետաքրքրութիւնը, զգուշաբար հարցրեց գայեակին: Ռուս կինը աչքունքը թթուացնելով պատասխանեց, թէ «տիրուհին» թէ և պառկած չէ, բայց «տիկար է»:

Դիմաքսեանը անտակտութիւն համարեց աւելի հարցնել: Նա համբուրեց երեխաներին, նայեց մեծ աղջկայ աչքերին, որ մօր աչքերին էին նմանում, թեթև հառաջեց և հեռացաւ, իւր սրտում տանելով մի ցաւակցութիւն դէպի այդ անմեղ արարածները: Ցաւակցութիւն, բայց խառն մի անբացատրելի ատելութեան հետ:

Նա անցնում էր մի նեղ ծառուղիով, ոչ հեռու գետակից, գլուխը կրծքին թեքած, անուշադիր դէ-

պի իւր շուրջը: Յանկարծ մէկը արտասանեց նրա անունը ետևից: Նա յետ նայեց և տեսաւ բժիշկ Սալամբէկեանին օրիորդ Կարինեանի հետ:

—Ես կամենում էի հարցնել, երբ էք մտազիր վերադառնալ քաղաք,—հարցրեց օրիորդը Դիմաքսեանին:

Նա ինքը չըգիտէր, թէ երբ կըփերագառնայ, գուցէ վաղը, միւս օրը, գուցէ գեռ երկար ժամանակ կըմնայ:

—Ինչո՞ւ համար էիր հարցնում,—ասաց նա:

—Ոչինչ, այնպէս,

Օրիորդը խօսում էր տատանվելով և կմկալով: Նրանք առաջ գնացին մի քանի ըոպէ լուս: Բժիշկը մտախոհութեան մէջ էր, չէր խօսում: Օրիորդը նայեց նրա երեսին, մտածեց մի վայրկեան և ապա կըրկին դարձաւ Դիմաքսեանին.

—Արդեօք պարսն Մսերեանի մասին տեղեկութիւն ունեք:

—Ո՛չ.

—Քանի ժամանակ է անցել նրա գնալուց:

—Արդէն տասն օր է:

—Եւ դուք նամակ չունեք:

—Դեռ ոչ. ինչ կայ...

Նա վախեցաւ, կարծելով ընկերոջը մի բան է պատահել, որ օրիորդը այնքան անհանգիստ կերպով հարց ու փորձ է անում:

—Ոչինչ չի պատահել, ես միայն ուզում էի նրա մասին տեղեկութիւն ունենալ, ես նրան անչափ յարշում եմ...

Բժիշկը տակաւին լուս էր: Մօտենալով ճեմելիքի ծայրին, նա նստեց նստարանի վրայ, ասելով, թէ

սաստիկ յողնած է։ Մի քանի րոպէ անցած, օրիորդը հեռացաւ, մտնելով գիմացի ամարանոցը, ուր նա բնակում էր։ Երկու ընկերները մնացին առանձին։

—Ես զգում եմ, որ նաքեզ բոլորը պատմել է, —խօսեց վերջապէս բժիշկը, —ուրեմն հարկ չըկայ թագշնելու։ Բայց միթէ ես մեղաւո՞ր եմ, որ գործը այս ընթացքը ստացաւ։ Դու դիտես, թէ ես որքան սիրում եմ և յարգում Մասրեանին...

—Միթէ ես այդ մասին մի խօսք ասացի, քեզ մեղադրեցի։

—Ո՛չ, բայց ինչ և լինի, այժմ դու ինձ վրայ ուրիշ աչքով ես նայում։

—Ես քեզ վրայ այժմ էլ այն աչքով եմ նայում, ինչ աչքով նայում էի առաջ։

—Ենորհակալ եմ, —պատասխանեց բժիշկը զուարթանելով, —ինձ համար այդ մեծ նշանակութիւն ունէ։

—Ես միայն զարմանում եմ ընութեան խաղի վրայ։ Երբեք չէի կարող երևակայել, որ Մասրեանը մի օր կը յափշտակվի այդպէս իսկ դու, ու այնքան ծաղրաբար էիր վերաբերվում կեանքին, դու որ դատարկ բան էիր համարում նրան, ինչպէս եղաւ, որ այսօր յանկարծ երկու ձեռքով ես զըկում այդ դատարկ բանը։

—Ես ինքս չըգիտեմ, ինչպէս բացատրել։ Միայն այսքանը կասեմ, որ այն օրից երբ ես մօտիկ ճանաչեցի այդ աղջկան, իմ մէջ սկսվեց մի հոգեկան յեղափոխութիւն։ Թող հոգեբանը բացատրի այս, իսկ ես այժմ այնքան ուզում եմ ապրել, որքան երբեք, երբեք չեմ կամեցել...

Եւ բժիշկը սկսեց ոգեսորված գովել օրիորդ Կա-

րինեանին, հարկաւ, ինչպէս սիրահար, կրկնապատկելով նրա արժանաւորութիւնները։ Դիմաքսեանը զգում էր, որ իւր մէջ դարձեալ շարժվում է նախանձը։ Նա մտքում պարսաւեց ինքն իրան և, աշխատելով զսպել վատ զգացումը, անկեղծաբար արտայայտեց իւր բերկութիւնը ընկերոջ երջանկութեան մասին։

Օրից օր նրա անհանգստութիւնը սաստկանում էր։ Տասնեակ միմեանցից վատ մտքեր նրան հալածում էին։ Արդեօք Գայիանէն նրանից է խոյս տալիս, որ մնից չէ դուրս դալիս։ Գուցէ նա վախենում է իւր ամուսնուց կամ հասարակական բամբասանքից։ Բամբասանք, բայց ինչու համար, որ նա երբեմն դըրսում պատահում է և խօսնում մի օտար տղամարդի հետ։

Նա աշխատում էր մի անգամ, անպատճառ, ինչպէս և է, աեսնել Գայիանէին, ցոյց տալ նրան իւր սառն յարգանքը. մի յարգանք, որ կարող է տիկնոջը համոզել, թէ երբէք նրա վրայ Դիմաքսեանը չէ նայում սիրահարված մարդու աչքով։

«Այն, այսպէս պէտք է անեմ, ասում էր նա ինքնի իրան, որ չըկարծի, թէ ես կամենում եմ ծաղրել նրա գժբաղդութիւնը»։

XVII

Գայիանէն գալիս էր մի հարեան ամարանոցից, ուր ընակվում էր նրա ազգական ընտանիքներից մէկը։ Նա մենակ էր և ծանր, հանդարտ բայլերով ընթանում էր առաջ, հայեացքը ուղղած դէպի անորոշ տարածութիւն։ Թւում էր, որ ամբողջ էութիւնով նա խորասուզված է իւր հոգոյ մէջ և արտաքին աշխար-

Հը նրա համար գոյութիւն չունէ:

Տեսնելով Դիմաքսեանին, նա չըշփոթվեց: Միայն մի թեթև անցողիկ ժպիտ սահեց նրա դէմքի վրայ, ինչպէս անձայն հողմի մեղմիկ շունչը անդորր ծովի մակերեռյթով:

Դիմաքսեանը մօտեցաւ նրան գդակը ձեռին և ջերմ յարդանքով սեղմեց նցա աջը: Այլ ևս Գայիտնէն ճիդ չէր անում իւր տխրութիւնը թագցնելու: Նրա խրհուն ճակատի վրայ որոշ գծագրված էր այն տառապանքը, որ տիրել էր նրա հօգուն: Դիմաքսեանը շտապեց հարցնել նրա առողջութեան մասին և խռկյն խօսը դարձեց այնպիսի նիւթերի վրայ, որոնց մասին առիթ էր որոնում խօսելու: Նա տեսաւ, որ տիկինը խոյս չէ տալիս խօսակցութիւնից, այլ ընդհակառակը տրամադիր է երկար խօսելու:

—Ես ամեն օր պատահում եմ ձեր երեխաներին, ինչքան նման են նրանք ձեզ: Սովորած լինելով նրանց միշտ իրանց մօր հետ տեսնել, ցաւում էի մենակ տեսնելով:

—Դուք առհասարակ երեխաներ սիրում եք, —հարցրեց տիկինը:

—Միթէ կարելի է չըսիրել անմեղութիւնը: Տիկինը անփոյթ կերպով նստեց առաջին պատահած նստարանի վրայ: Դիմաքսեանը կանգնեց նրա դէմ, շարունակելով:

—Մարդկային էակներն արժանի են սիրոյ քանի որ փոքրիկ են:

—Քանի որ փոքրիկ են, իսկ յետո՞յ:

—Ցետոյ, ոլեաք է խղճալ նրանց: —Ինչո՞ւ:

—Որովհետեւ ապագայում կեանքը այնքան աղաւազում է նրանց, որ միայն խղճալու են արժանի:

Գայիտնէն, որ սովոր էր միշտ իւր ամուսնուց լսել կիսահեգնական և կատականման խօսակցութիւն նոյն իսկ ամենալուրջ նիւթերի մասին, մի տեսակ թառմութիւն զգաց, խօսակցելով մի մարդու հետ, որի ուղեղը ընդհակառակը միշտ լուրջ է արամագրված:

—Միթէ ձեր կարծիքով կեանքը ամենքին է աղաւազում, —հարցրեց նա:

—Անկասկած, քանի որ մարդը չի կարող միշտ երեխայ մնալ: Այստեղ ինդիբը վերաբերվում է կըրթութեանը և կեանքի աղգեցութեանը: Կրթութեան այն եղանակը, որ տիրում է մեր գպրոցներում, աւելի աղաւազում է, քան կրթում մարդկային ընաւորութիւնը: Մնացեալը լրացնում են ընտանիքը և հասարակութիւնը: Անչուշտ, գուք պէտք է համաձայն լինեք ինձ հետ, որ սուտը և կեղծութիւնը վնասակար են, նոյնպէս չըպիտի հերքէք, որ մեր կեանքում այդ բացասական յատկութիւնները զօրեղ գեր են կատարում:

—Դուք խօսում էք այնպէս, ինչպէս մի քանի տարի առաջ:

Անցեալի մտաբերելը Դիմաքսեանին շփոթեցրեց ախորժելի կերպով: Ներքին հաճոյքից նրա աչքերը փայլեցին և շարժուն դէմքը արտայայտեց մի անզպակելի բերկութիւն:

—Միթէ դուք կըկամենայիք, որ այժմ ուրիշ կերպ խօսէի, —ասաց նա ոգեսրվելով, —սուտը և կեղծութիւնը ես միշտ դատապարտել եմ և միշտ պիտի դատապարտեմ, առանց ուշագրութիւն դարձնելու

Նրանց արդարացնող պատճառների վրայ...:

Նա կանդ առաւ։ Նա վճռել էր միմիայն սառն բարեկամական յարդանք ցոյց տալ տիկնոջը։ Իսկ այժմ զգում էր, որ անկարող է իւր վճիռը հաստատապէս կատարել։ Մի քանի վայրկեան լոելուց յետոյ, նա աւելացրեց.

—Բայց երբեմն ամենառարջինի մարդիկ անգամ ենթարկվում են ստի և կեղծութեան աղդեցութեան, և ենթարկվում են ակամայ, անդիտակցաբար։ Եթէ նրանք ունենային աւելի քաջութիւն դիմագրելու աւանդական նախապաշարմունքներին, այն ժամանակ կը լինէին աւելի անկեղծ և միշտ ճշմարտախօս։

Գայիխանէն լուռ լուռ էր նրան, աշխատելով ըմբռնել այդ անորոշ խօսքերի տակ թագնված իմաստը։

—Ես կարծում եմ, —շարունակեց Դիմաքսեանը աւելի սգեսորվելով, —թէ կը դայ ժամանակ, որ այդ մարդիկ իմ ասած քաջութիւնն էլ կունենան։ Ուզում եմ ասել, թէ կը դայ ժամանակ, երբ մեր խօսքի և մտքի, զգացումների և գործերի մէջ տիրող հակասութիւնը կը պակասի։ Տիկին, մենք այժմ հազիւ կիսով չափ պատկանում ենք մեզ, իսկ մեր էռութեան, մեր բարոյական և մտաւոր կազմի միւս կէսը հասարակական նախապաշարմունքների ստրուկն է։ Գուցէ հէնց այդպէս էլ հարկաւոր է, գուցէ անհրաժեշտ է, որ հասարակութիւնը մարդու գլխին լինի մի դատաւոր, մի վերահսկող, քանի որ անհատը դեռ չի կատարելագործվել։ Բայց նա, որ զգում է իւր մէջ սեպհական ոյժ, ինքնուրոյնութիւն և մտքի աներկիւդ քաջութիւն, նա վրդովվում է այդ ինքնակոչ վերահսկողի դէմ, որ միշտ ձգտում է ըռնակալի դեր կատա-

րել։ Ինչու Որովհետեւ նա տեսնում է, որ այդ վերահսկողը ինքը, իբրև անհատի կրթիչ, իբրև ուղեցոյց, իբրև առաջնորդ, տհաս է, կարճատես է։ Այդ տեսակ ինքնուրոյն խելք և սկզբունքներ ունեցող մարդը մտածում է. «Ինչ անեմ, միթէ գնամ ընդհանուր հօսանքով»։ «Ո՛չ, պատասխանում է նրան ներքին ձայնը, չըպիտի գնաս, աշխատիր ինքդ առաջնորդել նըրան, որ քեզ ուզում է առաջնորդել և, եթէ ոյժերդքեզ չեն դաւաճանիլ, մէկ-մէկ խորտակիր նրա դէմ կանգնած խոշնդուսները»։

Վերջացնելով խօսքը, նա ձեռները յենեց ձեռափայտին և հայեացը ձգեց հեռու ու հեռու։ Կարծես, այդ վայրկեանին նա մոռացել էր իւր խօսակցին, ինքն իւր մտքերի բուռն հոսանքով յափշտակված։

Գայիխանէն լուռ էր։ Նա արդէն մասամբ գուշակում էր, թէ Դիմաքսեանը ինչ բան է ակնարկում և առհասարակ ինչ տեսակ քաջութեան ու ինքնուրոյնութեան մասին է խօսում։ Այդ խօսքերը բաց էին անում նրա համար մի նոր, բոլորին անծանօթ աշխարհ, ուր մինչեւ այդ ժամանակ չէր թափանցել նըրա միտքը։

Ուշագրութեամբ լսելով Դիմաքսեանին, նա թոյլ էր տալիս իրան միանդամայն անձնատուր լինել նրան ասածների ազգեցութեանը։ Եւ զգում էր, որ մի ինչոր բուռն, անդիմագրելի բայց վերին աստիճանի աշխորժելի հոսանք հետզետէ դրաւելով քաշում ու տանում է նրան յայտնի չէ ուր։

Մի վայրկեան նա նայեց ոգեսորված երիտասարդի դէմքին, և այդ վայրկեանին Դիմաքսեանը երևեց նրան միանդամայն կերպարանափոխված։ Կարծես, դա

ոյն մարդը չէր, որին հինգ-վեց տարի առաջ տեսաւ Բարաթեանի հետ առաջին անգամ։ Նրա դէմքի գծերը յարատեւ և լարված մտաւոր գործունէութիւնից մեղմացել էին և նրբացել Խոշոր, ազգու աչքերի մէջ հասուն խելքի հետ անդրադառնում էին հոգոյ ազնւութիւնը և կամքի անշեղութիւնը։

Այստեղ Գայիհանէի միաբը դարձեալ թռում գէպի համեմատութիւն։ Նրա առջև պատկերացաւ մի ժամանակուայ իւր գեղեցիկ ամուսնու այժմեան կուշտ, կարմիր գէմքը, ուռած այտերով և իւղալի աչքերով։ Ի՞նչ տարբերութիւն, մէկի մտքի կորովութիւնը տեղի էր տուել մարմնի պարարտութեանը, հոգին սրտի հետ պատել էր թանձր ճարպով։ Միւսի հոգեկան ոյժը տաշել և յղկել էր նրա ոչ-գեղեցիկ գէմքը և գարձրել միանդամայն անձանաչելի։

Իւր կողմից Գիմաքսեանը գաղտուկ դիտում էր տիկնոջը և գրեթէ նոյն փոփոխութիւնը տեսնում։ Ճշմարիտ է, չըկար նախկին թարմութիւնը և աշխոյժը, կենսականութեան հուրը առաջուայ գօրութիւնով չէր փայլում նրա կապուտակ աչքերի մէջ։ Բայց սրա փոխարէն նրա գէմքը այժմ այնքան մատիսոհ, լուրջ և արտայայտիչ էր դարձել, որ Գիմաքսեանը այժման Գայիհանէին չէր կամենալ փոխել առաջուայ արագաշարժ, զուարթ և վարվառն օրիորդի հետ։ Ըստանեկան անաջող կեանքը, հոգու յարատեւ տառապանքը խել էին նրա երիտասարդական կրակը և փոխարէնը պարգևել մի մեղմ, մի հեղ, մի անոյշ թութիւն։ Օճ, որքան նա պաշտելի էր իւր գժբաղդութեան մէջ և որքան անմատչելի իւր բարձրութեան վրայ։ Նայելով նրան, Գիմաքսեանի մէջ զարթնում էին

ամենաազնիւ և ամենաանարատ զգացումներ։ Նա պատրաստ էր այդ անբաղդ կնոջ համար հանդիսանալ մի անկեղծ, անձնուեր պաշտպան և իւս սրտի նուիրական հուրը զոհել նրա բաղդին։ Եւ նա փափաղում էր, բայց չըկիտէր ինչ խօսքերով արտայայտել այդ զգացումը։ Միւնոյն ժամանակ, նա սաստիկ ցանկանում էր, որ Գայիհանէն պարզի իւր ցաւերը նրա առջև անկեղծաբար, հաւատալով նրա աղնուութեանը։ Նրան թւում էր, թէ Գայիհանէն ինքը զգում է այդ տեսակ պահանջ, որ ապերջանիկ կնոջ գառնութիւնները այնքան ծանր և անտանելի են, որ պատրաստ է մի հաւատարիմ մարդու մօտ պարզել իւր սիրալ։ Սակայն նոյն «կեղծութիւնը» կաշկանդում են նրա լեզուն։

—Պարզութիւնը իմ կարծիքով ամենագլխաւոր առաքինութիւնն է, —շարունակեց նա, այլ ևս չըկարողանալով զսպել իրան։ —Ով զուրկ է անկեղծութիւնից, նրա միւս բոլոր արժանաւորութիւնները նսեմանում են իմ աչքում։ Նատ անգամ մտածում եմ և ինձ համար բնաւ անհասկանալի է դաւնում։ Ինչու մենք միշտ կեղծում ենք։ Ինչու հարուստը ազքատ է ձեւանում, աղքատը —հարուստ, յիմարը —փիլիսոփայ, խելօքը —ճգնաւոր։ Ինչու նա, որին ճակատագիրը անբաղդ է գարձրել —բաղդաւոր է ձեւանում։ Մինչդեռ նրա քայլուածքը, նրա ձայնը, վերջապէս, նրա ամբողջ կերպարանքը մատնում են նրան, ցոյց տալով նրա վախը նախապաշարմունքներից, նրա կեղծութիւնը...

Նրանց աչքերը կրկին հանդիպեցին միմեանց։ Գայիհանէն գլուխը խօնարհեցրեց և սկսեց հովանիկ ծայրով ցնցողաբար փորփորտել խօնաւ գետինը։

Ակնարկը բաւական պարզ էր, բաւական հասկանալի: Նա զգաց, որ Դիմաքսեանը սպասում էր նրանից անկեղծութիւն, որ նա արդէն թափանցել է նրա հոգոյ խորքը և այնտեղ պարզ կարդում է բոլոր վըշտերը: Բայց ինչու, ինչ իրաւունքով: Ո՞վ է նա, որ այնպիսի յանդքնութեամբ մօտենում է նրա ներքին աշխարհին և այնտեղ ամենայն խստութեամբ շօշափում նրա հոգու նուիրական դաշտնիքները: Ոչ, ոչ, դա աննուրելի է մարդու կողմից, որին նա ոչ մի իրաւունք չէ տուել, ոչ մի ակնարկով չէ մօտեցրել իրան: Նա գլուխը բարձրացրեց այն ժամանակ, երբ Դիմաքսեանը նայում էր մի ուրիշ կողմէ Երիտասարդի գունատ և խելացի ճակատը, երեսի մեղմիկ ցնցփող մկանունքները պարզ արտայայտում էին, թէ ինչ է կատարփում նրա հոգում: Մի վայրկեանում տիկնոջ հայեցքը գարձեալ փոխվեց նրա մասին: Ինչոր մի ներքին ոյժ, ցաւակցութեան թէ խղճահարութեան նման մի բան, յուզեց նրա սիրտը: Նա զղաց, որ նոյն իսկ մի վայրկեան թոյլ էր տուել իրան կասկածել այդ մարդու հոգու մաքրութեան մասին:

—Դուք ամեն բանում պահանջում էք պարզութիւն, —արտասանեց նա երերփող ձայնով, —այդ անկարելի է:

—Գիտեմ անկարելի է, չէ որ բռնակալ վերահսկող թոյլ չէ տալիս, չէ որ մենք սարսափում ենք նրա միակողմանի դատաստանից:

—Այդ չէ միայն, այդ չէ, —կրկնեց Գայիանէն, հովանիի ծայրը մի քանի անգամ թեթեակի խփելով դեմնին, —կան բաներ, որոնց մասին մարդ չէ կարող անկեղծ լինել, եթէ նա չէ կամենում յիմարի ա-

Նույն ստանալ:

—Այն, այն մարդկանցից, որոնք անկեղծութիւնը յիմարութիւնից ջոկել չըդիտեն: Եթէ ես համոզված եմ մէկի խելքին և աղնւութեանը, եթէ ես հաւատացած եմ, որ այդ մարդը երբէք իշարը չի գործ դնիլ իմ հաւատարմութիւնը, միշտ կարող եմ նրանետ պարզախօս լինել:

Նա կանգ առաւ, Նա զգաց, որ շատ է յափրշտակվում, շատ է հեռու գնում: Նա կարծեց, որ մինչև անգամ վիրաւորեց տիկնոջը: Բայց նայեց նրա եւրեսին և այնտեղ նկատեց մի ներողամիտ և, միենոյն ժամանակ, մի քաջալերական հայեացք: Այդ հայեացքը, կարծես, ասում էր, «Ես հաւատում եմ, որ դուք ե՛ խելօք էք, ե՛ աղնիւ, կարող էք ե՛ հաւատարիմ լինել, բայց մի պահանջէք ինձանից անկարելի անկեղծութիւն: Մի պահանջէք, որովհետեւ ես կին եմ, դուք տղամարդ, որովհետեւ դուք օտար էք ինձ համար և որովհետեւ դուք իմ ամուսնու թշնամին էք»:

Նա արագութեամբ ոտքի կանգնեց: Նա կորցրեց իւր բռնի սառնութեան վերջին կաթիլը: Դողդոջուն ձայնով և չնչասպառ արտասանեց.

—Թող որքան կամենում են թագցնեն, բայց ես մարդկանց աչքերի մէջ կարգում եմ նրանց հոգին, նրանց սրտի վիճակը, նրանց դժբաղդութիւնը...

Եւ մի վայրկեան շունչ տռնելուց յետոյ, աւելի յափշտակված աւելացրեց.

—Իմ դաղափարները իմ սրբութիւններն են, Երգփում եմ նրանցով, որ իմ սրտում կայ միայն ցաւակցութիւն, անկեղծ բարեկամական ցաւակցութիւն, Տիկին, ես սուտ կասէի, բայց չըդիտեմ սուտ ասել, ես

կըկեղծէի, բայց վարպետ չեմ կեղծելում. ահա ինչն
է ստիգում ինձ ձեր երեսին ասել այն, ինչոր ուրիշ-
ները կըթագնէին...

Այս խօսքերը նա մի այնպիսի ներշնչված հոգով
էր արտասանում, այնքան անկեղծութիւն և ազնուու-
թիւն էր բուրում նրա դէմքից, ձայնից և ամբողջ
էռութիւնից, որ Գայիանէն չըկարողացաւ ոչ վիրաւոր-
վել, ոչ հակաճառել. նա տեսնում էր իւր առջև մի
մարդ, որ ոչնչով չեր նմանվում այն բոլոր մարդկանց,
որոնց մինչև այդ օրը նա հանդիպել էր. Մի մարդ.
որը որքան համարձակ, աներկիւզ և մինչև անդամ
յանդուգն լինէր, այնքան նրա հոգին բարձր էր, սիր-
ուը անարատ և խելքը անշեղ, կտրուկ: Նա այդպէս
զգաց, և յուզզեց: Նա այլ ես չըկարողացաւ պաշտ-
ուանվել, կեղծել, թագցնել իւր գժբազութիւնը: Եւ
ինչ օգուտ, քանի որ պէտք է նորից ստէր նրա առ-
ջև և նորից ցոյց տար իւր հոգու տկարութիւնը:

Զգացված մինչև հոգոյ խորքը, նա գլուխը դար-
ձեալ թեքեց կրծքին և կամացուկ արտասանեց.

—Ես հաւատում եմ ձեր ազնուութեանը...

Նոյն վայրկեանին նա խօսքը ընդհատեց և խս-
կոյն ստքի կանգնեց: Նա դողում էր, նա մի տարօ-
րինակ երկիւզի մէջ էր: Կարծես, մի բան էր արել,
որ չըպիտի անէր, մի համարձակ, մի վերին աստի-
ճանի պատասխանատու քայլ, որ, միենոյն ժամանակ,
ցոյց էր տալիս նրա հոգու ոյժը և կամքի ինքնուրոյ-
նութիւնը: Նա նայեց գետնին, ապա գլուխը բարձ-
րացրեց: Կարծես, նա ուզում էր խօսքը կիսատ թող-
նել և հեռանալ, բայց տատանվում էր:

Այն ինչ՝ Դիմաքսեանի սիրուը լցվել էր ասպե-

տական հողարտ զգացումներով: Այն կինը, որին պաշ-
տում էր, որի պատկերը մի քանի տարի շարունակ
չէր հեռանում նրա մոքից և աչքերից, վերջապէս, ա-
սում է, թէ հաւատում է նրա ազնուութեանը: Նա չէ
մերժում նրա բարեկամութիւնը, չէ վիրաւորվում նրա
պարզախօսութիւնից: Ի՞նչ անսպասելի երջանկութիւն:

Տիկինը լուռ մեկնեց նրան իւր ձեռը նա պատ-
րաստ էր խոնարհվել և համբուրել այդ ձեռը ինչ-
պէս մի սրբութիւն: Բայց այդ անկարելի էր, ընա-
կան ամօթխածութիւնը մի անդամ ևս կաշկանդեց
նրան: Եւ նա, չերմագին սեղմելով Գայիանէի ձեռը,
ասաց.

—Արդեօք, ես ձեզ վիրաւորեցի:

—Ոչ, ընդհակառակը, գուը ցոյց էք տալիս ինձ
ձեր բարեկամութիւնը: Շնորհակալ եմ, եթէ երբէք
չէք շեղվիլ բարեկամութեան շաւզից և աւելի...

Դիմաքսեանը ընդհատեց նրա խօսքը, մի ցնցո-
զաբար շարժում գործելով և արտասանելով.

—Տալիս եմ ձեզ ազնիւ խօսք՝ երբէք չըշեղվել...

Եւ մնալով միենոյն տեղում, աչքերով մինչև ա-
մարանոցի գռները ուղեկցեց Գայիանէին, որ հեռա-
նում էր արագ քայլերով.

Երբէք չըշեղվել, կրկնեց նա մոքում, ոչ, չեմ
շեղվիլ, պաշտելի էակ, որովհետեւ միայն քո բարեկա-
մութիւնը կարող է ինձ երջանկացնել...»

կնոջ անկողնակալին, լսում էր նրա շնչառութիւնը, առկանջ էր դնում դէպի դուրս և, երեսին խաչակնքերով, նորից պառկում էր: Այդ միջոցներին կինը զարթնում էր և երկիւղով դիտում նրան՝ շատ անգամ լուռ և երբեմն հարցնելով.

—Ինչո՞ւ զարթնեցիր:

—Վաս երազ տեսայ:

Եւ իրաւ ծերունին հալածվում էր չար երազներից: Աննան լսում էր նրա քնած ժամանակ արտասանած հատ հատ անկազ բառերը, «աչքովս... ինքս... ոյստեղ...», «ժարդասպաններ», «ծածկեցէք գերեզմանս», «տեսայ... տեսայ...» «կըխեղդեմ», «շանսատակ կանեմ» և այլն և այլն:

Այս անորոշ բացագանչութիւնները սարսափ էին աղդում Աննայի վրայ, որովհետեւ յաճախ նա շատ որոշ լսում էր մի անուն, որ չարիք էր սպառնում նրան: Նա ամբողջ մարմնով դողում էր և մի անգամ դարթներոց յետոյ այլ ևս չէր կարողանամքնել մինչեւ լոյս: Նա փորձեց մի դիշեր անցկացնել ուրիշ սեռնեակում, հեռու մռայլ ծերունու ահեղ շնչից, որ կարծես մեռելութիւն էր սփռում նրա ամուսնական առագաստի վրայ: Բայց Պեօար Սոլոմոնիչը մի այնպիսի ընդգիւմութիւն ցոյց տուեց, այնպէս գոռաց, որ Աննան բարւոք համարեց լոել և մշտապէս թողնել առանձնանալու միաբը:

Մի անգամ ծերունին յանկարծ բռնեց կնոջ ձեռնից, քաշեց սենեակի մի անկիւնը և կատաղած աչքերով նայեց նրա երեսին: Աննան կարծեց, որ նա արդէն ցնդվել է: Նրան թւաց, թէ ծերունին ուզում է ծեծել իրան, աղաղակելով փախաւ իւր սենեակը և

Յ Ռ Ռ Ո Ր Դ Մ Ա Մ

I

Պեօար Սոլոմոնիչը իւր կնոջը տանջում էր անխայ, որպէս միայն կարող էր տանջել մի պաղած, եսացած, բռնակալ ծերունի: Այլ ևս նրան մազու չափ չեն շարժում կամ մեղմացնում Աննայի սպառնալիքը, ազերսամնը և ոչ նոյն իսկ արտասուքը: Այդ ամենը նրա համար իբր շինովի հասրներ էին, որոնցով կինը աշխատում էր «ծածկել իւր խայտառակութիւնը»: Նա խղճի խայթոց և մինչեւ անգամ մարդկային հասարակ ցաւակցութիւն չէր զգում, տեսնելով, թէ ինչպէս օրից օր ընկճփում և թառամում է այդ տակաւին երիտասարդ կինը, որի սիրաը լիքն էր ապրելու անհուն սիրով:

Նա տանջում էր կնոջը, որովհետեւ ինքն էլ նրանից պակաս չէր տանջվում: Այժմ նա չէր կարողանում հանդիսաւ ճաշել և հանդիսաւ քնել: Մեծ մասմբ պատկում էր շորերով անկողնակալի վրայ և ինքն իւր հետ խօսում, պէս պէս շարժումներ անում: Եթէ մէկը այդ միջոցներին նրան դադոնի դիտէր, պէտք է կարծէր, որ նա ցնորսիել է: Երլեմն դիշերուայ կէսին յանկարծ վեր էր կենում անկողնից և, աչքերը արորելով, նայում չորս կողմ: Յետոյ մօտենում էր

դռները փակեց։ Պեօտը Սոլոմոնիչը վաղեց նրա ետեւ-
կց, ուզեց գոները կոտրել և ներս մտնել։ Բայց ուշ-
քի եկաւ, ձեռը խփեց ճակատին և, աթոռէ վրայ
ընկղմվելով, խուլ ձայնով արտասանեց։

«Անէծք չար Սաթայէլին»...

Մարդ ու կնոջ այդ սարսափելի յարաբերութիւ-
նը, հարկաւ, աննկատելի չէր կարող մնալ ոչ նրանց
դաւակներից և ոչ մանաւանդ Ովսաննայից։

Մանահասակ Լիզօնկան և Ելեզկան ապշած նա-
յում էին իրանց հօր աչքերին, երբ նա կատաղում-
էր, յետոյ հարցական հայեացք էին ձգում իրանց մօր
երեսին։ Զգում էին նրանք, որ տանը մի վատ բան է
կատարվում, բայց թէ ինչ—չքիտէին, եւ այդ վատ
բանը ոչ միայն վշտացնում էր նրանց մատաղ, զգա-
յուն սրտերը, այլ և աղղում էր փափուկ բնաւորու-
թեան վրայ։

Իրանց կասկածները և երկիւղը նրանք չէին յայտ-
նում ոչ ոքի, ոչ նոյն իսկ Ովսաննային, որին, բնազ-
դումով թէ գիտակցաբար, օտար էին համարում։
Բայց յաճախ երկու քոյրերը մըմեանց հաղորդում էին
իրանց տպաւորութիւնները։ Երկուսն էլ խղճում էին
իրանց մօրը, զգալով, որ տանջվում է, Բայց չէին ա-
տում և՛ իրանց հօրը, քանի որ չքիտէին որն է ար-
դարը և որը մեզաւորը, որին պէտք է պաշտպանել և
որին ատել։

Այն ինչ՝ Ովսաննան մասամբ գուշակում էր ըն-
տանեկան խռովութեան բուն պատճառը։ Նա հասկա-
նում էր, որ իւր բարեսիրտ քեռիին այդ աստիճան
գաղանացնողը խանդնէ։ Բայց թէ ով է այդ խանդի-
առիթը, ում վրայ է ծերունու կասկածը, այդ շղթե-

տէր և, հարկաւ, չէր էլ կարող իմանալ։ Ահա ինչու
նա բոլոր տեսած ու լածները միամտաբար պատ-
մում էր Գայիանէին։

Մի օր նա գունատված եկաւ քրոջ մօտ և՝ ներս
մտաւ թէ չէ՝ չնշասպառ յայտնեց, թէ Պեօտը Սոլո-
մոնիչը ծեծել է Աննային։ Գայիանէն հարցրեց ման-
րամասն, և օրիորդը միայն այսքանը կարողացաւ պատ-
մել, որ ինքը միւս սենեակից դռների ետեկից տե-
սաւ, թէ ինչպէս մարդ ու կին կռվում էին ննջարա-
նում։ Աննան յայտնի չէր ինչ ասաց, Պեօտը Սո-
լոմոնիչը բռունցքով խփեց նրա կրծքին և դցեց ան-
կողնակալի վրայ։

—Այս, Գայիանէ, այնպէս վախենում եմ, այն-
պէս վախենում եմ, որ չըգիտեմ ինչ անեմ,—աւե-
լացրեց Ովսաննան յուզված։—Ես վաղուց կըտեղա-
փոխվէի քեզ մօտ, բայց չեմ ուզում նրանց առան-
ձին ժողնել, իսկ ամենից աւելի երեխաներին եմ
խղճում։

Արդարեւ, բուռն նախանձի և կատաղութեան
վայրկեանին ծերունին առաջին անդամ ձեռք բարձ-
րացրեց ինոջ վրայ։ Այդ հարուածը կտրեց Աննայի
վերջին յոյսը, թէ երբ և է Պեօտը Սոլոմոնիչը կրխա-
ղղվի։

Նա ամեն ինչ աւարտված համարեց։

Ի՞նչ ելք գտնէր վերջ տալու իւր անտանելի վի-
ճակին։ Բաժանվէլ։—Ո՞ւր գնալ։ Այս միտքը շղթա-
յում էր ապահով ապրուստի սովոր տիկնոջը։ Ինքնա-
սպանութիւն գործել։—Նա այդքան քաջութիւն չու-
նէ։ Մեռնել մի ծերունու պատճառով, և մեռնել այդ
երիտասարդ հասակնեմ, երբ կնոջ համար մի նոր

կեանք է սկսվում: Ո՞չ, ոչ, ոչ: Գանգատվելու—Ո՞ւմ և ինչպէս: Նա Պետր Սոլոմոնիչի օրինաւոր կինն է, եկեղեցական անխախտելի կապով շաղկապահ այդ ատելի, զազրելի և այժմ սարսափելի ծերունու հետ: Եւ տիկինը, կծու վշտերից արբեցած, անիծում էր ամենքին և ամեն ինչ, և՛ հասարակական կարծիք ու օրէնքներ, և՛ եկեղեցի ու կրօն, և՛ իւր հօր գերեզմանը, և՛ ամբողջ աշխարհը:

Խորին վշտերը անխնայ սպառում էին նրա ոյժերը: Նա թառամում էր ոչ օրերով, այլ ժամերով, բոսպէներով, ինչպէս արմատից կարված մի քնքոյշ ծաղիկ: Սակայն այդ ապաբաղդ վիճակի մէջ էլ նա չէր մոռանում իւր սովորական կօկեառութիւնը: Ոչինչ նրան այնքան չէր վշտացնում, որքան իւր արտաքին փոփոխութիւնը: Ինչո՞ւ, ինչո՞ւ այդպէս վաղ պշկում է և գալկանում այդ գեղեցկութիւնը, որ այնքան երիտասարդներ է հրապուրում: Եւ բարկութիւնից նա ճանկըստում էր իւր մարմինը, ինչպէս կատաղած կապիկ, փետում էր գլխի առատ մաղերը, որոնց մէջ սպիտակները օրից օր շատանում էին:

Երբեմն նրա փափուկ ու նեղ ճակատի տակ յլանում էին չար մաքեր: Թողնել ծերունու տառապանքը անուշագիր, մոռանալ նրա հալածանքները, հասցնել ծայրայեղ յուսահատութեան և սպանել նրան կամացուկ, գանգաղ մահով: Կամ մի հարուած, ձեռի մի թեթե շարժում գիշերային լոռութեան մէջ, նընջարանի մութ անկիւնում, և ծերունու քայլայված կեանքի վերջին թելը կտրել: Իսկ յետոյ, եթէ յանցանքը բացվի ինչ կըմինի նրա դրութիւնը:—Ո՞չ, ոչ, սոսկալի է:

Այդ գժոխային մաքերի տակ նա դարձաւ լուռ, ինչպէս թունաւոր օձ: Նրջում էր նա սենեակից սենեակ, ինչպէս լուսնոտ, մռայլ հայեացքներ ձգելով իւր շուրջը:

Այն ինչ Պետր Սոլոմոնիչը արթուն աչքերով հսկում էր նրան, դիտում էր նրա ամեն մի քայլը: Կնոջ լուսթիւնը նրա մէջ յղացրեց մի ուրիշ կասկած: Նա առաջ էլ համողված էր, որ Աննան հոգով ու որշտով ցանկանում է նրա մահը: Իսկ այժմ մտածեց, որ զայրացած կինը նրա համար մահ է նիւթում: Նա սկսեց զգոյշ վարպել և դիշեր ու ցերեկ հետամուտ լինել նրա ամեն մի քայլին:

Մի անգամ Աննան պատահաբար նրա բարձի տակ տեսաւ մի տարձանակ: Նա վախեցաւ: Զըդիտէր, թէ ծերունին այդ զէնքը ձեռք է բերել անձնապաշտպանութեան և ոչ թէ նրան սպանելու համար: Մի ուրիշ անգամ տիկինը նկատեց, որ Պետր Սոլոմոնիչը ուշադրութեամբ փորձում է ննջարանի դռների և լուսամուտների ամրութիւնը: Ան, անպատճառ նա ուղում է սենեակը փակած սպանել նրան, որպէս զի ոչ պը չըլսի նրա մահուան աղաղակները:

Այնուհետեւ մարդ ու կին փոխագարձաբար միմեանցից վախենում էին և միմեանցից զգուշանում: Ճաշից առաջ Պետր Սոլոմոնիչը մանում էր խոհանոց, նայում էր կերակրի կաթսաները, հարց ու փորձ էր անում խոհարարին պաշարեղնի մասին: Ճաշի ժամանակ նա աչքի տակով հետևում էր կնոջ ձեռներին, երբեմն հացի կտորը, կերակրի պնակը, դպալը, պատառաքաղը փոխելով նրա հետ:

Դիշերները նա քնում էր կնոջից ուշ և վեր էր

կենում առաւտեան շատ վաղ, միշտ ձեռում սեղմած ապրճանակի կոթը, Պատահում էր, որ ինքն իրանից դժգոհ էր լինում: Կարծում էր, թէ մի ինչոր մեղք է գործել, մի շատ ծանր մեղք, բայց թէ ինչ—շղփատէր: Կամենում էր աղօթք անել—չէր կարողանում: Նրան թւում էր, որ Աստուած իրանից երես է դարձրել, ինչպէս մի յանցաւորից:

Նա ուզում էր երեխաներին փայփայել, հայրական սէր զոյց տալ, այդ էլ չէր յաջողվում: Նրա փաղաքանքները գուրս էին գալիս կոշտ, սէրը—բռնազբօսիկ, իսկ համբոյրները ցուրտ, ինչպէս սառած ապակիից—գոնէ այսպէս էր թւում նրան: Մանկական անմեղ բիբերի մէջ նա կարդում էր երկիւղ, և նրա սիրտը մորմոքվում էր այնպէս, որ ներքին տանջանքից աչքերը փակում էր և գլուխը բռունցքներով ամուր սեղմում:

Նոյն երկիւղը տեսնում էր և բոլոր տնեցիների գէմքերի վրայ: Նրան թւում էր, որ ծառաները իրանից սարսափում են, ինչպէս մի վտանգաւոր մարդուց, մի խելագարից, բայց, միենոյն ժամանակ, և՝ խըղճում են նրան: Օօ, ոչ ոք, ոչ ոք իրաւունք չունէ նըրան խղճալու...

Երբեմն նա գանգատվում էր Ովսաննային, թէ գլուխը ցաւում է, ականջները խշշշում են, ոտները չեն հնազանդվում նրան, քայլել չի կարող:

«Այստեղ, այստեղ,—ասում էր, ձեռով ցոյց տալով սրտի կողմը,—կարծես, մի քար են գրել: Քարը սեղմում է, սեղմում, կասես, նրա տակից մի բան է ուզում դուրս գալ և ինձ խեղդել: Ովսաննա, Ովսաննա, երանի քեզ, որ ջահիլ ես...»

Բնարողական պայքարի ամենատաք միջոցին մի նրա մօտ եկաւ Ամբակում Աֆանասիեվիչը: Հաւատարիմ «քաղքբցին» զարմանք յայտնեց, որ մի ժամանակուայ եռանդուն իրաւասուն այժմ ոչ միայն չէ հետաքրքրվում քաղաքային շահերով, այլ և տնից էլ չէ գուրս գալիս: Ինչու, ինչ է պատահել, խօս հիւմնդ չէ: «Հիւանդ» բառը Պեօտր Սոլոմոնիչին վախեցրեց: Ո՛չ, ով ասաց, որ նա հիւանդ է, ընդհակառակը շատ առողջ է:

—Բաս ինչու ես տանը փակվել, հէր օրհնած, խօսմաւրհակներդ պրոտեստ չեն արել,—շարունակեց հետաքրքրված Ամբակում Աֆանասիեվիչը:

Հարկաւ, նա շատ լաւ գիտէր իւր բարեկամի հասարակութիւնից փախչելու պատճառը: Նա անկեղծ խղճում էր ծերունուն և այժմ եկել էր մի կերպ նրան միսիթարելու: Նա թախանձեց Պեօտր Սոլոմոնիչին՝ գուրս գալ մի քիչ զբօսնելու: Ծերունին դրականապէս մերժեց: Սակայն նա կամենում էր իմանալ ինչ են խօսում իւր մասին հասարակութեան մէջ և շղփատէր ինչպէս հարցնէր: Նա մի խորը զննողական հայեացք ձգեց Ամբակումի երեսին՝ գոնէ իմանալու, թէ նա ինչ է մտածում: Բայց Ամբակումը խորածանկութեամբ խոյս տուեց իւր միտքը մինչև անգամ լուռարտայտելուց և կատակով ասաց.

—Բժիշկները ինձ խորհուրդ են տուել օրական եօթ վերստ մացիօն անեմ, որ փորս մի քիչ բարակի: Արի, Պետրոս ջան, գնանք մի քիչ ոտով ման գանք, լաւ եղանակ է, օգտակար է: Փահ, այդ ինչ մաշվել ես...

Պեօտր Սոլոմոնիչը գարձեալ մերժեց, բայց այս անգամ միանգամայն վախեցաւ Ամբակումի վերջին

Նկատողութիւնից: Նա կամենում էր հիւրը շուտով հեռանայ, որ ինքը լաւ դիմէ իրան հայելու մէջ—ճշշմարիտ է, որ նա այնքան մաշվել է:

Աս, սուտ չեն ասում, որքան նա փոխվել է: Նա ոչ միայն նիհարել է, ծերացել, այլ և բոլորովին այլանդակվել:

Այդ օրից նա էլ իւր կնոջ պէս ստէպ-ստէպ դիտում էր իւր կերպարանքը: Մի անգամ կէս գիշերին, երկար խալաթը հագին, թաւամազ կուրծքը կիսով չափ բաց, նա մօտեցաւ հայելուն և յանկարծ սարսափած յետ կանգնեց: Մարդկային դէմքի փոխարէն հայելին ներկայացնում էր խողի դունչի պէս մի բան, աչքերը սեղմված, ծնոտը երկարացած, աշկանչները սրածայր: Նա կարծեց, որ իրաւ ինքը խող է գարձել: Նա մինչև անգամ փորձեց քնթի տակ խորիտալ կամացուկ, Յետոյ ուշբի եկաւ, նայեց շուրջը: Բարեբաղդաբար, սենեակում ոչ ոք չըկար: Նա ծիծաղեց... նոյն տարօրինակ, նոյն անբնական ծիծաղը...!

Հետեւալ օրը, կէսօրուայ դէմ, նա տնից դուրս եկաւ, առաջին անգամ մի ամսուայ փակ կեանքից յետոյ: Որովհետեւ այլ ևս լրադիրներ չէր կարդում, ուստի չքիտէր քաղաքում ինչ է կատարվում: Խաչովիներից նա լսեց, որ ընարութիւնները վերջացել են, ինքը սեացել է, իսկ Ամբակում Աֆանասիեվիչը, Բարաթեանը և Վերիեանը դարձեալ ընտրվել են:

Լուրը նրա վրայ ոչինչ տպաւորութիւն չըգործեց, նրա անշարժ դէմքի մկանունքներից մէկն անգամ չըշարժվեց: Այժմ նրա դիմում ու սրտում տեղ չըկար ուրիշ դործի համար, բացի մի գաղափարից, թէ նա խաբված ու ամօթի դատապարտված մի ամուսին է,

թէ ամենքը նրա մասին են խօսում, թէ նրան խըզնում են, արհամարհում, թէ նրա պատուաւոր անունը յաւիտեան թաղված է սև հողի մէջ, ինչպէս մի աննամուս մարդու անուն: Նա մտիկ էր անում պատահող ծանօթներին և անծանօթներին և, կարծես, սպասում էր, թէ ահա մէկը անպատճառ նրա երեսին կը շպրտի՝ «կինդ անառակ է»:

Նա միայն երկու ժամ կարողացաւ դրսում մնալ: Յետոյ շտապեց տուն: Նա գնում էր այնպէս արագ, որ, կարծես, տանը թողել էր մի սիրելի հիւանդ, որին շուտափայթ օգնութիւն էր հարկաւոր: Մարդկանց հայեացքները այրում էին նրան, նա ամաչում էր պատերից անգամ և գնում էր զլուխը կրծքին թեքած:

Մի անգամ նա վեր բարձրացրեց այդ յոգնած, ծանրացած, զառամեւալ զլուխը Յանկարծ նրա թըզրած աչքերը վառվեցին, քոնքերի մէջ զգաց մի տարօրինակ տաքութիւն: Նա քայլերը դանդաղեցրեց:

Դէմ ու դէմ զալիս էր նա, որին աշնան սկզբից չէր տեսել: Կարծես, մի չար, աներեսյթ ոյժ իսկոյն ստեղծեց այդ հանդիպումը, որպէս զի աւելի փութացնի ծերունու անկումը:

Ինչպէս միշտ, այժմ էլ Բարաթեանը ընթանում էր զլուխը բարձր պահած, կուրծքը դուրս ցցած, անհոգ, զուարթ: Մօտենալով Պետրով Սոլեմոնիչին, նա դգակը բարձրացրեց վեր և զլուխը խօնարհեցրեց ինչպէս մի յարգելի աղդականի, մի պատկառելի ծերունու, մի վագուցուայ բարեկամի առաջ:

Եերունին նրա ճանապարհը կարեց, կանդ առաւե, մի վայրկեան ատամները կրծտելով, արտասանեց.

«Աւագնկ...»

Բարաթեանը շտապեց մայթից իջնել փողոց և նայեց շուրջը, նա հառաջեց, երբ հաւաստիացաւ, թէ ոչ ոք չըկար, որ լսէր այդ անարդանքը: Յետոյ նա անվրդով շտապեց հեռանալ:

Պետք Սոլոմոնիցը մօտեցաւ իւր տանը, որ ընդամենը քսան-երեսուն քայլ հեռու էր հանդիպման տեղից: Նա մատը սեղմեց գուների զանդակի կոճակին: Ծառան դուրս եկաւ: Ծերունին ձեռը յանկարծ տարաւ ճակատին, ամ, չըլինի, թէ «նա» այստեղից դուրս եկաւ: Նոյն վայրկեանին նրա արիւնը խփեց քոնքերին, աչքերը պղասորվեցին, գլուխը պտտեց: Նա ոչինչ չէր տեսնում, բացի չորս ատելի, զազրելի: Ծերերից, որ դրկում էին միմեանց և ոտնատակ անում նրա պատիւր...

Նա ձեռը տարաւ շապկի օձիքին և թուլացած ընկաւ ծառայի թեերի վրայ: Հարկաւոր եղաւ խոհարարին և նրա օգնականին էլ կանչել, որպէս զի ուժասպառ և գրեթէ անշնչացած ծերունուն սանդուխքով վեր բարձրացնեն: Նրան տարան ներս, նստեցրին բաղկաթոռի վրայ:

Նա մի անմիտ, ապշած հայեացք ձգեց իւր շուրջը: Նրա երեսի մկանունքները, կարծես, քարացել էին, աչքերի բիբերը անշարժ էին, թեթև կերպով դողում էին նրա աջ ոտը և աջ ձեռը, իսկ մարմնի միւս կէսը հանդիսաւ էր...

Միւս սենեակից ներս վազեց Աննան, Ծերունին նայեց նրա երեսին քարացած հայեացքով: Պարզ էր, որ նա մարդ չէր ճանաշում:

—Բժիշկ, բժիշկ կանչեցէք,—աղաղակեց Ովսաննան բարձրաձայն և, չոքելով ծերունում մօտ, սկսեց հեկեկալ...

Օգոստոսի վերջին Դիմաքսեանը ամարանոցից ուղղակի գնաց իւր ծննդավայրը: Նոր կառավարիչը նրա կալուածները բաւական կարգի էր բերել և եկամուտները աւելացրել: Գիւղացիները այժմ չէին ճնշվում կալուածատիրով ձեռքում: Նրանք գոհ էին իրանց վիճակից: Դիմաքսեանը թեթև կերպով աչքի անցկացրեց Հարիդեանի հաշիւները և շնորհակալութիւն յայտնեց նըրան: Նա ընաւ տրամադիր չէր այս անդամ նիւթականով զրադիլու, այս պատճառով մերժեց կառավարչի առաջարկութիւնը՝ անձամբ տեսնել կալուածները: Նա միայն վերցրեց ամբողջ տարուայ մնացած եկամուտը և, տասն օր իւր քոյրերի հետ անցկացնելուց յետոյ, շտապեց վերադառնալ Թիֆլիզ, գէպի ուր մըզում էր նրան մի անյաղթելի ոյժ: Նա ուզում էր մաքառել ոյժի գէմ, բայց իդուր. ոչ մի սառն դատողութիւն չէր դիմանում նրա սրտի կրակին...

Այդ միջոցին Մսերեանը Թիֆլիզումն էր, ուր նա վերադարձել էր ամարանոցից ուղղակի և ընակիում էր իւր նախկին սենեակում: Իդէալիստը թէե գեռչէր կարողանում ընտելանալ իւր վշտին, բայց առաջ կարողանութիւնը տեղի էր տուել թախծալի յուայ յուսահատութիւնը տեղի էր տուել թախծալի հիսութափման: Այժմ քաղաքային կեանքը նրան զըշտուելի էր թւում: Նա ասում էր, թէ մտադիր է գիւղ գուելի և այնտեղ իւր «վշտերը մոռացութեան տալ, ժողովրդի հսկայական վշտերը աչքով տեսնելով»: Ոչ, ժողովրդի հսկայական վշտերը աչքով տեսնելով:

—ձշմարիտ է, ես ամաչում եմ. իմ զգացմունքից, որովհետեւ ինչ կըսազէր ինձ յափշտակվել այս հաստիում, բայց միւս կողմից շատ ուրախ եմ, որ այդ բանը ինձ պատահեց. Ես թմրած էի, կենդանութիւն ստացայ: Այժմ ուզում եմ օգտվել իմ մէջ զարթնած եռանդից, այս կենսական ջերմութիւնից, և գործ գնել նրան մի որ և է նպատակի համար:

Նա վերկացաւ, կանդնեց լուսամտի առջեւ, ձեռք տարածելով գէպի դուրս, շարունակեց.

Տեսնում ես այն հեռաւոր լեռները, այն անտառները, այնտեղ էլ ապրում են քեզ և ինձ նման էակներ: Նրանք էլ մարդիկ են, բայց նրանց զբաղեցնում են ուրիշ հոգաւեր: Մենք ուզում ենք հոգեկան հանգստութիւն, իսկ նրանք տառապում են տղիսութեան խաւարի մէջ: Խուսաւորել նրանց միտքը, բաց անել նրանց առաջ քաղաքակրթութեան առաջին շատիղը—ահա ինչ է պահանջում մեղանից մեր ստացած ուսումը:

Նա խօսում էր այնպէս յափշտակված և այնպիսի դրական եղանակով, որ կասկածել չէր կարելի, թէ նա իւր ասածը պատրաստ է խսկոյն կատարել: Նա շարունակեց նոյն ոգեսրութեամբ: Վազն և եթ նա կըդնոյ թեմական տեսչի մօտ, կըմնդրի նրանից գիշազական վարժապետի պաշտօն: Նա կընարի մի ամենախուլ անկիւն, ուր ժողովուրդը աւելի կարօտութիւն ունէ և ուր չեն համաձայնվում ուրիշները գնալ: Զըմեռը նա կըպարապի դասաւութիւնով, դարնանը և ամառը երկրագործութիւնով: Նա կըփարի, կըցանի, ամեն բան կընի, միայն թէ օգտաւէտ լինի հասարակ ամբոխին և իւր կեանքը ապարդիւն շանցկաց-

նի, ինչպէս անց է կացրել մինչեւ այսօր:

Այսպէս էր խօսում նա Դիմաքսեանի ներկայութեամբ: Իսկ երբ վերջինը հեռացաւ, նա պառկեց երեսն ի վեր անկողնի վրայ և սկսեց խորհել՝ արդեօք կարճ է իւր ասածը կատարել: Ահա հէնց այդ հարցը միայն նրան յոգնեցնում էր և մինչեւ անգամ վախեցնում: Նա երեակայում էր, թէ ինչպէս գիւղական կոշտ ու կոպիտ պատանիներին այբուբեն է սովորեցնում, իսկ դասերից յետոյ հասակաւոր գիւղացիներին գլխին հաւաքած բացատրում է ընութեան տարբական օբէնքները: Կըհասկանան արդեօք նրա լեզուն, գուեհիկները միջոց կըտան արդեօք գործելու, թէ կըծիծաղեն նրա վրայ...

Այն ինչ Դիմաքսեանը արդէն սկսել էր ձանձրանալ անգործութիւնից: Խօսում էին, թէ թեմական տեսուչը հրաժարական է տալիս, և այդ ճիշդ էր: Նա կամեցաւ այդ պաշտօնը ընդունել: Նա փորձեց խընդրել ուժ հարկին է: Գործը գլխաւորապէս կախված էր թեմական առաջնորդից: Բայց երբ մի օր սրբազնի մօտ յիշեցին Դիմաքսեանի անունը, ասացին, թէ նա պատրաստ է մինչեւ անգամ անվարձ ծառայել, նա երեսին խաչակներով, արտասանեց.

«Հրաժարիմք ի չար սատանայէ»:

Այսպիսով մի անգամ ևս նա զգաց իւր հակառակորդների ոյժը: Բայց շըյուսահատվեց: Ոշնչ, եթէ մի տեղ վակեն ճանապարհը, նա միւս տեղ ասպարէդ կըդտնի, բաւական է, որ գործելու ցանկութիւնը շըմեսնի նրա սրտում:

Մի օր նա իւր սովորական մտքերի մէջ խորասուղված Ալէքսանդրեան այդու մօտով բարձրանում

էր գեղի քաղաքի կենտրոնը: Նա ետեից լսեց իւր անունը և, յետ նայելով, տեսաւ Սալամբէկեանին, որին վազուց չէր հանդիպել: Բժիշկը վերադառնում էր հիւանդանոցից ոտով: Նա միակ մարդն էր իւր արհեստակիցների մէջ, որ չէր ամաչում ոտով շրջել:

—Տխուր նորութիւնը լսել ես,—ասաց բժիշկը,
սովորական բարեներից յետոյ:

Ի՞նչ է պատահել:

Բժիշկը հազորդեց Բախտամեանի կաթուածահար մինեւու լուրը: Բանն այն է, որ մօտիկ քնակվելով, ամենից առաջ իրրե բժիշկ նա էր կանչվել ծերունուն օդնելու: Դնացել էր, ի հարկէ, բայց ի՞նչ օգուտ, բանը բանից անցած էր: Բախտամեանը այժմ իէս մարդ է:

Լուրը Դիմաքսեանի վրայ տպաւորութիւն դորձեց: Ի՞նչ և լինէր, նա Պետր Սոլոմոնիչին համարում էր բարեսիրու և աղնիւ մարդ: Նա հոգով խղճաց ծերունուն: Նա հաբցրեց դժբաղդութեան պատճառը: Բժիշկը, գլուխը խորհրդաւոր շարժելով, արտասանեց.

—Հարիւր տեսակ բաներ են պատճում, ով գիտէ:

Նա հազորդեց այդ պատճուածներից այն, որ աւելի հաւանական էր թւում և որի մասին ամենը խօսում էին:

—Բայց ասան, Արսէն, —վերջացրեց նա իւր խօսքը, —միթէ այդ կարելի է, միթէ դու հաւատում ես:

Դիմաքսեանը կը կամենար շըհաւատալ «տարածված լուրին», բայց մի ներքին ձայն համոզում էր նըրան, որ ոչ միայն կարելի է, այլև կատարված իրողութիւն է այն, ինչոր լսել է բժիշկը:

—Վատ մարդ, —գոչեց Սալամբէկեանը, մինչև հոդոյ խորքը վրդովված, —խարել, տանջել մի այն-

պիսի հազուագիւտ կնոջ և այն էլ ի՞նչ միջոցով:
Դիմաքսեանը գառնութեամբ ժպտաց և ոչինչ չասաց: Այն բանը, ինչոր այժմ էր իւր ընկերոջը վրդովեցնում, վազուց նրան վշտացնում էր: Նրա աջքի առջև պատկերացած էին միշտ երկու ծանօթ ընտանիքներ, երկուսն էլ անբաղդացած: Նա վրդովված էր մի թշուառ ծերունու դէմ, որ իւր մաշված, քայլայված կեանքը կապել էր մի երիտասարդ կնոջ թարմ կեանքի հետ և դժբաղդացրել թէ իրան և թէ նրան: Նու կատաղած էր մի երիտասարդի դէմ, որ իւր վատթար կը քերի պատճառով թշուառացրել էր երեք կեանքը: Դեռ ոչինչ ծերունին, նա իւր գոյութեան շրջանը արդէն անց է կացրել, նա արժանի է իւր պատժին: Գուցէ աւելի ցաւալի է նրա կնոջ վիճակը, դուցէ նրան պէտք է խղճալ...

Խակ այն «միւսը»—ահա բուն դժբաղդը: Ի՞նչու «նա» պէտք է թշուառանայ, ինչու, ինչու, ինչու, միթէ նոյնպէս իւր սխալի համար...

Եւ Դիմաքսեանի մտքերը պղտորվեցին: Նա յիշեց իւր գուշակութիւնը Գայիանէի ապագայի մասին, չէ որ գիտէր, որ վերջը այդպէս պէտք է լինի: Բայց անցաւ եսական զդացումը, և նա զգաց մի սուրդառնութիւն այն էակի վիճակի համար, որին նա սիրում էր անհուն սիրով: Բաժանվելով Սալամբէկեանից, նա երկար ժամանակ խորհում էր նրա մասին: Միթէ պէտք է նրան այդ վիճակի մէջ թողնել, միթէ չէ կարելի նրան օգնել, Բայց ի՞նչպէս և ի՞նչ իւրաւունքով:

Ցաւալի էր նրա համար ամենից աւելի այն, որ չըկար մէկը, որի մօտ կարողանար պարզել իւր սրտի

նուիրական զգացումները, ասել այն, ինչոր չէր կարելի ուրիշներին ասել, Գուցէ այդպիսով նա թեթևացնէր իւր հոգին։ Մսերեանը։—նա այնքան խորասուզված էր իւր անձի մէջ, որ ոչ մի արտաքին երեսին, կարծես, նրան չէր հետաքրքրում։

—Գիւղ պէտք է գնալ, գիւղ,—կրկնում էր նա միշտ, —այնտեղից պէտք է ամեն բան սկսել։

Սակայն օրերն անցնում էին, և նա գեռ տառանվում էր։ Իսկ Դիմաքսեանը կտակածում էր, թէ երբ և է նու կըկատարի իւր որոշումը։ Նա գիտէր, որ Մսերեանի խօսքի և դործի մէջ կայ ահազին պատնէց—կամքի թուրութիւն։ Անցնել այդ պատնէց նա անհնարին էր համարում մի մարդու համար, որի բնաւորութիւնը վազուց արգեն կազմվել և ամրացել էր իւր որոշ յատկանիշներով։

—Ոչ, իզուր ես աշխատում ինձ համոզել, թէ այս տիղմի մէջ կարելի է մաքուր շէնք կառուցանել, —վիճում էր Մսերեանը իւր ընկնրոջ հետ, թէ եւ Դիմաքսեանը չէր ել աշխատում «համոզել» նրան։—Հիւրը այստեղ խախուտ է, չի գիմանալ, պէտք է աւելի խորը գնալ։ Թա՞ղ ամեն ինչ, գնանք ժողովրդի մէջ…

Նրա խօսքերի մէջ թէն կար նախկին պատանեկան ոգեսրութիւնը, բայց զգացվում էր նոյնպէս և մի տեսակ վհատութիւն, կարծես, նա ինքն այժմ չէր հաւատում, թէ կարող է իրադորձել իւր ասածը։

Մի առաւօտ բժիշկ Սալամբէկեանը եկաւ Դիմաքսեանի մօտ և թախանձեց նրան՝ միասին գնալ օրիորդ Կարինեանի մանկական պարտէզը։ Այդ օրը առաջին անգամ օրիորդը մանկական հանդէս էր տալիս։ Այնտեղ Դիմաքսեանին սպասում էր մի անսպա-

սելի/հանդիպում։ Ընդարձակ սենեակի մի ծայրում խմբած էին երեսուն—քառասուն մանուկներ և երգում էին։ Միւս ծայրում հաւաքված էին նրանց մայրերը և հրճուանքով լսում էին իրանց զաւակների թռչնային ծլվրլոց։ Ահա այստեղ էր և Գայիանէն։ Գլուխը թեթևակի ուսին ծռած, ձեռները անփոյթ կերպով ծնկների վրայ դռած, նա նստած էր պատի մօտ և խօսում էր մի օրիորդի հետ։

Մի քանի կանայք, Դիմաքսեանին տեսնելով, անմիջապէս շնչացին միմեանց ականջին։ Նա շփոթվեց, նա զղջաց անգամ իւր գալու մտախն, բայց նրա սիրուը տկամայ բարախեց ուղախութիւնից։

Օրիորդ Կարինեանը նրան նեշկայացրեց իւր հիւրերից մի քանիսին և յետոյ խնդրեց նրան տեսնել, թէ արգեսոք իւր աշակերտները յառաջադիմութիւն անում են։

Վերջապէս, Դիմաքսեանը վստահացաւ մօտենալ Գայիանէին։

Նրանք սկսեցին խօսել մանկական պարտիզի մասին։ Դիմաքսեանը հետաքրքրվեց իմանալ, արդեօք Գայիանէն մտադիր է իւր զաւակներին յանձնել պարտէզ։ Յայտնվեց, որ տիկիննը հէնց այս մտքով է եւ կել օրուայ հանդիսին։ Նա կամենում էր ծանօթանալ Կարինեանի կրթութեան եղանակին։

Կանանց շրջանում շնչիւնները և խորհրդաւոր հայեացքները սաստկացան։ Դիմաքսեանը այդ նկատեց և նորից շփոթվեց։ Նա համոզված էր, որ կանայք բամբասում են իրան և Գայիանէին։ Ուստի, յարմար վայրկեան գտնելով, վերկացաւ տիկնով մօտից և մօտեցաւ բժիշկ Սալամբէկեանին։

Լոիր,—ասաց նա,—դու ինձ ուժով բերիր, բայց,
կարծեմ, ես աւելորդ եմ այստեղ:

—Ընդհակառակը քո ներկայութիւնը այստեղ անհրաժեշտ է հենց քեզ համար: Պահիր քեզ ազատ, բնական, վարպիր ամենքի հետ այնպէս, ինչպէս վարպել ես: Ցիմար ամբոխ...

Ինչ էին նշանակում այդ խօսքերը—Դիմաքսեանը չըհասկացաւ: Եթէ նա Սալամբէկեանին չըճանաչէր ինչպէս անկողծ, անխարդախ ընկերոջ, կարող էր կարծել, որ բժիշկը ուղում է նրա հետ մի խաղ խաղալինչ և է, նա մնաց գահինում: Բայց որքան նա դիտում էր իւր շուրջը, նոյնքան համոզվում էր, որ ինչոր անհասկանալի, խորհրդաւոր և անսովոր ուշադրութեան առարկայ է ընդհանուրի համար:

Երեխաները անցան միւս սենեակ: Նրանց պէտք է խաղալիքներ բաժանենին: Օրիորդ Կարինեանը հիւրերին հրաւիրեց այնտեղ: Մի խումբ կանոյք դանդաղեցին իրանց քայլերը: Նրանք շարունակ նայում էին Դիմաքսեանին: Սալամբէկեանը առաւ նրա թեր և առաջնորդեց միւս սենեակ: Մինչ նա խօսում էր ըլք ժիշկի հետ, մի տարիքաւոր տիկին գլուխը մօտեցրած սկսեց ականջ գնել, աչքունքով զանազան նշաններ անելով միւս կանանց: Դիմաքսեանը նկատեց այդ նըշանները և այնքան զայրացաւ, որ քիչ էր մնում մի խիստ նկատողութիւն անի տարիքաւոր տիկնոջը: Նա միայն մի բարկացոտ հայեացք ձգեց իւր շուրջը: Տարիքաւոր տիկինը սարսափած յետ քաշվեց, և Դիմաքսեանը լսեց, որ նա շշնչաց: «Երեսում է, երեսում է»:

Վերջապէս, նա ներողութիւն խնդրեց Կարինեանից և դուրս եկաւ: Նրա ետևից դուրս եկաւ և

Սալամբէկեանը:

—Ո՞ւր ես շտապում, —հարցրեց նա:

—Ասա ինձ, ի սէր մեր ընկերութեան, այդ կանայք ինչ են խօսում իմ մասին:

Բժիշկը աշխատեց ժպտալ:

—Այսօր ես քեզ գիտմամբ բերեցի այստեղ, —պատասխանեց նա, —և նպատակով էի ասում, որ դու քեզ ազատ պահես: Լոիր, չըգիտեմ ինչ պատճառով և ինչպէս, մի յիմար լուր է տարածվել: Քո մասին պատում են զանազան առասպելներ և բոլոր հնարված են մի բան առացուցանելու համար, այն է, որ դու իբրև թէ ցնդուել ես: Մի զարմանար և մի բարկանար, բաւական է մի թեթև լուր, որ ամբոխի բերանում մեծանալով դառնայ հրէշտաւոր պատմութիւն: Ես չըգիտեմ, ով է հնարել այդ լուրը, բայց համոզված եմ, որ այդ քո թշնամիների դորձն է: Ահա ինչու են շշնչում և ինչ են շշնչում այդ կանայք քո մասին:

Արտասանելով այս խօսքերը, բժիշկը փորձեց ծիծաղել, բայց նոյն վայրկեանին նրա հայեացքը ընկաւ Դիմաքսեանի այլայլված դէմքին, և ծիծաղը մնաց սառած նրա շրմունքների վրայ: Դիմաքսեանը ձեռով շփեց ճակատը, արորեց աչքերը, գլուխը երերեց, կարծես, իրանից մի միտք հեռացնելու համար և արտասանեց:

—Աս, այդպէս ուրեմն... ինձ խելագար են համարում:

Յետոյ նա, մի արագ շարժում գործելով, աւելացրեց:

—Գուցէ իմ թշնամիները չեն սխալվում:

Այն օրից, երբ Գայիանէն իւր ամուսնու հետ ամարանոցում վերջին ընդհարումը ունեցաւ, նրանց ընտանեկան յարաբերութիւնը անպայման խախտվեց: Ամիսներ անցան, և կինը չէր հաշտվում նոյն իսկ չէր ուզում խօսել իւր մարդու հետ:

Այս յամառ խռովութիւնը Բարաթեանի համար անտանելի էր: Նրա ուրախ ու զուարժի ընաւորութիւնը չէր սիրում ընտանեկան լարված յարաբերութիւն: Նա կամենում էր ինչպէս և է հաշտվել Գայիանէի հետ, որպէս զի մի կերպ վերականգնի իւր հոգեկան անդօրբութիւնը նա պեղում էր, թէ հասարակական մարդու համար այդ անդօրբութիւնը անհրաժեշտ է: Առանց այդ էլ նա դրսում բարոյապէս շատ է յուղվում, յոգնում, տանը պէտք է հանգըստութիւն վայելէ: Նա խնդրում էր Գայիանէին մռանալ նրա «մանր սխալները»: Նա հաւատացնում էր, որ շնայելով այդ «մանր սխալներին», դարձեալ սիրում է Գայիանէին: Այս գէպը ուն չէր կեղծում: Եւ իւր սէրը արտայայտելու համար չէր խնայում ոչ մի փաղաքշանք: Նա գործ էր գնում իւր բոլոր սրա խօսութիւնները և հրապոյրները: Երբ տեսաւ, որ սովորական փաղաքշանքները չեն ազդում, իրան ձեւացրեց մի տեսակ հեղնահատակ: Այս, ինչպէս նա տանջվում է մի անհաշտ, քմահաճ և կամակոր կնոջ ձեռքում: Իսկ երբ տեսաւ, որ այդ էլ չէ օգնում, վճռեց ասել Գայիանէին այն ինչոր փաղուց զգում էր: Նախ կատակով, ապա լոջօրէն յայտնեց, թէ նախանձը կամ

կասկածները չեն Գայիանէի անհաշտութեան պատճառը, այլ այն սառնութիւնը, որ ամեն մի կին սովորաբար զգում է գէպի իւր մարդը ամուսնական առաջին տարիները անցնելուց յետոյ:

— Ճիշդ պատճառը հէնց այս է: Ես ձեզ համար շատ հասարակ մարդ եմ—ահա ինչ: Դուք յոյս ունէիք իմ մէջ գտնել մի գաղափարի հերոս, մի արտաքոյ կարգի մարդ, չըգտաք և հիասթափվեցիք: Այժմ ձեզ հետաքրքրում են ուրիշները, դա շատ սովորական բան է:

Պետքը Սոլոմոնիչին պատահած գմբաղդութիւնը մի քանի օր Բարաթեանին ստիպեց լոել և մինչեւ անգամ տիրութիւն պատճառեց նրան: Հարկաւ, նա ոչ ոքի չէր կարող յայտնել այն վիրաւորանքը, որ ծերունին հասցրեց նրան փողոցում: Նա ուրախ էր, որ ոչ ոք այդ շըգիտէ: Բայց առանձնութեան մէջ նա ինքն իրան գատապարտում էր և, միևնոյն ժամանակ, իւր փարմունքը աշխատում էր արդարացնել ուշրիշների համանման օրինակներով: Ինչով է մեղաւոր, որ մի գեղեցիկ կին օգտվեց նրա թուլութիւնից: Ո՞ր տղամարդը կարող էր գիմանալ այն հրապոյրին, որ մոլորեցրեց նրան: Վերջապէս, ինչով է տարբերվում նրա արածը միւս հարիւրաւոր, հազարաւոր ամուսինների արածից: Միթէ միայն մի բանով... որ նրա խղճի առջև կանգնած է մի պատկառելի ծերունու, մի ազգականի, այն, իւր պաշտպանի և հովանաւորի պատկերը: Հին, ինչ յիմարութիւն, ինչ նախապաշարութիւնը: Ո՞վ կարող է երաշխաւորել, որ հէնց այդ ծերունին իւր հարիւրաւոր «նոյնանման» մեղքերի պատիմը չի քաշում այսօր: Ի՞նչ անենք, որ այդ պա-

տիժը կատարվեց Բարաթեանի և ոչ մի ուրիշի ձեռքով։
Այս դատողութիւնները սառն ջուր սրսկեցին նրա
փոքր ինչ տաքացած խղճի վրայ։ Նա հանգստացաւ։

Այդ միջոցին նա նուրբ հոտառութեամբ զգաց,
որ իւր կնոջ մասին վատ լուրեր են պտտում։ Մկըզ-
բում նա կատաղեց, հարուածը անսպասելի էր։ Բայց
շուտով սառն դատողութիւնը դարձեալ օգնութեան
հասաւ։ Նա մտածեց, որ պէտք է զգոյշ վարվել, և
իւր վիրուսանքը խոհեմաքար թագցրեց ամենքից։
Նա ձեւացրեց իրան այնպէս, իրու թէ ոչինչ չի լսել,
ոչինչ չի զգում և հասկանում։ Նրան յայտնի էր, որ
Գայիխնէն յարգում է Դիմաքսեանին, ինչպէս և՝ զի-
տէր, որ Դիմաքսեանի սրտում գեռ վառ է գաղտնի
ողահած նախկին սէրը։ Բայց այսքանը բաւական չէր
Գայիխնէի մասին որ և է վատ կասկած ունենալու,
նա անպայման համոզված էր, որ իւր կինը մաքուր
է, ինչպէս լեռնային նորեկ ձիւն, եւ ոչ մի զրագար-
ստոթիւն, ոչ մի չարախօսութիւն չի կարող ստուել
ձգել նրա ընտանեկան անարատ պատուի վրայ։

Այն ինչ՝ միւս կողմից ամօթի և վրէժխնդրու-
թեան զգացումը ներսից կրծում էր նրա սիրտը։ Նա
այնքան մեծ նշանակութիւն էր տալիս հասարակա-
կան կարծիքին, որ չէր կարող սառնարիւն վերաբեր-
վել նոյն իսկ դէպի մի պարզ զրագարսութիւն։ Երկար
ժամանակ տատանվելուց յետոյ, մի օր նա վճռեց
յայտնել իւր վրդովմունքը Գայիխնէին։ Հարցրեց, ար-
դեօք նա զիտէ իւր մասին տաքածված լուրը։

Այս անդամ Գայիխնէն չըկարողացաւ իրան զրա-
պել և չըխօսել։ Նա պատասխանեց, թէ, այն, զիտէ,
որ իրան բամբասում են։ Այն սառնութիւնը, որով

տուեց իւր պատասխանը, սպառեց Բարաթեանի համ-
բերութիւնը։ Նա առաջին անդամ բարձր ձայնով գո-
ռաց իւր կնոջ վրայ։ Այդ էլ չըվրդովեց Գայիխնէին։
Նա այնքան արհամարհանքով էր վերաբերվում իւր
մասին տաքածված զրագարսութեանը, որ արժանի չէր
համարում պաշտպանվել ոչ մի խօսքով։ Դիտէր, որ
իւր ամուսինն էլ մաքում արհամարհում է այդ զըր-
պարսութիւնը և գոռում է միայն իւր սեպհական
յանցանքը մոռացնել տալու համար։

—Լսեցէք, —գոչեց Բարաթեանը, նորից զսպելով
իրան, —ձեր անտարբերութիւնը անտանելի է։ Մար-
դիկ ձեր պատիւը շօշափում են, դուք չէք վրդովվում։
Ես պահանջում եմ, որ դուք ձեզ արդարացնէք։

—Ո՞ւմ առջեւ։

—Իմ։

—Հա հա, յանցաւորը դատաւոր է գարձել։

—Դուք ծիծաղում էք, դուք արհամարհում էք
հասարակական կարծիքը։ Ուրեմն լսեցէք, ես պէտք
է ձեզ մի ճշմարտութիւն ասեմ։ Ճշմարդի մեղքը
ամենքի համար սովորական բան է, իսկ երբ կնոյն
են բամբասում, թէ կուղ զուր տեղը, թէ կուղ հէնց
այն պատճառով, որ այդ կնոջ ետևից ընկել է մի...
խելագար, այն ժամանակ վայ ընտանիքի պատուին։
Մեր մեղքերը մեզ ներփում են, իսկ ձեր մի սխալը—
երբէք։ Այս բանը լաւ հասկացէք։

—Մեղքը մեզք է, կինն է կատարում թէ աղա-
մարդը միենոյնն է։ Բացի հասարակական կարծիքից
կայ խղճի դատաստան։ Դուք այս բանը մոռանում էք։

—Խղճի դատաստան, —կրկնեց Բարաթեանը ձաղ-
րաբար, —բարեհաճեցէք այդ խօսքը ուրիշ բանի մա-

սին գործածել։ Բնտանեկան պատիւը շատ նուրբ խընդիր է։ Խիղճը չի կարող օգնել, երբ այդ պատուին վատանդն է սպառնում, ի՞նչ նշանակութիւն ունէ ձեր, իմ կամ մի ուրիշի խիղճը ընդհանուրի աջքում։ Կեանքի օրէնքները և աւանդութիւնները ամբոխն է ստեղծում և ոչ անհատները։ Նատ կարելի է իմ խիղճը ձեղ անմեղ է համարում, բայց նա Մովսէս մարդարէի տախտակը չէ, որի վրայ գրածները ամբոխը աստվածային պատգամների տեղ ընդունի։ Տիկին, մենք հասարակական կարծիքի ստրուկներն ենք, պարտաւոր ենք տալ նրան բոլորը, ինչոր մեզանից պահանջում է։

Եւ որքան այդ հայեացքը անիրաւ, որքան անշութե և դատապարտելի լինէր—Գայրիանէն չէր կարող նրա մէջ ըլզգալ մի որոշ շափի ճշմարտութիւն։ Այս, այս մարդուն ներփում է նրա ակնյայտ յանցանքը, նրա հետ հաշտվում են, նրան ընդունում են ամեն տեղ, նոյն իսկ ամենաառաքինը կինը նրանից չի խորշում։ Իսկ իին մարդը, նրա համար, մի անխիղճ լուր, մի քսու և չար խօսք շատ անդամ կործանիչ նշանակութիւն ունէ։

Մի քանի վայրկեան այսպէս մտածեց նա։ Բայց յանկարծ նրա ուղեղի մէջ մի յեղաշրջում տեղի ունեցաւ։ Նրա սիրութ ալեկոծվեց մի մրրիկով, նրա դունատ այտերը շառագունեցին և աչքերի մէջ պասղաց անսովոր զայրոյժ։ Ինչու պէտք է այդպէս լինի, ինչու, ի՞նչ իրաւունքով։ Դա բռնութիւն է, դա անգթութիւն է։ Միթէ միշտ կինը պէտք է պատժի, իսկ տղամարդը անպատճ մնայ։ Ինչու կանայք չեն բողոքում բռնութեան դէմ, ինչու նրանք դոնէ իրանց զգուանքը բացարձակ չեն արտայայտում այդ տղա-

մարդկանց, ահա հէնց այդ անպատկառ մարդուն, որ երբէք նրա աչքում այնքան քստմնելի չէր երկացել, որքան այժմ ի՞նչ ասի նրան, ի՞նչպէս արտայայտի իւր սրտի անհուն նողկանքը։ Ոչ, չարժէ աւելի քըրքը ել այդ տիղմը...

Նա երեսը դարձրեց խորին զգուանքով և ուզում էր գուրս գնալ, երբ դռների ետեից լսվեց մի դզբրդիւն։ Նա կանգ առաւ, նոյն վայրկեանին դռները լայն բացվեցին, և հետեւեալ տեսարանը ներկայացաւ երկայն անկողնաձև բազկաթոռի վրայ տարածված էր գերասիմ Գերասիմիչը, ոտնեւը պլէղով ծածկած, ձեռները դլխատակին գրած։ Հինաւուրց ծտայի ձեռքով անդամալոյն ներս էր մզգում իւր շարժական կացարանի հետ, ինչպէս մի ահազին կրեայ իւր կեղի մէջ։ Նա ընթի տակ ցածր ձայնով երդում էր, կարծես, ինքն իւր համար օրօր ասելով։

—Մը պրամվա, գուռռռակ, —զեկավարում էր նա ծտային երեմն, —ոը զադի, բալը ես, պրամվա ոնօ, օսեօլ, գօտ տակ, տես պրամվա չէի... հօլաա...»

Գայրիանէն յետ քաշվեց, որ հանդիսաւոր գնացքին ճանապարհ տայ։

—Պալա, ի՞նչ գործ ունէք այստեղ, —ասաց Բարաթեանը կէս յարգանքով և կէս վրդովիլած։

—Մօլչայտ, օգնիր ինձ ներս մտնելու։ Որդին բռնեց բազկաթոռի կողքից և քաշեց սեւեակի մէջ տեղը։

—Տեպեր օտվալիվայ, —հրամայեց ծերունին ծտային, որ և իսկոյն գուրս եկաւ, —Հիմայ կասեմ, ի՞նչ գործ ունիմ այստեղ։ Նստեցէք։ Օօ, ի՞նչպէս ցա-

ւում է անպիտանը: Խսակ, տավօն, ոլլէգը քաշիր ցած, ոտներս ծածկիր, հա, այդպէս: Դէհ, լսեցէք, ինչու ճանապարհորդեցի այս ընտանեկան դրախտը, հա, հա, չօռտ եվօ դերի, լաւ դրախտ է: Ի՞նչ էք դիշերցերէկ միմեանց միսը կրծում: Նի ոլծվա, եա, բրատեց, նէ դուռակի, շատ լաւ տեսնում եմ, շելժա, որ, տավօն, ինոջդխարում ես...
—Պապա:

—Գոնք ու բչիկ,—դարձրեց ծերունին իւր կիսախուփ աչքերը Գայիանէին,— մի զարմանար, դա Բարաթովների արխւն է: Շատ էլ, տավօն, ուշադրութիւն մի դարձնիլ: Նու, չտծժ, ուրիշ կանանց ետեից է ընկած, որ մարդը չէ ընկած: Բայց շատ լաւ դիտեմ, որ քեզ սիրում է: Ես ինքս էլ այդպէս էի, միայն հանդուցեալին էի սիրում, նու, չօռտ եվօ դերի, աչքս միշտ ուրիշների վրայ էր...

—Պապա...

—Նու, պապա, պապա, ինչ կայ, սուտ եմ ասում: Նու դա, գոլուրչիկ, գեղեցիկ հարսս, մարդ շատ անգամ էլ ինքն է իրան անբազգացնում... Մի բան ասեմ, եթէ ատամդ ցաւում է, քիչ մատծիր, ինչքան շատ մտածես, այնքան շատ կրցաւի: Դու, վեդ, աշխարհը փոխել չես կարող, նրա ստեղծվելուց մինչև օրս միայն Աղամն է հաւատարիմ ամուսին եղել, որովհետեւ բացի եւայից ուրիշը չկար...

Գայիանէն ամօթից չըգիտէր երեսը որ կողմ դարձնէր: Քայքայված ծերունու արձակ խօսքերը դիպչում էին նրա կանացի ամօթխածութեանը: Բայց նա դիտեր, որ Գերասիմ Գերասիմիչը ուրիշ լեզուով խօսելու ընդունակ չէ:

—Նուս,—շարունակեց ծերունին,—ուրեմն հաշովիր դրութեանդ հետ: Լաւ չէ շուն ու կատու լինելը, Աստուած վկայ, լաւ չէ: Հաշտվեցէք, թէ չէ, երդփում եմ հանդուցեալի գերեզմանով, ոչինչ շեմ կտակիլ ձեզ: Իսկ ես ուզում եմ ունեցածիս մեծ մասը ձեզ համար թողնել: Միւս որդիս վճռել է Ծուսատանում մնալ. եշօքի, Պետերբուրգի մամդել ներին կարծղ է գտնել Թիֆլիզում: Մի քանի հազար կրգչեմ առաջը, բերանը կըկապի, մնացեալը ձերն է: Ասում եմ, հաշտվեցէք, վաղը կտակս գրել տամ, երազ եմ տեսել, ոլրեսկից երազ, իմ երազները միշտ կատարփում են: Նու, հասկացաք, հաշտվեցէք: Էհէ, գեղեցկուհի, իդուր մի լաց լինիւ արտասուքը երեսդ կրվացնի, ափսոս ես: Իսակ, համբուրգեցէք, լսում էր, շուտ, այս բոպէիս, թէ չէ գնացի... Օօ, սսկորներս, սսկորներս...

Բարաթեանը մի կողմնակի հայեացք ձգեց Գայիանէի վրայ: Նա պատրաստ էր հաշտվել, նոյն իսկ շտա ուրախ էր ծերունու միջամտութեանը:

Այն ինչ՝ Գայիանէն կանգնած էր նոյն դրութեան մէջ, նոյնքան վրդովված: Այժմ նրա մէջ զգուանք էր յարուցանում և այդ անգամարոյծ ծերունին: Հայր և սորդի նրա աչքում ներկայացնում էին միենոյն տիւպացը: Զանազանութիւնը այն էր, որ ծերունին առամօթաբար խոստովանում էր իւր ախտը, իսկ երիտասարդը յանդգնաբար դեռ ծածկում էր իւր անձածկելի յանցաները:

—Հայդա, ես շատ սպասել չեմ կարող: Զէք ուղում, Հասկանում եմ, հասկանում եմ, ամաչում էք ինձ մօտ համբուրգել: Շատ լաւ, ես կըդնամ, երեկո-

յեան ձեզ կըսպասեմ։ Կըդաք ինձ մօտ հաշաված, ես ձեզ կօրհնեմ, թէ չէ, հօրս գերեզմանը վկայ, կոպէկ չեմ տալ, տօ եստ—նի գր ոշամ։ Ա՛խ ոսկորներս... Անդրէյ, քշիր ինձ...

Հինաւուրց ծառան ներս ցցեց գարիի հասկերի նման բեղերը։ Դուները բացվեցին, և ծերունին իւր կացարանի հետ միասին նոյն հանդիսաւոր կերպով դուրս քշվեց։

IV

«Դիմաքսեանի ուղեղը խանդարված է»։ Այս դարձուածը կրկնում էին շատերը։ Այս առթիւ պատճվում էին տեսակտեսակ իրողութիւններ, որոնք երկու անդամ երկու չորս ապացուցանում էին տարածված լուրի ճշմարտութիւնը։

— Դեղին տուն, գեղին տուն, ես վազուց էի ասում, թէ նրա դպրոցը այն է, — կրկնում էր տեսուչ ինիաթեանը, հոգերանական մեթոդով ապացուցանելով իւր նախորդի խելագարութիւնը։

Ոչ ոք նրան չէր հակառակում, իսկ ով թերահաւատօրէն էր վերաբերվում տարածված լուրին, նրան համոզելու համար տասնեակ «ապացոյցներ» էին բերվում։ Բաւական է մտիկ անել նրա աչքերին և կարելի է իսկոյն հասկանալ, որ այնտեղ «մի բան կայ»։ Ահա և նրա ձայնը, միթէ խելագարի ձայն չէ։ Իսկ ընթի պնչերը խօսելու ժամանակ։

Անցնում էր Դիմաքսեանը փողոցով, գնում էր թատրոն, թէ մի ուրիշ հասարակական տեղ—միշտ լինում էին մարդիկ, որ, նայելով նրան, միմեանց ա-

կանչին շշնչում էին։ Երբ նա մէկի հետ խօսում էր, խօսակիցը լսում էր ուշադրութեամբ, վիճում էր նրա հետ, հերքում էր նրա ասածը կամ ընդունում, բայց, միւնոյն ժամանակ, երբեմն խորհրդաւոր հայեացք էր ձգում նրա աչքերի մէջ։ Իսկ երբ մի որ և է միաք պնդելիս նա տաքանում էր և ձայնը քիչ թէ շատ բարձրացնում, խօսակիցը համաձայնվում էր նրա հետ հակառակ իւր համոզմունքին, ինչպէս սովորաբար աշում են ուղեղը խանդարվածների հետ։

Սկզբում Դիմաքսեանը այդ կասկածների վրայ ուշագրութիւն չէր դարձնում։ Իսկ երբ բժիշկ Սալամբէկեանը յայտնեց նրան գաղտնիքը, այն օրից նա ինքը կամայ ակամայ սկսեց կասկածներ որոնել։ Հետզհետէ նրան թւում էր, որ լուրը տարածվել է ամեն տեղ և ամենքը արդէն հաւատում են։ Նոյն իսկ շրհաւատացողները նրա մէջ կասկած էին զարթեցնում։ Երեխ, մտածում էր նա, քաղաքավարութիւնն է ձեզ ստիպում ցոյց տալ, թէ իրը չէք հաւատում, բայց իսկապէս դուք էլ հաւատում էք։

Նա կամենում էր իմանալ մարդկանց միաքը, թափանցէլ նրանց հոգին և ճշգութեամբ կարդալ նրանց որակինը։ Ահա ինչու մէկի հետ խօսելիս երբեմն նրա ուղեղը աւելի դիմացինին ուսումնասիրելով էր զրադվում, քան թէ խօսակցութեան նիւթով։ Այդ միջոցներին նա յաճախ շփոթվում էր և, երբ խօսակիցը հարցնում էր. «ճշմարիտն եմ ասում», նա սթափվելով արտասանում էր՝ «Հը՞լմ...»։

Այսպիսով նա ինքը անդիտակցաբար կասկած էր զարթեցնում ուրիշների սրտում։ Նա ուղղակի ոչ ոքի հետ չէր խօսում պղտոր լուրի մասին։ Նա չէր ուղում

առիթ տալ կարծելու, թէ ինքը որ և է նշանակութիւն է տալիս չարախօսներին։ Բայց և այնպէս կառկածը աւելի ու աւելի խոր արմատ էր գցում նրա սրտում հակառակ իւր կամքին, հակառակ իւր տրամարանութեանը։

Դա մի անբնական հոգեկան դրութիւն էր, որ պէտք է քայլքայէր նրա նեարդերը։ Նա զգում էր այս բանը և որքան աշխատում էր մտքում ծաղրել իւր հակառակորդներին, այնքան ընդհակառակը աւելի էր վրդովված արանց դէմ։

Վերջապէս, մի օր նա վճռեց խօսել Մսերեանի հետ։ Նա համոզված էր, եթէ ամբողջ աշխարհն էլ հաւատայ, իդէալիսուը դարձեալ չի հաւատալ և կը ծիծաղի չար լուրը տարածողների վրայ։

Իսկ Մսերեանը գեռ ևս այնքան խորասուզված էր ինքն իւր մէջ, որ ոչինչ չըդիտէր տարածված լուրի մասին։ Ամբողջ օրը նա տանը նստած շարունակ կարդում էր փիլիսոփայական հաստ գլուքը։ Սակայն գիւղ գնալու միտքը գեռ նրա գլխից չէր դուրս եկել։ Նա նորանոր ծրագիրներ էր կազմում, պատկերացնում էր ապազայ գործունէութեան բոլոր մանրամասերը։ Բայց երբ բանը գործնականին էր զալիս, բարոյական ոյժը սկսում էր գաւաճանել նրան և խօստակել բոլոր թէօրիհանները։

—Դիտես, ինձ համար աշխարհիս երեսին ամենագեռարը մարդկանցից մի բան ինքը ելն է։ Ամեն երեկոյ վճռում եմ միւս օրը գիմել թեմական տեսչին, բայց երբ օրը լուսանում է—իմ վճիռն էլ ոչնչանում է։ Ես տեսնում եմ, որ գործնականի համար բոլորովին անպետքացել եմ։ Գրքերը սպանեցին իմ

եռանդը և ինձ փալաս դարձրին...

Այս խօսքերը նա ասաց Դիմաքսեանը ներս մըտնելիս, գեռ նրա բարեկին չըպատասխանած։ Նկատելի էր, որ նա ամաչում է իւր թուլութեան համար և՝ նախ քան իւր ընկերից յանդիմանութիւն լսելը ինքն էր յանդիմանում իրան։

Դիմաքսեանը խօսքը փոխեց, որով մեծ հաճութիւն պատճառեց Մսերեանին։ Նա եկել էր ուրիշ բանի համար և այժմ ոչինչ նրան չէր հետաքըրքը բռում բացի այդ բանից։

—Դու ինչու ինձ չես շնորհաւորում, —ասաց նա յանկարծ, մի քանի բոպէ կողմնակի բաների մասին խօսելուց յետոյ։

—Ի՞նչը շնորհաւորեմ։

—Իմ խելագարութիւնը, ևս խելագար եմ...

Այս ասելով նա հաւատացած էր, որ Մսերեանը կըծիծաղի, կըսկսի կատակ անել։ Մինչդեռ իդէալիսուը ամենալուրջ եղանակով արտասանեց։

—Զարմանում եմ, որ դու նոր ես իմանում քո խելագար լինելը, դա հին բան է։

—Ի՞նչպէս...

—Ե հարկէ, խելագար ես, կատարեալ խելագար...

Դիմաքսեանը գունատվեց և ապշած մարկ տուեց ընկերոջ երեսին։

—Եւ դժւ, Բրուտոս, —գոչեց նա իրրե թէ ծիծաղելով, բայց իսկապէս տելի վրդովված։

—Ի՞նչ կայ, որ զարմանում ես, միթէ խելքը գըլ-խին մարդը...

Դիմաքսեանը մի թեթև, բայց տարօրինակ ճիչ արձակեց և մի շարժումով ստիպեց նրան լոել։ Մսե-

բեանը զարմացած նայում էր նրան: Նա գեռ շրդի-
տէր ինչ անսովոր հոգեկան տրամադրութեան մէջ է
դժոնվում Դիմաքսեանը: Խելագար ասելով, նա հառ-
կանում էր հասարակական մտաւոր մակերևոյթից
բարձր մարդուն կամ զրջանի բարոյական օրէնքներին
շրյարմարվողին: Այդպիսի մէկն էր համարում նա իւր-
ընկերոջը և առաջին անդամը չէր, որ նրան խելա-
գար էր կոչում:

Դիմաքս անը, երկու ձեռներով գլուխը ամուր բռնած, աչքերը յառել էր սեղանի մի կէտին: Թւում էր նրան, որ արդարև իւր ուղեղին մի վտանգ էր սպառնում, որ այդ վտանգը շատ մօտիկ է, բաւական է Մաերեանը մի անգամ էլ կրկնի «Ո հարկէ, խալագար ես», և նա իսկոյն կրցնորպի: Նոյն գրութեան մէջ նա բութ մասների ծայրերով փակեց ականչները և պատմեց անհեթեթ լուրերը: Արտայայտեց բոլորը, ինչոր զգացել էր և զգում էր թէ մարդկանց շրջանում և թէ առանձին ժամանակ: Աւելացրեց, թէ այնքան վերջին ժամանակ մտածում է այդ մասին, այնքան ուրիշները կասկածով են նայում նրա վրայ, որ վախենում է: Մարդկանց կասկածաւոր յարաբերութիւնը խյում է նրա եռանգը, չլատում է նրա ոյժերը:

— Բոլոր իմ ծրագիրները խորտակվում են միայն և միմիայն այդ կասկածից: Ինչ ձեռնարկութեան մասին մտածում եմ, իսկոյն այդ հրէշաւոր կասկածը կանգնում է իմ առջև: Ես ուզում եմ գործել, հասկանո՞ւմ ես, բայց մտածում եմ ինչ կարող է անել միարդ, որին ամենքը եթէ ոչ խելադար, գոնէ անօրմարդ, ինչ համարում: Ոչ, այսպէս չէ կարելի, կամ ես իսկապէս խելադար եմ և ինձ պէտք է գժատուն ու-

զալցել կամ պէտք է մի կերպ վերադարձնեմ իմ հոգերկան խաղաղութիւնը, որ կարողանամ մի գործակսել:

Մսերեանը այժմ միայն հասկացաւ բանի էութիւնը։ Նա տեսաւ, որ Դիմաքսեանի հոգեկան դրութեան հետ կատակ անել չի կարելի։ Պէտք էր միանդամից ազատել նրան այդ կասկածներից, որքան ևս նրանկը անհիմն և անմիտ լինէին։ Եւ նա, չնայելով իւր թախճալի տրամադրութեանը, յանկարծ բարձրաձայն ծիծաղեց։ Յետոյ ոտքի կանգնեց և, ձեռք ձեռին խփելով, գոյեց.

— Խեղիատակներ, խեղիատակներ, երկինքը վկայ,
այդ մարդկանց տեղը կրկէսն է և ոչ թէ հասարա-
կական ասպարէզը։ Հա հա հա, Դիմաքսեանը ցնդվել
է, հա հա հա... Կեցցէս, Արսէն, որ այդ օրին հա-
սար, խելագար անունը վաստակեցիր յիմարների և
ապուշների շրջանում։ Այսուհետեւ դու կարող ես պար-
ձենալ, խելագար ես, որովհետեւ խելք ունիս...

Նա կանդ առաւ։ Գիմաքսեանը, առաջին անգամ՝
կասկածը իւր սրտում բուն զնելուց յետոյ՝ զգաց հո-
գեկան թեթեսութիւն։ Ընկերոջ անարտեստ վրդով-
մունքը և անկեղծ ծիծաղը նրան մխիթարեցին։ Նա
սթափեց, նա սկսեց սառնօրէն մտածել իւր մասին
և զգաց, որ իրաւ ինքը շատ թոյլ է եղել, ուեղ տա-
լով իւր սրտում մի անմիտ կասկածի։

— Բայց կատակը մի կողմ, — շարունակեց Մակ-
րեանը, նստելով նրա դէմ, — դա շատ ցաւալի բան է:
Ցաւալի է ոչ թէ այն, որ այդ խեղկատակները յի-
մար լուրեր են տարածում քո մասին, ցաւալի է, որ
մեր բոլոր գործերը այդ մարդկանց ձեռքումն է: Իսկ

դու մենակ ես, կարող եմ ասել բոլորովին մենակ:
—Ես մենակ չեմ, ես ունիմ երկու հաւատարիմ
ընկերներ և բարեկամներ, քեզ և...

—Եւ բժիշկ Սալամբէկեանին, ինչու չես ասում,
կարծում ես, ինձ կը վիրաւորես: Ո՛չ, դու էլի ինձ լաւ
չես ճանաչում մինչև հիմայ: Ես նրա դէմ այժմ մա-
զու չափ ոխ չունիմ: Բայց թողնենք այդ, ես ուրիշ
բան էի ուզում ասել: Դիտես, Արաքն, ես շատ եմ
մտածել մեր հասարակական կեանքի մասին, գործե-
լու ընդունակ չեմ, բայց մտածել գիտեմ: Ես եկել
եմ այն եղբակացութեան, որ մեր երիտասարդութիւ-
նը բարոյական հաստատ սկզբունք չունէ:

Դիմաքսեանը ոչինչ նկատողութիւն չարեց: Նա
միայն գլուխը կրծքին թեքեց և աչքերը յառեց սե-
նեակի յատակին: Այն ինչ՝ Մսերեանը կանգ առաւ,
միմեանց ետեկից մի քանի անդամ ուժգնաբար ծխեց,
բաց թողնելով գլխից վեր ծխի թանձր քուլաներ:
Յանկարծ նրա դէմքը փոխվեց, աչքերը փայլեցին, և
ձեռը խփելով իւր ծնկին, արագութեամբ ոտքի կանդ-
նեց, գոչելով.

—Բայց այնու ամենայնիւ կը այ որ և մենք
կունենանք երիտասարդութիւն, մաքուր և հաստատ
բարոյական սկզբունքների տէր երիտասարդութիւն:

Խորին հաւատով և ոգեսրութեամբ արտասան-
ված այդ խօսքերը ոգեսրեցին և Դիմաքսեանին: Նա
զգաց մի անբացարեցի ուրախութիւն:

—Այդպէս ահա,—ասաց նա, —բայդպէս խօսիր,
այժմ ես ճանաչում եմ իմ Մսերեանին: Թո՞ղ յուսա-
հատութիւնդ, ոգեսրվիր և ուրիշներին էլ ոգեսրիր
առաջուայ պէս:

—Բայց ափսոս միայն, որ մենք չենք տեսնիլ
այդ օրը...

Նա շարունակեց նոյն ուղղութեամբ ապագայի
մասին: Այն, կը գայ այն օրը, երբ ամեն ինչ կը փոխ-
վի, կը շատանայ խելագարների թիւը և այժմեան խե-
լօքներին նրանք կուղարկեն յիմարանոց: Ապագան
նրանն է—ով համոզմունք ունէ և գործում է ան-
կեղծ սրասով:

Նախկին Մսերեանը դարձեալ երեան եկաւ իւր
բոլոր վարվառւն զգացումներով: Կարծես, վերջին ժա-
մանակուայ թախիծը մի վայրկեանսում անհետացաւ և
նա մոռացաւ իւր յուսահատ երկուորութիւնը, ո՞ր այն-
պէս թմրեցրել էր նրան: Եթէ այդ պահին թժիշկ Սա-
լամբէկեանը ներկայ լինէր, իդէալիսար, առանց որ
և է ոփի, կը գրկէր նրան և կը շնորհաւորէր: Նա այս
բանը չըթագրուց Դիմաքսեանից:

—Ինչ արած, ես այսպիսի մարդ եմ, —աւելաց-
րեց նա, —կուզես ինձ անուանիր յիմար, տխմար, բայց
այսպէս եմ...

Դիմաքսեանը գուրս եկաւ նրա մօտից գրեթէ
բոլորովին փօխված: Կասկածի նշոյլ անդամ չէր մնա-
ցել նրա սրտում և ոչ խկ մի մազու չափ վհատու-
թիւն: Նա մի առանձին ոգեսրութիւն էր ստացել և
զգում էր իւր մէջ մի նոր ոյժ մաքառելու իւր գա-
զագիւղների համար: «Անմիտներ, ասում էր նա մըտ-
քում, գուք կամեցաք ինձ ծաղրել, ձեզ չի յաջողվիլ
այդ: Խելագար եմ ես. շատ գեղեցիկ, ուրեմն սւնկմ
այդ: Խելագար եմ ես. շատ գեղեցիկ, ուրեմն սւնկմ

այդ: Խոսելը:

Մի ամբողջ շաբաթ նա փակված իւր բնակարա-

նում գրում էր: Կեանքի գառն փորձերը նրա ուղեղում կազմել էին մի աշխարհահայեացք: Պէտք է փշել այն բոլոր հասարակական նախապաշարմունքները, որ կաշկանդում են անհատի բարոյական ազատութիւնը—այս էր այն կենտրոնական առանցքը, որի շուրջը պարտում էին նրա բոլոր մաքերը: Դա էր այն անսպասելի ազբիւրը, ուսկից սկիզբն էին առնում նրա գաղափարները, յետոյ զարդանում, բեղմնաւորվում և յափշտակում նրան իրանց բուռն, անընդիմադրելի հոսանքով:

Մի այլպիսի հոսանք գարձեալ նրան մոռացնել տուեց ամեն ինչ: Նրա միտքը գործում էր տենդային աշխուժով, որոնելով և դժոնելով այն բոլոր անսպասա պայմանները, որոնք խանգարում էին շրջանի վրայ անհատի բարոյական ազգեցութեանը: Նա ուզում էր ապացուցանել, որ ամբոխի սրբութիւնները շատ են կարօտ արմատական վերանորոգութեան: Նա պինդում էր, թէ քանի կեանք կայ—պէտք է փոխվեն և նրա զեկավարող պայմանները, թէ կուզ նրանք լինեն հիմնական օրէնքներ, թէ կենդանին չի կարող կապված մնալ մեռեալի պաղ շղթաներով:

Թմրած ճահճի մէջ գարձեալ համարձակ ձեռքը արձակեց մի քար, և նա պէտք է պղտորմէր: Դա մի փոքրիկ բրոշիւր էր, ուր Դիմաքսեանը կատաղի կերպով քննում էր ու վերլուծում հասարակական կեանքի ախտերը և անխնայ յարձակվում նրանց վրայ:

V

Պեօտր Սոլոմոնիչի դրութիւնը շատ ծանր էր: Հրաւիրված բժիշկները ըլկարողացան օդնել: Նրանք

միայն խորհուրդ էին տալիս եղանակը տաքանալուց յետոյ հիւանդին ուղարկել արտասահման, զուցէ այնտեղ հոչակաւոր բժիշկները մի բան կարողանան անել:

Բայց տիկին Բախտամեանը հակառակում էր: Նա ասում էր, թէ օտար երկիրներում իւր ամուսինը կը-մնայ զուրկ խնամող աչքից, այն ինչ՝ ինքը այստեղ գոնէ քնքոյշ հոգացողութեամբ աշխատում է թեթեւացնել նրա ցաւը: Ճշմարիտն այն էր, որ բժիշկներից ամենահմուտը նրան գաղտնի ասել էր, թէ ծերունու օրերը հաշված են, և նա շատ-շատ կարող է ապրել միայն երկու ամիս:

Տիկինը վախենում էր՝ մի գուցէ հիւանդը յանկարծ արտասահմանում առողջանայ և այնուհետև մի-թէ նորից ինքը պէտք է տանջվէր նրա ձեռքում: Բացի գրանից, նա կամենում էր վերջին օրերը իրան հոգատար ամուսին ցոյց տալ, յօւսալով գէթ մասամբ հասարակական կարծիքը փոխել իւր մասին:

Այժմ նրա դռները նորից բացվել էին ծանօթների և բարեկամների առջև: Ամեն օր հիւրեր էին գալիս հիւանդին տեսնելու: Պեօտր Սոլոմոնիչը նրանց ընդունում էր միայն քառորդ կամ կէս ժամով, յետոյ նրան պաշարում էր ընդհանուր մարմնային թուլութիւն: Նա ընկնում էր մի տեսակ կիսաարթուն և կիսաթմրած գրութեան մէջ:

Այդ ժամանակ տիկինը հիւրերին հրաւիրում էր գահին, որովհետեւ դա հիւանդից ամենահեռու սենեակն էր: Այսուեղ ամեն ինչ փոխվում էր, սուգը դառնում էր ուրախութիւն: Հիւրերի դէմքերից անհետանում էր կեզծ ցաւակցութեան արտայայտութիւնը և տեղի էր տալիս զուարթութեան: Սկսում

Եին զուարձախօսել, ծիծաղել, երբեմն էլ այնքան բարձըր, որ նրանց ձայնը կարող էր հիւանդին համաել:

—Ախ, շատ շնորհակալ եմ, որ ինձ միսիթարում էք, —ասում էր տիկին Բախտամեանը, աչքերի բիբերը հեղ մայրապետի պէս գէտի վեր բարձրացնելով:

Յաճախ նրա սեղանի շուրջը նստում էին հինգ կանայք և երիտասարդներ: Այդ միջոցներին տիկինոց «միսիթարութիւնը» արտայայտվում էր անզուսով զուարձութիւններով: Կարելի էր կարծել, որ ոչինչ անախորժ բան չի անցել նրա գլխով, որ ընդհակառակը բաղդը նրա համար ուղարկել է մի նոր երջանկութիւն:

Միայն երբեմն ձևի համար նա յանկարծ հառաչում էր, շտապով վաղում էր ամուսնու սենեակը և, անդամալոյնին նոյն թմբութեան մէջ տեսնելով, վերադառնում էր և նորից շարունակում իւր զուարձութիւնը: Նա հաւատացնում էր հիւրերին, թէ դիտմամբ է աշխատում մոռանալ իւր վիշտը, որպէս զի «ոյժերը շրկորցնի»: Եթէ նա էլ հիւանդանայ, էլ ով պէտք է տիկ անի «խեղճ մարդուն»:

—Ի հարկէ, ի հարկէ,—կրկնում էր կեղծաւորների, շողոքորթների և հացկատակների երամը, —այդ շահիլ հասակում, ափսան, ափսոս ձեր գեղեցկութիւնը:

Բայց ափիկնը ոչ ոքի չէր կարող խաբել, մանաւանդ Վէրիւեանին, որ նոյնպէս մշտական հիւրերի թւումն էր, երդուեալ փաստաբանը օտարներից ուշ իմացաւ իւր աղքականի թշուառութեան բուն պատճառը Սկզբում նա անշափ վրդովվեց իւր ընկերոջ գէմչին ապերախտութիւն, —ասում էր նա մըտքում, —ինչու այդպէս անմարդավարի և անարժան

կերպով վարձատրեց այն հիւրասիրութիւնը, որին ես արժանացրի նրան Բախտամեանների ընտանիքում:

Բայց անցաւ առաջին վրդովմանքը, նա, աւելի սառն մտածելով, գտաւ ծանր յանցանքի «արդարացուցիչ պատճառները», ինչպէս սովոր էր գտնել բուցուցիչ պաշտպանած յանցաւորների համար: Երկուլոր իւր պաշտպանած էին, մոլորվեցին: Մեզը ծերուսն էլ երիտասարդ կնոջ հետ: Զըպիտի անէին, բայց գամ երիտասարդ կնոջ հետ: Այսպէս էր գտառմ Վէրիարեցին, էն, խարվեցին: Այսպէս զի ինքը ստիպւեանը, և դա մի առիթ էր, որպէս զի ինքը ստիպւեանը շրլինի ասպարեզ գուրս գալ ինչպէս արիւնակված չըլինի ասպարեզ պղղական: Նա չէր ուցական պատուի վրէժինդիր աղղական: Նա չէր ուցական պատուի մարդու հետ, որի գործակիցն զում թշնամանալ այն մարդու հետ, որից ակնածում էր և որը միշտ էր շատ բաներում, որից ակնածում էր և որը միշտ էր նրան հարկաւոր էր: Վէրջապէս, նա խոհեմութիւն էր նրան հարկաւոր էր: Քան աղմուկ հանելը:

Համարում լռելը, քան աղմուկ հանելը: Իւր զիոյշ, խոհեմ և հեռատես վարմունքի շնորհով նա բաւական շահել էր Պեօար Սոլոմոնիչի սիրով: Նով նա բաւական միայն անտրասունջ ընդունում էր տը: Ծերունին ոչ միայն անտրասունջ ընդունում էր նրան, այլև զգում էր բերել, նրան հարկաւոր էր ուել էր գործերը կարգի ուրիշ ով կարող էր աւելի օդամի հաւատարմատար: Ուրիշ ով կարող էր աւելի օդամի հաւատարմատարը, եթէ ոչ Վէրիւեանը: Իրատաւեկտ լինել այս բանում, եթէ ոչ Վէրիւեանը: Կալուածւաբանը լիազօրութիւն ստացաւ ծերունտ կալուածւաբանը կառավարելու և առհասարակ նրա բոլոր գործերին հետամուտ լինելու:

Օր օրի վրայ Պեօար Սոլոմոնիչ հիւանդութիւնը ծերին հետամուտ նա միանգամայն կերպատ ընթացքը էր սարանում: Նա սիհար գէմքի կաշին սկապարանավոխվել էր:

ցել էր, աչքերը պլշել էին։ Նախկին կատաղութեան նշոյն անգամ չէր մնացել, դոնէ այսպէս էր երեւում արտաքուստ։ Այժմ նա մի թոյլ, անզգայ, խղճալի մարմին էր, օրը մինչև երեկոյ տարածված թախտի վրայ։ Կնոջը նա արտաքուստ վերաբերվում էր շատ անտարբեր։ Կարծես, մոռացել էր նրա պատճառով կրած իւր անհուն տառապանքները։ Միայն երբեմն ետեից գաղտուկ նայում էր նրա գեղեցիկ հասակին, սպիտակ պարանոցին և գլուխը տրտմութեամբ շարժում։

Մի օր նա Վերիեանին կանչեց իւր մօտ, դռները կողպել տուեց և մնաց նրա հետ։

Երկար ժամանակ միւս սենեակում տիկին Բախտամեանը անհամբեր սպասում էր իւր աղղական փաստաբանի դուրս գալուն։ Նրա սրում ծագել էր մի կասկած։ Ստէպ-ստէպ նա ոտների ծայրերի վրայ զգոյշ քայլերով մօտենում էր կողպած դռներին, կռանում և նայում դէպի ներս։ Բայց բանալին խանդարում էր, և նա չըգիտէր ինչ է կատարվում ներսում։

Նա առհասարակ մեծ հաւատ չուներ դէպի Վերիեանը։ Նա վախենում էր՝ մի գուցէ փաստաբանը ծերունու դաշնակիցը դառնայ և, ով գիտէ, ինչեր անեն միասին։

Վերջապէս, շշնչիւնները ընդհատվեցին, տիկինը լսեց Վերիեանի քայլերի ձայնը։ Նա հեռացաւ դռներից, որ իւր լրտեսութիւնը շընկատվի։ Վերիեանը շտապով դուրս եկաւ և, առանց տիկնոջ կողմը նայելու, անցաւ ու հեռացաւ։ Աննան անմիջապէս մտաւ Պետք Սոլոմոնիչի սենեակը։ Խալաթը հագին, թախտի վրայ երեսն ի վեր տարածված, հիւանդը նայում

էր առաստաղին՝ մտածունքի մէջ։ Նա իւր առողջ ձեռում բռնած էր մի թերթ գրոտած թուղթ, որը շտապեց թագցնել բարձի տակ։

—ի՞նչպէս ես այժմ, —հարցրեց տիկինը, ներքին խոռվութիւնից շրմունքները կրծելով և նայելով ձերունու ձեռին։

—Հ՞ը, —մրմնջաց հիւանդը անորոշաբար։

—Լաւ ես։

—Նշանաւ, —պատասխանեց հիւանդը դանդաղ և թլված լեզով։

Արդարես, կարծես, նա կենդանութիւն էր ստացել։ Նրա ապշած աչքերը նայում էին աշխուժով։ Այս փոփոխութիւնը ափինոջը վախեցրեց։ ըլլինի թէ հիւանդը առողջանում է։ Նա հետաքրքրված էր բարձի տակ թագցրած թղթի բովանդակութիւնով։ Նա հանգված էր, որ դա ծերունու կտակն է։

—Այնքան երկար ժամանակ ինչի՞ մասին էիր խօսում Վերիեանի հետ, —հարցրեց տիկինը, շըկարուղանալով սպել իւր անհամբերութիւնը։

—Վըգոչինչ…

Հիւանդը երեսը դարձրեց պատին, աւելի ամուր սեղմելով բարձր։ Կինը նայեց նրան՝ գօսացած ոտներից սկսած մինչև զառամեալ գլուխը, ոտը խփեց յատակին և ամբողջ մարմնով ցնցվեց։ Զըկար այդ վայրկեանին նրա համար աւելի ատելի, աւելի զաղըրելի մի բան աշխարհի երեսին, քան այդ քայլքայց ված մարմինը, որի մէջ տակաւին ապրում էր անողոք հոգին։

Ահա նա, ահա այն անիծեալ ծերունին, որ տարիների ընթացքում ծծել է նրա երիտասարդական-

թարմ արիւնը, ապրել է նրա կեանքի հիւթով ինչպէս մի տղբուկ: Խոկ այժմ, երբ նա պարտաւոր է այդ բոլորի գինը վճարել, երես է դարձնում, չի ուզում անդամ խօսել նրա հետ: Ո՛չ, կոպիտ անդամալոյժ, ոչ, անխիղճ ծերունի, ոչ, դու պէտք է խօսես քո օրինաւոր կնոջ հետ: Դու հէնց այս բռպէիս, քանի ուշ չէ, քանի որ քո ատելի հոդին «սատանաների բաժին» չի դարձել, պարտաւոր ես յայտնել քո կամքը, ապա թէ ոչ... Կատաղած տիկինը բռունցքները սեղմեց, մի քայլ առաջ գրեց, աչքերը պսարլացնելով և ատամների արանքից դողդոջուն ձայնով արտասանեց.

—Մի մոռանար, որ դու երեխաներ ունիս...

Ծերունին երեսը մի քիչ շուռ տուեց նրա կողմէ: Մի շարախնդիր ժպիտ աղաւաղեց նրա դալկացած դէմքը և մի կծու հեգնութիւն պսալզաց նրա աչքերի մէջ: Դեռ ես նրա ուղեղը այնքան տկար չեր, որ չպկարողանար հասկանալ կնոջ միտքը: «Եհե, քարասիրտ գեղեցկուհի, կարծում էիր մինչեւ վերջը կարմղ ես խարել քո մարդուն: Կարծում էիր ինձ գերեզման դլուրելով, ինքդ իմ հարստութիւնով նոր կեանք կը վայելես մի ուրիշի, մի որ և է գեղեցիկ, առողջ երիտասարդի հետ: Զէ, չէ, յօյսդ կտրիր»:

Երկուսն էլ լուռ էին, բայց երկուսն էլ իրար հասկանում էին: Մերթ ընդ մերթ ծերունին գլուխը բարձրացնում էր և դէպի գուրս ականջ գնում: Եսկում էր, նա մէկին ամեն բոպէ սպասում է և շատ բարկանում էր, որ այդ մէկը ուշանում է:

—Զղանդակիը,—արտասանեց, վերջապէս, նա, աչքերը սեեռելով դռներին և, մի ենոյն ժամանակ, ձեռը աւելի սեղմելով բարձին:

Տիկինը տատանման մէջ էր, մնալ արդեօք մինչեւ վերջը, աեսնել, թէ ով պէտք է գայ, ինչ պէտք է վճռեն և հաստատեն, թէ թքել և գուրս գնալ: Մի քանի վայրկեան անցած, ծանր շունչ քաշելով և Վէքիլեանի հետ բարձր ձայնով խօսելով, ներս մտաւ Ամբակում Աֆանասիեվիչը: Նրանց ետեից երեաց շէկ ու երկայն միրուքով մի պարոն կռնատակին պահած մի կաշուէ թղթապանակ և յետոյ երկու ուրիշ անձանօթ մարդիկ:

Պետքը Սոլոմոնիչը նշաններով առաջարկեց իւր ամուսնուն գուրս գնալ: Բայց միտյն մի քանի օտար հիւրերի ներկայութիւնը ստիպեց Աննային թողնել այնտեղը, ուր վճռվում էր նրա ճակատագիրը: Նա ակամայ քայլերով գուրս գնաց: Նրա ետեից Վէքիլեանը յանդգնաբար դռները փակեց:

Նա մնաց մենակ և յուսահատված, թւում էր նրան, որ այնտեղ հաւաքվել են մի խումբ աւագակներ և կողոպտում են նրա տուն ու տեղը, հարստութիւնը և ամբողջ բազգը: Եւ աւագակների պարագլուխն է իւր ազգականը, այդ սափրած, յղկված, կուլորիկ դէմքով, սուր աչքերով փաստաբանը, որ հրացանի ու դաշոյնի տեղ գործ է գնում գրիչ և խորամնկութիւն:

Նա պատրաստ էր գոռալ բարձրաձայն: «օդնեցէք, կողոպտեցինք: Նո ուզում էր գոնսերը կոպիտ, ներս վաղել, ապտակել մէկին, միւսին, վանդել բոլորին իւր սեպհական տնից: Բայց ինչ, նա մի թոյլի կին է, անտէր, անպաշտպան: Օ՞ս անգութներ, օօ անստուածներ, ինչու այդպէս ջախչախում էք նրա միայնածածկը: Յանուչորս տարի տանջվելուց

յետոյ միթէ նա իրաւունք չունէր գոնէ տասնուշորս
տարի էլ ապրելու եւ քանի-քանի երիտասարդներ
կային, որ կարող էին նրան երջանկացնել. նա մինչև
անդամ չքիտէր նրանցից որին ընտրել: Այժմ ինչ
առաջարկէ իւր ընտրելիին, եթէ նրանից խում էք
ամենամեծ հրապոյրը — հարստութիւնը: Գեղեցկու-
թիւնը, օօ, նա թառամում է, կորչում, մի քանի տա-
րի ես, և այնուհետեւ ինչո՞ւ կընմանի նա:

Անցաւ մի յամ, մի ամբողջ դառն և անտանելի
ժամ: Բանալին դրան մէջ պտոյա եկաւ: Տիկինը վա-
զեց սենեակի անկիւնում դրած պահարանի մօտ և
ոկտց այնտեղ իրու թէ ինչո՞ր որոնել:

—Աննա Պավլովնա, Պետր Սոլոմոնիչը կանչում
է, — լսվեց Վէքիլեանի պաղ ձայնը:

Երբ ափկինը շփոթված ներս մտաւ, բոլոր հիւ-
րերը յարգանքով սաքի կանգնեցին և մի անդամ ևս
գլուխ տուեցին: Ծերունին հրաւիրեց նրան նստել,
յետոյ անմիջապէս խնդրեց շիկամօրուս նոտարին կար-
դալ իւր ձեռի թուղթը:

Կտակը դրված էր մանրամասն: Առաջին մասը
պարունակում էր բարեգործութիւններ: Էջմիածնի
վանքին տասը հազար, ներսիսեան դպրոցին մի շարք
խանութներ, քաղաքային ինքնավարութեանը քսանու-
հինդ հազար բուրլու տոկոսաբեր թղթեր երեք որ-
դեգիր պահելու համար: Եւ բոլորը Պետր Սոլոմոնիչ
Բախտամեանի և միմիայն նրա անունով: Կարծես, ծե-
րունին վճռել էր իւր անունը անմահացնել:

Բայց կար մի հատուած, որի կարգալու միջոցին
ծերունին խորհրդաւոր կերպով գլուխը շարժեց, աշ-
քերը յառելով կնոջ երեսին: Նա կտակում էր իւր

ըրոջ գուստը Գայիանէ Բարաթեանին երեսուն հազար
բուրլի զուտ փող ինչպէս սեպհականութիւն: Կտակում
էր գարձեալ նրան երեսուն հազար բուրլի, որ այս
գումարով բաց անի աղքատ աղջիկների համար մի
ուսումնաբան իւր անունով:

«Այսինքն ուսումնաբանը պէտք է լինի Գայիա-
նէի ուսումնաբանը և ոչ թէ ափկին Բախտամեանի:
Թող հայերը որդոց որդի օրհնեն իմ Գայիանէի անու-
նը և յիշատակը»:

Կտակած գումարները ծերունու մահուան քա-
ռասունքի օրը տոկոսաբեր թղթերով պէտք է յանձն-
վէին Գայիանէին: Կտակակատարներին ոչինչ իրաւունք
չէր տրվում ուսումնաբանի վերաբերմագր:

Տիկինը շրթունքները ատամներով այնքան ամուր
սեղմեց, որ նրանք սպիտակեցին, յետոյ կարմրեցին,
յետոյ կապտեցին:

Նօտարը շարունակեց: Մնացեալ կարողութիւնը
ծերունին թողնում էր իւր զաւակներին: Կտակակա-
տար և խնամակալ նշանակվում էին Ամբակում Աֆա-
նասիեվիչը և Վէքիլեանը մինչև ծերունու աղջկերանց
չափահաս դառնալը: Այնուհետեւ հարստութիւնը հա-
ւասար չափով բաժանվում էր երկու քոյրերի մէջ այն
պայմանով, որ նրանց ամուսնանալուց յետոյ անձնա-
պէս իրանց պատկանի առանց որ և է իրաւունքի աւ-
տուսինների կողմից:

Բոլոր գործերը պէտք է կառավարէին խնամա-
կալները: Նոյն իսկ ընտանիքի ծախսերը նրանք պէտք
է անէին, նոյնպէս հոգային լիգոչկայի և Ելեչկայի
կոթութեան մասին: Այդ բոլորի համար նշանակված
էր այնքան, որ աւելորդ շուայլութիւն թոյլ չէր տա-

լիս եթէ տիկին Բախտամեանը կամենար ամուսնանալ, զրկվում էր ծախսերից, իսկ զաւակները մնում էին խնամակալների հոկողութեան տակ, թէև իրանց մօր մօտ: Մի խօսքով, տիկնոջը ոչինչ իրաւունք չէր յատկացվում, բացի այն, որ նա նշանակվում էր մի տեսակ պատուաւոր աղախին իւր զաւակների համար դրեթէ մի փոր հացի գնով:

Երբ նօտարը վերջացրեց ընթերցումը, բոլորը մեքենաբար նայեցին տիկնոջ երեսին և յետոյ սենեակի յատակին: Նա կանդնած էր անշարժ, անլուր, դըժդոյն, ինչպէս արձան: Յանկարծ նշա աչքերը վառվեցին, կուրծքը բարձրացաւ, բուռն արցունքը խեղղելով նրա կոկորդը, դուրս թափվեց նրա գունատ երեսի վրայ:

Նա ընկղմվեց բազկաթոռի վրայ և սկսեց հեկեկալ...

(VI)

Իզուր Գերասիմ Գերասիմիչը առաջին երեկոյ, հետեւալ և նոյն իսկ երրորդ օրը սպասեց, որդին և հարսը չեկան նրա մօտ հաշտված, ուրախուրախ, ինչպէս նա պատուիրել էր: Վերջապէս անդամալոյծի համբերութիւնը սպառվեց: Նա կանչեց իւր որդուն և սասաիկ յանդիմանեց: Որդին ասաց, թէ ինքը «ամեն բան ներում է», պատրաստ է հաշտվել, բայց Փայիսանէն չի ուզում և քանի գնում, այնքան աւելի երես է դարձնում նրանից:

—Երեք օր է նա կանչել է քրոջը իւր մօտ և նրա հետ գաղտնի խօսակցութիւն ունէ: Մինչև անդամայդ աղջիկն էլ չի ուզում ինձ հետ խօսել:

Ծերունին իւր Անդրէյին հրամայեց կանչել «մեծամիտ» տիկնոջը: Փայիսանէն իսկոյն եկաւ: Նա հասկացաւ, ինչու համար են իրան կանչում և արդէն դիտէր, թէ ինչ պէսք է պատասխանի: Որքան ծերունին յորդորեց, որքան խրատեց, վերջապէս, սպառնաց, տիկինը միայն արտասանեց.

—Ես կեղծել չեմ կարող:

—Ի՞նչ ասել է կեղծել, —գոչեց ծերունին իւրուպոտ ձայնով:

—Զեզ, ինձ և ուրիշներին խարել: Այսօր կըհաշտվեմ, վազր ձեր որդին էլի իւր ուղածը կանի: Եթէ չանի էլ, էլի չեմ կարող հաշտվել:

—Իսակ, —դարձաւ հայրը որդուն, —մօրդ գերեզմանով երդվիր, որ կնոջդ հաւատարիմ կըմնաս այսուհետեւ, ժիգո...

Գա միակ սրբութիւնն էր, որ Բարաթեանը անխախտ պահպանում էր իւր սրտի խորքում: Երդվել մօր գերեզմանով—կընշանակէ, ինչպէս և լինի, անպատճառ կատարել այդ երդումը: Բայց նա շատ լաւ զգում էր, որ չի կարող այդ անել և վաղ թէ ուշ պէտք է իւր երդումը քանդի: Ուրեմն ինչու սրբապղծութիւն դործել մօր յիշատակի դէմ, մանաւանդ որ նա մտքում դրել է միայն առերես հաշտվել Փայիսանէի հետ, արդէն ինքն էլ ձանձրացած լինելով նրանից: Կամենալով մի կերպ խոյս տալ ծանր երդումից, նա ասաց.

—Ես աղնիւ խօսք եմ տալիս:

—Նու, շտօժ, —դարձաւ ծերունին Փայիսանէին, —աղնիւ խօսք է տալիս:

Տիկինը ուսերը թեթև կերպով վեր քաշեց, երեւ

ող մի կողմ դարձնելով:

Նա չըգիտէր որի վրայ աւելի զարմանար, որդու, որ այդպէս յանդկնաբար ուզում էր նորից խարել նրան, թէ հօրը, որ, կարծես, խրախուսում էր նրա անառակութիւնը:

Վերջին անդամ Գայիանէն դրականապէս մերժեց ծերունու խնդիրը:

—Աւեմն ինչ ես ուզում անել,—գոչեց անդամալոյնը արդէն բարկացած,—չը մինի թէ մաքումդդրել ես բաժանվել: Ի հարկէ, այդ էլ մօդա է, կարող է խելքիդ փշել:

Յետոյ, մի քիչ իրան զսպերով, նա առաջ ըերեց այն բոլոր վատ ոլոյմանները, որոնցով շրջապատված է մարդուց բաժանված կինը: Նա ապացուցեց, որ հազար անդամ լու է ասպել ոչ միայն իսակ Բարաթովի պէս մի «շատ սովորական» ամուսնու, այլ նոյն իսկ ամենաանառակ մարդու հետ, ինչպէս օրինական կին, կրել ամեն տեսակ տանջանքներ, քանի թէ բաժանվել: Խօճ, երիտասարդ կինը առանց տղամարդի չի կարող մնալ. այդ աներեակայելի է, «ն ե վ օ դ մ օ ժ ն օ, ն ե ե ս տ ե ս տ վ ե ն ն օ»:

Նա խօսում էր իրան յատուկ ազատ նոյն իսկ անհամեստ ոճով: Եւ այս անդամ որդին չէր ընդհատում նրա խօսքը: Նա ինքը համաձայն էր հօր մըտքերին և ուրախ էր, որ իւր մտածածը նա է ասում:

Գայիանէն լուռ նստած էր, աջ ձեռով աչքերը ծածկած և ձախ ձեռը թոյլ կերպով ծնկի վրայ դրած: Ծերունու խօսքերի մէջ նա զգում էր մի ճշմարտութիւն, այն է, որ ինքը ոչ մի պաշտպան չունէ: Այն որից, երբ Բարաթեանի տնից ուար դուրս կը դնի,

նրա անունը հարիւր տեսակ վատարանութիւնների առարկայ պէտք է գառնայ: Այդ նա շատ լաւ գիտէ: Բայց միթէ հէնց դրա համար մնալ և շարունակել այդ դժոխային կեանքը արդէն քստմնելի դարձած մի մարդու հետ, որի շնչառութիւնն անդամ թունաւորում է նրա օդը:

Նրա աչքի առջև, ինչպէս կենդանի սպառնալիք, կանդնած էին երեխանները: Ահա բնական անխորտակելի կապը, որի առջև փշոտվում են բոլոր բարոյական ոյժերը: Բայց արդեօք նրանք բաղդաւոր են, սնվելով և կրթվելով անվերջ երկպառակութիւնների ազգեցութեան տակ: Եթէ նա երբէք չի կարող հաշտվել նրանց հօր հետ, եթէ նրա սրտում արմատացած բուռն զգուանիքը յաւիտեան պէտք է մնայ այնտեղ, չէ որ այդ փոքրիկները, որ օր օրի վրայ հասունանում են, պէտք է, վերջապէս, տեսնեն, զգան և հասկանան սոսկալի եղելութիւնը: Այն ժամանակ միթէ նրանց զգայուն սրտերը չեն փչանալ, նրանց գիւրաթեք հոգիները չեն աղաւաղիլ: Աւելի շաւ չէ, քանի որ նրանք փոքրիկ են, քանի որ ոչինչ չեն հասկանում, վազօրօք, մի հարուածով վերջ տալ խճճուած հանդոյցին: «Ոչ, ծերունի, ոչ, զուր ես ինձ համոզում, դու սխալվում ես, հերիք է ինչ որ ես քաշեցի քառուց: Այժմ չեմ կարող և չեմ ուզում էլի խարպել, էլի տանջվել»:

Մինչ այս բոլորը վայրկենաբար անցաւ Գայիանէի մտքով, ծերունին, իւր խօսքը աւարտած, սպասում էր պատասխանի: Իսկ որդին տխուր գէմքով կանգնած, գլուխը մի քիչ դէպի ուսր թեքած, հեղութեամբ նայում էր նրան: Տես, ծերունի, տես ինչ-

քան նա ներողամիտ է, բարի, համբերող և ինչքան
ընդհակառակը, նրա կինը խստասիրտ է, կամակոր,
անհաշու Միթէ դու հէնց այս պատճառով նրան կը-
զրկեմ ժառանգութիւնից:

—Ե տ ծ ժ, շատ պէտք է սպասենք ձերդ գերա-
զանցութեան ր ե զ օլ ի ւ ց ի ա յ ի ն:

Գայիհանէն ձեռը հեռացրեց երեսից, ոտքի կանդ-
նեց և պատսխաննեց,

—Երբէք չեմ հաշտովի:

Ծերունու կիսախուփ աչքերը կատաղութիւնից մի
վայրկեան լայն բացվեցին: Նա գոռաց.

—Ուրեմն, կորիր, անա...

—Պապա,—ընդհատեց որդին խիստ ձայնով:

—Ե ա, բ ր ա տ, այժմ հասկանում եմ ամեն բան:
Բ ր ծ ս, է տ օ—ֆ ու ր ի ա, թող դնայ, ուր որ ու-
զում է...

—Աստծու տաճարի առաջ երդվել եմ մինչև մահ
իմ կնոջ հետ ապրել,—ասաց իսակը հանդարա ձայ-
նով, որի կեղծ հնչիւնը միայն Գայիհանէի համար կա-
րող էր զդալի լինել,—և պատրաստ եմ ապրել:

Յետոյ նա դարձաւ կնոջը և աւելացրեց.

—Իսկ եթէ ձեզ, տիկին, այնքան զգուացրել եմ,
որ իմ բարեսիրտ հօր աղաչանքն էլ չեք յարդում, ես
մեղաւոր չեմ... բարի ճանապարհ:

—Դ ա-ս ս, բարի ճանապարհ,—կրկնեց ծերու-
նին,—երեխաները կը մնան մեղ մօտ: Կարող եմ ա-
սել, մ ա դ ա մ, որ նրանք, վ օ վ ս ե ա կ օ մ ո լ ու-
չ ա ե, թարաթօվների տանը լաւ կը կը թվին: Մենք շատ
պակասութիւններ ունինք, բայց ոչ յիմար ենք, ոչ էլ
անկիրթ:

Գայիհանէն սարսափած նայեց նախ որդուն, ապա
հօրը: Նա այնպէս զդաց, թէ ընկել է երկու ան-
խիղճ դահիճների ձեռքը, որոնք ըուժ դանակով կը տ-
րում են նրա սրտի ամենազգայուն կտորը: Բայց նա
զիտէր, որ այդպէս էլ պէտք է լինի, որ Բարա-
թեանները երբէք չեն համաձայնվին, երեխաներին
իրան տալ: Նա գունատ էր ինչպէս կտաւ և միայն
աչքերի մէջ վառվում էր մի տարօրինակ կրակ: Դա
մայրական կատաղի սիրոյ փայխն էր:

Մէկը դրսից կամացուկ երեք անգամ զարկեց
դռներին: Գայիհանէն սթափվեց, խելքը գլուխը ժողո-
վեց և, մի քանի վայրկեան իրան իշխելով, գոչեց.

—Ո՛չ, գուք մինչեւ անգամ այդ սպառնալիքով
չեք կարող ինձ փոխել:

Բարաթեաննը դռները բաց արեց, երեաց Վէքի-
լեանի կերպարանները:

—Ախ, ներեցէք, որ այսպէս անժամանակ ե-
կայ, —ասաց իրաւաբանը մշտական ժպիտի փոխանակ
մի շինովի տրամութիւն երեսին, —ես եկել եմ մի ցա-
ւալի լուր հաղորդելու:

Եւ, դառնալով Գայիհանէին, աւելացրեց.

—Պետք Սոլոմոնիշը մեռնում է և ուզում է ձեզ
վերջին անգամ տեսնել:

Լուրը սարսափեցրեց Գերասիմ Գերասիմիշին:
Կարծես, դա սեպհական մահուան նախերդանքն էր:

—Խեղճ Պետրոս, —դոչեց նա յուղված, —ինչո՞ւ
այդպէս շուտ, խեղճ Պետրոս...

Նա ոչինչ տեղեկութիւն չունէր Պետք Սոլոմո-
նիշը ընտանեկան դժբաղդութեան մասին, թէ և լսել
էր նրա կաթուածահար լինելը:

Մի վայրկեան Գայիանէն տատանվեց. գնալ արշեօք, հանդիպիլ Աննային նոյն իսկ իւր տան մէջ: Բայց նա այնքան յարդում էր և սիրում էր իւր քեռիին, որ չըգնալ չէր կարող:

Առանց ուշացնելու նա հագնվեց և իսկոյն ուղեսրվեց դէպի այն տունը, ուր վաղուց ոտք չէր դրել: Վէրիլեանի հետ կառքում նստած, նա ամբողջ ճանապարհը մի բառ անդամ չարտասանեց: Նա դեռ տեղի ունեցած տեսարանի թարմ տպաւորութեան տակ էր: Ներկան նրա համար որոշվեց, քանդվեց այն փոտած կապը, որ մինչև այժմ առերես պահում էր նրան նախկին դրութեան մէջ: Իսկ ապադան ներկաւ յացնում է անորոշ խառնուրդ, անթափանցելի քաօս: Մերթ նրան թւում էր, որ իւր արածը անհաշիւ, լու չըմտածված, դուցէ վտանգաւոր բայլ է, մերթ նա աշխատում էր համոզել ինքն իրան, որ ընդհակառակը դա շատ հասարակ, շատ սովորական բան է:—Մի բան որ ուրիշները անում են առանց տանջվելու, առանց հասարակական կարծիքի վրայ ուշադրութիւն դարձնելու:

Նա այնքան կլանված էր իւր մտքերով, որ ոչինչ չէր տեսնում, ոչինչ չէր լսում: Նա չէր նկատում իւր ծանօթներին, որ աշ ու ձախից բարեելով անցնում էին: Մի վայրկեան միայն նա, կարծես, մի տեսակ մոխրագոյն գոլորշիի մէջ նշմարեց մի շատ ծանօթ կերպարանք, որ կանգնած էր մի փողոցի անկիւնում և մոայլ հայեացքով ուղեկցում էր նրան: Նա կրկին նայեց այն կողմ և ակամայ մի ցնցում զգաց: Դա Դիմաքսեանն էր: Միրում է նա արդեօք այդ ամենքից հալածված մարդուն, որ նրա աչքում այժմ ա-

մենքից խելօք է, ամենքից ազնիւ, ամենքից մաքուր և բարձր: Այս, սիրում է: Ոչ, ոչ, դա այն սէրը չէ, որ կնոջը մոռացնել է տալիս ամեն բան, և՛ հասարակական նախապաշտմունքներ, և՛ բամբասանք, և՛ շատ անգամ նոյն իսկ զաւակներին: Դա մինչև անգամ սէր չէ, այլ սիրոյ պատուանդանին համառող, նրա պէս պայծառ, նրանից մեղմ, բայց աւելի յօւսալի և յարատե մի զգացում է—յարգանք և երկրպագութիւն համոզմունքների գերի և վսեմ ձգտումների տէր մի մարդու առջե...»

Դիմաքսեանը ուղեկցեց աչքերով Գայիանէին, մինչև որ կառքը բոլորովին անհետացաւ փողոցի ծայրում: Յետոյ երկար ժամանակ մնաց միենոյն տեղը անշարժ: Յիշեց այն օրը, երբ Գայիանէն ուրախ ու զուարթ դէմքով կարեթի մէջ նստած սլանում էր Բարաթեանի հետ դէպի երկաթուղու կայարանը: Յիշեց բոլոր իւր տառապանքները, որ կրել էր մինչև այդ օրը և այնուհետեւ: Համեմատեց այն ժամանակուայ Գայիանէին այժմեանի հետ: Որքան փոփոխութիւն: Այն դէմքը, որի իւրաքանչիւր գիծը այն ժամանակ արտայայտում էր անհուն երջանկութիւն, այժմ ինչպէս սքօղվել էր դառն տիրութիւնով: Բայց այս տիրութիւնը այժմ բոլորովին ուրիշ ազգեցութիւն գործեց նրա վրայ: Բնազդմամբ զգաց, որ անկասկած մի արտաքոյ կարգի բան է պատահել Գայիանէին:

«Միթէ արդէն բաժանվել է ամուսնուց, մտածեց Դիմաքսեանը մարգարէաբար, և մի ինչոր անբացատրելի վայրկենական ուրախութիւն համակեց նրա սիրուը:»

Երբ Գայիանէն մտաւ Պետր Սոլոմոնիչի սենեակը, այնտեղ տիրում էր այն խորին սրբազն լռութիւնը, որ մահուան ներկայութիւնն է զգալ տալիս: Լուսամուտների ծանր վարագոյնները ցած էին իջեցրած, սենեակը կիսով չափ մուժն էր: Երեխաններին նոր հեռացրել էին ծերունու մօտից: Չէր երևում նոյնպէս և տիկին Բախտամետանը: Միայն Ովսաննան էր նստած հիւանդի գլխի մօտ, աչքերը արտասուքով թաց: Աւելի մօտիկ նստած էր բժիշկը, հիւանդի բաղուկը բռնած:

Քայլերի ձայն լսելով, Պետր Սոլոմոնիչը ծանրութեամբ աչքերը բաց արեց և ձեռը թոյլ կերպով շարժեց: Գայիանէն թեքվեց, համբուրեց այդ ձեռը, թոյլ տալով, որ ծերունին իւր պշկած, պաղ շրթունքները հպի նրա ճակատին: Նա նստեց մահճակալի մօտ, թաշկինակը սեղմելով աչքերին և աշխատելով զսպել արտասուքը, որ խեզդում էր նրա կոկորդը: Տառապեալ ծերունին նրա սիրան էր մօրմօքում: «Խեղճ մարդ, գու քո սխալանքի զոհը դարձրիր թէ քեզ, թէ քո պատիւը և թէ ինձ...»

Նա ոյժ չունեցաւ իրան զսպելու, սկսեց հեկեկալ, փաթաթվելով Ովսաննայի պարանոցին, որ իւր քրոջը անսնելու վայրկեանից արդէն հեկեկում էր:

Հիւանդը Վէքիլեանին նշան արեց: Իրաւաբանը հանեց նրա բարձի տակից կտակագիրը և կարդաց այն հատուածը, որ վերաբերվում էր Գայիանէին: Ծերունին աչքերը սեռոել էր իւր քեռորդու երեսին և

շրթունքների մեղմիկ շարժումով արտայայտում էր իւր սրտի գոհունակութիւնը: Նա խօսելու ընդունակութիւնը կէս ժամ էր կորցրել էր:

— Օօ, ես սրբութեամբ կըկատարեմ ձեր կամքը, — գոչեց Գայիանէն բարձր ձայնով, որ հիւանդի թմբած լսելիքին հասնի և նրա պաղ ձեռը նորից ամուր սեղմեց իւր շրթունքներին, — ես իմ անձը կըզոհեմ այդ նորատակին, բարեսիրտ, թանգագին քեռի...»

Ծերունու հողագոյն դէմքով անցաւ շնորհակալութեան պարզ ցոլմունքը:

Գայիանէն մնաց մեռնողի մօտ մինչև վերջին վայրկեան, ծերունու վերջին հայեացքը սառաւ նրա վրայ, դրոշմելով նրա փափկացած սրտի վրայ մի նոր, անջնջելի վիշտ:

Նոյն բոպէին պատկառելի քաղաքացու մահը, բերանից բերան անցնելով, տարածվեց համարեա ամբողջ քաղաքում: Իսկ հետեւեալ օրը նրա կտակի բովանդակութիւնը յայտնի եղաւ հասարակութեանը: Օրուայ հերոսները Ամբակում Աֆանասիեվիչը և Վէքիլեանն էին: Իրաւաբանը, ոչ առանց պարծանքի, հազորդում էր իւր բարեկամներին կտակի բոլոր մանրամասնութիւնները: Նա շատ ջանք է արել ծերունուն դէպի բարեգործութիւն թեքելու, և նրա ջանքը պատկեց յաջողութեամբ: Այս, եթէ նա շըլինէր, Էջմիածնի ճեմարանը և Ներսիսեան դպրոցը իսկի գրօշ կըստանային:

Եւ այսպէս նա անխնայ խլում էր հանդուցեալ Պետր Սոլոմոնիչի փառքի պսակի տերեները, բոլորը իւր անձնական ազգեցութեանը վերագրելով, մի չընչին մաս էլ յատկացնելով Ամբակում Աֆանասիեվի-

շին։ Հապա, ահա ինչ կարելի է անել համբերութեամբ, զգուշութեամբ և խոհեմութեամբ; Թող այժմ «խելագարը» կամ խելագարները ինչքան ուզում են յարձակվեն նրա վրայ։

Նա իսկոյն այցելեց մի բարեկամ խմբագրի։ Եւ ծերունութաղման օրը հրատարակվեց հանդուցեալի յիշատակին մի յօդուած, ուր «Ճշմարիտ աղգասէրների աղգեցութիւնը» գովաբանված էր ճարտասանական ծաղկազարդ ոճով։

«Կան մարդիկ, ասված էր այդ յօդուածում, իրանց հարազատ հօրը գերեզման են ուզարկում վատ վարփողութեամբ, որ նրանց փողերը վատնեն իրանց խղճալի անձի վրայ։ Այդպիսիներից պէտք է զղուանքով երես դարձնել։ Բայց կան այնպիսի բուն աղգասէր երիտասարդներ, որ ամեն մի մեռնող աղգականի մօտ դառն վշտերի մէջ էլ իրանց եկեղեցու ու աղգի կարիքն են հոգում։ Փառք և պատիւ այդպիսիներին...»

Կային և՝ այնպիսի մարդիկ, որ միմեանց ականջին շնչում էին այն փոքրիկ դումարի մասին, որ «բուն աղգասէրները» շպրտել էին պանեղիրիստ խմբագրին։ — Մի չնչին մասն այն հազարներից, որ կտակատարները «արտաքոյ կտակի» կորզել էին հանդուցեալից։

Գայիհանէն իւր քեռիկ տանը մնաց հինգ օր, առ մեն կերպ աշխատելով երես առ երես շըհանդիպել տիկին Բախտամեանին։ Հանդուցեալի թաղումից յետոյ երեկոյեան գարձեալ Ովսաննայի հետ երկար խորհրդակցութիւն ունեցաւ քեռիկ սենեակում։ Այնտեղ էր նաև օրիորդ Կարինեանը։

Հետեւալ օրը առաւտեան Ովսաննան մտաւ Ան-

նայի սենեակը, ուր այրիացած տիկինը փակված էր ամբողջ օրը։ Նա երկու խօսքով յայսնեց, թէ Պետր Սոլոմոնիչի մահից յետոյ ինքը այլ ևս չի կարող ապրել նրա տանը։

Օրիորդի այս անսպասելի վճիռը տիկին Բախտամեանը վերագրեց Գայիհանէի աղգեցութեանը։ Պետր Սոլոմոնիչի կտակում մանրամասն բացատրված էր Ովսաննայի հայրական ժառանգութեան գործը։ Այն անշարժ կալուածքը, որ պատկանում էր նրան և Գայիհանէին, կէս մասով յատկացրած էր օրիորդին, որ պէտք է տիրէր նրան երկու ու կէս տարուց յետոյ։

— Ինչպէս ուզում էր, այնպէս արէք, — արտասանեց տիկինն Բախտամեանը սաստիկ վրդովված։

Նա իսկապէս հոգով ուրախ էր Ովսաննայի հեռանալուն, բայց վրդովվեց, որովհետեւ օրիորդի նիւթական անկախ դրութիւնը նրա նախանձը շարժեց։ Մի արհամարհական հայեացքով չափելով օրիորդին ոտից մինչև զլուխ, աւելացրեց։

— Ամօթ շըլինի հարցնելը, որտեղ էր ուզում գնալ...

— Օրիորդ Կարինեանի մօտ։

— Օհօ, լամա տեղ էր գնում։ Նա աղատութիւն սիրող, դուք էլ... է՛հ, Տէրը ձեզ հետ Բայց ես զարմանում եմ, ինչու ձեզ քրոջ մօտ չեք դնում։

Այստեղ Ովսաննան յուղված հաղորդեց Գայիհանէի որոշումը, նրանք այսուհետեւ երկու քոյր պէտք է բնակիեն օրիորդ Կարինեանի մօտ։

— Ի՞նչ, ուրեմն քոյրդ մարդուց բաժանվնում է, — գոչեց Բախտամեանը, մի տեսակ ուրախութիւն զդալով Ովսաննան գլխով անորոշ շարժում արեց։ Տիկի-

Նը անսպասելի աշխոյժ ստացած ուրբի կանգնեց և սկսեց արագ-արագ անցուղարձ անել սենեակում։ Նա փորձեց Ռվաննայից գործի մանրամասնութիւնները իմանալու։ Բայց օրիորդը յամառութեամբ պնդում էր, թէ ինքը աւելի ոչնչ չըգիտէ և չի կարող ասել։

Նոյն օրը երեկոյեան Գայիանէն Ռվաննայի հետ տեղափոխվեց օրիորդ Կարինեանի մօտ։ Վերջն ժամին տեղի ունեցաւ մի սրտայոյզ տեսարան։ Ռվաննան շրկարողացաւ սառնարիւն բաժանվել այն տնից, ուր նա անց էր կացրել իւր մանկութիւնը ու պատանեկութիւնը և այժմ նոր-նոր սկսում էր իւր չափոհասութիւնը։ Հաւաքերով և գասաւորելով իւր հաւգուստեղէնը սնդուկի մէջ, նա անդադար լալիս էր Ամեն մի չնչին իր յիշեցնում էր նրան իւր անցկացրած ուրախ և տիսուր օրերը։ Նոյն ըստէին, երբ նա արդէն պատրաստվել էր դուրս գնալու, Լիզոչկան և Ելեչկան փաթաթվեցին նրա պարանոցին և չին ուղում բաժանվել նրանից։ Բայց տիկին Բախտամեանը մօտեցաւ և, խստութեամբ բռնելով ձեռներից, հեռացրեց նրանց օրիորդից։

VIII

Վաղուց բժիշկ Սալամբէկեանը նկատում էր, որ Դիմաքսեանը չափից դուրս շատ է հետաքրքրված Գայիանէի վիճակով։ Նա զգում էր, որ իւր ընկերը սիրում է տիկնոջը և այդ սէրը նոր չէ, բայց թէ որպան նա զօրեղ է—չըգիտէր։

Բարաթեանների բաժանվելու լուրը տռավինը նա հաղորդեց Դիմաքսեանին։ Որքան Գայիանէի արածը

սպասելի լինէր Դիմաքսեանի համար, այնուամենայնիւ լուրը խորը տպաւորութիւն գործեց նրա վրայ։ Այնուհետեւ նա աշխատում էր ստէպ-ստէպ տեսնվել Սալամբէկեանի հետ։ Բժիշկը ամեն օր այցելում էր օրիորդ Կարինեանին և Գայիանէին հանդիպում, բնական էր ուրեմն, որ միայն նա կարող էր ճիշդ տեղեկութիւններ տալ Դիմաքսեանին։

Մի օր նա ասաց, թէ նախընթաց երեկոյեան դայեակը երեխաններին ըերել էր Գայիանէի մօտ։ Բարաթեանը համաձայնվել է, որ շաբաթը մի կամ երկու անգամ մայրը տեսնվի իւր զաւակների հետ։ Բժիշկ Սալամբէկեանի ասելով, դա նրա կողմից մի ճարպիկ միջոց էր հասարակութեան աշքում բարեսիրտու ներողամիտ մարդ երեալու, նրա համակրանքին արժանահալու։ Այսպէս թէ այնպէս, Դիմաքսեանը փոքր ինչ ուրախացաւ Գայիանէի համար, որ բոլորովին չէր զրկվում իւր երեխաններից։ Այժմ նրա առաջին մտատանջութիւնը տիկնոջ վիճակն էր, և ամեն մի թեթևութիւն այդ վիճակի մէջ նրան մխիթարանք էր պատճառում։ Ահա ինչու մի անգամ նա հարցրեց՝ արդեօք ի՞նչ են մտածում օրիորդ Կարինեանը և բժիշկ Սալամբէկեանը Գայիանէի արածի մասին։ Թէ մէկի և թէ միւսի կարծիքը նշանակութիւն ունէր, ուրովհետեւ նրանց յարաբերութիւնից էր մասամբ կախված Գայիանէի վիճակը։ Իսկ Դիմաքսեանը գիտէր, որ շրջապատօղների մի թեթև աններողամտութիւնն անգամ կարող է ճնշող ներգործութիւն ունենալ Գայիանէի վրայ։

—Իմ կարծիքով, —պատասխանեց Սալամբէկեանը նրա հարցին, —դա միակ ելքն էր, ուրիշը չըկար

Նրա համար:

—Նոյն իսկ եթէ հասարակութիւնն էլ բամբասի:

—Հասարակութիւնը... եթէ նա հոգեբանական րեզօններ ընդունում է—շրպիտի բամբասի մի այդպիսի կնոջ։ Եթէ չի ընդունում, կընշանակէ նա բըռնակալ է։ Իսկ բռնակալին ներելի է դիմադրել։

Օրերը անցնում էին, Դիմաքսեանի անհանգըստութիւնը քանի գնում աւելանում էր։ Նա ցանկանում էր Գայիիանէի հետ գէթ մի անգամ տեսնվել, անձամբ իմանալ նրա դրութիւնը։ Բայց չէր վստահանում գնալ նրա մօտ, մի կողմից՝ քաշվելով օրիորդկարինեանից և բժիշկ Սալամբէկեանից, միւս կողմից՝ խնայելով Գայիիանէի անունը, որ առանց այն էլ բամբասանքի առարկայ էր։

Վերջապէս, առփթը մօտեցաւ. դա Սալամբէկեանի ամուսնութիւնն էր կարինեանի հետ։ Երջանիկ բժիշկ, որքան նա ուրախ էր, դոնէ Դիմաքսեանի աչքում, և ինչ աշխոյժ էր ստացել։ Կարծես, դա այն ծոյլ ու գանդաղ մարդը չէր, որ դեռ երկու տարի առաջ մէջքի վրայ պառկում էր ամեն օր և կրկնում. «աշխարհը դատարկ բան է»։ Արդեօք մէրը չէր, որ այդ դատարկութիւնը լրացրեց նրա համար։

Բժիշկը վճռել էր, որ հարսանիքը համեստ լինի։ Հրաւիրված էին միայն նրա և օրիորդի ամենամօտ ազգականները ու ծանօթները։ Հարսանիքը մի տեսսակ ընկերական խնճոյքի էր նմանվում։ Միայն այրի Բօլումբաշեանը չէր ուզում հաշտվել այդ անշքութեան հետ։ Նա երեկոյթի կառավարիչն էր, յանդիմանում էր օրիորդին, որ համաձայնվել էր բժշկի խորհրդով իւր հարուստ ազգականներին չըհրաւիրել։ Բայց

և այնպէս նա աշխատում էր աշխոյժ հիւրընկալ լինել։ Նա հագնվել էր ինչպէս մի վրաց իշխանուհի։ Մետաքսեայ լայն փեշերը յատակին քսելով, մէջքից մի զոյդ գոյնզգոյն երկայն ժապաւէններ կապած, նա սահում էր սենեակից սենեակ ինչպէս թևերը փռած սիրամարդ։

Հարսանիքի նախընթաց օրը օրիորդ Կարինեանը խնդրեց իւր փեսացուին անձամբ գնալ Մսերեանի մօտ և «թիւրիմացութիւններին» վերջ տալ։ Բժիշկը անտրասունջ կատարեց նրա խնդիրը, մանաւանդ որ ինքն էլ ուզում էր հաշտվել իւր ընկերոջ հետ։

Կարելի էր կարծել, թէ իդէալիստը իւր սիսոյեանին կընդունի դժկամակութեամբ կամ չի ընդունիլ բոլորովին։ Այն ինչ՝ հակառակը պատահեց։ Նա քիչ մեաց յուզմունքից արտապիկը, երբ իւր լուսամտի առջեւ տեսաւ ընկերոջ կերպարանքը։ Դա նրա բարի ընաւորութեան խոշոր հակասութիւններից մէկն էր։ Նա ընդունեց Սալամբէկեանին այնպէս, որ, կարծես, ոչինչ չէր անցել նրանց մէջ, չնորհաւորեց, բայց հրաժարվեց հարսանիքին ներկայ լինելուց։

Բժիշկը չը նախանձեց, չէր կարելի մի մարդուց աւելի վեհանձնութիւն պահանջել։ Նա այնքան զգացւեց, որ չըկառողացաւ իրան զսպել, փաթաթվեց ընկերոջ պարանոցին և համբուրվեց նրա հետ։

Երբ այս սրտառուչ տեսարանի պատմութիւնը օրիորդ Կարինեանը լսեց, նրա աչքերը արտասուրով լցվեցին։

—Ես համոզված եմ, —ասաց նա, —որ Մսերեանը քո ամենասանկեղծ բարեկամներից մէկն է։

Մինչդեռ բոլոր հրաւիրվածները արդէն եկել

Եին, Դիմաքսեանը Գայիանէին վնտում էր և չեր
տեսնում: Միթէ նա ամաչում է երևալ հասարակու-
թեան մէջ կամ գուցէ հիւանդ է: Դիմաքսեանը մօ-
տեցաւ օրիորդ Կարինեանին, որ երջանիկ ժպիտը ե-
րեսին պատկադրութեան զդեստով նստած էր պայ-
ծառ լուսաւորված գահլճի ծայրում:

Լովեց գաշնամուրի ձայնը: Հիւրերը քաշվեցին
դահլճի պատելի տակ, պարողներին տեղ տալու համար:

Դիմաքսեանը, հարսնացուին շնորհաւորելուց և
նրա հետ մի փոքր խօսելուց յետոյ, հեռացաւ հան-
գիսականներից, կանգնեց ոչ հեռու գէպի պատշգամբ
նայող մի լուսամտից: Նա նայում էր պարողներին և
մտածում Գայիանէի մասին: Յանկարծ վարագոյրի ե-
տեկց նրա ականջին հասաւ մի խօսակցութիւն, որի
մէջ յիշվում էր նրա ազգանունը: Նա զգաց, որ ի-
րան բամբասում են, հեռացաւ լուսամտից, մտաւ
հանդիսականների շարքը:

Մի ժամ անցած նա, առանձին կառք նստած,
հետեւում էր հարսնիքի հանդիսին գէպի եկեղեցի:
Հոգեկան վատ տրամադրութեան մէջ նա չըկամեցաւ
ոչի հետ ընկերանալ, որպէս զի ստիպված շլինի
խօսակցել:

Տարօրինակ ու մռայլ տպաւորութիւն գործեց
նրա վրայ ներսից լուսաւորված և գրսից խաւար ե-
կեղեցին: Երկնքի մթին հորիղոնի վրայ նկարված էր
նրա ութանկիւնանի գմբէթը, ինչպէս մի անշուռ ներ-
կայացուցիչ գարաւոր հաստատութեան: Մի կոթող,
որ վայրկենաբար յիշեցրեց նրան քրիստոնէական դա-
ղափարների երկար դարերի թագաւորութիւնը՝ նեղ
ու երկայնածե պատուհանները իրանց ազօտ կաթնա-

գոյն լուսով նայում էին ինչպէս թախծալի և խորհր-
դաւոր աչքեր:

Նա ներս մտաւ սիրտը լցված բանաստեղծական
զգացումներով և պատկառանքով դլուխ խոնարհեց-
րեց վաղեմի սրբութեան առջև: Քարաշէն սիւների և
պատերի մթին պաղութիւնը նրա սրտի մէջ տարա-
ծեց մի նոր չերմութիւն: Իւր ազգի պատմութիւնը
նկարվեց նրա հոգու մէջ, ինչպէս երկար գարերի
մթութեան մէջ կորած մի ամբողջ կեանք: Վերակեն-
դանացան նրա աշքի առջև այն բոլոր մարտիրոսնե-
րը, որոնց տուայտանքով պահպանվել էր այդ կեան-
քը և հասել ներկայ օրերին: Պատկերացաւ մի տա-
ռապող ժողովրդի ներկան, որ ունեցել էր անցեալ և
այդ անցեալը ապագային կտակելու համար իւր մի-
ջից տուել էր անձնազոհ նահատակների մի անվերջ
շարք: Ազգի հետ մի հոգի, մի արիւն դարձած, նրանք
դարեր շարունակ մաքառեցին քրիստոնէական լուսա-
ւոր գաղափարների համար:

«Ո՛չ, մըմնջացին Դիմաքսեանի շրթունքները, իմ
կրծքի մէջ մեռած չէ նուիրական զգացումը և չի մեռ-
նիլ յաւիտեան: Ես հաւատում եմ հաւատի անյաղ-
թելի ոյժին, ես կրմաքառեմ միայն այդ ոյժին ապա-
ւոնելով: Հեռու ինձանից սպանիչ յուսահատութիւն:
Ես ուզում եմ ասլրել և գործել մի անբաղդ ժողովր-
դի համար, ես նրա հարազատ զաւակն եմ: Անմահ
նահատակներ, ներշնչեցէք ինձ ձեր համբերութեան և
տոկունութեան հոգին, տուեք ինձ մի չնշին մաս ձեր
ոյժից: Ժամանակները անցան, ձեր պաշտպանած ազ-
գի պահանջները այժմ փոխել են, բայց ձեր նման
անվեհեր զինորների կարիքը կայ և կըմնայ բանի որ

գոյութիւն ունէ այս թշուառ ժողովուրդը...

Մինչ նա խորասուզված էր այս մտքերի մէջ՝ եկեղեցին հետզհետէ լցվում էր հետաքրքիր ամբուխով։ Պսակվողները չեին երեսում բաղմաթիւ գլուխաների շարքում, որ երկու կենդանի պատեր էին կազմել եկեղեցու երկայնութեամբ։ Լսվեցին երգիչ տիրացուների աններդաշնակ ձայները, ընդհանուր շշուկները և իրարանցումը սաստկացան։ Մի բոպէ ամենինչ լոեց, ամբոխը կուտփեց մի տեղ, շրջապատելով պսակվողներին։

«Որդի, հնաղանդ ես մինչև մահ։»

Վայրկենաբար Դիմաքսեանի մաքերը կենտրոնացան պատկ կատարող քահանայի այս բառերի վրայ։

«Ինչո՞ւ չէ, կը հնաղանդվի, բայց ոչ մոլորութիւններին և անառակութիւններին, այլ առաքինութեանը, կը հնաղանդվի փոխադարձ գաղափարական համակրութեանը, ոչ խարեբայութեանը, ոչ անառակութեանը... Միթէ Մեծ յարդասէրը մարմնացած բողոք և վրէմինդրութիւն չէր թոյլերի, խարվածների, ճնշվածների համար զօրաւորների դէմ։ Միթէ նա կարող էր ստրկութիւն քարոզել։ Ո՛չ, նրա սէրը անհուն էր դէպի անհատի աղատութիւնը։ Նա չասաց, թէ օրէնքները պէտք է քարացնել և նրանց ամբողջ ծանրութեամբ ճնշել մարդկանց հոգին...»

«Ո՛չ, ոչ, հաղար անդամ ոչ, Գայիանէն չէր կարող մինչև մահ հնաղանդ լինել։ Արձակեցէր նրա կաշկանդված ձեռները, թողէք նա աղատի։ Կամ դարձրէք նրա կողակցին նրա չափ մաքուր... ինչ որ պահանջում էր մէկից, պահանջեցէր և միւսից...»։

Նա կանդնած էր խոնաւ պատի տակ, քարաշէն

սիւնի ստուերում, հեռու հանդիսից, գլուխը մտքերի ծանրութիւնից կրծքին թեքած։

Ամբոխի միջից լավում էին ծիծաղ, քրքինջ, սրախօսութիւններ։ Խորհրդաւոր հանդէսը, որ մարդկանց ճակատագիրն էր վճռում, նրանց համար արձակ զուարծութեան և ծաղրի առարկայ էր դարձել։

Երբ հանդէսը վերջացաւ, նա զգացված մօտեցաւ, շնորհաւորեց երջանիկ զոյգին։ Յետոյ գարձեալ առանձին կառք նստեց և մենակ վերադարձաւ։ Նա ներս մտաւ Գայիանէնին հանդիպելու յօւսով։ Ահա նա, սպիտակ կրուժեփոներով զարդարած ընկուզեգոյն մետաքսեայ զգեստով։ Իւր ընկերուհու սիրտը չըկոտրելու համար նա ուրախ հագուստ է հագել։ Նա մօտեցաւ, գրկեց նորասպակ ընկերուհուն և արտասվեց։

Ամեն ինչ խառնվեց Դիմաքսեանի աչքում և դարձաւ մի զոյգ կապտագոյն աչքեր։ Նա մօտեցաւ և սկսեց խօսել Գայիանէի հետ։ Հարկաւ, այնքան անզգոյշ չէր, որ ակնարկէր տիկնոջ ներկայ վիճակը։ Ինչո՞ւ, քանի որ խօսելու նիւթ կար—Պետր Սոլոմոնիշի կատակած ուսումնարանը։ Գայիանէի դէմքը զուարծացացաւ։ Նա ասաց, թէ աշխատում է շուտավ կատարել հանգուցեալի կտակը։ Նա չքիտէր որտեղ հիմնել ուսումնարանը՝ Թիֆլիսում, թէ գաւառական քաղաքում։ Նա չասաց տատանման պատճառը։ Հոգով ցանկանում էր հեռանալ որ և է մի խուլ անկիւն և այնտեղ հաստատվել, հեռու այն հասարակութիւնից, որ բամբասում էր նրան, հեռու և այն մարդուց, որին կարող է երբեմն հանդիպել։ Բայց զաւակները կաշկանդում էին նրան։

Նրանք բաւական երկար խօսեցին։ Գայիանէի

միտքը շատ էր զբաղված ուսումնարանի գործով։ Գուռակով նա պատկերացնում էր իւր ապագայ գործունեութիւնը։ Որքան երախտապարտ էր նա հանգուցեալ ծերունուն և քանի քանի չըաւորներ պէտք է երախտապարտ լինէին նրան։ Նա ասաց, թէ գուշակում է, ինչպէս երջանիկ պէտք է լինի մի մարդ, որ մի որ և է օգուտ է բերում ուրիշներին։ Դիմաքսեանը շտապեց աւելացնել, թէ բուն երջանկութիւնը հէնց այդ բանի մէջ է, միայն մարդ պէտք է նախձեռք վերցնի անձնական երջանկութիւնից, մոռանայնոյն իսկ իւր սրտին ամենամօտիկ արարածներին։ Նա կամենում էր իմանալ, արդեօք կարող է Փայիանէն առանց իւր զաւակների ապրել, եթէ նրանց խեն նրանից։

Փայիանէն, առանց մի խօսք ասելու, նայեց նրա երեսին երկմտաբար։ Նա գուշակեց իւր խօսակցի միտքը։ Ճիշդ է արդեօք, կարելի՞ է ուրիշների օգտի համար մոռանալ հարազատ զաւակներին։ Նրա սիրատը մորմոքվեց, երբ մի վայրկեան մտածեց, թէ կարող է բոլորովին երես դարձնել նրանցից։ Ո՛չ, այդ անկարելի է...

Պարերը վերջացան, հիւրերը հրաւիրվեցին ընթրիեի։ Փայիանէն հեռացաւ։ Դահլիճը դատարկվեց Դիմաքսեանի համար։

Տուն վերադառնալով, նա աշխատեց մտարերել Փայիանէի բոլոր ասածները, բոլոր ձեերը և դտնել նրանց մէջ սիրոյ մի նշոյլ։ Նրան տիրեց մի նոր վհատութիւն։ «Նա ինձ չէ սիրում, նա ինձ չէ կարող սիրել, կրկնում էր նա մտքում, նա միայն յարգում է ինձ...»

IX

Սկզբում Բարաթեանը կարծում էր, թէ Փայիանէն կըսմափիլի և կըվերադառնայ։ Բայց ժամանակը անցնում էր, և նրա յոյսը չէր արդարանում։

Մի օր նա կանչեց Ովսաննային իւր մօտ և ամենասառն կերպով բացատրեց այն ծանր պայմանները, որոնցով շրջապատված է Փայիանէն։ Նա առաջարկում էր իւր կնոջը լաւ մտածել, քանի ուշ չէ, քանի հասարակութիւնը դեռ կասկածում է նրանց բաժանվելու մասին։ Իսկ երբ ամենքին յայտնի կըլինի, այն ժամանակ ոչինչ չէ կարող օգնել, և Բարաթեանը ստիպված կըլինի իւր անունը պաշտպանել։

Անփորձ Ովսաննան վախեցաւ նրա սպառնալիքից, բայց քրոջից ընդունած հրահանգը ճշգութեամբ կատարեց։ Փայիանէն երբէք չի վերադառնալ Բարաթեանի տունը։ Նա այդ քայլը արել է երկար մտածելուց յետոյւ Բարաթեանը, տեսնելով, որ օրիորդը այդպիսի եռանդով պաշտպանում է իւր քրոջը, համոզվեց, թէ նրա միջոցով ոչինչ չի կարելի անել։ Վերջապէս, կային բաներ, որոնց մասին անկարելի էր խօսել օրիորդի հետ։ Նա մի երկար նամակ գրեց Փայիանէին, որից նա հէնց նոյն օրը պատասխան ստացաւ։

«Եթէ ձեր արածը, դրում էր Փայիանէն, ուրիշների արածների նման լինէր, կարելի է համբերէի։ Բայց դուք գիտէք, թէ ինչը ստիպեց ինձ հեռանալ ձեր տնից։ Ինձ գիշեր-ցերէկ կըտանջէր այն խեղճ մարդու ուրուականը։ Նա ինձ համար երկրորդ հայր էր, դուք պէտք է այս բանը հասկանայիք։ Բայց ինչ

արեցիք, դուք սպանեցիք նրան, և այժմ ուզում էք մի մարդասպանի, իմ հայրասպանի հետ ապրին...»:

Յետոյ նա գլում էր երեխաների մասին: Ահա այն միակ կապը, որ մինչև այժմ նրան կաշկանդում էր: Բայց այդ կապն էլ չըկարողացաւ նրան պահել:

«Այժմ իմ վերջին խօսքը այս է. ես խնդրում եմ, աղաջում եմ, տուեք ինձ իմ երեխաներին: Չեմ ասում, թէ դուք նրանց չեք սիրում և հեշտութեամբ կարող էք նրանցից բաժանվել: Բայց, հասկացէք, նրանք իմ շունչն են, իմ կեանքը, մի զրկէք ինձ նրանցից: Թողնում եմ ձեզ իմ հայրական կալուածը, իմ բոլոր ոսկեզները, բոլորը, բոլորը, ինչոր ունէի, բայց երեխաներին տուեք ինձ...»:

Դիւրին է ասել «տուեք երեխաներին»: Եթէ Բարաթեանը սիրող հայր չէ, միթէ այնքան անհեռատես մարդ է, որ չըհասկանայ, ինչ հետեանք կունենայ երեխաներին իրանց մօրը յանձնելը: Միթէ նա չըգիտէ, որ այդ կընշանակէ՝ լուռ կերպով հրապարակօրէն յանձն առնել յանցանքի ամրող ծանրութիւնը: Ոչ, այդ անկարելի է: Թող նրա խղճի առջեւ Գայիանէն արդար լինի, թող նա զդայ, որ ինքը տմարդաբար վարփեց նրա հետ, բայց հասարակութեան աշքում իւր վարկը պէտք է պաշտպանի: Երեխաները պէտք է մնան նրա մօտ, ինչպէս նրա անմեղութեան գրաւական մարդկանց աջքում:

Այսպէս վճռելով, նա անպատասխան թողեց Գայիանէի նամակը, աշխատելով մոռանալ ամեն ինչ և շարունակել իւր կեանքի սովորական ընթացքը: Որքան նա զգոյշ լինէր, որքան աշխատէր թագցնել իւր բուն պատկերը, վերջին ժամանակ հասարակութիւնը

ակսել էր նրա վրայ այլ կերպ նայել: Կային մարդիկ, որ նրա անունը արտասանում էին ատելութեամբ, մինչև անդամ զգուանքով: Իւր ընկերների և բարեկամների շրջանում նա զգում էր մի տեսակ ճնշում և ամօթ: Եւ այդ աղդում էր նրա հասարակական գործունէութեան վրայ: Նկատելի էր, որ նա այլ ևս առաջուայ ինքնավտահութեամբ չէ կարողանում խօսել դումայի և դպրոցական հոգաբարձութեան նիստերում:

Երբեմն նա հանդիպում էր Դիմաքսեանին հասարակութեան մէջ: Այն մարդը, որին նա առաջ գոնէ արտաքուստ կարողանում էր արհամարհանք ցոյց տալ, այժմ նրա բարկութիւնն էր շաբժում, նրան յուզում ու վրդովեցնում էր: Պակաս չէր վրդովվում ինքը Դիմաքսեանը, նրան տեսնելիս: Բայց նա ամեն կերպ աշխատում էր ոչ մի նշանով շարտայայտել իւր վրդովմունքը: Մի անդամ նրանք մի հասարակական հիմնարկութեան ընդհանուր ժողովի նիստում ունեցան մտքերի մի թեթև ընդհարում: Երկուսն էլ նկատեցին, որ ժողովականները մի տարօրինակ ուշադրութեամբ են հետեւում նրանց ընդհարմանը: Բայց Բարաթեանը շուտով վերջ տուեց իւր վէճին, ձգելով Դիմաքսեանի կողմ մի շինովի արհամարհական հայեացք: Այնուամենայնիւ նա դարձեալ զգում էր իւր հակառակորդի բարոյական ոյժերի գերազանցութիւնը: Մասնաւոր շրջաններում երբ Դիմաքսեանի մասին խօսք էր բացիրւմ, աշխատում էր խոյս տալ խօսակցութիւնից, նա չէր ասում, թէ Դիմաքսեանը «խելագար է», «ցնորված» է կամ նոյն իսկ «անօրմալ» ածականը այլ ևս չէր տալիս նրան: Նա միայն լուռւմ էր,

թողնելով, որ Վէքիլեանը ապացուցանէ տարածված լուրի ճշդութիւնը։ Նրա միտքը այժմ մեծ մասամբ կլանված էր իւր նիւթական վիճակով։ Բարոյականի մասին նա շատ էլ չէր մտատանջվում, նա համոզված էր, որ եթէ մարդիկ այսօր փոքր ինչ ծուռ աչքով են նայում իւր վրայ, վաղը կը մոռանան ամեն ինչ, նուրից կը բարեկամանան, մինչև անգամ կը խոնարհվեն նրա առջև։ Հարկաւոր է միայն նիւթական դիրքից ըրպրկվել, հարկաւոր է արտաքին շուքը միշտ բարձր պահել և օր օրի վրայ աւելացնել այդ շուքը։

Այն ինչ՝ նիւթականի կտղմից էլ նրա գործերը աննախանձելի էին։ Այն առետրական ընկերութիւնը, որի բաժնատէրերից մէկն էր, մեծ վսամներ էր ու նեցել։ Կորուսաը նրա դրավանի համար զդալի էր։ Երկու տարի էր արդէն նա դրաւ էր դրել կնոջ կալուածը, և որա եկամտի մեծ մասը գնում էր պարտքի դեղնելուն և տոկոսների։ Հօրից ստացած թոշակը նա ոչինչ բան էր համարում։

Միակ նրա յոյսը իւր ժառանգութեան վրայ էր։ Իսկ Գերասիմ Գերասիմից դեռ կտակը չէր կաղմել, և նրա վերջին կամքը շատ անհանգստացնում էր որ դուն։ «Ով գիտէ, այդ խենթ ծերունին ինչ կարող է վճռել», ասում էր նա մտքում։

Մի առաւօտ նա մտաւ անդամարյծի սենեակը և պատմեց Գայիանէից ստացած նամակի բովանդաւ կութիւնը, հարկաւ, թագցնելով Պեօտր Սոլոմոնիշին վերաբերվող կէտը։ Գերասիմ Գերասիմիչը խորհրդաւոր ժպտաց, լսելով իւր հարսի դրական մերժումը ամուսնական յարկի տակ վերադառնալու մասին։

— Դամ, — ասաց նա, — Ճամանակները փոխվել են։ Իմ կնիկը մինչև մահ դիմացաւ ինձ, իսկ քո կնիկը քեզ չըդիմացաւ, գնաց։ Բաղումէ եւ տցա, կանայք մարդ չեն ինչ է, նրանք ապրել չեն ուզում...»

Նա հետաքրքրվեց երեխաների հարցով։ Բարախեանը յայտնեց նրան իւր վերջնական միտքը. ինչպէս վճռված է, երեխաները նրա մօտ պէտք է մնան։ Հակառակ սպավածին, ծերունին յանկարծ վրդովկեց այդ վճռի դէմ։ Որդին զարմացած նայեց նրա երեսին. չէ որ մի քանի օր առաջ Գերասիմ Գերասիմիչը ինքն էր ասում, թէ երեխաները հօրն են պատկանում։

— Մի ոտս գերեզմանի մէջ է, — բացատրեց ծերունին անսովոր յուղմունքով, — ուզում եմ կեանքիս վերջին օրերում մի քիչ էլ խղճմտանքիս ձայնին լսել։ Իսակ, կնիկդ խեղճ է, դասս, պրիզն աիւս, շատ խեղճ է։ Ես մինչև հիմայ չէի մտածել այս մասին, հիմայ տեսնում եմ, որ մենք բարբարոսներ ենք, դասս, դեսպոտի մը ի, բատիւշ կա, վարվարի։

Նա սկսեց պարզել իւր յանկարծակի փոփոխութեան պատճառը։ Յայտնվեց, որ անցեալ գիշեր նա երազում տեսել է իւր կնոջը, իսակի հանգուցեալ մօրը։

— Լզար, տօջնօ սկելետ, նա կանգնած էր հեռվում, ինձ նշան արեց, մօտեցայ։ Նա մտիկ տուեց երեսիս, տակիմ ստրաշնիմ վզգլեադօմ, Տէր Աստուած, Տէր Աստուած, ես սարսափեցի։ Նա ասաց «Գերասիմ Գերասիմիմ, դու խղճմտանք չունես, Աստուած քեզ ներքեռմ պատժեց, վերեսումն էլ կը պատժի, խելքի եկա։ «Ի՞նչ է», հարցրի ես։ Նա ձեռով ցոյց տուեց մի կողմ և պատասխանեց. «Տեսս, ես մտիկ արեցի, և ինչ տեսայ, ժանտկօ, ժանտկօ... իսակ,

դու մի երկար երեսսրբիչ ձեռումդ ոլորած Գայիանէին խեղդում էիրո Երեխաներդ իրանց խեղճ մօր փեշը բռնած գոռում էին, այնպէս գոռում, որ ես դուզում էի։ Դու ուզում էիր նրանց բաժանել իրանց մօրից և կնոջ՝ սպանել։ «Ազատիր, ազատիր», ասում էր մայրդ, իւր խեղճ հարսին ցոյց տալով։ Այս ձայնից սարսափած զարթնեցի։ Ի՞նչ է դա, Տէր Աստուած, ի՞նչ և, ասում էի ինքս ինձ։ Ամբողջ զիշեր «Հայր մեր» ասելով եմ անցկացրել, քունը փախել էր աչքերիցու Եթէ զու եկած չըլինէիր, պէտք է ես ինքս քեզ կանչէի, որ իմ միաքը յայտնեմ։ Լոիր, իսակ, լոիր, կնիկդ չէ ուզում քեզ հետ հաշտվել, շտօժ, լու է անում, շատ լաւ է անում։ Դու ինքդ էլ ուրախ ես, օօօ, պօդլազամ վիժու, ուրախ ես, և շնօրի, այժմ չէ որ ազատ ես, յանդիմանող չըկայ... Բայց, ասում եմ քեզ, ինսայիր նրան, տուր երեխաներին նրան, նա քեզանից լաւ կըկրթի նրանց։ Նա խելօք է, բարոյական է։ Դա, բրատ, օնա վըիսօկօնրավատ վեննայեա ժենշշինա...»

Այս անսպասելի փոփոխութիւնը սառն ջրի աղդեցութիւն ունեցաւ Բարաթեանի վրայ։ Նա սկսեց մեղադրել իւր կնոջը և պաշտպանել իրան։ Նա առաջ բերեց այն պատճառները, որոնց հիման վրայ չէր ուզում երեխաներին տալ իրանց մօրը։ Բայց չօգնեց։ Ծերունին զարմանալի յամառութեամբ պաշտպանում էր իւր հարսին, որդուն անուսնելով «անբարոյական, շռայլ, կնոջ փողերով մարդ դարձած»։ Իսկ երբ որդին շարունակեց հակառակել, ծերունին կատաղեց, փրփրաց և քիչ էր մնում խեղդվին նա քղաւեց խռպոտ ձայնով և կապտեց լեզուի պէս։ Որ-

դին վախեցաւ. Նա կարծում էր, որ հայրը մեռնում է առանց հաղորդվելու, առանց իւր վերջին կամքը արտայայտելու։ Բայց մի փոքր անցած՝ ծերունին նորից ուշքի եկաւ և արտասանեց.

—Տեսնում ես, մեռնում եմ...

Որդին նստեց նրա մօտ, աշխատելով հանգստացնել նրան։ Անդամալոյնը լայն բաց արեց կիսախոսվաշքերը և սուր հայեացքով նայեց նրա երեսին։

—Օօ, քո աչքերի մէջ կարդում եմ փուչ երիտասարդութեանս բոլոր մեղքերը... Ո՛չ, ոչ, կամ պէտք է կատարես իմ կամքը, կամ թէ չէ ես քեզ զրկում եմ ժառանգութիւնից... Ես չեմ ուզում այն կեանքումն էլ տանջիշել, երազս ինձ սարսափեցնում է...»

Բարաթեանը ժամանակ խնդրեց հօրից նրա պահանջի մասին մտածելու և հեռացաւ իւր սենեակը։ Հարցը, արդարե, դժուար լուծելի էր։ Ի՞նչպէս զնուել նրան։ Միթէ արհամարհել ծերունու սպառնալիքը, խարմէլ նրան, խօսք տալ երեխաներին իրանց մօրը յանձնելու և յետոյ չըկատարել։ Այստեղ նրա խիզը սկսեց լողոքել. ի՞նչ ծայրայեղ ստորութիւն—խարել իւր հարազատ հօրը գերեզմանի ծայրին հասած։ Առելի լու չէ ուզզակի մերժել նրա պահանջը։ Բայց ի՞նչ, միթէ ժառանգութիւնից զրկվել ի՞նչու համար, ի՞նչ պատճառով։ Ահ, թուլութիւն, ահ, յիմարութիւն։ «Ի՞նչ եմ ուզում ես ապացուցանել հասարակութեանը, երեխաներին իմ մօտ պահելով։ Որ ես հաւատարիմ ամուսին էի։ Ո՞վ կըհաւատայ ինձ, ում կարող եմ ես խարել։ Նախապաշարմնենք, անմիտ, ծաղկելի և ծիծաղելի նախապաշարմնենք, որի անունով միմիայն ապուշը կըհամաձայնիլ զրկվել մի ամբողջ ժառան-

դութիւնից, այն էլ իմ այժմեան նիւթական վատ հանգամանքներում»:

Ամբողջ գիշերը նա այդ մասին էր մտածում՝ իւր սենեակում առանձնացած։ Առաւօտեան որոշեալ ժամին նա ներկայացաւ ծերունուն և յայտնեց նրան իւր վճիռը։ Նա ընդունում է հօր պայմանները, նա ինքն էլ համոզված է, որ Գայիանէն երեխաններին աւելի լսու կըկրթի, ան թէ ինքը։ Գերասիմ Գերասիմիչը հանգստացաւ, կարծես, նա իւր ուսերից մի ծանր քեռը ձգեց։ Հետեւեալ օրը նա իւր կտակը կազմեց իսակի անունով։ Նոյն օրը երեկոյեան Բարաթեանը նստած էր իւր առանձնասենեակում և հաշում էր իւր հօր կարողութեան չափը։ Ներս մտաւ ծառան և յանձնեց մի փոքրիկ ծրար։ Նա բաց արեց ծրարը անհամբերութեամբ։ Նա գիտէր ումից է նամակը, կարդաց և յոնքերը կիտեց։

—Լաւ, —դարձաւ նա ծառային, —ասա այս նամակը բերողին՝ «լաւ»։

Եւ ծրարը, նամակի հետ պահելով ճրադի վրայ, այրեց, մոխիր դարձրեց...

X

Մի ժամ անցած, երբ արդէն բոլորովին մութն էր, Բարաթեանը աջ ու ձախ նայելով, մտաւ Բախտամեանների բնակարանը։ Ոչ ոք նրան չըդիմաւորեց, ոչ ծառայ, ոչ աղախին և ոչ տանտիրուհին։

Դռները բաց էին, ամբողջ տան մէջ տիրում էր անսովոր լոռութիւն։ Կարծես, երեխաններն անդամ այնա տեղ չէին։ Մի կանթեղ կիսով չափ լուսաւորում էր

նախասենեակը։ Առանց վերարկուն հանելու, Բարաթեանը մտաւ ներս, անցաւ ընդարձակ դահլիճը և գնաց մի ուրիշ սենեակ։ Այստեղ թաւշեայ բազկաթոռի վրայ նստած էր այրիացած տիկին Բախտամեանը, ձեռները կրծքին ծալած և աչքերը դռներին յառած։ Տեսնելով Բարաթեանին, նա հառաջեց, տեղից թեթև շարժվեց, առանց ոտքի կանգնելու։ Նա հագած էր սև հագուստ, որ նրա դէմքի գունատութիւնը աւելի պարզ էր կացուցանում։ Նրա նիհարած երեսը, ինչպէս կարճ միջոցով եկած մի հիւր։ Տիկինը անսովոր լրջութեամբ և սառն եղանակով ասաց, թէ Բարաթեանին հրաւիրել է մի շատ կարևոր գործի համար։ Նա ինդրեց առ այժմ ոչինչ չըհարցնել վերջին ժամանակուայ պատահած անցքերի մասին։ Նրանք առանց այն էլ պարզ են Բարաթեանի համար։ Շրթունքները ներքին խռովութիւնից անխնայ կրծոտելով, նա բացատրեց իւր ներկայ գրութիւնը և նկարագրեց իւր կեանքը մոայլ գոյներով։ Նա սեպհական տանը ապրում է ինչպէս մի օտարական։ Նրա փողերով նրան ողորմութիւն են անում, նա իւր դլսի տէրը չէ։

—Պէտք է ինձ օգնես, աւարտեց նա իւր խօսքը, —ես ուրիշ յոյս չունիմ, բացի քեղանից։

«Դուքսով խօսելիս այս անդամ Բարաթեանին դուք չեկաւ։ Նա շտապեց եղանակը փոխել և հարցրեց, թէ

արդեօք ինչպէս կարող է օգնել տիկնոջը:

—Պէտք է այն ծերունու կտակը քանդել, —պատասխանեց այրին վճռողական եղանակով և համառոտ:

Բարաթեանը զարմացած նայեց նրա երեսին: Նոյն վճռողական եղանակով այրին կրկնեց իւր ասածը: Այն, պէտք է Պեօտր Սոլոմոնիչի կտակը անպատճառ քանդել, այստեղ զարմանալու ոչինչ բան չկայ, ծերունու խելքը դլխին չի եղել կտակը կազմելիս, նրան խաբել են անաստուածները:

—Այդ կրթված աւազակ Վեքիլովը և այն ուղարական Ամբակում Աֆանասիեվիչը, երկուսն էլ դող են, որիկայ են, պէտք է նրանց գէմ դատ բաց անել:

—Ասացէք ինդրեմ, ով է ձեզ այդ խորհուրդը տուել, —հարցրեց Բարաթեանը:

—Ոչ ոք, ես ինքս եմ մտածել այս մասին: Իմ դրութիւնը այնպէս է, որ ես ուրիշ միջոց չունիմ այդ խաբերաներից ազատինելու: Տասնուշորս տարի շարունակ ես տանջիկել եմ, չարչարվել մի «քաւթառի» ծեռաքին, գերիի պէս ծառայել եմ նրան հիւանդ ժամանակ, հազար տեսակ հայհոյանքներ եմ լսել: Սիրելուց եմ արել, հա, հա, հա... Միթէ այժմ էլ ուրիշները պէտք է ինձ տանջին: Ոչ, ոչ, ես չեմ կարող այս տեսակ անպատճութեան դիմանալ: Պէտք է կրտակը քանդել և ժառանգութիւնը իմ անունով հաստատել, որովհետեւ ես եմ միայն Պեօտր Սոլոմոնիչ Բախտամովի օրինաւոր ժառանգը, երեխաները իմն են—ոչ թէ Վեքիլովինը կամ Սարդափովինը:

Բարաթեանը հանդարտ և անվրդով սկսեց բացատրել, թէ մի կտակ, ո՞ւ կազմված է նօտարի ձեռքով, օրինական կարգով և որ շուտով պէտք է հաս-

տատվի կառավարութիւնից, չի կարելի քանդել:

—Ի՞նչ անեմ նօտարիուսի ձեռքով է կազմված,—դոչեց այրին զայրացած, —նօտարիուսը խօմ թագաւոր չէ, որ նրա արածը փոխել ըլլինի:

Բարաթեանը մի բոլէ ընկաւ մտատանջութեան մէջ: Տիկնոջ գրութիւնը նրա համար հասկանալի էր, բայց ինչով կարող է օգնել նրան: Նա աշխատեց նրան համոզել, որ թողնի իւր վտանգաւոր միտքը և համբերութեամբ հպատակի իւր ճակատադրին: Օրէնքի դէմ նրանք ոչինչ չեն կարող անել, բացի իրանց անունը խայտառակելուց:

—Դուք ուրեմն վախենում էք խայտառակութիւնից, —ընդհատեց այրին, աւելի ու աւելի զայրանալով, —իսկ ես չեմ վախենում: Այս, ոչ մի բանից չեմ վախենում, որովհետեւ առանց այդ էլ խայտառակված եմ... հէնց ձեր պատճառով...

Բարաթեանը անտարբեր նայում էր վրդովված այրիի երեսին, որի մկանունքները ցնցվում էին ամեն մի բառ արտասանելիս: Այդ բոլէին նա յանկարծ զգաց մի անբացատրելի ատելութիւն դէպի այդ կինը, նկատելով նրա ճակատի վրայ, բերանի անկիւններում և աչքերի տակերում բարակ խորշեր: Գեղցկուհին մի վայրկեան այնքան տղեղացած և ծերացած թւաց նրան, որ նա երեսը մի կողմ գարձեց իւր վատ տպաւորութիւնը թաղցնելու համար: Բայց այրին գուշակեց նրա միտքը: Նրա աչքերը պսպղեցին, երեան եկաւ բնական կատաղութիւնը կանացի խայթված ինքնասիրութեան հետ:

—Ահա ինչ մարդ էք եղել, ես չէի իմանում,—դոչեց նա, ձեռներով ճանկուտելով սեղանի սփորցը,—

ահա իմ վարձը... վախկնու:

Նա, ատամները կրճտելով, մի կերպ իրան զըստեց, որպէս զի աւելի խիստ ածական չըսայ այն մարդուն, որին յանձնել էր իւր պատիւը և որից սաշկայն դեռ յօյս ունէր օգնութիւն ստանալու։ Այն ինչ՝ Բարաթեանը մաղու չափ չըկորցրեց իւր սառնասըրտութիւնը։ Նա հանդարս եղանակով շարունակեց բացատրել բոլոր հանդամանքները։ Մարդը սխալական է, տիկինը մոլորվեց, նա ինքն էլ մոլորվեց։ Միթէ հէնց այս պատճառով նրանք իրանց անունը պէտք է թղթախաղի տան։ Եթէ առաջարկութիւնը անիրաւորելի չըլինէր, նա կընդունէր։ Նա պատրաստ է ամեն բանում օգնել տիկնոջը։ Բայց այս բանում—ոչ, չի կարող, հակառակ իւր կամքին և ցանկութեան։

—Երեակայեցեք, յանկարծ երկուսս միասին մի օր ներկայանում ենք դատաստանին, ինչպէս մի և նոյն դործի համար համերաշխ ընկերներ։ Ո՞վ եմ ես ձեզ համար, ո՞վ էք դուք ինձ համար։—Օտարներւ եթէ մեր մէջ կար մի ազգակցական կապ, այն էլ, յայտնի է ձեզ, քանդվեց—ձեր ամուսնու քրոջ աղջիկը այժմ իմ կինը չէ։ Ուրեմն ինչ էք պահանջում, ասացէք։

—Դուք էք ինձ անբաղդացնողը, դուք էլ պէտք է աղատէք ինձ այս դրութիւնից։

Բարաթեանը, ուսերը թօթվելով, ժպտաց և կծու հեղնութեամբ պատասխանեց։

—Երբ երկու մարդ իրանց հաճոյքի համար գուղանում են ուրիշների պատիւը և իրանք են զրկվում պատուից—ոչ մէկը իրաւունք չունէ միւսին մեզագրելու։ Մեր մեզքերը հաւասար են, երկուսս էլ յան-

ցաւոր ենք, եթէ դուք անբաղդ էք, ես էլ շատ բաղաւուոր չեմ։ Չեռք վերցնենք միմեանցից, թողնենք մեր սխալները և մեր անունը աղատենք մարդկանց քամբասանքից։

—Աղատենք մեր անունը, հա հա հա, աղատենք հա հա հա...»

Եւ այրին մի բոպէաչափ խոտերիքական ծիծաղից բաղկաթուի մէջ երերվելով ձեռներով ճմլում էր բատիստեայ թաշկինակը։ Վերջապէս, նա մի քիչ խաղաղվեց, նորից կատաղեց և խեղդված ձայնով գոչեց։

—Խարեբայ...»

—Տիկին...»

Արտասանելով վիրաւորական բառը, այրին դարձեալ փոխվեց։ Կարծես, նոյն վայրկեանին զղչաց, որ այնքան հեռու զնաց։ Նրա շունչը սկսեց սպառվել, կուրծքը ուժգին բարձրացաւ, կոկորդի բարակ, կապոյտ, թափանցիկ երակները փքվեցին։ Նա սկսեց հերկեկալ, արտասանելով. «Ես անբաղդ եմ... ես ատելի եմ... խայտառակված...»։

Մի բոպէ Բարաթեանը խղճաց այրին։ Բայց կրկին նայեց նրա երեսին, ձեռների երկար մատներին և նորից ատելութիւնը շարժվեց նրա սրտում։ Այդ կինը, որ մի ժամանակ այնպէս կուրացրել էր նրան, այժմ թւում էր հրող, ատելի և զգուելի մի էակ։

Այրին արտասուքը սրբեց։ Նա այլ ևս առաջուանը չէր։ Խեղճացած, ընկճված, նա սկսեց աղերսել Բարաթեանին, որ կամ ինքը օգնի կամ որ և է ելք ցոյց տայ այժմեան դրութիւնից դուրս գալու։ Նա կըվարձարի նրան առատ ձեռքով, կըտայ նրան ժառանգութեան մի մասը, քառորդը, մինչև անգամ ամ-

բողջ կէսը, միայն թէ ինքը իւր գլխի տէրը լինի։ Մի քանի վայրկեան տիկնոջ խոստացած կաշառը դրաւեց Բարաթեանին։ Եթէ նրա ձեռքը անցնի Բախտամեանի ժառանդութեան տասներորդ մասն անգամ, նա կրկնակի կըհարստանայ։ Նա մտատանջութեան մէջ ընկաւ, տատանվեց, եղաւ մի վայրկեան, երբ կամեցաւ խօսք տալ այրիին օգնելու։ Բայց նուրեց յիշեց այն ծանր պատասխանատութիւնը, որ պէտք է յանձն առնէր, նորից պատկերացաւ նրա առջև դատաստանի սոսկալի պերսպեկտիվը, հասարակական կարծիքի ճնշող ծանրութիւնը, և նա ցնցվեց։ Ոչոչ, նա այդ չի կարող անել, վտանգաւոր է, փոխանակ շահուելու, կարող է կորցնել…

Նա կամացուկ վերկացաւ տեղից և ձեռը հանդարտ մեկնեց տանտիրուհուն, որը, իւր կապտած շրթունքները ամուր սեղմելով, նայեց նրա երեսին և նոյնպէս սոտքի կանգնեց։ Այլ ևս այրին կասկած չունէր, որ Բարաթեանը բոլորովին սառել է դէպի նաև անկարելի է նրա մէջ դրդուլ նախկին զդացումը։ Վայրկենաբար նրա մէջ բորբոքվեց մի ցանկութիւն— վաթոթվել այդ մարդու պարանոցին և խեղդել նրան իւր տարփալից գրկի մէջ։ Բայց պազսիրտ սիրականի անտարբեր հայեացքը բռեւեց նրան տեղին ու տեղը նա կատաղութիւնից ճանկուտեց իւր երեսը, տեսնելով այդ հայեացքի մէջ մի պարզ զդուանք, որ ծայրայեղ յանդգնութեան և անխղճութեան էր հասնում։ Նա շրդիտէր ինչ անէր, ինչպէս պատմէլ այդ մարդուն, որպէս զի սա յաւիտեան յիշէ այդ պատմէլ և յաւիտեան տանջիլի։

Բարաթեանը նոյն սառնութիւնը երեսին դլում

տուեց, վերցրեց վերարկուն և դիմեց դէպի դռնեւը։ Ան, ուրեմն ոչ մի խօսք, ոչ մի բացատրութիւն, ոչ մի ներողութիւն։ Նա գնում է, և երբէք չպիտի՞ վերադառնայ։ Այրին մի քանի քայլ արեց նրա ետեւից և յանկարծ կանդ առաւ, մտածեց, նորից առաջ գնաց։ Նա վազեց միւս սենեակ և, Բարաթեանի ճանապարհը կտրելով, գոչեց։

—Կաց…

Այն վայրկեանին, երբ Բարաթեանը նայեց այրիի այլայլված դէմքին, կիսախաւար սենեակի լուսութեան մէջ լսվեց մի ամուր ապտակի ձայն։

—Այժմ կորի՞ւ…

Բարաթեանը ոչ մի խօսք չարտասանեց, ոչ մի ձայն չըհանեց։ Միայն բնազդմամբ նայեց շուրջը և դգակը հագնելով շտապեց դէպի դուրս Ընդարձակ մարմարեայ սանդուխքի վրայ նրա արիւնը խիեց գըլլիին, երբ իւր աջ այտի վրայ զգաց մի տաքութիւն։ Միթէ նա այնքան ընկաւ, ստորացաւ… Վերադառնալ արդեօք, պատմի փոխարէնը հատուցանել։ Բայց ում։ Մի յուսախափված, մի ամբազդ կնծջ, որ կրքերից կուրացած ինքն էլ շիմացաւ ինչ արեց։ Ոչ, չըպիտի իզուր տեղը աղմուկ հանել։ Կանցնի, կըմոռացվի, ինչպէս ամեն բան անցնում է և մոռացվում աշխարհի երեսին…

Եւ իւր յուզմունքը խեղդելու համար նա վառեց մի ծխախոտ, սկսեց արագ-արագ ծխել։ Նա նստեց առաջին պատահած կառը և կառապանին հրամայեց քշել հեռու, հեռու, թէկուղ քաղաքից դուրս։ Պէտք է մի փոքր զբօսնել, հանգստանալ, ցրվել ծանր մտքերը։ Մի ժամ անցած նա մտաւ կուր, նա ձգեց վե-

րագը և անցած նա մտաւ կուր, նա ձգեց վե-

բարկուն սպասաւորի վրայ, շտապով մօտեցաւ հայեւ-
լուն իբրև թէ փողկապը ուզգելու համար։ Ապտակի-
ոչ մի հետք, ոչ մի նշան չի մնացել նրա կլորիկ, մոտ-
լի երեսի վրայ։ Նա կարող է ապահով երեալ մարդ-
կանց մէջ։ Նա հանդարտ քայլերով բարձրացաւ սան-
դուխքով և սովորական քաղցր ժպիտը երեսին բարեեց-
իւր ծանօթներին ու բարեկամներին...

XI

Գարնան առաջին օրերը համելուն պէս Դիմաք-
սեանի գլխում միտք յրացաւ թողնել ամեն ինչ
և հեռանալ մի որ և է տեղ։ Նա տեսնում էր, որ
քանի հասարակութիւնը սկսել է կասկածով նայել նրա
վրայ—ոչ մի գործի չի կարող ձեռնարկել և քանի Գա-
յիանէի պատկերը հալածում է նրան—ոչ մի բանի
մասին հանդիսաւ և լուրջ մտածել չի կարող։

Մինչդեռ անդործութիւնը գրգռում էր նրա
նեարդերը և աւելի հիւանդացնում։ Մանաւանդ վըր-
դովկում էր նա, մտածելով, թէ որքան անզօր է իւր
սրտի մի զգացումը զսպելու խելքի ուժով։ Ինչու, մի-
թէ նա այնքան տկար է, որ չի կարող բռնանալ իւր
հոգու վրայ, կեղծել, ստել և բռնան սիրով տագորված-
մարդու փոխարէն յարդող բարեկամ ձեանալ, կամ
ոչ այս լինել ոչ այն։

Սկզբում նա մտածեց ուղեորդել եւրոպա, և այն
մտքով, որ այլ ևս այնտեղից չըվերադառնայ։ Նա ա-
զատ է, անկախ, մենակ և նիւթապէս ապահով։ Կը-
գնայ մի որ և է քաղաքակիրթ երկիր, կըսկսի պա-
րապել գիտութիւններով և մի ազգի համար աշխա-

տելու փոխարէն—կաշխատի ամբողջ մարդկութեան
օգտին։ Ի՞նչ նախապաշարմունք՝ ծառայել անպատ-
ճառ այն հասարակութեան, ովին բաղդի բերմամբ
պատկանում ես։ Զէ որ այդ հասարակութիւնն էլ ամ-
բողջի մի մասնիկն է, չէ որ ամեն մի անհատ նախ
իւր ընտանիքի անդամն է, ապա իւր ժողովրդի։ ա-
պա մարդկութեան։ Եթէ ազգի համար ներելի է մո-
ռանալ ծնողներ, ընտանիք, ինչու ներելի չէ մոռա-
նալ և՛ ազգին, այդ փոքրիկ մասնաւորին, խոշոր ընդ-
հանուրի համար։ Միթէ մարդը մարդ չի մնում ամեն
մի շրջանում, միթէ մի հոգից միւսը տեղափոխելով
զրկվում է իւր արժանաւորութիւններից։

«Կըթողնեմ այս տգէտ, խաւար շրջանը և ինձ
համար կընտրեմ մի առողջարար և կենսատու շրջան,
ուր կարող եմ ազատ չնչել, գործել և զնահատվել...»

Այսպէս էր մտածում նա սկզբում։ Բայց շուտով
նրա գլխում ծագեցին ուրիշ մտքեր, որ եկան հեր-
քելու և ոչնչացնելու այդ բոլորը։ Նա տեսաւ, որ իւր
գատողութիւնները հիմնում է մի տեսակ սովորու-
թեան վրայ։ Նա զգաց, որ կամենալով փախչել մայ-
րենի շրջանից, աշխատում է ոչ միայն իւր փախուս-
տը արդարացնել շաբանական գաղափարներով, այլ և
նրանից ստեղծել մի ինչոր բարոյական սկզբունք։

Զէ որ առաջ հէնց ինքը պիտում էր, թէ առանց
մտանաւորի չըկայ ընդհանուր երջանկութիւն։ Միթէ
տմարդութիւն չի լինիլ թողնել մի անբաղդ ժողո-
տմարդութիւն և ինիկիլ թողնել մի անբաղդ ժողո-
տմարդութիւն նրանից, և ինչու։ Այն պատ-
վուրդ, երես գարձնել նրանից, և ինչու։ Այն պատ-
ճառով, որ այդ ժողովուրդի գէմքը տգեղ է, այլան-
գանկ, գարերի ընթացքում կրած զրկանքներից աղա-
ւաղվաճ, եւ որ խելացի օտարը գրկարաց կընդունի

իւր հարազատ շրջանից փախած մարդուն, ով կարդացնի այն որդուն, որ իւր քաղցած, հիւանդ հօռը երեսի վրայ ձգելով, կըդնայ սպասաւորելու մի հարուստ ազգականի, որ իսկի կարօտ էլ չէ նրա օդ նութեանը:

«Վերջապէս, ես ինչ մեծ տառապանք քաշեցի, որ այսպէս վհատվում եմ: Ծիծաղելի չի լինիլ արդեօք ինքս ինձ նահատակ համարեմ այն ժամանակ, երբ իմ դլուխը գեռ շատ և շատ հեռու է փշեայ պսակին արժանանալուց...»

Կապեցին նրա ճանապարհը այստեղ, մի ուրիշ տեղ ճանապարհ կրդանիք: Միայն նեխված ճահիճն է մնում միենոյն փոսի մէջ անշարժ, ընթացող ջուրը միշտ իւր համար ելք է գտնում:

Մինչ այս խորհրդածութիւնները պաշարել էին նրան, դարձեալ Գայիանէի պատկերը չէր հեռանում նրա աչքի առջեից:

Մի օր ճաշից յետոյ նա դուրս եկաւ զբօսնելու: Նա դիմեց գէպի քաղաքից դուրս դանվող մի բարձրաւանդակ, ուր մի նեղ ուղի տանում էր շրջակայ լեռներից մէկը: Նա դանդաղ քայլերսվ բարձրանում էր արդ ուղիով գէպի վեր, երբ ետեից լսեց իւր անունը: Նա յետ նայեց և տեսաւ, որ բժիշկ Սալամբէկեանը իւր ամուսնու հետ թե թեի տուած բարձրանում է նոյն ճանապարհով: Սպասեց և միացաւ նրանց: Համեմով մի փոքրիկ տափարակի, տիկին Սալամբէկեանը բաց թողեց իւր ամուսնու թել և յոդնած նստեց մի մամուպատ քարի վրայ:

Նրանց աչքի առջե տարածված էր մի գեղեցիկ տեսարան: Ամբողջ քաղաքը երեսում էր ներքեսում ինչ-

պէս մի սիրուն պանօրամա, որին մի առանձին կենացանութիւն էր տալիս գեղնագոյն Քուրի օղակ-օղակ ընթացքը:

—Ես այստեղից մեր տունը տեսնում եմ,—ընդհատեց լոռութիւնը տիկին Սալամբէկեանը,—ահա մեր պատշգամբը, այն կանանչ կտուրի տակ: Կարող եմ երդվել, որ այնտեղ կանգնած է Գայիանէն: Ահա նա շարժվեց: Այն միւսն էլ, երեի, Ովաննան է: Ինչքան խնդրեցի, Գայիանէն չուղեց մեզ հետ գալ: Տխուր է, միշտ տիսուր, խեղճ կին...

Վերջին բառերը տիկինը արտասանեց հաղիւ լսելի ձայնով և հառաջեց: Դիմաքսեանը հայեացը յառել էր գէպի հեռու: Նրա մտքերը վայրկենաբար թռան ահա այնտեղ, ուր հաղիւ նշարվում էր Գայիանէի անորոշ կերպարանքը: Նա չըլսեց, երբ բժիշկը առաջարկեց մի փոքր ևս գէպի վեր բարձրանալ: Երբ սժափիկեց, բազդաւոր զոյգն արդէն բաւական հեռացել էր: Նա շտապեց համնել նրանց և, իւր յուղմունքը թագցնելու համար, սկսեց խօսել առօրեայ բաների մասին:

Մի ժամի չափ նրանք բարձրաւանդակի վրայ այս ու այն կողմ սպասելուց և շրջակայքը դիտելուց յետոյ ցած եկան մի ուրիշ ուղիով: Տիկին Սալամբէկեանը հրաւերեց Դիմաքսեանին թէյի, բժիշկը թախանձեց, և նա հրաւերը ընդունեց:

Երբ նրանք ներս մտան, Գայիանէն գեռ կանգնած էր պատշգամբի վրայ ձեռին մի հեռագիտակ բռնած: Նա ասաց, թէ հեռուից դիտում էր Սալամբէկեաններին և նկատեց, որ մի երրորդ անձ մօտեցաւ նրանց:

Ովսաննան բժշկին տուեց մի այցետում, ասելով,
թէ կես ժամ առաջ մի անձանօթ մարդ բերեց:

—Իմ հիւանդներից մէկն է ուղարկել, —ասաց
բժիշկը և շատապեց դնալ, խնդրելով Դիմաքսեանին,
որ նա մնայ մինչև իւր վերադարձը:

Օրը մթնում էր, արել արդէն մայր էր մտել և
նրա վերջին ճառագայթները անդրադառնում էին
երկնակամարի վրայ: Ընդարձակ և մաքուր բակում
տարածվել էր մեզմ իրիկնային զովը: Ովսաննան, տի-
կին Սալամբէկեանը, Գայիանէն և Դիմաքսեանը նըս-
տած էին պատշգամբի վրայ՝ մի փոքրիկ շրջան կազ-
մած: Գայիանէն պատասխանում էր Դիմաքսեանի հար-
ցերին իւր ուսումնարանի մասին: Նա արդէն թոյլ-
տութիւն էր ստացել և առաջիկայ աշնանը պէտք է
դործը սկսէր: Վճռել էր ուսումնարանը բաց անել քա-
ղաքի աղքատ թաղերից մէկում, մի եկեղեցու դաւ-
թում, չքաւոր դասի աղջկանց համար: Դպրոցի շինու-
թիւնը պատրաստ էր, հարկաւոր էր միայն մի փոքր
նրան վերանորոգել: Աւսումը պէտք է աւանդվէր ձրի:
Ինքը Գայիանէն պէտք է յանձն առնէր ուսուցչուհի-
ներից մէկի պաշտօնը: Նա ասում էր, թէ դիմնազիօ-
նում ուսածից շատ բան մոռացել է և պէտք է ա-
մառուայ ընթացքում պարապվի մոռացածները յի-
շելու համար:

Դիմաքսեանը թէև խօսակցում էր նոյն բանի մա-
սին, բայց միաքը շատ հեռու էր խօսակցութեան նիւ-
թից, և կարելի էր կարծել, որ նա ձանձրանում է:

Տիկին Սալամբէկեանը գնաց իւր դիշերօթիկ սա-
ներին նայելու: Ովսաննան հետեւց նրան, որ աղախ-
նին հրամայէ սամօվարը դնելու:

Գայիանէն և Դիմաքսեանը մնացին գէմու գէմ
մենակ: Բակի մի անկիւնում վայլեց մի գեղնագոյն
բան և ծառայի վառած լապտերի շողբերը տարած-
վեցին կարմիր աղիւսի փոշիով հարթած գետնի վրայ:

Մի ինչոր ծանր, բայց ախուժելի զգացում տի-
րեց Դիմաքսեանի սրտին: Ուրախութիւն էր այդ, թէ
թախիծ—ըզիտէր: Մերթ նայում էր Գայիանէի կի-
սով չափ լուսաւորված գէմքին, մերթ գէպի բակը:
Երբեմն աջ ձեռով սեղմում էր իւր ճակատը, կարծես,
իւր դլսից մի միաք հեռացնելու համար:

Գայիանէն խօսում էր միայն լուս ըլմալու հա-
մար—եղանակի զովութեան, անցած ձմեռուայ ցըր-
տերի, առաջիկայ շոքերի մասին:

Դիմաքսեանը նրա ոչ մի խօսքը անուշադիր չէր
թողնում, բայց և՛ ոչ մի խօսքով չէր հետաքրքրվում:
Նա զգում էր, որ փոքր առ փոքր կորցնում է իւր
սառնութիւնը: Նա ցանկանում էր, շուտով տիկին Սա-
լամբէկեանը կամ Ովսաննան գուրս գային պատշգամբ,
բայց, միևնոյն ժամանակ, ուրախ էր, որ ոչ մէկը գեռ-
չի երեսում:

Մի վայրկեան նա ուզեց տեղից վերկենալ, հրա-
յեշտ տալ, հեռանալ և, կարծես, փախչել մի նախազ-
գացվող վասնգից: Բայց մի ուրիշ զգացում նրան բե-
մուել էր աթոռի վրայ և չէր թողնում տեղից շարժ-
վել: Նրա սիրտը սկսեց արագ բաբախել և հաղիւ կա-
րողանում էր զապել իրան որպէս զի չարտայայտի այն,
ինչոր անյաղթելի ուժով ձգտում էր ինքն իրան ար-
տայայտվելու:

Նա նկատեց, որ Գայիանէն ուզում է վերկենալ,
կամ գուցէ այսպէս թւաց նրան: Նա ինքը ոտքի կանգ-

նեց, չըդիտէր ինչու համար, և բնազդումով նայեց շորս կողմ: Ոչ ոք չըկար, ոչ մի ձայն չէր լսվում կամ գոնէ նա ինքը չէր լսում, բացի իւր սրտի բարախումից, որ քանի գնում այնքան սաստկանում էր:

—Եղանակը ցրտանում է, դուք չէք մրսիլ, —առաց նա և իսկոյն փոշմանեց, որ ասաց, որովհետեւ ինքն իւր ձայնի մէջ զգաց կեղծ, անախորժ հնչիւն:

Գայիանէն պատասխանեց, թէ այն, եղանակը ցրտեց և պէտք է ներս գնալ, եւ նա կամենում էր սորի կանգնել, երբ լսեց:

—Օօ, ինչքան դժուար է, ինչքան դժուար...

Այս խօսքերը Դիմաքսեանը արտասանեց ցածր, հաղիւ լսելի ձայնով, կարծես, ակամայ: Բայց և այնպէս նրանք շատ պարզ, շատ որոշ հասան Գայիանէի ականջին:

Դիմաքսեանը աչքերը ծածկեց ամօթից և նոյն վայրկեանին իսկոյն գլուխը բարձրացրեց: Նա կրկին նստել էր, այժմ նորից ոտքի կանգնեց, և նրանց աչքերը կիսախաւարի մէջ հանդիպեցին միմեանց:

—Անուանեցէր ինձ—ինչպէս կամենում էր, բայց ես այլ ես չեմ կարող պահել իմ խօսքը... Բարեկամ մնալ... Ոչ, եթէ ես կարողանայի արտայայտել իմ զգացածը, կըտեսնէիք, որ անհնարին է, դժուար է գիմանալ... Միթէ ամեն բան ձեզ յայտնի չէ, միթէ չէք տեսնում, ինչպէս տանջվում եմ ես...

Կասկած չըկար, որ Գայիանէն եթէ մինչեւ այժմ չէր զգացել, այժմ ամեն ինչ հասկացաւ: Աւելի ոչինչ չըկարողացաւ արտասանել Դիմաքսեանը: Ներսից, կարծես, մի բան խեղդում էր նրա կոկորդը: Իսկ Գայիանէն, որ ուղում էր գնալ, դեռ անշարժ կանգնած էր

նրա առջև: Նայելով չորս կողմ, նա շփոթված արտասանեց.

—Ի՞նչ պատահեց ձեզ... Ես չէի սպասում ձեզ զանից այդշափ թուլութիւն: Յարդեցէք ձեզ... ուշքի եկէք...

Նա սկսեց դողալ ինքն էլ չըդիտէր ինչու—երկիւղից, ամօթից, թէ մի ուրիշ աւելի զօրաւոր զգացումից: Երբ նա տեսաւ, որ Դիմաքսեանը լուռ է, կարծեց, թէ նա ուղում է բացատրել իւր սիրաը աւելի պարզ: Այժմ նա չըդիտէր ինչ անել, գնալ, թէ մնալ: Զգում էր միայն, որ իւր գնալը պէտք է յաւկտեան վիրաւորէ Դիմաքսեանին, այն մարդուն, որի ազնւութեան մասին ըոպէ անդամ չէր կասկածել, չէր կասկածում և՛ այժմ, այդ վայրկեանին:

Դիմաքսեանը մի քայլ յետ կանգնեց, իւր սրբում զգալով մի սուր ցաւ: Այն լուռ տեսարանը, որ տեղի ունէր, աւելի քան պերճախօս կերպով պարզեց նրա համար ամեն բան: Նա տեսնում էր իւր և Գայիանէի մէջ մի հսկայական պատճէշ, որի առջև ինքը տկար էր, անդօր բոլոր իւր զգացումներով հանդերձ: Այդ կինը սարսափում է և ամաշում իւր դրութիւնից: Յանդգնել արդեօք աւելի առաջ գնալու, թէ կանդ առնել և ամեն բան վերջացած համարել:

Եւ մինչ նա այս տատանման մէջ էր, տեսաւ, որ Գայիանէն հանդարտ քայլերով հեռանում է: Հեռակել նրան, ներողութիւն խնդրել, բացատրել, որ մոլոր կերպացաւ, չըպիտի անէր: Ոչ, ինչու կեղծել և ստել, ինչու խարել և մի ուրիշ, աւելի վատ, սխալ գործել: Վերջապէս, արդէն ուշ է, ահա Գայիանէն գնաց, մտաւ իր սենեակը և դռները ետելից ծածկեց...

Նա դողում էր ոտից մինչև գլուխ։ Խելքը պըզտորված, շշկված, նա կանգնած էր, գլուխը երկու ձեռներով ամուր բռնած, այնքան ամուր, որ կարծես վախենում էր, թէ նա կարող է անջատվել ուսերից և թաւալվել պատշտամբի վրայ։ Նա մէջքը յենեց վանդակապատճին։ Ներսից ոչ մի ձայն չէր լավում։ Կայծակի պէս մի բան փայլեց, յետոյ լուսամուտների մթին ապակիները դեղնեցին։ Դա տիկին Սալամբէկեանը կանթեղ է վառում սեղանատանը։ Անշուշտ նա խկոյն դուրս կըդայ հիւրին թէյի հրաւիրելու։ Երեւալ արդեօք նրա աչքին։—Ոչ, անկարելի է, պէտք է հեռանալ, առանց նրան տեսնելու, թող այդ լինի անքաղաքավարութիւն, փոյժ չէ, բայց պէտք է հեռանալ...

Վերջացաւ ամեն ինչ, ուրեմն այլ ևս յոյս չըկայ։ Ինքն իւր աչքում ընկճված, դրեթէ ոչնչացած, նա կառքի մի անկիւնում սեղմվել էր այնպէս, որ ոչ ոքին չերեայ։ Զընայելով երեկոյեան բաւական թանձը մթանը, նրան թւում էր, որ չորս կողմից ինքը լուսաւորված է պայծառ էլէքտրական լուսով և ամենքը տեսնում են նրան։ Անաջողութիւնը դրոշմված է նրա կերպարանքին, բոլոր անցորդները տեսնում են այդ, խղճում են ու ծաղրում նրան։

XII

Մի քանի րոպէ նա լուռ անցուդարձ էր անում իւր մթին սենեակում, ներս մտաւ Սիրականը և, փառկանթեզը դնելով սեղանի վրայ, մի քանի քայլ յետքաշուեց, սկսեց գիտել նրան։ Նա խկոյն հասկացաւ,

որ էլի մի բան է պատահել իւր պարոնին։ Դիմաքսեանը հրամայեց նրան դուրս գնալ, նա ուզում էր մենակ մնալ։ Ծառան անցաւ նախասենեակ և դարձեալ կանգնեց դռների ետևում, որ տեսնէ, ինչ պէտք է անի իւր պարոնը։

Դիմաքսեանը թուլացած ընկղմվեց աթոռի վրայ, երեսը ձեռներով ծածկեց, գլուխը դրեց սեղանին։ Նրա սիրտը լցվել էր, նա ուզում էր լաց լինել, այն, հեկեկալ ինչպէս մի երեխայ։ Բայց նա ճիգն արեց իւր գառն հեկեկանքը զապելու, և զապեց։ Արտասուքը չի կարող թեթևացնել նրա սիրտը։ Նա զգում էր իրան կեանքից անջատված, մի դատարկ տարածութեան մէջ, անյեն, անմիսիթար։ Նրա շուրջը տիրում է մեռցնող ցրտութիւն, և չըկայ մէկը, որ փարատէ այդ ցրտութիւնը։

Նա յիշեց Մոերեանին, նրա անկեղծ ընկերական համակրութիւնը։ Շատ անգամ է այդ մարդը միսիթարել նրան և պահպանել հոգեկան դառնութիւնների ժամանակ իւր խրախուսիչ խօսքերով։ Այժմ նա էլ չի կարող օգնել։ Հարկաւոր է աւելի ջերմ, աւելի քնքոյց սիրտ, ոչ միսիթարելու, այլ և նրա հետ դառնանալու, նրա վշտին վշտակից լինելու համար։

Ո՞րտեղ դանել մի այդպիսի սիրտ։ Այս, որքան նա այդ ժամին կըկամենար իւր մօտ տեսնել այն միակ էակին, որին ոչ ոք չի կարող փոխարինել, ոչ ընկեր, ոչ բարեկամ, որի ոէրը որքան անկաշառ է, այնքան անսպառելի է, անհուն և ջերմ։ Նա իւր որդուգէմի մի թեթև արտայայտութիւնից, կրծքից դուրս եկած մի թոյլ հառաջանքից կըհասկանար նրա բոլոր ցաւերը։ Իւր մայրական վշտակցութեամբ կըպահպա-

նէր նրա յուսահատ հոգու մէջ կենսական ջերմութիւն։ նա կասէր. «Ապրիր առանց սիրվելու, որովհետեւ այդ հնարաւոր է և ես ապրեցի ոչ միայն շրմիրաված, այլ և ամբողջ կեանքիս ընթացքում տանջվելով։ կասէր. «Մի սպասիր կնոջ կոմից սէր, որովհետեւ եթէ աշխարհի երեսին կոյ իսկական սէր—դա մայրական սէրն է և միայն մայրը կարող է անկեղծ սիրել իւր դաւակին, ուրիշ ոչ ոք, ոչ ոք...»։

«Ես յիշում եմ, նա ինչպէս փայփայում էր ինձ և ինչ նուրբ զգացողութեամբ էր արտայայտում իւր սէրը, երբ ես մի թեթեւ դառնութիւն էի ունենում։ Ահա քո դալկահար դէմքը, որի վրայ պարզ նկարված են քո սրտի բալոր ելեէները։ Տեսնում եմ քեզ, տեսնում եմ, զլուխտ ուսիդ ծռած մտիկ ես անում որդուդ, ուղում ես դուշակել իմ միտքը։ Ի՞նչ, միթէ դու այժմ էլ զգում ես յաւիտենականութեան մէջ... Ցնձրք, ցնորք...»։

Եւ Դիմաքսեանի հայեացքը կենտրոնացել էր անորոշ աարածութեան մէջ, և այդ բոպէին կենդանացել էին նրա աշքի առջև ամբողջ մանկութիւնը ու պատանեկութիւնը, և այդ հեռու, փաղուց մոռացված անցեալի մէջ նշարում էր իւր մօր պատկերը։

Նրա աշքերը պղտորվեցին և գրեթէ ոչինչ չէր տեսնում, բացի այդ պատկերից, որ նրա աշքի առջև կենդանացել էր գրգռված երեակայութեան զօրութեամբ։ նա զգաց իւր ուղեղի մէջ մի տարօրինակ ցաւ, նա բռնեց երկու ձեռներով դլուխը և մօտեցաւ անկողնակալին։ Այստեղ նրա մաքով անցաւ մի դէպք, որ փաղուց կարդացել էր եւրոպական լրագիրներում։ Շվեյցարիայի մի քաղաքում կեանքից ձանձրացած մի

մարդ վճռել էր ինքնասպանութիւն գործել։ Երեք անգամ նա փորձել էր վերջ տալ իւր կեանքին, և ամեն անգամ փորձը անյաջող էր անցել։ Երկու անգամ նա ատրճանակ էր արձակել և միայն թեթեւ վէրք էր ըստացել։ Նա ձգել էր իրան մի ճի մէջ—նաւավարները ազատել էին։ Վերջապէս, նա փակվել էր իւր սենեակում, գոները կողպել էր և թոյն ընդունել։

«Ո՞չ, ես այդպէս չեմ անիլ», ասաց նա, ձեռը մեկնեց բարձի տակ և այնտեղից հանեց մի փոքրիկ, պսպղուն և ծանր առարկայ։

Նրա դէմքի կնճիռները բացվեցին։ Ահա որտեղ է նրա փրկութիւնը, ահա ինչու դրկաբաց սպասում է նրան իւր մայրը։ Աներկիւդ ձեռի մի յաջող հարուած, և նա անցնելով Ռուբիկոնը, կըհասնի անզգայութեան աշխարհը, ուր չըկայ ոչ տանջանք, ոչ երջանկութեան փափագ, ոչ նախանձ, ոչ փառասիրութիւն, ոչինչ, ոչինչ... Ինչու երկար մտածել, միթէ ամենքի վերջը այդ չէ, սկսած Ալէքսանդր Մակեդոնացուց մինչև ամենայետին անբաղդը։ Տանջվել, հալածվել, չարչարվել և ինչու, միմիայն մի անուն թողնելու համար։ Զէ որ այդ անունը որքան բարձր հնչի, որքան հմայիչ լինի ամբոխի համար, դարձեալ վերջը պէտք է մոռացվի։

Նա մոլոր քայլերով անցուդարձ էր անում, բռունցքի մէջ աւելի ու աւելի ամուր սեղմելով փոքրիկ զէնքի կոթը։ Մի վճռական շարժում անելով, նա նստեց սեղանի մօտ, վերցրեց դրիչը։ Հարկաւոր է վերջին քաղաքացիական մի պարտք կատարել—գրել մի բանի տող, որ ոչ ոք կասկածի տակ չընկնի։ Բայց առաջին բառը չըդրած, նա յանկարծ ցնցվեց ամ-

բողջ մարմնով, դողաց. գրիչը ընկաւ նրա ձեռից և մարմնով անցաւ մի տարօրինակ սառնութիւն։ Միթէ նա վախեցաւ, միթէ այնքան թուլասիրտ է, երկշոտ նա գարձեալ վերցրեց գրիչը։ Մարմնի սառնութիւնը անցաւ ուղեղին և վայրկենաբար փարատեց այնտեղ տիրած խաւարը։ Նա աչքերը ծածկեց ձեռներով, և երեակայութիւնը գարձեալ պատկերացրեց իւր մօր հեղ կերպարանքը։ Այժմ դա մի լուսաւոր կէտ էր, որ քաշում էր նրան գէպի ինքը, աշխատելով դուրս բերել նրան սոսկալի խաւարից, հեռացնել իւր ոտների տակ բացված անդնդից։

Մայր, մայր, դու գժդոհ ես քո որդուց, որ այսպէս յուսահավում է, դու չես կանչում նրան քեզ մօտ, այլ խրախուսում ես այնտեղից, դու կանիծես նրան, եթէ իւր վրայ ձեռք բարձրացնի։ Իսկ քոյրերը, ինչու այդպէս անդութ վարվի նրանց հետ, ինչու ձգի նրանց անվերջ վշտի մէջ... ինչ անմտութիւն, ինչ երեխայութիւն։ Ինչու համար մեռնել։ Որ թշնամիները ուրախանան և աւելի ծաղրեն նրան, որ բարեկամները համողվեն, վերջապէս, թէ նա իրաւ խելագար էր...»

Նա տարճանակը ձեռով հրեց սեղանի մի անկիւնը և նորից ոտքի կանգնեց միանգամայն վոխած, վերակենդանացած։ Նրան թւաց, որ մեռած էր, այժմ կեանք ստացաւ, որ նրա առջեանկարծակի բացվել էր մի մթին գերեզման և նոյնպէս յանկարծակի ծածկվեց։

Մի ձեռք զգուշութեամբ սեղանի վրայից վերցրեց ատրճանակը։ Նա նայեց և տեսաւ Սիրականին, որ կէս երկիւղած և կէս կասկածակի գէմքով կանգ-

նած էր նրա առջեւ։

— Դու ինչ դորձ ունիս այստեղ։
Սիրականը ատրճանակը թագցրեց իւր գրալաւնում և լուռ մտիկ տուեց նրա երեսին։

— Ի՞նչ ես ուղում ինձանից, — կրկնեց Դիմաքսեանը, — ինչու մտար այստեղ։ Դու ինձ հարկաւոր չես, թողի ինձ հանդիսա, գնա...»

— Մի աղաչանք ունիմ, — խօսեց ծառան անվատահ ձայնով։

Նրա նշանեւ աչքը փակվեց, իսկ կոլորակը մնաց անշարժ։ Գա նշան էր, որ նա մտադիր էր երկար խօսելու։

— Ասա տեսնեմ, ինչ է աղաչանքդ, — ասաց Դիմաքսեանը, նստելով սեղանի մօտ։

— Աղա ջան, մայրս մեր գիւղում հեքիմ էր, անուանի հեքիմ։ Տարին տասներկու ամիս նա աղօթք էր անում, պաս էր պահում, շաբաթներով էլ ծոմ էր կաւոր էր... Բոլոր սրբերի անունով ջոկ-ջոկ աղօթք ներ ունէր։ Մեղայ Քեզ, մեղայ Քեզ, շարը պատահելիս, տեսնում էիր ընկաւ, բերանը փրփրեց, աչքերը բացվեցին, սկսեց Սաթայէլի հետ կոիւ անել։ Այդ ժամանակ սրբերը սկսում էին նրա բերանով խօսել... Մի անդամ, ժամաժամքին, մութը նոր ընկնելիս, լուսահոդին թոնրատան առաջ բռնվեց, ընկաւ երեսը գէպի աղօթարան։ Ես տասը տարեկան էի, աչքովս տեսայ։ Նա բերանը բաց արեց, ասաց. «Աղօթք արեք, տեսնում եմ քամբաղդութիւն է գալիս, աղօթք արեք, ոչխար մորթեցէք, մոմ վառեցէք...» Չորս օր անցած, աղօթարանից բարձրացաւ մի քամի, անձրև բռնեց։ Սկսվեց մի կարկուտ, Տէր, Դու ցոյց լուսա,

հատը հաւի ձուի շափ: Տասնուշորս դիւղերի հասած հունձքը կոտրեց, նստեցրեց, փչացրեց, սով ընկաւ...

Դիմաքսեանը ակամայ հետաքրքրվել էր այս պատմութիւնով և լսում էր ծառային, առանց ընդհատելու նրա խօսքը: Նա դիտէր, որ Սիրականը անշուշտ մի նպատակով է այդ պատմում, և հէնց այդ նպատակը իմանալու համար նա համբերութեամբ ականչ էր դնում նրան:

—Եինականները մօրս պաշտում էին, չունքի լուսահոդին սուրբ Գէորգի «զուլն» էր: Սուրբը նրա ձախ ոտի և աջ ձեռի վրայ մօր արդանդում նշաններ էր դրել, մէկը տերեւի նման, միւսը թռչնի պէս: Սուրբի գերեզմանի հողը պահում էր մեր թոնրատանը, գիշեր-ցերեկ նրա առաջ մոմ էր վառում... Քանիքանի հիւանդներ է փրկել, որին աչքացաւից, որին դըլ-խացաւից, որին ոսկրացաւից, որին էլ եարա-փարաներից: Աղա, ես էլ ընկաւոր եմ:

—Դժու, —հարցրեց Դիմաքսեանը զարմացած և ցաւակցաբար:

—Վայ ինձ, վայ ինձ, ես սուրբի «զուլ» չեմ, ես մարդարէութիւն չեմ անում, բայց ընկաւոր եմ: Հէնց որ առաջին փորձանքը դլիս հասաւ, մայրս տնից տուն ման եկաւ, կոպէկ-կոպէկ վող հաւաքեց, շորեր հաւաքեց, տուեց ինձ ու ասաց. «Գնա, Սիրական, գնա, բոլոր սրբերին ուխտ արա, գերեզմանների հողը լզիր, եթէ մէկը չըփրկի, միւսը կըփրկի...» Գնացի, աղա ջան, քսան տարեկան էի, գնացի, երկու տարի սոսով թափառեցի Գենջա, Ղարաբաղ, Պարսկաստան, Տաճկաստան, որտեղ որ հայ քրիստոնէի սուրբ կայ, գերեզմանին երկրպագութիւն տուեցի...

—Լաւացյալ:

—Լաւացյել էի, մեռնեմ նրանց սուրբ աջին, բայց յետոյ մեղքերս երկի էլի շատացան, էլի «չարը» մտաւ հոգիս: Այժմ տարէնը մէկ կամ երկու անդամ փորձում է: Սրանից երեք ամիս առաջ Սալդատովից բաղարում ընկայ, դարադաւոյը բերեց տուն: Կինտօնները դրպանիցս տասը մանէթ էին հանել...

Դիմաքսեանը անկեղծ ցաւակցեց Սիրականին, որի անբուժելի հիւանդութեան մասին առաջին անդամն էր լսում:

—Լաւ, Սիրական, —ասաց նա բարեկամաբար, —այժմ ինչ ես ուզում ինձանից:

—Աղաչանք ունիմ, մէծ աղաչանք, —պատասխանեց Սիրականն այժմ աւելի վասահացած: —Աղա, դու ինձ լաւութիւն շատ ես արել, Էհ, ես ինչո՞վ կարող եմ պարտք վճարել: Ես էլ ուզում եմ քեզ տալ ինչ որ ունիմ...

Նա ձեռը տարաւ ծոցը և այնտեղից հանեց մի բան:

—Այս պատիկ կապոցը մօրս թանդադին կտակն է, տալիս եմ քեզ, աղա, իմ խամբու վզիցդ քաշ տուր:

Նա ջերմեռանդօրէն համբուրեց ձեռի բանը: Դակապտագոյն լաթի կտորից կարած մի եռանկիւնի կապոց էր լուցկիի տուփից ըիչ փոքր:

—Այդ ինչ է:

—Սուրբ Գէորգի մարմնի փոշին է, չարը խափանելու համար, շատ թանդ բան է...

Դիմաքսեանը դլուխը ներողամտաբար շարժելով, բարեկամական յանդիմանութեամբ ասաց.

—Դժու էլ, Սիրական, դժու էլ ուրիշների պէս հաւատացած ես, որ ես խելագարվել եմ:

Սիրականն ամաչելով դլուխը թեքեց կրծքին: Պարզ էր, որ նա հաւատում էր տարածված լուրին: Հետաքրքրական էր Դիմաքսեանի համար իմանալ՝ ինչ փաստերի հիման վրայ է այդ մարդը նրան խելագար համարում:

—Ասա ինձ, Սիրական, տեսել ես ինձ գժութիւն: անելիս:

Սիրականն աշխատեց խոյս տալ ուղիղ պատասխանից: Բայց երբ Դիմաքսեանը ստիպեց, նրա շըր թռնքները սեղմվեցին, չիլ աչքերի մէջ երևաց մի խորին ցաւակցութեան արտայայտութիւն: Նա պատմեց մի քանի բաներ, որ նկատել էր Դիմաքսեանի կողմից և որ երբեմն վախեցրել էին նրան: Օրինակ, մենակ ժամանակ նա ինքն իւր հետ շատ անդամ խօսում է, զանազան շարժումներ է անում...

—Բայց ես խօմ ընկառոր չեմ:

—Չէ, աղա, Աստուած ոչ անի, որ այդ փորձանքին հասնես, դա ուրիշ բան է, բայց...

Նա չըկամեցաւ շարունակել, տատանվեց:

—Ասա, ասա, էլ ինչ ես տեսել:

Ծառան զգուշութեամբ ակնարկեց այն չարագուշակ գիշերուայ դէպքը, երբ Դիմաքսեանը սաստիկ տենդի մէջ էր: Բոլորը, ինչոր նա արել էր այդ գիշեր և խօսել, Սիրականը յիշում էր: Այն ինչ ինքը ոչինչ չէր մտաքերում, բացի նրանից, որ մահամերձ հիւանդ էր եղել: Առողջանալուց յետոյ նա մի անդամ հարցրել էր հայելու մասին, Մոերեանը պատասխանել էր, թէ ինքն է անդգուշութեամբ կոտրել, և նա հաւատացել էր:

—Եւ դու այժմ ուզում ես ինձ չարից Փրկել,—

գոչեց Դիմաքսեանը ոչ այնքան բարկացած, որքան կատակով:

—Աղաչում եմ, որ այս բանը վզիդ քաշ տաս...

—Գիտես ինչ, Սիրական, դու ինձ բաւական զբաղեցրիր, ես տխուր էի, շատ տխուր, մտքերս ցրվեցին, չնորհակալ եմ: Դու բարի մարդ ես, Սիրական, անկեղծ ես, իսկ ես անկեղծ մարդկանց սիրում եմ: Բայց այդ կապոցը, չընեղանաս ինձանից, ես վզիս քաշ տալ չեմ կարող...

Նա ձեռովի մի գրական շարժում արեց, որ ցոյց էր տալիս, թէ այլ ես չի ուզում խօսել:

Սիրականը, լաթի կտորը ծոցը դնելով, դուրս եւ կաւ սենեակից:

Մի դառն և կծու ծիծաղ դուրս թռաւ Դիմաքսեանի կրծքից, և նա արտասանեց.

«Ողորմելի ամբոխ, թշուառ ամբոխ, քանի որ մենք քեզ չենք ուզում կրթել, դու ինքդ ես ուզում մեզ կրթել...»

XIII

Գրեթէ ամբողջ գիշեր գայիսնէն չըկարողացաւ քնել պատահած անցքի տպաւորութեանը ենթարկված: Նրա ականջին շարունակ հնչում էր Դիմաքսեանի յուսահատ ձայնը. «Միթէ չեք տեսնում, թէ ինչպէս տանջվում եմ ես...»

Նա վիրաւորված չէր, այլ վշտացած: Նա չէր մեղադրում Դիմաքսեանին և ոչ էլ վրդովված էր նրա գիշէ: Ինչպէս կարող էր իրան զսպել, քանի որ սիրում է, իսկ թէ սիրում է—միթէ այդ վազուց յայտ-

նի չեր Գայիանէին։ Բայց ինչու նա այնքան յուսահատված էր և հէնց առաջին խօսքն արտասանեց յուսահատ ձայնով։

«Միթէ նա բոլորովին համոզված էր, որ իւր սէրը ուրիշ ոչ մի արձագանք չի գտնում իմ սրառում, բացի բարեկամական զգացմունքից։ Վերջապէս, ես ինքս կարող եմ հաստատ ասել, թէ այդ մարդուն միայն յարգում եմ։ Եթէ այդպէս լինէր, միթէ չէի աշխատիլ ժամանակին նրան ինձանից հեռացնել։ Իսկ ես ինչ արեցի, ինչ արեցի. ոչ մի անգամ նրան չըզգուշացրի, ոչ մի անգամ... Այժմ ես ինչ իրաւունքով նրանից վիրաւորվեմ։ Տէր Աստուած, գլուխս պտտում է, չըդիտեմ ինչ մտածել... Ի հարկէ, նա այժմ համոզված է, որ ես նրան առում եմ։ Բայց այդպէս չէ, ոչ, այդպէս չէ։ Ուրեմն ինչ է... Միթէ վախեցայ հասարակական կարծիքից։ Սխալ է, այդ չէ... Ես կամենում եմ իմ խղճի առջև արդար լինել։ Այն, ճիշդ դա է, Եթէ ես այդ մարդուն առաջ սիրէի և յետոյ բաժանվէի իմ ամուսնուց, այն ժամանակ շատ կարելի է այդպէս չըվարվէի նրա հետ։ Բայց այդ մարդն իմ ուշագրութիւնը գրաւեց յետոյ, երբ ես առում էի Բարաթեամնին։ Ես այն ժամանակ համեմատեցի երկուսին, երբ համեմատելը անկարելի էր։ Այն ժամանակ ճանաչեցի մէկի արժանաւորութիւնները, երբ միւսի անբարոյական լինելն ինձ համար բոլորովին պարզվեց...»։

Ի՞նչ կրլինէր, Եթէ նա կուրացած սիրէր Դիմաքսեանին, Եթէ արհամարհելով ամեն ինչ, դնար նրա ետևից։ Միթէ դա կրլինէր սէր և ոչ վրէժխնդրութիւն։ Եւ ումից պէտք է վրէժը հանէր։ Բարաթեա-

նից։ Օօ, այդ մարդը վիրաւորվելու փոխարէն կըծիծաղէր, կըզուարճանար։ Նա ինքն իւր վրէժը լուծված կըհամարէր, տեսնելով իւր կնոջն իւր թշնամու հետ միացած։ Նա այդ փաստն իւր ձեռքում զէնք կըդարձնէր նրա դէմ, կըպարծենար հասարակութեան առջև և ամենքին ցոյց տալով, կասէր։ «Ահա, տեսէք, կինս բաժանվեց ինձանից ոչ թէ այն պատճառով, որ ես անբարոյական էի, այլ որովհետեւ նա ինքը չուզեց բարոյական ամուսին մնալ...»։

Եւ որքան Գայիանէն այսպէս մտածում էր, այնքան աւելի համոզվում էր, որ ուրիշ կերպ չէր կարող վարվել։ Միակ իւր սխալը նա համարում էր այն, որ չուզեց կամ չըկարողացաւ ժամանակին Դիմաքսեանի սէրը զսպել իւր սառնութիւնով։ Միւս կողմից, մի միտք նրան սաստիկ մտատանջութիւն էր պատճառում, կըդիմանայ արդեօք Դիմաքսեանն այդ վշտին, թէ մի փորձանք կըբերի իւր գլխին։

Մերթ նա կարծում էր, թէ չի կարող դիմանալ և մերթ մտածում էր, թէ պէտք է դիմանայ, քանի որ խելօք է, մտածող։ Նա ինքն ինքնասէր է, հպարտ է—պէտք է իւր սիրածի ինքնասիրութիւնն ու հպարտութիւնն էլ իննայի։ Նա պատուախնդիր է և աղատասէր—պէտք է ուրիշներից էլ նոյնը պահանջի։ Եթէ նա սիրում է բարձր սիրով և ոչ լոկ իւր եսի խորութիւնից—անշուշտ կըհասկանայ իւր սիրածի վիճակը։

«Ի՞նչ, միթէ նա չի յարգիլ իմ մայրական զգացումները, միթէ չի մտածիլ, որ եթէ ես չըմերժէի—պէտք է զրկվէի երեխաներից։ Զրկվել երեխաներից։ Ոչ, ոչ, այդ ես չեմ կարող անել, երբէք, ես առանց նրանց չեմ կարող ապրել...»։

Արմունկները պատշգամբի վանդակապատին յենած՝ նա կանգնած էր ուղիղ այնտեղ, ուր երեք օր առաջ Դիմաքսեանն արտայայտեց իւր սրտի զգացումը: Նա նայում էր ցած, դէպի գաւիթ, ուր խաղում էր չորսից մինչև տասը տարեկան մահուլների և աղջիկների մի մեծ խումբ: Օդի բիւրեղեայ յստակութիւնը, ծիծեռնակների ծլվոցը և երեխաների պայծառ, մտաղահնչիւն ձայները կարօտ մօր սիրուլ լեցնում էին ճնշող զգացումներով: Խնչու նրա փոքրիկները չըկան այդ զուարթ խմբի մէջ:

Եօթ օր էր անցել նրանցից բաժանվելուց, դառն և տաղտկալի օրեր, որ եօթ ամսուայ չափ երկար էին տեսել: Կըտեսնով՝ արդեօք նրանց հետ դարձեալ, թէ այդ վերջին անգամն էր: Մի վայրկեան նա մտածեց՝ արդեօք աւելի լաւ չէր լինիլ, եթէ նա իւր ծանր խաչը կրէր զաւակների սիրոյ և նրանց հետ ապրելու համար: Բայց հէնց նոյն վայրկեանին նա յիշեց անցկացրած տարիները, և կրկին նրա աչքի առջև պատկերացաւ խարված, անարդված և պատուի զոհ դարձած ծերունին: Եւ նա աւելի սաստիկ նողկանք զգաց դէպի իւր անցեալը: Երբէք նա չըպիտի փոշմանի իւր արած քայլի մասին: Թող մարդիկ դատապարտեն, բայց նա իւր խզճի առջև արդար է: Թող զաւակների կարօտը ցեցի պէս ուտի նրա սիրուլ, մեռցնի, բայց չէր կարող ապրել այն մարդու հետ:

Նա երեսը յետ դարձրեց դաւթից և աչքերը դաղտուկ սրբեց: Նա չէր ուղում, որ իւր արտասուրքը նկատեն տիկին Սալամբէկեանը և Ռիսաննան, որ այդ միջոցին ներքեում զեկավարում էին փոքրիկ սա-

ների խաղերը: Իսկ մանկական ձայները քանի գնում այնքան աւելի զուարթ էին հնչում, իսկ գարնանաւ յին օդը քանի գնում, այնքան աւելի տաքանում էր և ապրելու, երջանիկ ապրելու ցանկութիւնը բորբոքում մարդու սրտում:

Տիկին Սալամբէկեանը վերջացրեց իւր պարապառների հետ, բարձրացաւ վերև, մօտեցաւ Գայիանէին, բռնեց նրա թեկից և տարաւ սեղանաւուն: Նա դեռ տեղեկութիւն չուներ վերջին դէպի մասին: Տեսնելով Գայիանէի կարմրած աչքերը, նա սկսեց ընկերաբար յանդիմանել.

—Եթէ դու այդպէս շարունակես, կարճ ժամանակում կեանքդ բոլորովին կըմաշես: Զըպէտք է մինակում կեանքդ բոլորովին կըմաշես: Զըպէտք է մինակում կեանքդ բոլորովին կըմաշես: Դու ոչ առաջինն ես, սիրելիս, ոչ էլ վերջինը կըմաշես, քեզ նման շատերը կան...

—Միթէ դու կարծում ես, որ ես իմ արածի մասին փոշմանել եմ:

—Երբէք չեմ կարծում: Դու միայն երեխաներիդ մասին ես հոգս անում: Բայց քեզ խօմ նրանցից չեն զրկում, դու էլի խօմ տեսնվում ես նրանց հետ:

Այրի Բօլումբաշեանը սեղանատանը, պատրաստ սեղանի մօտ նստած, նախանձելի ախորժակով ոչնչացնում էր իւղապատառները: Միւս սենեակից հիւանդի մասնը տնքանքոցի ձայն էր լսվում: Գա տիկին Սածանը մեռնքոցի ձայն էր, որ մեռնում էր մեռնում և լամբէկեանի տասն էր, որ մեռնում էր մեռնում և դեռ կենդանի էր, տանջելով իւր շըջապատողներին և ցկամբնալով կեանքից բաժանվել:

Այրին Գայիանէին նստեցրեց իւր մօտ և նոյն պէս յանդիմանեց: Նրա ասելով Գայիանէն այժմ ա-

ւելի բաղդաւոր է քան առաջ։ Այդ ամուսին առած արարածները իրանց կանանց վերաբերմամբ առհաս-սարակ շատ գալչելի են, իսկի չարժէ նրանց վրայ ուշագրութիւն դարձնել։

— Խելօք կնիվկը նա է, ով որ իւր մարդու մէկ աշ-
բածի տեղ երկուսն է անում նրան խելքի բերելու
համար։ Հաւատոն, հոգիս, մարդն այն կնկան է սի-
րում, որը նրա դլխատակին փափուկ բարձ է դնում,
քնացնում ու յետոյ ինքն իւր ուզածն անում։ Ինչ-
քան քիչ մտածես, այնքան բազդառը կըլինիս Ականջ-
ներդ փակիր ու քէֆդ տուածի պէս պար եկ, այն
ժամանակ կասեմ «ապրես» երեխաները, իհ, նրանց
մասին էլ չարժէ մտածել, տեսնում ես ինձ, շատ ու-
րախ եմ, որ երեխաներ չունիմ, գլուխս ցաւերից ա-
զատ է։ Ապրիր, քէֆ արտ ինձ նման... Տեսնում ես,
մարդիկ շատ բաներ են ասում իմ մասին, թող հա-
շեն, ինչքան ուզում են, շատ հարկաւորս է...

Այս ասելով, նա շտապով վերկացաւ, պահարանի վրայից վերցրեց Գիսպարմօնիան և սկսեց նուագելու յետոյ երգել ինչոր վրացական երդ։ Միւս սենեակում հիւանդ պառաւի անքանքոցը սաստկացաւ Բայց այրին մինչև ըլվերջացրեց իւր երգը, շըլուեց։ Յետոյ նա անցաւ իւր սենեակը, շուտով զուգվեց և շտապով դուրս եկաւ անից։

Տիկին Սալամբէկեանն ամբողջ օրը զբազված էր
իւր պարտիզով և սաների համար հոգում էր ինչպէս
հարազատ մայր։ Միրով հետևում էր նրանց յառա-
ջադիմութեանը, ուսումնասիրում էր ամեն մէկին, վա-
զորօք գուշակութիւններ էր անում, թէ այս կամ այն
երեխայից ապագայում ինչ գուրս կըդայ։ Ամեն օր,

գասերը աւարտելուց յետոյ, ոգևորված պատմում էր
իւր «սիրելի դաւակների» մասին:

«Զըգիտես ի՞նչ երջանկութիւն է այդ անմեղ էակների շրջանում լինելը։ Մարդ ինքն էլ երեխայ է դառնում նրանց հետ։ Մինչև մահ չըպիտի թողնեմ ալդ շրջանը...»

Եւ նրա զուարթ դէմքը, հոգեկան եռանդուն
տրամադրութիւնն ակամայ շարժում էին Գայիանէի
նախանձը։ Որքան կեանքը ժպտում էր իւր արժանա-
ւոր ընկերուհուն և ինչպէս նա բաղդաւոր էր ամուս-
նութեան մէջ։

Մի ժամանակուայ ծոյլ-պեսսիմիստ բժիշկ Սալամբէկեանն այժմ, կարծես, բոլորովին իւր հայեացքը փոխել էր կեանքի մասին։ Հիւանդներին ընդունելուց և այցելելուց յետոյ, նա իւր ամբողջ ժամանակը նուիրում էր տնային պարապմունքներին։ Նա օրինակելի ամուսին էր և հոգատար, մինչև անդամ մանրակրկիտ տանտէր։ Մի բոպէ հանգիստ չէր նըստում իւր տեղը, միշտ զբաղված մանր-մունք գործերով։ Հոգեկան փոփոխութիւնն ազգել էր և՛ նրա մարմնի վրայ։ Այժմ նա գէմքով առողջ էր, զուարժ, մինչեւ անդամ աչքի ընկնելու չափ չաղացել էր։

Երբեմն նա այցելում էր Դիմաքսեանին և շատ
ցաւում էր, որ իւր ընկերն ենթարկված է ընդհա-
նուր հալածանքի։ Բացարձակ չէր ասում, բայց մըտ-
քում սկսել էր մի փոքր քննադատել իւր ընկերոջ ուղ-
ղութիւնը։ Արդեօք, ծայրայեղ արմատական չէ, ինչու
ամբողջ հասարակութիւնն իւր դէմ ոտքի է կանգնեց-
նում, միթէ չի կարող աւելի խաղաղ դործել։

Կայ մտածում էր և Գայիանէի մասին, աշխա-

տում էր որ և է կերպ թեթևացնել նրա վիճակը և գիտեր, որ այդ կարելի է միայն զաւակներին իրանց մօրը վերադարձնելով։ Յաճախ նա խօսում էր Վէքիլեանի հետ, խնդրելով սրան միջնորդել Բարաթեանի մօտ։ Բայց օրէնսգէտիրաւաբանը այս գէպքում ոչ մի «արդարացուցիչ» պատճառ չէր ուզում ընդունել, բացի օրէնքի տառացի մտքից։ Կինն իւր կամքով է հեռացել մարդուց, երեխաները օրէնքով հօրն են պատկանում։ Դրա գէմ ոչինչ չի կարելի անել։

Երբեմն բժիշկը փողոցում հանդիպում էր Բարաթեանին։ Նրանք շատ սառն բարեւում էին միմեանց և անցնում։ Մի անդամ նա մօտեցաւ իւր նախկին ընկերոջը, կամենալով անպատճառ իմանալ նրա մտադրութիւնը երեխաների վերաբերմամբ։ Բարաթեանը նախ շատ անտարբեր ընդունեց նրա ակնարկները, ապա սկսեց իւր գրութիւնը բացատրել։ Նա ոչ իրան է մեղադրում, ոչ Գայիանէին։ Հայեացըների «տարբերութիւն»—ահա այն դիմաւոր պատճառը, որ բաժանեց նրանց միմեանցից։

—Ես ոչինչ ոխ չունիմ այդ կնոջ գէմ և հոգով սրտով ցանկանում եմ, որ նա բաղդաւոր լինի, առանց ամուսնի, առանց երեխաների։

—Բայց առանց երեխաների նա դժբաղդ է, միթէ մտադիր ես միշտ նրան զրկած պահել իւր զաւակներից, —հարցըց բժիշկը։

—Ես մի անդամ ուղարկեցի, էլի, երեի, կուզարկեմ մի ժամով, կէս ժամով։

—Այդ շատ քիչ է, դու պէտք է աւելի բարեսիրտ վարպես։

—Այդ մասին ոչ մի խօսք. երեխաները ինձ են

պատկանում, իրաւունք ունիմ բոլորովին չուղարկել։ Բժիշկը չըկարողացաւ հակառակել և հեռացավ վիրաւորված։

Այդ խօսակցութիւնից մի քանի օր անցած Բարաթեանը կանգնեցրեց նրան փողոցում, և մի կողմ տանելով, յայտնեց իւր վճիռը։

—Գիտես, ես իմ երեխաներին սիրում եմ, չեմ ուզում, որ նրանք զուրկ մնան իրանց մօրից։ Վճռեցուզում, որ նրանք մի ամիս իրանց մօր մօտ ապրեն, մի ցի, որ նրանք մի ամիս իրանց մօր մօտ ապրեն, մի ամիս ինձ մօտ։ Բայց մի պայման եմ գնում։ Չըլինի թէ նա երեխաների սրտում իմ դէմ ատելութիւն զարթեցնի... այդ պատահում է։

—Գայիանէն այնքան խելօք և բարի կին է, —պատասխանեց բժիշկը, —որ իւր երեխաների հոգին չըփշացնելու համար այդ բանը չի անիլ։ Շնորհակալ եմ, ես խոկոյն կըշտապեմ քո վճիռը յայտնել նրան և ուրախացնել։

Երրորդ օրը Գայիանէն իւր սենեակում լուսամտի առջեւ նստած կար էր անում իւր միտքը զբաղեցնելու համար։ Փողոցից նրա ականջին հասաւ մի ծանօթ կանացի ձայն։ Նա գլուխը գուրս բերեց լուսամտից, նայեց գուրս և խոկոյն մի ուրախ ձիչ արձակեց, կարը ձեռից ձգելով։

Պառաւ գայեակը մի ձեռով բռնած հինգ տարեկան թամարի, միւսով երեք ու կէս տարեկան լեռնի ձեռը, զուարթ գէմքով սանդուխքով բարձրանում էր։ Ուրախութիւնից նրա լեզուն անատամ լնաերքի միջից գուրս էր ընկել, և նա հազիւ հազ շունչ էր առնում, շտապելով ուրախացնել կարօտած մօրը։ Գայիանէն սեղմեց կրծքին երկուսին միասին և

Երկար ժամանակ համբուրում էր մերթ մէկին, մերթ միւսին, կրկնելով.

—Վերջապէս, վերջապէս...

Երբ նա իւր սրտի առաջին փափագը մի փոքր յագեցրեց, դայեակը հառաջելով հաղորդեց, թէ անդամարյծ Դերասիմ Դերասիմիշը առաւօտեան լուսաբացին հոդին աւանդել է: Լուրը Գայիանէի վրայ տպաւորութիւն չըգործեց, այնքան դեռ նրա միտքը զբաղված էր երեխաներով:

—Երէկ երեկոյեան երեխաներին կանչեց, համբուրեց, մէկ մէկ օրհնեց: Չեր անունն էլ յիշեց, ձեզ էլ օրհնեց, Աստուած վկայ, օրհնեց: Ասաց, Փեօդօրա, կասես հարսիս, ես օրհնում եմ, լաւ կնիկ է, թող հաշտի որդուս հետ...

Յետոյ պառաւ դայեակը աւելացրեց, թէ երիտասարդ պարոնը հիւանդ է: Վեց տարուայ կենակցութիւնը զուր չէր անցել: «Սովորութեան» դգացումը Գայիանէին չըթողեց շատ էլ անտարեր լսել այդ լուրը: Բայց երբ դայեակի պատասխաններից իւսցաւ, որ Բարաթեանի ցաւը ուրիշ ոչինչ է, եթէ ոչ այն ժառանգական հիւանդութիւնը, որ տարենը կամ երկու տարենը մի անգամ պարբերապէս կրկնվում է—նա ձեռով մի բացասական շարժում արեց, մի շարժում, որ արտայայտում էր նրա պարզ զզուանքը, և գրկեց իւր Լեռնիկին:

Մի քանի օր նա ոչ մի բանի մասին չէր մտածում բացի երեխաներից և ամբողջ ժամանակ նրանցով էր զբաղված: Բայց անցան այդ օրերը, նրա սիրուլ կշտացաւ, և նորից նա սկսեց տիրել: Ինչ և լինէր, դրութիւնը անորոշ էր, չըգիտեց, իւր կամագ կամ անուան չէր:

սպասում երեխաներին:

Դերասիմ Դերասիմիշի թաղման օրը նա մենակ նստած էր իւր սենեակում և յիշում էր անցկացրած դառն օրերը: Նա կրկին յուղվեց, կրկին արտասվեց և, գլուխը դնելով բարձին, սկսեց հեկեկալ: Նա ողբում էր իւր քայլքայված, խորտակված կեանքը և դժբաղդ երիտասարդական օրերը: Ո՞ս, անցած կորած յոյսեր, որ մի ժամանակ այնպէս ողկորում էիք նրան, միթէ չըպիտի վերադառնաք: Ինչու նա այնպէս մոլորվեց, ինչու նա չունեցաւ վեց տարի առաջ կեանքի մասին այն հայեացըը, որ ունի այժմ ինչու չըմտածեց, որ ընտանեկան երջանկութիւնը չըպիտի որոնել ամուսնու ոչ արտաքին գեղեցկութեան, ոչ աշխարհային շուքի և փայլի, այլ նրա հոգեկան և բարոյական արժանաւորութիւնների մէջ: Եւ այժմ, երբ նա կրում է իւր դառն սխալի պատիժը, երբ նրա աչքերը բացվել են, միթէ արհամարհի ամեն ինչ և ընկնի մի նոր երջանկութեան ետեից: Ո՞ւր, ինչպէս, միթէ աչքերը փակելով հասարակական օրէնքների, արմատացած աւանդութիւնների և նախապաշարմունքների առջև, միթէ ապօրինի կենակցութեան մէջ որոնելով այդ երջանկութիւնը: Ոչ, ոչ, դարձեալ ոչ, այդ անկարելի է, անհնարին, վերջապէս այդ բարձր է նրա բարոյական ոյժերից: Ուրեմն, հեռու մոլորութիւն, հեռու խարուսիկ յոյսեր, նա չի ուզում իւր սեպհական բաղդի համար զաւակների վիճակը ենթարկել վտանգի, ահա այդ անմեղ, սիրուն և քնքոյց էակներին...

«Մայրիկ, ինչու ես լալիս»:

Տեսնելով նոյն պահին ներս վազող Թամարին,

Գայի հանէն շտապով երեսը դարձրեց, աչքերը սրբեց և աշխատեց ժպտալ։ Փռքի կազմիկը զգաց նրա կեղծէրը և կրկնեց իւր հարցը, բայց պատասխան չբառագւ։

—Մայրիկ, երբ պէտք է գնանք, —ասաց նա, մի փոքր լուելուց լեռով:

$$-\Omega^2 \epsilon_{\mu\nu}$$

—ξωνική μονάδα

—Երբ որ դու կամենաս:

—Ես աղօթմ եմ հենդ հիմալ:

—Ψεωη, ήθη περιπλέοντα;

—Tāmē tētē hēwāwā ūkēn ūkēn.

- 6 -

— 19 —

Մասնակիութեան հիմք պատճենականէ:

—Մասնիկ ենք ուստի այս աստվածութեան մասում:

—Ranunculus hispidus Schlecht.

—И в сий день мы счастливы.

Մայրը կամեցաւ սաստել աղջկան, որ, վերջաւ
պէս, դադարի այդ սիրտ մօրմօքող հարցերը տալուց
Բայց նայեց նրա մանկական անուշ հետաքրքրութեամբ
ին աչքերին և մի սուր ցաւ զգաց իւր սրտում Ոչինչ
չէր կարելի անել. մատաղ սրտում արդէն կասկածը
արմատ էր դցել: Պարզ էր, որ այդ փոքրիկ գլուխը
զբաղված է իւր մօր վիճակով և բնազգմամբ հաս-
կանում է արդ վիճակից:

«Աստուած իմ, Աստուած իմ—ասաց մոքում Գայ-
յիանէն, ձեռը Թամարի ուսին դրած, աչքերը վեր
բարձրացնելով,—ոյժ տուր ինձ, որ կարողանած այս
ցաւին դիմանալ...»:

XVI

Այն բոլորից, ինչոր Գիւմաքսեանը խորհել էր Գայիստանէին իւր սիրտը պարզելուց առաջ, այժմ մնում էր մի միտք, թէ պէտք է հեռանայ և չի կարող չըհեռանայ Թիֆլիսից:

Օր օրի վրայ նա իւր կառավարչից սպասում էր
փողից իւր հետ բերած փողերից այժմ նրա մօտ հա-
մարեա ոչինչ չէր մնացել, թէև բերել էր բաւակա-
նաշափ գումար: Իւր վրայ նա տռհասարակ ծախսում
էր շատ քիչ, բայց այս անդամ ունեցաւ արտաքոյ
կարգի ծախսեր: Նրա տեսչութեան ժամանակ զպրոցից
արտաքսված աշակերտները աղքատ վիճակի մէջ էին,
քացի մէկից, որ գործակատարի պաշտօն էր գտել մի
վաճառականի մօտ: Զորս աշակերտի նա տուեց ճանա-
պարհածախս և ուղարկեց հայրենիք: Իսկ հինգերոր-
դը—Մարտաքեանը, այն ընդունակ աշակերտը, որին
նա ամենից աւելի էր սիրում, ոչ ուզում էր հայրենիք
վերադառնալ և ոչ էլ միջոց ունէր քաղաքում ապրե-
լու: Նա այնքան ինքնասէր էր, որ ամաչում էր վարնդ-
ված աշակերտի անունով ներկայանալ իւր ծնողներին:
Նա ուզում էր անպատճառ, ինչպէս և իցէ, ուսումը
շարունակել, մինչև անդամ փափագում էր համալսա-
րան յտնել և ասում էր, եթէ այդ չըյաջողվի—ինք-
նասպանութիւն կըդործի:

Երբ Գիմաքսեանը անձամբ հարց ու փորձ անելով պատճենը խմացաւ, վճռեց օդնել այդ գիւղական ինքնակամ, կոպիտ, բայց ընդունակ երիտասարդին գույքութեան բարձր կրթութիւն, — ասաց նա

մի օր Մարաքեանին իւր տանը,—ես քեզ վերցնում եմ իմ հոգանաւորութեան տակ:

«Բոփ լոռեցին», ինչպէս կոչում էին նրան ուսուցիչները, այնքան զգացվեց, որ նրա աչքերի մէջ ուշրախութեան արցունք երևեց: Դիմաքսեանը խորհուրդ տուեց նրան գնալ Ռուսաստան:

—Այնտեղ դու կարող ես պատրաստվել մի տարի, գիմնասիական քննութիւն տալ և յետոյ մտնել համարաբան: Աշխատիր իմ յոյսերը արգարացնել:

Քիչ ժամանակ անցած Մարաքեանը ստացաւ ճանապարհածախս և ամբողջ տարուայ թոշակը, ուղեորդեց 0դեսսա:

Վերջապէս, Դիմաքսեանը ստացաւ կառավարչից սպասած նամակը և բարկացած ձգեց մի կողմ: Փող ուղարկելու փոխարէն Հաբիգեանը հազորդում էր մանրամասն տեղեկութիւններ նրա գործերի մասին: Միայն նամակի վերջում նա աւելացնում էր. «Հինգ օրից յետոյ կուղարկեմ չորս հարիւր բուբլի»: Այս տուղը աւելի դրգուեց Դիմաքսեանին: Նրան ամենաքիչը երկու անգամ աւելի էր հարկաւոր և դեռ համոզված էր, որ իւր պահանջը շատ չափաւոր է:

Նա ուզեց իսկոյն հեռագրել Հաբիգեանին և պահանջել, որ իւր պատուէրը անյապաղ կատարի: Բայց այդ տեսակ մի հեռագիր կարող էր գուցէ վիրաւորել նրա ընկերոջը: Այն ինչ՝ նամակ դրելու համբերութիւն չունէր: Առանց երկար մտածելու նա վճռեց հէնց վաղն իսկ ճանապարհ ընկնել հայրենիք կարճ ժամանակով:

Առաւոտը կանուխ զարթնելով, նա մի նամակ թողեց Մսերեանի անունով և անմիջապէս ուղևորվեց:

Այս անգամ ճանապարհորդութիւնը նրա վրայ բոլորովին ուրիշ տպաւորութիւն ունեցաւ: Կար ժամանակ, երբ նա դրեթէ ակամայ էր գիմում գէպի իւր ծննդավայրը, իսկ այժմ շտապում էր որքան կարելի է շուտով համեմ այնտեղէ նա վափագում էր օր առաջ տեսնել իւր քոյրերին, որոնց, կարծես, շատ տարիներ էր չէր տեսել: Նրան թւում էր, որ այնտեղ, իւր արիւնակիցների շրջանում միայն կարող է գէթ ժամանակաւոր մսիթարութիւն դժոնել և յանդիմանում էր իրան, թէ ինչու այդ մասին առաջ չէր մտածել:

Հեռանալով այն քաղաքից, ուր նա եօթ տարի շարունակ անց էր կացրել փոթորկալից կեանք, զգում էր, որ իւր ետևում թողնում է մի տեսակ ըեռն, որից բաժանվելը և ցանկալի էր, և դառն: Նա յիշում էր իւր կրած վշտերը և, կարծես, մի ներքին ձայն շնչում էր, թէ այդ վշտերը կարող էին առաջանալ հէնց այն մժնոլորտում միայն, որից հեռանում էր:

Նա ուզում էր հոգով անձնատուր լինել լայնատարած գաշտերի, անտառների և լեռների ազգեցութեանը: Եւ պատահում էին բոպէներ, երբ նա մոռանում էր ամեն ինչ և թարմանում գարնոնային օդով արձակ բնութեան մէջ: Բայց անցնում էին այդ բոպէները, նորից գրգռվում էին զապված, խեղդված զգացումները, և դարձեալ թւում էր նրան, թէ այդ զգացումներից գուցէ կարող է ազատվել միայն իւր արիւնակիցների շրջանում: Եւ ահա ամեն փոստային կայարանում նա անհամբերութիւնից բարկանում էր. որ ձիերը ուշ են փոխում: Նա անընդհատ կաշառում էր կառավարներին շտապել և անդադար շտապել գէպի առաջ:

Երկու օրուայ ճանապարհը նա այս անդամ կըտքեց երեսուն ժամուայ մէջ, գիշերը ոչ մի տեղ կանդչառնելով։ Նա շտապեց մտնել հայրենի տունը։ Այս տեղ այժմ ընակում էր նրա մեծ քոյրը—տիկին։ Մարթան իւր ընտանիքով։ Մռայլ և նիրհած տունը այժմ կենդանութիւն էր ստացել։ Օրը մինչեւ երեկոյ ընդարձակ պարտիղի մէջ թռչկոտում էին Մարթայի երերից մինչեւ իննը տարեկան երկու զոյտ երեխաները։ Փողոցի կողմի լուսամուտները բացվել էին, արեւի կենդանացուցիչ լոյսը առատօրէն հոսվում էր ներս, գէպի մաքրված, նորոգված սենեակները։ Պատերը ծածկվել էին ուրախ գոյնի պաստառներով, յատակները ներկվել էին, կահակարասին փոխվել։ Խոհանոցից լսվում էր ամանեղէնի և պղնձեղէնի ձայներ։ Ախոռատանը խրխնջում էր մի նժոյգ, որ պատկանում էր Մարթայի ամուսնուն, լսվում էր Զատկի տօներին երեխաների համար բերված գառնուկների մլաւոցը։ Մի նորատի հայ աղախին վազում էր երեխաներին սաստելու, որ պարտիղի ծաղիկները չըփչացնեն։

Ամեն ինչ փոխվել էր, նորոգվել, զուարթացել։ Նոյն իսկ պտղատու և անպտուղ ծառերը, կարծես, աւելի ուրախ էին նայում, գոնէ այսպէս էր թւում։ Դիմաքսեանին։ Պատշգամբի վրայ այլ ևս չէր երեսում այն հնամաշ փայտեայ մեծ բաղկաթսուը, որ միշտ միենոյն տեղն էր լինում և որի վրայ նստում էր հանգուցեալ Մարգար աղան։

Դիմաքսեանը ներս չըմտած առանձին, առանձին բռնեց իւր քրոջ զաւակներին, համբուրեց, այստեղ միայն յիշելով, որ պէտք է այդ փոքրիկների համար նուերներ բերէր։

Տիկին Մարթան նրան գիմաւորեց, վազելով պատշգամբ և ուրախ բացադանչելով։

—Փառք Աստուծոյ, փառք Աստուծոյ...

Նա Արաքնից երկու տարով մեծ էր, բայց դեռ պահպանել էր երիտասարդական թարմութիւնը, չընայելով եօթերորդ բերքին։ Նրա գէմքի բարի, հեղարտայացութիւնը և մուգ գոյնի թափածալի աչքերը, մանաւանդ կակուղ ձայնը յիշեցնում էին իւր մօրը։ Նա հագնվում էր անխառն եւրոպական տարագով— այսպէս կամենում էր նրա ամուսինը, որ արքունական պաշտօնեայ լինելով մեծ մասամբ իւր օտարադդի պաշտօնակիցների շրջանում էր պտտում։

Նա մի քանի անդամ եղբօրը համբուրելուց յետոյ, անմիջապէս ծառային ուղարկեց իւր կրտսեր քրոջ կանչելու։ Կէս ժամ անցած և կաւ Արաքնից չորս տարով փոքր Անիկը։ Երկու քոյրերի արտաքինի ինչպէս և ներքին յատկանիշների մէջ կար խիստ տարբերութիւն։ Հասակով Անիկը աւելի բարձր էր, կազմուածքով լսոշոր, թէե ոչ այնքան գէր։ Նրա երեսի գծերը կանացի փափկութեան հետ ունէին նաև մի ինչոր աղդու տղամարդային արտայայտութիւն։ Իսկ փոքր ինչ լայն ծնոտը, սղմանքները յիշեցնում էին Մարդար աղային։ Հետեւելով իւր աւագըրոջ օրինակին, նա նոյնպէս եւրոպական տարագով էր հագնվում։

Նա, գոնէ արտաքսուս, մի առանձին ուրախութիւն ցոյց չըտուեց եղբօրը տեսնելով։ Նա միայն մի անդամ համբուրկեց նրա հետ, հարցնելով։

—Լաւ ես։

Արաքնը այս անդամ սովորականից աւելի հե-

տաքրիքված հարցնում էր իւր քոյրերի կենցաղավա-
րութեան մասին։ Այն ինչ՝ քոյրերն ստիպում էին
նրան պատմել իւր կեանքից։ Մարթայի աչքում նա
և նիհարել էր, և ծերացել Սկզբում կատակով, ապա
լըօրէն երկու քոյր յանդիմանեցին իրանց միակ եղ-
բօրը, թէ ինչու մինչև այժմ չի ամուսնացել։ Այս
կողմից աւելի խիստ էր Մարթան։

— Ինչու ես հօրդ տունը անտէր թողնում, — առւմ էր նա, — ինչու մեզ չես ուզում ուրախացներ: Ասածուն է յայտնի, սիրոս կտոր կտոր է լինում ամեն անդամ այս տան մօտով անցկենալիս: Ես կարծում էի մի աւերակի մօտով եմ անցկենում: Վերջը՝ էլ չըհամբերեցի, եկայ այսաեղ ապրելու: Խեղճ մայր, մաքովդ անց կըկենա՞ր, որ քո մի հատիկ աչքի լոյս որդին այսօր պէտք է ձնողներից զուրկ, քոյրերից հեռու, հօր տնից գուրս, ոլ գիտէ ինչ երկրում կեանք անցկացնի:

Նրա ձայնը զգացվեց, աչքերը արտասվեցին:

—Միթէ ամուսնութիւնը շատ լաւ բան է, որ
ինձ էլ խորհուրդ էք տալիս ամուսնանալու, —հարց-
րեց Արսէնը լոկ այն նպատակով, որ իմանայ որքան
իւր քոյրերը երջանիկ են ընտանեկան կեանքում:

—Ամուսնութիւնը մի պարտք է, լաւ վատ, ամեն մէկը պարտաւոր է կատարել. —պատասխանեց Մարթան:

—Բայց այդ պարտքը շատերին է թանգ նստում։
Դու ուբախ ես, որ ամուսնացել եմ։

—Ոչ ուրախ եմ, ոչ տիսուր, բաղդիցս գանդատ-
վել չեմ կարող, ինչ որ ճակատիս գրված է, պէտք է
կատարվի: Բայց էլի փառք Աստուծոյ, երեխաներովս

բայրաւոր եմ:

— *bulq qəmə, Ünibl...*

—ինձ համար միևնոյնն է:

—Մարդու քեզ հետ լաւ է վարվում:

—Այդ ժամին մի հարցնիլ, —մէջ մտաւ Մարթան
ծիծաղելով, —Սնիկը այն կանանցից չէ, որ իւր մար-
դու խօսքի տակ մնայ...

Մի թեթև ժպիտ անցաւ Անիկի գէմքով. պարզ
էր, որ քրոջ ասածը նրան դուր եկաւ. Հօր չափ յա-
մառ և ինքնակամ՝ նա ընտանեկան կեանքում ձըդ-
տում էր կին-բռնակալի գեր կատարելու՝ սկսած այն
օրից, երբ Արաէնը տուեց նրան իւր ժառանգութեան
մի մասը. Որովհետեւ նրա ամուսինն էլ հեշտ հպա-
տակվողներից չէր, ուստի երբեմն նրանց մէջ տեղի
էին ունենում ընտանեկան խռովութիւններ. Բայց եր-
բէք այդ խռովութիւնները ծայրայեղութեան չէին
համառւմ, որովհետեւ մարդը միշտ զիջողութիւն էր ա-
նում, նաև՝ իւր ընտանեկան կեանքը շատ էլ չըթու-
նաւորելու համար, երկրորդ՝ համոզված լինելով, որ
իւր յամառութեան տակ Անիկը ունի իսկապէս բա-
րի հոգի...

Ծուտով եկաւ Մարթայի ամուսինը պաշտօնական համազգեստով, կռնատակին բռնած մի մեծ պօրտ-ֆէյլ. Դա մի հաստափոր մարդ էր բարակ ոտներով: Բարեկելով Արսէնին ոռւսերէն լեզուով, որ քաղաքակրթութեան նշան էր համարում, նա մի քանի անգամ գրկեց նրան, դոչելով. «Նականեց, նականեց...» Եկաւ և Անիկի ամուսինը, որ, հակառակ իւր քենակալին, նիհար դէմքով, չոր կաղմուածքով մի բարձրահասակ մարդ էր, պարապվում էր վաճառա-

Կանութեամբ

Ընտանեկան ճաշը անցաւ բաւական ուրախ, չսոր-
հով Մարթայի ամուսնուն, որ անդադար խմում էր,
սրախօսում, ծիծաղում և ծիծաղեցնում:

Իրիկնադեմին Դիմաքսեանը ծառային ուղարկեց
Հարիգեանին կանչելու: Յայտնվեց, որ կառավարիչը
դնացել է մօտակայ գիւղերից մէկը և միայն վաղը
պէտք է վերադառնայ: Այժմ Դիմաքսեանը, հակառակ
սովորականին, շատ հետաքրքրված էր իւր գործերի
գործիւնով, փափագում էր տեսնել Պալուածները:

XV

Հետեւալ առաւօտ նա նոր էր զարթնել, երբ
ծառան յայտնեց Հարիգեանի գալստեան մասին:
Ներս մտաւ առողջ կազմուածքով, արեից այր-
ված պղնձագոյն գէմքով մի տղամարդ մօտ երեսուն
ու երեք տարեկան: Նա հագած էր կոշտ մոխրագոյն
կտորից կարած կարճ բաճկոն և երկայն կօշիկներ, որ
կածկված էին թանձր սպիտակ փոշիով:
Դիմաքսեանը ընդունեց նրան այն սենեակում,
որ մի ժամանակ ծառայում էր Մարդար աղային: Բո-
լոր հին կահկարստիներից այստեղ մնում էր միայն
Երկաթեայ ժանդոտված սնդուկը, որի մէջ այժմ
ունիչ չըկար:
Զարիգեանը նոր էր վերադարձել Գիւղից և ճա-
ռապարհի հագուստը չըփոխած շտապել էր Դիմաք-
սեանի մօտ:
Գնացել էի ապառիկներ ժողովելու, — ասաց նա,
անմիջապէս գիմելով գործին, ինչպէս մի մարդ, որի

համար ամեն մի բոլէն թանգ արժէր, — այսօր ու-
զում էի փոստվ ձեղ համար փող ուղարկել, շատ լա-
եղաւ, ինքներդ եկաբ:

Դիմաքսեանը ընդհատեց նրա խօսքը, առաջար-
կելով խօսել իւր հետ «գու»-ով, ինչպէս առաջ:

Սրդարե մի ժամանակ նրանք լնկերներ էին և
բաւական մօտիկ լնկերներ: Հարիգեանը գիւղական
քահանայի որդի էր, սկզբնական կրթութիւնը ստացել
էր Դիմաքսեանի ծննդավայր քաղաքի հոգեոր գլու-
ցում: Յետոյ նա իւր մի վաճառական քեռիի օգնու-
թեամբ տեղափակվել էր Թիֆլիզ և մաել բէալական
գոլոսյ: Փանդխութեան մէջ երկու հայրենակից պա-
տանիները լնկերացել էին և գեռ այդ ժամանակ ար-
դէն նրանց ապագայ հայեացքների մէջ պարզվեց մի
խիստ տարբերութիւն:

Մինչ Դիմաքսեանի երեակայութիւնը պատանե-
կական հասակում զարմանալի թռիչքներ էր անում,
մինչ նա փայփայում էր մի իդէալ, որ քանի գնում
այնքան զարդանում էր, հասունանում և բարդանում,
Հարիգեանը, այդ լուս, սառն և միշտ իւր գասերով
զբաղված պատանին, հիմնում էր իւր հայրենակիցի
զբաղված լինելով գիւղական շրջանում, նա տեսել էր
մնված լինելով գիւղական շրջանում, նա տեսել էր
չըաւորութեան դառնութիւնները և մասամբ փորձել
իւր վրայ: Եւ իւր համար լոիկ կազմել էր մի ուրիշ,
ուրոյն գաղափար թէ իւր ապագայի և թէ առհասա-
րակ կեանքի մասին, մի գաղափար, որի առջև նաև
մանում էին և գրեթէ ոչնչանում բոլոր միւս գաղա-
փարները:

Մարդկանց թշուառութեան հիմնաքարը նա հա-

մարում էր աղքատութիւնը։ Արանից էին ծագում նաև տղիսութիւնը, փոխադարձ նախանձը, ատելութիւնը և թշնամութիւնը։ Երբ Դիմաքսեանը նրա մօտ ողեւ որպած խօսում էր ժողովրդի բարոյական վերածնութեան մասին, նա պիտում էր, թէ ոչինչ վերածնութիւն չի կարելի մտցնել մի ժողովրդի մէջ, ուր մարդկանց ամբողջ ժամանակը և բոլոր հոգեկան ոյժերը սպառվում են ստամոքսի համար։ Եւ ժողովուրդ առելով, Հարիգեանը միշտ աչքի առջեւ ուներ իւր դիւզի համայնքը։ Այստեղ էր հիմք առել և այստեղից էր սկսկում նրա ամբողջ աշխարհայեցողութիւնը, որ շատերին թւում էր նեղ, սահմանափակ։ Եւ որքան նրա միաքը լուսաւորվում էր, այնքան սիրաը մօտենում էր այդ համայնքին։ մի բան, որ շատ քիչ դիւզացի ուսանողների մէջ էր նկատվում։

Մոսկայի գիւղատնտեսական ճեմարանի երրորդ կուրսը նոր անցած, նա հիւանդացաւ և ստիպվեց վերադառնալ հայրենիք։ Քիչ ժամանակից յետոյ այստեղ բոլորովին կաղգուրվեց, բայց հայրը շրկոմեցաւ, որ նա նորից գնայ հիւսիս։ Այն ժամանակ նա վճռեց անպատճառ, ինչպէս և լինի շարունակել իւր ուսումը արտասահմանում և թախանձեց հօրը՝ ոչինչ շրխնայել։ Գիւղական համեստ քահանան, որ ինքը հազիւ գրել կարդալ գիտէր, հասկանում էր գիտութեան ոյժը։ Նա գրաւ գրեց իւր այդին, պարագի մէջ ընկաւ, որպէս զի իւր որդուն կրթված տեսնի։

Չորս տարի Հարիգեանը արտասահմանում վարեց այնպիսի սուր կեանք, որ ոչ մի աղքատ ուսանող չէր վարել։ Վերջապէս, նա հասաւ իւր նպատակին, վերադարձաւ հայրենիք գիւղատնտեսական գիտութիւն-

ների գործնական և տեսական պաշարով։ Նա սկսեց օգնել իւր եղբայրներին, որ պարագվում էին գինեւգործութիւնով։ Բայց իւր մտագրութիւնները իրագործելու համար նրան պակասում էր մի բան—դրամագլուխ, որ ոչ նրա հայրը ուներ և ոչ եղբայրները ունեին։ Հենց այդ միջոցին Դիմաքսեանը հրաւիրեց նրան իւր կալուածները կառավարելու, և նա ուրախութեամբ ընդունեց այդ հրաւերը։

—Արգեօք շատ փող պէտք է ուղարկէիր ինձ համար, —հարցրեց Դիմաքսեանը ժպտալով։

—Այնքան, ինչքան խոստացել էի նամակում։ Այդ ինձ բաւական չէր լինիլ։ Իմ այստեղ գալուս մի պատճառն էլ այն է, որ քեզ համողեմ՝ շատ էլ ժլատ շրմնես իմ վերաբերմամբ։

—Ի՞նչ արած, ստիպված եմ ժլատ լինել։

—Ինչու, միթէ ես այդքան աղքատացել եմ։

—Դու աղքատ չես, բայց ես ուզում եմ, որ աւելի հարստանաս։

—Աղագայում։ Ո՛չ, ես այդ բանին համաձայն չեմ։ Լսիր, Հարիգեան, գուցէ ես քո աչքում մի փուըը թեթեամիտ երեամ, բայց ուղղոն ասած, իմ նիւթական աղագայի մասին ես բոլորովին չեմ մտածում։ Ինձ հարկաւոր չեն ոչ խոշոր գումարներ և ոչ մեծ կալուածատիրոջ անուն, թէկ, համաձայն եմ, փողը մեծ ոյժ է մեր ժամանակում։

Հարիգեանը, լաւ ճանաչելով Դիմաքսեանին, ոչինչ չասաց, բայց գլուխը բացասական կերպով շարժեց, որ արտայայտում էր թէ զարմանք և թէ անհամաձայնութիւն ընկերոջ ասածին։

Կէս ժամ անցած նրանք պատում էին տան առ-

չեւ տարածված պարտիղում: Այստեղ ևս նկատվում էին փոփոխութիւններ: Ծառուղիները հարթվել էին, մաքրվել, կանոնաւորվել, հնագարեան պարիսպը նորոգվել էր: Երեսում էին տեսակ-տեսակ նոր տնկած ծառեր, բոյսեր-ծաղիկներ: Եւ այդ բոլորը Հարիդեանի գործն էր:

Պարտիզանը նոյն մարդն էր, որ ծառայում էր Մարդար աղայի ժամանակից: Այժմ ոչ ոք նրա վրայ չէր գոռում, ոչ ոք չէր հայհոյում նրան, մանաւանդ ձեծում: և նա աւելի սիրով էր աշխատում: Նա ուշրախուրախ առաջնորդում էր իւր պարոնին, ցոյց տալով բոլոր փոփոխութիւնները: Պարտէզը, բացի զեղեցկանալուց և հարստանալուց, այժմ մի որոշ երամուտ էլ տալիս էր, աւելացած պտուղները և միրգերը ծախվում էին մրգավաճառներին:

Մի ժամի չափ անցուդարձ անելով պարտիղում, նրանք գնացին քաղաքի կենտրոնական շուկան: Այստեղ Դիմաքսեանը ունէր մի շարք խանութներ և մի քարվանսարայ, ուր կանգ էին առնում քաղաք մտնող սայլերը և փուրդօնները: Մարդար աղայի կենդանութեան ժամանակ խանութները կիսաւեր դրութեան էին հասել, քարվանսարան քայքայվել էր, բակը պահավում էր կեղտոտ և միշտ լիքն էր ձիերի ու տաւարի աղրի կոյտերով: Այժմ խանութների փլատակված պատերը նորոգվել էին, մաշված ծածկոցները և դռները փոխվել էին, ներկվել: Քարվանսարայի բակը մաքրվել էր, քարով ծածկվել: Հարիդեանը ասաց, թէ ուշղում է շուտով այդ բակի շուրջը կառուցանել մի նոր երկյարկանի շինութիւն, վերեսում բնակարաններ, ներքեսում խանութներ:

Ճաշից յետոյ նրանք գնացին քաղաքի շրջակայ այգեստանը: Հարիդեանը Դիմաքսեանին ընդարձակ քարաշէն գարբասով առաջնորդեց մի մեծ այգի: Ծառերը նոր էին կանանչել, սլարալու երկիրը դեռ խոնաւ էր անցեալ գիշերը եկած անձրեից: Խաղողի որթերը արգեն տերեններ էին արձակել և կանանչ սըփռոցի պէս ծածկել մի ընդարձակ տափարակ: Հեռուում երեսում էր մի շինութիւն կարմիր աղիւսից: Իրիկնադէմի արեի ճառագայթները լուսաւորում էին նրա կանանչագոյն երկաթեայ եռանկիւնի կտուրը: Այս շինութիւնը նոր էր և կառուցվել էր գինիի ու օղիի գործարանի համար: Դէպի ճախ երեսում էր մի ուրիշ աւելի մեծ տափարակ խաղողի որթերով ծածկութեան աւելացանակ այդ տարածութիւնը մնում էր անմշակ: Այժմ Հարիդեանը միացրել էր նրան մեծ այդիի հետ և սկսել շահագործել:

—Ահա ինչի վրայ են փողերը ծախսվում, — ասաց կառավարիչը, Դիմաքսեանին առաջնորդելով աղիւսեայ շինութեան ներսը:

Այստեղ դրված էին մի քանի պղնձեայ նոր կաթսաներ: Մի որմնագիր իւր օգնականի հետ շինում էր գործարանի վառարանները: Գրսում լցված էին մի խումբ մշակներ: ումանք հող էին փորում, ումանք խաղողի որթերի համար ցիցեր էին տնկում:

Հարիդեանը պատմում էր իւր ձեռնարկութիւնների մասին այն սասան դրական եղանակով, որ յատուկ է գործնական մարդուն: Նա նկարագրում էր այն մօտիկ աղագան, երբ Դիմաքսեանի ըոլոր կալուածների մշակութիւնը պիտի հասնէր ցանկալի զար-

դացման և բարդաւաճման:

Դեռ շատ բան կայ անելու, եթէ միայն թոյլ կը տաս: Գինեգործութեան համար անհրաժեշտ է արտասահմանից հրաւիրել մի հմուտ վարպետ: Ժամանակ է մեր թթու գինիներից ձեռք վերցնել: Ափսոս է մեր խաղողը, կարելի է նրանցից տասը տեսակ խմիչքներ պատրաստել: Ես ինքս ուրախութեամբ կը պարապվէի միայն գինեգործութիւնով: Բայց աշխատանքի բաժանման մասին առ այժմ մտածել չի կարելի, ուրիշ շատ գործեր ունեմ: Պէտք է մի շոգեշարժ ազօրիք շինել: Վարուցանք անելու և հնձելու համար վատ չէր լինիլ մեքենաներ բերել տալ: Կարելի է այսաեղ մի ուրիշ գործարան շինել միրգ չուրացնելու համար: Այս բոլորը փող է պահանջում, և դու ասում ես, որ ես ժլատ չըլինեմ...

Օրն արդէն մթնելու վրայ էր, երբ նրանք վերադան քաղաք: Ամբողջ երեկոյ նրանք խօսում էին գործերի մասին: Գիմաքսեանը երախտագիտաբար սեղմեց Հարիդեանի ձեռը, յայնելով նրան իւր շնորհակալութիւնը: Նա հիացած էր իւր կառավարչի աշխատափութեան վրայ և, միենոյն ժամանակ, ուզում էր իմանալ նրա եռանդի գրդիշ գաղափարը: Նա չէր հաւատում, թէ խելօք, կրթված, եւրոպական քաղաքակրթութեան ճաշակն առած մի երիտասարդ կարող է հոգեկան անթերի հաճոյք գտնել լոկ նիւթական գործունէութեան մէջ: Նա ուզում էր համոզվել, որ Հարիդեանի արտաքին գործնականութեան տակ թաղնված է մի հասարակական գաղափար, որ նա չի ուզում պարզել:

Մի շաբաթ անցած նա այցելեց մի քանի գիւ-

ղեր, ուր գտնվում էին նրա վարելահողերը: Այս ճանապարհորդութիւնը տեսեց երեք օր, և նա տուն վերադառն նորանոր տպաւորութիւնների տակ: Նա գիտէր գիւղական ժողովրդի մտաւոր և անտեսական վիճակը, բայց գիտէր ոչ այնքան գործնապէս, որքան տեսականապէս—գրքերի և լրագրների միջոցով: Ճշմարիտ է, մի քանի տարի առաջ նա ճանապարհորդեց Անդրկովկասի մի մասում, տեսաւ գիւղեր, բայց արդեօք այդ ժամանակուայ նրա հոգեկան տրամադրութիւնն էր պատճառը, թէ մի ուրիշ բան, այդ մի ամսուայ ընթացքում նրա համար չէր պարզվել գիւղացու գրութիւնը այնպէս, ինչպէս պարզվեց այժմ, երեք օրուայ մէջ:

Եւ պարզողը Հարիդեանն էր: Գործնական մարդը նրա ուշագրութիւնը դարձեց այն բոլոր առօրեայ կարիքների վրայ, որ կազմում էին մի ամբողջ ժողովրդի կեանքը: Նրանք անցան մի գիւղով, որի բնակիչները հողի պակասութիւնից ազատվելու համար պատրաստ էին իրանց «Հարազատ զաւակներին գրաւդնել», ինչպէս ասում էր Հարիդեանը: Անցան անընդունակ, քարքարոս հոգերով, ուր գիւղացին գերինական աշխատանք էր գործ գնում իւր օրական պարեկան ժամանակ Հարիդեանը ցոյց տուեց խորդութորդերով լի նեղ ուղին և նկարագրեց այն բոլոր վասաներն ու շարիքները, որ առաջանում էին կանոնաւոր ճանապարհների բացակայութիւնից:

Ոչ մէկը նրանց այցելած գիւղերից ուսումնարան չունէր: Երեխաները թափառում էին փողոցներում, խաղալով հորթերի, շների և հաւերի հետ, մերկան-

գամ, գլխաբաց, ոտարոբիկ։ Ամեն տեղ թագաւորում էր մտաւոր մթութիւն, մի թանձր, յուստահատեցուացիչ խաւար, ուր ոչինչ և ոչինչ մխիթարական չէր նշմարվում։ Բայց արդեօք այդ խաւարի մէջ գեգերավողները գոնէ զգում են լուսոյ կարօտը։

—Ոչ, —պատասխանեց Հարիդեանը դրական եղանակով, —նրանք միայն մի կարօտ են զգում—տնտեսական։

—Դուց կարելի է հասկացնել նրանց, որ բացի չքաւորութիւնից ունին և մի ուրիշ թշնամի—տղիւտութիւնը։

—Ես շատ անգամ եմ խօսել նրանց հետ այդ ժամին, շատ եմ բացատրել դրագիտութեայն նշանակութիւնը, նրանք միշտ լուս ականջ են դնում այն պէս, որ մարդ կարծում է համոզվեցին։ Բայց տեսնում ես նայեցին միմեանց երեսին և յետոյ անտարքեր արտասանեցին. «Աղա, շատ լաւ ես խօսում»։

—Ուրեմն համաձայնվում են։

—Այս, բայց պէտք է տեսնել, թէ ինչպէս և ինչ եղանակով են ասում. «Աղա, շատ լաւ ես խօսում»։ Կարծես, այդ խօսքերով մարդու գլխին սառն ջուր են ածում. Պատահում է, որ ես մինչև անգամ բարկանում եմ նրանց վրայ և դուռում. «Յիմարներ, դուք ձեր զաւակների համար պէտք է ուսումնարան պահեք»։ Բայց նրանք հարցնում են. «Բաս վարդապետի վոզը ըրտեղից գտնենք»։ Եւ միայն այս հարցը ինձ միշտ նեղն է գցում, ես մտիկ եմ անում նրանց ողորմելի դէմքերին և կամայ ակամայ լուսում եմ։

—Ուրեմն քո կարծիքով ոչինչ միջոց չըկայ ժողովրդի մէջ լոյս տարածելու, —զոչեց Դիմաքսեանը մի

քիչ վրովված Հարիդեանի սառնարտութեան դէմ, —ինչու չէ. կայ։

—Ո՞րն է։

—Իմ կարծիքով այն, որ մեր կրթված երիտասարդները մի փոքր օգնեն ժողովրդին, չըփախչեն նրանից այնպէս, ինչպէս այժմ։

—Աս, դա շատ սովորական դարձուած է։

—Բայց զուտ ճշմարտութիւն է։

—Երկի, դու ուզում ես, որ ամենքն էլ գան քեզ կաման գիւղատնտեսութեամբ պարապվեն, չէ։

—Թէկուղ հէնց այդ լինի իմ ցանկութիւնը, չես համակրում։

—Համակրում եմ, բայց, ասա խնդրեմ, ինչ օգուտ ունեն գիւղացիները գիցուք հէնց քո այժմեան գործունէութիւնից։

—Ես այդ ժամին չէի կամենալ խօսել գոնէ այժմ, —պատասխանեց Հարիդեանը սառն կերպով, —բայց քանի որ հարցնում ես, կըբացատրեմ...

XVI

Նրանք նստած էին Մարդար աղայի սենեակում առանձին. Դիմաքսեանը փափագում էր ուսումնասիրել իւր ընկերոջ ներքին աշխարհը, թափանցել նրա միրտը և տեսնել կայ արդեօք այնտեղ մի բարձր գաղափար։ Ահա ինչու նա խորին հետաքրքրութեամբ, աչզարդ յառած Հարիդեանի երեսին, սպասում էր նրա բերլ բացարձութեամբ։

—Գիտես ինչ, —սկսեց Հարիդեանը հանդարտ ձայնով, —ես առհասարակ այն մտքի դէմ եմ, թէ իրը

հասարակական գործիչը պէտք է լինի անսահման անձնուէր, անշահասէր: Լաւ է որ այդպէս լինի, բայց դա մի գեղեցիկ և անիրազործելի երազ է: Աշխարհիս երեսին, իմ կարծիքով, չըկայ ոչ անպայման անձնութիւն, ոչ առասպելական անշահասիրութիւն: Եւ եթէ կայ, դա միայն հազուագիւտ ընտրեալների յատկութիւններն են, ընտրեալներ, որոնք երկար դարերի ծնունդ են: Մարդիկ սովորաբար ուրիշների օգտի համար դործում են երկու շարժառիթներից դրդված—բարոյական և նիւթական: Բարոյականը—փառասիրութիւնն է, եթէ չասենք փառամոլութիւնը, նիւթականը—շահասիրութիւնն է, եթէ չասենք շահամոլութիւնը: Երկու դէպքում էլ չըկայ և չի կարող լինել անպայման ինքնամոռացութիւն:

—Փառասիրութիւնից դրդված ուրիշների համար գործելը,—նկատեց Դիմաքսեանը,—ինձ համար դեռ հասկանալի է, բայց ինչ ասել է շահասիրութիւնից գործել, այդ ինձ համար անհասկանալի է:

—Կըպարզեմ որքան կարող եմ, ես աշխատում եմ քեզ հարստացնել, որովհետեւ ինքս էլ օգուտ ունիմ քո հարստանալուց: Գուցէ, եթէ դու ինձ մի յայտնի տոկոս չըտայիր քո եկամուտներից, եթէ ծառայէի մի որոշ ոռնիկով—աւելի պակաս եռամդով վերաբերվէի քո գործերին կամ ուղղակի անտարեր լինէի: Բայց այժմ ես քո գործը իմն եմ համարում: Ահա այսուղ իմ նիւթական շահը իմ եռանդի առաջին ստիմուլն է:

—Ընդունենք, որ այդպէս է. օրինակը պարզ է, բայց ոչ այնքան յաջող: Գու կապեցիր միմեանց հետ քո և իմ շահերը, բայց մենք երկու անհատներ ենք,

և դու ծառայելով իմ գործերին, չես կարող ասել, թէ ծառայում ես հասարակութեանը:

—Թող Աստուած հեռու պահի ինձ այն մտքից, որ երբ և իցէ ինձ հասարակական գործիչ համարեմ: Ոչ, ես այդ չէի ուզում ասել: Բայց կարծում եմ, որ աշխատելով ինելացի կերպով շահագործելքո կալուածները, դրանով այսպէս թէ այնպէս հարստացնում եմ երկրի ընդհանուր արդիւնաբերութիւնը:

—Օրինակ:

—Օրինակ, իմ և քո շահերը պահանջում են մի գիւղից միւս գիւղ ճանապարհ չինել, մենք շինել ենք տալիս, և դրանով հեշտացնում ենք բոլոր գիւղացիւների համար հաղորդակցութեան միջոցները: Մեր ների համար հաղորդակցութեան միջոցները: Մեր անձնական շահերը պահանջում են մի շոքեշարժ աղօրիք ունենեալ—մենք շինում ենք, և դրանով միջոց ենք րիք ունենեալ—մենք շինում ենք, և դրանով միջոց ենք տալիս գիւղացիներին կարճ ժամանակում և էժան տալիս գիւղացիներին կարճ ժամանակակից եղանակով մշակում ենք մեր հողերը, մեղանից օրինակ են առնում մեր դրացիները: Այս դէպքում մենք դառնում ենք մի տեսակ ուսուցիչ, քաղաքակալիթութիւն տարածող գործօններ:

Մի վայրկեան նա լոեց, մի ծխախոտ վառեց և ապա շարունակեց նոյն սառնասրութեամբ և դրական ոճով:

—Ես քեզ ցոյց տուեցի հողեր, որոնք ջրի պահանջութիւնից չեն մշակվում կամ մշակվում են շատ անաջող: Եթէ մեր ծախսով այդ հողերով մի առու անցկացնենք, նախ, մենք ինքներս կունենանք մեծ արկածական համարեն հազուաշահ, երկրորդ, գիւղացիները մեզ կըհամարեն հազուաշահ, երկրպագութիւն կըտան, գիւտ բարերարներ, մեզ երկրպագութիւն կըտան,

կըպաշտեն: Ես կարող եմ հարիւրաւոր օրինակներ առաջ բերել, բայց կարծեմ այսքանն էլ բաւական է: Այս է գործնական մարդու բերած օգուտը, այսինքն ինձ նման մի մարդու, որ, եթէ ուզում ես, միայն իմ անձնական շահերը ունիմ աչքի առջև: Բայց ինչեր, կարող է անել մի ուրիշը, գիցուք հէնց քեզ նման մի գաղափարական մարդ: Դու ունիս բաւական մեծ հարստութիւն, և նա օրից օր պէտք է աւելանայ: Եթէ չեմ ուզում խոշոր գրամատէր կամ, ինչպէս ասում ես, մեծ կալուածատէր լինել, շատ գեղեցիկ մի լինիլ: Բայց մի թողնիր, որ քո հարստութիւնը եղուր տեղը անօդուտ մնայ: Ե՞կ այստեղ, բաց արաքս հաշուով ուսումնարաններ աղքատ գիւղերում, թոնզ հարիւրաւոր գիւղական խեղճ մանուկներ ձրի կրթութիւն ստանան: Հիմնիր մի գիւղատնտեսական գոլոց կամ մի օրինակելի ագարակ և թող այնտեղ գիւղացիները գասեր առնեն գիւղատնտեսութեան զանազան ճիւղերի վերաբերմամբ: Եւ միթէ այս միայն կարող ես անել դոււ Քո առջև գործելու մի այնպիսի ասպարեզ կայ, որ, ճշմարիտ, զարմանում եմ, ինչու դու արհամարհում ես այդ ասպարեզը և յուսահատ կոիր մզում մի ամբողջ հասարակութեան դէմ:

Նա ստքի կանգնեց, մի անգամ անցաւ սենեակիր
միւս ծայրը, յետ դարձաւ, նորիդ նստեց և շարունակեց.

— Ես ինքս մեծ հետաքրքրութեամբ հետեւում
եմ քո գործունէութեանը և, անկեղծ եմ ասում, զար-
մանում եմ քո եռանդի, հոգեկան ոյժի և մտաւոր
կարողութեան վրայ: Տեսնում եմ, որ գու մեր թշմ-
րած հասարակութեան մէջ մտցրել ես նոր մտքերի
մի թարմ հօսանք: Այս, այդ ամենը հարկաւոր է,

Հիմնալի է և ծափահարութեան արժանի, բայց, առ առ խնդրեմ, ինչ վերջ պէտք է ունենայ քո կոփուը Զեմ ասում քեզ համար, քեզ այնքան պէտք է հալածեն, որ վերջը ոչնչացնեն ինչպէս մի մարդու, որ աշխատում է քանդել խաւար ամբոխի համար սրբութիւն համարված վիասակար նախապաշարմունկները: Այս, ինչ օգուտ, անմիջական օգուտ, պէտք է ունենայ քո դործունէութիւնը այն թշուառ ժողովրդի համար, որին քո աչքով տեսար: Մինչդեռ հէնց այդ ժողովարդն է կարօտ վերակենդանութեան և հէնց նրա անմիջական շահերի համար և նոյն խկ նրա շրջանում պէտք է դործել:

Վերջին խօսքերը արտասանելիս Հարիդեանի կոչածայնի մէջ զգացվեց բաւական մեղմ հնչիւն։ Կարծես, նա փոքր ինչ զգացվել էր, երկար տարիներից յետոյ առաջին անգամ այդպէս մտերմաբար խօսելով իւր նախկին ընկերոջ հետ։ Դիմաքսեանը լուռ լսում էր՝ առանց հերքելու նրա ասածները կամ համաձայնութեան որ և է նշան ցոյց տալու։ Նա, կարծես, մըտքում կշռում էր Հարիդեանի իւրաքանչիւր խօսքը։ —Կարելի է ես սխալվում եմ, —շարունակեց Հա-

— Կարսլի 3 Տ ՀՀ
բիգեանը, — բայց իմ խորին համոզմունքը այս է. դու
այստեղ, քո ծննդավայր հողի վրայ, կարող ես աւելի
օգտակար լինել, քան թէ այնտեղ, ուր այժմ գործում
ես: Այս պատճառով ես շատ ուրախ կը լինէի, որ դու
թողնէիր ամեն ինչ և դայիր այստեղ գործելու: Այն
ժամանակ քեզ հետ կարելի է ես էլ մի ըիշ գաղա-
փարական մարդ դառնայի և միայն իմ անձնական
շահերից գրդված շաշխատեի: Դու կը տայիր ինձ ծրա-
գիր — ես կը կատարէի, դու կը լինէիր կարգադրող — ես

հրամանակատար, այդ ինձ համար թէ հաճելի կը լինէր և թէ բարոյապէս օգտակար:

Մի ժամանակ գրեթէ միենոյնը առաջարկում էր ԱՌ Ժամանականը: Բայց այնտեղ չէր զգացվում այնչափ հաւատ, համոզմունք, որչափ Հարիդեանի խօսքերի մէջ: Գուցէ այդ նրանից էր, որ իդէալիստի բերանով խօսում էր մի ժամանակաւորապէս վհատված հոգի, մի վշտացած սիրո, կեանքի անաջող գէպքերի տպաւորութեան տակ: Դիմաքսեանը զգաց, որ Հարիդեանը համեստութիւնից է ասում, թէ իւր գործունէութեան շարժառիթը անձնական շահերն են: Նա կարծում էր, եթէ այդ մարդը լինէր նրա հարստութեան լիազօր տէրը, նոյնը պէտք է անէր, ինչոր առաջարկում էր նրան:

Այս խօսակցութիւնից մի քանի օր անցած Դիմաքսեանը մի անդամ ևս Հարիդեանի հետ ճանապարհորդեց գիւղերը և այս անդամ աւելի մօտիկ ծանօթացաւ ժողովրդի կարիքների հետ: Այնուհետեւ յաճախ նա մտածում էր Հարիդեանի առաջարկութեան մասին: Հետեւ արդեօք նրա խորհրդին, թողնել գործունէութեան այժմեան եղանակը, կտրել բոլոր կապերը մօտիկ անցեալի հետ և ընտրել նոր ասպարեզ:

Նա տատանվում էր, կասկածում, թէ կարող է աւելի օգտաւէտ լինել այդ ասպարիզում: Կար մի կէտ, որ նրա առջեներկայանում էր ինչպէս մի մեծ խոչնդոս, իւր սրտի մէջ նա չէր գտնում բաւականաշափ սէր գէպի գաւառական կեանքը: Նա զգում էր, որ ոչ մի նպատակ չի կարող իրան երկար ժամանակ պահել մի շրջանում, ուր չէր տեսնում մտքի պատերազմի համար քիչ թէ շատ ընդարձակ ասպարեզ: Ոչ,

ոչ, նա իւր մէջ չէ դժնում խաղաղ, անխռով գործունէութեան ձգտում, նա ծարաւ է հասարակական կըռւի: Նա չէ կարող շնչել և ապրել առանց հաւասար թշնամիների:

«Աւելի լաւ է միշտ հալածվեմ, միայն թէ կըռվեմ այդ անշարժ հասարակութեան նախապաշտումների գէմ, քան թէ թմրած կեանք վարեմ մի խուլ անկիւնում: Ի՞նչ կարող եմ անել գիւղական ժողովրդի համար, ճանապարհները շինել, ջրեր անցկացնել նրա հողերով, ուսումնարաններ բաց անել: Այդքողորը լաւ գործեր են, մեծ գործեր են, բայց ինձ ըների ընթացքում: Միթէ երբ և է երեակայել էր, թէ իւր կեանքը պէտք է դնի մի նեղ շրջանակի մէջ: Եւ միթէ նա այդ գաղափարն էր ֆայֆայել տարիների ընթացքում: Միթէ երբ և է երեակայել էր, թէ իւր կեանքը պէտք է դնի մի նեղ շրջանակի մէջ:

«Ներքից սկսել, ինչպէս ասում էր ԱՌ Ժամանակը ըներքից սկսել, իսկ եթէ եւ ինչպէս կրկնում է այսօր Հարիդեանը: Իսկ եթէ ես այդպիսի ձգտում չունեմ, միթէ կեղծեմ, ստեմ և սկսեմ գործել հակառակ իմ զգացումների: Ոչ, չեմ կարող իմ զգող գալ լինի անհամեստութիւն, ուզում, չեմ կարող թող գալ լինի անհամեստութիւն, բայց ես իմ մէջ զգում եմ «վերեից» ազդելու ոյժ: Այս, ես չեմ կարող հասարակ գործիք լինել, բայց կարող եմ գործիքներ պատրաստել: Ես այդ կապահացանեմ և ընդունակ եմ ապացուցանելու: Չէ որ ցուցանեմ և ընդունակ եմ ապացուցանելու: Չէ որ կողմից ինձ հալածում են, միւս կողմից կան եթէ մի կողմից ինձ հալածում են, որոնց վրայ ես ազգեցութիւն եմ արել...»

Գարձեալ նրա միաքը պարզվեց, սիրալ դրդու-

վեց։ Դարձեալ նրա աչքի առջև պատկերացաւ մի լուսաւոր ապագայ, դէպի ուր վճռել է և պէտք է դիմէ իւր ամբողջ կեանքի ընթացքում։ Անցան բոպէական տատանումները, կասկածները և նորից նա հետաքրքրվեց տեղական հասարակական կեանքով։ Նա հանդիպեց նոյն սիրալիր ընդունելութեան, նոյն յարդանքին, ինչ որ առաջ, նրկին նրան շրջապատեցին այն մարդիկ, որոնց մտքի և սրտի վրայ նա ազդեցութիւն էր ունեցել։ Ոչ ոք կասկածանքով չէր վերաբրդում դէպի նա։ Երկի, կամ նրա մասին տարածված լուրը չէր հասել իւր հայրենի քաղաքը կամ հասել էր, և ոչ ոք նշանակութիւն չէր տալիս նրան։

Օրերը անցնում էին օրերի ետևից, և նա գեռ չէր մտածում թիֆլիզ վերադառնալու մասին։ Այն դժացումները, որ այնքան տանջում էին նրան, այժմ մեղմացել էին և ճնշող ներդործութիւն չէին անում նրա վրայ։ Առաւօտները նա զարթնում էր վաղ, զրունում էր պարախզում, խաղում էր իւր քրոջ զաւակների հետ, ապա փակիւմ էր իւր սենեակում և երկար ժամանակ պարապվում։

Երբեմն միայն առանձնութեան մէջ նրա սրտում բարձրանում էր մի թեթև փոթորիկ։ Նա յիշում էր իւր անցեալի ամենածանր բոպէները և ամենից պարզ ու որոշ պատկերանում էր այն վերջին երեկոն, երբ նա խորհել էր ինքնապանութեան մասին։ Ոչ, ոչ, այլ ևս նա այդչափ չի յուսահատվիլ, այդ բոպէները անցան, գնացին անդառնալի։ Այժմ նա բժշկվել է և եթէ ոչ բոլորովին, շուտով, շուտով կըրժվիի։

«Ես զգում եմ, որ իմ մէջ մի ինչ-որ փոփոխութիւն է կատարվում, — դրում էր նա Մսերեանին իւր

վերջին նամակում, — թէ ինչ կըլինի վերջը — չըգիտեմ Բայց յոյս ունիմ, որ դու ինձ այլ ևս այնպէս չետանանիլ, ինչպէս էի մի ժամանակ... Անցեալ նամակումս ես գրել էի քեզ Հարիդեանի մասին, այն, նա հազուագիւտ մարդ է։ Իմ մէջ յզացել է մի միտք — ձեզ երկուսիդ մօտեցնել միմեանց մի ընդհանուր գործով։ Այսպիսի մի գործ կայ, և ես յոյս ունիմ դու յանձն կառնես նրան ծաւայելու։ Բայց առ այժմ քեզ ոչինչ չեմ գրիլ այս մասին, շուտով անձամբ կըտեսնուենք և կըխօսենք... Մի կարծիր, որ այստեղ անգործ նստած եմ, երբէք ես այնպէս զբաղված չեմ՝ եղել, ինչպէս այժմ... Յըտեսութիւն, նամակ մի գրիր, սպասիր ինձ...»

Երբեմն նա կանչում էր իւր մօտ Հարիդեանին, կրկին և կրկին անգամ հարցուվորձ էր անում իւր այցելած գիւղերի մասին։ Առանձնապէս նա հետաքրքրված էր գիւղական մանուկների թուով։ Նա զանազան հաշիւներ էր անում, գրում էր, մտածում և ստէպ ստէպ այցելութիւն անում տեղական թեմական առաջնորդին։

Հարիդեանը հետաքրքրված հարցնում էր, թէ նա ինչու համար է այդ տեղեկութիւնները հաւաքում։ Բայց Դիմաքսեանը ոչինչ չէր պատասխանում։ Մի անգամ նա միայն ասաց անորոշ։

— Ուզում եմ քո աչքին անօդուտ մարդ շերեալ...

XVII

Մօտ երկու շաբաթ անկողնում պառկելուց յետոյ Բարաթեանը կարողացաւ, վերջապէս, ոտքի կանգ-

նել, Բայց նա բոլորովին չէր առողջացել, Բժիշկներից ոմանք խորհուրդ էին տալիս նրան դնալ արտասահման և այնտեղ ենթարկվել մի գժուարին օպերացիայի, եթէ կամենում է մի անգամ և եթ արմատապէս բժշկվել ժառանգական ցաւից, եւ նա մտադիր էր հետեւ նրանց խորհրդին:

Առ այժմ նա կարգադրում էր իւր հայրական գործերը, նա վճարեց իւր բոլոր պարագերը և, ժառանգութիւնը հաստատելով իւր անունով, ապահովեց իրան բոլորովին: Այժմ նա իրան զգում էր աւելի բաղդատուր քան երբ և է զգացել էր: Թւում էր նրան, որ գրամական վարկի հետ նորից ամրանում է և իւր բարոյական վարկը: Հասարակութիւնը այլ ևս առաջուայ պէս չէր զբաղվում նրա ընտանեկան կեանքով, և կարծես ամենքը սկսել էին մոռանալ նրա մասին տարածված անսպասար լուրերը:

Երբեմն նա յիշում էր այրի Բախտամեանից ստացած վիրաւորանքը, բայց յիշում էր վայրկենաբար, առանց երկար մտածելու այդ մասին:

«Բարոյական վիրաւորանքը, ասում էր նա ինքն իրան, այն ժամանակ է աղջու, երբ կատարվում է հրապարակօրէն: Այդ կինը երբէք չի համարձակվիլ ուրիշին հաղորդելու ապահի մասին, ուրեմն ինչն արիւնս պղասորեմ մի չնչին բանի համար: Այն, մարդիկ շատ անգամ ոչինչ բանից իրանց համար տանչանք են ստեղծում: Ճշմարիտ էր ասում հայրս, թէ «ինչքան քիչ մտածես վէրբիդ մասին, այնքան նաքեզ քիչ ցաւ կըսատաճուի...» Այն, այս, չըմտածել, այլ ապրել է հարկաւոր և միայն ապրել...»

Յաճախ նա տեսնվում էր Վերիկեանի հետ: Նրանց

յարաբերութիւնները շարունակվում էին առաջուայ ուղղութիւնով, թէև դգալի էր, որ իրաւաբանը իւր սրտում ամեն կերպ աշխատում էր թագյնել մի տեսակ ատելութիւն դէպի իւր ընկերը:

Առաւոտ էր: Թէյի բաժակը առջելը դրած, Բարաթեանը կարգում էր օրուայ լրագիրները, երբ ներս մտաւ Վերիկեանը բոլորովին անսպասելի: Երբէք նա այդպէս վաղ չէր այցելել իւր ընկերոջը:

—Ես եկել եմ մի անյետածգելի և կարեսը գործի համար,—ասաց նա լուրջ ձայնով,—և այսպէս վաղ եկայ, որ քեզ տանը տեսնեմ: Լոիր, այրին ուղում է Պետութիւնի կտակի դէմ դատ բաց անել:

—Միթէ,—արտասանեց Բարաթեանը անտարբեր:

—Ես այդ իմացայ երէկ դիշեր կլուբում: Այն տեղ քեզ շատ պտրեցի, բայց չըտեսայ...

—Երէկ թատրոնից գնացի կրուժոկ ընթրելու: Ո՞ւմ միջոցով է ուղում դատ բաց անել:

—Փաստաբանի:

—Միթէ կայ այնպիսի փաստաբան, որ այդ գործը յանձն առնի:

—Կան փաստաբաններ, որոնք ոչ մի գործից չեն հրաժարվում: Այրին մի այդ տեսակ մարդու է դիմել:

—Աս, —արտասանեց Բարաթեանը անորոշ, —ուրեմն նա քո և Ամբակում Աֆանասիեվիչի դէմ վատ խաղ է սկսում...

—Ինչու միայն իմ և Ամբակում Աֆանասիեվիչի, գուցէ և մի ուրիշի դէմ, —նկատեց Վերիկեանը իսուրամանկութեամբ:

Լուրը Բարաթեանի վրայ վատ տպաւորութիւն էր գործել, իսկ իրաւաբանի վերջին նկատողութիւնը

աւելի վախեցրեց նրան, նորից նրա աչքի տռջեւ պատկերացաւ դատաստանի խայտառակ պեսպեկտիւը, նորից նա իւր անունը, պատիւը և վարկը տեսաւ հասարակութեան բամբասանքին ենթարկված:

—Միթէ տիկինը այդ բանը կանէ, —հարցրեց նա, դեռ ևս կարողանալով զսպել իւր վրդովմունքը:

—Եթէ չըկամենայ էլ, փաստաբանը անպատճառ կըհամոզի նրան անել:

—Բայց կըյաջողվի՞ նրան դատը:

—Դժուար է նախագուշակել. օրէնսդրութեան մէջ կան այնպիսի բաց տեղեր, որոնք շատ անդամ ժարպիկ փաստաբանի ձեռքում յաջող դործիք են դառնում, ես այդ դատից վախենում եմ:

—Վախենալով բան չի լինի, պէտք է դործել. Ի՞նչ ես մտադիր անելու:

Վէքիլեանը մի քանի վայրկեան մտածեց, ապա դրական եղանակով պատասխանեց.

—Իմ խորին համոզմունքով քանի որ դործը ըսկաված չէ, պէտք է նրան խափանել: Եթէ այրին մինչև անդամ ըոլորովին էլ դատը տանուլ տայ, դարձեալ դատաստանական պրօցեսը վտանգաւոր է: Չեմ կարող ասել, թէ նա ում նիւթականին կրծսասի, բայց թէ բարոյական վնաս կունենայ—դա անհերքելի է:

—Չեմ հասկանում ասածդ:

—Պէտք է ասած, —շարունակեց Վէքիլեանը նոյն եղանակով, —որ այդ տեսակ դործերում շատ անդամ մի երրորդ, չորրորդ, մի չէզոք համարված մարդ աւելի է պատժվում, —բարոյապէս եմ ասում, —քան թէ դատին անմիջապէս խռոը մարդիկ...

Այս անդամ ակնարկը կարօտ չէր բացատրու-

թեան. ռակայն Բարաթեանը դարձեալ փորձեց իրան շրդիտցող ձեւացնել և ասաց.

—Այն, քո ասածը ճիշդ է, այդ պատահում է, ուրեմն աշխատիր դատի առաջն առնելու...

—Ես կըկամենայի, որ դու էլ մեղ օգնես այս դործում:

—Ես ինչ կարող եմ անել:

—Պէտք է փաստաբանին կաշառել:

—Կաշառել:

—Այն, դա միակ միջոցն է խայտառակ դատից ազատվելու համար:

—Էէ, շատ լաւ, ինչու չես կաշառում:

—Երէկ գիշեր Ամբակում Աֆանասիեվիչը և ես վճռեցինը այս դործը քեզ յանձնել:

—Ի՞նձ:

—Այն:

—Ի՞նչու:

—Որովհետեւ թէ ինձ և թէ նրա համար անյարմար է:

Բայց ես ինչու պիտի խառնվեմ այդ դործին:

—Այդ, կարծեմ, քեզ աւելի յայտնի պէտք է լինի, քան թէ ինձ...

Բարաթեանը նայեց ընկերոջ երեսին և, աշխատելով անփոյթ ժպտալ, արտասանեց.

—Դու, երեխ, ինձ հետ կատակ ես անում:

—Երբէք:

—Ուրեմն աւելի պարզ խօսիր:

Երաւաբանը մի առժամանակ լռեց, սեղմեց շրթունքները ատամներով և, վերջապէս, ուղիղ նայելով Բարաթեանի երեսին, ասաց.

— Լսիր, դու միշտ եղել ես զգոյշ, խոհեմ և խերօք: Հէնց այդ յատկութիւններիդ համար ես քեզ միշտ յարգել եմ և այժմ էլ յարգում եմ: Այս անգամ էլ եղիր զգոյշ, խոհեմ և խերօք, մի ստիպիր ինձ ամեն բան բացատրել, հասկացիր, որ քո անունին վտանգ է սպառնում:

Բարաթեանը լոեց և ընկաւ մտատանջութեան մէջ: Նա չէր կամենում իսկոյն, առանց ընդդիմութեան, ինթարկվել իւր ընկերոջ կամքին:

— Դիտես,—ասաց նա, — դու ինձ շատ վատ առաջարկութիւն ես անում. կաշառել և կաշառք վերցնել—միւնոյն յանցանքն է:

— Յանցանք, — կրկնեց Վէքիլեանը, հեղնօրէն ժպտալով, — երանի քո և իմ յանցանքը միայն այդ լինէր... յամառութիւն մի անիր, դու ստիպված ես երկու չարիքից փոքրագոյնը ընտրել:

— Ինչու եմ ստիպված, — գոշեց Բարաթեանը, վերջապէս, չըկարողանալով զսպել իւր վրդովմունքը:

— Ինչու... Լաւ, քանի որ ուզում ես իմանալ, լոիր ուրեմն: Ստիպված ես դու, ինչպէս և՛ ես, որովհետեւ այրիի դատը կարող է մեր երկուսի անունին կպցնել մի կարճ ածական—դող:

— Վէքիլեան...

— Իզուր ես վրդովվում: Այս, ես ու դու գող ենք: Զանազանութիւնը միայն այն է, որ ես հասարակ գող եմ. իսկ դու պատուի գողք թողնում եմ քեզ դատելու, թէ որն է այս երկուսից աւելի վատը: Բարաթեան, մենք միմեանց շատ լաւ ենք ճանաչում, այնպէս չէ, տեսնում ես, որ ես ճշմարտութիւնը քեզ զանից չեմ թագցնում: Ուրեմն դու էլ ինձ հետ ան-

կեղծ եղիր գոնէ մի օր, մի ժամ: Ամբակում Աֆանասինիչը և ես օգտվել ենք հանգուցեալի հարստութիւնից, թէ ինչպէս—դա կըպարզվի դատաստանում: Իսկ դու յափշտակել ես նրա պատիւը, թէ ինչպէս—դա էլ կըպարզվի դատաստանում: Այս, և համոզված եմ, որ ինչքան էլ դատը զգոյշ տանվի, պէտք է այս գաղտնիքները պարզվեն: Այրին խելօք կին չէ. Նա չի մտածում իւր անուան մասին, կամ շատ կարմիր է մտածում է, բայց չէ որ յուսահասված մարդը կորցնում է իւր առողջ գատողութիւնը: Իսկ դու խելօք ես, գոնէ դու մտածիր քեզ համար...

Բարաթեանը չըհակառակեց: Նա լուռ և յուղված լսում էր, միւնոյն ժամանակ, ատելութեամբ նայելով իրաւաբանի երեսին:

— Վճռիր և իսկոյն յահճն առ, — շարունակեց Վէքիլեանը, — որովհետեւ անկարելի է գործը յետածգել: Վաղը կամ միւս օրը փաստաբանը կարող է դատաստանին ինդիր ներկայացնել: Այդ մարդուն կաշառելլ դժուար բան չէ, բայց դա բաւական չէ: Դրանով մենք կարող ենք միայն ստիպել նրան գործից հրաժարվել: Բայց ուրիշ փաստաբաններ շատ կան: Անհրաժեշտ է այրիին էլ կաշառել: Վերջապէս, ես ինքս այժմ տեսնում եմ, որ անգթութիւն է խեղճ կնոջը թողնել այժմեան գրութեան մէջ: Բայց այդ արդէն իմ և Ամբակում Աֆանասիեվիչի գործն է. մենք վըճռել ենք նրան մի կերպ գոհացնել:

Երկար խորհրդակցելուց յետոյ, վճռեցին այսպէս անել. Վէքիլեանը հէնց այսօր ևեթ Բարաթեանին կլուբում հասարակ կերպով կըծանօթացնի այրիի դատաստաբանի հետ: Բարաթեանը խօսք բաց կանի ա-

պատայ գատի մասին, ի հարկէ, զգուշութեամբ, որ վաստաբանին չըխրանեցնի, իրրե հոգաբարձու նա իրաւունք ունի պաշտպանել ներսիսեան դպրոցի շահերը, որովհետեւ եթէ կտակը քանդվի, դպրոցն էլ կը զրկվի իւր մասից: Այսպիսով նա վաստաբանին կըներեկայնայ ինչպէս մի հիմնարկութեան շահերի պաշտպան, և ինքն ըստ ինքեան ոչ մի կասկած չի կարող տեղի ունենալ:

Այդ օրից սկսած Բարաթեանը հանգստութիւն չունէր: Նա մոռացաւ ամեն ինչ և սկսեց հետամուտ լինել, որ մի կերպ խայտառակ գատի առաջն տռնի ջընայելով, որ արդէն լրացել էր իւր որոշած ժամանակմիջոցը, նա գեռ չէր մտածում երեխաներին ըերեւել տալ Գայիանէի մօտից: Այն ինչ՝ ամառուայ շոքերը վրայ էին հասել, հարկաւոր էր երեխաներին ամարանոց ուղարկել:

Տիկին Սալամբէկեանը իւր սանիկներին արձակուրդ էր առուել: Մնում էին նրա մօտ միայն մի քառնի գիշերօթիկներ, որոնց ծնողներն օտար քաղաքներումն էին: Նա խնդրում էր Գայիանէին վերցնել երեխաներին և նրա հետ միասին տեղափոխվել մօտակայ դիւզերից մէկը, ուր նա ամարանոց էր վարձել: Բայց Գայիանէն գեռ չէր վստահանում այդ անելու: Օր օրի վրայ նա սպասում էր, թէ ահա ներս կըմանի Բարաթեանի ծառան և կըպահանջի երեխաներին: Սարսափով, այն, կատարեալ սարսափով նա երեակայում էր այն լոռելն, երբ նա ստիպված պէտք է լինէր բաժանվել նրանցից: Մի ամսուայ ընթացքում նա այնպէս ընտելացել էր իւր զաւակների ներկայութեանը, որ դժուարանում էր հաւատալ, թէ կարող է մի օր անդամ

առանց նրանց ապրել:

Երկրիմի վիճակը օրից օր աղդելով, դարձրել էր նրան նեարդային, անհամբեր, ամեն անդամ երբ նայում էր երեխաների անմեղ աչքերին, յիշում էր նրանց գրութիւնը, նրա սիրտն էր մորմոքվում: Պէտք է վերջ տալ այդ վիճակին, դժուար է, անհնարին է երկար ապրել այդ անորոշութեան մէջ:

Եւ ոչ մէկը չէր կարողանում նրան մի որոշ եկք ցոյց տալ: Տիկին Սալամբէկեանը ճգնում էր ամեն կերպ միփիթարել նրան: Աշխատում էր համոզել, թէ չըպիսի շատ էլ փափկասիրտ լինել, թէ երեխաներն իրանց հարազատ հօր մօտ պէտք է գնան և ոչ թէ օտարի, թէ Գայիանէն նրանց դարձեալ կըտեսնի և այլն և այլն....:

Երբեմն նա վորձում էր մինչև անդամ ամաշացնել Գայիանէին, կոչելով նրա ինքնասիրութեանը:

Զըդիտեմ, ինչպէս ես համարձակվում ուսումնարաց բաց անել՝ ուրիշների երեխաներին կրթելու, երբ քո սիրտը միայն քո զաւակներին ես նուիրել: Ոչ, դու եսասէր ես, թոյլ ես, դու չես կարող դատիարակ լինել....

Այս խօսքերը զուր չէին անցնում, աղդում էին Գայիանէի վրայ: Նա սկսեց մտածել, որ իրաւ ինքը չափազանցութեան է հասցնում իւր մայրական սէրը: Այս, պէտք է վերջապէս զսպի իւր զգացումները հէնց նոյն իսկ իւր զաւակների ապագայի մասին պարզ մըտքով խորհելու համար: Եւ ահա նա ինքն իւր մտքում աշխատում էր հաշտվել նոյն իսկ ծայրայեղ թշուառութեան հետ: Նա երեակայում էր ամենամեծ դըժքաղդութիւնը, այն է, որ ինքն իրրե թէ ընաւ զըրկ-

ված է երեխաներից։ Ի՞նչ պէտք է անել, չէ որ կան մայրեր, որոնք թաղել են իրանց բոլոր զաւակներին։ Հապա ինչպէս են նրանք կրում իրանց վշտերը։ Վերջապէս, ինչու յուսահատվել, խօմ այդ երեխաները պէտք է մեծանան, պէտք է հասկանան իրանց դրութիւնը։ Այս ժամանակ նրանք իրանց կամքով կըդան իրանց մօր մօտ... Այս, պէտք է ապրել նրանց մի օր բաղդաւոր տեսնելու համար...

Այս խոր բգածութիւնները հետզհետէ ամրացնում էին նրա հոգին։ Նա վճռեց արիութեամբ սպասել ամեն տեսակ հարուածների։ Ահա ինչու երբ, վերջապէս, Բարաթեանը ծառային ուղարկեց երեխաների ետևից, նա շատ էլ չըյուսահատվեց։ Նա խնդրեց բժիշկ Սալամբէկեանին մի անդամ ևս միջամտել։ Թող Բարաթեանը թոյլ տայ թամարին յանձնել տիկին Սալամբէկեանի պարտէլը, իսկ Լեռնիկին պահել իւր մօտ մինչև աշուն։

Բժիշկն անմիջապէս գնաց Բարաթեանի մօտ։ Հակառակ սպասածին, Բարաթեանը նրան այս անդամ ընդունեց սիրով։ Նա հոգեկան լաւ տրամադրութեան մէջ էր, Բանն այն էր, որ մի քանի օր առաջ յաջող կերպով գործն աւարտել էր այրի Բախտամեանի փառտարանի հետ։ Վերջապէս, Վէրիկեանը և Ամբակում Աֆանասիեվիչն էլ գոհացրել էին այրիին, նշանակելով նրա համար առանձին թոշակ։ Այսպիսով դատի առաջն առնուել էր և թէ Բարաթեանի, թէ Վէրիկեանի ու Ամբակում Աֆանասիեվիչի անունները առատվել էին սպառնացող վտանգից։

Այժմ Բարաթեանը զբաղված էր քանի մի մանր գործերով, որոնց վերջացնելուց յետոյ պէտք է ու-

ղեորվէր արտասահման։ Նա սաստիկ ցանկանում էր ճանապարհորդել, «մի փոքր աղատ օդ չնչել»։ Նա ինքն ուրախ էր այժմ առանց երեխաների ապրել՝ բոլորովին համոզված, որ իրանց մօր մօտ նրանք աւելի լաւ են խնամվում։ Ծառային նրանց ետևից ուղարկելը արտաքին պատճառ ունէր. նա ուզում էր ցոյց տալ, որ իւր զաւակներին չի մոռացել։ Իսկ վճռել էր ստիպողական գիրք լընդունել, եթէ Գայիանէն մի փոքրիկ անդամ ընդիմութիւն ցոյց տայ։

Իւր իսկական միտումները բժիշկ Սալամբէկեանից թագյնելով, նա արտաքուստ դարձեալ յամառվեց երեխաներին իրանց մօր մօտ թողնելու։ Սակայն երբ բժիշկը սկսեց թալսանձել, նա, իբր թէ ակամայ արտասանեց.

— Թող քո ասածը լինի, ես խզում եմ այդ կնոջը...
Բժիշկը զգացված յայտնեց իւր շնորհակալիքը և շտապեց ուրախալի լուրը Գայիանէին հաղորդել։

Նրա գուրս գալուց յետոյ Բարաթեանի գէմքը սկսեց փայլել։ Նա ինքն իրան ասաց.

«Այժմ դու կրկին անդամ ամուրի ես և աղատ... ապրիր, ինչպէս ուզում ես»...»

Նրա աչքերի մէջ ցոլաց անսովոր երիտասարդական զուարթութիւն, նա սկսեց ուրախ-ուրախ շուացնել...

Մի քանի օր անցած Գայիանէն Սալամբէկեանների հետ ուղեսրվեց ամարանոց։ Այժմ նա այլ ևս չէր մտածում աղագայի մասին։ Նա երջանիկ էր, որ երեխաներին անորոշ ժամանակով իրան էին յանձ-

ներ իսկ յետոյ... յայս ունէր այլ ևս յաւիտեան ըր-
բաժանվել նրանցից...

XVIII

Այսուուայ ճիշդ այն միջոցն էր, երբ եօթ տա-
րի առաջ Դիմաքսեանը թիֆլիզի փողոցները ընկած
իւր համար ընակարան էր վնատում:

Քաղաքը կիսով չափ գատարկվել էր, բոլոր քիչ
թէ շատ միջոց ունեցող ընտանիքները հեռացել էին
ամարանոցները: Կեանքը թմրել էր, փողոցներում շար-
ժում չէր երեւում: Օքը մինչև երեկոյ մարդիկ արևի
տապից պատսպարժում էին իրանց տներում, խա-
նութներում: Շրջակայ լեռների ու գաշտերի խոտը
չորացել էր, գեղնել ու կպել երկրին: Քուր գետը
փոքրացել էր, սեղմվել, մտել իւր նեղ շառվի մէջ և
ընթանում էր մռայլ ու դանդաղ: Տիսուր ու ճնշող
տպաւորութիւն էր անում առհասարակ քաղաքն իւր
տեսքով: Երեք կողմից շրջապատված մերկ լեռներով,
կարծես, պարփակված լինէր մի եռանկիւնի կաթսայի
մէջ, ուր մարդիկ գատապարտված էին տապակվելու
հեղձուցիչ մթնոլորտում:

Միայն երեկոյեան մութը ընկնելիս օդը մի քիչ
թեթևանում էր: Այդ ժամանակ ընտելիքները տներից
թափվում էին դուրս, քաղաքը փոքր ինչ կենդանա-
նում էր: Այդիները լցում էին, փողոցներում սկսում
էր շարժում, ձիաքարշի կառքերը անդադար անցնում
էին այս ու այն կողմ ուղևորներով լի: Եւ այդ շար-
ժումը տեսում էր մինչև ուշ գիշեր, այնուհետեւ քա-
ղաքը նորից նիրհում էր մինչև հետեւալ երեկոյ:

Մսերեանը ոչ մի տեղ չըդնաց ամարելու: Նա
անբաժան ընակվում էր իւր առաջուայ ընակարանում:
Օրերը նրա համար անցնում էին միատեսակ, ձանձ-
րալի, տխուր: Յերեկը երկու-երեք ժամ լինում էր
իւր պաշտօնատեղում, յետոյ դալիս էր տուն, ճաշում,
քնում և շարունակ կարդում:

Երեկոները որոշեալ ժամին նա դուրս էր դալիս
զբունելու: Երբեմն այցելում էր մի փոքրիկ պարտէզ,
ուր հասարակ սեղանների շուրջը յոդնած, վաստակած
և շոքից թուլացած մարդիկ նստած խօսակցում էին,
մերթ ընդ մերթ գարեջրի դատարկ բաժակները սե-
ղանին զարկելով, որ սպասաւորը գայ նորից լեցնելու:

Նա միշտ նստում էր առանձին սեղանի մօտ և
մի շիշ գարեջուր առջելը դրած դիտում էր այցելու-
ներին: Նա ունէր մի քանի ծանօթներ, որոնց միայն
հեռուից բարեւում էր: Նա դարձեալ խոյս էր տալիս
հասարակութիւնից, ուստի շատերը նրան համարում
էին անմատչելի, դուռը մինչև անդամ տարօրինակ,
խենթ: Դիմաքսեանի բացակայութիւնը նրա տաղա-
կութիւնը աւելացնում էր: Վերջին նամակը ստա-
նալուց անցել էր մի շաբաթ, և նա գեռ չէր դալիս:
Ի՞նչն է, արդեօք այդ մարդուն պահում հայրենի քա-
ղաքում, քանի որ նա երեք այդքան ժամանակ չի
մնացել այնտեղ:

Իրիկնադէմ էր: Թէյ խմելուց յետոյ Մսերեանը
նստած էր իւր սենեակի առջե դանվող պատշտամբի
վրայ: Արեւ նոր մայր էր մտել, օդի մէջ թողնելով
ծանր տօթ: Փոքրիկ դաւթում ոչ ոք չըկար: Տանտիւ-
րուհու բազերը լողում էին մի մեծ քարեայ ջրամա-
նում, երբեմն դուրս դարձ և իրանց թեերը

թափահարելով:

Մսերեանը թղթատում էր մի նոր գիրք, որ այն օրն էր զնել: Երբեմն նայում էր գրքի էջերին, երբեմն դէպի երկինք: Այնուեղ, դիմացի հեռու լեռան ետևից բարձրանում էր սպիտակ ամպերի մի սար, որ հետզհետէ ուռչում էր, լայնանում և զանազան ձեւեր ընդունում: Արեւի վերջին շողքերը արագարագ փոփոխում էին նրա գոյնը, ներկելով մերթ մանիշակագոյն, մեր գոյնին, մերթ կարմիր և այդ գոյների խառնուրդից առաջացնում տասնեակ ֆանտաստիկան երանգներ:

Պատշգամբի միւս ծայրում նստած էր տաճտիրուհին—մի պառաւ վրացի կին—իւր եօթութ տարեկան թոռան հետ: Դա մի սեաչեայ, գեղեցիկ, աշխայժաղջիկ էր, որ շարունակ բարձր ձայնով ծիծաղում էր, խփելով իւր տառի ծնկներին, ուսերին, ձեռներին: Ժամանակ առ ժամանակ Մսերեանը նայում էր այն կողմ և ժպտում: Դեռահաս աղջկայ անզուսպ քրքիջները, որ բղխում էին մանկական անհոգ սրտից, մի տեսակ մելամազօտ հաճոյք էին պատճառում նրան: Մի լուսէ ձեռը զնելով գրքի վրայ, նա մտքով ոլացաւ դէպի իւր մանկութիւնը, այդ տասնեակ տարիների թանձրութեան ետևում կորած, մոռացված հեռաւոր անցեալը: Շատ քիչ բան էր յիշում այդ անցեալից կամ ոչինչ չեր յիշում: Թուում էր նրան, որ երբէք չի ունեցել ոչ միայն մանկութիւն, այլ և պատանեկութիւն, այլ և երիտասարդութիւն, որ միշտ եղել է այնողէս, ինչողէս կայ այժմ—իւր ներկայ մըտքերով, հոգսերով և թալսիծով:

Ահա լրացաւ նրա քառասուն տարին—չորս ամ-

բողջ տասնեակներ: Միթէ այդ չի ծերութիւնը: Ի՞նչ է արել մինչև այժմ, ի՞նչ կեանք է ունեցել, ի՞նչ ուրախութիւն, ի՞նչ մսիթարութիւն: Միթէ ոչինչ և ոչինչ: Օրերը անցնում են իրանց սովորական ընթացքով, այսօրը նման երեկուան, վաղը՝ այսօրուան, և այսպէս միշտ ու շարունակ... Կըհանի մի օր վերջին ժամը, և նա այլ ևս չըկայ աշխարհի երեսին բոլոր իւր գաղափարներով, բոլոր իւր իղձերով...

Իղձեր: Արդեօք ունեցել է նա իղձ... ինչո՞ւ չէ, ունեցել է և այժմ իսկ ունի... նա շատ է վհատվել, բայց երբէք չի կորցրել իւր յոյսը մարդկութեան լաւագոյն ապագայի մասին: Նա միշտ հաւատացել է, այժմ էլ հաւատում է, թէ ամեն ինչ պէտք է փոխվի, վերանորոգվի: Բայց այն ինչ հաւատ է եղել, որ չի ստիպել նրան գործելու իւր գաղափարների համար:

Այս, ժամանակ է, որ նա ինքն իրան հաշիւ տայ, ժամանակ է, որ ինքն իրան հարցնի—ինչ նպատակի է ծառայում իւր կեանքը: Միթէ ապրում է նրա համար, որ գիշեր-ցերէկ կարդայ և կարդում է նրա համար, որ օրից որ աւելի ու աւելի ծուլանայ....

Ոչ, ոչ, այդ անկարելի է, պէտք է մի կերպ վերջ տալ այս վհատեցնող, մեռցնող միատեսակութեանը: Աններելի է, այս, մինչև անգամ կատարեալ բարոյական յանցանք է այս տեսակ բուսական կեանք վարելը...

«Լեանք, որից ոչ ոք ոչինչ օգուտ և ոչինչ վնաս չունի...»

Նա գիրքը արհամարհանքով ձգեց մի կողմ, արձունկները յենեց պատշգամբի վանդակապատին և իւր ժամանուն հայեացը յառեց անորոշ տարածութեան

մէջ։ Նրա խաղաղ հոգու մէջ բարձրացել էր անսովոր մրրիկ։ Նրա անդորր թափսիծը տեղի էր տուել այն ծանր ինքնագժանութեանը, որ չափահաս տղամարդի մէջ առաջացնում է դառն տանջանք։

Եւ մինչ նա իւր մտքերի մէջ խորասուղված էր, յանկարծ նրա ականջին հասաւ մի ձայն։ Նա լսեց իւր անունը, նայեց աջ ու ձախ—ոչ ոք չըկար, նայեց դէպի գաւիթ և բացագանչեց։

—Արտէն...

Մաերեանը անսովոր աշխուժով սովի թռաւ, վազեց առաջ։ Երկու ընկեր գրկեցին միմեանց։ Երբեք իդէալիստն այնքան չէր ուրախացել իւր ընկերովը տեսնելով, որքան այժմ, ընդամեննն երկու ու կէս ամիս նրան չըտեսնելուց յետոյ։

—Ո՞ւր էիր, ինչու ուշացար, առաջ ես, ուրախ ես,—հարցնում էր նա շտապով։

—Դիմաքսեանը և՛ առաջ էր, և՛ զուարթ, գունէ այսպէս երեաց ոչ միայն նրա խօսքերից այլ և ձայնից, դէմքից և ըոլոր շարժումներից։

—Երդիում եմ,—գոչեց նա, պատշտամբի վրայից վերցնելով գիրքը և վանդակապատի վրայ դնելով, —որ քեզ ճիշդ այն գրութեան մէջ եմ գտնում, ինչպէս ճանապարհին երեակայում էի։

—Ի՞նչպէս...

—Նստած պատշտամբի վրայ, գիրքն առջեղ գրած, միայն թէյն է պակասում... Բայց, սպասիր, այդ արդէն չէի երեակայում, հէր օրհնած, միթէ կարելի է այդպէս նիհարել։

Մաերեանը հառաչելով ժպտաց և ոչինչ չասաց։ Հրաւիրեց ընկերովը ներս Օրն արդէն մթնում էր,

Սենեակի լուսամուտները բաց էին, օդը բաւական զուգացել էր, Մաերեանը իւր ձեռքով վառեց կանթեղը, հարցրեց Դիմաքսեանին, արդեօք թէյ կըկամենայ խմել։

—Ես արդէն խմել եմ հիւրանոցում։

—Հիւրանոցում, միթէ դու այնտեղ ես իջևանել։

—Այն:

—Ի՞նչու ոչ քո բնակարանը։

—Որովհետեւ շատ կարծ ժամանակով եմ եկել։

—Այն ժամանակ ինձ մօտ կիջևանէիր։

—Դու էլ չը պիտի մնաս այստեղ։ Բայց այդ գեռ թողնենք։ Պատմիր ինձ, ինչ կայ այստեղ, ինչ են անում մարդիկ, ինչ գործի են։

Մաերեանը համառօտ պատասխանեց, թէ նրա գնալուց յետոյ ոչինչ փոփոխութիւն չի եղել, մարդիկ նոյնն են, ինչ որ առաջ, հասարակական կեանքը դարձեալ թմբել է, մոքերի կուիւ չըկայ, վերջապէս, ամենքը ցրվել են ամարանոցները։

—Մինչեւ անգամ բժիշկ Սալամբէկեանն էլ, —աւարտեց նա իւր խօսքը մի անսովոր եղանակով, որի մէջ զգացգում էր մի տեսակ գառն հեղնութիւն։

—Բժիշկը, —կըկնեց Դիմաքսեանը և մի փոքր լուց, ապա աւելացրեց, —երեի նա այժմ բաղդասը է...

—Պէտք է կարծել...

Նրանք լոեցին։ Մաերեանը դարձեալ հառաչելով երեսը մի կողմ գարձրեց։ Նոյն վայրկեանին նա ձեռով մի շարժում գործեց, կարծես, մի միտք իրանից հեռացնելու համար։

—Ան, մոռացայ ասել, —գոչեց նա նորից զուարժանալով, —Ես մի ուրախալի նորութիւն եմ իմացել։

—Այն է:

—Որ գաւառներում մեծ յարդանք ես վայելում:
—Ի՞նչպէս, միթէ դու գնացել էիր գաւառները:

—Ոչ, ես այստեղ խմացայ: Կայ այստեղ մի փոքրիկ պարտէզ, ուր մի գերմանացի գարեջուր է ծախում: Երբեմն ես երեկոները դնում եմ այստեղ կէս ժամ, մի ժամ նստելու: Դա մի տեսակ ամարային կլուք է, ուր մեծ մասամբ հաւաքվում են գաւառներից եկած վարժապետներ: Ի՞նչ խեղճ կերպարանք ունեն այդ մարդիկ և ինչպէս շատախօս են: Շատ անդամ հեռուից լսում եմ նրանց խօսակցութիւնը, չքիարձես հետաքրքրութիւնից դրդված, այլ որովհետեւ այդ մարդիկ միշտ բարձր ձայնով են խօսում: Երեակայիր, հազիւ է պատահում, որ նրանք քո անունդ չըյիշեն, քո գրածների մասին չըլիճեն: Ես միշտ նկատել եմ, որ նրանք քո մասին խօսում են յարդանքով և սիրով: Ամենքի վրայ երևում է քո մեծ աղգեցութիւնը:

Դիմաքսեանը ընդհատեց նրա խօսքը, կամենալով, որ իդեալիստը պատմի իւր մասին: Նրա համար սաստիկ հետաքրքրական էր իմանալ, ինչպէս է իւր ընկերը վերջին ժամանակ իւր օրերը անցկացրել: Մսերեանն երրորդ անդամ հառաչեց և մի տեսակ վհատված ձայնով պատասխանեց.

—Միթէ քեզ յայտնի չէ, թէ ի՞նչ եմ անում:
Երկու ընկեր նայեցին միմեանց երեսին: Դիմաքսեանը Մսերեանի աչքերի մէջ կարդաց նրա հօգեկան խորին դժգոհութիւնը իւր այժմեան վիճակից: Նա թախանձեց նրան պարզ խոստովանվել, արդեօք զգնում է իւր կեանքի մէջ մի փոփոխութիւն մտցնե-

լու կարիք, արդեօք, կը կամենար վերջ տալ յարատել և ձանձրալի միատեսակութեանը: Մսերեանը զարմացած նայեց նրա երեսին: Կարծես, Դիմաքսեանը մարդարէարար գուշակել էր այն բոլորը, ինչ որ մի ժամ առաջ անցնում էր իւր ընկերոջ մտքով: Այս հանդամանքը մի փոքր շփոթեցրեց Մսերեանին: Կարծես, նա ամաչում էր իւր հօգեկան դժգոհութիւնից, համարելով այդ մի տեսակ բարոյական տկարութիւն:

—Հասկանում եմ քո միտքը,—գոչեց նա վրդով վելով,—դու ուզում ես ասել, թէ ես անօգուտ մարդ եմ: Այդ ճիշդ է և, եթէ կամենում ես իմանալ, ոչ ոք այնքան զզված չէ ինձանից, որքան ես: Եւ հէնց քո գալուց մի փոքր առաջ ես մտքումս վճռեցի ո՛ւ և է փոփոխութիւն մտցնել իմ կեանքի մէջ: Կըյաջողվի թէ չէ—չը դիտեմ, բայց իմ վճիռը հաստատ է, ես պէտք է գագարեմ անօգուտ մարդ լինելուց:

Մի պարզ, մաքուր եզրայրասիրական ժպիտ սահեց Դիմաքսեանի խելացի, արտայայտիչ դէմքով և նրա թափանցող, խոշոր աչքերի մէջ վայլեց ուրախութիւն:

—Լսիր,—ասաց նա հանդարտ ձայնով,—ես քեզ հետ կամենում եմ մի բանի մասին լրջօրէն խօսել և շատ ուրախ եմ, որ դու այդ վճիռը կայացրել ես քո մասին նստիր և լսիր:

Մսերեանը, որ քայլում էր սենեակի մի ծայրից գէպի միւս ծայրը, նստեց նրա դէմ և, ձեռները յենելով ծնկներին, պատրաստվեց ականջ դնելու նրան: Դիմաքսեանը, մի ծխախոտ վառելով, սկսեց մանրամասն պատմել այն բոլորը, ինչ որ տեսել էր, ուսումնասիրել և զգացել իւր հայրենիքում վերջին երկու

ու կէս ամսուայ ընթացքում: Նա տիտր՝ գոյներով նկարագրեց գիւղական ամբոխի տնտեսական և բարյական վիճակը. Նա առանձին եռանդով շեշտեց ուսումնարանների բացակայութեան և նրանց անհրաժեշտ կարեսրութեան փաստը: Նա խօսեց Հարիդեանի մասին: Մոերեանը ճանաչում էր նրան Մոսկուայից, բայց լու չէր յիշում: Դիմաքսեանը գովեց նրան, ինչպէս եռանդուն, խելացի երիտասարդի, որի գործնական հայեացքները չեն խանդարում նրան լինել վերին աստիճանի օգտաւէտ անդամ իւր հասարակութեան: Նա ասաց, թէ Մոերեանը եթէ լաճանաշի այդ մարդուն, անշուշտ պէտք է սիրի, յարշի և մինչև անդամ մտերմանայ նրա հետ:

—Ես այս բոլորը ասում եմ քեզ նրա համար, որովհետեւ ես ունիմ մի ծրագիր, որ դուք երկուսդ միասին պէտք է իրագործէք: Այն, թող քեզ շըզարմացնեն իմ խօսքերը: Լսիր: Բոլոր իմ աշքով տեսածները ինձ համոզեցին, որ մեզ համար յանցանը է մեր կարողութեան չափ չ'օգնել գիւղական ժողովրդին: Եւ ահա երկար ժամանակ Հարիդեանի հետ խորհրդակցելով, եկայ այն եղրակացութեան, որ իմ կողմից միակ օգնութիւնը կարող է լինել այն, որ ես իմ հաշուսվ մի ուսումնարան բաց անեմ: Հարիդեանը ցոյց տուեց ինձ մի ամենայարմար կենտրոնական գիւղ: Այնտեղ կարող են հաւաքվել մի քանի շրջակայ գիւղերի երեխաները: Այս մասին ես հարկաւոր կարգադրութիւններն արել եմ, ուսումնարան բանալու բոլոր արդելքները հեռացված են: Բանը այժմ կախված է քեզանից:

—Ինձանից:

—Այն, Ես յատկապէս եկայ այսուեղ քեզ առաջարկելու, որ յանձն առնես ուսումնարանը կառավարել: Բոլոր անտեսական գործերը կը կատարի Հարիդեանը, ես միայն ուղում եմ, որ դու լինիս ուսումնական մասի կառավարիչը, լինիս գործի գլուխ, տեսուչ... Ասա, համակրում ես իս վճռին:

Արտասանելով վերջին խօսքերը, Դիմաքսեանը, ուղիղ նայեց Մոերեանի աչքերին, որ նախ նրանց մէջ կարդայ իւր ընկերոջ համաձայնութիւնը կամ մերժումը: Իդէալիստ երեսը դարձրեց մի կողմ և լուռնայեց լամպայի հանդարտ և անշարժ վառվող բոցային լեզուակին, կարծես, նրա հետ խորհրդակցելով, ընդունել, արդեօք, Դիմաքսեանի առաջարկութիւնը: Այդ տեսց ընդամենը մի քանի վայրկեան. յանկարծ նրա աչքերը վառվեցին, նա ոգեսորվեց և զգացված արտասանեց.

—Ես ամենաանպիտան մարդը կը լինէի, եթէ ընդունէի այդ առաջարկութիւնը: Ոչ միայն համաձայն եմ, այլ և յայտնում եմ խորին շնորհակալութիւնս, որ մի այդպիսի ծանր և լուրջ գործ ինձ ես յանձնում:

—Ուրեմն վճռված է, գործը շըպիտի յետաձգել: Թափիր քեզանից անշարժութեան փոշին, թող այդ միատեսակ կեանքը, ոկտիր գործել: Յիշում ես, ինչպէս մի ժամանակ դու փափագում եիր ծառայել գիւղական ամբոխին: Ահա քեզ յարմար առիթ և գեղեցիկ ասպարէզ, օգտվիր, եթէ քո փափագն այժմ էլ կենդանի է: Ես այստեղ մնալու եմ միայն վազը, միւս օրը անպատճառ պէտք է գնամ, դու էլ պատրաստվիր իմ հայրենիքը ուղեորվելու: Այնտեղ քեզ

անհամբեր սպասում է Հարիդեանը:
—Միայն ինձ է սպասում, իսկ քեզ, դու...
—Ես... պատասխանեց Դիմաքսեանը, մի քիչ տա-
տանվելով... ես էլ պէտք է գնամ իմ ճանապարհով...
—Ինձ հետ միասին...
—Այս, գաղափարով, բայց ոչ միենոյն ճանա-
պարհով.

Մոերեանը երկմտաբար նայեց նշան աչքերի մէջ,
չըհասկանալով նրա խօսքերի միաբը:

—Լոիր.—Խօսեց Դիմաքսեանը, գարձեալ մի փոքր
լուելուց յետոյ, —երբ ես իմ հայրենիքումն էի, իմ
գլխում ծագեց՝ թողնել բաղաքային կեանքը և գնալ
այն ճանապարհով, որ այժմ առաջարկում եմ քեզ։ Այս
միաբը ինձ բաւական ժամանակ զբաղեցրեց, բայց
չեղաւ մի վայրկեան, որ նա ինձ գրաւէր։ Երկար մտա-
ծողութիւնից յետոյ եկայ այն հաստատ եղբակացու-
թեան, որ ես ստեղծված չեմ խաղաղ գործունէու-
թեան համար։ Թոյլ տուր ինձ, Սմբատ, հաղորդել
քեզ մի նորութիւն, այն է, որ իմ մէջ տեղի է ունե-
ցել մի մեծ փոփոխութիւն, մի տեսակ բարոյական
յեղաշրջում, երկար կը լինէր բացատրել, թէ ինչպէս
կասարվեց այս յեղաշրջումը և հազիւ թէ կարողա-
նայի բացատրել։ Բայց այսքանը կարող եմ ասել, որ
այս բոպէիս քո առջև նստած է ուրիշ մարդ, որ այժմ
ես այն չեմ, ինչ որ մի քանի ժամանակ սրանից առաջ,
այն վհատված, այն ընկճվող, այն հիւանդանութիւնը առաջ,
այն վհատված, այն ընկճվող, այն չափազանց դիւրագր-
գիռ, այն հիւանդանութիւնը ինքնաւասէր Դիմաքսեանը, որ
ամեն մի վայրկեան յուղվում էր, վրդովվում և վիրա-
ւորվում։ Ես զգում եմ, որ ինձ համար անհրաժեշտ էր
տանջվել—տանջվեցի, ես պէտք է փորձվէի—փորձվէ-

ցի կեանքի քուրայում։ Ես շատ անդամ վհատվեցի,
շատ անդամ տատանվեցի, եղան վայրկեաններ, երբ
վճռում էի թողնել իմ ընտրած ճանապարհը... Բայց
այժմ այդ ըլկոյ, այժմ այդ ըոլորից մնաց իմ մէջ մի ձըգ-
ուում — շարունակել այն, ինչ որ սկսել եմ եօթ տարի
առաջ. կռվել միշտ և անդադար կռվել հասարակա-
կան ընդհանուր միասնակար երևոյթների դէմ։ Այս,
թող ես անհամեստ լինիմ, բայց անկեղծ եմ. ես
զգում եմ, որ միայն և միմիայն այդ տեսակ գործու-
նէութեան վափագ կայ իմ սրտում։ Խաղաղ կեանքը,
անվրդով գործունէութիւնն ինձ համար հաւասար է
մեռելութեան։

Նա ոգեսրված էր, նրա աչքերի մէջ վայլում էր
մի նոր, արտաքոյ կարգի եռանդ, մի պայծառ լոյս,
լորախուսանք. ոյժ և հաւատ էր ներշնչում Մաե-
սունին։ Թուում էր, որ նա այդ բոպէին տողորված
էր ինչ որ բարձրագոյն, վեհ, անհասանելի սգով, որի
առջև կարող են խորտակվել կեանքի բոլոր հարուած-
ները։ Իդէալիստն իւր սրտում զգաց այնպիսի պատ-
կառանք դէպի իւր ընկերը, որ հաւասար էր պաշտե-
կառանք դէպի իւր ընկերը, որունց նա երբէք, երբէք և ոչ մի դառն
դափարներով, որոնց նա երբէք, երբէք և ոչ մի դառն
դափարներում շըպիսի դաւաճանէր։ Նա զգացված
հանդամներու ձեռը, ամուր սեղմեց և ոգեռ-
ութեամբ գոչեց։

—Այս, այդ ճիշդ է, ես տեսնում եմ պարզ...
թոյլ տուր շնորհաւորել քեզ քո յաղթութեան համար...
—Յաղթութիւն։

—Այս, կատարեալ յաղթութիւն, դու սպանել

ես քո մէջ այն օձը, որ քեզ այնքան խանգարում էր...
Արդարե, Դիմաքսեանը կարող է պարծենալ, որ
նրան յաջողվեց սպանել այդ օձին: Բայց նրա մէջ
ծնվեց մի ուրիշ օձ: Վաստահութեամբ կարող է ասել,
որ այսուհետեւ մարդկանց ոչ հալածանքը, ոչ վիրաւու-
րանքը, ոչ նախանձը, ոչ ատելութիւնը նրան չեն յու-
սահատեցնիլ: Նա քաջութիւն կունենայ արհամարհել
բոլոր հարուածները, որ կուզուեն նրա անձնաւորու-
թեան գէմ: Այն նոր օձը, որ այժմ զարթնել է նրա
մէջ, նրա անհատական խորին եսը չէ, այլ ուրիշ բան:
Այսուհետեւ էլ նա կըվրդովիի, կըդրդուի, կըբոր-
րովի, բայց, վատահ է, ոչ անձնական վիրաւորանքնե-
րից, այլ հասարակական կեանքի վատ երեսյթներից...

Այս խօսքերը նա արտասանեց մի այնպիսի
զդացմունքով, հաւատով և ոգեսրութեամբ, որ ամե-
նաթերահաւատ մարդուն կարող էր համոզել:

—Կեցցես, որեմն, —զոչեց գարձեալ Մսերեանը, —
ես համոզված էի, որ այդպէս էլ պէտք է լինի վերջը:
Եւ, մի փոքր, լռելոց յետոյ աւելացրեց.

—Յիշում ես, ինչպէս ես քեզ ասում էի, թէ կը-
դայ ժամանակ, որ դու ամենարազդաւոր մարդը կը-
մնիս... Այժմ կարող եմ ասել, որ դու, բազդաւոր ես...

—Ա, ես գիտեմ, որ դու բազդաւոր համարելով
ինձ, չես մոռանում ե իմ անհատական բազդը, —զո-
չեց Արսէնը, —չէ որ մարդ, իբրև հասարակութեան
անդամ, իբրև գործիչ կարող է բազդաւոր լինել, իսկ
իբրև անհատ—գործադիր: Մի էակ, որ կարող էր իմ
անհատական երջանկութիւնը ստեղծել, չըկարողացաւ
կամ չըկամեցաւ այդ անել: Դու գիտես այս բանը:
Յուսահատութեան վայրկեաններ եղան, երբ ես կա-

մենում էի վերջ տալ իմ կեանքին այդ էակի պատ-
ճառով: Բայց, շնորհակալ եմ ճակատագրից, այդ չե-
ղաւ, ես կարողացայ յաղթել իմ մէջ մի սպանիչ զգա-
ցում: Այժմ ես վերակենդանացած եմ: Գայիսանէի
պատկերը իմ երեակայութեան մէջ մինչև կեանքիս
վերջը կըթնայ կենդանի, վառ և, ինչպէս մի իդէալ,
ես միշտ կըպաշտեմ այդ պատկերը: Բայց, ինչպէս
իրական էութիւն, ինչպէս անհատ—նա այլ ես գո-
յութիւն չունէ ինձ համար...

Այլ ես նա ոչինչ չասաց, և Մսերեանն էլ այդ-
մասին չըխօսեց ոչինչ:

Առաւօտեան եօթ ժամը գեռ լրացել, Դի-
մաքսեանն արդէն ոտքի վրայ էր: Հիւրանոցի սպա-
սաւորի օգնութեամբ նա կապում էր իւր ճանապար-
հի արկղերը, երգելով, շուացնելով և երբեմն ծառա-
յի հետ զուարձախօսելով:

Մի ժամ անցած նա պէտք է ճանապարհ ընկնէր
առաւօտեան գնացքով գէպի Բաթում, իսկ այնտեղից
արտասահման: Նա սպասում էր Մսերեանին, որ պէտք
է գար նրան ուղեկցելու մինչև երկաթուղու կայարա-
նը: Նախընթաց երեկոյ ընկերական ուրախ ընթրիքի
ժամանակ նրանը վճռել էին այսպէս: Դիմաքսեանն
առաւօտեան ճանապարհ կընկնի, Մսերեանը հէնց նոյն
օրը հրաժարական կըտայ իւր պաշտօնից և երկու օր
անցած կուզելովի Դիմաքսեանի հայրենիքը: Նախ քան
ոգեսրվելը նո պէտք է գնար իւր ընկերոջ նախկին
ընակարասնը և այնտեղից վերցնէր Սիրականին պահ
արգած գրքերը և մի քանի իրեղէնները:

Ուղերդվելու ժամանակը մօտենում էր, իսկ Մահեանը դեռ չէր երեւում: Վերջայնելով իւր գործը, Դիմաքսեանը շտապով մի բաժակ թէյ խմեց, նայեց ժամացոյցին և սպասաւորին հրամայեց մի կառք կանչել: Մաերեանի բնակորանը ճանապարհի վրայ էր, նու կարող էր հանդիպել նրան և այնանդ իւր վերջին բարեները տալ ընկերոջը:

Հէնց սպասաւորը նոր էր գուրս եկել, երբ ներս մտաւ Մաերեանը շտապով և շնչասպառ:

—Ներողութիւն, որ ուշացայ, —դոչեց նա զուարի եղանակով, —բայց մեղաւոր չեմ: Յուղմունքից ամրող գիշեր չեմ կարողացել քնել, շարունակ մտածում էի ու մտածում:

—Ի՞նչի մասին:

—Օօ, մի վախենար, այժմ ես առաջուայ պէս չեմ մտածում, այժմ իմ բոլոր մտքերը կենտրոնացած են մի բանի վրայ՝ շտապել շուտով այնտեղ, ուր խօսք եմ առուել գնալու: Ահա, դու արգէն պատրաստվել ես. գէհ, գնանք, կարող ես ուշանալ: Բայց սպասիր, քեզ մօտ հիւր եմ բերել, կարծում եմ, դժոհն չես լինել...

Այս ասելով, նա բաց դոներով գլուխը դուրս բերեց դէպի կօրրիգօր և ձոյնեց.

—Արի, արի ներս...

Նոյն վայրկեանին երեցաւ Սիրականը՝ գդակը ձեռին, մաքուր հագուստով: Նա լուս գլուխ տուեց և կանգնեց դոների մօտ: Դիմաքսեանը, ուրախ և բարեկամաբար ժպատակ, հարցրեց նրա առողջութեան մասին և, ձեռը խփելով նրա ուսին, ասաց.

—Չըկարծես քեզ մոռացել էի, մտադիր էի կա-

յարան գնալիս կառքը կանգնեցնել, քեզ դուրս կանչել և «մնաս բարե» ասել:

Սիրականի կլորիկ աչքի մէջ ցոլաց անչափ ուրախութեան վայլը, բայց և նոյն վայրկեանին նրա գէմքը ծածկվեց տիրութեան քողով: Երկու ու կէս ամիս էր նա չէր տեսել իւր սիրելի պարմնին, այժմ տեսնում էր մի քառորդ ժամ և, ով գիտէ, գուցէ այնուհետեւ այլ ևս չըպիտի տեսնէր:

—Գէհ, —գոչեց Մաերեանը, նոյնպէս դառնալով ծառային, —մի ամաչիր, զօշալ կաց, յայտնիր խնդիրը, նա կըկատարէ:

Սիրականն ամաչելով և տատանվելով մի քայլ առաջ գրեց և յայտնեց իւր խնդիրը: Բանն այն էր, որ նա, Մաերեանից տեղեկանալով Դիմաքսեանի գառը նաև մասին և նոյնպէս այն, թէ այսօր ճանաւուեան մասին և նոյնպէս այն, թէ այսօր ճանաւուեան է, առաւօտեան կանուխ հագնվել էր և պարհվում էր իդեալիստի մօտ: Նա չէր ուզում ծառայել իւր եկել իդեալիստի մօտ: Նա չէր ուզում ծառայել իւր այժմեան պաշտօնում և խնդրում էր, որ Մաերեանը նրան իւր հետ տանի Դիմաքսեանի հայրենիքը և այն տեղ բարեսիրտ պարոնի կալուածներում մի պաշտօն յանձնի նրան: Խոկապէս նրա բուն ցանկութիւնն էր՝ ծառայել անձնապէս միմիայն Դիմաքսեանին, որին նա այնքան ընտելացել էր, որ դժբաղդ էր համարում միայն նրան: Բայց նա այդ ուղղակի չասաց: Նա իրան իմայն խնդրում էր՝ աղատել իրան այժմեան պաշտօնից:

Առանց երկար տատանվելու՝ Դիմաքսեանը կարգադրեց Սիրականի վիճակը նրա ցանկութեան համեմատ: Մաերեանը նրան իւր հետ կըվերցնի, Հարիմանը կըտայ նրան մի պաշտօն առժամանակ:

—Այսինքն մինչև արտասահմանից վերադառ-

նալս: Հէնց որ վերագարձայ, իսկոյն Մոերեանին կը-
հեռագրեմ, որ քեզ ինձ մօտ ուղարկի: Բայց ինչո՞ւ,
նախ քան այստեղ դալը ես մտադիր եմ իմ հայրենի-
քը գնալ, այնտեղից մենք միտսին կըդանք այստեղ:

Դարձեալ ուրախութեան ժպիսը փայլեց Սիրա-
կանի թաւամաղ գէմքի վրայ: Այս անդամ արդէն
նա իրան երջանիկ էր համարում:

Կառքը պատրաստ էր: Սպասաւորը Սիրականի
օդնութեամբ արկղերը դուրս տարաւ և տեղաւորեց
կառքի վրայ: Երկու ընկեր, ուրախ ու զուարթ խօ-
սակցելով, դուրս եկան: Զընայելով, որ օրը բաւական
անցել էր, փողոցում մարդիկ չեին երկում: Սիրայն
գանդաղ ընթացքով անցնում էին մի քանի սայլեր
աղիւսով և կրով բեռնաւորված և մի սոտիկան մայ-
թի վրայ կանդնած՝ դիտում էր հիւրանոցից դուրս
եկողներին:

Դիմաքսեանը և Մոերեանը նստեցին կառք: Սի-
րականը, գգակը ձեռին բռնած, մնաց մայթի վրայ:
Դիմաքսեանը նրան ձեռով նշան արաւ, որ կառք
նստի: Նա կամեցաւ բարձրանալ կառապանի նստա-
րանի վրայ:

—Ոչ, այստեղ նստիր,—ասաց Դիմաքսեանը և,
մի կողմ քաշելով իւր առջև դրած չեմօդանը, ցոյց
տուեց դիմացի վոքրիկ նստարանը, —մենք երկուսս
էլ շատ փոքրիկ մարդիկ ենք, կըտեղաւորվենք ամեն
մի անկիւնում:

Դա առաջին կատակն էր, որ նա արաւ իւր մարդ-
նի վոքրութեան մասին: Եւ ոչ մի կեղծիք, ոչ մի
ցաւ, ոչ մի ափասսանք չըզգացվեց այդ կատակի մէջ:
Նա ուրախ էր և զգացված: Նա անընդհատ խօսում

էր, ծիծաղում և սրախօսում Սիրականի վերաբեր-
ւամբ: Օ՛օ, երբէք, երբէք լսեղձ ծառան այնքան եր-
ջանիկ չէր եղել, իւր մասին կատակներ լսելով, որչափ
այդ պահճին:

Բայց քանի կառքը մօտենում էր կայարանին,
այնքան նրանց խօսակցութիւնն աւելի ու աւելի ընդ-
հատվում էր և այնքան երկու ընկերների զուարթու-
թիւնը պակասում էր: Երբ նրանք կառքից ցած իջան
և մտան կայարան, ընդամենը հինգ րոպէ էր մոււմ
գնացքի հեռանալուն: Սիրականն արկղերը տարաւ ու-
զելուների գահինքը, շտապով Դիմաքսեանի համար տու-
սակ վերցրեց: Ուզեռների թիւը շատ քիչ էր, հեռա-
սոր տեղեր ճանապարհորդողներ ըլկային, գրեթէ ա-
մենքն էլ գնում էին ամարանոցներ իրանց ընտանիք-
ների մօտ:

Զանդակը հնչեց երկրորդ անդամ և այդ հնչիւ-
նը մի տիսուր զգացմունք զարթեցրեց թէ Դիմաքսեա-
նի և թէ Մոերեանի ու Սիրականի սրտում: Զընայե-
լով, որ երեքն էլ յուսով լի էին, թէ շուտով, ընդա-
մենը երեք-չորս ամսից յետոյ, պէտք է տեսնվեն, բացց
բաժանման զգացումն աւելի յաղթող հանդիսացաւ:

Դիմաքսեանն երեք անդամ համբուրվեց Մոերեա-
նի հետ, Սիրականի ձեռի մէջ սեղմեց մի բուռն
թղթագրամ և շտապով պլատֆորմից ոտքը դրեց
կառքերից մէկի սանդուխը վրայ: Ճիշտ այն
գնացքի կառքերից մէկի սանդուխը վրայ: Ճիշտ այն
վայրկեանին, երբ նա բարձրանում էր վեր, անզգու-
շութեամբ ուսով կպաւ մէկին: Նա յետ նայեց ներա-
շութեանին...

Նրա մարմեռով ակամայ մի ցնցումն անցաւ: Բայց

դա մի վայրկենական անցողիկ ցնցում էր, որ ոչինչ կառ չուներ նրա գիտակցութեան հետ: Նրա գէմքի վրայ երեաց մի սառն ժպիտ: Նա անտարբեր կերպով երեսը դարձրեց և հանգարտ բարձրացաւ վերեւ: Բարաթեանը կանգնած էր դեռ ցածում: Նա չէր շտապում: Մի ձեռը ճանապարհի սպայուսակին յենած, միւսով ոլորելով իւր բեղերը, նա խօսում էր իւր մօս կանգնած Վէքիլեանի հետ: Հէնց որ տեսաւ Դիմաքս սեանին, նա ճիգն արաւ իւր գէր ու կարմիր գէմքին արհամարհական արտայայտութիւն տալ: Բայց այս անգամ այդ շըյաջողվեց նրան...

Նա ազքունքը թթուեցրեց և բարձրացաւ կառքի վրայ: Զանգակը հնչեց երրորդ անգամ: Փոքրիկ լուսամուտներից մէկում երեաց Դիմաքսեանի գլուխը, միւսումը Բարաթեանի գլուխն ու կուրծքը:

—Վազը չէ միւս օր անպատճառ, —գոշեց Դիմաքսեանը, գդակը վերցնելով վերջին բարել տալու Մսերեանին:

—Ո՛չ, հէնց վազն և եթ, —սպատասխանեց իդէաւ լիստը, —հէնց վազն և եթ, ես և Սիրականը...

Այս, տալով վերջին բարել իւր ընկերոջ, նա նոյն վայրկեանին մաքում վճռեց այլ ևս ոչ մի աւելորդ օր շըսպասել և հէնց վազն ուղեղորդվել այնտեղ, ուր նոյս ուներ օգտաւէտ մարդ դառնալու...

Գնացքը շարժվեց, կառքերը միմեանց ետեից գլրդալով անցան Մսերեանի առջեսով: Միւնոյն կառքի մէջ անցան նրա երկու ընկերները, որոնցից մէկը տանում էր նրա խորին սէրը, յարդանքը, միւսը նրա արհամարհանքը և ատելութիւնը...

12 n.

Ծ Ի Ր Վ Ա Ն Զ Ա Գ Ե

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Ե Ր Կ Ե Ր Ե

Մամուլի տակ է Զորյանդ հասորը

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ է

ԳԻՆՆ Է ԶՈՐԾ ՀԱՏՈՐԻ

Թիֆլիսում	4 ր.	50 կ.
Օտար քաղաքներում	5 ր.	50 կ.	
Երեղ թղթի վրայ Թիֆլիսում	.				8 ր.		
Օտար քաղաքներում	10 ր.		
Փառայեղ կազմով	12 և 14 ր.		

Առանձին հասորի գինն է 1 ռ. 50 կուգ.

Յաջորդ 4 հատորների համար կրբացվի առանձին բաժանորդագրութիւն:

Գյուղական

Դիմել՝ Տիֆլիսъ—«Цент. книжная торговля», в т
«Гуттенбергъ» аրավաճանոցներին կամ նեղինա-
լին— Ал. Ширванзадэ.

Un ruine
Habsburgene
S. Empereur d'Autriche

415

338

«Ազգային գրադարան»



NL0356649

47994

891.99
C-66